ԲԱԳՐԱՏ
ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՍԿԶԲԻՑ
ՄԻՆՉԵՎ
ՄԵՐ
ՕՐԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
1994

ԲԱԳՐԱՏ
ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ԱՐԾԱԽԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՍԿԶԲԻՑ
ՄԻՆՉԵՎ
ՄԵՐ
ՕՐԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
1994

ԳՄԴ 63. 3 (2Հ)
Ու 380

Խմբագիր՝ Հայաստանի ԳԱԱ թղթակից անդամ,
պատմական գիտությունների
դոկտոր-պրոֆեսոր՝ Լ. Ա. Խուրշուդյան

ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ Բ.
ՈՒ 380 Արցախի պատմությունը սկզբից մինչեւ մեր օրերը: - Եր.:
Մ. Վարանդեան, 1994 - 378 էջ:

Գիրքն ընդգրկում է Արցախի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը: Այն հեղինակի բազմամյա աշխատանքի արդյունքն է եւ օգտակար կարող է լինել ոչ միայն ԲՈՒՀ-երի ուսանողների ու միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտության, այլեւ ընթերցող լայն զանգվածների համար:

0503020913
Ու ———————— ԳՄԴ 63.3 (2 Հ)
7849010 - 94

Գրքին ներդիր՝ երկու քարտեզ.

1. Արցախը ըստ «Աշխարհացույց»-ի
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ISBN 5-8079-0960-7 © «Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ» հրատարակչություն: 1994

ՆԱԽԱԲԱՆ

Բ. Ուլուբաբյանի պատմագիտական այս աշխատությունը նվիրված է Արցախի պատմությանն ու մշակույթին։ Այն գիտական եւ տրամաբանական առողջ հիմքի վրա ստեղծված մի ամբողջական ձեռնարկ է։ Կարող է օգտակար լինել բուհերի ուսանողների եւ միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտության համար։

Ընթերցողի կողմից վաղուց սպասված այս գիրքը կհետաքրքրի արցախահայության բազմադարյա հերոսական պատմությամբ հետաքրքրվողներին։ Այն իր մեջ ընդգրկում է Արցախի ողջ պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը, եւ լուսաբանում ազգային տեսանկյունից ինչպես համեմատաբար հայտնի, այնպես էլ մինչեւ օրս ստվերում մնացած հարցեր։

Հեղինակի հետ միասին ցանկանում ենք հայտնել մեր երախտագիտությունը Ֆրանսիայի Իսի լե Մուլինո քաղաքի Հայ մշակույթի տան վարչությանը, որը, հիմք ընդունելով մեր միջնորդությունը, հանձն առավ գրքի հրատարակության ծախսերը։

Հայ Յեղափոխական Դաշնակցության Բյուրո

ՑԱՆԿ

ՆԱԽԱԲԱՆ 3

ԵԿՈՒ ԽՈՍՔ 7

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Պատմաաշխարհագրական ակնարկ 9

Հնագույն աղբյուրների տեղեկությունները 12

Հնագիտական մասունքները 16

Արցախյան բարբառը 19

Քրիստոնեության դարձը 23

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐՑԱԽ-ԽԱՉԵՆԸ

Արցախի Առանշահիկ թագավորության ստեղծումը 28

Արցախական աշխարհը VI-VII դարերում 35

Պայքար արաբական բռնակալության դեմ 40

Արցախի վաղմիջնադարյան մշակույթը եւ «Աղվանից աշխարհի պատմությունը» 48

Արցախ-Խաչենի իշխանությունը ետարաբական շրջանում 55

Խաչենը եւ սելջուկ-թուրքերը 62

Զաքարյան իշխանապետության հրահրած ազգային զարթոնքը 66

Հասան-Ջալալ Դոլա՝ «Քնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի» 75

Սոցիալ-տնտեսական վիճակը 91

Վերին Խաչենը մոնղոլական տիրապետության շրջանում 100

Արցախի մշակույթը XIII դարում 104

Արցախ-Խաչենը XIV-XV դարերում 113

Արցախը եւ պարսկա-թրքական պատերազմները (XVI դար) 122

ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆԸ (XVII-XVIII դդ.) 127

Հայ մելիքությունը 129

Սոդքի ու Գեղամա իշխանությունը: Մելիք Շահնազար Ա-ը 131

Խամսայի մելիքությունները 132

Սղնախական պայքարը 138

Հարկադիր տեղատվության տասնամյակները 147

Վարանդայի տեր Մելիք-Շահնազարյանները 150

Մելիքների պայքարն Իբրահիմ խանի դեմ: Մելիքությունը եւ Ռուսաց արքունիքը 154

Նոր փորձություններ 168

Քուրակչայի դաշնագիրը եւ հայ մելիքության տխուր վախճանը 171

ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ (1805-1917)

Կայսրության գաղութակալական քաղաքականությունը 180

Շուշի ~- Շուշի ~ 183

Հայ-թաթարական կոտորածները 196

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՔԻՆ, ԲԱՅՑ ՆՐԱՆԻՑ ԲԱԺԱՆ

Բաթումի ճակատագրական դաշնագիրը եւ Արցախ-Ղարաբաղը 201

Մեծ Բրիտանիայի ռազմադիվանագիտական խարդավանքները եւ Արցախի դիմակայությունը 208

Հայաստանի Հանրապետության ուշացած օգնությունը 228

Սոցիալիստական շինարարության առաջին քայլերը եւ Արցախի ինքնավարության «խաղաղ-սոցիալիստական» արծարծումները 235

ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԸ

Հայաստանի խորհրդայնացումը եւ Արցախ-Ղարաբաղի խնդրի նոր բռնադատումը 238

Լեռնային Ղարաբաղի ինքնավարության խորհրդային 65 տարիները 252

Եվ այնուհանդերձ 268

Երեւութական վերակառուցումը եւ Արցախյան խնդիրը 272

ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՊՈՌԹԿՈՒՄԸ

Մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի պատմական որոշումը եւ նրան անմիջապես հաջորդած անկանխատեսելի դեպքերը 277

ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահության հուլիսի 18-ի նիստը 285

Արկադի Վոլսկու կոմիտեն 297

Բաքվի հայերի հունվարյան ջարդը եւ Գորբաչովի նոր սադրանքները 304

Հայ պատգամավորների հացադուլը 312

Գետաշենի ենթաշրջանի ողբերգությունը (պատճառները, ընթացքը, դասերը) 316

Բանակցությունն իբրեւ չարիքներից փոքրագույնը 323

ԼՂՀ հանրաքվեն 333

Արցախյան ինքնապաշտպանության զինումը 335

ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրությունները եւ Ադրբեջանի կառավարության նոր խարդավանքները 338

Ինքնապաշտպաններն Արցախը մաքրում են հակառակորդի դիրքերից ու հետքերից 340

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 353

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 366

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Պատմական Հայաստանի նահանգների կամ աշխարհների շարքում Արցախը մեկն է նրանցից, որ շատ են արժանացել հին ու նոր, օտար ու հայրենի հեղինակների ուշադրությանը։ Եվ, այդուհանդերձ, դժվար է ասել, թե պարզաբանված են նրա պատմության բոլոր հարցերը, որոշակի գծվել են նրա անցած պատմական ճանապարհի բոլոր կետանները, եւ այսօր կարելի է նատել ու, առանց նոր պրպտումների, հյուսել նրա պատմությունը։

Հիշենք թեկուզ հենց այն անունները, որոնցով այդ նահանգը կոչվել է տարբեր պատմաշրջաններում, իր քաղաքական կյանքի տարբեր հանգամանքներում։ «Աղախ», «Արձախ», «Մաւդէից աշխարհ», «Մաւդէք»՝ սեպագրերի մեջ ու միջնադարյան հեղինակների երկերում, «Խաչեն», «Արեւելք», «Արեւելից կողմանք», «Աղուանից կողմանք», նույնիսկ «Աղուանք»՝ հաջորդ շրջանի պատմագրության մեջ եւ, վերջապես, «Ղարաբաղ»՝ սկսած XIV դ. վերջից։

«Պատմութիւն Աղուանից Աշխարհի» նշանավոր երկի մի «Աղուանք» տեղանունը բավական է եղել, որպեսզի նույնիսկ հայագիտության հմուտ ներկայացուցիչներին մոլորեցնի՝ ստեղծելով այն տպավորությունը, թե գրքում խոսքը վերաբերում է անդրկուրյան «Աղուանք» աշխարհին, նրա տարացեղ ժողովրդին... Սակայն եւ զարմանալիորեն տարօրինակ է, որ, ինչպես նրանք բոլորն են նկատել, նույն գրքում չկա ո՛չ աղվան ցեղ, ո՛չ աղվանական պետական կամ հոգեւոր կյանքի որեւէ ապացույց, այլ ամենուրեք գործում են հայ մարդիկ, հայոց հոգեւոր ու աշխարհիկ իշխանությունների հայտնի գործիչները, մի խոսքով՝ ամենուր խոսքը գնում է հայ ժողովրդի մի հատվածի, նրա քաղաքական ու մշակութային ինքնահատուկ ոլորտի մասին։

Եվ ուսումնասիրողն աննախապաշար մեկը պիտի լիներ, ինչպես ռուս հայտնի պատմաբան ու, մանավանդ, իրավագետ Սերգեյ Վլադիմիրովիչ Յուշկովը, որպեսզի միանգամից հասկանար ու հաստատեր, որ այդ գիրքն էական ոչ մի առնչություն չունի անդրկուրյան աշխարհի հետ, հարազատ պատմությունն է հայկական Արցախ նահանգի, նրա տեր հայ ժողովրդի ու հայկական պետականության՝ մի որոշակի շրջանի առումով։

Ս. Վ. Յուշկովի կատարած հայտնությունը վե՞ր դրեց հակապատմական, հակագիտական ու պարզապես անմիտ խոսքուզրույցին, մեկընդմիշտ իրենց իսկական տեղերո՞ւմ դրեց հին բուն Աղվանքն ու Հայոց արեւելից կողմանք-Աղվանք-Արցախը, որպեսզի հին մոլորությամբ վարակված ոչ մեկն այլեւս չհայտնվի գիտական ասպարեզում եւ չանի նոր ավերածություններ։

Հարցը բարդացավ նրանով, որ հին Աղվանքի տարածքում հայտնված եկվոր թուրք տերերը որոշել էին ներկայանալ որպես տեղաբնիկներ, եւ դրա համար անհրաժեշտ էր վերաձեւել պատմությունը, արմատից իրենցը դարձնել ոչ միայն բուն Աղվանքը, այլեւ հարեւան երկրներն իրենց պատմությամբ ու ստեղծած արժեքներով։ Եվ սկսվեց պատմաաշխարհագրական մի կեղտոտ եռուզեռ, որի պղտոր ջրերում Արցախ-Ղարաբաղը հայտարարվում էր բուն Աղվանք, նրա ժողովուրդը՝ աղվան, որի անմիջական ժառանգորդն էլ, իբր, այսօրվա ադրբեջանցիներն են ու նրանց հարեւան հայերը, որոնք հայացել են միայն հայոց եկեղեցու նվաճողական համառ քաղաքականությամբ։ Այսքանից հետո այլեւս ոչ մի դժվարություն չէր ներկայացնում Արցախի եւ հարեւան հայկական շրջանների բազմադարյան հոգեւոր ու նյութական արժեքների լուծումն այս պղտոր ջրի մեջ։ Արդյունքում հայկական եկեղեցական ճարտարապետության կոթողները «դառնում էին» աղվանական-ադրբեջանական, խաչքարերն անգամ, նույն ճակատագրին արժանանալով, հայտարարվում էին «խաչդաշեր»։

Սակայն, բարեբախտաբար, պատմությունը գրվում է իրական-պատմական հիմքի վրա, վստահելի աղբյուրների հաղորդած տեղեկություններով, նյութական ու հոգեւոր մշակույթի ընձեռած տվյալներով։ Այս տեսակետից է, որ Արցախ-Ղարաբաղի ճշմարիտ պատմության հյուսվածքն ստեղծելու համար մեր ձեռքի տակ ամենաբազմազան նյութերի անհուն ու անեզերք պաշարներ կան՝ սկսած հինգերորդ դարից, եւ բավական է ցուցաբերել նրանցից օգտվելու հմտություն ու բարեխղճություն։ Սկսած հինգերո՛րդ դարից, որովհետեւ դրանից առաջ, շատ ավելի քան մեկ հազարամյակ, Արցախը գտնվել է Հայոց միասնական պետության կազմում, բաժանել է նրա ընդհանրական ճակատագիրը, եւ աղբյուրների համար այն ընդհանրականի մեկ մասնիկն է եղել, ո՛չ ավելին։ Հինգերորդ դարից, Մեծ Հայքի միասնական թագավորության բարձումից հետո (428 թ.) Արցախական աշխարհը դարձավ ամբողջից պոկված ու իր առանձին, հազար ու մի փորձություններ հաղթահարող միավորը։ Եվ հետագա ավելի քան մեկ ու կես հազարամյակի նրա կենսագրությունն է, որ կազմում է սույն գրքի նյութը, հիմքն ու առանցքը։

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արցախը Մեծ Հայք երկրի տասնհինգ նահանգներից կամ աշխարհներից մեկն էր, որը հին հայկական պետությունը մասամբ եզրափակում էր արեւելյան սահմաններում՝ ընդգրկելով բավական ընդարձակ մի տարածություն. այն արեւմուտքում հասնում էր մինչեւ Սեւանի արեւելյան ափը, արեւելքում բռնում էր Մուխանք (այժմ՝ Մուղան) դաշտի մի զգալի մասը, հարավից սահման ուներ Երասխ (այժմ՝ Արաքս) գետը, հյուսիսից՝ Արցախյան (նոր անունով՝ Ղարաբաղյան) լեռնաշղթան, որ Սեւանի ափից ձգվում է դեպի արեւելք՝ ավարտվելով Մուխանքի դաշտաբերանում:

Այս տարածքի մեջ Արցախը հյուսիսից հարեւան էր Ուտիք նահանգի հետ, որի սահմանակցությունը ձգվում էր Տավուշից մինչեւ Մուխանք դաշտի եզրը: Արեւելքից ու հարավ-արեւելքից Երասխ գետը նրան բաժանում էր հին հայկական Փայտակարան նահանգից, որը IV դարում անդարձ անցավ Պարսկաստանին: Իսկ արեւմուտքում՝ Երասխ գետի հոսանքից մինչեւ Սեւանի ափը, սահմանակից էր Սյունիքի հետ: Այս երկու նահանգներն իրարից բաժանող միակ հաստատուն գիծը Աղավնո կամ Ազարի-Հազարի գետն էր: Մնացած կետերում սահմանը հաճախ էր փոխվում՝ առանց խաթարելու երկու նահանգների անխախտ բարեկամությունն ու համագործակցությունը պատմական ամենաբարդ իրադրություններում, մանավանդ դրսեկ թշնամիների դեմ բորբոքված ազատամարտերում:

Միջնադարում Արցախը կամ Արցախական աշխարհը կոչվել է նաեւ ուրիշ անուններով՝ Ծավդեից աշխարհ, Խաչենք, Ղարաբաղ: «Ծավդեիցը» նահանգի իշխանական-նախարարական տան նստավայր Ծավդ-Ծոդ (այժմ՝ Զոդ) ավանի անունից էր, «Խաչենքը»՝ հետագայի նստավայր Խաչեն բերդավանի անունից: Իսկ Ղարաբաղ կոչվել է պարսկալեզու եւ թուրքալեզու եկվորների կողմից: Վաղմիջնադարյան հայկական աշխարհագրական երկի՝ «Աշխարհացույցի» համաձայն՝ Արցախը Մեծ Հայքի տասնե-

որդ նահանգն էր հանդիսանում եւ ուներ 12 գավառներ։ Այդ գավառներն էին՝ 1. Մյուս Հաբանդը («Մյուս» էին կոչում Սյունիքի Հաբանդից տարբերելու համար), 2. Վայկունիքը, 3. Բերդաձորը, 4. Մեծ Առանքը, 5. Մեծ Կողմանքը կամ Մեծ Կվենքը, 6. Հարելանքը, 7. Մուխանքը, 8. Պիանքը, 9. Պարզկանքը կամ Պարսկանքը, 10. Փառնեսը կամ Փառիսոսը, 11. Կողքը եւ 12. Սոդքը։

Սույն գավառների բոլոր անունները չէ, որ գործածվել են մեր միջնադարյան հեղինակների երկերում։ Այդ պատճառով էլ դժվար է տալ նրանցից մի քանիսի ճշգրիտ տեղադրությունը։ Իսկ մյուսները, որ պատմական կարեւոր դեր են խաղացել եւ բազմիցս հիշատակվել աղբյուրներում, հետեւյալ կերպ են տեղադրվում.

Հաբանդն ընդգրկել է այժմյան Մարտունու եւ Հադրութի շրջանների, մասամբ էլ Ասկերանի շրջանի տարածքը։ Այս գավառը նշանավոր էր Ամարաս ու Գտիչ վանքերով եւ Գորոզ բերդով։

Վայկունիքը տարածված էր Թարթառ գետի վերին ավազանի այն մասում, ուր Դադիվանքն է՝ այժմյան Բելբաջարի կամ Բարավանառի շրջանի հյուսիս-արեւելյան հատվածում եւ Խաթրավանք, Վաղուհաս, Զափար ու հարեւան գյուղերը Մարտակերտի շրջանի հյուսիս-արեւմտյան լեռնաստանում։

Բերդաձոր էր կոչվում նահանգի լեռնային այն մասը, որ բռնում էր Ջերմուկի կողմերից մինչեւ Արաքսի ափը, այժմյան Շուշիի, Լաչինի, Կուբաթլիի շրջանները։ Այս անունը հետագայում պահպանվել է լեռնային այն գյուղախմբի անունով, որ եկվորների հորջորջմամբ կոչվել է «Կալա-Դարասի» (հայերեն «Բերդաձորի» բառացի թարգմանությունը)։

Մեծ Առանքը տեղադրվում է Խաչենագետի վերին ավազանում՝ Կարկառ գետից մինչեւ Թարթառ-Տրտու եւ Բիրսա սարի փեշերից մինչեւ Մարտակերտի դաշտի արեւմտյան ծայրը։ Միջնադարում այս գավառանվանը փոխարինում էր նաեւ Ներքին Խաչենը։ Գավառի նշանավոր կետերն էին Գանձասարի ու Սուրբ Հակոբա վանքերը, Խոխանաբերդ իշխանական նստավայրը Գանձասարի դիմաց։

Մեծ Կողմանքը, որ կոչվում էր նաեւ Մեծ Կվենք, զբաղեցնում է Թարթառի վերտակ Թրղիի եւ Կուրակ գետակի ավազանները, ընդգրկում էր այժմյան Շահումյանի շրջանը՝ շրջականներով, նաեւ Գետաշենի ենթաշրջանը։ Այս գավառում էլ նշանավոր էին Զրաբերդը, Գյուլիստանը, Գլխո վանքը, Ուռեկավանքը։ Բնակավայրերից հայտնի էին Դաստակերտը, Աղվե թազավորական ամառանոցը, Գյուտականը, Բերդակուրը։

Փառիսոսը կամ *Փառնեսը*, օտար աղբյուրներում կոչված նաեւ Բուստ-ի Փառնես, որ պարսկերեն է եւ բառացի թարգմանությամբ կլինի Փառնեսի գավառ («բուստ»- «բուստակ»- «գավառ»), ընդգրկում էր Ղարաբաղյան լեռնաշղթայի հյուսիսային ու արեւմտյան փեշերը եւ հարեւան էր Մեծ Կվենք կամ Մեծ Կողմանք գավառին։ Միջնադարում հանախ կազմել է առանձին իշխանություն՝ Փառիսոս քաղաք-կենտրոնով, որը գտնվում էր Շամքոր գետակի ավազանում։

Մուխանք գավառն ամբողջ Մուխանք տափաստանն էր ընդգրկում եւ համապատասխանում էր այժմյան Մուղանի դաշտին։

Սոդքը, ինչպես հուշում է անունը, այժմյան Զոդն ու շրջակայքն էր ընդգրկում

եւ հնագույն ժամանակներում կարեւոր դեր ուներ նահանգի համար, քանի որ իշխանական-նախարարական տան նստավայր-կենտրոնատեղին էր հանդիսանում։ Այստեղ էլ նշանավոր էր Թարթառի հովտի Ջերմուկը (վերջերս՝ Իսթիսու), որ կոչվում էր նաեւ «Բաղանիք արքունականք»։

Մնացած գավառներն աղբյուրներում սակավ գործածություններ են ունեցել եւ միայն մոտավոր նշտությամբ կարող են տեղադրվել։

Օրինակ, ենթադրվում է, թե Պիանին ու Պարզկանք-Պարսականքը նահանգի հարավ-արեւելյան տարածքն էին զբաղեցնում եւ հարեւան էին Պարսկաստանին, այստեղից էլ՝ Պարսականք անունը։

Արցախը հարուստ է լեռնային գետերով ու գետակներով, որոնցից ամենամեծն ու ամենանշանավորը *Թարթառ-Տրտուն* է, որ սկիզբ է առնում Սեւանի արեւելյան ափի լեռնային ջրագոյացումներից եւ աստիճանաբար հորդանալով՝ հոսում դեպի արեւելք, դառնում նահանգի, ինչպես նաեւ հյուսիսային հարեւան Ուտիքի դաշտային մասերը ոռոգող հիմնական ջրամատակարարը։ Հաջորդ համեմատաբար ջրառատ գետը *Խաչենն* է (նաեւ *Խաչենագետ*), որ սկիզբ է առնում դարձյալ Սեւանի արեւելյան ափին, Վայկունիքի անտառածածկ սարավանդներից եւ, ոռոգելով Մեծառանքը, հոսում դեպի նահանգի դաշտային մասը։

Վայկունիքի ու Բերդաձորի լեռներում սկիզբ առնող *Կարկառ* (բառացի՝ քարքարոտ) գետը, եզերելով Հաբանդ գավառն արեւմտյան կողմից, հոսում է դեպի արեւելք՝ ձախափնյակում թողնելով հին Տիգրանակերտ քաղաքը (այժմ Աղդամից հյուսիս գտնվող Շահբուլաղ վայրում են պահպանվում նրա ավերակները, որոնք ժողովրդական լեզվով կոչվում են Տկռակերտ)։

Նահանգի հարավային մասում գտնվող գետակները՝ *Մեղրագետ, Խոնաշեն, Ամարաս, Իշխանագետ, Իգակ*, սակավաջուր են։ Համեմատաբար առատաջուր են *Քուրակը, Սեւջուրը, Ինջան*, որոնք ոռոգում են իրենց ավազանի բնակավայրերի դաշտերը, ինչպես Մարտակերտի, այնպես էլ Շահումյանի (նախկինում՝ Գյուլիստան) տարածքում։

Նահանգի գեղեցկությունն են կազմում անտառածածկ լեռներն ու իրար հաջորդող լեռնաբազուկները, *Արցախյան* լեռնաշղթան հյուսիսային մասում, նրա կենտրոնում բարձրացած *Մռավ* սարը, *Քիրսը՝ Բերդաձոր* գավառում, *Դիզափայտը՝* Հադրութի հարավային մասում։

Բազմազան է Արցախական աշխարհի կլիման. արեւելքում, Մուխանք գավառում եւ Հաբանդի ու Մեծ Կողմանքի դաշտային մասերում՝ տաք, մերձարեւադարձային բուսականության համար հարմար ու բարեբեր, իսկ դեպի արեւմուտք ու հյուսիս աստիճանաբար բարձրանալով կազմում է ալպյան բուսականության այն գոտին, որ տարվա կեսը սնունդ է տալիս դաշտային մասերից բարձրացող խոտակեր հոտերին։

Արցախի հացի ու ամեն տեսակ սննդի շտեմարանն էր *Մուխանք* դաշտը, որ, պատմիչ Կիրակոս Գանձակեցու խոսքով, ***«բերրի ու արգավանդ է..., լի ամենայն բարիքներով, ջրով, փայտով, մրգով ու որսով»***։ Հայտնի է ավանդական ասացվածքը Մուխանքի բարեբերության մասին. ասում էին՝ պարտադիր չէ, որ այստեղ

ցանես, հնձել կարող ես միշտ։ Այսինքն՝ առանց վար ու ցանքի էլ անցյալ տարվա մնացորդներից նոր արտ կբարձրանա, միայն թե բերքը հավաքվի։

Պակաս արգավանդ չեն նաև դաշտային ու նախալեռնային մյուս հողամասերը, այգեստանները, որոնց բերք ու բարիքով Արցախը Եւ իրեն է պահել, Եւ շրջականերին։

Իսկ անտառները, որոնցում աճում են աշխարհում հայտնի համարյա բոլոր ծառատեսակները, արցախցիներին ապահովել են վայրի բազմատեսակ մրգերով, անընպաո վառելիքով, առատ ու ընտիր շինանյութով եւ որսի բոլոր տեսակներով, որ հայտնի են Ասիայում եւ Եվրոպայում։

Սելջուկ թուրքերի արշավանքների ու ասպատակությունների ժամանակից ի վեր (XI-XII դդ.), մանավանդ թաթար-մոնղոլների տիրապետությամբ (XIII դ.) Մուխանք գավառից զրկվեցին Արցախի տերերը։ Եկվոր բռնավորներն այնտեղ էին անցկացնում ձմեռը, այնտեղից էին սկսում իրենց կողոպտչական արշավանքներն ու ասպատակությունները։ Իսկ բնիկ հայությունը, ապավինած իր լեռնաստանին, նրա բընական ու ձեռնաշեն ամրություններին, պաշտպանվում էր, ապրում իր դժվար կյանքը, ստեղծում իր հերոսական պատմությունը։

ՀՆԱԳՈՒՅՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմության վաղ շրջանի Արցախին վերաբերող աղբյուրագիտական տվյալներ քիչ կան, եւ դա միանգամայն հասկանալի է. օտար աղբյուրների տեղեկությունները հիմնականում ամբողջ հայ ժողովրդին, հայրենիք ու պետական-վարչական միավոր Հայաստանին են վերաբերել եւ բացառիկ դեպքերում միայն՝ նրա առանձին մասերին։ Ուստի եւ պահպանված տեղեկությունների մեջ պետք է տեսնել ո՛չ միայն ողջ Հայաստանի, այլեւ նրա առանձին մասերի, նահանգների ու գավառների քաղաքական ու տնտեսական, ազգագրական ու մշակութային վիճակը։ Իսկ այդ մասերի, նահանգների ու գավառների պատկանելության խնդիրը հեշտությամբ որոշվում է, քանի որ հենց նույն հնագույն աղբյուրների հաղորդած տվյալներով գծվում են Հայաստանի արտաքին սահմանները, նույնիսկ նրանց կրած փոփոխությունները պատմական ու քաղաքական տարբեր շրջաններում։

Արցախի պարագայում, բարեբախտաբար, հարցը դյուրանում է նրանով, որ վաղագույն աղբյուրներն անգամ այն հիշում են անվանապես, այդ անունն էլ պահպանվել է հետագա բոլոր ժամանակաշրջաններում, ընդհուպ մինչեւ մեր օրերը։ Եվ դա էլ մեծապես օգնում է պարզելու նահանգին վերաբերող բոլոր էական հարցերը։

Վանի կամ Արարատյան հայկական թագավորության երկու գահակալները մ.թ.ա. VIII դարում արձանագրել են, որ իրենք դեպի հյուսիս ու հյուսիս-արեւելք կատարած արշավանքներով իրենց պետությանն են միացրել նոր երկրամասեր, որոնց հետ է եղել նաեւ Ադախ-Արցախը (սեպագրերում՝ «Ադախունի»)։

Թագավորներից առաջինը Արգիշտի Ա-ի որդի Սարդուր Բ-ն է, որի սեպագիր արձանագրությունը՝ փորագրված Սեւանի արեւելյան ափի Զաղալու (այժմ՝ Ծովակ)

գյուղի մոտ, մի մեծ քարի վրա, պատմում է, թե ինքը նվաճել է Արկուկ երկիրը, հասել մինչեւ Ադախ-Ուրտեխ։ Ապա այս նույն արշավանքին վերաբերող առավել հանգամանալից սեպագրի մեջ, որ Սարդուրը փորագրել է Վանում՝ իբրեւ ընդարձակ տարեգրություն, պատմում է, թե այս կողմերում մեկ տարվա ընթացքում նվաճել է բազմաթիվ երկրներ՝ իրենց քաղաքներով, բերդերով, մարդկանցով, անշարժ ու շարժական հարստությամբ, եւ բոլորը դարձրել իրենը, այսինքն՝ միացրել իր թագավորությանը։ Այդ երկրների շարքում դարձյալ հիշատակում է Ադախ երկիրը։

Սարդուրը գահակալել է մ. թ. ա. 764-735 թթ.։ Ուրեմն, այս ժամանակ արդեն Սեւանից արեւելք կար Ադախ երկիր, եւ այն միացվել էր Վանի հայկական թագավորությանը։

Ադախ-Արցախի հաջորդ հիշատակությունն առկա է Սարդուր Բ-ի որդի եւ հաջորդ Ռուսա Ա-ի արձանագրության մեջ՝ փորագրված Սեւանի ափի Ծովինար գյուղում, մի ժայռի վրա։ Վանի այս արքան էլ (գահակալել է 735-714 թթ.) պատմում է, որ ինքը մեկ տարում հպատակեցրել է այդ երկրները (որոնց թվում՝ Արդախը)՝ իրենց թագավորներով, Թեյշեբա աստծո անունով քաղաք է կառուցել եւն, եւն[1]։

Արձանագրության մեջ կա մի ակնարկ, որից պարզ է դառնում, թե ինչո՞ւ նույն երկրները՝ նվաճված ու թագավորությանը միացված Սարդուր Բ-ի կողմից, մեկ էլ նրա որդի ու հաջորդ Ռուսան է նվաճել ու միավորել։ Ասում է՝ ***«Ես հնազանդեցրի այդ երկրները»։*** Ուրեմն, պետք է կարծել, որ Սարդուրից հետո նվաճված երկրներն ըմբոստացած, անկախացած են եղել, եւ Ռուսան հարկադրված է եղել դրանք վերանվաճել ու հնազանդեցնել։

Ամեն պարագայում, մ. թ. ա. **VIII** դարում Ադախ-Արցախ երկիր կար, եւ այն միացվել է Վանի կամ Արարատյան թագավորությանը, դարձել նրա մասը, նրա նահանգի կրողը։

Կա հետաքրքիր մի հանգամանք. երկրամասի Ադախ անունը, որ, անկասկած նախնականն է, պահպանվել է ոչ միայն չնչին փոփոխության ենթարկված Արցախ-Արձախ երկրանվան, այլեւ Գանձասարի վանքի մոտերքում գտնվող Ադախ բնակավայրի անվան մեջ, որն անխաթար պահպանվել է ամբողջ միջնադարում (այն հիշում են Մխիթար Գոշը, Ստեփանոս Օրբելյանը եւ ուրիշ վստահելի հեղինակներ)։

Հետագա շրջանին վերաբերող պատմական աղբյուրներում Ադախ-Արցախի մասին որոշակի տվյալներ չկան։ Սակայն նկատի առնելով, որ Ե՛ւ Վանի-Արարատյան, Ե՛ւ նրան հաջորդած մեր մյուս համահայկական թագավորական տների տիրապետության ժամանակներում պետության հյուսիսային սահմանն անցել է Կուր-Քուռ գետով, եւ նրանից հարավ ընկած տարածքները գտնվել են Հայոց պետության կազմի մեջ, ուրեմն եւ վստահաբար պետք է ասել, որ այս խոսքը վերաբերում է նաեւ Ադախ-Արցախին, որը մ. թ. ա. **VIII-I** դարերում Հայոց միասնական պետության հետ է եղել, ենթակա նրան վիճակված անցուդարձերին։

Հին դարերի հաջորդ շրջանը (մ. թ. ա. **I** դ.-մ. թ. **III-IV** դդ.) աղբյուրագիտական

---

1 Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960.

շատ ավելի բարվոք վիճակում է գտնվում: Այս ժամանակների իրողություններն անհրաժեշտ մանրամասներով արտացոլված են հին հույն ու լատին հեղինակների երկերում, որոնք ամենայն բարեխղճությամբ ցույց են տալիս, որ Հայաստանը, ավելի ճիշտ՝ Մեծ Հայք պետությունը, տարածված է հայաբնակ մի ընդարձակ տարածքի վրա, որի հյուսիսային սահմանն անցնում է Կուր գետի ընթացքով: Այդ հեղինակներն են՝ հույն մեծ աշխարհագետ Ստրաբոնը (մ. թ. ա. I– մ. թ. I դդ.), Պտղոմեոսը (II դ.), Դիոն Կասիոսը (IIIդ.), Ստեփանոս Բյուզանդացին (IV-V դ.) եւ ուրիշներ: Ահա՛, օրինակ, նրանցից մեկի՝ Պտղոմեոսի հաղորդածը. ***«Կուր գետը, որ հոսում է ամբողջ Իբերիայով*** (հին Վրաստան) ***ու Ալբանիայով*** (հին Աղվանք), ***նրանցից բաժանում է Հայաստանը»***[1], Կամ՝ ***«Մեծ Հայքը հյուսիսում Կոլխիդայի մի մասից, Իբերիայից ու Ալբանիայից սահմանազատվում է վերոհիշյալ գծով, որն անցնում է Կուր գետով»***[2]: Կարելի է վկայակոչել նաեւ ուրիշ հեղինակների՝ Պլուտարքոսին, Պլինիոս Ավագին կամ Սեկունդին, Եվստաթիոսին, Ազինի Կվադրատոսին, Հուլիոս Սոլինին եւ այլոց, որոնք նույն իրողությունն են հաստատում: Սակայն կարեւոր է, որ այս հեղինակները ոչ միայն իրենց ժամանակների վիճակն էին ներկայացնում, այլեւ նախորդ, առավել հին ժամանակները, եւ դրանք եւս հավաստի են, քանի որ իրենց հաղորդած վաղնջական տեղեկությունների համար անպայման նշում են օգտագործած առավել հին աղբյուրներ, հեղինակների երկեր, հաճախ էլ իրենց ունկընդրած ժողովրդական ավանդությունները:

Ուրեմն, Հայաստանի հյուսիսային սահմանը Կուր գետն էր: Իսկ օտար եւ հայ աղբյուրներից հայտնի է, որ նույն Հայաստանի հյուսիսային սահմանային նահանգն է եղել Ուտիքը՝ տարածված Կուրի աջ ափով, նրա խրամ վտակի խառնվելու տեղից մինչեւ Կուրի ու Արաքսի միացման վայրը: Ուտիքից հարավ էլ գտնվում էր Արցախը՝ համեմատաբար Հայաստանի խորքո՛ւմ գտնվող մի նահանգ: Եվ պատահական չէ, որ մեր վաղմիջնադարյան հեղինակները Մեծ Հայքի խորքային, համեմատաբար ծավալուն մասերը կոչում էին «Սիւնք զաւառ» (այսինքն՝ սյուների դեր ունեցող, հզոր զավառներ) եւ դրանց շարքն էին դասում նաեւ Արցախական աշխարհը:

Վերը հիշատակված հունա-հռոմեական հեղինակների տեղեկություններում կան այնպիսիք, որոնք, Հայաստանի ընդհանուր քաղաքական, տնտեսական ու ազգագրական պատկերը տալով հանդերձ, ճշգրտում են նաեւ առանձին նահանգների վիճակը, բնութագրում նրանց այս կամ այն առանձնահատկությունը: Այսպես. Ստրաբոնը, խոսելով իր ժամանակի Հայաստանի ազգագրական վիճակի մասին, տեղեկացնում է, որ ամբողջ երկիրը միալեզու է, այսինքն՝ նրա ամբողջ ժողովուրդը խոսում է մեկ լեզվով, հասկանալի է՝ հայերեն: Կնշանակի՝ Արցախի բնակչությունը եւս հայ էր ու հայախոս:

Ստրաբոնի երկում Արցախ-Օրխիստինայի մասին («Արցախի» հունարեն հորջորջումն էր «Օրխիստինան») հաղորդվում է մի այնպիսի մանրամասն, որից կարելի է եզրա-

1 Պտղոմեոս, գիրք V, գլ. XI, § 3:

2 Նույն տեղում § 1:

կացնել, թե հույն մեծ աշխարհագետն այս նահանգը նանաչել է առավել մոտիկից։ Ասում է՝ Օրխիստինա-Արցախը պատերազմների ժամանակ *«հանում է ամենամեծաքանակ հեծելազորը»*[1]։

Հիշենք, որ Ստրաբոնը Մեծ Հայքի նահանգները թվարկելիս ոչ մեկի որեւէ հատկանիշը չի նշում, չի առանձնացնում։ Եվ մեկ էլ, Արցախ-Օրխիստինայի մասին խոսելիս՝ *«հանում է ամենամեծաքանակ հեծելազորը»։* Ըստ էության սա մի կարգե դուրս երեւույթ է եղել։ Եվ, իսկապես, հետագա ժամանակներն էլ ցույց տվին, որ Արցախն այդ տեսակետից իր բացառիկ տեղն է ունեցել։ Արցախական աշխարհի հեծելազորը միշտ էլ օրինակելի է եղել հայոց հայրենապաշտպան կռիվներում։ Իսկ այս աշխարհի նժույգները մեծ համբավ ունեին ուշմիջնադարյան Արեւելքի երկրներում։

Բուն հայկական գրավոր աղբյուրները, որ, բնականաբար, Արցախի մասին տեղեկություններ կարող էին հաղորդել՝ սկսած V դարից, հին իրականությանն անդրադառնալիս, միշտ էլ այդ նահանգը ներկայացնում էին Մեծ Հայքի միասնական պետության կազմում, որպես նրա այնպիսի բաղկացուցիչը, որ կարեւոր դեր էր խաղում հայոց վարչական ու մշակութային կյանքում եւ ուներ իր առանձնահատուկ պատկերը։ Այդ տեղեկությունների համաձայն՝ Տիգրան Մեծն այստե՛ղ է կառուցել իր մեծազոր տերության Տիգրանակերտ կոչվող չորս մայրաքաղաքներից մեկը։

Քրիստոնեության դարձի ժամանակ Արցախին մեծ ուշադրություն դարձրին՝ այնտեղ հիմնելով երկրի արեւելյան նահանգների առաջին եպիսկոպոսանիստը (Ամարաս)։

Միայն մեկ անգամ այս նահանգը, հարեւան մյուսների հետ միասին, ըմբոստացավ, բաժանվեց Հայոց միասնական թագավորությունից։ Դա IV դ. երկրորդ կեսին էր։ Փավստոս Բուզանդի պատմելով՝ Մեծ Հայքի որոշ նահանգներ եւ գավառներ խիստ դժգոհ էին Արշակ Բ թագավորից, բաժանվեցին, հեռացան նրանից։ Բաժանվողների հետ էր եղել նաեւ *«ամուր զաւառն Արձախայ»։* Սակայն շատ շուտով սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը չարաչար պատժեց անջատական իշխաններին, նրանց վերադարձրեց միասնական թագավորության գիրկը եւ հյուսիսում նորից սահման դարձրեց Կուր գետը՝ *«որպէս եւ յառաջն լեալ էր»* («ինչպես որ առաջ էլ եղել էր»)[2]։

Եղիշեի վկայությամբ՝ արցախական զորքն էլ, հանուր հայության հետ միասին, *Ավարայրի* դաշտ էր գնացել, կռվում էր *Պարսից* բռնատիրության դեմ։ Իսկ նակատամարտից հետո Հայոց նախարարների եւ նրանց հարազատների բազմությունները պահվել էին երկրի ամուր վայրերում, պաշտպանվում էին ու շարունակում պայքարը։ Դրանց կեսն ապաստանել էր Արցախի թանձրախիտ անտառներում *(«ի թանձրախիտ մայրիսն Արձախոյ»)*[3]։

Եղիշեի այս տեղեկության լրացումը գտնվում է միջնադարյան մի ձեռագիր հիշատակարանում, որն էլ պատմում է, թե Արցախի իշխան Բակը, Ավարայրի նակատամարտից հետո, թշնամիներով պաշարված մի բերդի մեջ, ամբաստանություն կարդաց

---

1 Ստրաբոն, XI, XIV,§ 4։

2 Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 314։

3 Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երեւան, 1957, էջ 125։

պարսից զորագլխի դեմ, ապա իր յոթ հարյուր քաջ հեծյալների գլուխն անցած՝ հեռացավ բերդից, ***«գնաց... յամուրն Արցախայ... կեցեալ բարեպաշտութեամբ ու քրիստոսասէր հավատով»***[1]։

Իսկ Մովսես Խորենացին՝ հինգերորդ դարի մեր մեծագույն հեղինակն ու Հայոց Պատմահայրը, իր օրերում ճնելով այս նահանգի հայության, նրա իշխանական-նախարարական տների բնաշխարհիկ արմատները, հետազոտելով իրեն հայտնի աղբյուրները, ժողովրդի հիշողությունն ու պատմական տրամաբանությունը, արձանագրեց հետեւյալը. հայոց ավանդական նախնի Հայկ նահապետի ժառանգներից մեկը՝ Սիսակ անունով, տեր է դարձել Հայաստանի արեւելյան մասին։ Նրա անունից էր, որ այս աշխարհը կոչվեց Սիսական։ Սիսակի սերունդներն էին, որ բազմացան, լցրին այս կողմերը։ Եվ այս Սիսակի ժառանգներից մեկն էլ՝ Առան անունով, կուսակալ կարգվեց Երասխ գետի ձախակողմին՝ մինչեւ Կուրի հոսանքը, ուր ավարտվում էր հայերեն խոսքը ***(«զեզերը հայկական խօսիցս»)***[2]։ Այս Առանի զավակներից էլ, ասում են, գոյացել են Գարդմանքի, Ծավդեքի ու Գուգարքի, այսինքն՝ Կուրի ու Արաքսի ամբողջ միջագետքի, հայ բնակչությունն ու իշխանությունները։

Փույթ չէ, որ մեր Պատմահայրը հանախ անուններով է բացատրում պատմական իրողությունները (Առան կուսակալի անունն է մնացել երկրամասի վրա՝ Առան։ Առանն աղու-անուշ մարդ էր, նրան «աղու» էին կոչում, եւ դրանից էլ՝ երկրի Աղուանք անունը...)։ Կարեւորն այն է, որ նա երկրամասի բնակչությանն ու իշխանական տոհմերին բնաշխարհիկ հայ է ճանաչել՝ վկայելով նաեւ, թե նրանք իրենց հիշում են իբրեւ հայ ազգի արմատից՝ Հայկից սերվածների։

Պատմահայրը Երասխի ու Կուրի միջագետքում ապրած բնակչությունը հիշում է նրանց իշխանական տների անուններով՝ ***«Գարդմանացւոց եւ Ծաւդէացւոց եւ Գուգարացւոց»***[3]։

«Ծաւդէացւոցը» Արցախի իշխանանիստ Ծաւդ-Ծոդ-Զոդ ավանի անունից է։ Ուրեմն Պատմահայրը հաստատում էր, թե Հայկի սերունդներից էին սերված ինչպես Արցախի բնակչությունը, այնպես էլ Ծաւդ-Սոդքում նստող իշխանական տունը։

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ

Արցախը հնագիտական պատշաճ ուսումնասիրության չի ենթարկվել, եթե չասենք՝ այն մոռացության է տրված եղել առհասարակ հնագիտության եւ մասնավորապես

---

1 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երեւան, 1984, էջ 182։

2 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք երկրորդ, գլ. Ը։

3 Տպագրված բնագրում («Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 113) «Գուգարացւոց»-ի փոխարեն «Գարգարացւոց» է, որ ակնհայտ թյուրիմացություն է, ինչպես արդեն ապացուցված է հայագիտության մեջ։

հայ մասնագետների կողմից։ Եվ, այսուհանդերձ, նահանգի տարբեր վայրերում հայտնաբերված նյութերն ու մի քանի հպանցիկ գիտական մոտեցումներն անգամ ցույց են տվել, որ մարդն այստեղ շարունակաբար ապրել է ամենահնագույն ժամանակներից ի վեր, իսկ հայ ցեղը նրա տերն է արդեն շուրջ հինգ հազար տարի, այսինքն՝ այն շրջանից, երբ նա, բաժանվելով հնդեվրոպական նախամորից, սկսել է իր ինքնուրույն ազգագրական կյանքը։

Հադրութի (հին Դիզակի) շրջանի Ազոխ գյուղի մոտ կա ընդարձակ ու բազմաշերտ մի քարանձավ, որի զանազան դահլիճներում դեռևս անցյալ դարում պատահաբար տեսել էին նախամարդու կենցաղային իրեր, քարե գործիքներ, ամենատարբեր կենդանիների ոսկորներ, նաև նեանդերթալցու ծնոտի մի խոշոր բեկոր, որն իր վրա հրավիրեց հայրենի ու արտասահմանյան ճանաչված գիտնականների սեւեռուն ուշադրությունը։ Այժմ արդեն հիմնավորապես պնդում են, թե այդ ծնոտը պատկանել է տեղաբնակ նախամարդու, որի ***«հիշատակները»***, ինչպես գիտությանն է հայտնի, մինչեւ այժմ գտնվել են չորս հնավայրերում (Մարոկկոյում, ԳՖՀ-ում, Անգլիայում եւ Իտալիայում) եւ արցախյան նեանդերթալցին հինգերորդն է, որն էլ, անկասկած, անհուն հեռանկարներ է բացում Արցախյան աշխարհում արդյունավետ հնագիտական հետազոտություններ կատարելու համար։

Ֆրանսիացի հայտնի հնագետ Անրի դը Լյումլեյնը, այցելելով Ազոխի քարանձավ եւ ծանոթանալով նրա հարուստ ու բազմազան նյութերին, հայտարարել է, թե դրանք ***«հողագնդի վրա մարդկային հնագույն քաղաքակրթության օջախի»*** ապացույցներ են[1], եւ գիտությունը հնարավորություն ունի տեսնելու, որ լեռնային այս երկիրը եւս ընդգրկված է եղել մարդաստեղծման ընթացքի մեջ։

Ազոխի քարանձավի հնագիտական նյութերը, մասնագետների կարծիքով, հնարավորություն են տալիս դիտարկել մարդկային ցեղի զարգացման ընթացքը գիտությանը հայտնի բոլոր փուլերում՝ հին քարե դարից մինչեւ բավական զարգացած մշակույթի շրջանը եւ ապա՝ հայկական ցեղի մշակութային կյանքի շրջան։ Քարանձավում գտնված նյութերի հիման վրա հնարավոր է դիտարկել կենցաղային իրերի ու գեղարվեստական ***«ստեղծագործությունների»*** պարզագույն նմուշներից մինչեւ քարամանդակ այնպիսի կոթողներ, որոնց վրա անցյալ դարի վերջին Մակար վարդապետ Բարխուտարյանցը տեսել է ***«մի կնոջ արձան... կոփված քարից։ Կնոջ զգեստի տարազը եւ գլխի շինության ձեւը, որոնք ներկայացնում են Արցախի կանանց հագուստների եւ փաթթոցներով շինած գլուխների տիպը»***[2],

Ուրեմն, հնավայրը յուրատիպ հնագիտական թանգարան է հազարամյակների՝ նախամարդուց մինչեւ արցախյան հայի տիրական ներկայությունը։

Հնավայրեր կան նաեւ Արցախի ուրիշ շրջաններում, մանավանդ գետահովիտներում ու հնավանդ բնակավայրերի մոտերքում։ Ասկերանի շրջանի Մեղրագետ (Բալլուջա)

---

1 Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 1976, սեպտ. 18։

2 Մ. Բարխուտարյանց։

վտակի ափին՝ Խոջալուի մոտ, Ստեփանակերտի արվարձաններում, Քարաղբյուր (Դաշբուլաղ) գյուղի դաշտում, Թարթառի ու Խաչենագետի հովիտների մի շարք բնակավայրերի մոտերքում: Այս հնավայրերը հարուստ են դամբարանաբլուրներով, որոնք, բարձրացած լինելով մեկ կամ մի քանի, երբեմն նույնիսկ մի ամբողջ խումբ հանգուցյալների վրա, իրենց ներսում պահպանում են ոչ միայն հանգուցյալների կրմախքները, այլեւ նրանց կենցաղի, ռազմական կյանքի եւ առհասարակ ժամանակի իրականության բնորոշ առարկաները եւ հիմնականում ներկայացնում են մեր պատմությունը բրոնզի ու երկաթի դարերից մինչեւ Արարատյան (Վանի) թագավորության ժամանակները: Հայաստանում նմանատիպ բնակավայրեր են պեղվել Գյումրիի, Վանաձորի կողմերում, Սեւանի ավազանում եւ այլուր: Ուրեմն Արցախի հնավայրերն էլ նրանց շարունակությունն են կազմում, եւ հետաքրքիր է, որ այստեղի պեղումները ներկայացնում են համարյա նույնօրինակ առարկաներ՝ մարդու կմախք, արտադրության գործիքներ, խեցեղեն, զարդեր, կենդանիների, հատկապես ձիու կմախքներ, որոնք նշան են, թե հանգուցյալը հեծյալ է եղել, եւ նժույգը եւս թաղել են իր հետ: Վերջինս ապացույց է նաեւ, որ ձիաբուծությունն Արցախում դեռեւս հնագույն ժամանակներում բավական կարեւոր դեր է ունեցել:

Ստեփանակերտի ու Խոջալուի դամբարանաբլուրներից պեղված նյութերի մեջ տիրապետող են նաեւ այն նյութերը, որոնք գիտության մեջ կապվում են Արարատյան (ասուրերեն՝ Ուրարտու) թագավորության հետ: Այսպիսի նյութերից մեկը՝ սարդիոնե զարդանախշը, ունի նաեւ սեպագիր արձանագրություն՝ Ռուսա թագավորի անվան հիշատակությամբ: Սա էլ մի վկայություն է, որ հայկական այդ թագավորության մեջ էր գտնվում Արցախը, մանավանդ, երբ հենց նույն Ռուսա թագավորի սեպագրի մեջ առկա է նաեւ Ադախ-Արցախի պարզ հիշատակությունը:

Ուշ շրջանի դամբարաններում հետազոտողները (գերմանացի Ռյոսլերը, ռուս Ի. Մեշչանինովը, Յա. Հումմելը եւ Կ. Քուշնարյովա-Քուշնարյանը) պեղել են նաեւ կարասներ՝ հանգուցյալների կմախքներով, ուրեմն՝ կարասային թաղումներ, որոնք բնորոշ են ուշ բրոնզե դարից սկսվող ժամանակաշրջանին եւ տալիս են հետաքրքիր նյութեր նաեւ արհեստների ու արվեստների զարգացման ընթացքը, ինչպես նաեւ հավատալիքների վիճակը պատկերացնելու համար: Ստեփանակերտի այժմյան արվարձաններում հայտնաբերված մի կարասում, մարդու կմախքի հետ միասին, եղել են բրոնզե կացիններ, գուրզերի մնացորդներ, բրոնզե զարդեր, պաշտամունքային արձանիկներ: Հասկանալի է, որ նույն առարկայից մի քանիսը մեկ մարդու հետ չէին թաղի սովորական պարագայում: Կնշանակի՝ հանգուցյալն արհեստագործ է եղել, եւ նրա հետ են դրել իր պատրաստած արտադրանքի տեսակները: Իսկ հիշյալ հնավայրում եւ Հադրութի ու Մարտունու շրջաններում շինարարական, գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ հաճախ էլ պատահաբար հայտնաբերվել են պղնձե ու ոսկե անավարտ իրեր ու զարդեր: Դրանք աներկբայորեն ցույց են տալիս, որ արտադրվել են հենց տեղում, այլապես դրանց անավարտ լինելը ոչ մի բացատրություն չէր ունենա:

ԱՐՑԱԽՅԱՆ ԲԱՐԲԱՌԸ

Եթե ամեն մի լեզու արտահայտում է իրենով խոսող ժողովրդի պատմության ու հոգեւոր կերպարի կարեւորագույն առանձնահատկությունները, ապա բարբառն էլ նույն դերն է կատարում իրենով խոսող ազգահատվածի համար։

Լեզվաբանները հայոց բարբառներից կամ հին խոսքով ասած՝ եզերական լեզուներից ամենամեծն են համարում Արցախի (ետնագույն Ղարաբաղի) բարբառը։ Նրա *«սահմանները կը փռվին Հյուսիսեն մինչեւ Կովկասի վերջին ծայրերը, հարավեն մինչեւ Թավրիզ, արեւելքեն մինչեւ Կասպից ծովին եզերքները, արեւմուտքեն Սեւանա լիճը եւ Երեւանի ու Կարնո բարբառներու սահմանագիծը»*[1]։ Այս սահմանները գծելուց հետո Հր. Աճառյանը հիշում էր, որ Ղարաբաղի բարբառը ղարաբաղցի արտագնա զանգվածների հետ հորդացել է նաեւ հիշյալ սահմաններից դուրս, տարածվել փոքրասիական Զմյուռնիայի եւ Այտրնի մոտերքի հայկական գաղթավայրերում, միջինասիական հանրապետություններում, Ռուսաստանում եւ այլուր։ Աճառյանի վկայությամբ՝ Փոքր Ասիայի Պուրտուր եւ Էոտեմիշ վայրերում դեռեւս պահպանվում է այդ բարբառը՝ այնտեղ ապրող հին ղարաբաղցիների շուրթերին։

Ըստ Հր. Աճառյանի՝ Ղարադաղի խոսվածքը եւս պատկանում է Ղարաբաղի բարբառին։ Վերջինիս շատ մոտիկ է նաեւ այն ենթաբարբառը, որով խոսում են *«Թավրիզի մոտ Մուժումբար գյուղը եւ Թավրիզի Վիրանա թաղի հայությունը, որ ձեւացած է Ղարաբաղի եւ Մուժումբարի հայ գաղթականներեն»*։ Այս վայրերը, ինչպես նշիշտ նկատել էր խոշոր գիտնականը, հին Փայտակարանի մասերն են եւ, բնականաբար, պահպանել են Մեծ Հայքի Փայտակարան գավառի հայության բեկորները, որոնք հարյուրամյակների ընթացքում չեն կորցրել իրենց ավանդական մայրենի լեզուն։

Անվանի լեզվաբան Արարատ Ղարիբյանն էլ լեզվաբանական բնությամբ ցույց է տվել, որ արցախ-ղարաբաղյան բարբառին է պատկանում նաեւ Զանգեզուրի ենթաբարբառը, որը տարածված է հին Սյունյաց աշխարհում (Մեծ Սյունիք)։ Ղարիբյանն էլ իր հերթին մի ընդարձակ քարտեզ էր գծել արցախական բարբառի տիրապետության սահմանները ցույց տալու համար. *«Ղարաբաղի բարբառը մեր կենդանի բարբառներից ամենամեծն է,*- գրել է նա։ - *Այդ բարբառով խոսում են Ղարաբաղի բնակչությունը եւ բոլոր այն ղարաբաղցիները, որ գտնվում են Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Շամախու շրջանում, Թուրքմենստանում, Ուզբեկստանում եւ Տաջիկստանում, նաեւ Զանգեզուրի եւ Կասպանի բնակիչները, Կիրովաբադի շրջանի բնակչությունը, Շամշադինի, Դիլիջանի շրջանի բնակչությունը»*[2]։

Հարկ է ուշադրություն դարձնել. եթե հին ու նոր գաղթավայրերը հանենք, ապա արցախ-ղարաբաղյան բարբառի տարածման սահմանների մեջ կմնան Մեծ Սյունիքը,

1 Հրաչյա Աճառյան, Հայ բարբառագիտություն («Էմինեան ազգագրական ժողովածու» հատ. Ը), Մոսկվա-Նախիջեւան, 1911, էջ 61։

2 Ար. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երեւան, 1953, էջ 230։

Արցախը, Փայտակարանը եւ Ուտիքը, այսինքն՝ Հայոց արեւելից կողմանքը եւ Սյունիքը, հայկական ազգագրական անտրոհելի մի ամբողջություն, որ սկսած V դարի սկզբից՝ պարբերաբար կտրվում էր ազգային մայր միջավայրից, անջրպետվում աշխարհագրական-քաղաքական հազար ու մի արգելափակով, սակայն չէր կորցնում իր հայկական ընդհանուր նկարագիրը, ինչպես նաեւ տեղական ինքնատիպ անկրկնելի պատկերը։

Արցախ-ղարաբաղյան բարբառը նշանավոր է ոչ միայն ընդգրկած բնակչության քանակով, այլեւ նրանով, որ հայ ամենահարուստ ու ամենաճկուն բարբառներից մեկն է եւ, թերեւս, ամենակենսունակն ու ամենահամառը։

Իրավացի էր Լեոն, երբ գրում էր. ***«Ուր կա ղարաբաղցի, նրա հետ ապրում է իր պապենական մեծ ու հարուստ ժառանգությունը՝ ղարաբաղցու բարբառը, ուժեղ, կոպիտ՝ ինչպես լեռնական մի ստեղծագործություն, հյութեղ, իր առանձին համ ու հոտով»։***

Արցախյան բարբառը պահպանվել է ոչ միայն բնաշխարհում, այլեւ ամենուր, որտեղ ոտք է դրել եւ իր ծուխն է երկինք հանել նրանով խոսող թեկուզ մեկ ընտանիք։ Այստեղ մեր խոսքը թերեւս միակողմանի է, քանի որ ոչ միայն խոսողն է պահել ու պաշտպանել իր բարբառը, այլեւ բարբառն է պահել ու պահպանել իրենով խոսողին։

Հայոց լեզվի բարբառների գոյության մասին մենք տեղեկություններ ունենք դեռեւս V դարից, այսինքն՝ այն ժամանակից, երբ հայերեն գիրք էր գրվում, եւ մեր հեղինակները մագաղաթին էին հանձնում իրենց իմացածը մայրենի լեզվի վիճակի մասին։ Իսկ VII դարի վերջին ապրած ու ստեղծագործած Ստեփանոս Սյունեցին, այդ բարբառները թվարկելով անուն առ անուն, տալիս է նաեւ նրանց տարբերությունները, հանձնարարում պահել միասնական ազգային լեզվի անաղարտությունը։

Մեր այս հեղինակի թվարկած 7 բարբառներից (նրա խոսքով՝ ***«բառք եզերականք»***- «եզերական բառեր») մեկն էլ *արցախայինն* էր (***«զբառս եզերականս, որպէս զԿորճայն, զՏայեցին..., զՍիւնին, զԱրցախայինն...»***)։

Ստ. Սյունեցին գտնում էր, որ բարեկիրթ մարդ լինելու, հայոց միասնական (իր խոսքով՝ միջերկրյա) լեզուն լավ իմանալու համար պետք է ճանաչել, իմանալ այդ ***«եզերական բառ»***-բարբառները, ինչպես նաեւ հարեւան ժողովուրդների լեզուները։ Սա VII դարում, Սյունյաց լեռներում ծվարած վանքի վարպետն էր պահանջում։ Իսկ նրա օրերում հայոց միջերկրյա կամ ոստանիկ լեզուն, միակ պիտանին համազգային փոխհարաբերությունների եւ գրության համար՝ այն էր, որ այժմ *գրաբար* է կոչվում, քանի որ պահպանվել է միայն գրքերում, գրավոր ձեւով։

Ե՞րբ է գոյացել արցախյան բարբառը, լեզվապատմական ինչպիսի՞ ճանապարհ է անցել եւ ի՞նչ դեր է ունեցել Հայոց արեւելից կողմանց բնակչության՝ հայ ժողովրդի այդ յուրահատուկ հատվածի, պատմական ճակատագրի համար։

Կարելի է սկսել վերջից։ Բնականաբար եզերական (այս բառի իսկական իմաստով, այսինքն՝ ծայրերկրային) բարբառներն ամենից շատ էին ենթակա օտար ազդեցությունների, մանավանդ, եթե այդ օտարներն այնպիսի բռնակալներ էին, ինչպիսիք պարսիկներն ու արաբները, սելջուկ-թուրքերն ու մնացած ավարառու հորդաները, ո-

ռոնք հրով ու սրով էին տարածում իրենց լեզուն, սրա հետ էլ՝ կրոնը, կամ կրոնը՝ նրա հետ եւ լեզուն։

Եթե եզերական լեզուներն ամենից շատ էին ենթակա օտարների հարվածներին ու ազդեցություններին, ապա արդար կլիներ ասել՝ եզերական բարբառները ազգի ընդհանուր լեզվի եզերապահ գնդերն էին։

Հայերեն որեւէ բառի գոյացումը, զարգացման ընթացքը եւ նման այլ հարցեր պարզելու համար չկա ավելի հարմար եղանակ, քան նրա համեմատությունը գրաբարի հետ։

Գրաբարն, իհարկե, խոսակցական լեզու է եղել վաղնջական ժամանակներում, նույնիսկ հայերեն գրերի գյուտից առաջ։ Այս դերն առավել մեծացավ, երբ մենք դեռեւս գիր չունեինք, սակայն հայոց եկեղեցում նրանով քարոզություն էր արվում, ժողովուրդը բանավոր խոսք էր ունկնդրում, հաղորդակցվում Սուրբ գրքին ու աստվածային պատվիրաններին։ Եվ, ահա՛, այստեղ բարբառախոսները հաղորդակցվում էին միջերկրյա լեզվին, նրանից ընդունում բառեր, քերականական տարբեր ձեւեր ու եղանակներ։

Այսպես էլ ամեն մի բարբառ յուրովի իր մեջ էր առնում գրաբարի բառապաշարն ու քերականությունը։

Բավական է ուշադրություն դարձնել արցախ-ղարաբաղյան բարբառի ձեւաբանական մի քանի ակնառու առանձնահատկությունների վրա՝ համոզվելու համար, որ դրանք գալիս են գրաբարից։

Ղարաբաղի բարբառում է, որ պահպանվել է գրաբարի ***«Ն հանգը, որ շատ բառերու ծայրը այնպես սովորական է»*** (Հ. Աճառյան)։ Օրինակ, մեր բոլոր բարբառները գրաբարյան կուռն, դուռն, մուկն, նուռն, կաթն, մատն, ոտն, սառն, զառը եւ այլ բառերից ջնջել են վերջին ն-ն, իսկ Ղարաբաղի բարբառը պահել է, միայն ենթարկելով իր համար շատ բնորոշ մի փոփոխության. կուռն-կօռնը, դուռն-տօռնը, ձուկն-ծուկնը, մուկն-մօկնը կամ մօկուն, նուռն-նօռնը, կաթն-կաթնը, մատն- մաննը, ոտն-վրեննը, սառն-սառնը, զառն-կյառնը։

Հայոց նոր աշխարհը եւ գրեթե բոլոր բարբառներն ընդունել են մի նոր հնչյուն՝ ֆ, որը գրաբարում չկար։ Ղարաբաղի բարբառը մինչեւ օրս էլ չի ընդունել այդ հնչյունը եւ, գրաբարի նման, օտարազգի բառերի ֆ-ն դարձնում է փ, ինչպես օրինակ՝ ֆուրգոն-փուրգոն, ֆաբրիկա-փաբրիկա, կոնֆետ-կանփետ, ֆիզիկա-փիզիկա, Ֆրանսիա-Փրանսիա։

Ձայնավորով սկսվող շատ բառերի առջեւից ղարաբաղյան բարբառն ավելացնում է մի «հ». հունց-ոնց, հինչ-ինչ, հիբ-երբ, հընգեր-ընկեր, հրլեւուր-ալեւոր եւ այլն։ Աճառյանն այս երեւույթի մեջ տեսնում էր գրաբարի վաղ շրջանի մի շատ բնորոշ առանձնահատկության պահպանումը. ***«Սառնք հատկապես հետաքրքիր են ա-նով, որ կներկայացնեն հայերենի հնագույն ձեւը»։***

Ուշագրավ է, որ Ղարաբաղի բարբառում պահպանվել են նաեւ գրաբարյան մի շարք հոլովաձեւեր։ Գործիականը համարյա մաքուր գրաբարյան ձեւն ունի, ըստ ո-

ռում գրաբարյան «աւ»-ը հնչում է «ավ». սահմանաւ-գրհմանաւ, գիշերաւ-ֆշերավ։

Հետաքրքիր հսկայական նյութ է տալիս բառապաշարի համեմատությունը, որից պարզվում է, թե որքան շատ են տրված-վերցրածները, եւ ինչպես նրանք համարյա անփոփոխ պահպանվել են մինչեւ այսօր։ Ահա դրանցից մի քանիսը.

Գրաբար	*Ղարաբաղի բարբառ*	*Գրական հայերեն*
ազի	հաֆյի	պոչ
այգուց	էֆյուծ	վաղը
ակռա (կայոհի)	կըռեֆյ	ատամ
անձաւ	անձավ	քարայր (քարանձավ)
արմանամ	արմանալ, ըրմանալ	զարմանալ
բեռն	պեռն	բեռ
բծիզն	պծեզն	չունի
գաբ	կյեփ	չունի
գահ (բարձր տեղ իմաստով)	գյահ	չի գործածվում
գիշերաւ	ֆըշերավ	վաղ առավոտյան
երկայն	էրկան	երկար
երկոքեան	ըրկօքան	երկուսն էլ
եղ	յէղ	յուղ
զօր	զօր	ուժ, զորություն
խոնջան	խոնջան	անդրավարտիքի կապ
կոյս (կողմ)	կուս	չունի
կարկառ (քարերի կույտ)	կարկառ	չունի
կոշկոռ	ֆըշկոռ	հանգույց

Այսպիսի օրինակներ շատ կարելի է բերել։ Մենք դիտավորյալ չնշեցինք այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք կապված են կրոնական ծեսերի եւ առհասարակ եկեղեցու հետ։ Այսպիսիք, հասկանալի է, գրաբարից բարբառին են անցել քրիստոնեության տարածումից հետո, անմիջապես, կամ էլ հետագա ժամանակներում։ Բերված եւ համանման օրինակները, սակայն, միայն կապված են գրաբարի՝ խոսակցական լեզու եղած շրջանի հետ, քանի որ բարբառն անգրագետ զանգվածների լեզուն էր, իսկ նրանք գրաբարի բառերը կարող էին ընդունել միայն ու միայն բանավոր ճանապարհով։

Երեւի մասնագետ լեզվաբանները արցախ-ղարաբաղյան բարբառի մեջ կգտնեն առավել մեծ քանակության գրաբարաբանություններ։ Աստեղ փորձ արվեց միայն ցույց տալ, թե ինչպես հին հայերենի ձեւերը համարյա նախնական վիճակով մնացել են հայ բարբառներից ամենապահպանողականի՝ արցախ-ղարաբաղյան բարբառի մեջ, եւ թե ինչպես այս փաստն ինքնին վկայում է դեռեւս խոսակցական լեզու գրաբարի ուժեղ ազդեցությունը բարբառի վրա։

Քերովբե Պատկանյանը համոզված պնդում էր, թե հայերեն բարբառները համարյա անփոփոխ գոյություն են ունեցել նաեւ V դարից առաջ՝ որպես հայ ազգի գոյացման մասնակցած ցեղերի լեզուների փոփոխված ու մշակված մնացորդները[1]։

Մասնագետներն արդեն ուշադրություն են դարձրել նաեւ մեկ ուրիշ չափազանց կարեւոր հանգամանքի վրա. հնդեվրոպական մայր լեզվի շատ բառեր, որոնք այս կամ այն ձեւով, հաճախ անճանաչելիության չափ այլափոխված կերպարանքով, պահպանվել են ճյուղավորված լեզուներում, հասկանալի է՝ հայերենում եւս, արցախյան բարբառում առկա են ավելի մոտ ու նման նախնականին։ Դա, անկասկած, ապացույց է, որ բարբառն այդ բառերն իր մեջ առել է վաղնջական ժամանակներում եւ դարեր շարունակ, համենայն դեպս, վերջին մեկ ու կես հազարամյակում, անջրպետված լինելով արտաքին ցնցող ազդեցություններից, հարազատորեն պահել է ստացվածը։ Սա էլ, իհարկե, անառարկելի ապացույց է հայոց լեզվի արցախյան բարբառի խոր հնության, բազմադարյան կենսագրության։

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՐՁԸ

Քրիստոնեությունը Հայաստան մուտք է գործել Քրիստոսի 12 առաքյալներից երկուսի՝ Թադեոսի ու Բարդուղիմեոսի քարոզչական գործունեության շնորհիվ։ Այդ պատճառով էլ հայոց եկեղեցին կոչվում է առաքելական։

Գրավոր աղբյուրներն ու ժողովրդական ավանդությունը պահպանել են հավաստի տեղեկություններ երկու առաքյալների գործունեության վերաբերյալ։ Հայտնի է, որ Վասպուրականի Արտազ գավառում Թադեոս առաքյալի նահատակությունից հետո նրա աշակերտները ցրվել են երկրով մեկ եւ շարունակել ուսուցչի գործը։ Այդ աշակերտներից մեկն էլ՝ Եղիշե անունով, նախ Թադեոսի նահատակության լուրն է հասցրել Երուսաղեմ, ապա, տեառն-եղբայր եւ Երուսաղեմի առաջին հայրապետ Սուրբ Հակոբից ձեռնադրություն ստանալով, եկել է քրիստոնեության դարձնելու Հայաստանի արեւելյան նահանգները, որոնք հայկական եկեղեցական գրականության մեջ սովորաբար կոչվում են Արեւելք, Արեւելից կողմանք, Հայոց արեւելից կողմանք՝ նեղ իմաստով Արցախ, լայն իմաստով ավելի ընդարձակ տարածք՝ Արցախը շրջականերով, մանավանդ Արցախ-Ուտիք հայաշխարհը, որ ինչպես վերն ասվեց, հաճախ է գտնվել մեկ վարչաքաղաքական միավորի մեջ։

Եղիշե երանելին իր քարոզչությունն սկսել է Արեւելյան Անդրկովկասի հյուսիսային եզրից, Մասքաց աշխարհի Զող մայրաքաղաքից, որը գտնվում էր հետագա Դերբենդի տեղում։ Հավատարիմ աշակերտներ ու գործակիցներ պատրաստելով՝ Եղիշեն Մասքաց աշխարհից էլ շարժվել է դեպի հարավ, անցել Կուր գետը՝ սուրբ հավատին դարձնելու Ուտիքի հայությանը, ապա Ուտիքի ու Արցախի սահմանագլխին, Գիս վայ-

1 К. Патканов. Исследования о диалектах армянского языка. СПб., 1869.

ռում կառուցել եկեղեցի, մատուցել անարյուն պատարագ։ Պատմական գրականության մեջ հենց այդ տեղը համարվում է Արեւելից կողմանց (Արցախ-Ուտիք հայաշխարհի) քրիստոնեական դարձի ծննդարանը[1]։

Այսպես է սկսվել Արեւելից աշխարհի լուսավորությունը։ Եղիշեի ջերմեռանդ քարոզները ճանապարհ են հարթել նոր հավատի լայն տարածման համար։ Սակայն բնած չէին նաեւ հեթանոսության պաշտպանները։ Նրանք չարությամբ հետեւում էին Եղիշեին եւ մի օր, երբ սուրբն անցել էր Ջերգունի դաշտը (հավանաբար հետագայի Ջեզամը), հասել մի տեղ, որ Հոմենք անունն ունի, դիվային նենգության դիմեցին՝ սպանելով Եղիշեին եւ գցելով մի գբի մեջ, ուր կային նաեւ ուրիշ դիակներ։

Սրանից հետո տեղի ունեցածի մասին պատմում է ժողովրդական ավանդությունը՝ գրի առնված վաղմիջնադարյան ժամանակագրի ձեռքով[2]։

Ասում է՝ որոշ ժամանակ անց աստվածավախ մի քանի մարդկանց երեւացել է Սուրբ Եղիշեի մասունքների տեսիլքը։ Նրանք խմբով եկել են գբի մոտ, գտել մարդկային բազում ոսկորներ, կիտել իրար վրա, աղոթք արել։ Եվ այդ ժամանակ, ասում է, սաստիկ հողմ է փչել, ցաք ու ցրիվ արել կիտված ոսկորները։ Երբ հողմը դադարել է մարդիկ տեսել են, որ գբում մնացել են միայն մեկ մարդու, ուրեմն Սուրբ Եղիշեի նշխարները։ Այստեղից էլ հավատացյալ ականատեսներն այդ մասունքները հավաքել, տեղափոխել են մոտակա Ուռեկան գյուղը, հանձնել հողին։ Ասում են՝ այս գյուղի քահանա Ստեփանոսն էլ մասունքներից սրբի գլուխն առանձին պահ էր տվել հողին, հետո այն հանեցին-տարան նույն գավառի Ներսմիհրի վանքը, որ առաջ կոչվում էր Ջրվշտիկ, իսկ դրանից հետո պիտի կոչվեր Գլխովանք, որովհետեւ այդտեղ էր պահվում Սուրբ Եղիշեի գլուխը։

Այստեղ հիշված տեղանունները կարեւոր են իրողության վայրը նշմարելու համար։ Ուռեկան գյուղը, որի մոտ նահատակվել է Սուրբ Եղիշեն եւ ուր հանգրվանել են նրա նշխարները, գտնվում է Արցախի կենտրոնական մասում՝ Մեծ Կողմանք գավառում, այժմյան Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի մոտակայքում, ուր այժմ էլ պահպանվում է Ուռեկան (հնչում է նաեւ Հոռեկա) վանքը։ Նույն գավառում, Թարթառի հովտում է գտնվում նաեւ Ջրվշտիկը՝ հետո կոչված Գլխովանք։

Ուրեմն, Հայոց արեւելից կողմանց քրիստոնեության դարձի առաջին քայլերն այստեղ են կատարվել, Արցախական աշխարհի կենտրոնական մասում, Թարթառի հովտում։

Քրիստոնեության դարձի հաջորդ ու առավել վճռական շրջանի իրողություններին վերաբերող տեղեկություններն արդեն որոշակի հետեւողականություն ունեն եւ հյուսում են նոր հավատի հաղթարշավի կուռ պատմությունը։ Այսպես, Ագաթանգեղոսը՝

---

1 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, հատոր Ա. գլուխ Զ. «Յայսմ տեղւոջ եղեւ սկիզբն Արեւելեայցս եկեղեցեացս մայրաքաղաքաց եւ լուսաւորութեան տեղի»։

2 Մովսէս Կաղանկատուացի, գիրք Ա, գլուխներ Զ,Է։

Գրիգոր Լուսավորչի կենսագիրն ու հայոց հավատի արմատավորման առաջին պատմիչը, նշում է, որ, երբ Տրդատ թագավորի հրամանով Մեծ Հայքի բոլոր նահանգների ***«ընտիր իշխանները, կուսակալները, կողմնակալները, հազարապետները, բյուրավորները»*** հավաքվել, Գրիգոր Լուսավորչին ուղեկցում էին հոչակավոր Կեսարիա քաղաքը, որպեսզի այնտեղ նրան Հայոց երկրի քահանայապետ օծել տան, նրանց հետ էր նաեւ Ծավդեք նահանգի իշխանը։

Արցախ-Ծավդեից իշխանը նաեւ մեկն էր այն հայ մեծամեծներից, որոնք Կեսարիայից վերադառնալուց հետո Եփրատ գետի սուրբ ջրերի մեջ մկրտություն ընդունեցին արդեն Մեծ Հայքի հայրապետ ձեռնադրված Գրիգոր Լուսավորչից եւ վերադարձան իրենց նահանգները՝ քրիստոնեական հավատը բովանդակ երկրում արմատավորելու ծրագրով։

Գրիգոր Լուսավորչի հայրապետական գործունեության մեջ եւս մեծ տեղ էր բռնում Արցախական աշխարհը։ Հայոց քահանայապետն անձամբ շրջել է Արցախում, ավարտին հասցրել նրա բնակչության քրիստոնեացման անհետաձգելի գործը։ Ապա նոր հավատի կրակն անշիջելի դարձնելու համար Արցախի կենտրոնական մասում՝ Հաբանդ գավառի Ամարաս ավանում հիմնադրել ու կառուցել է Հայոց երկրի առաջին եկեղեցիներից մեկը։ Ըստ ավանդության՝ եկեղեցու շինարարությանը հետեւելիս Լուսավորիչն ամեն առավոտ բարձրանում էր Ամարասի դիմացի բլուրը, այնտեղից ողջունում արեւագալը, կատարում լուսաբացի իր աղոթքը։ Այդ պատճառով էլ այն բլուրը Լուսավորչի սար է կոչվում։

Իսկ Լուսավորչի գնալուց հետո, երբ Մեծ Հայքի տարբեր նահանգների ու գավառների հոգեւոր առաջնորդներ էին նշանակվում երկրի կաթողիկոսի ու Տրդատ արքայի կողմից, Արցախի ու շրջակաների տերերը ներկայացան արքային, խնդրեցին, որ նա իրենց երկրամասի առաջնորդ ուղարկի Գրիգոր Լուսավորչի ժառանգներից մեկին, որպեսզի ժողովուրդը, կաթողիկոսի հոչակավոր անունից ակնածելով՝ խոնարհաբար ենթարկվի նաեւ նրա ժառանգին։ Տրդատ Մեծ արքան ընդառաջեց Արեւելից կողմանց տերերին, իր երկրի ծայր-արեւելյան երկրամասի հոգեւոր առաջնորդ ուղարկեց Լուսավորչի թոռ Գրիգորիսին, որը շատ էր երիտասարդ եպիսկոպոս լինելու համար, սակայն արդեն հայտնի էր իր իմաստնությամբ եւ ջերմեռանդ հավատով։

Շատ կարճ ժամանակում Գրիգորիս եպիսկոպոսը կարգավորեց Արցախի ու հարեւան Ուտիքի եկեղեցական գործերը, պատմում է Փավստոս Բուզանդը եւ ավելացնում, որ նրա եռանդուն գործունեության շնորհիվ կառուցվեցին ու նորոգվեցին բոլոր եկեղեցիները, արեւելքում՝ մինչեւ Ատրպատական եւ հյուսիսում՝ մինչեւ Աղվանք ու Վիրք։ Այս կողմերում նրա գործն այնքան արդյունավետ էր եւ հեղինակությունը՝ վըսեմ, որ երկու երկրներում՝ Աղվանքում ու Վիրքում նրան կաթողիկոսի տեղ էին ընդունում։

Փավստոսը պատմում է նաեւ, որ երբ անդրկուրյան երկրի բազմալեզու ցեղերին քրիստոնեության դարձնելով՝ Գրիգորիսը հասել էր Մասքաց աշխարհ՝ Զողա երկիր, այնտեղ էլ հաջողությամբ քարոզում էր քրիստոնեական հավատի պատվիրանները,

բարբարոս ու ավարառու մասմութների թագավոր Սանեսանը դրա մեջ տեսավ մեծ վտանգ իր պետության հզորության դեմ, մոլեգնեց չարությամբ։ Ասում է. *«Սկզբում նրանք [մասքութները] ընդունեցին ու հնազանդվեցին։ Հետո սկսեցին քննել Քրիստոսի օրենքները եւ այդտեղից իմացան, որ Աստծուն ատելի են ավարառությունը, հափշտակությունը, ապանությունը, ագահությունը, ուրիշին զրկելը, ուրիշի ունեցվածքը տենչալը։ Երբ այս բաներն իմացան, նրա [Գրիգորիսի] խոսքերի վրա գայրացան ու ասացին. «Եթե մենք չհափշտակենք, ավար չանենք, ուրիշի ունեցվածքը չխլենք, ապա ինչո՞վ պիտի ապրեն այս անհամար զորքերի բազմությունները»։ Հետո էլ նրանք միմյանց ասում էին՝ սա հայոց թագավորի հրահանգով է եկել, որ քրիստոնյա դարձնելով մեզ թուլացնի, եւ կանգնեցնի իր երկիրն ասպատակելուց ու ավարառությունից։ «Եկեք, ասում են, մեջտեղից վերացնենք [այս քարոզչին] եւ արշավենք Հայաստան, ավար անենք, բերենք, մեր աշխարհը լցնենք»*[1]։

Թագավոր Սանեսանը լսեց իր վայրենաբարո զորապետների այս խորհուրդը, կարգադրեց չարաչար մահու ենթարկել Գրիգորիս եպիսկոպոսին։ Եվ բարբարոսները բռնեցին մի ամեհի ձի, Գրիգորիսին կապեցին նրա պոչից եւ խելագար վարգով քշեցին ծովափին, Վատնյա դաշտում։

Գրիգորիսի հետ քարոզչության գնացած հավատարիմ սարկավագները սուրբ նահատակի մարմինը բերին եպիսկոպոսանիստ Ամարաս ավանը եւ *«թաղեցին այն եկեղեցու մոտ, որ կառուցել էր Գրիգորիսի պապ առաջին մեծ Գրիգորը՝ Հայաստան աշխարհի քահանայապետը։ Եվ այնուհետեւ ամեն տարի այդ կողմերի զավառների ժողովուրդը, այնտեղ ժողովվելով, ցնծությամբ տոնում է նրա քաջության հիշատակը»*[2]։

Այսքանից հետո էլ Մասքաց թագավորն իրականացրեց իր սպառնալիքը։ Օգտվելով այն հանգամանքից, որ Հայոց սպարապետ Վաչե Մամիկոնյանը երկրից դուրս էր գտնվում՝ երկարատեւ ճանապարհորդության մեջ էր Հունաց կողմերում, եւ ոչ ոք չկար, որ ի մի բերեր նախարարական զնդերը, ընդհանուր ճակատ հարդարեր թշնամու դեմ, Սանեսանն անդրկուրյան երկրի բազմաթիվ ցեղերից կազմեց վիթխարի մի զորաբանակ, մտավ Հայոց երկիր։ Փավստոս Բուզանդն այս արշավանքի մասին խոսում է առհասարակ չափազանցված գույներով։ Սակայն բավական է հիշել այն ցեղերը, որոնց ներկայացուցիչներն էին կազմում ասպատակության եկած խառնիճաղանջ զորաբանակը, որպեսզի պարզ լինի, թե ինչպես անպաշտպան Հայաստանի վրա կովի էին եկել Այսրկովկասի ու Հյուսիսային Կովկասի համարյա բոլոր կիսավայրենի

1Փաւստոս Բիւզանդ, Պատմութիւն Հայոց, դպրութիւն Գ, գլ. Զ։

2 Նույն տեղում։

ցեղերը։ ***«Հոներ, փոխեր, թավասպարներ, հեճմատակներ, բաղասիճներ, եղերսաններ եւ այլ խառնիճաղանջ թափառական վաչկատուն ցեղերի անթիվ բազմութիւններ, որոնց առհասարակ իշխում էր ինքը՝ Սանեսանը»։***

Այստեղ թվարկված են այն բոլոր ցեղերը, որոնք բնակվում էին հիմնականում Կովկասյան լեռնաշղթայի ու Կուր գետի միջեւ ընկած տարածքում եւ, ենթակա լինելով այդ նույն երկրի հյուսիս-արեւելյան մասի բնակիչ մասքութների թագավորի գերիշխանությանը, կազմում էին, այսպես կոչված, Կովկասյան Աղվանքի պետությունը։ Հին ու միջնադարյան պատմիչները բանիցս վկայել են, որ այդ երկրի բազմացեղ կիսավայրենի ու նվաճող բազմությունները, հաճախ էլ միացած հյուսիս-կովկասյան ցեղակիցների հետ, Կուր գետն անցնում, հորդում-լցվում էին Հայաստանի արեւելյան նահանգները, ասպատակ փռում, կոտորում բնակիչներին, կողոպտում բնակավայրերը։ Իսկ շատ հաճախ, այսքանը բիչ համարելով, շարունակում էին արշավանքը, իջնում դեպի հարավ ու արեւմուտք, նույն բարբարոսությունները շարունակում Պարսից երկրում ու Բյուզանդական կայսրության արեւելյան մասում։

Այս անգամ շուրջ մեկ տարի նրանք մնացին Հայաստանում, ավերի ու կողոպուտի ենթարկեցին Հայոց երկիրը... Մինչեւ որ Մամիկոնյան Վաչե սպարապետը վերադարձավ Հունաստանից, իրար բերեց հայոց զորաբանակը, այս ու այնտեղ հանկարծական ու անսպասելի հարձակումներով ոչնչացրեց թշնամու ցամ ու ցրիվ զորքերը, վերջում էլ գրոհեց Վաղարշապատում Սանեսան թագավորի հետ մնացած արքունի գունդը, նրան փախուստի մատնեց, ապա վրա հասնելով Օշական բերդի մոտ, բոլորին սրի քաշեց, իսկ Սանեսանի կտրած գլուխն ուղարկեց Հայոց խոսրով թագավորին...

Այս բոլորը պատմելով ամենայն մանրամասնությամբ՝ Փավստոս պատմիչը եզրակացնում է, թե ***«Այսպես լուծվեց սուրբ Գրիգորիսի վրեժը Սանեսան թագավորից ու նրա բանակից***[1]։

Գրիգորիսից հետո Արցախի առաջնորդական աթոռն զբաղեցրած հոգեւորականների մասին աղքատիկ տեղեկություններ են պահպանվել։ Ավանդություններից է հայտնի, որ եղել են Դադո եւ Խադ անուններով եպիսկոպոսներ, որոնք շարունակել են Սուրբ Գրիգորիսի գործը, արցախահայության հավատի գործն այնպես կազմակերպել, որ այն օրինակ լինի Ուտիքի եւ հարեւան հայկական մյուս զավառների համար։ Այս երկու եպիսկոպոսների հիշատակն անմեռ է մնացել նահանգում. Դադոյի կամ Դադի անունն է կրում Թարթառի հովտի հնագույն ու ամենահեղինակավոր սրբարանը՝ այժմ էլ կանգուն Դադիվանքը, Խադ եպիսկոպոսի անվամբ է կոչվում Թարթառի հովտի մյուս նշանավոր մենաստանը՝ Խադավանքը (ժողովրդական արտասանությամբ Խաթրավանք)։

1 Նույն տեղում, գլ. Է։

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐՑԱԽ-ԽԱՉԵՆԸ

ԱՐՑԱԽԻ ԱՌԱՆՁԱՀԻԿ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

IV դարի վերջն ու V դարի սկզբը կազմեցին մի շրջան, որն առաջին ողբերգականն էր հայոց պետական-քաղաքական կյանքում. հարեւան երկու հզոր բռնատիրությունները՝ Պարսկաստանն ու Բյուզանդիան 387 թ. բաժանեցին, իրենց ենթարկեցին երկատված Մեծ Հայքը: Այդ վիճակում արեւմտյան կամ բյուզանդահպատակ մասում կարճ ժամանակ անց վերացավ հայոց թագավորության մնացորդը: Իսկ արեւելյան մասում, որն առավել մեծն էր ու հզորը, Արշակունյաց թագավորության անկումը եղավ հիչ ուշ՝ 428 թվականին: Ժամանակի մեր զգայուն ու հայրենասեր պատմիչը՝ Եղիշեն, սկզբնական շրջանում դա մեծ ողբերգություն չէր համարում՝ մտածելով, թե, ճիշտ է, վերացել է թագավորությունը, սակայն պետական իշխանությունը բաժանված է նախարարների միջեւ եւ կմնա, կպահի երկիրն ու ժողովրդին:

Սակայն թագավորության վերացմանն էլ հաջորդեցր մի այլ խարդախ միջոցառում. Հայաստանում եւ հպատակ մյուս երկու հարեւան երկրներում՝ Վիրքում ու Աղվանքում, Պարսկաստանն ստեղծեց մարզպանություններ, որոնց ղեկավարներ, ավելի ճիշտ՝ հլու կամակատարներ հենց արքունիքն էր նշանակում: Եթե մեկ մարզպանությունը կազմված էր Վիրք-Վրաստանից, մյուսը՝ Կենտրոնական Հայաստանից, ապա երրորդն էլ ընդգրկում էր Աղվանքը (անդրկուրյան բազմացեղ երկիրը), ինչպես նաեւ Հայաստանից պոկված Արցախ եւ Ուտիք նահանգները:

Դժվար չէ պատկերացնել, թե նվաճող Պարսկաստանն, այսպիսով, ինչպես խեղճացրած պիտի լիներ նախկին երեք ինքնուրույն թագավորությունները, մանավանդ նրանցից առավել մեծն ու հզորը՝ Հայաստանը, որը դրանից մի քանի տասնամյակ առաջ զրկված իր բյուզանդահպատակ մասից, հիմա էլ կորցնում էր իր արեւելյան երեք նահանգները, իսկ կենտրոնական մասին էլ պետք է տնօրիներ արքայից արքայի կամակատար մարզպանը:

Հասկանալի է, որ այսմանից հետո Հայոց միասնական քաղաքական կյանքի, տընտեսական առաջընթացի եւ այլ այսպիսի խնդիրների մասին խոսք չէր կարող լինել։ Մանավանդ, որ այսմանին էլ պիտի հաջորդեր բռնակալի մի այլ, շատ ավելի դաժան կամայականությունը. Պարսից արքայից արքան, տնտեսական ճնշումն ու բռնությունը ֆիչ համարելով, սահմանափակեց նաեւ նախարարների իրավունքները, ապա եւ ոտնձգության անցավ ամենասրբազանի՝ հայոց քրիստոնեական հավատի դեմ։ Հայտնի է արդյունքը՝ 451 թ. ազգային-ազատագրական ապստամբությունը, որը նրա կազմակերպիչ, Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի անունով կոչվեց Վարդանանց պատերազմ։ Այս ապստամբության վճռական պոռթկումը եղավ Ավարայրի դաշտում եւ, թեպետ ունեցավ ապստամբ հայերի համար ո՛չ հաղթական ելք, սակայն Պարսից բռնակալությանը ցույց տվեց ու համոզեց, որ հայ ժողովուրդը ոչ մի գնով չի հանդուրժի բռնությունն իր հավատի ու ազգային ինքնության վրա։ Ետավարայրյան պայքարը, մանավանդ Մամիկոնյան տոհմից մի այլ ապստամբի՝ Վահանի բորբոքած ապըստամբությունը 480-ական թվականների սկզբին, Պարսից արքունիքին վերջնականապես համոզեցին, որ Հայաստանը չի հանդուրժի նաեւ հակառակորդի միահեծան տիրապետությունը եւ պետք է ազատ լինի պաշտելու իր աստծուն, ապրելու իր ազգային ինքնահատուկ կյանքը, զարգացնելու իր մշակույթը։ Արքունիքը, չնայած չհանդուրժեց ինքնուրույն թագավորության վերականգնումը Հայաստանում, սակայն հատուկ պայմանագրով բավական արտոնություններ շնորհեց Հայաստանին, որոշակի ազատություններ տալով նաեւ նախարարությանն ու եկեղեցուն։

Արտոնություններն ու ազատությունը տարբեր դրսեւորումներ ունեցան նախկին միասնական թագավորության մեջ գտնված երկրի տարբեր կողմերում։ Կենտրոնական Հայաստանում դրության տեր դարձան Մամիկոնյան ու Բագրատունյաց նախարարական տների իշխանները եւ ջանացին օգնել երկրի ինքնուրույն զարգացմանը, քանի որ պայմանագրի համաձայն՝ Պարսից արքունիքն այդ տոհմերի ներկայացուցիչներին էր վստահում իր կուսակալությունը։ Իսկ Աղվանից մարզպանության ներսում, Արցախի տեր Առանշահիկները, օգտվելով համեմատական ազատությունից, ձեռք բերեցին քաղաքական ու մշակութային անկախություն եւ ստեղեցին մի վարչություն, որը պատմական աղբյուրներում հայտնի է թագավորություն անունով։

Թագավորության հիմնադիրն Առանշահիկ Վաչագանն էր՝ եռանդուն, շրջահայաց ու անձնվիրորեն հայրենասեր մի գործիչ, որի շուրջն ավանդազրույցներ ու հեքիաթներ պիտի հյուսեին երախտագետ սերունդները։

Վաչագան թագավորի գործունեության պատմությունը, իբրեւ ժամանակակցի ու ականատես մարդու արժանահավատ շարադրանք, հետագայում մտել է «Աղվանից աշխարհի պատմության» մեջ եւ նկատելիորեն առանձնանում է այդ գրքի ընդհանուր հյուսվածքից[1]։

Ժամանակագրի վկայությամբ՝ Վաչագանին թագավոր է ձեռնադրել Պարսից Վա-

1 Տե՛ս «Պատմութիւն Աղուանից աշխարհի», գիրք Ա, գլուխներ ԺԵ-ԻԶ։

դարշ արքայից արքան։ Սա, հավանաբար, ասված է՝ նորելուկ թագավորության վարկը բարձրացնելու նպատակով... Կամ գուցեեւ Վաղարշը նրան պարզապես տվել էր անսովոր լիազորություններ, որովհետեւ «Պատմության» մի հատվածից տեղեկանում ենք, որ Վաչագանին ենթակա են եղել ոչ միայն հարեւան հայկական Ուտիքը, այլեւ անդրկուրյան երկրի գործակալները։

Վաչագանն այն մեծատուններից էր, որոնք բռնակալների կողմից մոգության էին դարձվել, սակայն գաղտնի պահում էին իրենց հարազատ հավատը։ Գահ բարձրանալով՝ նա հրաժարվեց կրակապաշտությունից, վերստին ընդունեց իր պապերի լուսավորչական հավատը եւ դարձավ նրա պաշտպանն ու եռանդուն տարածողը, իր երկրի աննախընթաց լուսավորիչն ու շինարարը։ Եվ հենց այս ծառայությունների ու բարձր արժանիքների համար էլ ժողովուրդը նրան կոչեց Վաչագան Բարեպաշտ։

Արեւելից կողմանց հայությունն ավելի քան դար ու կես առաջ քրիստոնեություն էր ընդունել մայր Հայրենիքի հետ, իր լեռներն ու խորաձորերը, դաշտերն ու անտառները կնքել հայաշունչ եկեղեցիներով ու վանքերով։ Սակայն Պարսից տիրապետության մեկ դարի մղձավանջը երկիրը լցրել էր կռապաշտների սանձարձակ ասիմիլյատորներով։ Գլուխ էին բարձրացրել նաեւ հին հեթանոսական դավանության տարատեսակները։ Իսկ ամենաահավորը՝ երկրամասը կտրվել էր մայր ժողովրդի ամբողջությունից, նետվել այլացեղ եւ ուծացնող մի ոլորտ, որտեղ ինքնուրույնության պահպանությունը հնարավոր պիտի լիներ միայն գերմարդկային ջանքերով։ Երկրամասը գտնվում էր ճակատագրական ճամփաբաժանի առաջ եւ կարիք ուներ հզոր մի առաջնորդի, որը կարողանար ընտրել ճիշտ ճանապարհը, աննահանջ քայլել առջեւից ու իր ետեւից տանել ժողովրդի զանգվածները։ Արեւելից կողմանց հայության ձեռքին էր նաեւ ազգային ինքնապաշտպանության հզորագույն զենքը՝ մեսրոպատառ գիրը։ Բացվել էին առաջին դպրոցները, սկիզբ էր դրվել լուսավորական-կրթական մի հզոր գործի։ Սակայն ապստամբություններն ու ասպատակությունները, դարձյալ պարսից բռնատիրությունը կանգնեցրել էին նրա առաջընթացը եւ կարող էին ետ տալ ու տանել ուրիշ ուղղությամբ...

Իշխանների ու գավառապետների, ազատների ու հողատերերի տեղայնական մանը շահերն էլ մի երրորդ կողմից էին հյուծել երկիրը։ Անհրաժեշտ էր հզոր մի ձեռք, որ կարողանար նրանց միավորել, դնել պետական կարգ ու կանոնի ներքո, գլխավորեր երկրամասի տնտեսական ու մշակութային առաջընթացը։

Մի խոսքով՝ ժամանակը հրամայական պահանջ էր դնում, եւ պետք է ծնվեր այդ պահանջների կատարողը։ Վաչագան թագավորը դարձավ իր ժամանակի պահանջով ասպարեզ եկած գործիչը։

Անկախ պետականության ժամանակներում թագավորը (օրինակ, Արշակունի Պապը) իր ձեռքն էր հավաքել երկրի ուժն ու իրավունքները՝ եկեղեցուն տալով գործունեության եւ իրավունքի սահմանափակ ոլորտ։

Վաչագանը համոզվել էր, որ օտարի տիրապետության տակ գտնվող երկրում անհրաժեշտ է ստեղծել ուրիշ ուժեր, հզորացնել դիմադրության ու ազգային ինքնապաշտպանության ուրիշ կովաններ։ Նա տեսել էր, թե պարսկացման դեմ ինչ անհաղ-

թահարելի ուժ է կրոնը, որն իր հոգում ունեցող նիզակակիր ռազմիկը զնում է զրահապատ փղերի դեմ: Նա զգում էր, որ վտանգված է մայրենի լեզուն, եւ այն արմատավորելու, զրահապատելու ամենալավ միջոցը մայրենի դպրության տարածումն է: Եվ իր հայրենասիրական գործունեությունն սկսեց եկեղեցու շենացումից ու դպրության խանդավառ տարածումից:

Նախ եւ առաջ նա վերացրեց երկրի անմատչելի վայրերում, հատկապես Կուրի ափերին բուն դրած մոլի աղանդները: Անհաշտ պայքար սկսեց կռապաշտության դեմ. քարոզներով, հաճախ էլ բռնությամբ քրիստոնեական հավատին դարձրեց բոլոր նրանց, ովքեր անիշխանության տարիներին ենթարկվել էին մոգացման: Այդպես էր վարվում հատկապես իր տերության մեծավորների նկատմամբ:

Այսմանից հետո նա ցնծում էր ոչ այնքան իր թագավորական փառքի ու պատվի համար, որքան սկսած գործի հաջող ընթացքի եւ հատկապես նրա համար, որ նախարարները համակամ վերադառնում էին նախնյաց հավատին, միաբանվում իրար հետ, եկեղեցու եւ թագավորության շուրջ: Ապա կառուցեց բազմաթիվ եկեղեցիներ, ըստ ժամանակագրի վկայության՝ տարվա օրերի թվով, այսինքն՝ 365 կամ 366. ***«ըստ թուոց աւուրց տարւոյն եկեղեցիս միայն Բարեպաշտ Վաչագան շինեաց յԱրեւելս»:*** Սրբացման առարկա էին դառնում ազգային եկեղեցու այնպիսի գործիչներ, ինչպես Գրիգոր Լուսավորիչն ու նրա թոռ Գրիգորիսը, Պանդալեոն բժիշկն ու Դիզափայտի նահատակները, հայոց գրի մեծ արարիչ Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտները: Ուշագրավ է, որ Մաշտոցն այստեղ սրբացվում է, գրերի հիմնադիր լինելուց բացի, նաեւ որպես հայ քրիստոնեական կրոնի մեծ ռահվիրա:

Թագավորն առիթը բաց չէր թողնում ժողովրդի կրոնական ջերմեռանդությունը բորբոքելու համար: Այդ նա էր, որ իր ներկայությամբ ու անմիջական մասնակցությամբ բարձրացնում էր եկեղեցական ծեսերի հարգը: Տեղական սրբություններին զումարվում էին նաեւ բերովիները: Հավանաբար ո՛չ առանց թագավորի հանձնարարության՝ Հայաստանի կենտրոնից Արցախի Դարահոչ (թե՞ Քարահոչ-Քարահունչ) գյուղն են բերվում Սուրբ Գրիգորի ու Հռիփսիմե եւ Գայանե կույսերի նշխարները: Եվ իր Գյուտական (այժմյան Մարտակերտի շրջանում) արքունի գյուղից այստեղ է շտապում թագավորը՝ թագուհու հետ, երկրի բոլոր նախարարներով ու մեծամեծներով, հոգեւոր պետերով ու ծառայողներով հանդերձ:

Թագավորի ու երկրի մնացած մեծամեծների մասնակցությամբ այսպիսի ցնծալից արարողություններ են լինում նաեւ Արցախի ուրիշ վայրերում, հատկապես նշանավոր Ամարասում, ուր թաղված էր երկրամասի առաջին եպիսկոպոս Գրիգորիսը: Թագավորը հրովարտակներով իր երկրի ամեն մի բնակչի պարտականությունն է դարձնում պաշտել հայոց սրբերի մասունքներն ու հիշատակները, լինել քրիստոնեական կրոնի եռանդուն պաշտպանը:

Ժամանակագիրն առանձնահատուկ ջերմեռանդությամբ է նկարագրում Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի նշխարների գյուտն ու նրանց շուրջ տեղի ունեցած ցնծալից արարողությունները:

Վաչագան Բարեպաշտի հոգածության կենտրոն էր դարձել դպրոցը: Նա առաջին

հերթին դպրոցներ բացեց այն երեխաների համար, որոնց ծնողները նախկինում աղանդավորներ էին եղել։

Մատենագիրը խանդավառությամբ է նկարագրում Վաչագան թագավորի լուսավորական ջերմեռանդ գործունեությունը, նրա հայրական հոգածությունը դպրոցական մանկանց նկատմամբ։ Այդ նկարագրությունից մեր առջև հառնում է Բարեբաշտ թագավորը՝ իր երկրի հասունացող սերնդի կրթության ու դաստիարակության մեծ գործով խանդավառ։ Ահա նա դպրոց է գալիս, իր շուրջն է հավաքում երեխաներին եւ մեկի ձեռքը գիրք տալով, մյուսին՝ պնակիտ (գրելու կամ նկարելու տախտակ), առաջարկում է միասին, միաբան ու բարձրաձայն կարդալ։ Երեխաներն իրենց անարատ շուրթերով հեգում են ոսկեղենիկ հայերենը, եւ նրանց ինքնավստահ ու բարձրաձայն ընթերցանությունն արձագանք է տալիս Արցախամուր աշխարհի բոլոր անկյուններում՝ հնավանդ լեռնաստանը լցնելով արդեն գրի ու դպրության փոխված մայրենի լեզվի հզոր ելեւէջներով։

* * *

Այս բոլորի հետ միասին Վաչագան թագավորը չէր մոռանում երկրի ղեկավարությունը։ Նա տեր էր կանգնել համարյա խարխլված մի երկրի ու պետականության։ Նրա շուրջն ամենուր անկարգություն էր, եւ օտար կեղեքիչների ու տեղական իշխողների կամայականությունն էր տիրական։ Նրա պետական գործունեությունը, հասկանալի է, բոլորի՛ սրտով չէր։ Մանավանդ նրանց, որ անիշխանության տարիներին անսանձ ու անօրեն վարքով էին ապրել։ Պարզ է, որ սրանցից շատերի շահերն էլ էին նեղվել թագավորի նորամուծություններից։ Բողոքում էին, գանգատվում։ Եվ թագավորն ընտեղծված դրությունից միակ ելքը տեսնում էր բոլորի համար անսասան օրենքներ ընտեղծելու մեջ։

Սակայն, ըստ երեւույթին, դրա համար մեծ նախապատրաստություն էր պետք։ Նախ, թագավորն ի՛նքը կարիք ուներ իր համար շատ հարցեր պարզելու։ Ապա հրապարակելիք օրենքների համար նրան պետք էին հեղինակավոր անուններ, որոնց ուղեկցությամբ այդ օրենքները կյանք պիտի մտնեին եւ դառնային առավել ազդեցիկ ու անառարկելի։

Դրա համար էլ նա մեկը մյուսի ետեւից հարցումներով լի թղթեր հղեց իր ժամանակի հեղինակավոր մարդկանց.

ա) գիտնական երեց Մատթեին, այն ականավոր եկեղեցականին, որը Գրիգոր Լուսավորչի եւ սուրբ կույսերի մասունքներն Արցախ էր տեղափոխել Հայոց մայրաքաղաքից եւ բախտ էր ունեցել զրուցել Հովհան կաթողիկոսի հետ,

բ) Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսին, որի գրած պատասխանը (Վաչագանին) պահպանվել է ոչ միայն Կաղանատվացու գրքում, այլեւ միջնադարյան ուրիշ ձեռագրերում,

գ) Պետրոս Սյունեցի եպիսկոպոսին։

Պետրոս Սյունեցու եւ Վաչագան թագավորի թղթակցության առթիվ վկայություն

է պահպանվել Ստ. Օրբելյանի պատմության մեջ, ինչպես նաև ձեռագիր հնագույն մատյաններում, որոնցից է նաև պահպանված թղթե ամենահին հայերեն ձեռագիրը՝ 981 թվականից։

Հավանաբար, նաև ուրիշ ականավոր մարդկանց է դիմել թագավորը։ Նրա թղթերը հարցումներ էին եկեղեցական ու աշխարհիկ բովանդակությամբ։ Բարեպաշտ Վաչագանին մտահոգում էին տասնյակ ու տասնյակ հարցեր, որոնց պատասխանները նա ուզում էր իմանալ ոչ թե մեկ, այլ մի քանի մարդուց, որպեսզի իրար կողքի դնի, համեմատի ու գտնի ամենանշիշտն ու ամենաօգտակարը։ Նա ցանկանում էր իր երկրի համար օրենքներ հրապարակել եւ երազում էր, որ այդ օրենքներն անթերի լինեն։

Եվ ահա զարնանային մի օր *(«յամսեանն Մարերի՝ որ օր երեքտասան էր ամսոյն»)* Վաչագան թագավորի կամքով Արցախի Աղվեն ամառանոցում (այժմյան Մարտակերտի շրջանում) գումարվեց *«բազմամբոխ ատեան»*, որը պետք է բներ եւ ընդուներ նորաստեղծ թագավորության օրենքները։

Պահպանվել է ժողովի մասնակիցների ցուցակը, որից երեւում է, որ հիմնականում Ուտիքի եւ հատկապես Արցախի աշխարհիկ տերերն են եղել ազատ մարդիկ (ազնվականներ) եւ նահապետները։ Հոգեւորականներն էլ մեծ մասամբ այսրկուրյան Աղվանքից էին։ Անդրկուրյան Աղվանքի հայտնի բնակավայրերից իրենց ներկայացուցիչներն ունեին միայն նշանավոր կենտրոնները։

Աղվենի ժողովի գումարման տարեթվի առթիվ մեր պատմագիտության մեջ հրապարակվել են հակասական կարծիքներ։ Մեկ այն գումարված էր համարվում IV դարում, մեկ էլ՝ շատ ուշ՝ VI-ում։ Սակայն աղբյուրագիտական բազմազան եւ միանգամայն հավաստի նյութերի բնությամբ արդեն պարզված է, որ աջ ու ձախ ընկնելու կարիք չկա, քանի որ այն տեղի է ունեցել V դարի վերջում կամ VI սկզբին, այսինքն՝ Վաչագան Բարեպաշտի գահակալության օրոք, նրա գլխավորությամբ։

Վաչագանի օրենքները կամ կանոնները 21-ն են եւ աղբյուրներում կոչվում են նաև «Սահմանադրութիւն կանոնական»՝ հայերեն հնագույն օրենքների ժողովածուն, որ պահպանվում է ցայսօր։ Հետազոտողներն ապացուցել են, որ դրանք ստեղծվել են նախընթացի երկու հայկական աշխարհիկ ու եկեղեցական ժողովների (Աշտիշատի եւ Շահապիվանի) ընդունած կանոնների ազդեցությամբ, սակայն միաժամանակ ինքնուրույն ու ինքնատիպ մի ընդհանրություն են՝ ժամանակի հայկական իրականության, հատկապես Հայոց արեւելից կողմանց քաղաքական ու տնտեսական կյանքի առանձնահատուկ պայմանների դրոշմներով։

Այդ օրենքները Հայոց արեւելից կողմանց սոցիալ-տնտեսական հարաբերությունների բնության համար բացառիկ արժեք են ներկայացնում։ Նրանց մեջ անմիջական արտահայտություն են գտել V դարի Արցախի եւ Ուտիքի հայ բնակչության հասարակական կյանքի տարբեր բնագավառներն իրենց առարկայական դրսեւորումներով։ Նրանք հաստատուն կարգ ու կանոնի սահմանների մեջ են դնում եկեղեցական դասի տարբեր աստիճանների ներկայացուցիչների փոխհարաբերությունները։ Ընդունվում են պարտադիր հասարակական նորմեր բոլոր մարդկանց համար՝ թագավորազուններից մինչեւ ընչազուրկ շինականը։

Հասարակական կյանքի մասին խոսող ոչ մի փաստաթուղթ չի կարող այնքան առարկայական ներկայացնել այդ հասարակարգի ներքին էությունը, որքան ժամանակի հարկային քաղաքականությունն արտացոլող փաստաթուղթը: Վաչագանի կանոններն այդ տեսանկյունից քննելով՝ նրանց մեջ տեսնում ենք ժամանակի համար զարմանալի մի մտահոգություն. այնպես անել, որպեսզի հասարակական բոլոր խավերը գոհ մնան իրենց վիճակից: Ի՞նչ արժե հենց միայն շինականից ըստ կարողության հարկեր գանձելու կարգը (կանոն Դ), եթե նկատի առնենք, որ այս ամենն արվում էր Սասանյան Պարսկաստանի հարկային դաժան քաղաքականության, կրոնական անլուր հալածանքների մղձավանջից հետո, երբ դրանք, մի կարճ դադար տալով, վերստին պիտի կրկնվեին՝ իբրեւ համաճարակի պես տարածված արաբական տիրապետության ծանր մղձավանջ:

Վաչագանի կանոններով պետական ու եկեղեցական հարկերը պարտադիր էին հասարակության բոլոր խավերի համար՝ շինականներից մինչեւ ազնվական խավերի ներկայացուցիչները, նույնիսկ արքայական տոհմից սերվածները (կանոններ Գ, Ե): Կարգազանցությունների համար սահմանված ամեն տեսակ պատիժները եւս պարտադիր էին բոլոր խավերի ներկայացուցիչների համար:

Ո՞րն էր այսքանից հետո, V դարի վերջի Հայոց արեւելից կողմանց պետական ու սոցիալ-տնտեսական կյանքի մոտավոր պատկերը:

Վաչագան Բարեպաշտի ժամանակագիրը մեզ շատ է օգնում, եւ Աղվենի կանոններն էլ բացառիկ հարուստ նյութ են տալիս՝ այդ պատկերն իր ընդհանուր գծերով ներկայացնելու համար:

Փոքրիկ մի թագավորություն, որի միապետն իր երկրի տնտեսական ու լուսավորական առաջընթացի կազմակերպիչն է: Նա պատրաստ է խստագույնս պատժել կարգազանցներին եւ մանկական անմիջականությամբ երջանկանալ ամենափոքր առաջադիմությամբ:

Բնակչությունը՝ չար բախտով զատված մայր ամբողջից, մեծ փոքրիկների ու մակընթացությունների դադարին փարվել է կարճատեւ մի տեղատվության, լծվել մայրենի գրի ու լուսավորության խանդավառ գործին:

Եթե շատ են հարկերը, ապա իրեն սփոփում է նրանով, որ աստծուց է սահմանված կարգը՝ բոլորն են հարկատու, թագավորազուններից մինչեւ վերջին աշխարհականը:

Դաժա՞ն են պատիժները: Դարձյալ կա սփոփիչ մի բան՝ պատժողների առաջ բոլորը մեկ են ու հավասար, իշխանավոր թե շինական:

* * *

Աղվենի ժողովի կանոնների մեջբերումով էլ Հայաղվանքի պատմությունն ավարտում է իր խոսքը Վաչագան Բարեպաշտի թագավորության մասին: Պիտի ենթադրել, որ Աղվենի ժողովից հետո երկրում ավելի խաղաղ ու բարվոք վիճակ է եղել, որովհետեւ չկային արտաքին հարձակումներ, եւ ներքին խլրտումներն ու տրտունջներն էլ վերացված էին Աղվենում ընդունված օրենքներով: Վաչագան Բարեպաշտը Հայոց

արեւելից կողմանց Առանշահիկ տերերի լավագույն ներկայացուցիչն էր, այն քաջամիտ ու հայրենասեր իշխողը, որը կարողացավ երկրի ազգային ոգին անանխընթաց բարձրության հասցնել՝ ըստ ամենայնի օգտվելով Եւ նախնիների թողած ավանդներից, Եւ իր ժամանակի բարենպաստ պայմաններից։

Նա դաստիարակվել է Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու եւ Փավստոս Բուզանդի մատյանների վրա, նրանց հայրենասիրական կրակներից ջերմացել եւ նրանցից առել իր գործունեության ծրագիրը։ Այդ նրանց լուռ թելադրությամբ էր, որ թագավորն ամենուր հայալեզու դպրոցներ բացեց, թղթերով ու անձնական-անմիջական կապերով անբաժան մնաց մայր հայրենիքի հասարակական-կրոնական կյանքից եւ, ազգակից իմաստուններից դասեր առնելով, իր երկիրը ղեկավարեց որպես ժամանակի ամենաառաջավոր պետական գործիչներից մեկը։

Մատենագիտական վկայությունների մեջ, հանձին Վաչագան թագավորի, չի կարելի չտեսնել հավասարակշիռ դիվանագետին։ Նա իր երկրի ներքին կյանքը կարգավորելիս չէր մոռանում նաեւ հարաբերությունները դրսի հետ։ Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկություններից իմանում ենք, որ Վաչագան թագավորն իր աղջկան կնության է տված եղել Պարսից թագավորի եղբոր Աբլ-Աբաս որդուն։ Սա արդեն քրիստոնեություն էր ընդունել եւ ապրում էր Մեծ Այուցյաց նահանգում, «Երկրորդ Երուսաղեմ» կոչված վանքի մոտ։ Վաչագան թագավորի խնդրանքով Այուցիքի իշխանը հինգ գյուղ էր տվել նրան ու նորահավատ փեսային։ Հենց այստեղ՝ Բարգուշատում էլ (Քաշունիք) մահացել են Վաչագանն ու փեսան։

Վաչագան Բարեպաշտը, ավանդության համաձայն, թաղված է Արցախ-Ղարաբաղի ամենագեղեցիկ անկյուններից մեկում՝ Մարտակերտի շրջանի Ջրվշտիկ կամ Եղիշ Առաքյալ վանքի կողքի մի մատուռի մեջ։ XIII դարում նրա վրա նոր տապանաքար են քաշել, վրան փորագրել. ***«Այս է հանգիստ Վաչագան Թագաւորին»։***

Այս լեռնաստանի հայությունն անանց փառքով է օծել միասնական թագավորության կորստից հետո ստեղծված հայկական առաջին լուրջ պետական միավորի հեղինակին՝ նրա մասին ստեղծելով ոգեշունչ մի հեքիաթ-ավանդություն, որը երեւի թե սիրո, գրի ու արհեստի մասին հյուսված ամենագեղեցիկ ստեղծագործություններից մեկն է ամբողջ համաշխարհային գրականության մեջ (տե՛ս Ղ. Աղայանի գրի առած «Անահիտ» հեքիաթը)։

Վաչագանից հետո Առանշահիկների թագավորական հարստությունը պարբերական ծեգծեգումներով ապրեց իր բնաշխարհում՝ արձանագրելով քաղաքական կյանքի ու մշակութային վերելքի հետաքրքիր դրվագներ։

ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ VI-VII ԴԱՐԵՐՈՒՄ

Վեցերորդ դարը ոչ միայն Արցախական աշխարհի, այլեւ ամբողջ Հայաստանի ու հայ ժողովրդի կենսագրության ամենամշուշոտ շրջաններից մեկն է պատմագիտության համար։ Չկան այս դարում ստեղծված ժամանակագրական ծավալուն երկեր, վավե-

բական նյութեր, որոնք պատմեին ժողովրդի գլխով անցածը, եւ հիմնականում միայն հետազայի հեղինակներն են, որ ավանդությամբ իրենց հասած պատմություններն են հիշում եւ այն էլ հիմնականում հայ եկեղեցու իրողությունների վերաբերյալ։

Վավերական նյութերի սակավությամբ պայմանավորված մշուշն առավել խտանում է նրանով, որ այս շրջանում, նույնիսկ նախընթացին Արցախը եւ հարակից հայկական շրջանները ստացել էին նաեւ մի այլ անուն՝ Աղվանք, որի պատճառով էլ այս անվանը վերաբերող հայտնի նյութերը հաճախ թյուրիմացաբար վերագրվում են այդ Աղվանք անվան վաղնջական տիրոջը՝ անդրկուրյան երկրին, ստեղծում պատմական մի շիլաշփոթ, որից դժվար է գլուխ հանել։

Իսկ իրողությունն այս էր. V դարի սկզբին, 428 թ., Արեւելյան Հայաստանում Արշակունյաց թագավորության վերացումից հետո, ծայրամասային Արցախ-Ուտիքյան հայաշխարհը միացվել էր անդրկուրյան կամ բուն Աղվանքին, ստեղծվել պարսկահպատակ մարզպանություն, եւ այս մարզպանության տարածքն ընդհանրական անունով կոչվում էր Աղվանք, որը վարչական նոր կազմավորման մեջ մտնող առավել մեծ միավորի անունն էր։ Կարճ ժամանակում անունն այնպես հիմնավոր կպել էր բացառապես հայերով բնակեցված ու հայապատկան աջափնյակին (Ուտիք, Արցախ), որ նույն դարի կեսից հետո ստեղծված պատմական երկերում այն հենց այդպես էլ կոչվում էր՝ Աղվանք, իսկ բուն Աղվանքը, որ տրոհված էր բազմաթիվ ցեղային միավորների միջեւ, զրկված էր միասնական վարչությունից ու անունից, արդեն տարբերակվում էր միայն նորաստեղծ մասերի անուններով՝ Լփնիք, Բաղասական, Մասքաց աշխարհ։ Այս պայմաններում էր, դարավերջին, որ մեր պատմահայր Մովսես Խորենացին, դեմ առնելով նման անհեթեթ պատկերի, փորձեց տրամաբանական հիմնավորում գտնել եւ ստեղծեց այն վարկածը, որի համաձայն՝ Արցախ-Ուտիք հայաշխարհը՝ Երասխ գետից մինչեւ Հնարակերտ ամրոցը, որ Կուրի վրա էր գտնվում, Կուրի ու Խրամ վտակի միախառնման վայրում, Աղվանք էր կոչվել Հայկի ժառանգներից մեկի՝ Սիսակի բարի-անուշ վարքից, քանի որ նա այդ աշխարհի տեր էր կարգված, եւ ժողովուրդը նրա անուշ-աղու բարքի պատճառով երկիրը կոչել է *Աղուանք*։

Այսպես է եղել, որ Վաչագանի թագավորությունը՝ տարածված հիմնականում Արցախի, մասամբ էլ Ուտիքի որոշ գավառների վրա, միջնադարյան աղբյուրներում հայտնի է իբրեւ Աղվանքի-Աղվանից թագավորություն, իսկ Արցախ-Ուտիք հայաշխարհի եկեղեցին էլ, որ իր ազդեցությունն ուներ, իհարկե, նաեւ անդրկուրյան հայկական շրջանների ու քրիստոնեացած այլազգիների վրա, կոչվում էր Աղվանքի եկեղեցի։

Եկեղեցին վճռական նշանակություն ուներ Արցախի ոչ միայն հոգեւոր, այլեւ վարչական կյանքի համար։ Գտնվելով Պարսից տիրապետության ներքո՝ երկիրն ու նրա իշխանավորները մեծապես կախված էին զերագույնի կամքից, պարտավոր էին ընդունել արքայից արքայի ամեն մի կամայականություն։ Իսկ եկեղեցին անկախ էր, մանավանդ Ավարայրի ճակատամարտից հետո, երբ հայ ժողովուրդն ապացուցել էր, որ ինքն ամեն գնով կպաշտպանի իր սեփական կրոնը, կմեռնի, սակայն չի հրաժարվի քրիստոնեական հավատից։

Սակայն այստեղ եւս ամեն ինչ բարեհաջող լինել չէր կարող, քանի որ մարզպա-

նությունները սահմանազատված էին իրարից, եւ կենտրոնական Հայաստանում նստող կաթողիկոսությունը չէր կարող իր թեւի տակ պահել, մանավանդ ամենօրյա ղեկավարությամբ ապահովել նաեւ եկեղեցական այն թեմերին, որոնք գտնվում էին Արցախում, Ուտիքում եւ հարեւան գավառներում: Կարիք էր զգացվում, որ մայր հայրենիքից ու նրա հոգեւոր կենտրոնական իշխանությունից անջատված նահանգների (Արցախ, Ուտիք) եւ անդրկուրյան հայաբնակ շրջանների թեմերն ունենային իրենց միավորող, ղեկավարող մարմինը: Եվ այդ կարիքից էլ ծնվեց ու կազմավորվեց Հայոց եկեղեցու այն թեւը, որ գտնվում էր Աղվանից մարզպանության տարածքում եւ, ինչպես վաղ ժամանակներում, այս ժամանակ էլ կենտրոն ուներ Արցախական աշխարհում: Հայոց թվականության առաջին տարում, քրիստոնեական 551 կամ 552 թ., հիմնադրվեց Աղվանքի կաթողիկոսությունը, որի գահակալ ձեռնադրվեց Արցախի Մեծառանք գավառի եպիսկոպոս Աբասը: Աղվանքի պատմության մեջ բարի գործերով է հիշվում այս կաթողիկոսը, որ բոլոր ջանքերն էր գործադրում իրեն ենթակա եկեղեցական թեմերն Ամենայն Հայոց եկեղեցու ոլորտում պահելու համար եւ ստեղծեց կարգ, որպեսզի իր հաջորդները ձեռնադրվեն Հայոց Մայր աթոռի կողմից:

Այս ժամանակներում քրիստոնեական եկեղեցու ներսում սկսվել էր մի բորբոքուն վեճ Քրիստոս Աստծու էության շուրջը: Վիճողները երկու մասի էին բաժանվել: Մեկը գտնում էր, որ Քրիստոսը միայն Աստված է եղել, այսինքն՝ մեկ բնույթ է ունեցել: Մյուսը պաշտպանում էր Քրիստոս-մարդու եւ Քրիստոս-աստծու (նրա երկու բնույթի) միասնությունը: Տիեզերական ժողովներ էին գումարվում: Այն ժողովը, որ տեղի էր ունեցել Քաղկեդոն քաղաքում, անցել էր երկաբնակ (դիոֆիզիտ) թեւի ճնշման տակ, եւ ժողովից հետո երկաբնակ թեւը կոչվեց նաեւ քաղկեդոնական: Վիճող կողմերը տաք ճառերից ու վեճերից անցան փոխադարձ հալածանքներին ու բռնություններին: Կրոնական վեճը դարձավ քաղաքական ահավոր պայքար:

Հայկական եկեղեցին այս վեճի հենց սկզբից աներեր միաբնակ էր (մոնոֆիզիտ), Հռոմի ու բյուզանդական քաղկեդոնական եկեղեցու համոզված հակառակորդը: Եվ քանի որ եկեղեցին այն դարում իր ետեւից տանում էր նաեւ իր հոտը, ուրեմն, հայ ժողովուրդը եւս կտրվել էր արեւմուտքի իր հարեւաններից եւ փաստորեն կանգնել նրանց հոգեւոր ու քաղաքական հակառակորդի դիրքում:

Հայոց եկեղեցին իր վճռական քայլը կատարեց Դվինի երկրորդ եկեղեցական ժողովում, 554 թվականին, Ներսես Բ կաթողիկոսի ղեկավարությամբ: Այս թվականից, Լեոի խոսքով ասած, ***«Հայ ժողովուրդը վերջնականապես եւ անդառնալի կերպով հաստատում էր իր ազգային ինքնորոշումը մի կատարյալ կղզիացման մեջ, որ այնուհետեւ նրա ճակատագիրը դարձավ քրիստոնյա աշխարհում»***[1]:

Սակայն, եթե Հայոց եկեղեցին մեկուսացել էր քրիստոնեական եկեղեցու ոլորտից եւ պետք է իր գոյությունը պահեր՝ իբրեւ մեկ ազգային հանրության հավատ, ապա

1 Լեո, Հայոց Պատմություն, հ. II, Երեւան, 1967, էջ 160:

Արցախն իր շրջակայքով կրկնակի մեկուսացած էր, ժամանակակից խոսքով՝ շրջափակված։

Այս դարում տեղի էր ունեցել արտասովոր մի դեպք, որն ավելի էր ծանրացրել Արցախի շրջափակված վիճակը։ Սյունիքի իշխան Վահանը, այլեւս չհանդուրժելով Հայաստանում մարզպանի պաշտոնն զբաղեցնող պարսիկ Սուրենի դաժան քաղաքականությունը, ապստամբել էր նրա դեմ, դիմել Պարսից արքա Խոսրով Անուշիրվանին, որպեսզի սա Սյունիքը հանի Հայաստանի կազմից, այսինքն՝ Սուրեն մարզպանի ենթակայությունից, եւ ենթարկել տա Ատրպատականի մարզպանին։ Արքունիքն անմիջապես հրաման էր արձակել Վահանի խնդիրքը կատարելու համար, եւ Սյունիքը՝ Արցախը մայր Հայաստանին միացնող այդ օղակը, կտրվել էր Հայաստանից։ Ցավով պիտի նշել, որ Արցախի այս բաժանումը հետագայում պիտի դառնար նրա տեւական վիճակը, եթե չասենք ճակատագիրը, որից նա չպիտի կարողանար փրկվել հետագա բոլոր դարերում, բացի այն կարճատեւ երջանիկ պահերից, երբ միասնական պետականության հնարավորություն էր ստեղծվում, եւ ազգի համար բոլոր հատվածներն ապրում էին մեկ իշխանապետության, մեկ միասնական եկեղեցու եւ առհասարակ տնտեսական ու մշակութային մեկ ամբողջության մեջ։ Այդպես պիտի լիներ Բագրատունյաց ու Զաքարյան իշխանական տոհմերի քաղաքական վերելքի շրջաններում։

Ուրեմն, VI դարից սկսած Հայոց եկեղեցին պետք է իր ինքնուրույնությունն ու անկախությունը պաշտպաներ ոչ միայն ամեն տեսակ օտար հավատների ոտնձգություններից, հատկապես VII դարում աշխարհում հայտնված մահմեդականությունից, այլեւ քրիստոնյա աշխարհի մյուս թեւերից, որոնցից յուրաքանչյուրն ամեն միջոցով ջանում էր իր ուղղությանը դարձնել ուրիշներին, իր տիրապետությունը տարածել ավելի շատ ազգերի վրա։

Աբասի կաթողիկոսության հենց առաջին տարիներին Արցախ թափանցեցին քաղկեդոնական եկեղեցու քարոզիչները եւ շողոմ խոսքերով փորձեցին տարածել իրենց ուղղությունը։ Գալիս էին նաեւ ուրիշ աղանդների ներկայացուցիչներ։ Բավական էր, որ մեկ անգամ Աբասը, նրանց հետ վարվելու համար հարցրել էր Ամենայն Հայոց կաթողիկոսի կարծիքը եւ ստացել պայքարելու, աղանդավորներին հեռու վանելու հանձնարարություն (տե՛ս «Աղվանից աշխարհի պատմություն, գիրք Բ, գլուխ Է. ***«Զայնպիսին ի սահմանաց ձերոց հալածեսջիք»***), դրանից հետո նրա գլխավորած կաթողիկոսության առաջին խնդիրը դարձավ եկեղեցու անաղարտության ու ինքնուրույնության պաշտպանությունը։

Աբասն անողոք պայքարով ապահովեց իր աշխարհի եկեղեցու այդ միաբանությունը, տեղեկացնում է պատմիչը (Մ. Կաղանկատվացի), սակայն ո՛չ հոգեւոր (մարմնավորական) պատերազմները խիստ շատացան, որովհետեւ Հյուսիսային Կովկասում բնակվող ռազմաշունչ ցեղերը, Կովկասյան լեռնաշղթան անցնելով, հարավի երկրները անպաշտպան գտնելով սկսում են իրենց ասպատակությունները։

* * *

VII դարի սկզբին Հայաղվանքում տեղի ունեցավ մի դեպք, որը եւ որոշեց երկրամասի հաջորդ երկու դարերի քաղաքական կացությունը։ Այս ժամանակ, իբր, Պարսից արքայից արքա Խոսրով Բ Փարվեզի վրեժխնդրությունից փախչելով, Սասանյանների թագավորական տոհմի ժառանգ մի ոմն Միհր, տոհմակից երեսուն հազար ընտանիքների հետ միասին, եկավ բնավորվեց Ուտիքի Գարդմանք գավառում։ Ապա նրա ժառանգները խորամանկությամբ ու դավով կոտորեցին գավառի տեր Առանշահիկներին, սեփականացրին նրանց տիրույթները։ Հետագայում Միհրանյաններն իրենց ձեռքը ձգեցին նաեւ Ուտիքի իշխանությունը, ապա եւ ողջ Հայաղվանքի զահերեցությունը։ Դրանից հետո Միհրանյան կոչված այս տոհմի զահերեցը կոչվում էր «Գարդմանից տեր եւ Աղվանից իշխան»։ Այս ամենը դյուրությամբ իրականացավ, որովհետեւ Միհրանյաններն սկզբից իսկ ընդունել էին քրիստոնեական կրոնը, հայացել եւ դրսեկ ասպատակիչների ու բռնատերերի հետ ունեցած փոխհարաբերություններում ներկայանում էին որպես Հայոց Աղվանքի կամ Արեւելից կողմանց հայության մասնիկը եւ նրա իրավունքների պաշտպանը։ Այսպես էր հատկապես Միհրանյան տոհմի նշանավոր իշխան Ջիվանշիրի օրոք (գահակալել է 637-683 թթ.), երբ երկիրը հյուսիսից խազարների պարբերական արշավանքներն էին ծվատում, իսկ հարավից՝ արաբների բերած քաղաքական ու տնտեսական նոր բռնությունները։ Ջիվանշիրը փեսայացավ խազարաց խանին (թագավոր) եւ բարեկամության դաշինքով անվտանգ դարձրեց հյուսիսականներին։ Այնուհետեւ հպատակության երդումով նվաճեց նաեւ Արաբական խալիֆի ու Բյուզանդիայի կայսեր վստահությունը։

Երկրամասի ներքին կյանքում Ջիվանշիրն անշեղորեն հետեւում էր Վաչագան Բարեպաշտի օրինակին. ամրապնդեց տնտեսական ու իրավական կարգը, անշեղորեն կիրառեց հայոց լուսավորչական հավատի սկզբունքները, պայքարեց քաղկեդոնական ոտնձգությունների դեմ։ Եվ որ շատ կարեւոր է, այցելելով կենտրոնական Հայաստան, բանակցություններ վարեց Հայոց սպարապետ Գրիգոր Մամիկոնյանի ու Անաստաս Ա Ակոռեցի կաթողիկոսի հետ, որպեսզի միասնաբար դիմագրավեն արտաքին վտանգները։ Իսկ իր երկրամասում Ջիվանշիրը հովանավորում էր ազգային մշակույթի նոր վերելքը։ Նրա պատվերով էր, որ Մովսես Կաղանկատվացին գրեց այս երկրամասի հավաքական պատմությունը՝ ի մի հավաքելով նախորդ ժամանակագիրների ու հիշատակագիրների գրառումները։ Ջիվանշիրի հովանավորությունն էր վայելում նաեւ ժամանակի հայ մեծ բանաստեղծ Դավթակ Քերթողը։

Միհրանյանների, հատկապես Ջիվանշիր իշխանի օրոք մեծ ուշադրություն էր դարձվում քաղաքաշինությանը։ Աննախընթաց շուք ու փայլ ստացան Գարդման բերդն ու Պարտավ քաղաքը։ Եթե նախկինում Պարտավը միայն իշխանանիստ էր եւ կաթողիկոսի նստավայրը, ապա Ջիվանշիրի իշխանության օրերում այն դարձավ վաճառաշահ նշանավոր քաղաք։ Արաբների տիրապետությամբ (**VII-IX** դդ.) այն ձեռք բերեց վարչական կենտրոնի համբավ եւ արաբ կառավարիչների կողմից ընդունվում էր իբրեւ Կովկասի երկրորդ մայրաքաղաք (առաջինը Դվինն էր)։

683 թ. Ջիվանշիրին դավադրաբար սպանեցին մայրաքաղաք Պարտավի իր դղյակի պարտեզում: Պատմիչի աղոտ մի ակնարկից կարելի է ենթադրել, թե սպանության մեջ խառն է եղել Առանշահիկների ձեռքը: Անկասկած սրանք չէին մոռացել հին ոխը եւ չպետք է հանդուրժեին իրենց ավանդական իշխանության սեփականումը որեւէ եկվորի ձեռքում:

Ջիվանշիրի եղերական մահվան առթիվ Դավթակ Քերթողը գրել է մեզ հասած իր նշանավոր երկը՝ «Ողբ ի մահն Ջիվանշիրի մեծի իշխանին»՝ մեր վաղմիջնադարյան բնարերգության գլուխգործոցներից մեկը[1]:

Ջիվանշիրից հետո այս իշխանական տոհմի դերն ու ազդեցությունն աստիճանաբար խամրեցին: IX դ. սկզբին Միհրանյան վերջին արու իշխանազունին՝ Ստեփանոսին սպանեցին Թարթառի հովտում, Դադիվանքի մոտ: Մայրը կենդանի մնացած միակ դուստր Սպրամին փախցրեց Խաչենի բերդը, այնտեղ ամուսնացրեց Սահլ Սմբատյան մեծ իշխանի որդի Ատրներսեհի հետ:

Պատմիչն այս ամուսնությունը դիտում էր որպես մի կարեւոր միջոցառում, որով Հայաղվանքի տեր Առանշահիկ իշխանական տոհմի արյանն էր խառնվում Միհրանյանների թագավորական արյունը: Սրանից հետո երկրին, իբր, տիրություն պիտի անեին երկու տոհմերը՝ այսօրինակ պատվաստությամբ միասնացած *(«պատուաստութեամբ բրս այսուիկ առ ի զոյգ ունել զպետութիւն Արեւելեայց կողմանցս Աղուանից»)*[2]:

ՊԱՅՔԱՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԲՌՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Պարսկական ու բյուզանդական բռնատիրությունների դեմ հայ ժողովրդի մղած տեւական ու համառ պայքարն ապարդյուն չանցավ: VI դարի վերջին եւ VII դարի սկզբին Հայաստանում օտար տիրապետությունն այնքան էր թուլացել, որ երկրի փաստական տնօրենները բնիկ իշխանական տների ներկայացուցիչներն էին դարձել: Եվ դրա արդյունքն էր տնտեսական ու մշակութային այն վերելքը, որ տեղի ունեցավ այս ժամանակ, հատկապես VII դարի առաջին տասնամյակներում:

Սակայն այս անգամ էլ հայ ժողովրդին չպիտի վիճակվեր երկարատեւ խաղաղություն կամ անկախության բարիքի վայելում: Հայաստանից հարավ ստեղծվել էր ռազմավատական մի պետություն՝ Արաբական խալիֆայությունը, որը ծավալվում ու հզորանում էր օրեցօր: Կարճ ժամանակում այն նվաճեց ու հպատակեցրեց Սասանյան Իրանը, ապա նվաճեց բյուզանդահպատակ շատ երկրներ եւ շարունակեց իր հաղթական երթը՝ բռնված տիեզերակալության փափագով ու իսլամի մոլեռանդությամբ:

Իսլամի այս նորահավատները Հայաստանում ոտք դրին 640 թվականի աշնանը:

---

1 Մովսէս Կաղանկատուացի, գիրք Բ, գլ. ԼԵ:

2 Նույն տեղում, գիրք Գ. գլ. ԻԳ:

Համարյա ոչ մի դիմադրության չհանդիպելով՝ նրանք հասան երկրի կենտրոնական գավառները եւ ասպատակեցին։ Ապա գրավելով Դվին քաղաքը՝ ավարի ու ավերի ենթարկեցին այն եւ գերիների մի հոծ բազմություն առած հեռացան։

Այս առաջին արշավանքը, ասես հետախուզություն էր. արաբները ծանոթացել էին տեղանքին, համոզվել, որ ասպատակ փռելը հեշտ է։ Եվ նրանք նորից եկան երկու տարի հետո։ Սակայն այս անգամ Հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին երկու հազարանոց հեծյալ զնդով հարձակվեց Կոգովիտ գավառի Արծափի բերդը գրաված արաբական զորամասի վրա, ջարդեց այն։ Նույն կերպ վարվեցին նաեւ երկրի մյուս մարզերում ու գավառներում։ Արաբները ջարդ կրեցին նաեւ Երեւանի ու Նախիջեւանի բերդերը պահպանող տեղացիներից։

Երրորդ անգամ արաբները Հայաստան մտան 650 թվականին։ Վերստին ասպատակեցին շատ գավառներ, հսկայական ավար ու գերիներ առած վերադարձան հարավ։ Երկրի իշխանավորները, համոզված, որ ահռելի արաբական բանակներին դիմադրելն անհնարին է եւ պայքարն անիմաստ, փորձեցին բանակցություններ վարել խալիֆայության կենտրոնում։ Եվ սպարապետ Թեոդորոս Ռշտունուն հաջողվեց արաբների հետ կնքել մի համաձայնագիր, որով, ճիշտ է, Հայաստանը ճանաչում էր խալիֆայության գերիշխանությունը, սակայն առաջին երեք տարիներին լոկ հարկ պետք է վճարեր, իսկ խալիֆայությունը Հայաստանում զորք չպետք է պահեր։

Սակայն ո՞ր բռնակալն է հետեւել որեւէ օրինականության, որ արաբները հետեվեին։ Հենց համաձայնագիրը կնքելուց անմիջապես հետո նրանք հարձակվեցին Արեվելյան Հայաստանի վրա եւ ավերեցին մի շարք գավառներ։ Հետագայում այս հարձակումները դարձան պարբերական ու ավելի դաժան։

Հայ իշխանները ժամանակ առ ժամանակ ըմբոստանում էին բռնակալության դեմ, կոտորում արաբ հարկահաններին։ Եվ դրանց պատասխանը եղավ դաժան մի հաշվեհարդար, որի նմանը չի հիշում անցյալ պատմությունը։ 706 թվականին արաբ կառավարիչը Նախիջեւանի իր տեղապահ Կասըմին կարգադրել էր հրավեր հղել Հայաստանի բոլոր նախարարական տների ներկայացուցիչներին, որպեսզի նրանք ժամանեն Նախիջեւան՝ ցուցակագրվելու, քանի որ, իբր, խալիֆը թոշակ պիտի նշանակի բոլորին։ Հավատավոր նախարարների մեծ մասն արձագանքեց այդ հրավերին։ Եկածներն այնքան շատ էին, որ Կասըմը մի մասին ուղարկեց մոտակա Խրամ ավանը։ Նախիջեվանում ու Խրամում բոլորին փակելով եկեղեցիների մեջ՝ նրանց հայտարարեցին կալանավորված։ Ապա եկեղեցիների դռները աղյուսապատելով, փայտե ծածկերը վառեցին։ Երկու եկեղեցիների մեջ հրո ճարակ դարձան հայ նախարարական տների շուրջ 800 ներկայացուցիչներ, որոնք կազմում էին հայոց ավագանու ծաղիկը։ Իսկ նրանք, որ չէին եկել այդ անլուր վրիժառությանը ենթարկվելու, կալանավորվեցին տեղերում եւ քշվեցին Արաբիա՝ տաժանակրության։

706 թվականը հայոց միջնադարյան պատմության մեջ հայտնի է որպես *«կրակի տարի»*։ Բռնակալի անգթությամբ բորբոքված այդ կրակի ճենճերահոտով ասես բռնված է ողջ միջնադարը։

VIII դարի սկզբին Հայաստանը վերջնականապես ընկավ Արաբական խալիֆայու-

թյան տիրապետության տակ։ Արաբները Հայաստանին միացրին նաեւ Հայքից հյուսիս տարածված երկրամասը՝ Աղվանքը, եւ Արեւելյան Վրաստանը, ստեղծեցին մի վիթխարի կուսակալություն՝ «Արմինիա» անունով, որի մայրաքաղաքն էր Դվինը։

Հետագա տասնամյակներն արդեն հայտնի են բռնակալների աննախադեպ չարությունների շարքով եւ հարկ ու տուրքերի անընդհատ բարձրացմամբ, որոնք նկարագրելիս մեր պատմիչները կարկամում են վշտից ու զայրույթից։ Արաբ տիրակալները նախկին ծանր ու անտանելի հարկերին ավելացրել էին *«ջիզյա»* կոչվող այլադավանության հարկը, որը գանձվում էր ոչ մահմեդականներից եւ հետագա դարերում պետք է մնար արաբների հավատը ժառանգած բոլոր բռնակալների զինանոցում՝ որպես քրիստոնյաներին կեղեքելու եւ բռնությամբ մահմեդականացնելու միջոց։

Այս վիճակը երկար չէր կարող հանդուրժել հայ ժողովուրդը, որ գիտե կռվել իր ազատության ու անկախության համար եւ ճակատագրի բերած ամենասոսկալի պայմաններում անգամ ցուցադրել իր հոգու արիությունը։

VIII դարի կեսերին խալիֆայության ներսում ծայր առան զահակալական խժդժություններ։ Օգտվելով այդ հանգամանքից՝ հայ նախարարները մի քանի անգամ ապստամբություն բարձրացրին, վերանվաճեցին իրենց ոտնահարված իրավունքները։ Ապստամբների պարագլուխներն էին երկրի երկու հռչակավոր տոհմերի՝ Մամիկոնյաններ-ի ու Բագրատունիների ներկայացուցիչները։ Դարի երկրորդ կեսին ապստամբական դրոշ էին պարզել նաեւ Արծրունիները։

Ապստամբները ոչնչացրին Կարինում, Վասպուրականում, Դվինում եւ այլ կողմերում բնավորված արաբական կայազորները։ Շատ տեղերում ջարդել էին պատժիչ ջոկատներին եւ կոտորել նրանց հրամանատարներին։ Խալիֆայությունն ստիպված եղավ ռազմական համալրումներ կատարել, նոր զորքեր ուղարկել Հայաստան՝ իր խարխլված դիրքերը պահպանելու համար։ Հետագայում, իհարկե, արաբներին հաջողվեց ճնշել հայոց ապստամբությունները։ Սակայն հայ ժողովուրդն ու նախարարությունը փորձով համոզվել էին արդեն, որ անպարտելի չէ արաբական բռնությունը, եւ նրանից ազատագրվելու համար անհրաժեշտ է ոտքի ելնել երկրով մեկ՝ միասնաբար, բոլոր նախարարությունների միացյալ ուժերով։

Հակաարաբական շարժումներն ավելի կազմակերպված բնույթ ստացան **IX** դարի առաջին կեսում։ Իսկ 851-52 թթ. ապստամբները ժողովրդական հերոս Խութեցի Հովնանի ու Բագրատունյաց իշխանազունների գլխավորությամբ Մշո դաշտում ջախջախեցին հայկական շարժումները ճնշելու եկած արաբական թարմ զորքերին։ Արաբ զորավար Յուսուֆը, որ զորքերը կորցնելուց հետո թաքնվել էր Մուշ քաղաքի եկեղեցու զանգակատանը, ցած բերվեց այնտեղից եւ ենթարկվեց խայտառակ մահապատժի։

Արաբական խալիֆայությունը որոշեց վրեժ լուծել կրած այսօրինակ խայտառակությունների համար։ Թուրք զորավար Բուղայի գլխավորությամբ 200 հազարանոց մի զորաբանակ ուղարկվեց Հայաստան եւ Այսրկովկաս՝ հանձնարարություն ունենալով ապստամբ մարզերի նկատմամբ լինել սոսկալի դաժան։

Հայկական բարձրավանդակի հարավային սահմաններից խուժած թուրք-արաբական

բանակը հայ ժողովրդին բերում էր համատարած աղետ, չտեսնված ավեր ու ջարդ։ Բուղան արյան մեջ խեղդեց Սասունը, Վասպուրականը, Ռշտունիքն ու Մոկաց աշխարհը։ Հայկական այս նահանգների բախտին արժանացավ նաեւ Արեւելյան Վրաստանը՝ Տփղիս մայրաքաղաքով։ Եվ միայն Կովկասյան լեռնաշղթայի փեշերին բնակվող ծանարներն էին, որ խիզախ դիմադրություն ցույց տվին Բուղայի արնածարավ զորքերին։ Այս դիմադրությունից կատաղած Բուղան շարժվեց դեպի Հյուսիս-արեւելյան Հայաստան՝ նպատակ ունենալով դաժան հաշվեհարդար տեսնել Արցախի եւ Ուտիքի տերերի հետ, որոնք նախընթացին բանիցս կոտորել էին օտար սանձարձակ հարկահաններին, ոչնչացրել նրանց պատժիչ ջոկատները եւ արդեն ինքնուրույն էին ու ինքնագլուխ։ Հայոց հակաարաբական պայքարը միշտ էլ ժողովրդական բնույթ է կրել. բռնակալ խալիֆայության ու նրա բանակների դեմ կռվում էին աշխատավորական զանգվածները։ Սակայն աղբյուրներում ու ժողովրդի հիշողության մեջ պահպանվել են հիմնականում զանգվածային պայքարի ղեկավարները՝ հայ իշխաններն ու զորապետները։ Իսկ այս անունների շարքում երկուսը՝ Սահլ Սմբատյանն ու Եսայի Աբու-Մուսեն, արժանացել են հայ եւ օտար աղբյուրների բացառիկ ուշադրությանը։

Սահլ Սմբատյանն Արցախ-Խաչենի տերն էր IX դարի առաջին կեսում։ Նրա տիրույթներն ընդգրկում էին Արցախական աշխարհի արեւմտյան ու հյուսիսային մասը՝ Սեւանի արեւելյան ափից մինչեւ Մուխանք դաշտը։ Իսկ Եսայի Առանշահիկը նույն ժամանակ տիրում էր Արցախական աշխարհի հարավային գավառներին եւ իշխանանիստ էր դարձրել Գտիչ ամրոցը՝ Դիզակ գավառի Դող ու Տումի գյուղերի թիկունքում։

Այս երկու քաջ ու շրջահայաց իշխանների օրոք Արցախի լեռնաստանին տիրելու արաբական ամեն մի փորձ պատժվում էր արժանավորապես, եւ եկվոր բռնակալները շպրտվում էին Հյուսիս-արեւելյան Հայաստանի սահմաններից հեռու։

Աղբյուրները հանգամանորեն պատմում են, թե ինչպես Սահլն իր փոքրաթիվ զորախմբով արաբներին ջարդեց Շիկաքար բերդում՝ այժմյան Շուշի քաղաքի տեղում։ Բռնավորները, որ եկել էին Պարտավ մայրաքաղաքից, ապաստակեցին Ամարասը, շարունակեցին իրենց արյունոտ երթը դեպի արեւմուտք եւ հազար հոգի գերելով՝ ամրացան Շիկաքար բերդում։ Ժամանակագիրն ասում է. ***«Այնժամ քաջ ու շքեղատեսիլ Սահլ Սմբատյան իշխանն Առանշահիկ եւ նրա արիազարմ եղբայրներն իրենց զորքերով վրա տվին լուսաղեմին, դիակավալ արեցին ասպատակիչներին, մնացորդներին էլ ցիրուցան դարձրին եւ, որպես առյուծի ժանիքներից, փրկեցին գերյալներին»***[1]։

Հաջորդ անգամ Բաղդադից եկած բռնակալների 12-հազարանոց բանակի հետ ճակատամարտը տեղի ունեցավ Մուխանք դաշտում։ Ժամանակագիրը վկայում է, թե ***«Այստեղ էլ Սահլ Սմբատյանը, որ Զարմիհրական արքունի տոհմից էր, իրեն գործակից դարձնելով մեծ նահատակ Գեորգիոսին, թշնամիների վրա***

1 Մովսէս Կաղանկատուացի, գիրք Գ, գլ. Ի։

խոյացավ որպես արծիվը տկար թռչունների վրա եւ, դաշտում այս ու այնտեղ կոտորելով, մնացորդներին փախուստի մատնեց»[1]:

Հայ ժողովրդի հակաարաբական պայքարի պատմության ամենաշքեղ էջը կապված է Արցախական աշխարհի հարավային զավառների տեր Աբու-Մուսե Եսայիի (Եսայի՝ հայր Մովսեսի) անվան հետ:

Խաղաղասեր իշխան էր Աբու-Մուսեն: Սակայն իրեն պարտադրված պատերազմներից միշտ էլ դուրս է եկել հաղթանակով,-Գտիչի տիրոջն այդպես է բնութագրում Աղվանքի պատմիչը: Իսկ Թովմա Արծրունին ամենայն մանրամասնությամբ ու ոգեկոչող խանդավառությամբ է պատմում Եսայի իշխանի մեկամյա խիզախ պայքարը զորավար Բուղայի 200-հազարանոց բանակի դեմ: Մեկ տարվա ընթացքում Բուղան 28 հարձակում գործեց Գտիչի վրա: Այսրկովկասը սարսափի տակ առնելու համար խալիֆայի ուղարկած վիթխարի ուժերը 28 անգամ բախվեցին Եսայի իշխանի անառիկ Գորոզ բերդին: Բերդապահներն իրենց արծվային բարձունքներից կրակ էին թափում անկոչ եկվորների վրա: Եվ Բուղայի բազմաթանակ զորքն ամեն անգամ ետ էր շպրտվում պարտված ու ամոթահար:

Թովմա պատմիչը բառացի հիշում է Եսայի իշխանի գրած մի պերճախոս թուղթը, որ նա Բուղային է ուղարկել ի պատասխան բռնակալի ամբարտավան առաջարկության: Այդ գրությունը շատ հետաքրքիր է Եւ իբրեւ հայ իշխանի ազատասեր ոգու հանդուգն արտահայտություն, Եւ իբրեւ այն օրերի հայ մարդու գեղարվեստական մտածողության չխարդախված վկայություն: Այդ պատճառով էլ արժե թուղթը մեջբերել ամբողջությամբ:

Բուղան Գտիչի տիրոջն առաջարկել էր ներկայանալ իրեն եւ հայտնել հնազանդ հպատակություն: Հասկանալի է, որ արյունարբու Բուղան իր առաջարկությանն ուրիշ պատասխան չէր սպասում, քան հայ իշխանի հպատակության աղերսանքը: Չէ՞ որ առատ արյամբ ու ավերածություններով էր նշել իր պատժերքը հարավային Հայաստանի նահանգներում՝ սկսած Սասունից, Վասպուրականից մինչեւ Վրաստանի սահմանները եւ Վրաց բուն երկրը, որի մայրաքաղաք Տփղիսում արյան բաղանիք էր սարքել խաղաղ բնակչության համար... Սակայն բանազնացները Եսայի իշխանի աղերսագրի փոխարեն զոռոզ Բուղային տարան ըմբոստ պատասխանի թուղթը, որի յուրաքանչյուր խոսքը պիտի նետահարեր բռնակալի սիրտը:

«Աշխարհակալների կարգն է՝ իրենց հպատակների երկիրը գնալ խնամակալությամբ, իբրեւ խնամարկուներ վերացնել տառապյալների նեղությունները եւ ոչ թե երկիրն ավերել ավազակաբար եւ ամայացնել սրով ու զերությամբ,-այսպես էր գրել Եսային:- *Եվ եթե դու արքունիքից եկել էիր որպես խաղաղության հսկիչ, պետք է շենություն պարգեւեիր անցած ճանապարհիդ եւ ոչ թե ավերածություններ ու խռովություն: Արդ, թող*

1 Նույն տեղում, գլ. ԻԱ:

հայտնի լինի, որ ինչքան իմ զորությունը բավականանա եւ կենդանի լինեմ, դեմ կկանգնեմ տեր Աստծո ուժով եւ զորությամբ եւ քեզ կդիմավորեմ ոչ թե խաղաղության սիրով, այլ աղեղով ու սրով զինավառ, քաջ տղամարդկանցով եւ ընտիր երիվարներով։ Եվ եթե դու ցանկանում ես, որ ապրեք ինքդ ու քո զորքերը, ապա արի գնա՛ այստեղից, հեռացի՛ր իմ սահմաններից։ Իսկ եթե զայրույթից ու կատաղությունից կփութաս հեռանալ այս կյանքից եւ ոսկորներդ կցրես անապատներում՝ դառնալով երկրի գազանների եւ երկնքի թռչունների կերակուր, թող քո կամքը լինի, եւ ես պատասխանատու չեմ քո արյան համար, մանավանդ, որ մեծ բարեպաշտություն եմ համարում կոտորել Աստծո թշնամիներին, ինչպես Մովսեսն Ամաղեկին, Հեսուն քանանացիներին, Սամուելն Ագագին, Դավիթը Գողիաթին, ինչպես որ իսրայելացիները միանգամից կոտորեցին այլազգիներին։ Աստծուն հաճելի եղան այս բոլորը։ Այդպես էլ ես կվարվեմ քեզ հետ եւ քո զորքերի հետ։ Արդ ավարտում եմ այս շատախոսությունը քեզ հետ։ Քո ձեռքում են գտնվում խաղաղությունն ու խռովությունը։ Եթե, ինչպես որ ասացի, ինձնից հեռանաս, կլինի խաղաղություն, իսկ եթե ոչ՝ պատերազմ, կռիվ ու ճակատամարտ. դու կդառնաս թիրախ, իսկ աղեղն իմ՝ խոցող, դու՝ ախոյան եւ մարտիկներն իմ՝ հաղթանակող, դու՝ ոսոխ, իսկ իմ զորքերը՝ քեզ դատապարտողներ, պատերազմը քոնը կլինի եւ հաղթանակը՝ մերը, մարմինը՝ ձերը եւ նիզակը՝ մերը, պարանոցը՝ քոնը եւ սուսերը՝ մերը, ստացվածը՝ քոնը եւ մենք՝ ժառանգորդներ, ավարը՝ քոնը եւ մենք՝ ավարառուներ, դու՝ ավազակ եւ մենք՝ քեզ կողոպտողներ, դու եղեգ եւ մենք՝ հուր դյուրավառ, դու՝ հարդ եւ մենք՝ հողմ քո զորքը ցրող, դու՝ ծաղիկ եւ մենք՝ խորշակ թառամեցնող, դու՝ հանդ պտղալից եւ մենք՝ կարկուտ կործանարար, դու շինություն առանց հիմքի եւ ես՝ հեղեղ հիմնիվեր տապալող, դու՝ լեշ, իմ զորքը՝ պատառոտող գազան, որ ծվատում է քո սրտի առագաստը, դու՝ խաղալիք եւ մենք՝ մանուկներ, որ քո զորությունն առած՝ խաղեր կխաղանք քեզ հետ ու քո ամբողջ հպարտության ու ամբարտավանության հետ, դու՝ վայրի երե եւ մենք՝ որսորդներ, դու՝ թռչուն եւ մենք՝ քեզ բարձրությունից վար բերող, ցանցի մեջ առնող, դու՝ ծովային վիշապ եւ մենք՝ կարթ, որ քո քիմքը խոցելով քեզ վեր են քաշում խոր անդունդներից, եւ դու՝ եղջերու առանց եղջյուրների, իսկ մենք՝ արծիվներ վերեւների, քո աչքերը կուրացնողներ եւ քո լեշը մեր ձագերին ու ծակաբնակ աղվեսներին նետող։ Եվ ահա դարձյալ ասում եմ. ուրիշ ելք չունես. ինչ որոգայթ մեզ համար ես պատրաստել, ավելի վտանգավորն իր մեջ կառնի քեզ»[1]։

---

1 Թովմա Արծրունի, Պատմութիւնն տանն Արծրունեաց, ՍՊբ, 1887, էջ 178-179 (աշխարհաբար շարադրությունն իմն է.- Բ. ՈՒ.)

Հայրենի աղբյուրները Եսայի Աբու-Մուսեին կոչում են «Իրիցու որդի»։ Պատասխան թղթից երեւում է հոգեւորական հոր դաստիարակությունը։ Աստվածաշնչյան անունների հյուսվածքը եւ տրամաբանորեն կուռ շարադրանքը խոսում են հենց այդ մասին։ Սակայն ըմբոստ ոգին լեռնական հերոսինն է։

Միամյա պատերազմի բոլոր դրվագներով Եսային ապացուցեց, որ անընկճելի է իր Գտիչ-Գորոզ բերդը։ Եվ ամոթապարտ Բուղան, տեսնելով, որ ինքն անզոր է պատերազմով նվաճել խիզախ լեռնականներին, դիմեց խարդավանքի. խալիֆից Եսայիի համար բերել տվեց մի թուղթ, որով նա հրավիրվում էր Բաղդադ՝ խալիֆի հետ խաղաղության բանակցություններ վարելու... Սակայն արքունիք հասած հայ իշխանին անմիջապես կալանավորեցին որպես ապստամբի, եւ նա այլեւս չտեսավ հայրենիքը։

Սա 855 թվականն էր։ Եսայի իշխանի հետ տաժանակրության ենթարկվեցին արքունիք տարված հայ բազմաթիվ ուրիշ իշխաններ՝ Սահլ Սմբատյանն ու նրա որդիներ Հովհաննեսը, Ատրներսեհը, Մամիկոնեից տեր Գրիգորը, Սյունյաց տեր Գրիգորը (Բուրդկա որդին), Վայոց ձորի իշխան Վասակը, Սյունյաց մյուս իշխան Փիլիպպեն, Գարդմանքի Ներսեհ իշխանը եւ ուրիշներ։

Այսպես ավարտվեցին IX դարի առաջին կեսի հակաարաբական շարժումները Հայաստանում։

Սահլ Սմբատյանի ու Եսայի իշխանի՝ Արցախի այս երկու հզոր տերերի անունները, սակայն, մեր պատմիչների ու արաբ հեղինակների երկերում առնչվում են ոչ միայն այդ շարժումների ընթացքին։ Բանն այն է, որ արաբների տիրապետության շրջանը կրկնակի չարաղետ էր արաբներին ուղեկցող կամ նրանցից անկախ Հայաստան խուժող ուրիշ մեծ ու մանր ասպատակիչների պատճառով։ Նրանք գալիս էին հյուսիսից ու հարավից։ Արեւելքից էին հայտնվում անապատի սամումի պես։ Եվ Հայոց երկիրը ծվատվում էր տարացեղ ու այլակրոն թշնամիների խժդժություններից։

Գրավոր պատմությունը բավականին հանգամանալից տեղեկություններ է պահել մի այդպիսի բռնավորի մասին, որն IX դարի սկզբին բարեկամի դիմակով ոտք դրեց Արեւելյան Հայաստան եւ հետո դարձավ մի ահավոր չարիք անպաշտպան ժողովրդի համար։

Բաբեկ-Բաբան էր այդ եկվորի անունը։ Արցախի ու Սյունյաց իշխանների բարյացակամությունը նվաճել էր նրանով, որ լինելով պարսիկ, Արդաբիլից հարավ գտնվող Բազզ գավառի բնակիչ, ինքն էլ ապստամբել էր Արաբական խալիֆայության դեմ եւ խուռամյան[1] աղանդավորների գլուխն անցած նեղն էր գցել նորահավատ իսլամի զինվորությանը։

Հայ ժամանակագիրների վկայությամբ՝ պարսիկ այս Բաբեկ-Բաբանն ամուսնացել էր Սյունյաց իշխանի դստեր հետ։ Այսքան սերտ բարեկամությամբ նա մտավ Սյունիք, բայց խարդավանքով սպանեց աներոջը եւ տիրեց նրա Բաղք գավառին։ Այնժամ Բաղքի բնակիչները, զայրացած այս անանխադեպ ապերախտության վրա, ըմբոստացան հա-

1 Խուռամյաններ-հակախալիֆայական աղանդավորներ Մերձավոր Արեւելքում։

փըշտակիչի դեմ։ *«Դրանից հետո Բաղաց գավառն սկսեց չենթարկվել անօրեն Բաբանին,*-հաղորդում է Մովսես Դասխուրանցին։-*Եվ նա եկավ Պարսկաստանից, նվաճեց, ավերեց երկիրը, սրի քաշեց Բաղաց գավառի կանանց ու մանուկներին։ Հաջորդ տարին էլ Բաբանն անցավ Գեղարքունիք գավառը եւ այնտեղ մոտ 15 հազար բնակիչների սրի քաշեց եւ Մաքենոցաց մեծ մայրաքաղաքը (վանքը) հրի մատնեց, մնաց միայն ջրաղացը եւ ուրիշ ոչինչ։ Եվ դա հայոց երկու հարյուր յոթանասունվեց թվականին էր»* (827 թ.)[1]։

Մի քանի տարի հետո Սյունիքի բախտին պիտի արժանանար նաեւ Արցախը։ Այստեղ Բաբեկի գործած գազանությունների մասին խոսող մեր աղբյուրների հետ համերաշխ են նաեւ արաբ հեղինակները։

Երկտակ այս տեղեկություններից պարզվում է, որ Բաբեկը պարբերաբար հարձակվում էր Արցախի տարբեր գավառների վրա, կոտորում բնակչությանը, գերեվարում շատերին, ավերում վանքերն ու մենաստանները։ Հայ հեղինակներն ամոթից լռում են այդ նորաթուխ բռնավորի մյուս չարագործությունների մասին։ Սակայն արաբների հաղորդումների համաձայն՝ Բաբեկն ու նրա ուղեկիցներն ասպատակության ենթարկած բնակավայրերում տարածում էին մինչ այդ չեղած-չտեսնված անբարոյականություն։ Ասում են՝ Բաբեկն ինքն անձամբ գերի վերցրած իշխանավորին կապում էր տան սյանը, ապա նրա աչքի առաջ բռնաբարում կնոջը, մորն ու քրոջը։ Նրա օրինակով էին գործում նաեւ իր զինակիցներն ու զինվորները։

Զուշացավ վրեժխնդրությունը։ 837 թ. արաբական զորքերից պարտություն կրած եւ զինակիցներից լքված ու անօգնական Բաբեկը Հայոց երկրով փախչում էր Բյուզանդիա։ Արցախում փորձեց պատսպարվել հայ իշխանների մոտ։ Ինքը թաքնվեց Սահլի ապարանքում, իր եղբայր Աբդալլահին էլ ուղարկեց Եսայի Աբու-Մուսեի մոտ։ Սահլ Սմբատյանը, որ այնքան անարգանք էր տարել անկոչ բռնավորի երեսից, ձերբակալեց Բաբեկին՝ *«զմարդախողխող աշխարհաւեր արիւնարբու գազանն»* հանձնեց արաբ զորապետ ամիր Մոմինին եւ մեծ վարձ ստացավ արքունիքից։ Դիզակի տեր Եսային էլ արքունի գործակալի ձեռքը հանձնեց Բաբեկի եղբայր Աբդալլահին։

Բաբան-Բաբեկին ու նրա եղբորը ձերբակալելու եւ խալիֆի գործակալներին հանձնելու մանրամասները հաղորդում են արաբ հեղինակները։ Ալ-Մուհադդասին, օրինակ, ասում է՝ երբ Բաբեկին լքեցին զինակիցները, ապա նա ծպտված, իր ընտանիքի հետ փախավ Հայաստան։ *«Այստեղ էլ Սահլ իբն Սմբատը՝ քրիստոնյա, հայ բատրիկներից մեկը, ճանաչեց նրան... Սահլը ձերբակալեց Բաբեկին եւ ուղարկեց ալ-Աֆշինի մոտ։ Եվ քանի որ խալիֆ ալ-Մութասիմը երկու միլիոն դիրհեմ էր խոստացել նրան, ով Բաբեկին կբերի կենդանի... ապա Սահլ իբն Սունբաթին բերին երկու միլիոն դիրհեմ եւ արտոնեցին, որպեսզի նա ինքն իր նահանգի կառավարիչներ նշանակի»*։ Ատ-Տաբարին էլ այս-

1 Մովսէս Կաղանկատուացի, գիրք Գ, գլ. Ի։

պես է պատմում Բաբեկի եղբայր Աբդալլահին ձերբակալելու հանգամանքը. *«Երբ ալ-Աֆշինը Բաբեկին բռնել, տարել էր իր ճամբարը եւ դրել հսկողության տակ, նրան հաղորդեցին, որ Աբդալլահն էլ գտնվում է Իսա իբն-Յուսուֆ իբն-Իստիփանոսի* (այսինքն՝ Եսայի Աբու-Մուսեի.- Բ. Ու.) *մոտ։ Անմիջապես նա իբն-Իստիփանոսին գրեց, որպեսզի սա Աբդալլահին ուղարկի իրեն, եւ նա էլ այդպես արեց»։*

Պատմությունն ունի իր անդիմադրելի տրամաբանությունը. հավերժական բռնակալ չկա։ Նվաճումների ու անսանձ կեղեքումների վրա հիմնված տիրակալությունը վաղ թե ուշ կործանվում է, քանի որ, առաջին հերթին, այն ինքն է ստեղծում ու սնում իր իսկ բունը կրծող զեռունները։ IX դարի կեսից սկսած արաբական տիեզերակալությունը երերում էր կուսակալների ու ամիրաների խառնակիչ մրցակցությունից։ Իսկ Արմինիա կուսակալության մեջ ոչ Բուղայի նենգոտ չարությունները, ոչ էլ մյուս գործակալների օրհասական միջոցառումները խալիֆայությունը չփրկեցին անփառունակ վախճանից։ IX դարի կեսին հայկական համատարած շարժումներն ու խիզախ ինքնապաշտպանությունը հիմնովին սասանել էին բռնակալների տիրապետությունը։ Դարի կեսերին երկրի նախարարական վերնախավի մեջ գերագահություն ստացած Բագրատունյաց տոհմն իր ձեռքը վերցրեց բովանդակ երկրի ղեկը։ 855 թվականին Աշոտ Բագրատունին վերականգնեց հայկական պետական անկախությունը՝ հիմք դնելով հայրենի թագավորական մի նոր հարստության, որը շուրջ դար ու կես պետք է վարեր Հայոց բախտի նավը միջնադարի փոթորկոտ ծովում։

ԱՐՑԱԽԻ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ «ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Սույն գրքի նախորդ էջերում թռուցիկ խոսք եղավ Արցախական աշխարհի վաղագույն շրջանի մշակութային կյանքի եւ դրանից պահպանված հնագիտական նյութերի ու մատենագիտական հիշատակությունների վերաբերյալ։ Ցավոք, պահպանվածը չափազանց քիչ է՝ համեմատած այն ամենի հետ, որ գիտենք պատմությունից, ենթադրում ենք ընդհանուր հայկական մշակութային հնագույն ժառանգության հուշած տրամաբանությունից։ Քիչ է, որովհետեւ Արցախում շատ ավելի, քան Հայաստանում ուրիշ որեւէ տեղ, ազգային մշակույթը ենթակա է եղել եկվոր թշնամիների կործանարար հարվածներին։ Այդ իրողության առթիվ պատկերացում կարող են տալ Ամարասի վանքի, նրա ճարտարապետական կառույցների ճակատագրին վերաբերող հանրահայտ տվյալները։ Գրիգոր Լուսավորչի, նրա թոռ Գրիգորիս եպիսկոպոսի, Վաչագան Բարեպաշտի կառուցած եկեղեցիներից, հետագաների կողմից պարբերաբար կանգնեցված կամ վերականգնած բազմաթիվ շինություններից պահպանվել, մեզ է հասել միայն մեկ շքամուտքի մաս՝ մի քանի նախշազարդերի հետ միասին։ Գրավոր անհամար տեղեկություններ եւ վկայություններ կան Ուռեկավանքի, Եղիշ Առաքյալի, Գանձասարի,

Դադիվանքի եւ ուրիշ բազմաթիվ վանական համալիրների նախնական շինությունների, նրանց ճարտարապետական բարձր արժանիքների մասին։ Սակայն ո՞ւր են այդ շինությունները, ի՞նչ է մնացել նրանցից։ Պարզապես ոչի՛նչ, որովհետեւ, միջնադարյան մեր հեղինակների վկայությամբ, նվաճող բռնակալներն Արցախում ու հարեւան սահմանամերձ նահանգներում ոտք դնելիս նախ եւ առաջ վանական այդ կառույցներն էին ավերում, հողին հավասարեցնում։ Գիտենք, որ Արցախի քարգործ վարպետները վաղնջական ժամանակներից խաչքարեր էին պատրաստում եւ այս բնագավառում տրվել են արվեստի հրաշալի նմուշներ։ Սակայն հայտնի է նաեւ, որ արաբ ասպատակիչներն այստեղ, իրենց մահմեդական մոլեռանդության թելադրանքով, նախ եւ առաջ ոչնչացնում էին խաչքարը՝ իբրեւ իրենց թշնամի քրիստոնեական հավատի խորհրդանիշ։ Ականատես Ղեւոնդ պատմիչն է վկայել, թե Եզիդ խալիֆի հրամանով արաբները Հայաստանում ուր խաչքար ու խաչանախշ տեսնեին, խորտակում էին տեղնուտեղը։ Իսկ մեր «Աղվանից աշխարհի պատմության» մեջ նշված է, թե Ատրպատականի բռնավորի զորքերը մտել էին Հայոց երկիր եւ ուր ոտք էին դնում, ավերում, քանդում էին Աստուծո եկեղեցիները, Քրիստոսի նշխարները, մանրացնում-փոշի էին դարձնում այդ ամենը։

Հետագայում եւս թշնամիներն այս նույն վայրագություններն էին գործադրում մեր ճարտարապետական կոթողների նկատմամբ։ Մխիթար Գոշն է պատմում, թե սելջուկ թուրքերն Արցախ մտնելով՝ հանդիպեցին անկոտրում դիմադրության, նույնիսկ մեծ ջարդ կրեցին։ Սակայն մեկ էլ լրացուցիչ ուժերով եկան, ճնշեցին դիմադրությունը եւ այնպես հողմացրիվ արին բոլոր վանքերն ու եկեղեցիները, ասես նրանց տեղերում առաջները ոչինչ չի եղել։ Եվ այսքանից հետո չի կարելի զարմանալ, որ վաղագույն աղբյուրների մեջ բազմապիսի հիշատակություններով հայտնի մեր վանական համալիրների ու ճարտարապետական այլեւայլ հուշարձանների շարքում, նրանց տարածքներում պահպանված հնագույն շինությունները XII դարի երկրորդ կեսից են, այն ժամանակից, երբ Զաքարյան զորապետների գլխավորությամբ Հայաստանը փրկվեց սելջուկ-թուրքերի տիրապետությունից։

Դժբախտաբար, դրությունն ավելի բարվոք չէր մշակույթի մնացած բնագավառներում։ Չեն պահպանվել նաեւ Արցախում ստեղծված գրավոր հուշարձանները։ Եվ դա հասկանալի է, քանի որ, թշնամին երբ վանական համալիր էր կործանում, ոչնչացնում էր նաեւ այնտեղ եղած մատյանները, գրավոր հիշատակարանները։ Չնայած գրական հուշարձաններն էլ ունեին մի այլ թերություն. չէին ընդգրկում այն ողջ արժեքավորը, որ ստեղծված էր ժողովրդի կողմից եւ պահպանվում էր իբրեւ բանահյուսություն, անցնում սերնդեսերունդ։ «Աղվանից աշխարհի պատմության» շարահարողը զանգանտվում էր, թե ***«Արեւելից կողմանք ունեն շատ զրույցներ, որոնք չեն մտել հնագիր պատմագիրների գրքերի մեջ»***։ Եվ այս ցավագին մտահոգությունն ստիպել է, որ Ե՛ւ պատմության սկզբնապես հյուսված հատվածների հեղինակները (Վաչագան Բարեպաշտի ժամանակագիրը, Վիրո կաթողիկոսը, Ջիվանշիրի կենսագիրը եւլք), Ե՛ւ սրանք մեկ ընդհանուր հյուսվածքի մեջ առնող-շարահարողը բարե-

խոնորեն գրի առնեն Հայաղվանքում տարածված զրույցներն ու ավանդությունները, նախընթացի պատմական իրողություններին, մշակութային երեւույթներին վերաբերող ժողովրդական բառն ու բանը: Եվ «Աղվանից աշխարհի պատմությունը», իր պատմաճանաչողական բացառիկ արժեքից բացի, հենց այս ամենով եւս հարուստ է ու նշանակալից, սրանց առկայությամբ էլ դարձել է Արցախի ու հարեւան հայկական նահանգների ավելի քան մեկ հազարամյակի (**I-X** դդ.) հանրագիտարանը:

Մովսես Կաղանկատվեցու անվամբ մեզ հասած «Պատմութիւն Աղուանից աշխարհի» մատենագրական երկը միջնադարյան հայ գրականության ամենաբարձրարժեք կոթողներից մեկն է՝ վաղուց արդեն իր արժանի գնահատականն ստացած հայագիտության մեջ: Մեր մատենագրության սակավ գործեր կարելի է թվել, որոնք ենթարկված լինեն այնքան շատ ու այնքան համակողմանի քննության, ինչպես այս երկը, որն ահա ավելի քան մեկ հարյուրամյակ գտնվում է հայագիտության ու կովկասագիտության ուշադրության կենտրոնում: Այն ունեցել է մի քանի հրատարակություն, թարգմանվել է ռուսերեն, անգլերեն, ժամանակակից հայերեն:

Այս «Պատմության» բնագրին, ընդգրկած նյութերին, հեղինակին ու աղբյուրներին, աղբյուրներից օգտվելու եղանակին վերաբերող հարցերից չկա մեկը, որ այս կամ այն չափով ենթարկված չլինի մասնագիտական քննության: Ուրիշ խոսքով՝ եթե ի մի բերվեն մինչեւ այսօր այս բնագավառում կատարված հետազոտությունների արդյունքները, կպարզվի, որ իրենց գիտական ու հիմնավոր պատասխաններն են ստացել «Աղվանից աշխարհի պատմության» պարունակած եւ նրա հարուցած բոլոր կարեւոր հարցերը:

Անկախ այս ամենից, սակայն, գրական-պատմական այս հուշարձանին առնչվող հարցերից շատերը ցայսօր հարց էլ մնում են, որովհետեւ միշտ չէ, որ ուսումնասիրողները նրանց մոտեցել են առանց նախապաշարումների, պատմական իրականության նրբին երեւույթների խորքը թափանցելու պատրաստականությամբ:

Ավելորդ չի լինի, օրինակ, պարզել գրքի անվան հետ կապված ըմբռնումները, որովհետեւ հենց միայն «Աղվանից աշխարհ» արտահայտությունը շատ դեպքերում է առիթ դարձել այլեւայլ, իրարամերժ մեկնաբանությունների: Պատահել է, որ հեղինակին համարել են բուն Աղվանքի ծնունդ, նրա երկը՝ Աղվանք (հունա-հռոմեական հեղինակների կողմից «Ալբանիա» կոչված) երկրի պատմություն: Ոմանք էլ «Աղվանից աշխարհն» ընդունելով որպես աղվան ժողովրդի բնակավայր, զարմանքով տեսել են, որ այդ գրքում այդպիսի ժողովուրդ չկա, չի խոսվում նման ազգագրական միավորի մասին, այլ դա պատմությունն է հայ ժողովրդի մի խոշոր հատվածի: Ռուս նշանավոր կովկասագետներ Կ. Գանը, Ի. Շոպենը եւ Ա. Յանովսկին դեռեւս անցյալ դարում, քննելով «Աղվանից աշխարհի» միջավայրն ու բովանդակությունը, որոշակիորեն եզրակացրել են, որ դրանք ոչ մի առնչություն չունեն բուն Աղվանքի հետ: Ռուս մի այլ խոշոր գիտնական՝ Ս. Վ. Յուշկովը, ավելի համոզիչ հաստատեց, որ Կաղանկատվացու նկարագրած Աղվանքը հին հայկական պետության մի բեկորն է եւ ոչ մի կերպ չի կարող նույնացվել բուն Աղվանքի հետ, քանի որ ***«Կաղանկատվացու նկար-***

բազրած Աղվանքը գտնվում է հին Հայաստանի տարածքում եւ ոչ թե հին Ալբանիայի տարածքում»[1]:

Թե ինչո՞ւ այս աշխարհը կոչվում է «Աղվանք», իսկ նրա պատմությունն էլ՝ «Պատմութիւն Աղուանից աշխարհի», դա հասկանալի կդառնա, եթե, նախ, պարզենք, թե գրքի հեղինակն ինչպե՞ս է պատկերացնում իր երկիրը, ո՞րն է այդ տեղանվան նրա ըմբռնումը: Պատմիչն իր երկի հենց առաջին էջերից մեկում հայտարարում է այն երկրի մասին, որը տարածված է *«ի գետէն Երասխայ մինչեւ ցամուրն Հնարակերտ»*: Հնարակերտ ամրոցը գտնվում էր Կուր գետի վրա: Ուրեմն, պատմիչի նկարագրած երկիրը Կուրի ու Երասխի միջագետքն է, պատմական Ուտիք ու Արցախ նահանգների ընդգրկած տարածքը, որովհետեւ Ուտիքի հյուսիսային սահմանն էր Կուրը՝ խրամ վտակի խառնարանից սկսած մինչեւ նույն Կուրի միախառնումը Երասխի հետ, իսկ Արցախի հարավային սահմանն էր Երասխը՝ Աղավնո (այժմ՝ Հազարի) վտակի խառնարանից մինչեւ Մուղանի դաշտը, ուր Երասխը ծովելով դեպի հյուսիս-արեւելք, հարավ-արեւելյան սահման էր դառնում Ուտիքի համար:

Սրանից ավելի քան հազար տարի առաջ, X դարի կեսին, Մովսես Դասխուրանցին հյուսել է այս ետնագույն Աղվանքի ամբողջական պատմությունը: Դա մի ժամանակ էր, երբ իրականում վերացել էր արաբական տիրապետությունը, եւ տեղական իշխանները ձգտում էին ինքնավարության: Հայ նախարարական տների կանգուն ներկայացուցիչներից շատերն իրենց հայտարարում էին թագավորներ, փորձում ապրել թագավորավայել կյանքով: Նրանցից ամեն մեկն արդեն տոհմական պատմիչ էլ ուներ, որը պետք է գրեր թագավորի ու նրա տոհմի պատմությունը՝ նրանց վերագրելով ունեցած ու չունեցած բարեմասնություններ, ամենաբարձրատոհմիկ ծագումնաբանություն եւ փառավոր այնպիսի գործեր, որոնցից զուրկ են ազգակից մյուս թագավորներն ու իշխանները: Նիկ. Ադոնցն այս առթիվ իրավացիորեն գրել է, թե դա *«հատվածական կամ տեղական հայրենասիրության շրջանն էր, եւ Հովհաննես կաթողիկոսը գրեց Բագրատունիների պատմությունը, Թովման՝ Արծրունիների, Կաղանկատվացին* (իմա՝ Դասխուրանցին.- Բ. ՈՒ.) *նրանց հետեւելով Աղվանից կամ Արցախի իշխանների»*[2]:

Կաղանկատվացին VII դարի հեղինակ է, եւ նրա «Պատմությունն» էլ մի զգալի մասով կազմվել է նույն ժամանակներում: Սակայն X դարում Մովսես Դասխուրանցին այն միացրել է ուրիշ ժամանակագրությունների հետ, լրացրել ու վերջնական խմբագրման ենթարկել, եւ ստացվել է «Պատմության» այն տարբերակը, որ հասել է մեզ:

Այդ «Պատմությունն» ամբողջական դարձնելու համար Դասխուրանցին Աղվանից կամ Արցախի իշխանների տոհմի պատմության հիմքում դրել է VII դարի ժամանակագիր Կաղանկատվացու երկը, որն սկսվում է այն առաջին մեծից՝ Առանից, որի մասին

---

1 С. В. Юшков, К вопросу о границах древней Албании. "Исторические записки АН СССР", т. I, М., 1937, стр. 137.

2 Նիկ. Ադոնց, «Անահիտ», 1948, No 1-3, էջ 86-87:

սպառիչ տեղեկություն է հաղորդել Մովսես Խորենացին։ Գրքում տառացիորեն արտագրված են ամբողջական հատվածներ Ագաթանգեղոսի, Կորյունի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Եղիշեի երկերից, հայոց սուրբ գրքերից ու վարքաբանական այլեւայլ ժողովածուներից։

Գրքի արժանիքը, սակայն, այն բացառիկ հոգատար ու բարեխիղճ վերաբերմունքն է հայրենի երկրի նախընթաց պատմության պատառիկների նկատմամբ, որի շնորհիվ համարյա անաղարտ վիճակում համահավաք պատմության մեջ են մտել Վաչագան Բարեպաշտին, խազարաց արշավանքներին, Ջիվանշիր մեծ իշխանին վերաբերող առանձին փոքրիկ պատմությունները՝ ստեղծված ժամանակակիցների ձեռքով։ Դավթակ Քերթողի հայտնի «Ողբը»՝ հայոց առաջին բնարական պոեմը, մի շարք ժամանակագրություններ, թղթեր ու վարքաբանական նյութեր հենց միայն ա՛յս գրքում են պահպանվել։

Այս ամենի շնորհիվ Մովսես Դասխուրանցու հյուսած գրքին զումարվել են հին ժամանակները՝ 200-500 տարիներ։ Պատմիչը մի ոտքով հիմնականում կանգնած է V դարի 80-ական թվականներում, Խորենացու մոտ, մյուսով՝ X դարի առաջին կեսին, Բագրատունյաց պայազատների համաանդրկովկասյան աշխարհաշեն գործերի միջավայրում։

Գրքի մեջ մտած առաջին ինքնուրույն հատված-պատմությունը Վաչագան Բարեպաշտին վերաբերող գլուխներն են՝ գրված հենց Վաչագան թագավորի ժամանակակցի ձեռքով։

Ասացինք, որ V դարի 80-ական թվականներին Ուտիքի ու Արցախի Առանշահիկներն ստեղծեցին իրենց ինքնուրույն թագավորությունը, եւ գահ բարձրացավ Վաչագանը։ Պատմությունը բանիցս հիշում է Վաչագանի տիրապետության սահմանները, որոնց մեջ են Արեւելք, Արեւելից կողմանք, Աղվանք (ետնագույն) կոչված հիշյալ երկու նահանգները, մեկ էլ անդրկուրյան հայաբնակ Կամբեճան գավառը։

Այս առումով էլ Վաչագանի թագավորության պատմությունը մեր ամբողջ մատենագիտության մեջ պահպանված առաջին ու շատ թե քիչ սպառիչ խոսքն է Մեծ Հայքի միասնական թագավորության վերացումից հետո հին Հայաստանի տարածքի վրա գոյացած վարչաքաղաքական անդրանիկ ինքնավար միավորի մասին։

Պատմության հաջորդ ամբողջական հատվածը՝ կապված VII դարի առաջին երեսնամյակի հետ, Վիրո կաթողիկոսի հիշատակարանն է՝ խազարաց արշավանքների վիպական նկարագրություններով հանդերձ։

Խազարների մասին բազմալեզու հսկայական գրականություն է ստեղծվել ժամանակին։ Եվ այդ գրականության մեջ իրենց առանձնահատուկ տեղն են գրավում «Աղվանից աշխարհի պատմության» այն էջերը, որոնք գրված են ականատեսի ու դեպքերի մասնակցի ձեռքով։ Լեռն այս էջերը շողշողուն գոհարներ էր համարում ***«Մասնավորապես հենց այն պատճառով..., որ նրանք մեր գրականության մեջ առաջինն են ըստ ավագության, որոնք կենդանի գույներով ներկայացնում են սար-***

սափները, որ այդ թափառական ձիավորները տարածում էին ամեն տեղ իրենց տեսքով, կենցաղով, կատաղի վայրագություններով»[1]:

Ռուս խոշոր պատմաբան-խազարագետ Մ. Ի. Արտամոնովի կարծիքով՝ *«բյուզանդական եւ մյուս բոլոր աղբյուրներից առավել վառ ու հանգամանալից խազարների արշավանքները պատմվում են հայկական պատմագրական երկի՝ «Աղվանից աշխարհի պատմության» մեջ... Իսկ հատկապես այն էջերը, որոնցում պատմվում են խազարների արշավանքներն Անդրկովկաս, կարող էին գրվել միայն ժամանակակցի ձեռքով, քանի որ նրանք այնքան լիքն են մանրամասներով եւ հագեցված հեղինակի զգացումներով նրա սարսափով բարբարոսների հանդեպ եւ վշտով հայրենի հողի տառապանքների համար»*[2]:

Ականատես պատմիչն ամենայն մանրակրկիտությամբ գրում է բոլոր այն փորձությունների մասին, որոնց ենթարկվեցին Աղվանքն ու կենտրոնական Հայաստանը, Վրաստանն ու Տփղիսը (Թբիլիսին)՝ VII դարի առաջին կեսին՝ նախքան արաբների երեւան գալը:

Հին աղբյուրներում նկարագրված ռազմագիտական փիչ դրվագներ կան, որոնք իրենց ճշմարտացիությամբ ու պատումի ուժով կկարողանան մրցել Տփղիսի առաջին ապարդյուն պաշարումը, ապա երկրորդը՝ չինաղ քաղաքի առումն ու ավերումը նկարագրող էջերի հետ:

Իսկ ի՞նչ արժեն գրքի այն հատվածները, որոնք ներկայացնում են խազարաց կենցաղն ու բարքերը: Մասնագետների կարծիքով դրանք անգնահատելի աղբյուր են հինավուրց, մոռացված մի ժողովրդի նիստ ու կացը ճանաչելու համար: Իսկ խազարական բանակի ճաշկերույթի նկարագրությունն իր տեսակի մեջ սակավադեպ մի օրինակ է:

Մեր պատմիչի տեղեկություններով ստուգվում եւ ճշգրտվում են խազարների հիշյալ արշավանքների բազմաթիվ այնպիսի տվյալներ, որոնք մյուս աղբյուրները կա՛մ չունեն, կա՛մ էլ ունեն, սակայն արժանահավատ չեն: Իսկ եթե այս ամենին էլ գումարենք այն հանգամանքը, որ «Պատմությունն» առհասարակ խազարաց հարկային քաղաքականությունը հանգամանորեն ներկայացնող միակ աղբյուրն է համաշխարհային պատմագրության մեջ (Մ. Ի. Արտամոնով), ապա պատկերն ավելի պարզ կդառնա:

Մովսես Կաղանկատվացին բազմիցս նշում է, որ ինքը Ջիվանշիր մեծ իշխանի պալատական պատմիչն է եղել: Գրքի այս մասն էլ իր յուրահատուկ դերն ու արժեքն ունի:

Ջիվանշիրին նվիրված հատվածի արժեքը շատ մեծ է նաեւ մի այլ պատճառով. այստեղ է պահպանվել հայ վաղմիջնադարյան աշխարհիկ բանաստեղծության ամե-

---

1 Լեո, Հայոց պատմություն, հ. երկրորդ, էջ 262:

2 М. И. Артмонов, Очерки древнейшей истории хазар, Л., 1936, стр. 50.

նաշխեղ գոհարներից մեկը՝ Դավթակ Քերթողի «Ողբ ի մահն Զուանշիրի մեծի իշխանի» պոեմը։ Դավթակի «Ողբը» ծավալուն բանաստեղծական երկ է, որի առանցքն իրական, աշխարհիկ մարդն է, նրա գովքն ու բնութագիրը՝ տրված Զիվանշիր իշխանի եղերական մահվան առթիվ։

Պոեմը ձեւի տեսակետից եւս առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում. ունի 36 քառատող տներ, որոնց սկզբնատառերը կազմում են հայոց այբուբենը։ Նկատի առնելով, որ բանաստեղծական տողերի կամ տների առաջին տառերի այսպիսի դասավորությամբ բանաստեղծները սովորաբար արտահայտում էին իրենց համար ամենանվիրական անունները, պետք է ընդունել, որ Դավթակն այս պոեմով փառաբանել է նաեւ մեր մայրենի այբուբենը։

Դժբախտաբար Դավթակի մասին նվազ տեղեկություններ են հաղորդված «Պատմության» մեջ։ Այնքան միայն, որ նա եկել էր ուրիշ տեղից, Զիվանշիրի պալատում մնացել էր շատ օրեր եւ այս պոեմը կարդացել էր բազմության առաջ։ Սակայն պատմիչը հայտնում է նաեւ, որ նա մեծատաղանդ նարտասան է եղել ու ***«վերծանական քերթութեամբ յառաջաղեմ»***, լեզու ուներ՝ ***«նման երազագիր գրչի»***։ Եթե այս բոլորի համար Դավթակն արժանացել էր իշխանի հյուրամեծար հարգանքին եւ շատ օրեր նրա մոտ պահվել էր իբրեւ թանկագին բարեկամ, նշանակում է՝ «Ողբ»-ից առաջ էլ Դավթակը հայտնի էր իր ***«քերթութեամբ յառաջաղէմ»***։ Մանավանդ, որ նա կոչված է ***«քերթող»***, իսկ այն ժամանակ այդպես կոչում էին ոչ բոլոր բանաստեղծներին, այլ միայն նրանց, որոնք աչքի էին ընկնում բարձր վարպետությամբ։ Եվ մենք ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ «Աղվանքի պատմության» շնորհիվ փրկվել ու մեզ է հասել VII դարի հայ բանաստեղծության նշանավոր վարպետի երկերից միայն մեկը։

Զիվանշիրին վերաբերող հատվածի մեջբերումով հեղինակը չի ավարտում իր խոսքը Միհրանյանների մասին։ Պատմության հետագա գլուխներում նա ամեն կերպ հետեւում է այս տոհմի իշխանության կյանքին եւ արժանահավատ աղբյուրներով ցույց է տալիս, որ Միհրանյանները չդիմացան Արցախի Առանշահիկների մրցակցությանը։ Վերջին հաշվով նրանք տեղի տվեցին՝ Առանշահիկներին հանձնելով իրենց տոհմի արյան հոլովույթը։

Այս է ահա ոչ լրիվ ցանկն այն բարձր արժանիքների, որոնցով տոգորված է «Աղվանից աշխարհի պատմությունը»։ Մենք չխոսեցինք, օրինակ, ժողովրդական այն առողջ ատաղձի մասին, որ անցնում է գրքի սկզբից մինչեւ վերջը։ Գրքի շատ գլուխներում արտացոլված են մեր ժողովրդի հերոսական հատվածի հոգեւոր արժեքները՝ հավատալիքի յուրահատուկ երանգները, դիցաբանական պատկերացումները, գեղարվեստական վառ մտածողության բազմազան դրսեւորումները (առասպել, առած, թեւավոր խոսք եւ այլն)։ Ժողովրդական խոսքն ու ավանդույթները հաճախ ճշմարտապատում դեպքերին են խառնվում՝ նրանց հաղորդելով գեղարվեստական շունչ ու գրավչություն։ Այդ ավանդություններն ու զրույցները մեզ համար առավել թանկագին են, քանի որ այս գրքից բացի ուրիշ ոչ մի տեղ չկան։ Դրա համար էլ պատմիչը պարզասրտորեն տեղեկացնում է, թե ***«Դռանին զրոյցք Արեւելից կողմանց, որք ոչ են անկեալ***

ի գիրս հնագիր պատմագրաց, զորս պատշաճ վարկաք մակագրել ի տարբս տողաչափութեան մերում»։

Այս երկի ընձեռած հարուստ ու արժանահավատ նյութի վրա հատուկ տենչաջան ուսումնասիրության թեմա է դառնում Առանշահիկ նախարարական տոհմի պատմությունը։ Այստեղ է, որ առաջին անգամ շուրջ 12 դարերի ամբողջ ընթացքի մեջ, Առանից մինչեւ Սահլ Սմբատյանի թոռնթոռ Հովհաննես Սենեքերիմը, գծվում են այս նախարարական տան կյանքի վայրիվերումները, ցույց տալով նրանց պայքարն օտար բռնակալների դեմ, նրանց հայրենաշեն ոգորումները եւ կառուցած այն քաղաք-ամրոցները, վանքերն ու եկեղեցիները, որոնցով նրանք իրենց ազգային ինքնության կնիքն էին դնում հայրենի հողի եւ նրա գալիք պատմության վրա։

ԱՐՑԱԽ-ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՏԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Արաբների տիրապետության օրոք, երբ ազատագրական պայքարն ու ինքնապաշտպանական պատերազմները դարձել էին Արցախի իշխանությունների ամենօրյա գործը, մեծ դեր ու նշանակություն ստացան երկրամասի բերդերը։ Վաղնջական ժամանակներից էլ այստեղ այնքան շատ էին բերդերն ու ամրոցները, որ նահանգը կոչվում էր Արցախամուր աշխարհ, իսկ այս ժամանակ բռնակալների դեմ բռնկված պարբերական ապըստամբությունների եւ հաճախ տարիներ ձգվող պայքարի պայմաններում, հին բերդամրոցները վերակառուցվում, ավելի էին հարմարեցվում ինքնապաշտպանության համար, նորերն ու առավել հուսալիներն էին կառուցվում։ Հայտնի են այս շրջանում կառուցված անառիկ մի շարք բերդեր, ինչպես Խաչենը, Զրաբերդ-Զարաբերդը՝ Թարթառի հովտում, Հավքախաղացը, Խոխանաբերդը, Կաչաղակաբերդը՝ Խաչենագետի հովտում, Գորոգը՝ Դիզակի գավառում։

Այս բերդամրոցների շարքում մի առանձնահատուկ դիրք ու հեղինակություն ուներ Խաչենը, որ նահանգի գահերեց իշխանների նստավայրն էր, ուստի եւ հիմնականում նրա անունով էին կոչվում ամբողջ նահանգն ու իշխանությունը։ Այս հանգամանքը գիտակցվում էր նաեւ օտարների կողմից։ X դարի Բյուզանդիայի կայսր Կոստանդին Ծիրանածինը, որ հեղինակ էր նաեւ պատմագրական երկի, գրել է, թե իր երկիրը փոխհարաբերություններ ունի Խաչենի իշխանության հետ եւ գրություն հղելիս այն հասցեագրում էր այսպես՝ *«Հայաստան-Խաչենի իշխանին»*[1]։

Այսպե՛ս, ուրեմն. Խաչեն բերդամրոցն էր նահանգի կենտրոնում։ Այնտեղ էր նստում մեծ իշխան Սահլ Սմբատյանը, որին պետք է հաջորդեր ավագ որդի Հովհաննեսը՝ պատմությանը հայտնի դեռեւս հոր կենդանության օրոք կատարած գործերով։

---

1 Կոստանդին Ծիրանածին, Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին, գիրք Բ., գլ. 48։

Այդ նա էր, որ 838 թ. արաբների ձեռքը հանձնեց հայր Սահլի կողմից գերված բռնավոր Բաբեկին, եւ այդքան ակնառու ծառայության համար արաբների կողմից արժանացավ մեծ տիտղոսի *(«Հայոց, Վրաց եւ Աղուանից եղեւ տէր»)* ու պարգեւների։

Ըստ երեւույթին Հովհաննեսն իշխանապետության գահի տեր էր դարձել դեռեւս հոր կենդանության օրոք, որովհետեւ Մեծառանից Սուրբ Հակոբա վանքում 853 թվականից պահպանված մի արձանագրության մեջ ինքն է հիշվում որպես Հայաղվանքի, այսինքն՝ Արցախ-Խաչենի իշխան[1]։

Ինչպես արդեն վերն ասվեց, Սահլն ու երկու ժառանգները՝ Հովհաննեսն ու Ատրներսեհը, հակաբարական մեծ ապստամբության մեղադրանքով, ուրիշ բազմաթիվ հայ իշխանների հետ միասին, ֆշվել էին տաժանակրության։ Ամսորից տուն դարձավ միայն Ատրներսեհը եւ շարունակեց իշխանավարությունը՝ հիմնական բնագավառ ունենալով նահանգի հյուսիսային ու արեւմտյան գավառները (նստավայրն էր Խաչեն բերդը)։ Ժամանակագրի վկայությամբ՝ նա է կառուցել Թարթառի հովտի ամենահզոր ամրոցներից մեկը՝ Հանդաբերդը, եւ իր ապարանքն էլ հաստատել Վայունիք ավանում, իսկ սա այն վայրն է, ուր Հայաղվանքի արքունական բաղանիքներն են (այժմյան Իսթիսուի ջերմուկները)։

Ատրներսեհին հաջորդել է ավագ որդի Գրիգորը, որի իշխանապետության հզորությունն ու առաջնակարգ դերը գովեստով են հիշում ժամանակակից հեղինակները։ Ժամանակագիրը հիշում է, որ նա կառուցել է Հավխաղացի բերդը եւ իշխանությունն այնքան տարածել, որ իր տիրապետության տակ է առել նաեւ Կուր գետի մյուս ափը[2]։ Այստեղ, իհարկե, խոսքը վերաբերում է անդրկուրյան հայկական Կամբեճան գավառին, որը հնագույն ժամանակներից հայաբնակ էր, մտնում էր Հայոց թագավորության կազմի մեջ, սակայն վաղ միջնադարում ձեռքից ձեռք էր անցել, եւ ահա՛, Գրիգորի իշխանության օրոք վերստին անցավ այս մեծ իշխանին, որին էլ հաջորդեցին նրա ժառանգները։

Արաբական աղբյուրներում Գրիգորը բազմիցս հիշատակվում է եւ միշտ էլ Համամ անունով, որը հունարեն «Գրիգորի» արաբերեն թարգմանությունն է (երկուսն էլ նշանակում են *«զգոն, արթուն»*)։

Գրիգոր-Համամի իշխանապետությունը համընկավ արաբական բռնատիրության վերացման շրջանին։ Ուստի եւ պատահական չեն այն մեծագործությունները ու իշխանության հզորացմանն ուղղված միջոցառումները, որ նրան են վերագրում աղբյուրներում։ Ժամանակագիրն ասում է՝ Համամ-Գրիգորը վերականգնեց Հայաղվանքի թագավորու-

---

1 Նրան վերաբերող այս արձանագրությունը գտնվել է մի խաչքարի վրա, որը մինչեւ այժմ հայտնի հնագույն գիր-թվական ունեցողն է հայկական հողի վրա։ Ահա այդ վիմագիրը. «ՅԲ (853) թուականութեանս հայոց, ի ժամանակս Յովանիսի Աղուանից իշխանի, ես՝ Սողոմոն Մեծարանց եպիսկոպոս, կանգնեցի զսուրբ խաչս» (Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Ե., 1982, էջ 12)։

2 «Պատմութիւն Աղուանից աշխարհի», գիրք Գ, գլ. Իգ։

թյունը, ինչպես Աշոտ Բագրատունին՝ Հայոց թագավորությունը[1]: Այս արաբների վերջին արշավանքի ժամանակն էր (893 թ.), երբ արաբ ասպատակիչները բռնել էին Հայոց կաթողիկոս Գեւորգ Բ Գառնեցուն, երկաթե կապանքներով հասցրել Պարտավ, Համամ Բարեպաշտ թագավորը վրա հասավ, ***«Հայոց մեծ հայրապետ Գեւորգին ազատել տվեց՝ բազմաբաշխ գանձեր վճարելով, ապա նրան շքեղ մեծարանքներով, ողջ-առողջ ուղարկեց Հայաստան»***[2]:

Գրիգոր-Համամ Ատրներսեհյանի (Ատրներսեհի որդու) կողմից կանգնեցված մի խաչքար կա Վարդենիսի շրջանի Մեծ Մազրա գյուղի գերեզմանոցում, որը եւ թվական ունեցող մեր հնագույն հուշարձաններից է: Ահա նրա արձանագրությունը. ***«31. (881) թուականութեանս հայոց ես՝ Գրիգոր Ատրներսէհյան, Սիւնեաց եւ Աղուանից իշխան, կանգնեցի զսուրբ նշանս աւգնական հաւատացելոց։ Որք երկրպագէք սուրբ խաչիս Քրիստոսի, զիս յաղաւթս յիշեսցիք»***[3]:

Արձանագրությունը հնարավորություն է տալիս մտածել, որ Գրիգոր-Համամի իշխանության արեւմտյան սահմանի մեջ էր մտնում Մեծ Մազրա ավանը, որ Սեւանի արեւելյան ափին է գտնվում: Ապա՝ հաստատվում է ժամանակագրի այն պնդումը, թե նրա իշխանությունը տարածվել էր նաեւ Կուրից հյուսիս, այսինքն՝ բուն Աղվանք, որի համար էլ նա կոչվում էր «Սիւնեաց եւ Աղուանից իշխան»:

Գրիգոր-Համամն ունեցել է հինգ արու զավակ, որոնցից ավագը՝ Ապուլի անունով, սպանվել է Սմբատ եղբոր կողմից: Այս եղերական փաստը ժամանակագիրն է հիշում: Սակայն պահպանվել է նաեւ մի խաչքար՝ կանգնեցված նույն դեպքի առթիվ: Այն գտնվել է Աղդամի շրջանի Սոֆուլու գյուղի մոտ, եւ արձանագրությունը, որքան էլ վնասված, կարեւոր մանրամասներ է հաղորդում հիշյալ դեպքի ու Համամի ժառանգների մասին՝ միաժամանակ դառնալով լրացուցիչ մի փաստ, որ Համամ-Գրիգորի իշխանությունը հյուսիս-արեւելքում տարածված է եղել մինչեւ Պարտավի մատույցները:

Համամ-Գրիգորի մյուս որդին, որ կոչվում էր Սահակ-Սեւադա, քաջ ու ձեռներեց մարդ էր, տիրացավ Արցախի Փառիսոս գավառին, ինչպես նաեւ հարեւան Ուտիքի Գարդմանքին ու Ջորագետին եւ այս ընդարձակ տարածքի սահմաններում զարկ տվեց հայրենի գրականության ու լուսավորության զարգացմանը (ժամանակագրի խոսքով՝ ***«եղեւ...խնդրող իսկ գրագիտութեան»***)[4]:

Իսկ որդիներից մյուսը՝ Ատրներսեհը, որ հոր իշխանապետության ծայր հյուսիսի տերն էր դարձել, Կամբեճան-Շահի՝ անդրկուրյան հայկական այս գավառի թագավորն է դարձել 910 թ.[5]: Ըստ երեւույթին այս բավական ազդեցիկ իշխանավորի գահակալությունը տեւել է մի քանի տասնյակ տարի. արաբ մատենագիր Մասուդին մո-

---

1 Տե՛ս նույն տեղում, գլ. ԻԲ:

2 Նույն տեղում:

3 «Դիվան հայ վիմագրության» IV, Ե., 1973, էջ 334:

4 «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գիրք Գ, գլ. ԻԳ:

5 Նույն տեղում:

տավորապես դարակեսին գրել է, թե երբ իր գիրքն է գրում, *«Շաքեցիների թագավորն է Ատրներսեհ իշն Համամը»*[1], այսինքն՝ Համամի որդի Ատրներսեհը: Իսկ մի քանի տարի անց, 858 թ., Արցախ էր եկել Ամենայն Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին եւ Գանձասարի մոտի Արդախ վայրում կարեւոր ժողով պիտի գումարեր, իր հիշատակարանում գրեց, թե *«Ուներ զաթոռ թագաւորութեան յայնժամ Իշխանակ՝ որդի տեառն Ատրներսեհի, թոռն երանելւոյն Համամայ Բարեպաշտի՝ թագաւորին Աղուանից»*[2]:

Անանիա Մոկացուն 958 թ. Գանձասարում դիմավորողն ու ժողովի եռանդուն կազմակերպիչ-մասնակիցն է եղել Խաչենի գահերեց իշխան Գրիգորը, որ համարվում էր որդի Սմբատի եւ թոռ Գրիգոր-Համամի:

Ժողովի մասնակիցների մեջ հիշվում է նաեւ գահերեց Գրիգորի որդի Սենեքերիմը, ինչպես նաեւ Գորոգի իշխան Վաչագանը, որ թոռն էր Եսայի Աբու-Մուսեի եւ որդին Մովսես իշխանի: Վերջինիս կապակցությամբ արժե կատարել հետեւյալ դիտողությունը. հայտնի է, որ Գորոգի տեր եւ արաբական բռնատիրության դեմ խիզախորեն մարտնչած Եսայի Աբու-Մուսեն ներկայացուցիչն էր Արցախի հինավուրց տեր Առանշահիկ տոհմի, որը Հայկի ժառանգից սերված Առան կուսակալի անվանից է առել իր կոչումը: Պատմությանը հայտնի են նաեւ նրա ժառանգները: Այսպես. հայտնի է, որ Եսայի մեծ իշխանի Արաբիա տաժանակրության ֆշվելուց հետո, ժառանգական իրավունքով, Գորոգի տեր է դարձել նրա որդի Մովսեսը[3]: Մովսեսի որդիներից հայտնի են երեքը՝ Գագիկը, Վաչագանը եւ Սոփին: Վաչագանին, ինչպես վերը տեսանք, ճանաչում էր Ամենայն Հայոց վեհապետ Անանիա Մոկացին դեռեւս 958-ին: Մոտավորապես նույն ժամանակում, արաբ հեղինակն էլ հիշում է՝ նրան կոչելով *«Գորոգի տեր Վաշաղիա իշն Մուսա»* (Մովսեսի որդի): Հավանաբար դարավերջին արդեն Վաչագանը վախճանված է եղել՝ չունենալով իշխանության ժառանգորդ-զավակ, եւ Գորոգում նը- րան հաջորդել է կրտսեր եղբայր Գագիկը: Դիզակի (այժմյան Հադրութի շրջանի) Տումի գյուղի կողմի հնավայրում, որ կոչվում է Թազավորանիստ, կիսավեր Կարմիր եղցու լուսամուտի կամարն ուներ արձանագիր քար. այժմ այն պահվում է Ստեփանա- կերտի երկրագիտական թանգարանում: Արձանագրությունն է. *«Ի ՆԽԹ (1000) թվին Հայոց, ի թագաւորութեանս տեառն Գագիկա՝ որդւոյ Մուսէի, ես՝ Սոփի, դուստր Մուսէի շինեցի տուն Աստուծոյ»*:

Սոփին՝ Գագիկ իշխանի քույրը, նրան պատվում է թագավորի տիտղոսով, որ շատ էլ վստահելի չէ, քանի մենք գիտենք, որ այդ ժամանակ Արցախի գահերեց իշխանները նստում էին Թարթառի հովտի բերդերում: Սակայն Գագիկի իշխանությունը, հավա-

---

1 СМОПК, вып. 38, стр. 57.

2 «Արարատ» հանդես, 1897, մարտ:

3 Արաբական սովորությամբ՝ Եսային այս Մովսես որդու անունով էր կոչվում Աբու-Մուսե՝ «հայր Մովսեսի», որպեսզի իմացվի, թե ո՞վ է իշխանության ժառանգորդը, եւ առհասարակ այրմարդն ինչ որդի է թողնում իրենից հետո:

նաբար, մի շատ ազդեցիկ երեւույթ էր հարավային Արցախում, քանի որ նրան վերաբերող մի այլ արձանագրություն՝ փորագրված Դիզակ գավառի հարեւանությամբ, Վարանդայի Վերին Թաղավարդ գյուղի Ջոխտ-Պառավածառ եկեղեցու մի խաչքարի վրա, նրան ճանաչում էր իբրեւ «Աղուանից իշխանաց իշխանի»։ Տվյալ դեպքում կարեւորն այն է, որ Դիզակում Եսայի Աբու-Մուսեից հետո էլ իշխանության տեր էին Առանշահիկները, որոնց տիրապետությունը, ինչպես հետո կտեսնենք, պիտի հասներ մելիքության շրջան։ Իսկ սա էլ աներկբայելի հիմք է՝ պնդելու համար, որ Դիզակի մելիքությունը հարազատ ժառանգն է Առանշահիկ նախարարական-իշխանական տոհմի։

* * *

Վերադառնալով **IX** դարի իրողություններին, ասենք, որ աղբյուրներով հաստատվում է Գրիգոր-Համամի մյուս երկու ժառանգների իշխանությունը բուն Խաչենում։ Սմբատը Գանձասարի ու շրջականների տերն էր, իսկ Վասակը՝ Վերին Խաչենի, որի մեջ էր մտնում Ծարն իր ջեմուկներով։ Անանիա Մոկացուն Գանձասարում դիմավորած Գրիգորը, որ Սմբատի որդին էր, ուներ մի Սենեքերիմ եղբայր՝ կոչված նաեւ Հովհաննես։ Այս Հովհաննես-Սենեքերիմը, Աղվանից պատմության տեղեկության համաձայն, Փառիսոսում ստեղծեց թագավորություն, որը ողջունեցին եւ թագով պսակեցին Պարսից արքան ու Հունաց մագիստրոս Դավիթը[1]։ Այս թագավորությունը գոյատեւեց մինչեւ **XI** դարի կեսերը եւ Փիլիպե զահակալի օրոք կործանվեց՝ Գանձակում բուն դրած Բուրդ Փաղլունյան ամիրայության հարվածներից։

* * *

IX-XI դարերի Արցախ-Խաչենի պատմական իրադարձություններին անդրադառնալիս չի կարելի անտեսել ամբողջ Հայաստանի քաղաքական կյանքում տեղի ունեցած մի խոշոր երեւույթ։ Հայտնի է, որ 885 թ. Աշոտ Ա Բագրատունու գլխավորած պայքարը երկրի անկախության համար պսակվել էր հաղթանակով, եւ Հայաստանի մեծագույն մասն ազատագրվել էր օտարների տիրապետությունից, ձեռք բերել անկախություն, միավորվել Բագրատունի Աշոտ Ա-ի ստեղծած թագավորության մեջ։ Ի՞նչ խոսք, որ Բագրատունյաց թագավորության առաջին շրջանում Արցախը մտնում էր նրա սահմանների մեջ, ենթարկվում էր նրա զահակալներին։ Սակայն, եթե այդ համահայկական թագավորությունը գոյատեւեց եւ ավել կամ պակաս հաջողությամբ երկիրը պահեց շուրջ դար ու կես, մինչեւ 1045 թվականը, ապա այս ժամանակի երկրորդ կեսը, ըստ էության, միայն անունով էր համահայկական-միասնական, իրականում երկիրը բաժան-բաժան էր արված ինչպես Բագրատունյաց տոհմի առանձին

1 «Պատմութիւն Աղուանից աշխարհի», գիրք Գ, գլ. ԻԳ։

ճյուղերի, այնպես էլ իշխանական ուրիշ տոհմերի միջև, և ժողովուրդը քրքրվում էր կենտրոնախույս ուժերի անհեռատես քաղաքականության պատճառով։

Արաբական տիրապետության տեւական մղձավանջից հետո Բագրատունյաց թագավորության շրջանը քաղաքական ու մշակութային վերելքի լայն հեռանկարներ կարող էր բացել հայ ժողովրդի համար։ Սակայն Արցախի (կամ այդ ժամանակներում տարածված անունով՝ Խաչենի) եւ հարեւան հայկական շրջանների համար այդ հեռանկարները մեծ մասամբ միայն հեռանկարներ էլ մնացին, որովհետեւ Աշոտ Բագրատունու հաջորդներին չհաջողվեց ստեղծված թագավորությունն օրըստօրե հզորացնել ու դարձնել օտարների ոտնձգությունների եւ գալիք արհավիրքների դեմ անսասան մի պատվար։ Ապա՝ հիշյալ շրջանները Հայաստանի հյուսիս-արեւելյան սահմանապահները լինելով, միշտ էլ ենթակա էին Ատրպատականի, Գանձակի ու մյուս մահմեդական կազմավորումների պարբերական հարվածներին։ Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ Բագրատունյաց՝ արդեն տրոհվող պետության պայմաններում, ավատական կենտրոնախույս տրամադրությունների շնորհիվ, Խաչենը եւս թողնվել էր իր բախտին, եւ նույնիսկ այս փոքրիկ իշխանությունն ինքը ցույց էր տալիս ավելի մանրանալու միտումներ։ Այս ամենի հետեւանքը եղավ ինչպես Խաչենի բաժանումը երեք մասի՝ Վերին Խաչեն կամ Ծար, Միջնարցախ եւ Ներքին Խաչեն, այնպես էլ Ներքին Խաչենի իշխանության հիմքի վրա ստեղծված Քառիսոսի թագավորությունը։

ՔԱՌԻՍՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի ծայր հյուսիսային գավառը, որ հայկական աղբյուրներում Քառիսոս էր կոչվում, պարսկերեն՝ Քուստ-ի Քառնես («քուստ»-«քուստակ» հին պարսկերեն նշանակել է «գավառ»), տարածված էր Շամքոր գետակի վերին ավազանում, Արցախ-Ղարաբաղյան լեռնաշղթայի լանջերով դեպի հյուսիս ու արեւմուտք, մինչեւ Շամքոր։ Այս տարածքն էր, որ հիմք դարձավ Համամ-Գրիգորի թոռնորդի Հովհաննես-Սենեքերիմի ստեղծած թագավորության համար։ Սակայն հենց առաջին գահակալն էր, որ իր տիրապետության տակ առավ Գարդմանքը, Զորագետը եւ Ուտիքի ուրիշ հողեր, ստեղծեց ժամանակի համար բավական նշանակալից մի պետական կազմավորում, որն անհանգստություն էր պատճառում ոչ միայն Գանձակի մահմեդական ամիրայությանը, այլեւ հայրենի Բագրատունյաց թագավորներին։

Բագրատունիք փորձեցին սերտ բարեկամական կապերով իրենց մերձեցնել Քառիսոսը. Սենեքերիմի քրոջը հարս տարան Կարսի Մուշեղ Բագրատունի թագավորի համար, որը գահակալել է 962-984 թթ.։ Սակայն, հավանաբար, այս բարեկամությունն էլ հուսալի հիմք չէր Քառիսոսի հավակնությունները զսպելու համար եւ Սենեքերիմի թոռ ու Գրիգորի որդի Փիլիպեի գահակալության ժամանակ, 1048-1072 թվականների արանքում, Բագրատունիների ու Գանձակի Քաղլուն ամիրայի միջեւ բաժանվեց Քառիսոսի տարածքը, երբ Քաղլունը նենգորեն կալանավորել էր նրա տիրոջը, եւ ըստ երեւույթին, նաեւ սպանել։

Ուրեմն, Փառիսոսի թագավորությունը, գոյատեւելով շուրջ մեկ դար, խորտակվեց 1048 եւ 1072 թվականների միջեւ։

Փադլունյան տոհմի Գանձակի ճյուղն առաջին մահմեդական վարչական ինքնուրույն միավորն էր, որ, հաստատվելով Ուտիքի կենտրոնում, սեպի պես խրվեց Հայոց արեւելից կողմանց միասնության մեջ եւ դարձավ տեղական հինավուրց իշխանությունների ախոյանն ու նրանց մի մասի ոչնչացման պատճառը։

Փադլունյան տոհմի, ինչպես եւ նրանից հետո եկած մահմեդական մյուս տիրակալների առաջին խնդիրն էր Գանձակն ու շրջակայքը վերջնականապես խլել բնիկ տերերից, որոնք Առանշահիկ հարստության ներկայացուցիչներն էին։ Եվ եթե առաջին շրջանում Առանշահիկներն այստեղ հպատակություն էին հայտնել՝ իրենց վրա առնելով եկվոր բռնակալների իշխանությունը, ապա վերջիններս, հիմնավորվելով Գանձակում, հետագայում նրանց չէին հանդուրժում նույնիսկ որպես իրենց ենթակա իշխանավորների։ Եվ Առանշահիկներն ստիպված էին լինում հեռանալ իրենց տիրույթներից, ապավինել Արցախին ու Սյունիքին, Ուտիքի լեռնային գավառներին ու Հայաստանի մյուս ապահով նահանգներին։ Նրանցից շատերը, իրենց գույքն ու գերդաստանն առած, բախտ էին որոնում օտար ափերում։

Ենթադրվում է, եւ բավական հիմնավոր կերպով, որ Փառիսոսից է Կիլիկիա գնացել Առանշահիկ տոհմի ներկայացուցիչ այն Օշինը, որը դարձավ այդ երկրի հայկական թագավորության հիմնադիրներից մեկը (Օշինի ժառանգներից էր Հեթում Ա-ը, որի անունից էլ թագավորական տոհմը կոչվեց Հեթումյան)։

Փառիսոսը լուսավոր հետք է թողել նաեւ Արցախական աշխարհի մշակութային կյանքի, հատկապես լուսավորության բնագավառում։

Առհասարակ Գրիգոր-Համամի անմիջական ժառանգորդների ու հետագա սերունդների հոգեւոր ու մշակութային եռանդուն գործունեությունը միշտ էլ առաջնակարգ տեղ է գրավել երկրամասի հայության կյանքում։ Եթե հայոց եկեղեցուն մատուցած անմրնացորդ նվիրվածության համար Համամին, ինչպես եւ նրա մեծ նախորդ Վաչագանին, կոչում էին Բարեպաշտ, եւ դա նրանց անվան անբաժան մասն էր, ապա նույն անունը կարելի էր շնորհել նաեւ մյուսներին։ Սահակ-Սեւադան, օրինակ, որ իր առաջին պարտականությունն էր դարձրել եկեղեցու առատաբաշխ հովանավորությունը, իշխանության անցնելուն պես, ժամանակագրի վկայությամբ, ***«դպրապետս ի տան իւրում կարգեաց»***։

Այս ոգով էին դաստիարակվում Արցախի թագավորազուններն ու իշխանազունները։ Այդ թվում՝ նաեւ դուստրերը։ Ստեփաննոս Օրբելյանը մի հախուռն խանդավառությամբ է պատմում մշակութային ու հոգեւոր կյանքում խաղացած այն անմրցակից դերը, որ Սահակ-Սեւադայի դուստր Շահանդուխտն էր իրականացնում Սյունիքում, ուր հարս էր գնացել եւ Սմբատ արքայի կինն էր, նույնիսկ գահակալ դարձավ ամուսնու վաղաժամ մահից հետո։ Նա է կառուցել հռչակավոր Որոտնավանքը, մեծամեծ նվերներով շենացրել ուրիշ եկեղեցիներ, հովանավորել նրանցում գործող դպրոցները։

Արցախի իշխանության ժառանգներից մեկն էլ՝ Աշոտ Սեւադայի որդին, թագավոր

գնաց Սյունիք, գահակալեց Բաղաց-Կապանում եւ դարձյալ իրեն փառավորեց քաղաքական ու մշակութային մեծագործություններով։ Հայտնի է, օրինակ, որ նա, դիվանագիտական շրջահայաց քաղաքականությամբ սելջուկ տիրակալ Մելիքշահին (գահակալել է 1055-1092 թթ.) դարձրել էր բավական բարյացակամ ինչպես Սյունիքի, այնպես էլ Արցախի իշխանությունների նկատմամբ։

Ժամանակի հեղինակներն ու հիշատակագիրը մեծ գովեստով են հիշում թագավորական տան շուրջ ստեղծված մտավոր ու գրական միջավայրի մասին։ Այստեղ է ծընվել ժամանակի մեր ամենաերեւելի մտավորականը՝ իմաստասեր կոչված Հովհաննես Սարկավագը (ծնվ. 1045թ., մահ. 1129-ին), որը, հենց փառիսոսյան միջավայրում հասակ առնելով, դարձավ համահայկական մեծություն, գործեց Անիում, ստեղծեց այնտեղի բարձրագույն դպրոցը, ապա Հաղբատը դարձրեց լուսավորության ու գիտության հռչակավոր կենտրոն։ Հայտնի են նրա բազմաթիվ գրական ու մատենագրական երկերը, փիլիսոփայական, բնագիտական, աստվածաբանական, տոմարագիտական (նա է ստեղծել Հայկական Փոքր տոմարը) աշխատությունները, նույնիսկ երաժշտական ստեղծագործությունները։ Նրա գիտական ու մշակութային անպարագիծ վաստակը գնահատելով ըստ արժանվույն՝ երկու դար հետո մեր մյուս մեծ մտավորականը պիտի գրեր. ***«Յովհաննես, որ եւ Սարկավագ, ի գաւառէն Փառիսոսոյ, ի քահանայական ազգէ, որոյ յիշատակք ճառագայթիցն փայլեն մինչեւ ցարդ ի բանս իւր»***[1]։

ԽԱՉԵՆԸ ԵՎ ՍԵԼՋՈՒԿ-ԹՈՒՐՔԵՐԸ

XI դ. առաջին կեսին թուրք-սելջուկյան հրոսակախմբերը պարբերաբար ասպատակում էին Հայաստանն ու Այսրկովկասը։ Այդ ժամանակ Հայաստանում Բյուզանդիայի խարդավանքների հետեւանքով բայբայված էր Բագրատունյաց թագավորությունը, եւ նրա փոխարեն այս ու այնտեղ նշանակված բյուզանդական կուսակալներն ի վիճակի չէին սելջուկյան հեղեղի առաջն առնել։ Ուրիշ խոսքով՝ Բյուզանդիան խարխլել էր այն հուսալի պատվարը, որը կարող էր խափանել արեւելքից եկող բռնագրավիչների հաղթարշավը դեպի կայսրություն։ Այս պատճառով էլ սելջուկ-թուրքերը, առանց նըկատելի դժվարության, մեկը մյուսի հետեւից նվաճում էին քաղաքներն ու մարզերը, կողոպտում, բնակչությանը կոտորում կամ գերեվարում։

XI դ. երկրորդ կեսին Հայաստանը սելջուկյան անհուն ու անեզերք թագավորության տիրապետության տակ էր։ Անցել էին առաջին ասպատակություններն ու կողոպուտը, կոտորածներն ու գերեվարությունները, եւ հաստատուն տիրապետություն ստեղծած բռնակալներն արդեն գիտակցում էին, որ հպատակ երկրները բարուքանդ անելով, բը-

---

1 Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862 (այսուհետ՝ «Վարդան»), էջ 121։

նակիչներին ոչնչացնելով՝ իրենք իրենց զրկում են նոր եկամուտների ու հարստության աղբյուրներից։ Սկսեցին պետական կարգուկանոն ստեղծել նվաճած երկրներում, նրանց հնարավորություն տալ վերականգնելու բայբայված տնտեսությունը, վերականգնելու եւ շենացնելու մեծ ու փոքր բնակավայրերը։

Այս նոր բաղմականությունն իր դրսեւորումն ստացավ Ալփ-Արսլանի որդի ու հաջորդ Մելիքշահի (1072-1092) օրոք։ Մելիքշահի պետության ստեղծած ներքին կարգն իր արտացոլումն է գտել «Սիասեթ-նամե» (Կառավարման ձեռնարկ») նշանավոր երկում, որի հեղինակն էր շահի մեծ վեզիր Հասան իբն-Ալին՝ մականվանված Նիզամ ալ-Մուլք («Պետության կարգավորող»)։ Այս բաղմագետի գրավոր ու բանավոր խորհուրդներով եւ նշանակած պաշտոնյաներով էր կառավարվում հսկայածավալ տերությունը։ Հպատակ ժողովուրդները, նախորդ շրջանի անկարգություններից ու անօրինություններից զզված, հիմա համեմատաբար գոհ էին նոր տիրապետողի ստեղծած կարգ ու կանոնից։ Գոհ էին հատկապես հոգեւոր դասի ներկայացուցիչները, որովհետեւ Մելիքշահը շատ վայրերում եկեղեցին ազատել էր տուրքերից, հատուկ հրովարտակներով նրան շնորհել բավական արտոնյալ վիճակ, որ չէր եղել վաղուց ի վեր։

Հայտնի է Մելիքշահի բարյացակամ վերաբերմունքն Արեւելյան Հայաստանի բնիկ իշխանությունների եւ առանձնապես Բաղաց թագավոր Սենեքերիմի ու նրա տոհմակիցների՝ Խաչենի իշխանների նկատմամբ։ Այս կապերի շնորհիվ որոշ նպաստավոր կարգ ստեղծվեց Հայաստանի հյուսիս-արեւելյան նահանգներում, որոնք այլեւս ապահովված էին Գանձակի՝ ծագումով բրդական ամիրայության սադրանքներից։

Սակայն Մելիքշահի մահվանից (1092) հետո սելջուկյան կենտրոնական պետությունն սկսեց բայբայվել։ Ծայր առան գահակալական ներքին կռիվներ։ Սուլթանության նախկին կուսակալներն այժմ ազատ էին իրենց կամայականությունների մեջ եւ սաստկացնում էին բռնությունները հպատակների վրա։ Իսկ որ ամենասոսկալին էր, նրանք բնակություն էին հաստատում հպատակ նահանգներում ու գավառներում, տեղական հայ իշխանավորներին դուրս մղում իրենց հնամենի օրրաններից, դառնում միահեծան տեր ու տնօրեն։ Այսքանին էլ հետեւում էր այդ նոր տերերի ցեղակից ու ոչ ցեղակից խաժամուժի ներհոսքը, եւ այսպես նաեւ երկրամասի ազգագրական դեմքն էր փոխվում։

Սելջուկյան կենտրոնական պետության խարխլման հետեւանքով ստեղծված վիճակում անասելի ծանրացել էին հարկերը։ Հայտնի է, որ այս ժամանակ նախկին հարկերին գումարվել էին տեղերում ինքնագլուխ դարձած իշխանավորների կամայականությունները, նրանց պարբերական ասպատակություններն ու չարագործությունները։ Այս ամենին ենթակա էին հատկապես Հայաստանի հյուսիս-արեւելյան նահանգները, որոնք, արդեն նախորդ դարերում մղած անընդմեջ պայքարի պայմաններում կրած զրկանքներից, օտարների նորանոր ասպատակություններից հյուծված ու արնաքամ, անկարող էին դիմագրավել եւ վանել սանձարձակ դարձած բռնակալներին։

Ծանր էր հատկապես Արցախ-Խաչենի դրությունը։ Այս երկրամասին հասած անընախադեպ չարիքներին գումարվեց 1139 թ. ահավոր երկրաշարժը, որը Մխիթար Գո-

շի կողմից ավանդվել է սրտաճմլիկ նկարագրությամբ։ Պատմիչի հաղորդած տեղեկություններն այնքան սպառիչ են, որ կարելի է լրիվ պատկերացնել, թե ինչպես տակնուվրա է եղել Հայաղվանքը։ ***«Երկրաշարժից բազում ավերածություններ էին եղել Փառիսոսի ու Խաչենի բազմաթիվ վայրերում, դաշտերում ու լեռներում»***,-գրել է Մխիթար վարդապետը։-***Ընդ որում Գանձակ մայրաքաղաքն առհասարակ անդունդի մեջ է խորտակվել՝ խորասույզ անելով իր բնակիչներին, քանի որ չորս կողմերի ամեն ինչն առել էր իր ծոցը։ Եվ լեռնային մասերում շատ գղյակներ ու գյուղեր տապալվեցին՝ վանքերի ու եկեղեցիների հետ միասին, որոնք էլ փլվել էին իրենց բնակիչների գլխներին...»***[1]։

Պատմիչի վկայությամբ՝ այսմանը տեղի է ունեցել ՇՁԸ (1139) թվականի Արեգ (հայկական տոմարի 8-րդ ամիսը՝ սեպտեմբերի 13-ից հոկտեմբերի 12-ը) ամսի 18-ին, ***«ի գիշերի ուրբաթն ի բուանակ շաբաթն»***, այսինքն սեպտեմբերի 30-ին։

Այս երկրաշարժի ահագնությունը լրիվ պատկերացնելու համար հիշենք նաեւ Կիրակոսի մի արժեքավոր տեղեկությունը. ***«Երկրաշարժից փլվեց նաեւ Ահարակ լեռը եւ փակեց իր միջով անցնող ձորակը, եւ գոյացավ ծովակ, որ կա մինչեւ այսօր»***[2]։ Խոսքն այժմյան Գյոյ-գյոլ (Կապույտ լիճ) լճակի մասին է, որի շրջակայքը՝ Գետաշեն նշանավոր ավանով, այն դարերում Խաչենի իշխանության մեջ էր մտնում։ Ժողովուրդը դեռ ուշի չէր եկել բնական արհավիրքի հասցրած այս կործանարար հարվածից, հազիվ վերականգնվում էին ավերված գյուղերն ու քաղաքները, վանքերն ու բերդերը, երբ Գանձակի շահապ (քաղաքագլուխ) կարգված Խուտտուղտին ապստամբեց իր սուլթանի դեմ եւ մեծաքանակ զորք առած շարժվեց շրջակա գավառների վրա՝ նպատակ ունենալով ընդարձակել իր տիրապետության սահմանները եւ հիմք դնել մի նոր անկախ ամիրության։

Խուտտուղտիի արշավանքն սկզբից իսկ Խաչենի դեմ էր. հասնելով Թարթառի հովտի Կաթողիկոսի քար ու Կարապետանց քար բերդերին՝ պաշարեց դրանք, հետագայում քանդեց ու հրկիզեց՝ ավերելով նաեւ շրջակաների սրբարանները։ Սա էլ տեղի է ունեցել 1142 թվականին։

Խուտտուղտիի ապստամբությունը ճնշելու համար Պարսկաստանից եկավ Զոլի (Զալի) զորապետը։ Նա պաշարեց Գանձակը, մի ամիս հետո նվաճեց այն եւ գերի վերցրած ապստամբի աչքերը հանեց։ Նույն 1143 թվականին Զոլին իր զորքով շարժվեց դեպի Խաչեն եւ, Գոշի ասելով, ***«նվաճեց նրանց բոլոր ամրոցները, քանդեց եկեղեցիները եւ այրեց վանքերը, կոտորեց ազատներին, գերեց զորականներին, առհասարակ ամենուրեք բոլորին սրով մաշեց, վարեց գերության»***[3]։

Սամուել Անեցին եւս պատմում է այս դեպքը՝ տեղեկացնելով, որ Զոլին խաբեու-

---

1 Մխիթար Գոշ, ժամ Գանձակայ. Ալիշան, Հայապատում, էջ 361։

2 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1961 (այսուհետ՝ «Կիրակոս»), էջ 117։

3 Ալիշան, Հայապատում, էջ 386։

թյամբ իր մոտ էր հրավիրել Խաչենի իշխաններին (ազատներին), կալանավորել նրանց։ Այսքանից հետո էր, որ անպաշտպան երկիրը *«մաշեաց...սովով եւ սրով եւ գերութեամբ, ընդ որս քահանայք եւ սուրբ կտակարանք եւ կրոնաւորք առ ոտս ընկան անօրինաց»*[1]։

Զոլին այս ավերածությունից հետո վերադարձավ Պարսկաստան։ Երկու տարի անց (1145-1146) կրկին եկավ Խաչենի վրա, ասպատակեց *«ի կողմ Խաչենոյ, Տանձեաց եւ Աղախայ»*, որովհետեւ երկրի մնացած իշխանները, որոնք առաջ պատրաստվել էին անտառախիտ խորածորերում, վերստին տեր էին դարձել իրենց բերդամրոցներին, ապստամբություն բարձրացրել մահմեդականների դեմ։

Խաչենցիների անհնազանդությունից զազազած Զոլին, որը չկարողացավ նվաճել ամրոցները, ավերեց անպաշտպան բնակավայրերը, հրի մատնեց վանքերն ու եկեղեցիները։ *«Այրեաց եւ զառաքելաշէն ուխտ սրբութեան, որ կոչուի Դադուի վանք»*,- դառնությամբ վկայում է Գոշը։

Սրանից հետո Զոլին Առանը թողեց, գնաց Պարսկաստան, *«ապա չարաչար մահուամբ սատակի մերձ ի քաղաքն Զանգան* (Ատրպատականում.- Բ. ՈՒ.), *ի ՇՂԵ (1146) թուականին Հայոց»*։

Գոշը պատմում է նաեւ Զոլիից հետո եկած նոր զորապետների մասին (Փախրադին, Ըրդիշ եւ այլք), որոնցից յուրաքանչյուրը մի տարի էլ չկարողացավ տեր մնալ Գանձակի ամիրայի աթոռին, որովհետեւ շրջակայքի հայ ազատներն ու բնակչությունը այլեւս չէին հանդուրժում նրանց, մանավանդ, որ հիմա առանցիներին հանախ էր օգնության գալիս Վրաց թագավորն իր զորքերով։

Այսօրինակ ճակատամարտերի մանրամասները դժբախտաբար չեն ավանդվել մեր ժամանակագիրների կամ հիշատակագիրների կողմից։ Նրանց մասին քիչ բան կարելի է իմանալ նաեւ ուրիշ աղբյուրներից։ Սակայն վիմագրական նյութերի կցկտուր տեղեկություններից կարելի է մոտավոր գաղափար կազմել այն պարբերական ճակատամարտերի մասին, որ Հայաստանի հյուսիս-արեւելյան նահանգների եւ հատկապես Արցախի ու Սյունիքի իշխանություններն էին մղում մահմեդական բռնակալների եւ նրանց հովանավոր Ատրպատականի ամիրայության դեմ՝ ազատագրելով իրենց տիրույթները։ Նախորդ դարին վերաբերող համանման տեղեկություններ կան Խաչենից Բաղաց Կապան թագավոր գնացած Սենեքերիմի 1085 թ. եւ հատկապես Գրիգորիկի որդի Հասանի 1086-ին թողած ընծայագրերի մեջ։

XII դ. կեսերի ազատագրական ճակատամարտերի մասին եւս կոնկրետ վկայություններ են մնացել Խաչենի վիմագրերում։ Հաթերքի տեր եւ Խաչենի իշխանաց իշխան Հասանը 1182-ին գրած արձանագրությամբ հայտնում էր, որ Խ (40) տարի, այսինքն՝ 1142-1182 թթ., լինելով Խաչենի իշխանաց իշխանը, մղել է շատ պատերազմներ եւ հաղթել իր բոլոր թշնամիներին։ Սրանք այն պատերազմներն էին, որ

1 Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 132։

խաչենեցիները վարում էին իրենց անմիջական հարեւան Գանձակի ամիրության ոտընձգությունների դեմ։

Այս տասնամյակների Խաչենի վերաբերյալ Մխիթար Գոշի ժամանակագրության մեջ կան բազմաթիվ մանրամասներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես բռնակալների բերած անմարդկային փոխհարաբերությունները թափանցել էին Խաչեն, այլասերել բնակչության վարք ու բարքը։ Սելջուկ իշխողներից ոմանք բռնությամբ ամուսնանում էին տեղացի ազատների դուստրերի հետ, օժիտ ստանում տեղացի իշխանի հողն ու *«հայրենիքը»*, եւ սկսվում էր անհավասարության ու կամայականությունների տիրապետությունը։ Սակայն կարեւոր էր, որ իրենք՝ սելջուկ մանր իշխանություններն էլ այնքան շատացել ու հավակնոտ էին դարձել, որ գերիշխանության հասնելու համար անվերջ զզվոտումի մեջ էին իրար հետ։

XII դ. երկրորդ կեսին մանրացել ու համեմատաբար նվազել էր Խաչենի իշխանությունը։ Այս շրջանում այն վերջնականապես բաժանված էր երեք ճյուղերի, որոնցից մեկի իշխանանիստն էր Խոխանաբերդը՝ Գանձասարի վանքի մոտ, մյուսինը՝ Հաթերք ամրոցը Թարթառի ձախ ափին, գետի միջին հոսանքում, երրորդինը՝ Հանդաբերդը Ծար գավառում։ Այս երեք ճյուղերի հարեւանությամբ, հին Արցախի լեռնային ու նախալեռնային մասերում գոյություն ունեին նաեւ ավելի մանր իշխանություններ, որոնց տերերը նույն Առանշահիկ տոհմի ժառանգներն էին, ինչպես Խաղբակյանք, Դեսումյանք, Դլենյանք եւ Գեռաբեցիք։ Սրանք ունեին տիրույթներ, կոչվում էին իշխաններ, սակայն հին օրերի անխախտ օրենքներով՝ չէին օգտվում իշխանապետի ինքնավարությամբ, որովհետեւ կային նախկին զահերեց Առանշահիկներից սերվածները, եւ սրանք էին իշխանապետության օրինական ժառանգները։

ԶԱՔԱՐՅԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՀՐԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԸ

XII դ. կեսին Հայաստանի եւ Այսրկովկասի կյանքում տեղի ունեցան քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային աննախադեպ ցնցումներ, որոնք պայմանավորված էին, մի կողմից, սելջուկ-թուրքերի կենտրոնական իշխանության խարխլումով, մյուս կողմից, որ շատ կարեւոր է, վրաց-հայկական ռազմաքաղաքական դաշնության ստեղծումով։

XII դ. կեսից սկսած ամբողջ Խաչենն ընդգրկված էր հակասելջուկյան ազատամարտերի ոլորտում, իսկ դարի վերջին քառորդում երկրամասի իշխանական տներն արդեն իրենց գործուն դերն ունեին Զաքարյան իշխանապետների ռազմաքաղաքական միջոցառումներում։

Բանն այն է, որ Զաքարյանները Հայաստանն ազատագրելու եւ մեկ միասնական ամբողջության մեջ առնելու իրենց գործունեությունը չէին կարող պսակել հաջողությամբ, առանց համախմբելու երկրի շատ թե քիչ ազդեցիկ իշխանական տներին, որոնք Բագրատունյաց ժամանակներից հետո տարանջատված էին իրարից եւ ոչ մի հակում

չէին ցուցաբերում մեկ ընդհանուր քաղաքական դրոշի տակ կանգնելու համար: Եվ պատահական չէ, որ Սարգիս Զաքարյանը միարարի իր առաքելությունն սկսեց փորձված հին միջոցով՝ խնամիական կապերի ստեղծումով: Նա իր չորս աղջիկներին կնության տվեց հյուսիս-արեւելյան Հայաստանի ամենաազդեցիկ իշխանական տների պայազատներին: Անկասկած է, որ այս կապերն ավելի պիտի դյուրացնեին Զաքարյանների գործը, որ էր՝ Վրաց թագավորության հովանավոր աջակցությամբ վերջնականապես ազատագրել Հայաստանը եւ այն դնել ինքնուրույն պետական կյանքի հունի մեջ:

Վրաստանը նախորդ շրջաններում քիչ էր ենթարկվել օտար բռնակալների հարվածներին ու ավերածություններին: Այդ պատճառով էլ Վրաստանում առավել բուռն պոռթկում ունեցավ ազատագրության ոգին, հենց որ սելջուկյան պետությունն սկսեց ներսից քայքայվել, եւ ստեղծվեց նվազագույն հնարավորություն այդ ահարկու տիրապետությունը թոթափելու համար: Վրաց թագավորությունը, որի զորքերի հետ կռվում էին հայ զորամասեր, կարողացավ ոչ միայն իր երկիրն ազատագրել անկոչ հյուրերից, այլեւ նրանց դեմ մղած հերոսական ճակատամարտերում փրկեց սահմանակից հայկական նահանգները՝ Անի մայրաքաղաքով: Առաջին հաջողությունները ոգեւորեցին հայ իշխանապետներին, եւ նրանք վրաց-հայկական միասնության մեջ տեսան նաեւ Հայաստանի ազատագրության հնարավորությունը: Եթե թուցիկ մի հայացք ձգենք նախորդ դարերի իրականության վրա, կտեսնենք հետաքրքիր մի երեւույթ. այն դերը, որ XII դարի վերջին Վրաց թագավորությունն էր խաղում հայերի եւ Հայաստանի համար, ուղիղ երեք դար առաջ էլ պատկանում էր Հայոց թագավորությանը՝ հանձին Բագրատունյաց հարստության: IX դարում հայ Բագրատունիները, վերականգնելով հայկական միասնական պետությունը, օգնության ձեռք մեկնեցին հարեւան ժողովուրդներին եւ Վրաստանին՝ փորձելով ստեղծել մի դաշնություն, որը վեր է ազգային սահմանափակություններից եւ միակ հուսալի պատնեշը կարող է դառնալ դրսեկ բոլոր բռնակալների դեմ: Հայ Բագրատունյաց մի ճյուղը, որ իշխանական նոր հարստության էր վերաճել Սպերում, Տայքում ու Կղարջքում, ընդունեց քաղկեդոնական դավանանքը եւ ***«շուտով դարձավ վրացական ազգային հարստություն»*** (Ն. Ադոնց): Այս նորաստեղծ հարստությունն էր, որ գլխավորելու էր Վրաստանի վերելքը X դարում եւ նրան հաջորդող ժամանակներում:

Ցավոք, Բագրատունյաց նկրտումները մնացին կիսավարտ, որովհետեւ նրանց ճանապարհն անցնում էր այնպիսի խրամատների վրայից, ինչպես կրոնական, ազգային, ավատատիրական չմիավորվող ձգտումները եւ հատկապես հարեւան բյուզանդական խարդախ քաղաքականությունն ու սպասվող թուրք-սելջուկյան արհավիրքը: Եվ, ահա՛, Բագրատունյաց փորձից շուրջ երեք դար հետո բախտը վերստին առիթ էր ընձեռել հարեւան ժողովուրդների կամքն ու զինական ուժերը միավորելու՝ ընդդեմ օտար բռնակալների: Այս անգամ արդեն որպես միարար ուժի կենտրոն հանդես էր գալիս Վրաց Բագրատունիների թագավորությունը: Հարկավ կրավորական դերում չէին եւ հայերը: Եթե նկատի էլ չառնենք Վրաց թագավորին ենթակա զորքերի մեջ հայ զինվորության օրըստօրե ստվարանալը, ապա բավական է թեկուզ եւ վրաց-հայկական դաշնության ստեղծման ու ամրապնդման գործում տեսնել այն խոշոր դերը, որ պատկա-

նում էր երկու եղբայրակից ժողովուրդների զինական ուժերի գերագույն հրամանատարին ու նրա ազգակից զորապետներին։ Սկսած XII դարի վերջին քառորդից միացյալ զորքերի գերագույն հրամանատարի պաշտոնն զբաղեցնում էր հայազգի Զաքարյան իշխանական տան ներկայացուցիչը։ Իսկ եթե դրան էլ գումարենք արքունի գործերի կառավարչին (աթաբեկ) եւ այլ բարձրապաշտոն անձանց՝ արքունիքում ու զինական գործերում, որոնցից առաջինը դաձյալ լինում էր Զաքարյաններից, իսկ մյուսները՝ հայ իշխանական այլեւայլ տոհմերից, ապա դժվար չի լինի պատկերացնել, թե ինչ կարեւոր դեր ունեին հայերը ստեղծված դաշնության մեջ։

Պետք է հիշել, որ Վրաց թագավորությունում քաղաքական ու ռազմական պաշտոններ զբաղեցնող հայերը ներկայացնում էին Հայաստանի այս կամ այն նահանգի իշխանությունը եւ նախապես ունեցել էին իրենց զորքը, որով եւ մտել էին եղբայր ժողովուրդների զինակցության մեջ։ Օրինակ, Զաքարյան Սարգիսը՝ վրաց-հայկական զինակցության գերագույն հրամանատար լինելուց շատ տարիներ առաջ կոչվել էր Հայոց զորքերի սպարապետ։ Եվ նույն այս Սարգիսն իր զորքով ոչ միայն մասնակցեց ազատագրական մարտերին, այլեւ խոշոր դեր խաղաց Վրաց թագավորության ամրապնդման գործում, պայքարեց եւ ճնշեց վրաց կենտրոնախույս ուժերին, որոնք ապստամբել էին իրենց թագավորի դեմ։

Վրաց-հայկական միասնական զինական ուժերի գերագույն հրամանատար Զաքարեն մահացավ 1212 թ.։ Այնուհետեւ Հայոց երկրի շահերը ներկայացնող նրա հաջորդի՝ Իվանեի մասին վրաց անանուն ժամանակագիրը գրել է, թե ***«սա բոլոր իշխաններից (էրիսթավներից) առավել գերազանց էր»***։ Իվանեի ու նրա ազգակից զորավար-իշխանների դերը բարձր էին գնահատում ինչպես նրանց ժամանակակից աղբյուրները, այնպես էլ հետագայի հետազոտողները։

Վրաց թագավորների գերազահությունը եւ Հայաստանի նկատմամբ ունեցած նրանց բարյացակամությունը հայ զորապետների ու զինվորության կողմից վարձատրվում էր անմնացորդ։ Հնարավոր է, որ Վրաց Բագրատունիների տոհմական հիշողության մեջ դեռեւս վառ էր մնում իրենց ծագումնաբանությունը, եւ նրանք իրենց չէին անջրպետում Հայաստան երկրից, որի՝ արդեն կորսված թագավորական հարստությանը կապված էին արյամբ, իսկ նրանց հողին ու հայրենիքին՝ նակատագրով։

Եվ միանգամայն հասկանալի է, թե ինչու հայ-վրացական ուժերն այնպես համերաշխ էին ու համակամ՝ Վրաստանն ու Հայաստանը սելջուկ-թուրքերից ազատագրելու, եղբայր ժողովուրդների պետական հզորությունը վերականգնելու գործում։

Զաքարյան իշխանապետների ազատագրական նակատամարտերի արդյունքն իրենց հայրենիքի համար այն եղավ, որ սելջուկյան բռնակալներից վերջնականապես ազատագրվեցին հյուսիսային եւ հյուսիս-արեւելյան, ինչպես նաեւ կենտրոնական Հայաստանի բոլոր նահանգները։ Մեզ հետաքրքրող տարածքի համար բնորոշն այն է, որ վերջնականապես ազատագրել էին հին Ուտիքի ու Արցախի բոլոր գավառները։ Այս կողմից Հայաստանի սահմանները հասել էին Ատրպատականի հյուսիսային եզրերին, եւ ազատագրված նահանգների ու գավառների լիիրավ տերերն էին դարձել

կամ հին իշխանական տների ներկայացուցիչները, կամ էլ այդ ազատագրական ճակատամարտում առավել աչքի ընկած զորավարները: Եթե հին Արցախն ազատագրվելուց հետո հաստատվեց իր Առանշահիկ տերերի արդեն եռանյուղ (Խոխանաբերդ, Հաթերք, Ծար) իշխանական տիրապետության տակ, ապա սրանց մի երկրորդական ճյուղի ներկայացուցիչ Վասակ Խաղբակյանը եւ իր երեք խիզախ զավակները միասին անօրինակ քաջությամբ իրենց պսակեցին ազատագրական մարտերում եւ, իբրեւ վարձատրություն *(«արեանգինք»)* մի ընդարձակ տիրույթ ստացան Վայոց ձորում, որպեսզի այնտեղ կատարեն հայրենաշեն գործեր:

Ներքին Խաչենի ազատագրմանը վերաբերող տեղեկություններ չկան: Դա կարելի է բացատրել նրանով, որ մատենագիրները հիմնականում ուշադրություն են դարձրել Զաքարյանների մղած մարտերին, իսկ սրանք չէին շոշափել Ներքին Խաչենը: Պետք է կարծել, որ Խոխանաբերդի ու Հաթերքի տերերն իրենք են ազատագրել իրենց երկրամասը՝ առանց Զաքարյանների ու վրացիների օժանդակության: Այդ մասին եղած ակնարկ պիտի համարել Հաթերքի տեր Հասան Մեծի Դադի վանքում 1182 թ. թողած հայտնի արձանագրությունը: Ներքին Խաչենի մասին նման տեղեկություն չունենք: Սակայն այս դեռ չի նշանակում, թե Խոխանաբերդի տեր Վախտանգ-Տանգիկը կարող էր դուրս մնացած լինել ազատագրական այն մեծ խանդավառությունից, որ բորբոքել էին նրա աներ Սարգիս ամիրսպասալարը եւ իր խիզախ ու տաղանդավոր որդիները:

Ի՞նչն է բնութագրական Զաքարյան իշխանապետության ժամանակի ազատագրված Հայաստանի քաղաքական կյանքի համար:

Զաքարե եւ Իվանե Զաքարյանների մի վիմագիր արձանագրությունը՝ փորագրված Հաղարծինի վանքում, տալիս է այս հարցի պատասխանը: Այնտեղ եղբայր զորապետները ներկայանում են որպես Բագրատունյաց տոհմի ժառանգորդներ, ուրեմն՝ նաեւ Հայոց թագավորության հավակնորդներ: Ապա թվարկում են իրենց ազատագրած քաղաքներն ու նահանգները, եւ սրանք ամբողջ Հայաստանն էին ընդգրկում: Դժվար չէ այսքանից հետո եզրակացնել, որ իմաստուն ու քաջ զորապետները հայ-վրացական դաշնությունն օգտագործել են իբրեւ Հայոց երկրի ազատագրման եւ հայրենի թագավորության վերականգնման լավագույն ու ամենահարմար միջոց:

Դատելով առկա նյութերից՝ կարելի է մտածել, որ Հայաստանի տարբեր նահանգներ տարբեր իրավական հարաբերություններ ունեին Զաքարյան իշխանապետության հետ: Նույնիսկ միայն Արցախի առանձին մասերի համար այդ հարաբերությունները միանգամայն տարբեր մակարդակներով են ներկայանում: Այսպես. եթե Վերին Խաչենի կամ Ծարի իշխանները Զաքարյանների հպատակներն էին եւ իրենց վիմագրերում կամ հիշատակարաններում երբեք չէին մոռանում այդ հանգամանքը, ապա Ներքին Խաչենի տեր Հասան-Ջալալն իրեն համարում էր *«բնակաւոր* (բնիկ) *ինքնակալ, թագաւոր բարձր եւ մեծ Արցախական աշխարհի»*, եւ նրա թագավորական տիտղոսն ընդունում էին նաեւ օտարները:

Կարեւորն այն է, որ Զաքարյան իշխանապետության շրջանը (XII դ. վերջ-XIII դ. առաջին տասնամյակներ) Հայաստանի միջնադարյան կյանքում արտակարգ բախ-

տավոր փուլերից մեկն էր, երբ երկրի քաղաքական-տնտեսական մեծ վերելքի համեմատ ծաղկեց եւ հոգեւոր ու մշակութային կյանքը։Սկսվեց շինարարական մի աննախընթաց եռուզեռ, որի փառահեղ արգասիքները՝ վանքերն ու ճարտարապետական այլ կառույցները, խաչքարերն ու քարգործ վարպետների մյուս ստեղծագործությունները, իրենց արվեստի բարձրությամբ պիտի մնային օրինակելի հետագա բոլոր դարերում։ Դպրության, գրականության, գրչության արվեստի դարձյալ աննախադեպ մակարդակ պիտի ստեղծվեր եւ, որ ամենաուրախալին է, հայկական համարյա բոլոր նահանգներում։

Սակայն ճակատագիրը հայ ժողովրդի համար երբեք չի նախատեսել տեւական երջանկություն։ 1220-21 թթ. Անդրկովկասում երեւացին թաթար-մոնղոլական առաջին այն ավարառու գնդերը, որոնք ասես եկել էին խուզարկելու ապագա կողոպուտների եւ ահարկու նվաճումների վայրերը։ Այնուհետեւ Ջալալեդդինի զորագնդերը շուրջ յոթ տարի հոշոտեցին Հայաստան երկիրը։ Իսկ 1236 թ. սկսած՝ շատ երկար ժամանակ Հայաստանն ու Այսրկովկասը պետք է տնքային թաթար-մոնղոլական դաժան տիրապետության ներքո։

* * *

Զաքարյան իշխանապետության շրջանում, ինչպես վերն ասվեց, Արցախ-խաչենը բաժանված էր երեք իշխանությունների՝ Ներքին խաչեն, Միջնարցախ կամ Հաթերք եւ Վերին խաչեն։ Այս երեքի իշխաններն էլ խնամիությամբ կապված էին Զաքարյան տոհմի ստեղծած կենտրոնի հետ։ Ներքին խաչենի տեր Վախտանգ-Տանգիկը կին էր առել Սարգիս Զաքարյան մեծ իշխանի դուստր խորիշահին՝ Զաքարեի եւ Իվանեի քրոջը։ Վերին խաչենի կամ Ծարի տեր Հասանի կինն էր նույն Սարգսի մյուս դուստր եւ Զաքարեի ու Իվանեի քույր Դոփը։ Իսկ Հաթերքի տեր Վախտանգի կինն էր Արծրունյաց տոհմի հռչակավոր Քուրդ իշխանի դուստր Արզու խաթունը։ Քուրդը Տփղիսի ամիրապետ-քաղաքագլուխն էր, Կայեն ու Մահկանաբերդ գավառների տերը, եւ նրա քույրն էլ Սարգիս Զաքարյանի կինն էր եղել, այսինքն՝ Զաքարեի ու Իվանեի մայրը։ Պարզ է, որ մի այսպիսի խնամական հյուսվածքը պետք է միանգամայն բարերար ազդեցություն ունենար ստեղծված ազգային պետական մարմնի վրա՝ այն դարձնելով կուռ ու միասնական։

Այս ժամանակների Արցախում ու Հայաստանի մյուս մասերում մեծ տարածում գտած ո՛չ հայկական, նույնիսկ ո՛չ քրիստոնեական, օտարոտի անունները, ինչպես Վախտանգ, Հասան, Քուրդ, խորիշահ, Արզու, Դոփ եւն, զարմանալի չեն լինի, եթե նկատի առնենք Իրանի, ապա եւ Արաբական խալիֆայության, նրանց միջոցով էլ՝ օտար մշակութային միջավայրերի անհաղթահարելի ազդեցությունը։ Այդ ու նման անուններով էին կնքվում աշխարհիկ համարյա բոլոր ազնվականները եւ ոչ ազնվականները (վիմագրերում շատ են նույնիսկ շինական այն մարդիկ, որոնք մահմեդական անուններ էին կրում)։ Միայն հոգեւոր դասն էր, որ իրեն հեռու էր պահում նման

զայթակղությունից։ Կարեւոր է հիշել, որ Վերին Խաչենի իշխանական գերդաստանում իրար հաջորդած Հասան-Սակառ-Վախտանգ-նորից Հասան եւն իշխանավորներն ունեին նաեւ հոգեւորական եղբայրներ, որոնք իրար էին հաջորդում Հովհաննես ու Գրիգոր անուններով, նաեւ Հովհաննես Ա, Հովհաննես Բ, Հովհաննես Գ։ Սակայն այսքանը չէր նշանակում, թե օտար անուններով կնքված իշխանազունները պակաս ազգասեր էին կամ հավատավոր, քան հայկական-քրիստոնեական անուններով պսակված իրենց հարազատները։ Հետագայում կտեսնենք, թե ինչպես, օրինակ, եռակի օտար անուններ ունեցող Հասան-Ջալալ Դոլան՝ Ներքին Խաչենի մեծ իշխանը, հայրենասիրության եւ նշմարիտ քրիստոնյայի լավագույն, պաշտելի կերպար էր ոչ միայն իր շրջապատում, այլեւ բովանդակ Հայաստանում։

* * *

Խաչենի եռանյուղ իշխանության մեջ, ամենայն հավանականությամբ, գահերեցությունը երբեք կովախնձոր կամ նույնիսկ հարց էլ չի դարձել, քանի որ աղբյուրները չեն հիշում եղյակի փոխհարաբերություններում ծնված որեւէ բարդություն։ Պարզապես ենթարկվել են իրենց մեջ առավել շրջահայաց ու քաջամիտ իշխանին։ Եվ XII դարի երկրորդ կեսին Արցախ-Խաչենի տարածքում այդպիսինի համբավ ունեին Հաթերքի տերերը, նախ՝ Հասան Մեծը՝ Վախտանգ-Սակառի որդին, ապա նրա ավագ որդի Վախտանգը։

Հասանը գահակալել է 40 տարի՝ 1142-1182 թթ. սելջուկ-թուրքերի դեմ մղված տեւական պայքարի ժամանակներում։

Նրա ամփոփ կենսագրությունը տրված է Դադիվանքում իր իսկ անունից փորագրել տված արձանագրության մեջ, որի աշխարհաբարն այս է. ***«Ես՝ Հասան, որդի Վախտանգի, տեր Հաթերքի եւ Հանդաբերդի, Խաչենաբերդի ու Հավախաղացի, ավագությամբ իշխեցի 40 տարի, շատ պատերազմներում հաղթեցի իմ թշնամիներին՝ Աստուծո օգնությամբ։ Եվ ունեցա վեց որդի։ Բերդերս ու գավառներս տվի նրանց եւ ինքս եկա այս վանքը, իմ եղբայր տեր Գրիգորիսի մոտ, եղա կրոնավոր, մեծ ջանքերով ու բազում հնարներով Աղվանից խաչքարեր բերեցի, իրրեւ իմ հոգու հիշատակ՝ տուրբ նշան կանգնեցրի...»։***

Հասանի հետ Դադիվանքում կրոնավորելու էր գնացել նաեւ կինը՝ Կյուրիկե Բագրատունի թագավորի դուստր Մաման։ Երկուսն էլ կրոնավորության ընթացքում ցույց են տվել մեծ օգնություն ու հովանավորություն ինչպես Դադիվանքին, այնպես էլ Խաչենի մյուս հոգեւոր ու մշակութային օջախներին։

Հասանի ու Մամայի վեց արու որդիները հայտնի են իրենց գործունեությամբ եւ դրանց մասին եղած հիշատակություններով։ Նրանք են՝ Վախտանգը, Վասակը, Սրմբատը, Գրիգորը, Խոյդանը եւ Գրիգորիսը։ Բացի Վախտանգից, որ իշխանական աթոռի վրա փոխարինել է հորը եւ 1182-ից մինչեւ 1214-ը վարել նահանգի գահերեց իշխանությունը, մյուսները միայն ավատական իրավունքներ ունեին եւ իրենց ուժերի

չափով օգնում էին Խաչենի տնտեսական ու մշակութային կյանքի զարգացմանը: Մեկ անգամ էլ վեց եղբայրներով հանդես եկան շինարարական մի երախտալից գործով. Նոր Գետիկի վանքը, որ խորտակվել էր երկրաշարժից, հիմնավորապես վերակառուցեցին՝ նվիրելով Աստծուն եւ իրենց բարեկամ վարդապետ Մխիթար Գոշին: Վանքի գլխավոր տաճարի ճակատին այսօր էլ պահպանվում է վեց եղբայրների շինարարական հետեւյալ արձանագրությունը. ***«ՈՒՁ (1197) թվին... հիմնադրված Նոր Գետիկի տուրը եկեղեցին սախտուվեց հինգ տարում ձեռամբ Մխիթար վարդապետի, վարդապետությամբ Վարդանի, ձեռնտուությամբ բարեպաշտ Վախտանգ իշխանի, նրա զուգակից Արզու-խաթունի եւ նրա (Վախտանգի) եղբայրներ Սմբատի, Վասակի, Խոյանի, Գրիգորի, Գրիգորիսի ու նրանց զավակների...»***

Վեց եղբայրների կրտսերը՝ Գրիգորիսը, ինչպես եւ նրա հորեղբայրը, որ անվամբ դարձյալ Գրիգորիս էր՝ Դադի վանքի վանահոր պաշտոնով, մանկուց նվիրված էր եկեղեցուն, հոր ու մոր հետ միասին վանք գնաց եւ հետագայում վանահոր պաշտոնում փոխարինեց հորեղբորը:

ՎԱԽՏԱՆԳ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԿԻՆ ԱՐԶՈՒ ԽԱԹՈՒՆԸ

Վախտանգը Խաչենի ամենանշանավոր իշխանավորներից մեկն էր՝ իր անունը փառավորած վարչաքաղաքական ու մշակութային մեծագործություններով: Նրա գահերեցությունը ճանաչված էր ողջ Արցախում, անկախությունը՝ ոչ միայն Զաքարյան իշխանապետության շրջանակներում, այլեւ Վրաց թագավորության սահմաններում: Ժամանակակից վրաց հեղինակը գրել է, թե իրենց թագավորը կարեւոր առեւտրի մեջ է մտել Խաչենի տեր Վախտանգի հետ եւ, իր բերդերից մեկի դիմաց, նրանից գնել հրաշալի մի նժույգ:

Վախտանգը զսպիչ դեր ուներ Գանձակի մահմեդական տերերի դեմ, շատ էր մըտահոգված Արցախի ու հարեւան գավառների հայության իրավունքների պաշտպանությամբ եւ երբ գործնականում հնարավոր դարձավ, իր դղյակում ապաստան ու ամենայն աջակցություն տվեց, որպեսզի Մխիթար Գոշը գրի-ավարտի Հայոց դատաստանագիրքը:

Գոշն իր Դատաստանագիրքը գրել է 1184 թվականին եւ, ի պատասխան Վախտանգի ու նրա կին Արզու խաթունի հոգատարության, ձեռագրի հիշատակարանում արտահայտել իր անհուն երախտագիտությունը[1]: Իսկ դատաստանագրքի հեղինակային մի ձեռագրի մեջ էլ պահպանվել է Գոշի մի այլ հիշատակարան, որով նա Վախտանգին հանձնարարելու պես խնդրում է հավատարմորեն կիրառել դատաստանագիրքը (***«Տէր Աստուած վայելել տացէ աստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանգայ՝ որդւոյ Հասանայ ի կամ իւր զգիրքս Դատաստանի անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան տրին»***):

---

1 «Յիսուս Քրիստոս, յորժամ գաս ի նորոգել զերկիր, նորոգեա հոգւով եւ մարմնով զաստուածասէր իշխանն իշխանաց զՎախտանգ եւ զամուսին իւր զԱրզու խաթուն ի կեանս անմահս»:

Վախտանգը վախճանվել է 1214 թ., եւ նրա աթոռն անտեր է մնացել, որովհետեւ երկու տղաներից մեկը մահացել էր մանուկ հասակում, մյուսն էլ զոհվեց սելջուկ թուրքերի դեմ մղված պատերազմում: Կին Արզու խաթունը հենց նույն 1214-ին երեք հարազատների շիրիմների վրա, նրանց հիշատակին Դադիվանքում կառուցեց մի փառահեղ տաճար, որն այժմ էլ կանգուն է եւ վկայում է խաչենի շինարար վարպետների ստեղծագործական վսեմ ձիրքը:

Արզու խաթունը հայտնի է նաեւ խաչենի մշակույթին մատուցած մի այլ ծառայությամբ: Կիրակոս Գանձակեցին ասում է՝ նա ուներ նկարակերտության ու ոստայնանկության հանճար, որը փոխանցել էր դուստրերին: Նրանք Հաթերքում ստեղծել էին մեծ արհեստանոց եւ գործում էին գորգեր, սուրբ խորանի ծածկույթներ ու վարագույրներ, որոնց վրա Քրիստոսի ու մյուս սրբերի պատկերներն էին՝ *«գործ քանդակակերպ... եւ ճշտագոյն հանուածովք»*: Եվ նրանք այդ նուրբ ու հրաշալի գործվածքներով զարդարեցին ոչ միայն հայրենի Դադի վանքի, այլեւ Հաղբատի, Մակարավանքի եւ ուրիշ շատ վանական համալիրների տաճարները: *«Եվ նրանք, ովքեր տեսնում էին այդ գործվածքները,*-գրել է Կիրակոս պատմիչը,-*օրհնություն էին տալիս Աստծուն, որ այդ կանանց պարգեւել է ոստայնանկության իմաստությունը եւ նկարակերտության հանճարը»*:

* * *

Վախտանգի մահից հետո անզահակալ մնացած Հաթերքի տիրույթները որոշ ժամանակով անցան Վերին խաչենի կամ Ծարի իշխանության հովանու տակ: Վարդան Վարդապետ պատմիչի վկայությամբ՝ սա Զաքարյանների միջնորդությամբ կատարված մի գործարք էր, որի համար, հավանորեն, հիմնական պատճառ է եղել Ծարի իշխանությանը տեր դարձած Դոփ իշխանուհու հավակնությունը[1]:

Կարելի է կարծել, որ Դոփի ամուսին Հասանը վաղ է մահացել, եւ հետագայում իշխանության կառավարը կինն է մնացել, այնքան նշանակալից մի երեւույթ, որի պատճառով հետագայում Ե՛ւ իշխանությունը, Ե՛ւ իշխանական տոհմը կոչվել է նրա անունով՝ Դոփյան:

Դոփի ամուսին Հասանի մասին վերջին հիշատակությունն է մնացել 1204 թվականից: Այս տարում նրա եղբայր, նշանավոր հոգեւորական գործիչ Հովհաննեսը Թարթառի աջ ափին, Վաղուհասից արեւմուտք կառուցել է մի տաճար՝ այն կոչելով հայոց եկեղեցու նշանավոր գործիչներից մեկի՝ խադ եպիսկոպոսի անունով՝ խադավանք, խադարի վանք, որը ժողովրդական հնչմամբ դարձել է խաթրավանք:

Եկեղեցու կառուցմանը վերաբերող արձանագրության մեջ Հովհաննես եպիսկոպոսը պատմում է, որ շինարարության ժամանակ ինքը հավաքել է խաչքարեր ու ձեռագիր

---

1 Վարդան, էջ 140:

մատյաններ, զցել բերքատու այգիներ, դրանք նվիրել վանքին, ապա եւ այս ամենը հանձնել իր եղբայր Հասանին ու նրա որդիներին՝ Հաթերքի տիրոջ, այսինքն՝ Վախտանգի միջնորդությամբ։

Արձանագրության երկրորդ մասն էլ Հասանի անունից է. ասում է՝ երբ իմ եղբայր Հովհաննեսը կառուցեց եկեղեցին եւ վանքն ինձ տվեց, ես էլ դրան զումարեցի (այսինքն՝ վանքին նվիրեցի) խնձորաբակի այգին։

Այս արձանագրությունը՝ փորագրված մի բարակ սալ քարի վրա, այժմ գտնվում է Մաշտոցյան Մատենադարանում եւ նրա ցուցասրահի ակնառու նմուշներից մեկն է հանդիսանում։

Հովհաննես եպիսկոպոսի խոսքը, թե հավաքեցի խաչքարեր ու ձեռագիր մատյաններ (***«ժողովեցի զխաչ եւ զգիրք»***), պարապ խոսք չէ, այլ ունի կարեւոր նշանակություն։ Հավաքած մատյաններով վանական համալիրում ստեղծվել է մատենադարան, որը մի փառավոր գործ էր միջնադարի խաչենի լեռնաստանում։ Իսկ խաչքարե՞ր...

Դրանք՝ ավելի վաղ շրջանի քարակերտ կոթողներ կամ նրանց սրբազան մասունքներ, կառուցման ժամանակ հազցվել են եկեղեցու արտաքին պատերի մեջ։ Այժմ էլ նրանք կան եւ դիտողին ներկայանում են իբրեւ ավելի վաղ շրջանի խաչենի քարգործ վարպետաց ստեղծագործությունների մի ինքնատիպ ցուցահանդես։

Խաղավանք-Խաթրավանքը Ծարի կամ Վերին Խաչենի իշխանության տոհմական տապանատունն էր եւ հոգեւոր գլխավոր կենտրոնը հետագա դարերում։ Եվ ինչպես իշխանուհի Դոփը, այնպես էլ նրա որդի եւ գավառի նշանավոր իշխան Գրիգորն ու հետագաները, ամեն ջանք ու միջոց գործադրում էին վանական համալիրն առավել շքեղացնելու, գործունեության շառավիղները մեծացնելու համար։ 1225 թ. մի արձանագրության համաձայն՝ Դոփն իր տեղր Հովհաննես եպիսկոպոսի կառուցած տաճարին գավիթ է ավելացրել, կառուցել նաեւ մի մատուռ, վանքին նվիրել մի Ավետարան եւ այլ ընծաներ[1]։

Թարթառի հովտում պահպանված վիմագրերից հայտնի է, որ Դոփի տիրակալության իրավունքը ճանաչել են Վերին Խաչենում ու Հաթերքի կողմերում։ Սակայն, երբ վախճանվել է, չգիտես ինչո՞ւ, հարազատները նրա դին ամփոփելու համար նախընտրել են Հաղբատի գլխավոր տաճարի գավիթը. ա՞յն պատճառով, որ այն կառուցել էր իր տեղր Հովհաննես եպիսկոպոսը՝ Խաթրավանքի կառուցողը, թե՞ որովհետեւ այդ ժամանակներում Հաղբատի առաջնորդն էր իր որդի Հովհաննեսը։ Հիշյալ գավթի վիմագրերի մեջ է անթվական հետեւյալ գերեզմանական արձանագրությունը. ***«Զաքարէի եւ Իվանէի քոյրն է Դաւփն»***[2]։

---

1 Դոփի ընծաների մեջ նշվում է նաեւ «Հակուդենայ մատաղիսն» (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», V, էջ 127), որի «մատաղիսն» նշանակում է նոր զցված, մատաղ այգի, ինչպես «Նորքը» նախկին Երեւանի մերձակայքում կամ «Նորատիքը»՝ Սյունիքում։ Հետագայում երեքն էլ դարձել են հատուկ անուններ՝ Մատաղիս, Նորք, Նորատիս-Նորատուս։

2 Կարո Ղաֆադարյան, Հաղբատ, Երեւան, 1963, էջ 185։

Կարելի է կարծել, որ ամբողջ Խաչենում միահեծան իշխանություն վարող Հասան-Ջալալ Դոլայի փառքի ժամանակներն էին, եւ Դոփն այլեւս չէր կարող այնտեղ հավելյար իրավունքներ բանեցնել իշխանապետ եղբայրների հաշվին: Մյուս կողմից էլ, նույնիսկ Վերին Խաչեն-Ծարում իշխանական աթոռի համար արդեն հասունացել էր Հասանի ու Դոփի որդի Գրիգորը, որը 1220 թ. իշխանավարի ընծաներ էր տալիս Խաթրավանքին, հետագա տասնամյակներում, թաթար-մոնղոլների դեմ մղված արշավանքներում իբրեւ իր զավառի տեր եւ զորքերի հրամանատար կովում էր նոր թշնամիների դեմ:

Թերեւս հենց այս պատճառներից դրդված՝ ժամանակի սովորության համաձայն, Դոփը եկեղեցի էր գնացել կրոնավորելու: Իսկ դրա համար հարմար էր համարել Հաղբատի վանքը, որի առաջնորդն էր իր որդի Հովհաննեսը (վանահայր է հիշված 1233թ. արձանագրությամբ)[1]:

XIII դարի առաջին քառորդում, ուրեմն, Վախտանգ մեծի մահով հանգավ Հաթերքի իշխանությունը, Զաքարյանների իշխանապետության թուլացմամբ աղոտացավ նաեւ Վերին Խաչենի կամ Ծարի իշխանության զորությունը, եւ այս ամենի փոխարեն բարձրացավ, բացառիկ մի հզորության ու փառքի հասավ Ներքին Խաչենի իշխանությունը, երբ 1216 թ. նրա աթոռին բազմեց Առանշահիկ Վախտանգի եւ Զաքարյան Խորիշահի զավակների մեջ ավագ Հասանը:

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ ԴՈԼԱ՝ «ԲՆԱԿԱՒՈՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵՎ ՄԵԾ ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ»

XIII դարը Խաչենի, ինչպես եւ ամբողջ Հայաստան աշխարհի պատմության ամենադրամատիկ շրջաններից մեկն էր: Դարասկզբի տնտեսական ու մշակութային բուռն վերելքը մասամբ կասեցվեց մոնղոլ-թաթարների առաջին արշավանքներով ու Ջալալ էդ Դինի բիրտ ասպատակություններով: Ապա կարճատեւ խաբուսիկ խաղաղությանը հաջորդեց մոնղոլական արյունարբու բանակների ներխուժումը, որն ավարտվեց երկրի համատարած նվաճումով:

Նախամոնղոլական շրջանի եւ հատկապես մոնղոլական տիրապետության հաստատման ժամանակի հյուսիս-արեւելյան Հայաստանի ամենանշանավոր երեւույթներից էր Ներքին Խաչենի տեր Հասան-Ջալալի իշխանությունը: Այս հայրենասեր ու իմաստուն իշխանապետի աթոռակալության առաջին տարիներին Ներքին Խաչենը տնտեսապես բարձրացավ մի աննախընթաց մակարդակի: Աշխուժացավ մշակութային կյանքը: Ստեղծվեցին հոգեւոր նոր կենտրոններ, եւ կառուցվեցին այնպիսի ճարտարապետական կոթողներ, որոնք դասական օրինակ պիտի մնային հետագա դարերի համար: Մեծ էր այս ողջամիտ ու հեռատես անհատի դերը նաեւ ամբողջ Հայաստանի

1 Նույն տեղում, էջ 250:

կյանքում: Բավական է հիշել այն միջոցառումները, որոնք նա գործադրեց՝ երկիրը թաթար-մոնղոլների կործանարար դաժանություններից զերծ պահելու համար:

Խաչենի իշխանական տոհմի ամենաականավոր ներկայացուցիչն էր Հասան-Ջալալը, կենդանության ժամանակ միշտ պատմիչների ուշադրության կենտրոնում, եղերական մահից հետո՝ ժողովրդի ու դարձյալ աղբյուրների միահամուռ փառաբանությամբ պըսակված: Ժամանակակից հեղինակները ոգեշունչ խոսքերով են պատմում նրա գործունեության դրվագները: Նրա ապրած կյանքի ու կատարած եռանդուն գործի համարյա յուրաքանչյուր մանրամասն արձանագրված է Խաչենի տարածքի եւ հարեւան գավառներում պահպանված վիմագրերում, Գանձասարի վանքին նվիրված նրա ձեռագիր Աստվածաշնչի հայտնի հիշատակարանում եւ այլուր: Ջալալի մասին է խոսում նաեւ իր իսկ գործածած թրի այն նեֆրիտե երախակալը, որի վրա նախշանկար քանդակված է *«Հասան-Ջալալ իշխան Խաչենոյ»*:

«Հասան» արաբերեն բառ է, որ նշանակում է «գեղեցիկ»: Սակայն զգվանոք Հասանին կոչում էին նաեւ Ջալալ, որը դարձյալ արաբերեն է եւ նշանակում է «փառք, վեհություն, մեծություն»:

Հասան-Ջալալն իր վրա էր առել նաեւ մի երկրորդ փաղաքշական անուն (թե՞ մեծարանքի ցուցիչ)՝ «Դալա», որ արաբերեն «դալա-դօվլաթ» բառից է եւ նշանակում է «հարստություն, մեծություն, ինչք, պետություն» (իշխանություն): Հավանաբար բառն այստեղ դրված է վերջին նշանակությամբ՝ իշխան, ինքնակալ:

Վախտանգ իշխանն ունեցել է երեք տղա եւ երեք դուստր: Հասան-Ջալալն ավագն էր նրանցից՝ ամուսնացած Բաղաց թագավորի դուստր Մամքանի հետ: Հոր մահից հետո արժանավորապես տիրացավ նրա աթոռին, որը գերազահ պիտի դառնար ողջ Արցախի ու շրջակա գավառների համար:

1216 թ. իշխանության տիրացած Հասան-Ջալալը կարծես կանխազգում էր թաթար-մոնղոլների բերելիք խավարի ու ավերումների մղձավանջը եւ փորձեց ազգային-մշակութային գործի անընախադեպ վերելքով, շինարարական գործի բորբոքումով, եկեղեցու շենացումով, հոգեւոր մեծ արժեքների ստեղծումով կանխել հավանական կորուստները, լցնել բացվելիք պարապը: Հենց նույն 1216 թ. էլ իշխանության տոհմական գերեզմանատան վրա կանգնած Գանձասարի եկեղեցին քանդեց հիմնավորապես եւ այնտեղ զցեց մի նոր տաճարի հիմքերը: Այստեղ շինարարությունը պետք է ձգվեր ավելի քան երկու տասնամյակ:

Սակայն Հասանի ու նրա ողջ գերդասանի (մանավանդ կին Մամքանի ու որդի Իվանե Աթաբակի)[1] հոգսն էր դարձել մշակութային գործի ծավալումը ոչ միայն բովանդակ Արցախում, այլեւ նրա սահմաններից դուրս, Արեւելյան Հայաստանի տար-

---

1 Հասան-Ջալալն իր արու զավակին կոչել է սեփական հեռի Իվանեի անունով՝ անվանը կցած պահելով նաեւ այդ հեռու տիտղոսը. չէ՞ որ Իվանե Զաքարյանը Վրաց թագավորության աթաբակն էր («Աթաբակ»-բարձր պաշտոնյա արքունիքում՝ թագավորահայր, թագավորազնի խնամակալ եւ արքունիքի կառավարիչ):

բեր վայրերում՝ Հաղբատում, Կեչառիսում եւ այլուր։ Նրանք եկեղեցիներ էին կառուցում, նորոգում հները, կանգնեցնում խաչքարեր, հովանավորում մատյաններ ընտեղծելուն, ստեղվածները նվիրում հայրենի վանական ուխտերին։

Վանաո ավանի ավերակներում (այժմյան Ծմակահող գյուղի մոտ) պահպանվել է Հասալ-Ջալալի առաջին խոշոր շինարարական գործի՝ եկեղեցու կառուցումն ավարտելու մասին պատմող արձանագրությունը 1229 թվականից։

Ապա գալիս են նրա կանգնեցրած գեղամանդակ խաչքարերը նույն Վանաոում, որոնք թվագրվում են մոտավորապես նույն ժամանակաշրջանով եւ բացառիկ նշանակություն ունեն այն տեսակետից, որ իրենց վրա կրում են ժամանակի աշխարհիկ կյանքի դրոշմը. քարերի վրա, Քրիստոսի ու կրոնական ուրիշ մոտիվների փոխարեն, քանդակված են զինվորականներ, ռազմական ու կենցաղային զանազան տեսարաններ։

1216-1238 թթ. Հասան-Ջալալի ու նրա հարազատների հոգսը Գանձասարի վանքի շինարարությունն էր։ Թաթար-մոնղոլների առաջին արշավանքների, ավերի ու ավարի միջոցին նրանք ասես վերացել էին ժամանակից ու տարածությունից եւ կառուցում էին հավերժության համար՝ հաստատելով այն պարզ ճշմարտությունը, որ արարիչ ձեռքն անհնար է կտրել։ Գանձասարի վանքի շինարարությունն ավարտվել է 1238 թ.։

Ժամանակակից պատմիչները եւ հատկապես Կիրակոս Գանձակեցին հիացմունքով են նկարագրում վանքի շինարարությունն ու նրա օծման արարողության մանրամասները։ Կիրակոսի պատմելով՝ օծման հանդեսին ներկա էին Աղվանքի կաթողիկոս Ներսեսը՝ բազում եպիսկոպոսների հետ, անվանի Վանական Վարդապետը շատ ուսուցչապետներով հանդերձ եւ ուրիշ բազմաթիվ հոգեւոր առաջնորդներ։ Ասում են՝ հենց միայն յոթ հարյուր քահանաներ կային։ Հասան-Ջալալը շքեղ նաշկերույթ էր սարքել։ Ինքն իսկ անձամբ սպասարկում էր մասնակիցներին, ապա առատաձեռն նվիրատվությամբ նրանց բոլորին ճանապարհեց իրենց տները[1]։

Այս հանդիսությունները տեղի են ունեցել ՈՁԹ (1240) թվականին, Վարդավառի մեծ տոնի օրը (հուլիսի 22-ին, կիրակի)։

ՆԵՐՔԻՆ ԽԱՉԵՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հասան-Ջալալի գահակալության առաջին տարիներին հաջորդեցին աշխարհացունց դեպքեր, որոնք այլ ուղղություն տվին Խաչենի ու ողջ Այսրկովկասի պատմական ընթացքին։

Թուրք-սելջուկյան բռնագրավումներից ազատագրված, հայ-վրաց զինական դաշնությամբ վերակենդանացող հայկական նահանգների համար քաղաքական ու տնտեսական վերելքի նոր հեռանկարներ էին բացվում։ Ազատագրվել էին երկրի հյուսիսա-

1 Տե՛ս Կիրակոս, էջ 269-270։

յին եւ հյուսիս-արեւելյան բոլոր մարզերը: Դեպքերի մասնակից եւ արժանահավատ պատմիչներ Կիրակոսն ու Վարդանը թվարկում են ազատագրված գավառները, որոնց մեջ են Հայոց արեւելից կողմանց պատմական հողերը՝ Շամքորից մինչեւ Ատրպատական, Մուղանի դաշտից մինչեւ Գեղարքունիք:

Թվում էր, թե հայ ժողովուրդն արդեն ստացել է քաղաքական ու մշակութային եռուն կյանքով ապրելու հնարավորություններ: Սկիզբ էր առել շինարարական մի լայնահուն խանդավառություն: Վանքերում ու եկեղեցիներում դպրոցներ էին բացվել, ուսումնածարավ մանուկները կրթվում էին ժամանակի գիտությամբ:

Եվ հենց այդ ժամանակ էլ կործանարար հեղեղի պես արեւելքից, անդրկասպյան տափաստաններից, հետագայում էլ՝ Վոլգայի ստորին ավազանից հորդալով եկավ թաթար-մոնղոլական խաժամուժը: Ասպատակիչներն Այսրկովկաս խուժեցին հանկարծակի, վայրենի մոլուցքով, գեհենային ուժով: Կիրակոսն այս արշավանքի տարի է համարում 1220 թվականը՝ վկայելով, որ նրանք իրենց ճանապարհին ավեր-ավար էին սփռում, ոչնչացնում ամեն ինչ, բացի ձիուց, որն էլ առնում-տանում էին իրենց հետ:

Այսպես, նրանք կոտորելով ու ավերելով, հասնում են Տփղիս, ապա վերադառնում, նստում Շամքորի դաշտում: Այստեղ էլ հպատակության երդումով իրենց մոտ գնացածներին սրի են քաշում, ապա իջնում Պարտավի ու Բայլականի միջեւ ընկած դաշտը (Բեղամեջ), այնտեղից պարբերական ասպատակություններով ավերում շրջակա գավառները: Վրաց թագավոր Գեորգի Լաշան ու Զաքարյան Իվանե սպարապետը վրաց-հայկական միացյալ զորքերով ճակատամարտի են դուրս գալիս եկվորների դեմ: Ճակատամարտը տեղի է ունենում Կուրի ափին, Խունան դաշտում:

Սկզբում վրաց ու հայոց զորքերը խուճապի են մատնում մոնղոլներին ու հալածում որոշ տեղ: Սակայն հետո պարզվում է, որ դա թշնամու սարքած ծուղակն է. մոնղոլների դարանած զորամասերը հարձակվում են թիկունքից, կոտորում վրաց-հայկական զորքերին:

Սա թաթար-մոնղոլների առաջին հետախուզական արշավանքն էր դեպի Այսրկովկաս եւ հարեւան երկրները: ***«1223 թ., մոտ երեք տարվա արշավանքներից հետո, սրանք վերադարձան Արեւելք՝ Չինգիզ խանի մոտ, հավաքած լինելով կարեւոր տեղեկություններ արեւմտյան այն երկրների մասին, որ իրենք նվաճելու էին մոտ ապագայում»***[1]:

Պատմական աղբյուրներում հիշատակություններ կան 1220-23 թթ. մոնղոլների կատարած ասպատակությունների մասին: Մեր խնդրո առարկայի տեսակետից կարեւոր է ղփչաղների Այսրկովկաս գալու մասին վկայությունը: Մոնղոլներից հալածված՝ նրանք Դերբենդի դռնով խուժում են Կուրի ավազանը եւ բնակավայր խնդրում Վրաց թագավորից: Մերժում են ստանում: Իսկ Գանձակի ամիրան նրանց իր քաղաքում բնակվելու հնարավորություն է տալիս՝ նպատակ ունենալով նրանց ուժն օգտագործել վրաց-հայկական միության դեմ: 1222 թ. Իվանե սպարապետը հարձակվեց

1 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.Գ, Երեւան, 1952, էջ 182:

Գանձակի ամիրայի վրա՝ այդ խարդավանքի համար նրան պատժելու նպատակով, սակայն ծանր պարտություն կրեց։ Իվանեի զորավարներից շատերն ընկան կռվում կամ գերվեցին թշնամուց։ Զոհվողներից էին խաչենցի Խաղբակ իշխանի որդի Գրիգորը եւ թոռ (Վասակի որդի) Պապաքը։

Ամենամեծ դժվարությունն այն էր, որ մոնղոլների առաջին արշավանքները համընկան Վրաց պետության խարխլման եւ հայ-վրաց զինական ուժերի թուլացման հետ։ Թամար թագուհու եւ հատկապես քաջ զորավար Զաքարեի մահից (1212) հետո պետական կառավարությունն ընկավ թույլ ու անկարող հաջորդների ձեռքը, որոնք չկարողացան ապահովել լայնածիր պետության ամբողջականությունը։

Մի խոսքով՝ խախտվել էր Վրաց թագավորության հզորությունը, ջլատվել էր վրաց եւ հայ ժողովուրդների ռազմական միասնությունը, եւ այլեւս չկար մի ամուր ձեռք, որն ի վիճակի լիներ վերականգնել այն, նախապատրաստել պաշտպանությունը երկրին սպառնացող մեծ աղետի դեմ։ Իսկ այդ աղետը չուշացավ։

Մոնղոլներն ասպատակեցին Խորասանը։ Դրան հետեւեց Պարսկաստանի ու Ատրպատականի նվաճումը, որից հետո նրանք արդեն շարժվեցին դեպի Այսրկովկաս, նախ իրենց վրանները զարկեցին Մուղանի դաշտում, իսկ կործանիչ հեղեղն առաջինը շրջվեց Գանձակի վրա։

Այս ժամանակների մասին է, որ տեղեկացնում է Կիրակոսը՝ անհուն դառնությամբ պատմելով, թե ինչպես Արցախ եւ Ուտիք նահանգների ծայրարեւելյան մասը՝ բարեբեր Մուղանի դաշտը, դարձավ օտարների ոտի կոխան, որովհետեւ այդ թափառական հրոսակները գալիս, այնտեղ խփում էին իրենց վրանները եւ այնտեղից սկսում իրենց նոր գրոհները[1]։

Այնուհետեւ մոնղոլ զորապետները Հայոց եւ Վրաց երկրների նահանգները բաժանում են իրենց միջեւ, հարձակվում, կոտորում բնակչությանը, ավերում բերդերը, գյուղերն ու քաղաքները, նույնիսկ այգիներն ու անդաստաններն են ոտի տակ տալիս, ոչնչացնում։

Սա արդեն Իվանե զորավարի մահից (1234) հետո էր, մի ժամանակ, երբ հայ ու վրաց զորքերը քաշվել էին իրենց տերերի՝ կենտրոնախույս իշխանների բերդերն ու ամրոցները, եւ այս իշխաններն էլ մտածում էին միայն սեփական գլուխներն ու տիրույթները պահելու մասին։

Կիրակոսն այս ամենի պատճառ է համարում, առաջին հերթին, Վրաց գահը տնօրինած ապիկար Ռուզուդան թագուհուն[2]։

Վախճանվել էր Իվանեն։ Իսկ նրա որդի Ավազն ու հորեղբորորդի Շահնշահը չունեին ո՛չ հայրերի քաջությունը, ո՛չ էլ հատկապես պետական սթափ մտածողություն։

Մոնղոլ զորապետները (նոյինները) անդիմադրելի հաղթողի իրավունքով շարժվում էին դեպի իրենց *«վիճակված»* նահանգները։

Ժամանակակիցների վկայությամբ՝ ոչ ոք չփորձեց դիմադրել անպատիժ ու ան-

---

1 Կիրակոս, էջ 234-235։

2 Նույն տեղում, էջ 238։

արգել առաջ շարժվող մոնղոլներին։ Սրանք նվաճում էին քաղաք քաղաքի ետեւից, բերդ բերդի ետեւից՝ առանց կռվի ու ճակատամարտի, եւ եթե արյուն էր թափվում, դա նվաճվող անպաշտպան ժողովրդինն էր, որի տված զոհերն անթիվ էին, կորուստներն ու զրկանքներն անհաշվելի։ Վարդանն ասում է՝ թաթար-մոնղոլներն ***«ի սուղ ժամանակս, անվաստակ եւ առանց աշխատութեանց»*** նվաճեցին Հայաստանը[1]։

Հպատակության առաջին օրինակը տալիս է Իվանե ամիրսպասալարի որդի Ավագը։ Նա Սեւանի ափերին բանակած Զարմաղանի մոտ բանախոս է ուղարկում իր տան վերակացու Գրիգոր հեջուբ խաչենեցուն, ապա անձամբ ինքն է ներկայանում բռնավորին։ Զարմաղանը Գրիգորին ընդունում է սիրով եւ իր զորքերին կարգադրում չասպատակել Ավագի տիրույթները։

Ավագին հետեւում են մյուս իշխանները՝ Վահրամ Զաքարյանը, տոհմակից Շահրնշահը, Էլիկում Օրբելյանը եւ ուրիշներ։

Կիրակոսի եւ Վարդան Վարդապետի երկերը հարուստ տվյալներ են պարունակում ոչ միայն հայ բնակչության ու իշխանավորների, այլեւ հոգեւոր դասի նկատմամբ մոնղոլ նվաճողների վարած քաղաքականության մասին։ Ըստ երեւույթին ավարառու եկվորները կռահել էին, որ հոգեւոր դասի ներկայացուցիչները, հատկապես մտավորականները, մեծ հեղինակություն ունեն տեղաբնիկների աչքում, որոշել էին այդ հեղինակությունից էլ օգտվել։ Գերեվարում էին նրանց, ապա ազատում առհելի փրկագնով։ Այդպես ազատվեց Վարդանի, Կիրակոսի ու Գրիգոր Պատմիչի պաշտելի ուսուցիչ Վանական Վարդապետը, որի փրկագինը վճարել էին Գագ բերդի բնակիչները։ Մոնղոլները հայ մտավորականներին ստիպում էին նաեւ սովորել իրենց լեզուն, որպեսզի իրենց մոտ գրագրություն անեն եւ թարգմանչի դեր կատարեն արշավանքի ժամանակ։

Ներքինիխաչենցիներն ամրացել էին երկու անառիկ բերդերում՝ Հավքախաղացում ու Խոխանաբերդում։ Առաջին ամրոցը հեշտությամբ նվաճվեց արնածարավ կողոպտիչների կողմից։ Սրանք գաղտագողի թափանցեցին բերդը, ***«սրի ճարակ արին բազմութեանը եւ կեսը զահավեժ արեցին։ Եվ ընկածների շատությունից երկիրը ծածկվեց, արյունն առու դարձած ջրի պես գնում էր։ Ոչ ոքի չխնայեցին։ Եվ ոմանքներն էլ շատ ժամանակ անց քարե կույտերի տեսք ունեին»***[2]։ Այնուհետեւ Հասան-Ջալալ իշխանն ***«իր աշխարհի բնակիչներին ամրացրեց Խոխանաբերդ կոչվող ամրոցում»***[3]։

Մոնղոլները տեսնելով, որ անհնար է այս բերդն առնել, ***«կոչեն գնա սիրով խաղաղութեան առ իւրեանս»։*** Պաշարված, թեպետ եւ անզրաղ վիճակում ոչ մի լավ հեռանկար չտեսնելով, Հասան-Ջալալը մեծ նվերներով իջնում է իր բերդից եւ հաշտություն կնքում։ Մոնղոլները նրան են հանձնում իր երկիրը ***«յաւելուածով»։***

---

1 Վարդան, էջ 144-145։

2 Կիրակոս, էջ 267։

3 Նույն տեղում, էջ 268։

Հետագայում Հասան-Ջալալը նկուն քաղաքականությամբ ու նվերներով կարողանում էր նվաճել զորապետների սրտերը, եւ սրանք համեմատաբար հանգիստ էին թողնում Խաչենի բնակչությանը:

Մեկ անգամ արդեն Խաչենի տիրոջ առատաձեռնությունը ճաշակած մոնղոլ զորապետների այցելությունները դառնում են հաճախակի: Եվ ամեն անգամ նրանք Խաչենից հեռանում են նոր նվերներով:

Այսպանը տեղի է ունեցել 1238-39 թվականներին կամ մինչեւ 1240-ի սկզբները: 1238 թ. ավարտված Գանձասարի օծումը ձգձգվել ու կատարվել է 1240-ին, հավանաբար, հենց ա՛յս պատճառով: Այս տարիներին է վերագրվում նաեւ Հասան-Ջալալի դուստր Ռուզաֆանի ու Զարմաղանի որդի Բորա-նոյինի ամուսնությունը, որի շնորհիվ, պետք է ենթադրել, որ մոնղոլ զորապետներն առավել բարյացակամ դարձան Հասան-Ջալալի ու նրա երկրի նկատմամբ:

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԻ ԵՎ ՄՈՆՂՈԼ ՏԻՐԱԿԱԼՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվ այսպես, Հայաստանի հյուսիս-արեւելյան բոլոր նահանգներն ընկել էին մոնղոլների տիրապետության տակ: Հպատակները պարտավոր էին հարկ վճարել եւ կռվել տիրապետողների զորքերի հետ կողք կողքի, նրանց նոր նվաճումների համար, ընդդեմ սելջուկների: Սա միակ ելքն էր ստեղծված վիճակից:

Հայ իշխանները, որոնք իրենց հայրենիքը մոնղոլներից պաշտպանելու համար զենք ու զորք չէին հանել, հիմա նույն մոնղոլների հրամանի ներքո էին դրել ստվար զորամասեր, որոնք տուն ու տեղից կտրված՝ գործիք էին դարձել մոնղոլ ասպատակիչների ձեռքին: Այսպե՛ս նրանք մասնակից եղան Կարնո (1242), Կեսարիայի, Սեբաստիայի եւ փոքրասիական մյուս քաղաքների (1243) նվաճումներին:

Ճիշտ է, այս պատերազմում հայերն ամեն կերպ ջանում էին պաշտպանել յուրայիններին: Հայաստանի արեւմտյան նահանգներում սելջուկյան ու մոնղոլական ստրկությունից նրանք ազատում էին հարյուրավոր տարաբախտ ազգակիցների: Նրանց ձեռքով ոչնչացումից փրկվում էին մշակութային բանի՞-բանի կոթողներ, գերեվարված ձեռագիր մատյաններ ու արվեստի այլ նշխարներ: Սակայն փաստ է, որ սեփական հայրենիքի ազատության համար չծախսված արյունը հիմա հեղվում էր նախ եւ առաջ ի փառս մոնղոլների տիեզերական տիրապետության:

1242 թ. սկզբներին Հայաստանում գտնվող մոնղոլ զորքերի հրամանատար Զարմաղանը համրանում է: Խանը (մոնղոլների թագավորը) նրա փոխարեն զորահրամանատար է նշանակում Բաչու-Ղուրչի անունով մեկին: Սակայն իշխանությունը պետք է վարեր Զարմաղանի կին Ելթինա խաթունը:

Բաչուն իր նոր պաշտոնը նշանավորում է նրանով, որ հպատակ այլազգիներից կազմում է զորագնդեր եւ իր հետ առնելով՝ արշավում դեպի Արեւմտյան Հայաստան,

սելջուկ սուլթան Ղիյաս-էդդին Քայ-Խոսրովից (հայկական աղբյուրներում՝ Ղիաթադին) Հայաստանի արեւմտյան նահանգները նվաճելու համար։

Այս արշավանքի եւ Կարնո նվաճման մասին պատմող Կիրակոսը Բաչուի զորքերի հետ գնացած հայ իշխաններին թվարկելիս հիշում է նաեւ Հասան-Ջալալին։ Պատմում է, որ սուլթանի զորքերին տված առաջին նշանակալից ջարդից հետո մոնղոլները վերադառնում են Մուղան՝ ձմեռն այնտեղ անցկացնելու, որովհետեւ, ինչպես Գրիգոր Պատմիչն է վկայում, Մուղանում *«միշտ կանաչ լինի խոտն ամառն ու ձմեռն՝ վասն պարարտութեան երկրին եւ քաղցրութեան յորոյն»*[1]։

Պարտված սուլթանը չի հուսահատվում, դեսպաններ է ուղարկում մոնղոլների մոտ, նոր ճակատամարտի հրավիրում։ Իսկ սրանք չեն շտապում, *«այլ Հանգիստ գումարելով սեփական զորքը եւ իրենց ձեռքի տակ եղածներին, ամբողջ բազմութեամբ եկել էին Հայոց աշխարհի խուտավետ վայրերը, երիվարները պիրարելին, ապա Հանգիստ մոտ գնացին այն տեղին, որ սուլթանի բանակն էր»*[2]։

Խորամանկ Բաչուն հպատակների ջոկատները դասավորում էր իրարից հեռու, որպեսզի նրանք չմիավորվեն ու չդավաճանեն, իսկ ճակատամարտի ընթացքում նրանց առաջ էր տալիս, յուրայիններին տանում հետեւից։ Այսպես նա Երզնկայի շրջանում, Զման-Կատուկ գյուղաքաղաքի մոտ մեծ ջարդ է տալիս սուլթանին, ապա նրա մազապուրծ զորքերին հետապնդելով՝ առնում Երզնկան, Կեսարիան, Սեբաստիան, Տիվրիկը եւ այլ քաղաքներ։

Այս մարտերում հայ իշխաններն ու զորքերը հիմնականում մտահոգված էին տեղի հայությանն օգնելով։ Նրանք *«շատերին ազատեցին գերութենից՝ Ե՛ւ արքեպիսկոպոս, Ե՛ւ թաքուն, քահանաներին ու կրոնավորներին։ [Ազատեցին] ծանոթանալ մեծամեծ իշխանները՝ Ապարը, Շահնշահը, Վահրամն ու իր որդի Աղբուղան եւ խաչենեցիք՝ Հասան-Ջալալը, իր զորքը եւ ազգականները, Ե՛ւ Գրիգորը՝ Դուքի որդին, որ Ջալալի մորաքրոջ տղան էր, Ե՛ւ այլ իշխաններ՝ ըստ իրենց հնարավորության։ Եվ սա եղավ Հայոց ՌԼԲ (1243) թվականին»*[3]։

Հենց այս շրջանին էլ վերաբերում է Հասան-Ջալալի այն գործարար միջնորդությունը, որի շնորհիվ հայկական Կիլիկիայի թագավոր Հեթումի ու մոնղոլների միջեւ ստեղծվեց բարեկամական հարաբերություն, եւ Կիլիկիան փրկվեց հարեւան երկրներին վիճակված ավերածություններից։

Բանն այն է, որ Հեթումը Ղիյաս-էդդին սուլթանի դաշնակիցն էր եւ, անշուշտ, պետք է բաժաներ նրա ճակատագիրը։ Սակայն շրջահայաց հայ թագավորն իր դաշնակցի պարտությունից անմիջապես հետո դեսպաններ ուղարկեց մոնղոլ զորապետների մոտ՝ առաջարկելով իր բարեկամությունն ու հպատակությունը։ Հեթումի դեսպանների տեսակցությունը Բաչու-նոյինի, Զարմաղանի կին Ելթինա խաթունի ու մոնղոլ մյուս

1 Գրիգոր Պատմիչ, էջ 8։
2 Կիրակոս, էջ 282։
3 Նույն տեղում, էջ 284։

մեծամեծների հետ կազմակերպվեց Հասան-Ջալալի միջոցով։ Մոնղոլներն ընդունեցին Հեթումի ընծաները, *«Հաստատեցին բարեկամություն արքայի հետ, տվին նաեւ գիր՝ ըստ իրենց հավատի, որը* (գիրը) *էր տամղա էին կոչում»*[1]։

Թվում է, թե Հասան-Ջալալի բարեկամությունը մոնղոլ մեծամեծների հետ, ճկուն քաղաքականությունը եւ ամենաբարդ վիճակներում կողմնորոշվելու փայլուն ընդունակությունը նրա համար պետք է ապահովեին մի համեմատաբար խաղաղ ու բարվոք վիճակ օտարների անհաղթահարելի գերիշխանության ներքո։ Սակայն այդպես չեղավ։ Փոխվեց մոնղոլների կետրոնական իշխանությունը, եւ մեծ խան ընտրվեց Գույուկը։ Սրա առաջին գործն այն եղավ, որ հարկահաններ ուղարկեց հպատակ երկրները եւ կարգադրեց անհապաղ հավաքել հարկերը, ընդ որում՝ հարկատու էին ոչ միայն հպատակ երկրների բնակիչները, այլեւ իրենց իսկ զինվորներն ու հրամանատարները։ Մերձավոր Արեւելքի երկրներ ուղարկված հարկահանների գլխավորներն էին Արղունն ու Բուղան՝ մեկը մյուսից դաժան ու նենգավոր։

Հավանաբար հայկական նահանգներում հարկահանությունը հիմնականում Բուղան էր գլխավորում, այդ պատճառով էլ հայ աղբյուրներում ամենից ցայտուն ներկայացված է նրա անողորմ վարքը։ Կիրակոսը կարծում է, որ սա ավելի մեծ չարագործ էր, քան նրա այն անվանակիցը, որ IX դարում *«եկ ի Հայս եւ աւերեաց բազում աշխարհս»։*

Ի՞նչ էր անում նոր կեղեքիչը, եւ ինչպե՞ս նա առաջին իսկ հանդիպումից ոտքի տակ տվեց այն բարյացակամությունը, որ Հասան-Ջալալն էր վայելում մոնղոլ տիրակալներից։ Կիրակոսն այսպես է նկարագրում նրա գործունեությունը եւ հատկապես Հասան-Ջալալի դեմ ունեցած թշնամանքը.

«...Այս Բուղան, որ եկավ թաթարական զորքերի մոտ, մտնում էր ավազանու տները եւ իրեն ինչ դուր էր գալիս, անխնա առնում էր, ոչ ոք չէր համարձակվում որեւէ բան ասել նրան, որովհետեւ իր համար սրիկա մարդիկ էր հավաքել պարսիկներից ու արաբներից, որոնք անխնա տմարդի գործեր էին անում եւ առավել թշնամի էին քրիստոնյաներին։ Այդ պատճառով նրան չարացրին Ջալալ կոչված բարեպաշտ իշխան Հասանի դեմ։ Նա բռնեց սրան, մեծ պալատում ամբողջ ավազանու առջեւ բազմաթիվ պատիժների ենթարկեց, քանդեց նրա անարիկ ամբոցները՝ պարսկերեն Մոխանաբերդ կոչվածը, Դեղը, Միրանաքարը եւ նրա ուրիշ ամրոցները։ Եվ այնպես խորտակեց դրանք, որ մինչեւ իսկ հետքեր չէին երեւում, որպես թե բնավ չեն եղել։ Եվ շատ ոսկի ու արծաթ առավ նրանից, որը հազիվ ազատվեց։ Մեծամեծ ավազանին ոչ մի բանով չկարողացավ նրան օգնել. այնպես ահաբեկել էր բոլոր տեսողներին»[2]։

---

1 Նույն տեղում, էջ 285։

2 Նույն տեղում, էջ 313։

Շուտով մեռավ Բուղան։ Սակայն կենդանի էր Արղունը, որ Բուղայից պակաս նենգավոր չէր եւ Ջալալի դեմ ուներ հատուկ թշնամանք, որը եւ պետք է ճակատագրական դեր խաղար Խաչենի իշխանաց իշխանի համար։

Հասան-Ջալալը դիմեց Գույուկ մեծ խանին փոխարինած Բաթու խանի որդի Սարթախի օգնությանը։ Քրիստոնյա էր Սարթախը եւ պատրաստ էր ամեն կերպ օգնել իր հավատակիցներին։ Այս հանգամանքից բացի, Սարթախի, ինչպես նաեւ նրա հոր՝ Բաթու մեծ իշխանի միջեւ կային հակասություններ, որոնք Սարթախին ստիպում էին բարեկամություն հաստատել մեծ խանի ու դրածոներից դժգոհ հպատակ իշխանավորների հետ։

Կիրակոս Պատմիչը համակրանքով է խոսում Սարթախի մասին՝ պատմելով այն բարեգործությունները, որ կատարում էր երիտասարդ մոնղոլ խանը՝ ի նպաստ քրիստոնյա եկեղեցու եւ հոգեւորականների, ամեն կերպ օգնելով նաեւ բոլոր նրանց, ովքեր որեւէ խնդրանքով կամ բռնակալներից նեղված՝ դիմում էին իրեն։

Սարթախը Հասան-Ջալալին ընդառաջեց սիրով ու պատրաստակամությամբ եւ ուղեկցեց իր հոր՝ Բաթուի մոտ։ Խաչենի իշխանաց իշխանը մեծ զորավարի մոտ էր գնացել մի պատկառելի շքախմբով, որի կազմում էին Խաչենեցի ուրիշ իշխանազուններ ու մեծազգի հոգեւորականներ՝ ծերունի Գրիգոր Տղան (հեջուբ Գրիգորը), երիտասարդ իշխան Դեսումը, վարդապետ Մարկոսը եւ եպիսկոպոս Գրիգորը։

Ովքե՞ր էին Հասան-Ջալալի շքախմբի անդամները։ Այս հարցին անհրաժեշտ է պատասխանել փոքր-ինչ հանգամանորեն, որովհետեւ հետազոտողների կողմից այն արժանացել է տարբեր, իրար հակասող պատասխանների։

Գրիգոր հեջուբը («հեջուբ»-իշխանական տան կառավարիչ, սենեկապետ, իշխանազունի դաստիարակ ու խնամակալ), որ Ներքին Խաչենի տեր Վախտանգի եղբայր Սմբատի որդին էր, XII դարի վերջից Իվանե Զաքարյանի տան կառավարիչն էր եղել, նրա որդի Ավագի խնամակալն ու օգնականը, որպիսի պաշտոնում մնաց մինչեւ թաթար-մոնղոլների արշավանքների շրջանը։ Այդ նա էր, որ Ավագի անունից բանախոս գնաց ասպատակիչների հրամանատար Զարմաղանի մոտ։ Սակայն սրանից հետո վերադարձավ Խաչեն եւ ծառայության մտավ Հասան-Ջալալի մոտ, Հասան-Ջալալի, որն իր հորեղբոր որդին էր, մերձավոր հարազատը եւ մոնղոլների անիրավությունները դիմակայելիս կարիք ուներ մի այնպիսի փորձառու քաղաքագետի, որպիսին Զաքարյանների տան 60-ամյա կառավարիչ Գրիգոր Տղա հեջուբ Խաչենեցին էր։ Սա արդեն 1247-ից հետո էր, երբ թեպետ հին սովորությամբ Գրիգորին Տղա (երիտասարդ) էին կոչում, սակայն բավական ծեր էր։ Գոշավանքում ու Մեծառանից Սուրբ Հակոբավանքում թողած նվիրատվական արձանագրություններից հայտնի է, որ Գրիգոր հեջուբը զավակ չի ունեցել, իշխանազունի իրավունքով ժառանգություն ստացած հարստությունն ու իր ստեղծած ունեցվածքը նվեր է տվել հայրենի օջախներին, իսկ խոր ծերության մեջ էլ հանձն առավ դժվարին մի ճանապարհորդություն դեպի մոնղոլ մեծ խանի նստավայրը, որպեսզի օգնական լինի բռնակալներից խոշտանգվող հայրենիքին։

Հասան-Ջալալի շքախմբի մյուս անդամ Դեսումը Ներքին Խաչենի իշխանական

տան երկրորդական, սակայն Արեւելյան Հայաստանում ազդեցություն ունեցած, խընամական կապերով իշխանական տարբեր տների հետ կապված ճյուղի ներկայացուցիչն էր, Կիրակոս պատմիչի կողմից որակված *«պարկեշտ պատանի»* շոյիչ խոսքով։

Վարդապետ Մարկոսը նշանավոր հոգեւորական գործիչ էր, Վանական Վարդապետի աշակերտը, Կիրակոս Գանձակեցու, Վարդան Վարդապետի ու Գրիգոր Ականցի պատմիչի մտերիմը։

Գրիգոր եպիսկոպոսը եւս ժամանակի երեւելի մարդկանցից մեկն է եղել։ Նա ոչ միայն Դադիվանքի առաջնորդն էր, այլեւ, ինչպես ուսումնասիրողներն են նկատել, այն Գրիգոր Ականցի պատմիչն էր, որ գրել է «Պատմութիւն վասն ազգին նետողաց» երկը[1]։

Եվ, այսպե՛ս, Հասան-Ջալալ իշխանն իր պատկառելի շքախմբով ուղեւորվեց թաթար-մոնղոլների խան Բաթուի մոտ։

Կիրակոս Գանձակեցին չի նշում Բաթուի նստավայրի անունը, սակայն լրացուցիչ տվյալներից պետք է ենթադրել, որ այն եղել է այժմյան Աստրախանի տեղում գոյություն ունեցած Իթիլ քաղաքը։

Հասան-Ջալալը Բաթու խանի նստավայրը հասավ իր մոնղոլ բարեկամ Սարթախի ուղեկցությամբ, եւ դա, հավանաբար, բարերար ազդեցություն ունեցավ գործի ընթացքի վրա. Բաթու խանը մեծ պատվով ընդունեց Հասան-Ջալալին, ունկնդրեց գանգատն ու ցանկությունները եւ նրան վերադարձրեց հայրենի բոլոր տիրույթները, հաստատեց նրա գերազահ իրավունքները, ինչպես նաեւ բարձր արտոնությունները ինչպես խաչենի բնակչության, այնպես էլ երկրամասի հոգեւորականության ու նրա կաթողիկոսության նկատմամբ։ Այսքանն արդեն բավարար հիմք էր, որ նա վերադարձի ճամփան բռներ մեծ հույսերով ու ակնկալություններով։

Սակայն այս անգամ եւս խաչենի տերը չպետք է վայելեր մոնղոլ տիրակալի ողորմածությամբ տրված անդորրությունը։ Հայրենիք հասավ թե չէ, Արղունը վերստին նորոգեց իր սադրանքները։

Արղուն բռնավորի չարությունները յուրովի հիմք ունեին։ Նվաճված երկրի մի շարքային իշխան, որ պարտավոր էր գլխահակ ենթարկվել իրեն եւ, եթե որեւէ արտոնություն էր պետք, խնդրեր իրենից, ահա Բաթու խանի մոտ իր դեմ գանգատի էր գնացել։ Եվ այդ գանգատի շնորհիվ հայ իշխանն ստացել էր արտոնություններ, որոնց առկայությամբ նսեմանում էր Արղունի դերը՝ որպես խանի կուսակալի ու գլխավոր հարկահանի։ Չէր կարող պատահել, որ հարեւան հայ ու այլազգի իշխանավորները եւս, Հասան-Ջալալի օրինակին հետեւելով, չբողոքեին կամ չհրաժարվեին ենթարկվել Արղուն հարկահանին։ Այս պատճառով էլ Արղունը պիտի Հասան-Ջալալի դեմ նորոգեր ու բորբոքեր իր հին ատելությունը, սկսեր նոր հալածանքներ, նրա վրա դներ անտանելի հարկերի այն բեռը, որից հետո խեղճ խաչենեցուն ոչինչ չէր մնա, քան

1 Հայ հեղինակները «Նետողաց ազգ» են կոչել թաթար-մոնղոլներին, որոնց միակ զբաղմունքն են տեսել նետ ու աղեղ գործածելը։

ձեռք առնել մի ավելի մեծ ու ծանր ճանապարհորդություն դեպի հեռավոր Մոնղոլիա՝ մեծ խանի մոտ, որը նստում էր Կարա-Կորում մայրաքաղաքում։

Պատմական աղբյուրների տեղեկություններում չի կարելի չնկատել մոնղոլ խաների ու խաքանի (մեծ խանի կամ թագավորի) երկդիմի քաղաքականությունը։ Նրանք ամեն անգամ իրենց ոտքը գնացող իշխանավորների հնազանդության երդումին պատասխանում էին մեծամեծ ընծաներով, պարգևում զանազան արտոնություններ, անմիջապես էլ նրանց երկրներն ուղարկելով իրենց կուսակալներին ու հարկահաններին՝ ամենաանսահմանափակ իրավունքներով եւ լիազորություններով։

Այսպես եղավ նաեւ Հասան-Ջալալի հետ։ Արտոնած բարձր պատիվներով ու իրավունքներով խանը նրան ճանապարհ էր դրել, իսկ հետեւից էլ եկել էին նոր հարկահաններ՝ առավել անագորույն ծրագրերով ու լիազորություններով։

Հասան-Ջալալը մոնղոլ մեծ խանի մոտ էր ճանապարհվել 1255 թ., կնոջ՝ Մամքանի եւ միակ տղա Աթաբակի հետ։ Այս անգամ եւս նրա հետ էր մոնղոլ բարերար Սարքախը։ Այս ճանապարհորդությունը տեւեց ուղիղ հինգ տարի՝ մինչեւ 1260 թվականը։

Խաչենի իշխանը Մանգու մեծ խանին գանգատվել էր իր վիճակից, բողոքել նրա ոստիկան Արղունի դեմ։ Եվ խանը նրան վերադարձրեց ավատապետի տոհմական իրավունքները, մի այնպիսի արտոնություն, որի վրա չպիտի բռնանար ոչ մի պաշտոնյա։

Հասան-Ջալալի բախտը կարծես պիտի բացվեր, քանի որ Մանգու մեծ խանը նրա հետ գնացած Սարքախին եւս ընդունեց ամենայն սիրով, վախճանված հոր տեղ նրան նշանակեց Հյուսիսի ու Կովկասի կուսակալ, պարգևելով իր առաջին տեղակալ *(«երկրորդ իր»)*։

Ասում են՝ Հասան-Ջալալի գանգատից հետո Մանգու մեծ խանը հետ է կանչել Արղունին եւ կալանքի տակ առել։ Սակայն մեկ էլ հայտնվել է Արղունի հետ բարեկամացած Սմբատ Օրբելյանը, որի ցուցմունքով էլ Արղունն ազատվել է։

Դժբախտաբար, հետագա դեպքերը դասավորվեցին ի վնաս Խաչենի մեծ իշխանի։ Նախ՝ նա կորցրեց իր բարեկամ ու հովանավոր Սարքախին. վերջինս վերադառնալուն պես վախճանվեց հարազատների տված մահադեղից։

Հասան-Ջալալը վերադարձի ճանապարհին ուշացավ Թավրիզում։ Մամքանին ու Աթաբակին նա ուղարկել էր հայրենիք։ Վերադառնալով՝ կնոջը գտավ վախճանված։

Կարծես անձնական դժբախտությունը քիչ էր, դրան էլ գումարվեցին իր պաշտոնում վերականգնված Արղունի նոր դավերը։

1260-ին Վրաստանում բռնկվել էին հակամոնղոլական ընդվզումներ, որոնց մասնակից էին Վիրքի թագավոր Դավիթը, շատ իշխաններ, նրանց հետ էլ՝ հայ Զաքարյանները՝ Զաքարե ամիրսպասալարի որդի Շահնշահի գլխավորությամբ։ Հասան-Ջալալը միացավ ապստամբներին՝ ուրիշ ոչ մի փրկություն չտեսնելով Արղունի ու նրա խաժամուժի սադրանքներից։

Կատաղած մոնղոլ բռնավորները դաժանորեն ճնշեցին ապստամբությունը։ Ար-

ղունը կալանքի տակ առավ ապստամբության ղեկավարներին, որոնց մեջ էին եւ Շահրնշահն ու Հասան-Ջալալը։

Ապստամբներից ոմանք ծանր փրկագնով ազատվեցին բռնավորի ձեռքից։ Իսկ Հասան-Ջալալը դեռ պիտի ենթարկվեր անլուր տանջանքների։ Արղունը նրանից պահանջում էր անհնար մի փրկագին։ Եվ չստանալով իր պահանջածը՝ ***«Եղեալ փայտ ի պարանոց նորա եւ երկաթ յոտս նորա»***, տարավ Ղազվին՝ տաժանակրության։

Հասան-Ջալալի դուստր Ռուզուքանը, որ Զարմաղանի որդի Բորա-նոյինի կինն էր, շտապեց Հուլավուի կին Տողուս խաթունի մոտ, որպեսզի նրա միջնորդությամբ հորը փրկի Արղունի ձեռքից։ Այս մասին իմացավ Արղունը եւ փութով դատաստան տեսավ. հոդակոտոր անելով սպանել տվեց Հասան-Ջալալին։

Կիրակոսն ու Վարդանն այսքանից հետո սրբացնում են Խաչենի իշխանին՝ պատմելով, որ, իբր, Ղազվինում մի պարսիկ Հասան-Ջալալի մարմնի մասունքների վրա իջած լույս է տեսել, եւ, հավատացած նրանց սրբությանը, լցրել է ցամաք ջրհորի մեջ ու պահել։ ***«Այլ եւ բերողքն նշխարացն տեսին եւ ճանապարհի զնոյն տեսիլ լուսոյն եւ վերա նշխարացն»։***

Աթաբակը նահատակված հոր մասունքները տեղափոխեց հայրենիք եւ թաղեց իրենց տոհմական գերեզմանատանը՝ Գանձասարի վանքի արեւմտյան բակում, ուր այդ ժամանակ կառուցվում էր վանքի գավիթը՝ իշխանական տոհմի տապանատունը։

Այս նույն տարում (1261) Հուլավուն էլ մահապատժի էր ենթարկել ամիրսպարսալար Շահնշահի որդի Զաքարեին։

Հասան-Ջալալի նահատակությունն, ուրեմն, տեղի է ունեցել 1261 (ՉԺ) թվականին։

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԻ ՏԻՏՂՈՍԸ ԵՎ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Բազմազան են այն տիտղոսները, որոնցով կոչվել է Խաչենի տերը։ Դրանք կարելի է դասդասել հետեւյալ խմբերով.

ա) ***«Իշխան Խաչենոյ», «տէր Խաչենոյ», «տէր Խոխանաբերդոյ եւ Խաչենոյ», «մեծ իշխան»։*** Սրանք բոլորն էլ հաստատում են, որ Հասան-Ջալալը Խաչենի իշխանն է։

բ) ***«Ինքնակալ իշխանաց իշխան, տէր Խաչենոյ», «իշխանաց իշխան արքայաշուք»։*** Առաջինը՝ Գանձասարի մեծ արձանագրությունից, երկրորդը՝ Վարդան Վարդապետի տվածը։ Այս տիտղոսներից պետք է եզրակացնել, որ Հասան-Ջալալը գահերեց էր Խաչենի (ինչպես Ներքին Խաչենի, այնպես էլ Վերին Խաչեն-Ծարի ու Հաթերքի) իշխանների մեջ։ Սա հաստատվում է, մանավանդ, հաջորդ տիտղոսով, որ է՝

գ) ***«Մեծ իշխան Խաչենոյ եւ կողմանցն Արցախոյ»։*** Այստեղ հաստատապես նկատի է առնվել բուն հին Արցախի տարածքը, եւ այդ տարածքի վրա տիրություն անողների մեջ՝ Հասան-Ջալալի գահերեցությունը։ Մանավանդ, երբ կա նաեւ տիտղոսների մի այլ խումբ, որից ուրիշ եզրակացության հանգել անհնար է։

դ) ***«Մեծ կողմնակալ Աղուանից», «իշխան Խաչենոյ եւ Ղռանա», «բնակաւոր ինքնակալ... եւ թագաւոր»։*** «Աղուանքն» ու «Առանը» այստեղ նույնիմաստ լինելով հանդերձ՝ գործածված են իրենց ետնագույն առումներով, այսինքն՝ դարձյալ նշանակում են Արցախը՝ հարեւան հայկական գավառների հետ միասին։

Ինչ վերաբերում է «թագաւոր», «արքա», «ինքնակալ» տիտղոսներին, ապա, նախ, առկա էր Խաչենի իշխանական տոհմի ներկայացուցիչների արդար հավակնությունը։ Նրանք զտարյուն ժառանգներն էին Առանշահիկ այն տոհմի, որը երկու անգամ թագավորություն է վերահաստատել բռնակալ տերությունների ափցանի մեջ՝ մեկ Վաչագան Բարեպաշտի ձեռքով, մեկ էլ՝ Համամ Բարեպաշտի։ Եվ եթե նրանց օրինական ու հարազատ ժառանգ Հասան-Ջալալն իրեն կոչում է ***«բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի եւ թագաւոր յոքնասահման նահանգաւք»*** (տե՛ս Գանձասարի շինարարական արձանագրությունը), դրա մեջ տարօրինակ ու սխալ ոչինչ չպետք է տեսնել։

Սակայն «ինքնակալ» եւ «թագաւոր» տիտղոսները Հասան-Ջալալին բնութագրում են նաեւ որպես մի իշխողի, որն անկախ էր ժամանակի հայկական միջավայրում եւ միայն վասալական կախման մեջ էր թաթար-մոնղոլական բռնապետությունից։

Որ Հասան-Ջալալի «թագաւոր» տիտղոսը միայն կրողի անձնական հավակնության արդյունքը չէր, դա ապացուցվում է աղբյուրների տվյալներով։ Գտնված է մի արձանագրություն (խանչալ-խաչ կոչված վայրից, 1216 թ.), որը նրան հիշում է «արքա» տիտղոսով։ 1229 թ. Ապարանից Խաչեն եկած ոմն Տիրածայր Բերդաձորի Ս. Գրիգոր եկեղեցում քանդակած իր արձանագրության մեջ նրան հիշում է իբրեւ ***«Բարեպաշտ արքային Ջալալին»։*** Հեջուբի որդի Սմբատը ***«թագաւոր Ջալալայ Դավլին հրամանով»*** նվիրատվություններ է արել Մեծառանից Ս. Հակոբա վանքին։ Մի ուրիշ արձանագրության մեջ, որ գրված է, հավանաբար, երկրամասի իշխանների անունից, Հասան-Ջալալը կոչված է ***«արքայ Ջալալ Դաւլա»։***

Հասան-Ջալալին արքա կամ թագավոր են կոչում ոչ միայն հայկական աղբյուրները։ Հասան-Ջալալի օրերի պարսիկ մի անանուն ժամանակագրի տեղեկությամբ՝ ***«Խաչենը դժվարամատչելի մարզ է, լեռների ու անտառների միջեւ։ Այն Առանի նահանգներից է։ Այնտեղ հայեր են*** [բնակվում]։ ***Արխազի*** (Վիրքի) ***մարդիկ նրանց փաղիշահին կոչում են թագավոր»***[1]։

Այսպիսով, պարզեցինք, որ Հասան-Ջալալը 1214-1261 թթ. հանդիսացել է ամբողջ Խաչենի, դեռ ավելին՝ հին Արցախի իշխանաց իշխանը կամ իր խոսքով ասած՝ ***«բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի եւ թագաւոր յոքնասահման նահանգաւք»։***

Սրանով էլ ընդհուպ մոտենում ենք Հասան-Ջալալի տիրապետության կոնկրետ սահմանները որոշելուն։

---

1 Н.Д. Миклухо-Маклай, Географическое сочинение XIII в. на перс. языке. "Ученые записки института Востоковедения", т. IX, Л., 1951, стр. 204.

Ինչպես տեսանք, աղբյուրները նրան ներկայացնում են որպես ոչ միայն ամբողջ Խաչենի, այլեւ Արցախի, ապա նաեւ Աղվանքի կամ Առանի մեծ իշխանի կամ թագավորի: Կոնկրետ աշխարհագրական կետերի մասին խոսելիս եւս հաստատվում է այս պարագան: Ահա՛, օրինակ, այն բերդերը, որոնց թվարկումով Կիրակոսը Հասան-Ջալալի տիրույթների մի ծայրը հասցնում է Ծար գավառը, մյուսը՝ Հաբանդ: Հասան-Ջալալը կարողանում է ետ ստանալ ***«զՀայրենիս իւր զՋարաբերդ եւ զԱկանայ եւ զԿարկառն»***: Ջարաբերդը նույն Ջրաբերդն է Խաչենի կենտրոնում, Թարթառ գետի եւ նրա վտակ Թրղիի արանքում:

Կարկառն անսխալ տեղադրել հիմա անհնար է, որովհետեւ ո՛չ ավանն է պահպանվել, ո՛չ էլ նրա մասին որեւէ ուրիշ տեղեկություն: Սակայն Կարկառ անունը ենթադրել է տալիս, որ այն պետք է կապված լինի համանուն գետակի հետ, որի ստորին ավազանը հին Հաբանդ գավառի արեւմտյան մասն է ընդգրկում, հետեւապես եւ դուրս է Խաչենից, որովհետեւ Խաչենը հարավում ու արեւելքում ավարտվում է վաղ շրջանի Մեծառանք գավառով:

Վրացական մի աղբյուրի տեղեկության համաձայն՝ Կարկառը ոչ միայն քաղաք է, այլեւ գավառ եւ ընկած է Խաչենի ու Բայլականի միջեւ: Իսկ սա Կարկառ գետի ստորին ավազանն է, այժմյան Աղդամի շրջանի հարավային մասը եւ Մարտունու շրջանի այն տարածքը, որ սկսվում է նրա հյուսիս-արեւմտյան ծայրից եւ վերջանում Ամարասի մոտերքում:

Ականա բերդավանը Վերին Խաչենի տարածքում էր գտնվում, հին Վայկունիքի կամ այս ժամանակների Ծարի կենտրոնական մասում:

Ուրեմն, այս տարածքի մեջ էր գտնվում Ականան, եւ Հասան-Ջալալն էլ նրա տերն էր՝ ըստ Կիրակոսի արժանահավատ վկայության:

Կիրակոսի տեղեկության մեջ կա նաեւ մի այլ նուրբ հանգամանք. Հասան-Ջալալը ետ էր վերցրել իր վերոհիշյալ բերդաքաղաքները, ***«որոնք նրանից նախապես հանել էին Թուրքաց ու վրաց ազգերը»***: Թուրքմենները խլել էին Արցախի հարավային ու արեւելյան մասերը, հավանաբար Կարկառն իր շրջակայքով, քանի որ այս տեղերն էին, որ միշտ ենթակա էին Գանձակի ամիրայի ասպատակություններին: Կիրակոսը ***«վրացի»*** ասելով, նախ, հասկանում էր Վրաց արքունիքի առաջին մարդուն՝ Իվանե ամիրսպասալարին, որը, ինչպես Վարդանն է վկայում, Միջնարցախի իշխանաց իշխան Վախտանգի մահից հետո յուրացրել էր նրա տիրույթների մի զգալի մասը. ***«Եվ մեծ Իվանեն՝ քաջարութեամբ հռչակված, առավ Ջարեքն ու նրա բոլոր շրջականները»***[1]:

Պարզ է, որ այս ***«բոլոր շրջակաների»*** մեջ է մտել նաեւ Միջնարցախից ձեռք ձգած տարածքը, որը եւ Հասան-Ջալալը ետ է ստացել:

Ամփոփելով այս տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ Հասան-Ջալալն ամբողջ Արցախի գահերեց իշխանն էր, նրա տիրույթները տարածվում էին Ծարից մինչեւ Մուխանք, Թարթառի հյուսիսային եզերքներից մինչեւ Արաքսի հոսանքը, եւ ժամանակակից-

1 Վարդան, էջ 140:

ներն ընդունում էին նրա անկախությունը՝ պատվելով *«արքա»*, *«թագաւոր»*, *«ինքնակալ»* տիտղոսներով։

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ XIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍՈՒՄ

Հասան-Ջալալի միակ արու զավակն էր Իվանեն կամ Աթաբակը, որը պետք է ժառանգեր հոր իշխանությունը։ Եվ հենց նա էլ Ներքին Խաչենի իշխանությունը տնօրինեց՝ *«Հրամանաւ Հուրաւուին եւ Արղունին»։*

Հայրն Աթաբակին իշխանական աթոռի համար նախապատրաստել էր վաղ մանկությունից։ Հենց միայն այն փաստը, որ մոնղոլ մեծ խանի մոտ՝ Կարա-Կորում գնալիս նա իր հետ վերցրել էր նաեւ որդուն, շատ բան է ասում։ Հասան-Ջալալն, անկասկած, դրանով որդուն հեռացրել էր Արղուն բռնակալի չարություններից։ Սակայն, միաժամանակ, իր իշխանության վաղվա մտահոգությունն ունեցող իշխանապետը երիտասարդ որդուն պիտի ծանոթացներ թաթար-մոնղոլական աշխարհակալության կարգ ու կանոնին, պետական վարչաձեւին, ենթարկեր երկար ու ծանր ճանապարհի փորձություններին։

1261-ին նահատակված հորից հետո Աթաբակը դարձավ Խաչենի իրական իշխանը։ Պատշաճում էր, որ նա ժառանգեր ոչ միայն հոր թողած իշխանությունը, այլեւ շինարարական եռանդը։ Սակայն նա միայն ավարտեց հոր հիմնադրած զավթի շինարարությունը։ Այդ զավիթով Գանձասարի վանքի ճարտարապետությունն ավարտվեց ու ամբողջացավ։

Պատմությունն այլեւս չի հիշում ուրիշ որեւէ մեծագործություն, որ կապված լինի Աթաբակի անվանը։

Սակայն 1271, 1276 եւն թվականներից կան արձանագրություններ, որոնցում նշվում են նրա իշխանությամբ Գանձասարին տրված ընծաները։ Նշանակում է՝ Գանձասարի իշխանն ու պարոն-տնօրենը, իրենց տոհմական տապանատան բարվոք վիճակն ապահով պահելու համար, չէր խորշում եւ մարդկանցից հարկադրական *«նրվերներ»* առնելուց։

Կիրակոս պատմիչն, անկասկած, Գանձասարի հանդեպ ցուցաբերած այս արտակարգ հոգատարությունը նկատի ուներ, ինչպես նաեւ վանքի փառավոր զավթի շինարարությունը, երբ Աթաբակին բնութագրում էր գովական խոսքով. նա էր *«այր սրբասնունդ, պարկեշտ եւ խոնարհամիտ եւ աղօթական, որպէս զմի ի սուրբ միայնակեցաց, զի ծնողքն նորա այսպէս սնուցին զնա»։*

1282 թ. *«իշխանութեամբ Աթաբակին»* Գանձասարում իր նվիրատվությունն է արձանագրել Ամարասի եպիսկոպոս Ներսեսը։

Աթաբակի գործունեության մասին ուրիշ հիշատակներ չկան։ Ստեփանոս եպիսկոպոսի ժամանակագրության համաձայն՝ նրա մահը տեղի է ունեցել ՉԼԶ (1287) թվականին. *«Զմեռն խիստ եղեւ. մեռան մեծ իշխանք ի Խաչէն՝ Աթաբակ*

որդի Ջալալին եւ Հասան թոռն Դաւիթին»։ Ուրեմն, նույն ծանր ձմռանը մահացան Աթաբակը եւ Խաչենի իշխանության մյուս ճյուղի՝ Ծարա տեր Հասանը։

Աթաբակի պես, թերեւս նրանից էլ առավել, Հասան-Ջալալի ու Մամֆանի բարեմասնությունները ժառանգել էին դստերը, որոնցից երկուսը՝ Մամա խաթունը եւ Մինա խաթունը արժանի են առանձնահատուկ ուշադրության։ Երրորդի՝ Ռուզուֆանի մասին միայն այնքանն է հայտնի, որ ամուսնացել էր մոնղոլ կուսակալ Զարմաղանի որդի Բորա-նոյինի հետ եւ փորձեց Արղունի ճանկն ընկած հորն ազատել Տողուս խաթունի միջոցով, սակայն ապարդյուն։

Մամա խաթունը մանազկերտցի նշանավոր վաճառական, մեծահարուստ, մանավանդ մոնղոլների հետ գործնական հարաբերություններ ունեցող Ումեկի կինն էր։ Ումեկին ու նրա ամբողջ տոհմին կապել էր Խաչենի հետ, բարեգործական զանազան ձեռնարկներով, մանավանդ թանկագին նվիրատվություններով օժանդակել նահանգի հոգեւոր ու մշակութային կյանքի առաջընթացին։ Մամա խաթունը բարեպաշտ հոր ու երանելի մոր ոգով էր դաստիարակել իր արու զավակ Վախտանգին, որն ինքն էլ դարձել էր համահայկական մշակույթի հովանավոր։ Հայտնի են նրա ու Հովհաննես Երզնկացի մեծ մտածող-գիտնավորի բարեկամությունը եւ Վախտանգի հոգածությամբ ստեղծված ձեռագիր մատյանները։

Հասան-Ջալալի մյուս շառավիղն էր Մինա խաթունը՝ հարս գնացած Սյունիքի Օրբելյան իշխանական տունը։ Ստեփաննոս Օրբելյանը բավական մանրամասն ներկայացնում է նրա հետ իր հոր երկրորդ ամուսնությունը՝ մոր (Արուզ խաթունի) կենդանությամբ։

Մինա խաթունի համար Խաչեն խնամախոսության էր եկել փեսա Տարսայիճ Օրբելյանի բարեկամ Վրաց Դավիթ թագավորը։ Տարսայիճից ու Մինա խաթունից ծնվել են Ջալալը եւ Ասփա ու Մամֆան դուստրերը։ Հոր ու մոր բարեկիրթ դաստիարակությունը նրանց միշտ էլ կապված էր պահում Խաչենին, նրա հոգեւոր կենտրոններին։ Ասփային ամուսնացրին Վերին Խաչենի իշխանական տան ժառանգ Գրիգորի հետ, իսկ Մամֆանին հարս տարան Վրաց արքունիք։

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Հնագույն ժամանակներից պահպանվել են ստույգ տեղեկություններ Արցախական աշխարհի տնտեսական հզորության մասին։ Նյութական մշակույթի հուշարձանները հաստատում են, որ երկրամասի տարածքում, հատկապես նրա դաշտային ու նախալեռնային մասերում անհիշելի դարերից ի վեր զբաղվել են հողագործությամբ, այգեգործությամբ ու շերամապահությամբ։ Այստեղ բարձր զարգացման է հասած եղել արհեստագործությունը, որի մի շարք տեսակների արտադրանքի պահպանված նմուշներն այսօր էլ հիացմունք են պատճառում։

Մարզպանության շրջանին վերաբերող աղբյուրների տեղեկություններից դատելով՝ Հայոց արեւելից կողմանց, ուրեմն եւ Արցախի տարածքում կարելի էր հանդիպել

«տեսակ-տեսակ արհեստագործների, որոնք ունեին ոսկեծնության, արծաթահալության, երկաթահանության հմտություններ»[1],

Գրավոր պատմության այս մեծարժեք տեղեկությունը հաստատվում է ոչ միայն նյութական մշակույթի համապատասխան մնացորդներով, այլեւ բազմաթիվ այն հանքավայրերի առկայությամբ, որոնց երբեմնի շահագործման մասին են վկայում ժողովրդական ավանդությունները, ինչպես նաեւ հենց այդ հանքավայրերի թռուցիկ ուսումնասիրությունը: Դրանցից են՝ Սոդք-Զոդի ոսկու հանքերը, Գանձասարի փակված արծաթահանքի խորշերը, Մեհմանայի բազմամետաղ հանքավայրն ու Մռավի լանջերի մի շարք կետեր, ինչպես նաեւ Թաղավարդի արճճահանքը եւ այլն:

Արաբական աղբյուրները հիացմունքով էին խոսում Հայոց արեւելից կողմանց արհեստագործական ապրանքների մասին. *«Նրանց արտադրած պարանների ու գորգերի, որդան կարմիրի, ծածկոցների ու ներկերի նման ոչինչ չկա»*,-գրել է X դ. արաբ մատենագիր Ալ-Մուքադդասին[2]:

Արաբական տիրապետության ժամանակներում գործում էր Դվին-Պարտավ տարանցիկ առեւտրական ճանապարհը, որի վրա ծաղկել էին մի շարք կայան-գյուղաքաղաքներ՝ Բերդկունքը՝ Սեւանա լճի արեւմտյան ափին, հետագայի Աղկալա գյուղի տեղում, Սիսաջան-Սիսական կայանը, Սոդքը (համանուն գավառի կենտրոնը), Հաթերքն ու Կաղանկատույքը: Պետք է կարծել, որ դրանցից Սոդքն ու Հաթերքը, որպես հնուց ի վեր իշխանանիստ ավաններ, առանձնակի բարեկարգ վիճակ են ունեցել:

Սակայն արաբ եւ հայ հեղինակների նշած ուղեգծի վրա կային նաեւ ուրիշ բնակավայրեր: Օրինակ, Ծարը՝ Սոդքի ու Հաթերքի արանքում, Կարկառը՝ Կարկառ գետի ստորին ավազանում եւ ուրիշներ, որոնք պակաս դեր չունեին, քան նշվածները: Հավանական է, որ հիշյալ ուղեգծի հետ անմիջական կապ ունեցած լինի նաեւ Ներքին Խաչենի առեւտրական համբավավոր կենտրոն Վանաձոր ավանը, որի մասին պահպանվել են վիմագրական ու մատենագրական տեղեկություններ:

Ամենայն հավանականությամբ Խաչենի Վանաձոր ավանի անունն այդ բառից է առաջացել, քանի որ Խաչենի տերերն իրենց կենտրոն էին դարձրել այն վայրը, ուր կիրակնօրյա տոնավաճառներ էին կազմակերպվում: Հնարավոր է, որ վանաձոր ավանի տերերին բերելիս լիներ նաեւ մեծամեծ եկամուտներ: Դրա ցայտուն ատահայտություններից է Վանաձորի տեր Հասան-Ջալալի ու նրա կին Մամքանի մի արձանագրությունը՝ քանդակված Կեչառիսի վերանորոգման առթիվ, ուր նրանք գրում են, թե վանքին *«տուաք յամեն ամի համարէն Վանաձորէն Խ (40) դրամատ»*:

Արցախի գյուղատնտեսական բարձր մակարդակը վկայող փաստերից կարելի է նշել ոռոգման սիստեմի առկայությունը ինչպես Թարթառի ստորին հովտում, այնպես էլ Երասխից հանված առուների ցանցը Մուխանք գավառում: Թուրքական ցեղերը, Մուխանք թափանցելով, տեսան այնտեղ տարածված ջրանցքների սիստեմը եւ այն կո-

---

1 «Պատմություն Աղուանից Աշխարհի», գիրք Բ, գլ. ԺԶ:

2 СМОПК, вып. 38, стр. 75.

չեցին «Գյավուր արխ» («Անհավատների ջրանցք»), մի անուն, որով մինչեւ օրս էլ կոչվում է Մուղանի դաշտը։

Արցախական աշխարհի հայությանը բախտ էր վիճակվել օրրան ունենալու բարեբեր մի երկրամաս, որտեղ ամեն ինչ կար ապրելու շեն ու լի կյանքով, զարգացնելու տնտեսության ու մշակույթի բազմաթիվ բնագավառներ, միշտ եւ բոլոր պայմաններում գտնվելու իր մայր ժողովրդի ավելի շատ զարգացած հատվածների տնտեսական ու քաղաքակրթական մակարդակի վրա։

Սակայն նույն բախտը, ցավոք, այդ երկրամասը դրել էր բոլոր ժամանակներում ամենից բանուկ այն ճանապարհների վրա, որոնցով Այսրկովկաս էին թափանցում օտար բռնագրավիչները՝ թե Պարսկաստանից ու շրջականներից եւ թե Հյուսիսային Կովկասից ու միջինասիական տափաստաններից։

Մարզպանության հաստատումից ի վեր Արցախի արեւելյան գավառները, հատկապես Մուխանքը, ոտքի կոխան էին դարձել եկվոր հորդաների սմբակների տակ։ **XIII** դարում այդ բարեբեր դաշտն անդարձ կտրվեց Արցախից եւ հետագայում այնպես ավերվեց ու ամայացավ, որ դարձավ միայն օձերի ու կարիճների բնակավայր։

Թաթար-մոնղոլական խաժամուժի Մուխանք-Մուղան մտնելը մեր հեղինակների (Կիրակոս, Գրիգոր Պատմիչ) կողմից նկարագրվել է որպես երկնահաս աղետ։ Կիրակոսը մռայլ գույներով նկարագրում է, թե ինչպես Մուխանք բերրի ու արգավանդ դաշտը, որ առաջներում սնում էր Արցախի եւ Ուտիքի բնակչությանը, իրենց օրերում ոչ միայն անդարձ կտրվեց նրանցից, այլեւ այնտեղ խփված խորանների պատճառով դարձավ մի որջ, որտեղ բանական վաչկատունները ձմեռում էին տաք ու ապահով՝ զարնանը ***«ասպատակելու եւ աւերմամբ»*** հայկական գավառների վրա շարժվելու համար։

Հայ բնակչությունն իր երկրի լեռնային շրջաններն էր քաշվում, ապավինում անմատչելի ձորերին ու լեռնածերպերին՝ կտրելով իրեն սնունդ պարգեւող դաշտերից ու այգեստաններից։

ԱՇԽԱՏԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Ինչպես մոնղոլական տիրապետության շրջանում, այնպես էլ նրանից առաջ՝ Զաքարյանների իշխանապետության օրոք, իսկ ավելի վաղ՝ սելջուկ-թուրքերի ասպատակությունների տասնամյակներում հայ աշխատավոր ժողովուրդը գտնվում էր տնտեսական ու իրավական անմխիթար վիճակում։ Դժբախտաբար եղած բոլոր մատենագրական տեղեկություններն էլ դուրս են եկել հոգեւոր դասի ներկայացուցիչների գրչի տակից, իսկ հոգեւորական հեղինակները ժողովրդական խավերի կյանքն արտացոլում էին եկեղեցական շահերի տեսակետից։ Եվ ո՛չ միայն ժողովրդի կյանքը։ Բռնագրավիչներին անգամ նրանք ներկայացնում էին միայն ըստ այն վերաբերմունքի, որ առաջինները ցույց էին տվել եկեղեցու հանդեպ։ Այսուամենայնիվ, գոյություն ունեցող մատենագրա-

կան տեղեկություններից երևում է, որ հայ աշխատավորությունը եկվոր բռնակալների տիրապետության օրոք անհամեմատ ավելի ծանր վիճակում էր գտնվում, քանի որ նույնիսկ ամենատանելի բռնագրավիչը, բոլոր սովորական ու պարտադիր հարկ ու տուրքերի հետ միասին, եւ ամենից առաջ պահանջում էր ջիզյա, որն այլադավանության հարկն էր՝ ծանր ու նվաստացուցիչ։

Դառնալով ժողովրդի վիճակին ընդհանրապես՝ ընդունելի պիտի համարել տարածված այն կարծիքը, որի համաձայն՝ ամբողջ միջնադարում իշխող է եղել ճորտատիրական կարգը եւ այն էլ իր տարբերակներով։ *«Ճորտ եւ ճորտություն բառերը,*–Հակոբ Մանանդյանի կարծիքով,– *խիստ ճապաղ ու առաձգական գաղափարներ են, որոնց տակ հասկացվել են տնտեսական ու իրավական բավական տարբեր դրություններ։ Ճորտությունը հաճախ այնքան մեղմ է եղել, որ շատ քիչ է տարբերվել ազատ գյուղացիների դրությունից, իսկ երբեմն այնքան ծանր է եղել, որ շատ մոտ է եղել կատարյալ ստրկության»*[1]։

Վերջին վիճակը հաստատող բազմաթիվ օրինակներ կարելի է բերել հենց Արեւելյան Հայաստանի միջնադարյան իրականությունից։ Գյուղացիների մի զգալի մասն իշխանավոր տերերի սեփականությունն էր հանդիսանում՝ այնքան ինքնուրույնությունից զուրկ, որ տերը գյուղացուն կարող էր վաճառել կամ նվեր տալ՝ ո՛ւմ ուզենար։ Ճիշտ է, մեր մատենագիրներն այդպիսի երեւույթներ շատ քիչ են արձանագրել, սակայն վիմական արձանագրությունները՝ այդ համառ ու անջնջելի վկայությունները, մեզ ընծայում են նման երեւույթի բազմաթիվ փաստեր։ Եվ դրանց հիման վրա դժվար չէ պատկերացում կազմել միջնադարյան դաժան իրականության մասին։ Ինչպես Խաչենի տարածքից, այնպես էլ հյուսիս-արեւելյան Հայաստանի գավառներից հավաքված վիմագրական տասնյակ օրինակներ կարելի է բերել՝ հաստատելու այս իրողությունը։ Արգու խաթունը Դադի վանքի կաթողիկեն կառուցելուց հետո 1214 թ. մեծամեծ նվերներ է տվել եկեղեցուն, նրանց հետ՝ նաեւ *«երկու տուն* (ընտանիք - Բ. ՈՒ.) *յԱրփա»։*

Հաթերքի մեծ իշխան Հասանի որդի Գրիգորը 1224 թ. տվել է *«ի Դադի գերեզմանս* (իրենց տոհմական տապանատունը) *չորս տուն շինականս»։* Նույն թվականին Վախտանգի որդի Սակը (Ծարի տեր Հասանի եղբայրը եւ Դոփի տեղը) Վաղուհասի Կարմիր վանքին կուսակրոնության է տվել իր որդի Գրիգորին, հետն էլ՝ իր *«սրկած այգին ի Ճաքի իւր կատապանսքն»։*

«Կատապան» նշանակում է այգեպան։ Թվում է՝ նույն իմաստն ունի նաեւ «կոդբապան» բառը, որ օգտագործված է մի արձանագրության մեջ (արտագրված Զարեհ-տարի վանքի ավերակից)՝ հետեւյալ բովանդակությամբ. *«Կամաան Աստուծս այս գիր է Նորատինիս, որ տվի զԹատրանայի կոդբապան իմ հոգոյս»։*

Անկասկած է, որ Արցախի ու հայկական մյուս նահանգների շինականի սա ու ծա-

---

1 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Ե., 1934, էջ 176։

խի առարկա լինելը ոչ մի կապ չուներ մոնղոլական տիրապետության հետ, այն գոյություն ուներ ինչպես այդ չարիքից շատ դարեր առաջ եւ պիտի մնար մոնղոլներից հետո եւս։ Երբ V դարում Հայաղվանքի թագավոր Վաչեն, պարսիկներից զզված, որոշել էր երկիրը թողնել-հեռանալ, իր հետ տանում էր նաեւ հորից ժառանգություն ստացած *«հազար երդը»* (ընտանիք)[1]։

Նույն նորտական վիճակի անառարկելի վկայություններն առկա են նաեւ Վաչագան Բարեպաշտի կանոններում։ Սա արդեն մարզպանական շրջանն էր (V դ. վերջ-VI-ի սկիզբ)։

Արաբները նվաճած Հայաստանում սոցիալական կարգի նորություններ չստեղծեցին։ Նրանց նորությունը հարկերի սաստկացումն էր եւ նոր հարկի՝ ջիզյայի ստեղծումը, որն ավելի քան հազար տարվա ընթացքում հայ աշխատավորը պիտի վճարեր համարյա անընդմեջ, որովհետեւ բոլոր բռնագրավիչներն էլ, չնչին բացառությամբ, մահմեդականներ էին, որոնք հպատակներից պահանջում էին՝ կամ ընդունել իրենց կրոնը, կամ վճարել ջիզյա-այլադավության հարկ։

Ճորտությունը մնաց եւ խորացավ սելջուկ-թուրքերի տիրապետության ժամանակներում։ Երբ 1198 թ. Վասակի որդի Դավիթը Վարագա վանքին *«շինական մի»* էր նվիրում, Կովկասում մոնղոլների անունն էլ չգիտեին։

Մոնղոլ տիրապետողների օրոք հայ ժողովրդի սոցիալական ու իրավական վիճակն ավելի վատթարացավ։ Ճիշտ է, առաջին արշավանքների շրջանից հայտնի դժվարությունները մեղմացան նրանց տիրապետության հաստատումին հաջորդած տասնամյակներում, մանավանդ, երբ դեռ նվաճողները իսլամի մոլեռանդ հավատացյալներ չէին եւ այլադավան հպատակների նկատմամբ չէին տածում կրոնական ատելություններ։ Սակայն հարկային քաղաքականության մարզում վիճակն օրըստօրե ծանրանում էր՝ տեղական բնակչությանն ստիպելով զանազան միջոցներ մտածել զոնե ֆիզիկական գոյությունը պահպանելու համար, քանի որ հարկ չվճարելու դեպքում մոնղոլ բռնագրավիչները հայ գյուղացուն իրեն էին գերության տանում կամ առուծախի առարկա դարձնում։ *«Ով չէր կարողանում հատուցել տակը* (հարկը), *պարտքի զիմաց նրա մարդկանցին էին տանում»*,-գրել է Կիրակոսը[2]։ Որ տարեցտարի հարկերը ծանրանում էին ու դառնում անվճարելի եւ անտանելի, երեւում է, օրինակ, Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի՝ Արեւելյան Հայաստանի հոգեւոր առաջնորդներին հղած երկու թղթերից։ 1246-ին Վարդան Վարդապետի ձեռքով Արեւելք բերված «Սահմանք կանոնականք»-ի 17-րդ կետով առաջարկվում էր հիշոցատուներին տուգանել եւ ստացված դրամը բաժանել աղքատներին *(«քան զոյին տուգանս առցեն եւ յաղքատս տայցեն»)*։ Ընդամենը հինգ տարի հետո Կոստանդին կաթողիկոսը վերստին թուղթ է հղում Արեւելյան Հայաստանի բնակչությանը՝ խրատներով հանդերձ, եւ այս խրատների 7-րդ կետով սահմանում է հիշոցատուներից գանձվող տուգանքի գումարը,

---

1 ԱԱՊ, գիրք Ա, գլ. ժ։
2 Կիրակոս, էջ382։

աղֆատների եկամուտների դիմաց, տալ մոնղոլ հարկահաններին. *«եւ տուգանք առնուն եւ ընդ աղքատացն ի մայն տան»։*

Հայ ժողովրդի վիճակն առավել անտանելի դարձավ, երբ Մանգու մեծ խանը Կովկասի ու Հայաստանի վրա կուսակալ կարգեց Արղուն բռնավորին։ 1254 թ. Արղունն ու ոմն Թորա աղա, բազմաթիվ ուրիշների գլուխն անցած, գալիս են՝ *«աշխարհագիր առնել ամենայն ազգս, որ ընդ ձեռամբ նոցա էին հնազանդեալ»։*

Աշխարհագիրն այն է, ինչ մեր ժամանակի մարդահամարը։ Հայ ժողովուրդը վաղուց ի վեր ծանոթ էր այդ աշխարհագիր կոչված չարիքին։ Արաբները ցուցակ մտցրած հանգուցյալների փոխարեն եւս նրանց հարազատներից հարկ էին հավաքում։

Նորեկ բռնավոր Արղունն իր կամակատարների հետ միասին շրջում էր հպատակ զավառները. *«սկսեցին տասը տարեկանից վեր բոլորին համարագրել, բացի կանանցից։ Եվ բոլորից խստագույն կերպով հարկ էին պահանջում՝ շատ ավելի, քան մարդ ի վիճակի էր տալու։ Սկսեցին աղքատացնել։ Տանջում էին անասելի խոշտանգումներով, չարչարանքներով, գերարաններով (պրրկող գործիքներով)։ Ով թաքնվում էր, բռնում-սպանում էին։ Հարկ ու տուրքի տակ էին առնում նաեւ ծովերն ու լճերը, գետերն ու հանքերը, բոլոր արհեստավորներին ու արվեստագործներին։ Տեղական իշխանավորներն էլ մյուս կողմից էին կեղեքում ժողովրդին՝ գործակցելով աշխարհագիր առնող օտարներին։ Սակայն եկեղեցականներից ոչ մի հարկ չառան, քանի որ խանից հրաման չունեին»*[1]։

1250-ականներին, Բաթու խանի եւ նրա որդի Սարթախի վախճանից հետո, Այսրկովկաս ու Հայաստան եկան Չինգիզ խանի թոռները, եւ ժողովրդի վիճակն ավելի ծանրացավ։ Արղունի դրած *«մարդկային կարողություններից վեր»* հարկերին գումարվեց մի նոր հարկ, *«որը թաղար էին կոչում. արքունական ցուցակագրման մեջ մտած ամեն գլխի համար պահանջում էին հարյուր լիտր ցորեն, հիսուն լիտր գինի, երկու լիտր բրինձ ու ձավար, երեք տոպրակ, երկու պարան, մի արծաթ դրամ, մի նետ, մի պայտ, չհաշված այլ վճարումները, քսան անասունից՝ մի անասուն եւ քսան արծաթ դրամ։ Ով որ չուներ, պահանջմունքի փոխարեն ուստերին ու դուստրերին էին առնում»*[2]։

Ըստ երեւույթին մոնղոլների, ինչպես նաեւ նրանց նախորդների ու հաջորդների օրերում, ժողովրդի վրա ծանրացած ամենաանտանելի պարտականություններից էր պետական պաշտոնյաներին իջեւան տալը, որ, հավանաբար, պարտադրում էր նաեւ ենթարկվել այդ պաշտոնյայի կամայականություններին։

Կիրակոս Գանձակեցին Հասան-Ջալալի գործերից մեկն էլ այն էր համարում, որ այդ իշխանն ինքն էր ընդունում մոնղոլ երթեւեկներին, փոխարենը ժողովրդից ստանալով՝ *«ինչ որ անհրաժեշտ էր երթեւեկների պետքերի համար»։*

---

1 Կիրակոս, էջ 363։

2 Նույն տեղում, էջ 374-375։ Լիտր-չափի միավոր՝ հավասար 12 ունկի։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՁԱՆԳՎԱԾՆԵՐԻ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խաչենի եւ հարակից շրջանների աշխատավորության սոցիալական ծանր վիճակը մոնղոլական տիրապետության ժամանակ չէր կարող չծնել արդար զայրույթ ու ընդվզումներ։ Պատմական աղբյուրները նվազ տեղեկություններ են հաղորդում այդ առթիվ։ Եվ դա հասկանալի է. այդ աղբյուրների հեղինակները հոգեւոր դասի ներկայացուցիչներն էին։ Իսկ հոգեւորականությունը միշտ էլ աչքի է ընկել չարին չհակառակելու տրամադրությամբ։

Իհարկե, անիրավացի կլիներ մոռանալ պատմական ժամանակաշրջանի վիճակը։ Ձկար միասնական պետություն, որի միջոցո՛վ միայն հնարավոր կլիներ ոտքի հանել ամբողջ երկիրը, կռվել ընդհանրական հայրենիքի շահերի համար։ Մանրատված ավատական տիրույթները, մանր իշխանությունները բարեբեր հող չէին մեծամանակ զորք պահելու համար։ Իսկ եկվոր բռնակալների ամբողջ թափորը բաղկացած էր լինում գերազանցապես զինվորությունից։ Եվ այս բոլորին էլ գումարվում էր հայրենիքն ու ազգը միավորող միակ գործոնի՝ եկեղեցու սպասավորների եռանդուն վարդապետությունը՝ ***«մի կալ ընդդեմ չարին», «հնազանդ լերուք տէրանց ձերոց»։***

Մեզ հասած մատենագրական տեղեկություններից երեւում է, որ հայոց եկեղեցու հայրերն ամեն կերպ ջանում էին իրենց հոտը պահել հնազանդ՝ ինչպես հայրենի տերերի, նույնպես էլ եկվոր բռնակալների հանդեպ։ Հավանաբար, բռնակալների խրոնմրտանքի ու մարդկայնության հետ նրանք մեծ հույսեր էին կապում։

Այս մտայնությունն ավելի ցայտուն արտահայտված ենք տեսնում Կոստանդին Բարձրբերդցու երկու թղթերի մեջ, որոնցից առաջինը՝ 1246 թ. հղված Արեւելյան Հայաստան, իսկ երկրորդը՝ գրված 1251-ին, ունեին նույն բովանդակությունը, խոնարհաբար ենթարկվել նակատագրին, ձեռնպահ մնալ ամեն մի դժգոհությունից, քանի որ Աստված աղետները մեզ է ուղարկում մեր գործած մեղքերի համար։

Սակայն այս վարդապետության եւ տիրող անհուսալի պայմաններում իսկ ժողովուրդը չէր դադարում իր ուժերին հավատալուց, չէր հաշտվում բռնության հետ։ Հիշատակելի են, օրինակ, լայն ընդգրկումի այն շարժումները, որոնք ծավալված էին համարյա ամբողջ Վրաստանում ու հյուսիս-արեւելյան Հայաստանում, եւ որոնց, ինչպես ասվել է, մասնակցել էր նաեւ Խաչենի տեր Հասան-Ջալալը։ Բնորոշ էր նաեւ Ծարում ու ամբողջ Վերին Խաչենում ծավալված ընդվզումը՝ Դավիթ Ծարեցու գլխավորությամբ, **XIII** դարի կեսին։

ԴԱՎԻԹ ԾԱՐԵՑԻ «ՄՈՒՐԵՑՈՒՅՑԻՉ»

Գյուղացի աշխատավորության առաջին ընդվզումը, որ տեղի է ունեցել 1250 թ. Վերին Խաչենի Ծար գավառում, հանգամանորեն նկարագրված է Կիրակոսի պատմության մեջ։

Դժբախտաբար Կիրակոսը միակ հեղինակն է, որ արձանագրել է այդ կարեւոր իրադարձությունը: Եվ կրկնակի ցավալի է, որ նա հանդես է գալիս որպես ըմբոստությունն ու նրա կազմակերպիչ Դավիթ Ծարեցուն դատապարտող եւ հենց այս դիրքերից էլ մեզ է ներկայացնում կատարված փաստը: Հետեւապես, կասկածից վեր է, որ Ծարեցու գործը մեզ է հասել միակողմանի մեկնաբանությամբ: Բավական է ուշադրության առնել պատահաբար արտահայտված մի մանրամասն՝ համոզվելու համար, որ պատմիչն ամեն կերպ աշխատել է Դավթի կազմակերպած պայքարը ներկայացնել որպես աղանդավորական հերձված: Մինչդեռ այն, պաշտոնական եկեղեցու դեմ ուղղված լինելով հանդերձ, նաեւ սոցիալական դրդապատճառների արդյունք էր, եւ հնարավոր է, որ իր հիմքում ունեցել է նույնիսկ քաղաքական լուրջ նպատակներ:

Տեսնենք՝ Կիրակոսն ի՞նչ է պատմում Դավիթ Ծարեցու կազմակերպած ընդվզումի մասին:

Գեղարքունիքի սահմանի մոտ, Հանդաբերդ ամրոցին կից, Ծար ջերմուկն էր, ուր ապրում էր չքավոր ու տնանկ մի մարդ՝ Դավիթ անունով: Նա ջրաղաց էր պահում եւ դրանով կերակրում կնոջն ու երեխաներին:

Մի գիշեր էլ, իբր, սատանան Քրիստոսի կերպարանք առած, հայտնվում է Դավթին, մոլորեցնում, թե՝ դու գյուղի ձիթհանքից մի գերան կհանես, նրանից խաչ կկանգնեցնես եկեղեցուց դուրս, այնուհետեւ բոլոր կողմերից մարդիկ կգան քո մոտ բուժվելու, ձեռդ կամաց կդնես նրանց վրա եւ կբուժես:

Եվ Դավիթն սկսեց քարոզել, թե Քրիստոսն իրեն երեւացել է ու ասել՝ վերափոխի՛ր աշխարհը, բուժի՛ր մարդկանց:

Դավթի համբավը կարճ ժամանակում տարածվեց ամենուր: Նրան կոչեցին Դավիթ Միայնակյաց եւ Սքանչելագործ: Եկեղեցու դռանը տնկված նրա փայտյա բարձրաբերձ խաչին արջառներ էին զոհաբերում: Բոլոր կողմերից եկող ուխտավորներին օրհնության նշխարներ էին տալիս արջառների մսից ու ոսկորներից, փայտյա խաչի տաշեղներից ու Դավթի ջրաղացի կորեկահատիկներից: Իբր, Դավթին այս գործին հրահրած բանսարկուն օգնեց նաեւ հոչակի տարածմանը, ուստի եւ նրա մոտ էին ըշտապում կանայք ու տղամարդիկ, հոգեւորականներ ու ազատ մարդիկ:

Դավիթն սկզբում, իբր թե կեղծավորաբար, ոչ ոքից ոչինչ չէր վերցնում եւ քարոզում էր անշահ: Իսկ երբ որեւէ դիվահար էր գալիս, նա վերցնում էր հաստ մի գավազան, հիվանդին նրանով ծեծում էր անխնա, ապա ոտքը նրա կոկորդին սեղմած՝ կարգադրում էր վեր կենալ ու հեռանալ... Դիվահարը հեռանում էր՝ վախենալով որեւէ տեղ ասել, թե չի բուժվել, քանի որ հակառակ դեպքում, վերստին պետք է զանահարվեր: Լեկրոտներին (դիվահարներ) ստիպում էր երկար պարել իր առաջ: Գոդիներին (բորոտներ) թողնում էր իրենց անբուժելի ցավերի հետ: Կուզերին տանջահարելով հարթեցնում էին նրա հրամանակատարները: Իսկ եթե այս միջոցառումից մեռնում էր մեկը, Դավիթն ասում էր՝ մեռած է եղել առաջուց, նրան քայլեցնում էր ներսի դեւը, հիմա ինքը դեւին հանեց նրա մարմնից: Իսկ եթե կենդանի էին մնում ու տանջվում, ասում էր՝ իրեն չեն հավատում, այդ պատճառով էլ բժշկությունը չի օգնում:

Գալիս էին ու անվերջ գալիս... Վիթխարի բազմություն էր հավաքվում: Եվ որովհետեւ ամառ էր ժամանակը, հավաքվածները սարերն էին բարձրանում, լցվում էին դաշտերը եւ գործում ամեն տեսակ չարիք:

Գալիս էին նաեւ հոգեւորականներ, օգտվում Դավթի ձեռք բերածից: Կային այնպիսիները, որ լվանում էին նորաթուխ մարգարեի ոտքերը եւ ջուրը լցնում հավաքված բազմության վրա:

Իսկ եթե որեւէ վարդապետ կամ երեց համարձակվեր արգելել ուխտագնացներին, վերջիններս պիտի ***«հարհոյէին ու բանբասէին»:***

Եվ ահա այս բոլորը խիստ վրդովեցնում է Արեւելից կողմանց հոգեւորականության ականավոր ներկայացուցիչներին: Խորանաշատի մեծ Վարդապետ Վանականը գրեց «Գիր սաստից եւ մեղադրանաց»՝ դատապարտելով ոչ միայն Դավթին, այլեւ բոլոր նրանց, ովքեր մոլորված էին նրա կողմից, նշխարներ էին առել նրանից: Բանադրական թուղթ գրեց նաեւ Կիրակոս պատմիչը, գրեց եւ հղեց շատ տեղեր: Գրեց նաեւ Հաղբատի եպիսկոպոս Համազասպը: Իսկ Դադիվանքի եպիսկոպոս Գրիգորիսը եւ Գանձասարի վանահայր Վարդանը, բազում քահանաներով, խաչերով ու Ավետարաններով գնացին Ծար՝ բանադրելու եւ մոլորությունը վերացնելու, քանի որ գյուղը նրանց վիճակում էր գտնվում: Նրանք փորձում էին կարգի հրավիրել Դավթին, կործանել նրա կանգնեցրած խաչը, եւ բազմությունը վրա տվեց, ***«արովք ու բրովք կամ էին սպառնանել գնասա»:*** Հեղինակավոր եպիսկոպոսներն ստիպված եղան մի կողմ քաշվել ամբոխից, անիծել Դավթին ու նրա մոլորեցրած ամբոխին: Ապա հավաքվածներից ոմանք զոչացին իրենց հանդգնության համար եւ աղաչում էին եպիսկոպոսներին՝ ազատ արձակել իրենց անեծքի կապանքներից, նույնիսկ Դավթին բռնեցին եւ մատնեցին նրանց ձեռքը:

Եպիսկոպոսները Դավթին իրենց հետ տանում էին՝ երեւի պատժելու, երբ ճանապարհին հանդիպեցին զառնեցիներին եւ նրանց խնդրանքով ազատեցին:

Եվ այսպես, ամեն ինչ ներկայացվում է որպես աղանդավորական մոլորություն: Մեկ էլ հանկարծ, ի միջի այլոց, պարզվում է, որ Դավիթն ասել է. ***«Արշակունյաց ազգէն եմ ես, եւ պարտ է որդւոց իմոց լինել միոյն թագաւոր եւ միւսոյն՝ կաթողիկոս. եւ սրբոյն Սահակայ տեսլեանն մարթ է ի վերայ նոցա կատարիլ»:***

«Սահակի տեսիլը» Սահակ Պարթեւ կաթողիկոսին վերագրվող այն երազանքն էր, թե հայ Արշակունյաց թագավորության եւ պարթեւազուն կաթողիկոսների վերացված տիրապետությունը վերականգնվելու է անպայման ***«մերձ երեւումն պղծոյ ահնապատի»,*** այսինքն՝ աշխարհի կատարածին մոտ սահմաններում:

Ուրեմն, Դավիթը որոշել էր աշխարհը վերափոխել, որովհետեւ նրան, իբր, կարգադրված էր այդ: Եվ այդ աշխարհի դարձն էլ նրա համար այլ բան չէր, քան Հայոց ինքնուրույն թագավորության եւ Լուսավորչի տոհմի կաթողիկոսության վերականգնումը:

Անշուշտ իրավացի են այն հետազոտողները, որոնք հանձին Դավիթ Ծարեցու տեսնում են ո՛չ սովորական աղանդավորի եւ նրա ելույթն էլ դիտում են որպես սոցիա-

լական անարդարությունների դեմ պոռթկացած մի ընդվզում, որն ուներ քաղաքական լուրջ նպատակադրում։

Ասվածից կարելի է հանգել հետեւյալ եզրակացության.

ա) Դավիթ Ծարեցու շարժումը սոցիալական բովանդակություն ունեցող ընդվզում էր՝ ընդդեմ եկեղեցական ու աշխարհիկ տիրող կարգերի, ինչպես նաեւ թաթար-մոնղոլական բռնագրավիչների։

բ) Շարժումն ընդունել էր բավական լայն բնույթ՝ ընդգրկելով Հայոց արեւելից կողմանց *«զամենայն զաւառս»* եւ այնքան վտանգավոր էր համարվել, որ նրա դեմ պայքարի էին դուրս եկել ժամանակի Արեւելյան Հայաստանի կուսակրոն անվանի վարդապետները՝ Հովհաննես Վանականը, Կիրակոս Գանձակեցին, Դաղիվանքի ու Գանձասարի առաջնորդները եւլք։

գ) Դավիթ Ծարեցին, ըստ երեւույթին, ժամանակի զարգացած մարդկանցից է եղել եւ ոչ թե խեղճ ու անճար մի ջրաղացպան, եթե տեղյակ էր Սահակ Պարթեւի տեսիլքին եւ իր բորբոքած շարժման նպատակ էր դարձրել աշխարհի վերափոխությունն ու Հայոց ինքնուրույն թագավորության վերականգնումը։

ՎԵՐԻՆ ԽԱՉԵՆԸ ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

XII դարի վերջին քառորդից Վերին Խաչենի իշխանական աթոռին տիրություն արած Հասանի ու Դոփի ժառանգներից պատմությանը հայտնի են երկուսը.

ա) Գրիգորիս՝ եպիսկոպոս Հաղբատի վանքի, որը 1208 թ. իր քեռի Զաքարե ամիրսպասալարի եկեղեցական նորամուծությունների դեմ ըմբոստացավ. այդ նորամուծությունները տարածելու համար Կիլիկիայից եկած Մինաս եպիսկոպոսին բրածեծ անել տվեց եւ այս ամենի համար արժանացավ քեռի Զաքարեի անլուր հալածանքին (Զաքարեն իր սպառնալիքներից փախած Գրիգորիսին բռնել տվեց Կեչառիսում, կալանավորեց եւ փոխարենը Հաղբատի եպիսկոպոս նշանակեց Գրիգորիսի հորեղբայր Հովհաննեսին, որն առաջուց էլ այստեղ առաջնորդ էր եղել, աթոռը թողել, գնացել էր Խաչեն, կառուցել Խադավանքը, նորից եկել Հաղբատի ու Սանահինի կողմերը)։

բ) Գրիգոր իշխան, որի անվան առաջին հիշատակությունը 1220 թվականից է՝ Խադավանքում իր ընծաների առթիվ փորագրած արձանագրությունից։ Ապա գալիս են ժամանակակից հեղինակների վկայությունները, հենց իր՝ իշխան Գրիգորի տարբեր առիթներով գրած հիշատակարանները, որոնցով ամբողջանում է Վերին Խաչենի տիրոջ հետաքրքիր կենսագրությունը, մանավանդ նրա տեւական մասնակցությունը թաթար-մոնղոլների արշավանքներին ու բազմազան գործարքներին։

Բաչու-նոյինի բանակի կազմում բռնությամբ պատերազմի քշված Գրիգոր իշխանը, որպես ականատես ու դեպքերի մասնակից, իր մի հայտնի հիշատակարանում սրտի կսկիծով պատմում է, թե ինչպես նետողաց ազգը Պարսից քաղաքներն ու շեներն ավերելով, գալիս-հասնում է Աղվանք ու Հայաստան եւ այստեղ էլ հրի ու սրի մատնում խաղաղ գավառները, *«որ չենք կարող զրի անցկացնել ամբողջ աշխարհը*

կործանող աղետները... Սուր սուսերի մատնեցին քրիստոնյաների ազգը, մեծամեծ իշխաններին եւ ժողովրդական ռազմիկներին եւ... Աստուծո սուրը սեղանի սպասավորներին, քահանայական դասերին, միայնակյացներին եւ ճգնավորներին, տապալեցին սուրը եկեղեցիներն ու տերունական նշանները» (խաչքարերը)[1]:

Գրիգորը, իր հիշատակարանում այս վայրագությունները պատմելով, վկայում է, որ բռնավորները հետո էլ տեղացի իշխանավորներին ու գինվորությանը բռնությամբ տանում էին իրենց հետ, ուր որ գնային: Իսկ նրանց ամեն մի երթն արշավանք էր նոր երկրներ նվաճելու, նոր կողոպուտներ անելու, նոր ավերներ գործելու համար:

Արեւմտյան Հայաստանում կատարված նվաճումները պատմելով՝ Գրիգորը հիշում է, որ մոնղոլները գրաված բնակավայրերում քստմնելի առուծախ էին անում՝ իրենց գինակցող հայերի վրա վաճառելով գերի հանձնված նրանց ազգակիցներին, իշխանավորներին ու հոգեւորականներին, սրանց կայքն ու գույքը: Եվ նվաճումների մասնակից հայերն ամեն ջանք ու ծախս հանձն էին առնում՝ որքան կարելի է շատ հայրենակիցներ փրկելու համար:

Մոնղոլներն առեւտրի կարեւոր առարկա էին դարձրել հայկական ձեռագրերն ու եկեղեցական սրբությունները: Միջնադարյան այդ խավարամիտները մեսրոպատառ մատյանների իսկական արժեքը զարմանալիորեն սկսեցին հասկանալ այն ժամանակ, երբ տեսան, թե հայերն ինչպես իրենց կյանքը վտանգելով՝ հրդեհից ու գերեվարությունից փրկում էին մատյանները: Այստեղ էլ նրանք, իրենց համար անսպասելի, հայտնաբերելով իրենց եկամտի մի մեծ աղբյուր՝ նվաճած վայրերում հափշտակում ու խնամքով պահում էին ձեռագիր մատյանները՝ հետագայում հայերին վաճառելու համար[2]:

Կիրակոս պատմիչը եւս բավական ընդարձակ տեղեկություններ է հաղորդում արշավանքների ժամանակ հայ իշխանավորների փրկած սրբությունների վերաբերյալ: Ընդ որում այդ փրկությունը լինում էր Եւ ճակատամարտերում ազատագրելով, Եւ գնումների ճանապարհով:

Գրիգորն իր գնումների մասին խոսելիս թվարկում է դրանք՝ *«...զսպաս սրբութեան, զնշանս տէրունական եւ զտաս աստուածային ոչ ձեռօք մերովք առեալ յաւարի, այլ զնեալ ի նոցանէ բերաք ի տէրութիւնս մեր զծաղկալից բուրաստան զԱւագ Տօնական եւ միւս այլ Տօնական, զԺողովոց Յոհանն եւ զԱւետարանն եւ զաջն սրբոյն Ստեփաննոսի, զոր ի քաղաքէն Կանու* (Կարնո. - Բ. ՈՒ.) *բերաք... եւ տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտս մեր Խաղայի* (Խաթրավանք. - Բ. ՈՒ.) *վանիցս։ Իսկ ի միւսում ամի այլ եւս գնալով ընդ նոսա, հասաք մինչեւ ի մայրաքաղաքն Կապաղկացւոց նահանգին եւ անտի առեալ զԱւետարանն պարոնն իմ Աւագն եւ ետ ինձ եւ իմ խնդալից եղեալ... եւ բերել ետու ի նախասացեալ սուրբ ուխտս»*[3]:

---

1 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երեւան, 1984, էջ 228:

2 Նույն տեղում, էջ 228-229:

3 Նույն տեղում:

Փրկված գրչագիր մատյաններից է եղել նաեւ սույն հիշատակարանը պարունակող Ավետարանը՝ ընդօրինակված 1166 թ. Հռոմկլայում, որը հետագայում էլ խաղավանքից հեռացել է՝ ընկնելով Գյումրիի մոտի Օրթաֆիլիսա (այժմ՝ Մայիսյան) գյուղի եկեղեցին, իսկ այժմ պահվում է Մատենադարանում:

Խաչենեցիների փրկած ձեռագիր մատյաններից մեկն էլ երկար ժամանակ պահվել է Զրաբերդի մոտ գտնվող Եղիշե առաքյալի (Զրվշտիկ) վանքում: Մագաղաթյա մեծադիր այս Ավետարանը՝ ***«գրված ամբողջապես գլխատառերով եւ շքեղորեն նախշազարդված»***, փրկվել է Մեծկվենքի տեր Ուզի որդի Հասանի ձեռքով[1]:

Կարնո գավառի գրավման համար մղված մարտերին, Հասան-Ջալալ խաչենեցու հետ միասին, կռվում էր նաեւ Գրիգոր իշխանը՝ Հասան-Ջալալի մորաքրոջ որդին: Հավանական պիտի համարել, որ այս արշավանքի ընթացքում Գրիգորը գտնվել է Հասան-Ջալալի հրամանի ներքո:

Այս արդեն 1243 թվականին էր, որից հետո եւ հատկապես 1250-ական թվականներին մոնղոլները շարունակում էին իրենց նվաճողական պատերազմները փոքրասիական նահանգներում, Բաղդադի խալիֆայության եւ Միջագետքի ու Ասորիքի մահմեդական իշխանությունների դեմ: Այս պատերազմներին մասնակցում էին հայ զորքերը՝ իրենց իշխանների գլխավորությամբ: Նրանց հետ էր եւ Կիլիկիայի թագավոր Հեթումի զորքը: Հայոց զինական ուժերի սպարապետությունն այն ժամանակ Զարբարյան իշխաններից անցել էր խաղբակյան Պռոշ իշխանին, որին ենթակա էին հայ մյուս իշխանները՝ Սեւադա խաչենեցին, Բագրատունի Կյուրիկեի որդի Թաղիադինը եւ ուրիշներ: 1258-1260 թթ. մոնղոլ ու հայ զորքերը պաշարողական դաժան մարտեր էին մղում Մուֆարկին-Տիգրանակերտի դեմ: Ծանր զոհերի ու կորուստների գնով քաղաքը նվաճեցին 1260-ի գարնանը եւ անգթաբար կոտորեցին երկարամյա պաշարումից հյուծված քաղաքի բնակիչներին:

Այստեղ զոհվեց Սեւադա խաչենեցին՝ Գրիգորի որդին, Դոփի թոռը: Այս արշավանքներից հետո կենդանի էին մնացել Գրիգորի երկու որդիները՝ Հասանը եւ Հովհաննեսը: Հասանն իշխանության աթոռին հաջորդեց հորը, իսկ Հովհաննեսը նվիրվեց եկեղեցուն՝ անձնվիրությամբ ծառայելով ինչպես հայրենի եզերքին, այնպես էլ Հաղբատի ու Սանահինի վանքերին:

Հասան Բ-ի մասին խոսող աղբյուրներն են, հիմնականում, վիմական արձանագրությունները, որոնցում այդ իշխանը ներկայանում է իբրեւ քաջ զորավար, մշակույթի առատաձեռն հովանավոր, Ծարի, ապա եւ Սեւանի արեւելյան ափերի լիիրավ տեր: Այս Հասանը փեսան էր Արագածոտն գավառի տեր Քուրդ Վաչուտյանի եւ, այսպիսով, իր տիրույթները սերտ հարաբերություններով էր կապել կենտրոնական Հայաստանի հետ:

Հասան Բ-ի իշխանությունը համընկավ թաթար-մոնղոլական տիրակալության յուրահատուկ շրջանին. թուլացել էր կենտրոնական իշխանությունը, տեղական կու-

1 Նույն տեղում, էջ 426:

սակալները կռվում էին միմյանց դեմ՝ գերազահության հասնելու համար, եւ հպատակ ժողովուրդներին ենթարկում էին նորանոր զրկանքների։ Ծարի տեր Հասանը մասնակիցն էր այս կռիվների, որոնք կարծես անվերջ էին ու անդադար։

Այս բաջ զորականի կյանքի մեծ մասը պետք է որ անցկացած լիներ պատերազմներում, որովհետեւ նրա կին Մամքանն ու որդի Գրիգորը համարյա միշտ իրենց արձանագրություններում նրա մասին խոսում են որպես ապրող, սակայն բացակա հարազատի ու իշխանավորի։ Մամքանի անունից Դադիվանքում արձանագրված է. ***«...Ես Մամքան՝ ամուսին արիականին Հասանա եւ որդի մեր Գրիգոր, տէրք գոլով տեղոյս հայրենաւք... ի ՉԺԶ (1267) թվին տուաք ի սուրբ ուխտս զԾովատեղ, զՋաջուռանց, զՋոլբեկանց»։***

Հայրենի երկրում պահպանված հիշատակներով Հասանը մեր առաջ կանգնում է որպես իր երկրի տիրական իշխանը, որը միայն գտնվում է մոնղոլական տիրապետության ներքո։ Սոդքում պահպանվել է մի արձանագրություն՝ գրված ***«ՉԻԵ (1276) ի թագաւորութեան Ապաղին, կաթողիկոսութեան տէր Ստեփանոսի, պարոնութեան Հասանա»***։ Դաշքենդ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցողները ժամանակ են նշում ***«ի աշխարհակալութեան Ապաղա զանին, իշխանութեան մեծին Հասանա եւ Մամքանա եւ աստխանշան որդոյն Գրիգորի...»***։ Անթվական է այս արձանագրությունը։ Բայց անկասկած է, որ գրվել է 1287-ից առաջ, չնայած տարօրինակ է, որ միաժամանակ հայտարարում է հոր եւ որդու իշխանությունը։ Պիտի կարծել, որ հոր երկարատեւ բացակայությունների ընթացքում իշխանությունը Գրիգորն էր վարում, եւ այդ պատճառով էլ նա փաստորեն դարձել էր հոր աթոռակիցը։

Հասանի հիշատակին արված ընծաների մասին արձանագրություններ են պահպանվել ինչպես Դաշքենդի Ս. Աստվածածին վանքում, այնպես էլ Ծարի Ս. Սարգիս մատուռում։ Առաջինում Մամքանն ու Գրիգորը վանքին են նվիրում ***«զՁորին ջարդացն, զԾալին հողն, Ստեփանոսի ջաղացաղրան խոտն»***։

1289-ին Հասանի որդի Գրիգորը Ծարի Ս. Սարգիս մատուռի դռան գլխի խաչքարի վրա թողած արձանագրության մեջ գրել է. ***«...Ես Գրիգորը՝ որդի Հասանայ, քաջ եւ յաղթող զաւրաւարին եւ մեծի իշխանին Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շողգահո եւ այլ բազում զաւառաց, կանգնեցի զխաչս ի գեղս, որ կոչի Ծար՝ սիրեցելոյն հաւրն իմոյ հայրենիք եւ պարգեւ քաջութեան»***։

Մի ժամանակագրության համաձայն՝ Հասան Բ-ը վախճանվել է 1287 թ. սաստիկ ձմռանը՝ Հասան-Ջալալի որդի Իվանե-Աթաբակի հետ միասին։ Հասանի կյանքն ու հերոսական գործունեությունը փառաբանության են արժանացել ժամանակի գրական մի փայլուն գործի մեջ, որի հիշատակած պատմական դեպքերի ու դեմքերի հավաստիությունն անառարկելի է։ Գրական այդ հուշարձանը խաչատուր Կեչառեցու հայտնի «Ողբ վասն աւերման տանս արեւելեան» երկն է՝ գրված 1295 թ., որն Արեւելյան Հայաստանի անցած-գնացած հզոր իշխանների շարքում հիշում է նաեւ Դոփյան Հասան իշխանին.

«Զ Հասանն յիշեմ ըզԽաչենեցի,
Որ մականուամբ էր որդի Դօփի,
Հանց յուժընդակ էր ինքն յատենի՝
Քան զՔրիստոսի Նշանն ի բեմի»։

Մանուկ Աբեղյանն իրավամբ գտնում էր, որ միջնադարի համար շատ անսպասելի է Հասան իշխանի եւ Քրիստոսի զորավոր նշանի (խաչի) համեմատությունը. Հասանն ատյանում այնպես հզոր էր, ինչպես խաչը բեմի վրա։ Սակայն չի կարելի նկատի չառնել Կեչառեցու բարձր կարծիքը հին մեծազոր իշխանների մասին, որոնց բացակայությամբ էլ նա բացատրում է իր օրերում հայրենի երկրին հասած աղետները։

Հասանի կին Մամքանը, որ, ինչպես ասվել է, դուստրն էր Արազածոտն գավառի տեր Քուրդ Վաչուտյանի, իր արձանագրություններով ներկայանում է որպես ժամանակի մեծահարուստ բարերարներից մեկը։ Հայրենի տիրույթներում կանգնեցված խաչերն ու վանքերին ընծայած նրա նվերները մի պատկառելի թիվ են կազմում։ Դրժբախտաբար, պահպանվել է մի չնչին մասը ծարեցիների ավանդական մշակութային կենտրոնի՝ Խաթրավանքի բոլոր արձանագրությունների, որոնցից, ամենայն հավանականությամբ, կարելի կլիներ առավել լրիվ պատկերացում կազմել Մամքանի ու նրա ամուսին Հասանի մշակութանպաստ գործունեության մասին։

Հասան Բ-ը, Գրիգոր իշխանից բացի, ունեցել է նաեւ մի Աթանաս որդի, որը Դադի վանքի առաջնորդն է եղել 1260-80-ական թվականներին, եռանդուն մասնակցություն ունեցել նահանգի կրթական-մշակութային կյանքին եւ, ամենակարեւորը, նրա անվան հետ են կապված Դադիվանքի երկու խաչքարերը, որոնք բացառիկ, պարզապես անմրցակից ստեղծագործություններ են մեր խաչքարային արվեստի բնագավառում։

ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ XIII ԴԱՐՈՒՄ

Բագրատունյաց թագավորության շրջանի (IX-XI դդ.) քաղաքական վերելքով պայմանավորված մշակութային առաջադիմությունն իր ակնառու արգասիքներն էր տվել նաեւ Արցախում։ Մովսես Դասխուրանցու կոթողային «Աղվանից աշխարհի պատմությունից» հետո, ճիշտ է, համարժեք պոռթկումներ չեղան, չստեղծվեցին գրական մեծ հուշարձաններ։ Սակայն ապրում էր գրական միջավայրը, հոգեւոր աշխույժ մթնոլորտը հող էր մնում գրական նոր ծաղկումների համար։ Եվ ո՛չ միայն գրական։ Այդ պատճառով էլ միանգամայն բնական էր Հովհաննես Սարկավագի (նաեւ Հովհաննես Իմաստասեր կոչված) գործունեությունը XI դարում եւ XII-ի սկզբին։ Ծնված եւ գրական ու գիտական հասունացման հասած լինելով հայրենի Արցախի Փառիսոս գավառում՝ հետագայում նա իր գործունեությունը ծավալեց Անիում, Հաղբատում եւ դարձավ համազգային մեծություն, նշանավորեց ողջ հայկական գրական-գիտական կյանքի մի առանձնահատուկ շրջանը։ Նրա փիլիսոփայական, մատենագրական, ման-

կավարժական աշխատությունները հետագա դարերում ուսումնասիրության նյութ էին եւ, անկասկած, առաջ մղեցին մեր ազգային մշակույթը։

Տրամաբանական ու միանգամայն բնական կլիներ Հովհաննես Սարկավագի ավանդների զարգացումը՝ նրա անմիջական հաջորդների միջոցով։ Սակայն, ցավոք, եկան սելջուկ-թուրքերը, եւ XII դարի մեծ մասը (համենայն դեպս մինչեւ 60-70 թվականները) երկիրն անողորմ բռնադատիչների բերած աղետներն էր դիմակայում եւ ժամանակ ու հնարավորություն չուներ մշակութային խոշոր ֆայլեր կատարելու։

Դրությունն ահավոր էր հատկապես մշակույթի մյուս բնագավառների, հատկապես ճարտարապետության համար։ Ոչ միայն հնարավոր չէր որեւէ նոր շինարարական գործ ձեռնարկել, այլեւ անհնար էր պահել-պահպանել կառուցածները։ Հիշենք, թե Մխիթար Գոշն ինչպիսի՞ ցավով էր պատմում Զոլի զորապետի վայրագությունների անհնազանդ Արցախ-Խաչենի ողջ տարածքում։ Ասում է. ***«քանդեց եկեղեցիները, հրդեհի մատնեց վանքերը»***, եւ կանգուն ոչ մի շենք չմնաց, որ հիշեցնի երբեմնի փառավոր ճարտարապետական ժառանգությունը։ Այս է պատճառը, որ նախորդ համարյա բոլոր դարերում այնպես եռանդուն շինարարական կյանքով ապրած ողջ Արցախում չի պահպանվել որեւէ նշանակալից շինություն՝ կառուցված XII դարի երկրորդ կեսից առաջ։

Քաղաքական ու տնտեսական բարեկեցությունն է, որ հիմք է դառնում մշակութային կյանքի առաջընթացի համար։ XII դարի երկրորդ կեսին Զաքարյան իշխանապետության հաղթական ազատամարտերի շնորհիվ Հայաստանի մեծագույն մասը ազատ շունչ ֆաշեց, դարձավ իր երկրի ու ճակատագրի տերը։

Արցախում, ինչպես տեսանք, ֆաղաքական կյանքի բուռն վերելքն իր հետեւից, ավելի ճիշտ՝ իր հետ բարձրացրեց նաեւ մշակութային ոլորտները. երկրի տերերի բարեհաճ հոգատարությամբ ծաղկեցին վանական համալիրները, սերտորեն կապվեցին իրար հետ, եւ մշակութային բոլոր բնագավառներն էլ, մեկմեկուց շունչ ու կենսունակություն ստանալով, այնպես առաջ գնացին, ստեղծեցին այնպիսի գործեր, որոնք համահայկական նշանակություն ունեն՝ լինելով դարաշրջանի ամենաառաջնակարգ միտումների դրսեւորումներ։ Հիշենք գրական-մատենագրական այն կոթողները, որոնք այս շրջանում ստեղծվեցին, այն էլ այստեղ՝ Արցախում կամ Արցախի ֆաղաքական կյանքի ազդեցության ոլորտում. Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», Ժամանակագրությունը, առակները, Վանական Վարդապետի՝ մեզ չհասած, սակայն ժամանակակիցների անխառն փառաբանությանն արժանացած մատենագրական երկը, Կիրակոսի «Հայոց պատմությունը», Վարդան Արեւելցու «Տիեզերական պատմությունը» (կոչված նաեւ «Հաւաքումն պատմութեան»), Գրիգոր Ականացու «Նետողաց ազգի պատմությունը» եւ շատ ուրիշներ, ձեռագիր մատյաններ։ «Հայսմավուրքի» առաջին համահավաք բընագրի ստեղծումը տեղի ունեցավ այստեղ եւ տարածվեց ողջ Հայաստանում, դարձավ հայոց մշակույթի ու դպրության այդ շրջանի ամենաուշագրավ երեւույթներից մեկը։

Իսկ ճարտարապետությա՞ն բնագավառում։ Այստեղ եւս Արցախը ետ չմնաց XIII դարի հայ շինարվեստի աննախադեպ զարգացումից։ Մանրատված իշխանություններից յուրաքանչյուրը բարեկարգեց իր հոգեւոր կենտրոնը, որը տոհմական տապանատունն

էր նաեւ, այստեղ կառուցեց փառահեղ մի տաճար, որն էլ օրինակ պիտի դառնար զավառի մյուս շինարարական ձեռնարկումների համար։ Եվ այսպես ստեղծվեցին Խաղավանք-Խաթրավանքը՝ Վերին Խաչենում (1204 թ.), Դադիվանքի Սուրբ Խաչ տաճարը՝ Հաթերքից վեր (1214 թ.), Գանձասարը՝ Ներքին Խաչենում (1216-1238 թթ.), Գտչավանքը՝ Դիզակում (1241 թ.)։

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Հայ ճարտարապետական ժառանգության հմտագույն գիտակ Թորոս Թորամանյանի վկայությամբ՝ Փարիզի Սորբոնի համալսարանի բյուզանդական ճարտարապետության պրոֆեսոր Շ. Դիլը 1907 թ. մարտի 6-ին ունեցած իր ելույթում, բնութագրելով հայ ժողովրդի ճարտարվեստի գործերից համաշխարհային մշակույթի գանձարանը մտած հինգ ամենաուշագրավ երեւույթները, երրորդ տեղը հատկացրել է Գանձասարի վանքին։ Այս դեպքում եվրոպացի գիտնականն սկսել է Աղթամարի եկեղեցիով, անցել Էջմիածնի Հռիփսիմեի տաճարին, ապա նշել Գանձասարը՝ չորրորդ տեղը հատկացնելով Հաղբատի վանքի համալիրին, իսկ հինգերորդը՝ Անիի մայր եկեղեցուն[1]։

Ճարտարապետության պատմության մի այլ հմուտ գիտակ՝ ռուս գիտնական Ա. Լ. Յակոբսոնը, ցույց տալով Գանձասարի վանքի ճարտարապետական բարձր արժանիքները եւ դրանք գնահատելով համահայկական արվեստի ընդհանուր չափ ու կշռույթով, գրել է, թե այդ կոթողը *«Հայ ճարտարապետության մարգարիտն է, հայկական միջնադարյան ճարտարապետության ու կոթողային քանդակագործության եզակի հուշարձանը»*, մի այնպիսի ստեղծագործություն, որն, ամենայն իրավամբ, պետք է համարել *«XIII դարի հայ ճարտարապետության հանրագիտարանը»*։ Յակոբսոնի կարծիքով՝ Գանձասարը ոչ միայն ընդգրկում եւ ընդհանրացնում է հայ դասական ճարտարվեստի բազմադարյան նվաճումները, *«ոչ միայն ինքնատիպ է ու իր կատարելության մեջ ինքնուրույն, այլեւ բացառիկ է. մենք չենք կարող ցույց տալ ուրիշ մի այդպիսի հուշարձան Հայաստանի հողի վրա»*[2]։

Պատմական ճակատագրով Գանձասարին վերապահված էր մեծ ու դժվարին մի դեր Արեւելյան Հայաստանի պատմության մեջ։ Այն Արցախական աշխարհի Առանշահիկ տիրակալների հիմնական աթոռանիստներից մեկն էր, իսկ XII-XIII դարերից, այսինքն՝ Ներքին Խաչենի իշխանության ստեղծման ժամանակներից սկսած՝ այդ նույն նյուղի բնակատեղին, եւ վանքն էլ՝ իշխանության տոհմական տապանատունը։

---

1 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Բ, Ե., 1948, էջ 25։

2 Сб. "Исследования по истории культуры народов Востока", в честь И. А. Орбели, М.-Л., 1960, стр. 144-151.

X-XI դարերին վերաբերող պատմական աղբյուրներից հատնի է, որ Գանձասարի հինավուրց եկեղեցին քաղաքական ու կրոնական հավաքատեղի է եղել Արցախի ու շրջակա գավառների համար: Այնպես որ Հասան-Ջալալը XIII դարի սկզբին նոր վանքը կառուցել է ոչ թե ամայի վայրում, այլ նախկին նշանավոր եկեղեցու տեղում: Նորակառույցին վիճակված էր բազմապատկել նախկին հոգեւորական կենտրոնի փառը, դառնալ ոչ միայն Խաչենի իշխանության մշակութային կյանքի խոշոր կենտրոնը, այլեւ ամբողջ Հայոց արեւելից կողմանց կաթողիկոսանիստը եւ միաժամանակ քաղաքական մեծ խմորումների, ճակատագրական դեպքերի ու իրադարձությունների կազմակերպիչը:

Վանքն այժմ էլ համարյա անխաթար կանգուն է: Նրա ճարտարապետության ու դեկորատիվ քանդակագործության տարրերը կազմում են մի արտակարգ համամասնություն եւ պերճախոս վկայությունն են Արցախական աշխարհի հայության կառուցողական բարձր ձիրքի:

Գանձասարի վանքը, շրջապատի բնակելի ու տնտեսական շենքերի հետ միասին, ժամանակին կառուցվել է որպես մի ավարտուն ճարտարապետական միավոր: Այդ մասին են խոսում նրա չորս պատերը, որոնցից յուրաքանչյուրը դրսից ներկայանում է որպես իր նկարագիրն ունեցող ճակատ:

Եվ, այսուհանդերձ, հետագայում նրան կից կառուցված գավիթն այդ միանգամայն ավարտուն ամբողջությունն անպայման լրացնում է, ավելի ամբողջացնում, դարձնում առավել կատարյալ:

Գավթի արտաքին ու ներքին հորինվածքները, ճարտարապետական լուծումներն ու քանդակագործական մանրամասները լիովին համապատասխանում են վանքին, բխում են նրանից ու կազմում են նրա արժանիքների շարունակությունը:

1248 թ. Հասան-Ջալալն ու Մամքանը հիմնավորապես նորոգել են թաթար-մոնղոլների ավերած Կեչառիսի վանքը: Իսկ 1251-ին Մամքանն ինքն է հայրենի Վանառում եկեղեցի կառուցել տվել (արձանագրության մեջ «եկեղեցիներ» է,-*«զեկեղեցիս»*,- հավանաբար եղել են նաեւ նորոգումներ):

Իսկ 1261 թ. քանդակվել է Գանձասարի գավթի շինարարական արձանագրությունը, համաձայն որի՝ այն կառուցել-ավարտել են Հասան-Ջալալը, իշխանուհի Մամքանը եւ նրանց որդի Իվանե-Աթաբակը: Սրանով արդեն Գանձասարն ստացավ ճարտարապետական այն ավարտուն կերպարը, որ բացառիկ էր ոչ միայն Արցախական աշխարհի, այլեւ բովանդակ Հայաստանի համար: Հնավարո՞ր էր այն գերազանցել: Ցավոք, հետագա դժնդակ դարերը հայությանը հնարավորություն չտվին պատասխանել այս հարցին:

Ինքը՝ Հասան-Ջալալը, փորձեց այդ հարցին պատասխանել մի ուրիշ բնագավառում: Ազգային հոգեւոր կյանքում նկատել էր խոշոր մի ճեղք եւ իր պարտքն էր համարում այդ ճեղքի փակումը: Ինչո՞ւ մեր պատմության իմաստուն դասերը չպետք է ծառայեն այսօրվան ու վաղվան, ինչո՞ւ մեր նահատակները, սրբերը՝ այդ հավերժական ուսուցիչները, միշտ ու ամենուրեք չլինեն մեզ հետ, մեզ հետ չապրեն իրենց հավերժական կյանքը, չկառուցեն, չկռվեն, չնահատակվեն, հայրենիքը չփրկեն նորից

ու նորից։ Եվ նա՝ Հասան-Ջալալը, իր երկրամասի ամենահեղինակավոր հոգեւորական Վանական Վարդապետի հետ խորհրդակցելով, Տեր-Իսրայել գիտնականին հանձնարարեց ստեղծել հայկական Հայսմավուրքի մեծ, համահավաք բնագիրը, որպեսզի նրա մեջ արտացոլվեն մեր անցյալի բոլոր սրբերի, հերոսների, լուսավոր մարդկանց կյանքը, գործը, ազգանպաստ ու հավատապաշտպան օրինակները։ Տեր-Իսրայելը բարեխղճությամբ կատարեց այդ խնդիրը. ստեղծվեց դեռեւս X դարից հայտնի այդ ժողովածուի նոր, լիակատար տարբերակը, որն էլ շատ շուտով, մի տաս տարի հետո, առավել պիտի մշակվեր, ստանար իր անթերի ամբողջությունը երկրամասի մի ուրիշ մշակութային հայտնի գործչի՝ Կիրակոս Գանձակեցու ձեռքով՝ դարձյալ Հասան-Ջալալի հովանավոր միջամտությամբ[1]։

Հասան-Ջալալի աջակցությունն ու հովանավորությունը վայելել են ժամանակի մշակույթի նշանավոր շատ գործիչներ, գրող-պատմիչներ ու հոգեւորականներ, շինարարներ ու բարգործ վարպետներ։ Իսկ հայոց եկեղեցին, հանձին նրա, տեսնում էր մի նոր մեծ հերոսի, որը նույնքան իմաստուն էր, որքան անձնազոհ։ Եվ, իբրեւ այդ ամենի արժանի վարձատրություն, դեռեւս կենդանության օրոք նրան կոչում էին Բարեպաշտ, Հասան-Ջալալ Բարեպաշտ, ինչպես երկու մեծահամբավ նախնիներին՝ Վաչազանին ու Համամ Գրիգորին...

* * *

Շինարարական եռուզեռը խթանում է առհասարակ բարգործ արվեստի զարգացմանը. խաչքարի արվեստն ապրում է մի վերելք, որի լավագույն նմուշներն անգերազանցելի պիտի մնային հետագա դարերում։ Գանձասարում ու Գտիչում, Վաղուհասում եւ Ռոռեկավանքում, Կոշիկ անապատում ու Սուրբ Հակոբա վանքում, Բռի եղցում եւ շատ ուրիշ վայրերում XII դ. երկրորդ կեսին ու XIII-ի սկզբին կանգնեցված գեղամանդակ բազմաթիվ խաչքարերին էլ հաջորդեցին Դադիվանքի երկու հրաշակերտ խաչքարերը (1283 թ.)՝ կանգնեցված Աթանաս եւ Գրիգոր հոգեւորականների կողմից։ Բացի նրանից, որ երկու խաչքարերի զարդամանդակներն արված են մի անգերազանց վարպետությամբ, այստեղ առկա է ուրիշ մի հատկանիշ, որ բացառիկ է, չկա ուրիշ ոչ մի տեղ։ Այս երկու խաչքարերի նախշազարդերը եռաշերտ են. նախ աչքի է զարնում վարի շերտը, որ բազմազան բանդակների հյուսվածքն է կազմում, ընդհանուր ֆոնը, ապա նրա վրա նստած են խաչն ու հարակից պատկերները, եւ, վերջապես, այս ամենից վեր, դրսից բերված-շարածի նման, արձանագրությունների գրերն են։

XIII դարի արցախյան մշակութային կյանքի այլեւայլ բնագավառների՝ նկարչության,

---

1 «Հայսմատուրք»-գրաբար «յայսմ աւուր» կապակցությունից է՝ «այս օրը», այսինքն՝ թե ինչ է ավանդել անցյալ պատմության յուրաքանչյուր «ա՛յս օրը», եւ ժողովածուն դարձել է սրբերի շարք-կենսագրությունների օրացուցային հավաքածու, որը հայոց եկեղեցու ամենատարածված ու շատ գործածական գրքերից է։

ձեռագործի, առհասարակ արհեստագործության տարբեր ճյուղերի բարձր մակարդակի մասին բազմաթիվ վկայություններ պահպանվել են ինչպես մատենագրական երկերում, այնպես էլ պատմաճարտարապետական հուշարձանների վրա: Կիրակոսը պատմում է, որ Հասան-Ջալալի մայր Խորիշահը ձեռագործով էր զբաղվում, անշուշտ այս բնագավառում բարձր արվեստի էր հասել, կյանքի վերջին տարիներն անցկացրեց Երուսաղեմի սրբարանում եւ *«ձեռագործաւ իւրով կերակրէր»*: Հաթերքի իշխանուհի Արզու խաթունի եւ իր դստերց գործած ձեռագործ վարագույրների, առհասարակ նրանց *հանճարեղ նկարակերտության* արգասիքների մասին վերը խոսվել է հանգամանորեն: Դադիվանքում, Արզու խաթունի կառուցած Սուրբ խաչ տաճարում է, որ պահպանվել են այս դարի որմնանկարչության հազվագյուտ օրինակներից մի քանիսը:

Սակայն Խաչենի նկարչական արվեստի հիշատակները Դադիվանքի որմնանկարներով չեն սահմանափակվում: Մատենագրական ստույգ տեղեկություններով հաստատվում է, որ Խաչենի իշխանական տներում եւ վանքերին կից գործող գրչատներում ու արվեստանոցներում սովորում էին նկարել, ձեռագործությամբ զբաղվել: Գանձասարի եւ Վերին Խաչենի վանքերում (Խաթրավանք, Դադիվանք, Ս. Աստվածածին եւ այլն) ստեղծված գրչագրերն ունեն ընտիր մանրանկարներ ու զարդանախշեր՝ ստեղծված Խաչենեցի ծաղկողների կողմից:

Կա մի կարեւոր հանգամանք, որ, իհարկե, Արցախի մշակույթի զարգացումը դարձրել է բնականոն, նրա հաջողությունները՝ համարյա միշտ համընթաց մեր ազգային մշակութային կյանքի առաջամայլերի հետ: Արցախ-Խաչենն անթիվ թելերով կապված էր հայրենիքի մյուս մարզերին ու կենտրոններին, ընդհուպ մինչեւ Կիլիկյան Հայկական թագավորությունը: Բավական է հիշել Վանական Վարդապետի՝ Հասան-Ջալալի այդ հովանավորյալի կապը ժամանակի մշակույթի ազգակից գործիչների հետ, Մխիթար Գոշի, Կիրակոս, Վարդան, Գրիգոր պատմիչների ու Խաչենի տերերի առընչությունները, Արեւմտյան Հայաստանում նստող կաթողիկոսների ու թագավորների գործուն ուշադրությունը Խաչենի նկատմամբ, Արեւմտյան Հայաստանի հոգեւոր մշակույթի խոշոր գործիչ Հովհաննես Երզնկացու գործարար բարեկամությունը Դոփյան Հովհաննես եպիսկոպոսի հետ: Հայտնի են Կոստանտին Բարձրբերդցի կաթողիկոսի գրչագիր-նվերները Վերին Խաչենի հոգեւոր կենտրոն Խաթրավանքին եւ Ուտիքի վանքերին, մյուս կաթողիկոսների սերտ թղթակցությունը Խաչենի առաջնորդների հետ: Ըստ ավանդության՝ Վերին Խաչենի ամենանշանավոր ամրոցներից մեկը՝ Թարթառի աջ ափին, Դադիվանքի դեմ-դիմաց բարձրացած լեռան վրայի բերդը, վերակառուցվել է Կիլիկիայի թագավոր Լեւոն Ա-ի ծախքով, այդ պատճառով էլ նրա անունն էր կրում: Կիլիկիայում եւ Արեւմտյան Հայաստանի հոգեւոր կենտրոններում ստեղծված բազմաթիվ ձեռագրեր են բերվել Խաչեն՝ ինչպես նվիրատվությունների ու գնումների ճանապարհով, այնպես էլ թաթար-մոնղոլների արշավանքների ընթացքում Խաչենի իշխանների ձեռքով փրկվելու եղանակով:Այս բոլորը չէին կարող իրենց ազդեցությունը թողած չլինել երկրամասի մշակույթի զարգացման վրա: Խաչենի մշակութային-հոգեւոր մթնոլորտն այդ ճանապարհով նոր ազդակներ էր ստանում, ան-

ընդհատ թարմանում ու բարելավվում։ Սակայն ինքն էլ երբեք պարտք չէր մնում, քանի որ այդ մթնոլորտում ստեղծված արժեքները տարածվում էին, դառնում համազգային սեփականություն։

Այս համազգային կապերի ու փոխհարաբերությունների մթնոլորտը ներկայացնելու համար արժե հիշել Վերին Խաչենի իշխանական տան երեք հոգեւոր ներկայացուցիչներին, որոնք *Հովհաննես* հոգեւորական անունն ունեին եւ, իրարից տարբերելու համար, հարկ է, որ կոչենք Հովհաննես Ա՝ եղբայր Հասան Ա-ի (Դոփի ամուսնու), Հովհաննես Բ՝ Հասանի ու Դոփի որդի, Հովհաննես Գ՝ որդի Գրիգորի, թոռ Հասանի ու Դոփի։ Երեքն էլ հայրենի Արցախի հոգեւոր-մշակութային կյանքին ծառայելուց զատ, թերեւս ավելի շատ, կապված էին Հաղբատի ու Սանահինի հոգեւոր կենտրոններին՝ ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ այդ երկու կենտրոնները Զաքարյան իշխանապետության հովանու տակ էին, իսկ Վերին Խաչենը կամ Ծարը եւս գտնվում էր Զաքարյանների հովանավոր ուշադրության ներքո։ Հայտնի է, որ Սարգիս Մեծի որդիներ Զաքարեի ու Իվանեի դաստիարակն էր եղել Հովհաննես Ա-ը, որը եւ հետագայում էլ միշտ վայելել է նրանց սերն ու երախտագիտությունը[1]։ Գուցե հենց այս հանգամանքն էլ հիմք է դարձել, որպեսզի Ծարա հաջորդ հոգեւորական զավակները եւս վայելեն իրենց նախորդի արտոնությունը։ Ամեն պարագայի, այս երեք նշանավոր գործիչները մի առանձնահատուկ դեր խաղացին Արցախ-Խաչենի եւ Արեւելյան Հայաստանի հոգեւոր երկու մեծ կենտրոնների մշակութային կյանքի զարգացման, շարժման ընդհանուր ոգին անխաթար պահելու գործում։

Հովհաննես Ա Ծարեցին Վերին Խաչենում էր ստացել իր կրթությունն ու դաստիարակությունը, ապա աշակերտեց Մխիթար Գոշին, եւ 1180-ականների սկզբին արդեն Սանահինի առաջնորդն էր։

Մատենագրական տեղեկություններով ու վիմագրական հարուստ նյութերով կարելի է կազմել մեծ երախտավորի ապրած երկար կյանքի տարեգրությունը՝ Սանահինի առաջնորդությունից մինչեւ Հաղբատավանք գնալը, այնտեղից հայրենի Խաչեն վերադառնալը եւ, վերջապես, շուրջ քսանամյա առաջնորդությունը Հաղբատի վանքում, ուր նա, իր հոգեւոր խնդիրները կատարելուց բացի, ծավալեց շինարարական մի այնպիսի գործունեություն, որի արգասիքներն այսօր էլ մեզ են ներկայանում որպես իր դարի հայ ճարտարապետական արվեստի վսեմագույն կոթողներ։

Հովհաննեսը մեկն էր հյուսիս-արեւելյան Հայաստանի այն հոգեւոր առաջնորդներից, որոնք XII դարի 70-80-ականներին համառ պայքար էին մղում բյուզանդական թագավորի ու եկեղեցու՝ հայոց հավատի դեմ կատարած հարձակումների դեմ։ Գրիգոր Տուտերորդու, Մխիթար Գոշի, Դավիթ Քոբայրեցու եւ մյուսների հետ Հովհաննեսն ստորագրեց այն նամակները, որոնցով հյուսիս-արեւելյան նահանգների վարդապետները դատապարտում էին բյուզանդական ոտնձգությունները եւ զգուշացնում Գրիգոր Տղա կաթողիկոսին՝ չընկնել հունաց *«միություն»* կոչված թակարդը։

---

1 Կիրակոս, էջ 171, 216։

Հովհաննեսի օրոք, 1181 թ., կառուցվեցին Սանահինի վանքի Ամենափրկիչ եկեղեցին ու նրա գավիթը, ճարտարապետական մի հոյակերտ, որի իրականացնողն էր ինքը՝ Հովհաննեսը՝ *«աւգնութեամբ ամիր Բրդին եւ վարդապետի մեծի Գրիգորի»* (Տուտերորդի խաչենեցու)։

Ապա Հաղբատի առաջնորդն էր եւ իրեն հատուկ եռանդով ու հմտությամբ առաջ էր տանում վանական համալիրի շինարարական գործը, գլխավորում ձեռագրատան բեղմնավոր աշխատանքը, մասնակցում բյուզանդական եկեղեցու ոտնձգությունների դեմ մղվող անհաշտ պայքարին։

XII դ. վերջին Հաղբատը թողնում, գնում է Խաչեն, կառուցում Խաթրավանքի գլխավոր եկեղեցին՝ այնտեղ հավաքելով բազմաթիվ խաչքարեր ու զարդանախշ քարաբեկորներ, ստեղծում վանքի մատենադարանը (1200-1204)։

Հաջորդ դարի սկզբին Հովհաննեսը վերստին Սանահինում ու Հաղբատում էր, դարձյալ շինարարական գործի գլուխ, ձեռագրական աշխատանքներ կազմակերպող։

Կիրակոսը նրա գործունեությունից առանձնացնում եւ մի հատուկ սքանչացումով է պատմում Հաղբատի վանքի մեծ գավթի շինարարությունը, որը տեղի է ունեցել 1206-10 թվականներին. *«...քակեաց զգաւիթն փոքրագոյն, որ ի դուռն կաթողիկէին Հաղբատայ, եւ շինեաց մեծ եւ գեղեցիկ շինուած, որ զարմացուցանէ զտեսողն հիացմամբ»*,-գրել է նա, ապա ավելացրել.- *«Եւ այր առաքինի էր Յովհաննէս, եւ բազում գործս յիշատակի գործեաց նա ի Հաղբատ, ընդ որս եւ փոքրակաւոր գաւիթն եկեղեցւոյն շինեաց, որ հիացուցանէ զտեսողն»*։

Եվ, իսկապես, միայն այս գավիթը բավական կլիներ, որպեսզի գալիք սերունդները երախտագիտությամբ հիշեին նրա շինարարին։

Հետազոտողները առանց բացառության, գտնում են, որ *«Հաղբատի մեծ գավիթը հայ ճարտարապետության ամենափառավոր կոթողներից մեկն է»*, *«իսկ գավիթների ճարտարապետության մեջ՝ առաջինը»*։ Հաղբատի հին տաճարին կցված գավիթը, կառուցված նույն վանքի Հովհաննես Ա եպիսկոպոսի կողմից, իր հոյակապ մեծությամբ, իրար խաչվող վիթխարի կամարներով եւ կրկնակի գմբեթների բարձրությամբ մի գլուխգործոց է միջնադարյան հայ ճարտարապետության մեջ։[1]

Հովհաննես Ա-ի շինարարական գործունեության պսակներից են նաեւ Հաղբատի 3 գեղազարդ խաչքարերը՝ կանգնեցված իր իսկ նախաձեռնությամբ ու միջոցներով։ Եվ պատահական չէ, որ իր վերջին վիմագրերից մեկում այդ ամենաեռանդունը եռանդունների մեջ եւ համեստագույնը համեստներից, լոկ մի խնդրանք ուներ՝ որպեսզի իրենից հետո *«Սուրբ Յակոբայ տօնի կիրակէն»* իր այդ խաչքարերի *(«սուրբ նշանաց»)* *«տօն կատարէն»*։

---

1 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երեւան, 1963, էջ 32։

* * *

Հովհաննես Ա-ի հետքերով գնաց նաեւ նրա եղբոր որդին՝ անվանակից հոգեւորական գործիչը։ Հայրենի Վերին Խաչենի վանքերում կրթվել-դաստիարակվելուց հետո նա աշխատեց նույն վանքերի միաբանների հետ, ապա եղավ Սանահինի առնաջնորդը։ Այստեղ նրա առաջին արձանագրությունը 1221-ից է, վերջինը՝ 1225-ից։ Ապա Հաղբատի առաջնորդարանում փոխարինում է հորեղբորը, կառուցում *«բերդ մի ամրագոյն պարսպօք՝ մէջ ընդ Հաղբատ եւ ընդ Սանահինն»*, որով նպատակ ուներ վանքերը պաշտպանել խորեզմցիներից։ Նրա օրոք նորոգվում են վանական համալիրները, ստեղծվում բարձրարժեք ձեռագիր մատյաններ։

Հովհաննես Բ-ին էլ հետեւեց նրա եղբորորդի Հովհաննես Գ-ը, որը 1257-ին արդեն Հաղբատի առաջնորդն էր։

Հովհաննես Գ-ը՝ Վերին Խաչենի արժանավոր որդին, կյանքում երբեք չկտրվեց հայրենի լեռնաստանից, նրա հոգեւոր կենտրոններից ու մշակութային կյանքից։

Հովհաննես Գ-ի ինքնագիր վերջին արձանագրությունը պահպանվել է Ծարա Ս. Աստվածածին վանքում։ Այստեղ, երեւի խոր ծերության հասած մեր վարդապետը պատմում է, որ, երբ թաթար-մոնղոլները տիրել-բռնել էին ամբողջ աշխարհը՝ իրենց հայրենի երկրներից մինչեւ *«յօվկիանոս ծով եւ Ստամպուլն»* եւ ծանրածանր հարկերով, գերեվարություններով ու ավեր-ավարով տանջում էին ժողովուրդներին,-ահա՛ *«յայսմ ժամանակի դառնութեան, որ էաք մեք տէր Յովհաննէս Գոփեան տրուպ եւ նուաստ եւ տկար հոգի, հասաւ մեզ հրամանի ի նախահարցն մերոց գնալ ի մեր հայրապետացն առաջնոյ աթոռն հռչակելի Հախպատ»*։ Ապա մեծ վարդապետը պատմում է իր դարձը հայրենի Ծար՝ ավազ եղբայր, քաջ զորական եւ *«հռչակաւոր արիացելոյն»* Հասանի տունը, ուր արդեն Ծարի տիրակալն էր Հասանի որդին՝ Գրիգոր իշխանը՝ Սյունյաց երկրի մեծ իշխան Տարսայիճի Ասփա դստեր ամուսինը։ Հովհաննեսը պատմում է ապա, թե ինչպես Ծարում տեսավ մի ձորակ, ուր *«հոսէին ջուրք աստի եւ անտի եւ մէջի նոցա բլրակ մի գեղեցիկ։ Ես հաճեցա ընդ սա եւ մտա անապատս եւ սկսա շինել մատուռ մի։ Եւ յայնմ խորհրդի եկն Գրիգոր եղբորորդի մեր եւ իշխան զաւառիս եւ այլ շատ-շատ կողմանց իշխեցող եւ կամեցաւ շինել զՍուրբս Աստուածածինս ի բարեխաւս մեզ եւ ամենայն քրիստոնէից։ Ես տէր Յովհաննէս արարի սկիզբն շինութեան եկեղեցոյս ի թուին ՉԾ»* (1301)։

Այսպես է կառուցվել Սուրբ Աստվածածինը։

Հավանաբար հայրենի տիրույթը վերադարձած վարդապետը կյանքի վերջում տեսչություն էր անում Դադիվանքի ու Ծարի եպիսկոպոսանիստ Խաթրավանքի վրա, հսկում վանական շինությունների վերանորոգումները։

* * *

Եվ այսպես փակվեց Արցախյան աշխարհի մշակութային կյանքի մի շատ կարեւոր շրջանը, որի պարգեւած հիշատակներն անմահ ու հավերժական են եւ իրենց բացառիկ տեղն ունեն մեր ազգային մշակույթի բազմադարյան պատմության մեջ։

Ցավն այն է, որ այդ շրջանն իսկապե՛ս փակվեց՝ չունենալով արժանի շարունակություն, որովհետեւ դրանից հետո գալու էին նոր թուրքերի՝ օղուզ կոչվածների ահավոր, անցյալ պատմության մեջ չեղած-չտեսնված խժդժությունները, եւ տեղաբնիկների համար գոյապահպանական մաքառումների մեջ համարյա անհնարին էր դառնալու մշակութային առաջընթացի ամեն մի քայլ։

ԱՐՑԱԽ-ԽԱՉԵՆԸ XIV-XV ԴԱՐԵՐՈՒՄ

XIV դարի առաջին կեսը հայտնի է իբրեւ մոնղոլական իշխանության անկման ժամանակաշրջան։ Գահակալական կռիվները խարխլել էին անհուն ու անեզերք տարածությունների վրա փռված իշխանության ռազմաքաղաքական հաստատությունները, եւ հպատակ ժողովուրդներն ու նրանց երկրները ձեռքից ձեռք էին անցնում։

Գահակալական կռիվները միշտ էլ աղետաբեր են եղել, առաջին հերթին, հպատակ ժողովուրդների համար։ Ինչպես սելջուկ-թուրքերի տիրապետության վերջին շրջանում, երբ Հայաստանը ոտնատակ էր արվում կենտրոնական իշխանությունից անկախացած ամիրների ու զորապետների միջեւ վարվող պատերազմների պատճառով, թաթար-մոնղոլական տիրապետության վերջին տասնամյակներում եւս ժողովուրդները հեծում էին նման արհավիրքների ներքո։ Հուլավյան իշխանությունը Հուլավու խանի (1256-1265թթ.) մահից հետո երերում էր գահակալական մրցապայքարից, որն առավելագույն չափեր ընդունեց Աբաղա խանի (1265-1282) եւ նրա հաջորդների օրերում։ **XIV** դարի սկզբին արդեն իշխանության կուսակալները եւ զորապետները տեղերում դարձել էին անկախ ու միահեծան եւ հանախ ճակատում էին կենտրոնական իշխանության դեմ։

Հիշատակագիրներից մեկը դառնությամբ նկարագրում է Գեղարքունիքին ու հարեւան շրջաններին հասած աղետները, որոնց պատճառը եղել էր կուսակալ Ղուռումչիի ապստամբությունը կենտրոնական իշխանության դեմ։ Ղուռումչին անկախացել, կողոպտում էր գյուղերն ու վանքերը, կոտորում բնակիչներին, շատերին (հատկապես ծերերին ու երեխաներին) գերեվարում։ Մնացած բնակչությունն ***«աշխարհիս թողին զինչս իւրեանց եւ ի ծերպս վիմաց ապաւինէին... էրէրէր երկիր ի յահէ անիծեալ Ղուռումչոյ...»***, մինչեւ որ Աբու-Սայիդը (հիշատակագրի մոտ՝ Բուսաիտ) զորքով եկավ, ***«կոտորեաց զՂուռումչի եւ զաւրան իւր»***։

Ինչպես պարզ երեւում է մատենագրական նյութերից եւ վիմագրերից, մոնղոլ խաները ու զորապետները, արագորեն իրարից խլելով բռնապետության սանձերը, մեկը մյուսից ծանր կեղեքումների էին ենթարկում ժողովուրդներին, սաստկացնում սոցիա-

լական ծանր վիճակն ու կրոնական հալածանքները։ Հայաստանի շատ նահանգներում ծայր էր առել մի արտագաղթ, որի հետեւանքով կարճ ժամանակում դատարկվեցին նախկինում շեն ու բարեկարգ բազմաթիվ բնակավայրեր ու գավառներ։ Խաչենի հայությունը, ինչպես միշտ, ապավինած իր լեռնային աշխարհին, տոկաց, դիմացավ նաեւ այս ահավոր փորձությանը։ Եվ բավական էր, որ իլխանության ժառանգորդների թուլացմամբ նվազագույն հնարավորություն ստեղծվեր, որպեսզի լեռնաշխարհի բնիկ իշխանությունը վերստին բարձրանար՝ մի անգամ եւս ապացուցելով իր անկասեցնելի կենսունակությունը։

Հայ ժողովրդի վիճակն աննախադեպ ծանրացել էր նրանից հետո, երբ մոնղոլ իշխողների վերնախավն ընդունել էր մահմեդականություն, այլադավաններին էլ ստիպում էր դառնալ իր հավատին, իսկ հակառակ դեպքում վճարել գլխահարկ, որը ջիզյայի նման մի բան էր, թերեւս առավել դաժան, քանի որ հարկահանները դարձել էին ավելի անողորմ ու վայրագ։ Սակայն այս էլ ամենածանրը չէր, քանի որ դրանից հետո էլ պիտի զար թուրքացած մոնղոլական զորքը՝ բռնագրավիչների մեջ ամենաահավորը՝ Լանկ-Թեմուրի («լանկ»-«կաղ», որովհետեւ վիրավորվել էր ու կաղում էր) գլխավորությամբ։ Թեմուրյան արնախում զորաբանակները Հայաստանն ասպատակեցին 1380-ական թվականներին եւ սրախողխող արին բոլոր նրանց, ովքեր դիմադրություն էին ցույց տալիս։ Վերին Խաչենը Թեմուրյան հրոսակների դեմ կռվել էր անօրինակ խիզախությամբ, այդ պատճառով էլ կռվում ընկան իշխանության շատ պայազատներ։

Թեմուրյան հրոսակների վայրագություններից ամայանում էին Արցախի վաղեմի շեն ու հարուստ բնակավայրերը։ Թիկունքի ապահովության համար բռնագրավիչները կոտորում էին տեղական իշխանավորներին, նույնիսկ գյուղական այնպիսի պաշտոնյաներին, ինչպիսիք էին տանուտերերն ու ձեռնավորները։ Եվ, հավանաբար, հենց այդ շրջանի Խաչենին էր վերաբերում Մատթեոս Ջուղայեցու հայտնի մեկնաբանությունը «ավերակ» բառի, երբ այն հարցին, թե դա ի՞նչ է նշանակում, Մատթեոսը պատասխանում է. ***«անկարգ շենն, որ ոչ ունի ձեռնաւոր եւ տանուտէր, աւէր կոչեմք՝ որպէս Խաչենեցիք...»***[1]։

Քիչ հետո կտեսնենք, որ Լանկ-Թեմուրի ավերածությունների ընթացքում համարյա գլխատվեց Վերին Խաչենի իշխանական տունը։

Երբ մեծ ու կենսունակ ծառը կտրում են բնից, հենց կտրած տեղից էլ դուրս են գալիս նոր ոստեր եւ արագ բարձրանում՝ ծածկելով նախկին ծառի ընդգրկած շրջանը։ Ծարա իշխանության հետ էլ կարող էր նույնը կատարվել, եթե վերընձյուղած ոստերը չկարկտահարվեին, եթե պատմության բեմը զիջող թեմուրյանների հետքերով եկած չլինեին դաժանության եւ բռնությունների մեջ նրանց ոչնչով չզիջող կարակոյունլու եւ ակկոյունլու վաչկատուն ցեղերը։

Հարկ է նշել, որ Արեւելյան Այսրկովկասը եւ հատկապես Արցախն ու նրա դաշ-

---

1 Մատենադարան, ձեռ. No 1403, թ. 124-125։

տային մասերն ամենից շատ էին ենթակա ասպատակիչ հորդաների կոտորածներին ու ավեր-ավարին: Բնագրավիչ նոր եկվորները նակատամարտերից հետո, նախորդների պես, ձմեռում էին Մուխանի գավառում, որ XV դարից սկսած կոչվում էր Ղարաբաղի դաշտ: Եվ նրանի եւս այստեղից էին սկսում իրենց նոր ասպատակությունները, որոնց առաջին հարվածները, հասկանալի պատճառով, պետք է իջնեին Արցախի ու հարեւան հայկական գավառների վրա: Իսկ եթե նկատի առնենք, որ նույն թուրք եւ տարացեղ մյուս ասպատակիչները հիմա էլ իրենց համար ամառանոցավայրեր էին դարձրել Գեղամա բարձրավանդակը, պարզ կլինի, թե ինչպիսի՞ աֆցանի մեջ էր առնված Մուխանի-Ղարաբաղի դաշտի ու Գեղամա լեռների միջեւ ընկած տարածքը՝ Ծարի, Վերին ու Ներքին խաչենների եւ հարակից գավառների հայ բնակչությունը:

Լանկ Թեմուրի մահից (1405) հետո նրա ժառանգների եւ իշխանության ներսի մյուս մեծավորների միջեւ ծագած գահակալական քայքայիչ պատերազմներից օգտվեցին կարակոյունլու թուրքերը, որոնք առաջնորդ Կարա-Յուսուֆի գլխավորությամբ ոչնչացրին Թեմուրյան պետության ժառանգորդների իշխանությունը եւ հաստատեցին իրենցը՝ կարակոյունլու ցեղի տիրապետությունը: Այն պետք է գոյատեւեր ավելի քան կես դար (1407-1467թթ.):

Կարա-Յուսուֆի հաղթանակը մի կարճ պահ ոգեւորեց թեմուրյան բռնակալության ամբողջ ծանրությունն զգացած հայերին: Գրիչը նույնիսկ ուրախանում էր, որ նա եկավ, ոչնչացրեց թաթարների լուծը, ***«ազատեաց աշխարհս ի յայն անիրաւ խնդրողացն»***: Սակայն սա միայն պատրանք էր, եւ շատ շուտով ժողովուրդը համոզվեց, որ չարն է չարին փոխարինել: Գանձասարի վանքի առաջնորդ, վարդապետ ու գրիչ Մատթեոս Մոնոզոնը սրտի կսկիծով արձանագրում էր, թե ***«դառնացաւ ժամանակս եւ թագաւորեաց ոմն Թուրքման՝ անունն Ուսուֆ, զի ճանաչիւր ըստ թոյլ տալոյն Աստուծոյ լինել կշտամբիչ, ըստ այն»***, թե ***«զչարիսն չարեաւ կորուսցէ, զի ի բառնալ զազանին չորրորդի Թեմուրն կոչեցեալ Կաղն, բռնացեալ Ուսուֆն (պատմում է նրա ճակատամարտերը, Թամուրյաններին կոտորելը)...Զայսչափ չարիս առ գլխաւորս աշխարհիս հատոյց Ուսուֆն, իսկ առ փոքունսն զի՞նչ ասացից»***[1]:

Մոնոզոնի պատմելով՝ թաթարները կողոպտել էին Գանձասարի վանքը: Կարա-Յուսուֆի գալուց հետո էլ սրա բռնավորները բերին նրանց (երեւի մարդկանց գերել ու ծառայեցնում էին) եւ ***«յաւար հարին կրկին զսուրբ ուխտս, եւ ոչ ինչ ի մարմնաւոր ընչից մնաց, բայց միայն մեք եւ սրբութիւնքն»***[2]:

XV դարի առաջին քսանամյակը հայտնի է ուրիշ աղետներով եւս: 1407 թ. բռնկվում է մի ահավոր ***«մահտարաժամ»***, որի մասին պատմող հիշատակագիրը այնքան է, եւ չի կարելի կասկածել, որ նրա խոսքը վերաբերում է նաեւ Խաչենին: Դաժան համաճարակը ***«զտղայոց վերջք արար, որ բերանով չէ պատմելի, ի***

1 Մատենադարան, ձեռ. No 8681, թ. 81 (Ա-Բ.):

2 Նույն տեղում, 89 բ:

քանէ, ի երեանէ, ի յիսնէ թէ մին տղայ մնաց՝ ԺԵ (15) տարոյ ի վեր, պակաս՝ մեռաւ»։

Հայաստանի բոլոր նահանգներն ընդգրկած այս արհավիրքները չէին կարող չտալ իրենց նակատագրական արդյունքը։ Երկիրը մեծ մասամբ մնացել էր անտեր՝ զրկված իր տեղաբնիկ, հայազուն իշխանություններից։ Եվ ընդհանուր այս պատկերի թելադրանքով պատմաբան ուսումնասիրողները եկել են այն եզրակացության, թե թաթարմոնղոլների ավերիչ տիրապետության ժամանակ հայկական պետության մնացորդները՝ հայ իշխանությունները մանրացել-փոշիացել էին, իսկ հետո էլ, ետմոնղոլյան փոթորիկներն այդ փոշիացածներին հեշտությամբ ցաք ու ցրիվ արին-ոչնչացրին, եւ XIV-XV դարերում արդեն սպառ-սպուռ բնաջնջվեցին հայկական իշխանությունները՝ հայոց պետականության այդ վերջին մնացորդները։ Այս մտայնության համար շատ էլ բնութագրական չէ այն պնդումը, թե մեր ազգային պետականության թաղումը կատարվել է Կիլիկիայում, երբ 1375 թ. աշխարհի չարերի միահամուռ նախաձեռնությամբ հայ թագավոր Լեւոն Զ-ը գահուզուրկ է արվել ու ֆշվել տարագրության։ Իբր, դրանից հետո շուրջ հինգ ու կես դար հայ ժողովուրդը ոչ պետականություն է ունեցել, ոչ էլ այն հիշեցնող որեւէ վարչական մարմին։

Արցախի պատմության ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սխալվում են այս՝ վաղուց համընդհանուր ընդունելության ու պաշտոնական ճանաչման արժանացած կարծիքի հեղինակները։ Արցախում ետմոնղոլական շրջանում եւս իրենց գոյությունն են պահպանել ու պաշտպանել տեղաբնիկ հայության Առանշահիկ իշխանության ժառանգները, որոնց էլ հաջորդել են հենց այս իշխանության բնի վրա արձակված նոր ճյուղերը՝ մելիքները, որոնք, առանց առարկության, ճանաչվում են հայոց պետականության առողջ բեկորները՝ գոյատեւած մինչեւ XIX դարի սկիզբը, Այսրկովկասում Ռուսական ցարիզմի տիրապետության հաստատումը, որն այստեղ չհանդուրժեց տեղական վարչաքաղաքական եւ ոչ մի մարմնի գոյությունը։

Այժմ տեսնենք՝ ի՞նչ կար, իբր թե, իշխանություններից իսպառ պարպված Արցախում, ովքե՞ր էին գլխավորում այս լեռնաստանի հայության կյանքը եւ ժամանակ առ ժամանակ նաեւ պայքարը հանուն ազգային գոյության ու, նույնիսկ, պետական անկախության։

ՆԵՐՔԻՆ ԽԱՉԵՆԻ ՏԵՐ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՆԵՐԸ XIV-XV ԴԱՐԵՐՈՒՄ

Ներքին Խաչենի իշխանական տունը XIII դ. վերջից, Հասան- Ջալալի անունով, կոչվում է Հասան-Ջալալյան։ Այսպես էին կոչվում նաեւ հոգեւոր այն նվիրապետները, որոնք ներկայացնում էին նույն իշխանական տոհմը եւ արդեն ժառանգական իրավունքով XIV դ. երկրորդ կեսից տնօրինում էին նահանգի եպիսկոպոսությունը, իսկ XV դարից՝ նաեւ ամբողջ Հայոց արեւելից կողմանց կաթողիկոսական գահը։

Դժվար նակատագիր էր վիճակված Հասան-Ջալալի իշխանության ժառանգորդներին։ Թաթար-մոնղոլական բռնակալները նվաճած երկրներում անասելի ծանր հարկերի եւ պարբերական անողորմ կողոպուտի ու ավերածությունների միջոցով ժողովրդին դատապարտել էին ծայր աղքատության եւ հուսահատության։ Խաչենն ու հարեւան լեռնային-նախալեռնային գավառները, որոնք միշտ էլ համեմատաբար քիչ էին ենթարկվում ասպատակիչների հարվածներին, XIII դարի ցնցող մի շարք դեպքերից հետո, XIV դարում կորցրել էին իրենց վաղեմի զորությունը եւ այլեւս անկարող էին դիմադրելու թաթար-մոնղոլ եւ ուրիշ բռնագրավիչների կամայականություններին։ Սպառվել էին նաեւ տնտեսական հիմքերը, ջլատվել էին մշակութային ուժերը։ Ոչինչ չէր կառուցվում, երկրի վաղեմի գյուղաքաղաքներն ու բերդամրոցները կիսավեր էին։ Վանքերում ու եկեղեցիներում այլեւս չկար նախկին խլրտուն մշակութային կյանքը։ Այս համընդհանուր ողբերգական վիճակի մասին, կցկտուր վկայություններից բացի, դժբախտաբար մենք ժամանակի հայ իշխանությունների մնացորդների քաղաքական կյանքը հանգամանորեն պատկերող տեղեկություններ չունենք։ Պարզ է, երբ ոչինչ չէր կառուցվում, խոսք չէր կարող լինել նաեւ վիմագրական նյութի մասին։ Կառուցվածի վրա էին գրվում արձանագրությունները, որոնք, կառուցման փաստն արձանագրելով հանդերձ, ամենահավաստի տեղեկություններ էին հաղորդում նաեւ երկրամասի քաղաքական ու տնտեսական կյանքի մասին։ Երբ համարյա մարել էր կյանքը հոգեւոր կենտրոններում, ավելորդ է խոսել այն պայմանների մասին, որոնցում պետք է ստեղծվեին ձեռագիր մատյաններ՝ ժամանակի ու շրջապատի կյանքը ներկայացնող հիշատակարաններով։

Սակայն, այսուամենայնիվ, կան հիշատակարաններ՝ գրված ձեռագիր մատյաններում եւ քարերի վրա, կան եւ խոսում են Արցախամուր աշխարհի տերերի կենսունակության ու հայրենանվեր ոգորումների մասին։ Վերը հիշեցինք, որ 1287 թ. ձմռանը վախճանվել էր Ներքին Խաչենի տեր Իվանե-Աթաբակը։

Իշխանական աթոռի վրա Իվանե-Աթաբակին հաջորդել էր նրա որդի Ջալալը[1]. Հաթերքի իշխանազուն Խոյդանի որդի Խաթլուբեկը Մեծառանից Սուրբ Հակոբա վանքին ընծաներ է տվել *«յիշխանութեան Ջալալին... ՁԽԲ»* (1293) թվականին[2]։

Ջալալի իշխանությունը բավական ակնառու երեւույթ է եղել, եթե այն հարկադրված նշել է նաեւ Հաթերքի տերը՝ Խաչենի իշխանության մյուս նյուղի պայազատը։ Գանձասարի վանքում ՁԿ (1311) թվականից արձանագրություն է քանդակվել այն առիթով, որ Աբուքանն ու նրա ամուսին Մինան *«յիշխանութեամբ Ջալալին եւ յառաջնորդութեան տեառն Յոհաննէսի»* վանքին են նվիրել Ջարեքդարը (երեւի

1 Միջնադարյան Հայաստանում ընդունված էր ավագ թոռանը կոչել պապի անունով։ Այստեղ Հասան-Ջալալի որդի Աթաբակ-Իվանեն իր ավագ որդուն կնքել է հոր անվան մեկ մասով՝ Ջալալ, ինչպես էլ իր թոռանը եւ թոռնթոռանը պիտի կոչեին Իվանե կամ Աթաբակ։

2 Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 170։

գյուղը, որն այժմ էլ կա Մարտակերտի շրջանի հյուսիս-արեւելյան մասում, Թարթառի ափին) եւ այլ ընծաներ[1]:

Որոշ ժամանակ անց մի այլ նվիրատու նույն Գանձասարի վանքի պատին բանդակած իր արձանագրությամբ այսպես է հավաստել Զալալի իշխանությունը. ***«...Ես Գերզ՝ որդի Հայրապետայ եւ ամուսին իմ Մինա, յիշխանութեամբ Զալալին, միաբանեցաք սուրբ ուխտիս, տուաք ընծա։ Տէր Յոհաննէս եւ միաբանքս տուին պատարագ Նոր կիրակէին... թվին ՉԿԷ»*** (1318)[2]:

Գանձասարի վանքի հյուսիսային պատի վրա կա նաեւ մի անթվական արձանագրություն, որով Պետրոսի որդի Սարգիս քահանան պատմում է, թե ***«իշխանութեամբ Զալալին»*** միաբանել է վանքին ու տվել ***«Ե (5) գիրք եւ այլ ընծա»***[3]:

Ուշագրավ է, որ XIV դ. սկզբներում արդեն, Ներքին խաչենի քաղաքական իշխանության հետ միասին, հոգեւոր իշխանությունը եւս գտնվում էր Հասան-Զալալյանների ձեռքում: Եթե իշխան Զալալն Աթաբակի որդին էր եւ Հասան-Զալալ Դոլայի թոռը, ապա արձանագրությունների մեջ հիշատակված Գանձասարի առաջնորդ Հովհաննեսն էլ Հասան-Զալալի եղբայր Իվանեի որդին էր: Այդ նա էր, որ դեռեւս Աթաբակի օրոք եւ նրա հրամանով 1271 թ., վանքի առաջնորդը լինելով, վանքի համար իր ***«հալալ արդեանց»*** միջոցով գնեց Վարդանաթաղը, ***«մին չորեցեզրն»*** եւ այլ ընծաներ: Նա հենց այս արձանագրության մեջ ներկայանում էր որպես ***«Յոհաննէս որդի Իւանէի»***[4]:

Եվ կարեւորն այն է, որ իշխանազուն Հովհաննեսի եպիսկոպոսությունը մի պատահական երեւույթ չէր. հետագայում արդեն Գանձասարի ու Մեծառանից Ս. Հակոբա վանքերի առաջնորդները պիտի ձեռնադրվեին բացառապես Հասան-Զալալյան տոհմի ներկայացուցիչներից:

Զալալ իշխանի հետագա կյանքի մասին տեղեկություններ չկան: 1361 թ. արդեն իշխանության գլուխ էր կանգնած մեկ ուրիշը՝ Մեծ հորջորջված Իվանեն: ***«Թվ. ՊԺ (1361) իշխանութեամբ Մեծի Իւանէի ես տէր Կոստանդ մեծ վարդապետաք գնեցի զանգականիս, սուրբ ուխտս բերի»***[5]:

Ուրեմն, Զալալին՝ Հասան-Զալալի թոռանը, հաջորդել է Իվանեն՝ Իվանե-Աթաբակի թոռը: Փույթ չէ, որ այս Իվանեի իշխանության մասին խոսող շատ աղբյուրներ չունենք: Կարեւորն այն է, որ նրան Իվանե Մեծ են համարում ոչ միայն հայրենի Ներքին խաչենում, այլեւ Հաթերքի ու Վերին խաչենի կամ Ծարի կողմերում: Դա նշան է, որ Ներքին խաչենի տերը գերազան էր ամբողջ խաչենի իշխանների նկատմամբ:

Իվանե Բ-ին հաջորդել է Զալալ Գ-ը (եթե Հասան-Զալալին պայմանականորեն համարենք Զալալ Ա), որի իշխանության մասին տեղեկություններ ունենք XV դարի

---

1 Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., Բ, էջ 376:

2 Դիվան հայ վիմագրության, V, էջ 53:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում, էջ 50:

5 Նույն տեղում, էջ 42:

առաջին քառորդից։ Այս ժամանակ օտար բռնավորները նրան բռնել-տարել էին առժամապես (Մատթեոս Մոնոզոնը գրել է, թե Ջալալը եւ *«որդիք նորին... են ի ներքո ձեռին անօրինացն»*, եւ սա՝ 1417 թվականին)։ Այս ժամանակ իշխանությունը վարում էր տոհմակից Ջազան։

Ապա գալիս է Ջալալի մյուս որդի Աղբաստի իշխանությունը, որի առթիվ կան բազմաթիվ վավերագրեր, մանավանդ իր իսկ վիմագիրը, որով ներկայանում է որպես *«Բաստամ՝ որդի Մեծի Ջալալի»* (1471 թ.)[1]։

Աղբաստն ունեցել է շատ եղբայրներ՝ բազմիցս հիշատակված վիմագրերում ու ձեռագրաց հիշատակարաններում (Մեջլիս, Աղեկ, Ամիր-Հասան, Աթաբակ, Հովհաննես կաթողիկոս, տեր Վարդան)։

Իշխան Աղբաստի մասին տեղեկությունները 1443, 1456 թվականներից են, իսկ ինքնագիրը՝ 1471-ից։

Այս սերնդի նշանավոր ներկայացուցիչն էր Հովհաննեսը՝ հիշատակված XV դարի սկզբից մինչեւ մահվան տարին՝ 1470 թ.։ Նա սկզբում Սուրբ Հակոբա վանքի (Քոլատակի մոտ) առաջնորդն էր, 1441-ին դարձավ Աղվանից կաթողիկոս եւ գահակալեց շուրջ 70 տարի, որից հետո էլ այդ գահը նրա տոհմի (Հասան-Ջալալյանների) մենաշնորհը դարձավ։ Սուրբ Հակոբա վանքից Գանձասար փոխադրված կաթողիկոսական գահին պիտի բազմեին միայն Հասան-Ջալալյան տոհմի զարմիկ հոգեւորականները։

Իշխան Աղբաստին 1456-ից հետո փոխարինել է նրա որդի Սայտուն-Սեյտին (սրբա անունից է այժմյան Ասկերանի շրջանի Սեյտիշեն գյուղը)։ Նրա սեփական վիմագիրը Գանձասարում է 1467 թվականից[2]։

Սայտունին փոխարինել է նրա որդի Վելիջանը։ 1473 թ. Գետամիջի Ս. Աստվածածին վանքում ընդօրինակված Ավետարանի գրիչն իր ժամանակը նշում է որպես *«ի տէրութեան տեղւոյս պարոն Վելիջանին»*[3],

Պետք է ուշադրություն դարձնել այս կարեւոր հանգամանքի վրա, Գետամիջի Ս. Աստվածածին վանքը Ծարի նյուղի երկրորդ հոգեւոր կենտրոնն էր ինչպես XV դարում, այնպես էլ նրանից առաջ ու հետո։ Եթե այնտեղ գրվող հիշատակարանում *«տէղւոյս տէր»* է համարվում ներքինխաչենեցի պարոն Վելիջանը, մանավանդ այն պարագային, երբ Ծարի նյուղն ինքն արդեն բաժանվել էր երեք մանր ոստերի, պարզ է, որ Ներքին Խաչենի տերն էր ամբողջ Խաչենի տարածքի գահերեց իշխանապետը։ Մի հանգամանք, որ նկատելի էր նաեւ նախորդ դարերում։

Վելիջանի անունից առաջին արձանագրությունը Գանձասարում 1480 թվականից է։ Վանքին նվերներ է տվել իր եւ եղբայրների անունից, սակայն հիշել է միայն իր անունը. *«...Ես Վելիճան եւ եղբայրքս իմ՝ որդիք Սայտունին, թոռն Մեծի Աղբաստու տեառն Խաչինո, տուաք Աշմանա իւր Դ (4) սահմանաւն ի*

---

1 Դիվան, 5, էջ 43։

2 Նույն տեղում,էջ 42։

3 Մ. Բարխուտարյան, Արցախ, էջ 247։

սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսէսի թվիս ՋԻԹ» (1480)[1]:

Պարզ է, որ տեղի իշխանապետն է եղել ինքը՝ Վելիջանը, այլապես նա անպայման (եթե ոչ առաջին հերթին) կնշեր իսկական իշխանի անունը, որ իր եղբայրներից մեկն ու մեկը կլիներ:

Վելիջանի անունից արձանագրություն ունենք ավելի ուշ ժամանակից՝ 1507 թվականից, որ նշանակում է, թե նա շատ երկար է իշխել՝ ամենաուշը XV դ. 70-ական թվականների սկզբից մինչեւ XVI դ. առաջին տասնամյակի վերջը՝ շուրջ 40 տարի: 1507-ին նա խաչ է կանգնեցրել, որի արձանագրությունը հետեւյալն է ասում. *«Ի թվիս ՋԾԶ... ես Վելիճանս՝ որդի պարոն Սայտունին, թոռն Մեծին Աղբաստոյ կանգնեցի* [զ] *խաչս...»*[2]:

Ուրեմն, Ներքին Խաչենի իշխանությունը, ինչպես ասում են, ողջ ու առողջ հասավ XVI դար: Ողջ ու առողջ, իր հայրենիքի տեր ու տնօրեն, նույնիսկ ակնառու վկայություններով նաեւ այն մասին, որ գերազահություն է ունեցել ինչպես Վերին Խաչենի այնպես էլ Արցախի մյուս մանր իշխանությունների նկատմամբ:

ՎԵՐԻՆ ԽԱՉԵՆԻ (ԾԱՐԻ) ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIV-XV ԴԱՐԵՐՈՒՄ

Այս իշխանությունն ուներ իր հետաքրքիր անունը՝ Դոփյան, չնայած միջնադարյան Հայաստանում բոլորովին էլ ընդունված չէր, որ իշխանական աթոռն զբաղեցներ իգական սեռի ներկայացուցիչը, առավել եւս՝ որ իշխանությունը կոչվեր նրա անունով:

Հայտնի չէ՝ Երբ է մահացել իշխանուհի Դոփը: Արդեն ասվել է, որ թաղված է Հաղբատի վանքում, անթվական մի շիրմաքարի ներքո:

Դոփին հաջորդել է որդի Գրիգորը, սրան էլ՝ իր որդի Հասանը, որին էլ՝ Գրիգոր Բ-ը: Վերջինիս իշխանությունը նշվում է 1287-ից, հոր մահից հետո: Նա երկու տարի հետո Ծար գյուղում հոր հիշատակին խաչքար է կանգնեցրել՝ թվարկելով հայրենի տիրույթները՝ Ականան, Հանդաբերդը, Սոդքը, Շողգահ-Շողուազը:

Գրիգորն ամուսնացած էր Օրբելյան Տարսայիճ իշխանի դուստր Ասփայի հետ, եւ երկուսով եկեղեցանպաստ լայն գործունեություն են ունեցել, մեծապես օգնել են զավառի, նաեւ ամբողջ Արեւելյան Հայաստանի այն օրերի մշակութային ընդաղոտ կյանքի առաջընթացին: Ասփայի մշակութաշահ ձեռնարկումներից է այժմ «Թարգմանչաց» կոչվող ձեռագիր մատյանի գնումն ու նվիրումը տոհմական տապանատուն Խաթրավանքին: Այս ձեռագրում են գտնվում Գրիգորի ու Ասփայի, ապա եւ հետագաների գրած մի շարք շատ արժեքավոր հիշատակարանները, որոնք ոչ միայն ձեռագրի

1 Դիվան, 5, էջ 44:
2 Նույն տեղում,էջ 66:

ների գրած մի շարք շատ արժեքավոր հիշատակարանները, որոնք ոչ միայն ձեռագրի *«կյանքին»* են վերաբերում, այլեւ պատմական հետաքրքիր անցքերին[1]։

Գրիգոր Բ-ից հետո նվազել է Դոփյան իշխանությունը, իշխանազուններն այս շրջանում հիշվում են իբրեւ պարոններ՝ թերեւս նկատի առնելով նրանց ենթակայությունը Ներքին Խաչենի Հասան-Ջալալյաններին։ Սրանից բացի էլ, հայտնի է, որ Լանկ-Թեմուրի արշավանքի ժամանակ Արեւելյան Հայաստանում ամենից շատ Ծարի իշխանությունն է տուժվել։ Ծարի տեր Հասանն ու զավակները, հայրենապաշտպան մարտիկների հետ միասին, կռվում էին թշնամու դեմ եւ նահատակվեցին։ Գրիգոր Խլաթեցու չափածո երկում առանձնապես շեշտված է այս տոհմական աղետը.

«Այլ եւ զՀասանն Ծարեցին
Երեք որդւովքն զենեցին,
Զի ըզնոցին ամուրն առին,
Եւ զբազումս զերեցին»։

1411 թ. գրված մի հիշատակարանում հեղինակը թվարկում է Ծարի իշխանական տան զոհերին, եւ պարզվում է, որ նահատակվել են Հասան իշխանի ոչ թե երեք, այլ վեց զավակները։ Հիշում է այդ նահատակներին՝ *«նախ մեծաշուք իշխանին Հասանայ... եւ զաւակացն իւրոց՝ քաջ եւ արի Գրիգորայ, Սարգսի, Շանշի, Ջհանշի, Աղբուղին, Շիրվանին»*[2]։

Նահատակներն արդեն տուն-տեղ են ունեցել, քանի որ զավակներ են մնացել Շանշեից, Ջհանշեից եւ Աղբուղայից։ Վերոհիշյալ հիշատակարանի ստեղծման ժամանակ՝ 1411-ին Ծարի իշխաններ էին Հասան Գ-ի կենդանի մնացած զավակը՝ Վահրամը, Շանշեի որդի Սեյտին, Աղբուղայի որդի Տուրսունը, Վարհամի ավագ որդի Գրիգորը։

Թե ինչպես են այսքան իշխանները միասին գլխավորել իշխանությունը, եղած սակավաթիվ նյութերի հիման վրա դժվար է բացատրել։ Հավանական է Վահրամի կենդանության ժամանակ նա էր իրավատեր իշխանը, եւ մնացածները միայն իշխանական տիտղոս ունեին ու հողային-ժառանգական սեփականություն։

1411 թ. գրված վերոհիշյալ հիշատակարանի համաձայն՝ այդ ժամանակ Ծարի իշխանությունը վարում էին պարոն Վահրամը, պարոն Տուրսունը, պարոն Շրվանը եւ այլ պարոնայք (Սեյտի, Պռոշ, Գրիգոր)։ Գրիչը հիշատակության արժանի է համարում նաեւ երկու այլ պարոնների՝ Աթաբակին ու Ջազային, որոնք, ինչպես իր տեղում նշել ենք, Հասան-Ջալալի հետնորդներից էին՝ ամբողջ Խաչենի վրա իշխելու գահերեցական իրավունքներով։

---

1 Այդ ձեռագիրն այժմ պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, 2743 համարի տակ։

2 ԺԵ դ. հիշատակարաններ, հ. Ա, էջ 122։

Հիշատակարանիս անունների եւ նրանց միջավայրի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ կան երկու գրություններում, որ Ծարի իշխանազուններն իրենք են թողել Դադիվանքում: Նրանցում նշում են Վերին Խաչենի առաջնորդարանների՝ Դադի, Խաթրա եւ Գետամիջի վանքերի անտիրությունը: Երկրամասի տերերը պատմում են, որ իրենց այս հոգեւոր կենտրոններում կյանքը դադարել էր, եւ ոչ ոք չկար, որ վաղեմի ժամանակների պես *«շէն պահէր ու եկեղեցիքս լուսաւորէր»*: Իրենք երեք վանքերի առաջնորդությունները հանձնեցին Ավագ եպիսկոպոսին ու նրա եղբայր Մանվել աբեղային, եւ *«տէր Գրիգոր կաթողիկոսն զայս երեք աթոռս հաստատեաց վիճակաւ եւ շրջաբերական թղթիւ»*[1]:

Սրանից հետո է, 1430 թ., որ Շանշեի (Շահանշահ) որդի Սեյտին իր հոր մահարձանի վրա թողած վիմագրով ներկայանում է որպես նախնիների տիտղոսի տերը. *«տեղեացս տէր եւ պարոն Փոքր Սիւնեաց, Ապանայ, Հաթերքոյ եւ Հանդաբերդոյ եւ ծովակին Գեղամայ մինչեւ ի Շաղուազայ»*[2]:

Ապա աղբյուրներից պարզ երեւում է, որ Վերին Խաչենի իշխանությունն ինքն էլ բաժանվել էր երեք ճյուղի՝ Շահանշենք, Աղբուղենք, Ջհանշենք, որոնցից էլ ավելի ուշ առաջ եկան ուրիշ անուններ ունեցող իշխողներ: Ամեն պարագայի XVI դարի սկզբին Սոդոմում տիրություն էր անում Հասան Գ-ից սերված մի տոհմանյուղ, որը մելիք Շահնազարի անունից պետք է կոչվեր Մելիք- Շահնազարյան: Իսկ Ծարում Ջհանշահենք էին՝ հավանաբար, ենթակա Ներքին Խաչենի ավելի հզոր տերերին:

ԱՐՑԱԽԸ ԵՎ ՊԱՐՍԿԱ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ (XVI ԴԱՐ)

XVI դարը կարելի է համարել Այսրկովկասին տիրելու համար Օսմանյան ու Պարսկական բռնապետությունների մղած համարյա շարունակական պատերազմների ժամանակաշրջան: Այդ պատերազմների դաշտն ու ասպարեզը հիմնականում Հայկական բարձրավանդակն էր, որը բզկտվում էր երկու գիշատիչ տերությունների վայրագություններից: Եվ կարեւոր էլ չէր, թե պատերազմում ո՞րն էր հաղթում, Իրանը թե՞ Թուրքիան, որովհետեւ երկուսն էլ հավասարապես դաժան էին եւ կարծես բռնությունների ու սրածությունների մեջ մրցում էին՝ ջանալով զարմացնել մինչեւ այդ շատ ու շատ բռնակալներ ու նրանց գործած ահավոր չարագործությունները տեսած հայ ժողովրդին: 1551 թ. տեղի ունեցած պատերազմի ականատես հայ հոգեւորականը գրել էր, թե *«նրանց վնասակար գործոց աղետներն առավել են, քան Լանկ-Թամուրինը, որը կարծեմ ոչ մի տեղ դեռ չի տեսնվել հողածինների կողմից»*:

---

1 Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 208:

2 Նույն տեղում, էջ 408:

Ուրեմն, թուրքերն ու ղզլբաշները[1], իրենց ճակատամարտերն անց էին կացնում հիմնականում Հայոց հողի վրա եւ, որովհետեւ փոխնիփոխ հաղթում էին իրար ու ստիպում նահանջել, նահանջողն ամեն անգամ ավերում էր իր ճանապարհի բոլոր բնակավայրերն ու այն ամենը, ինչից կարող էր օգտվել հետապնդող հակառակորդը: Բանդում ու հրդեհի ճարակ էին դարձնում գյուղերը, ավանները, սրի քաշում բնակիչներին, կողոպտում վանքերը, կոտորում եկեղեցականներին, հրկիզում էին արտ ու անդաստանները, կացնահարում ***«զծառատունկս անտառաց եւ զփայտս պըտղաբերս»***: Հետո նոր ուժերով համալրված պարտվողն էր ետ գալիս, հետապնդում նախկին հաղթողին, վերջինիս բարբարոսություններից հետո նորից աղետի ենթարկում Հայոց երկիրը, ոչնչացնում կենդանության այն մնացորդները, որ այս ու այնտեղ կային նախորդ արշավանքից հետո: Եվ, այսպիսով, բազում գավառներ ամայանում էին, հիշատակագրի խոսքերով՝ ***«մարդաթափ լինում ի բնակչաց»***:

Թուրք-պարսկական շուրջ կեսդարյա պատերազմները կարծես թե պիտի ավարտվեին 1555 թ. Ամասիայում կնքված պայմանագրով: Այս պայմանագրի համաձայն՝ Արեւելյան Հայաստանի հետ Արցախը եւս անցել էր Պարսկաստանին:

Հայ ժողովրդին վիճակված այս ահավոր աղետներից զերծ չի մնացել նաեւ Արցախը, որի տառապանքները ականատեսի քաջատեղյակությամբ եւ անհուն ցավով պատկերել է Հովհաննիսիկ Ծարեցի վարդապետն իր ժամանակագրության մեջ:

Դա պատմագրական անպահույշ մի ստեղծագործություն է, որն առանց ավելորդ ոճական զարդարանքի, կենդանի ու ճշմարիտ գույներով ներկայացնում է հյուսիս-արեւելյան Հայաստանի՝ շուրջ երեսուն տարվա անցուդարձերը: Ժամանակագրությունն սկսվում է 1572 թվականից, երբ հեղինակը 12 տարեկան էր եւ կարող էր ոչ միայն տեսնել դեպքերը, հիշել ու քննել նրանց մանրամասները, այլեւ գրի առնել, եւ չընդմիջվելով՝ շարունակվում է մինչեւ 1600 թվականը: Ուրեմն, չի բացառված, որ Հովհաննիսիկը 1600-ին, ժամանակագրությունը հյուսելիս, ձեռքի տակ ունեցած լիներ սեփական գրառումներ նախընթաց քսանութ տարիների անցուդարձերի մասին:

Այս ժամանակագրության մեջ արժանահավատ մանրամասնություններով պատմվում են ժամանակի այնպիսի դեպքեր, ինչպես թուրք զորավար Մուստաֆա Լալա փաշայի 1578 թ. ավերիչ արշավանքն Այսրկովկասում, այս արշավանքին հաջորդած սովն ու մահտարաժամը, նույն դարի 80-90-ական թվականներին վրաց ժողովրդի մղած հերոսական պայքարն օտար բռնակալների դեմ, պարսից Խուդաբանդա շահի, ապա եւ Շահ-Աբասի քաղաքականությունը Հայաստանի հարցում եւ Պարսից մրցակցությունն օսմանյան թուրքերի հետ՝ Այսրկովկասին տիրելու համար:

Հիրավի, ժամանակագրության ամենացնցող հատվածը սովի նկարագրությունն է: Այստեղ տարեգրի լեզուն առավելագույնս ճկուն է ու պերճախոս: Պատկերներն այն-

---

1 «Ղզլբաշ» թուրքերեն նշանակում է «կարմրագլուխ»: Այդպես էին կոչվում պարսիկների զորքը կազմող քոչվոր այն թուրքերը, որոնք գլուխներին կրում էին 12 կարմիր շերտերով չալմաներ՝ ի նշան իրենց շիա հավատի 12 իմամների (հոգեւոր առաջնորդներ):

ման են կոնկրետ ու տեսանելի, որ ընթերցողը վերապրում է թուրք ջարդարարների գալ-գնալուց հետո երկրում տիրական դարձած մղձավանջի ամբողջ ահավորությունը։ Թուրքերը չբավարարվեցին 1578 թ. անագորույն ասպատակությամբ, երբ կործանել էին գյուղերն ու քաղաքները, վանքերի քարերը տարել, որպեսզի բերդեր կանգնեցնեն, երբ բնակչության մեծ մասը սրի էր քաշված կամ գերեվարված, իսկ մնացյալը՝ քաղցի ու զրկանքի մեջ. *«երանի տային մեռելոցն եւ ո՛չ այս կենդանեացս»*։ Թուրք արյունարբու զորապետներից մեկը՝ Օսման Յուզդեմիրը, մի քանի տարի անց ժողովում է կովկասյան ավարառու լեռնականներին, անցնում *«այս կոյս Կուր գետոյն... Եվ ինքեանք սփռեալ ընդ դաշտս եւ ընդ լերինս՝ զԳանձայ եւ զԲարտայ, զՋարաբերդ եւ զԽաչենք, զՎարանդայ եւ զԴիզակ, ի Զարեքի կոչեցեալ գետոյն մինչեւ ի գետն Երասխ ի միում աւուր յաւարի հարեալ գերեցին եւ զանհաճոյսն սրով սպանին եւ զկնի Դ (4) եւ Ե (5) աւուրց դարձան ի տեղի իւրեանց»*[1]։

Ուրեմն, ավարառությունները ու կոտորածը կատարվել են հին Հայոց արեւելից կողմանց տարածքի վրա՝ Գանձակից մինչեւ Երասխ գետը։

Ժամանակագիրն ասում է՝ սովը տեւել է երեք տարի, 1577-80 թվականներին եւ Արեւելից կողմանց կամ Արցախ աշխարհի հայության մեծագույն մասը զոհ է գնացել աննախադեպ աղետին։

Օսմանցիների արշավանքները ու ասպատակությունները շարունակվեցին նաեւ հետագա տարիներին, երբ մյուս կողմից էլ պարսիկները էին արեւելքից գալիս՝ Հայաստանում ու հարեւան երկրներում իրենց բռնատիրությունը հաստատ պահելու նպատակով։

Այս ժամանակներում հայկական իշխանությունները, մանավանդ Արցախ-Խաչենում, դեռեւս պաշտպանում էին իրենց գոյությունը եւ քաղաքական ու դիվանագիտական քայլեր էին մտմտում երկիրը պաշտպանելու, «երկու քարի արանքում» կամ «մուրճի ու սալի միջեւ» չսպառվելու համար։

Ներքին Խաչենի իշխանությունը, ինչպես վերը տեսանք, հասավ XVI դար՝ Հասան-Ջալալյան Վելիջանի աթոռակալությամբ։ Վելիջանի իշխանության մասին վերջին հիշատակություն ունենք 1507 թվականից, սակայն սա դեռ չի նշանակում, թե այս թվականին էլ նրան հաջորդել է որդին, որը կոչվում էր Մեհրաբ բեկ եւ իշխանությունը վարել է առնվազն մինչեւ 1560 թ., քանի որ այս տարի Սուրբ Հակոբա վանքում «Մաշտոց» ընդօրինակած Հովհաննես աբեղան գրել է, թե *«իշխանաւոր տերոյս»* է Մեհրաբ բեկը եւ կաթողիկոս՝ նրա որդի Գրիգորիսը[2]։

Անշուշտ Մեհրաբ բեկի իշխանության օրերում է կատարվել Արցախ-Ղարաբաղի այն բարբարոսական ասպատակությունը թուրք-օսմանցիների կողմից, որի մասին

---

1 «Մանր ժամանակագրություններ», հ.Բ, Ե., 1956, էջ 242։

2 Մ. Բարխուտարյանց, Աղվանից երկիր եւ դրացիք, էջ 177։

պահպանվել է հենց թուրք հեղինակի վկայությունը։ Փեչեւի-Իբրահիմ թուրք պատմագիրը (XVI դ.) 1533 թ. իր ցեղակիցների՝ Երեւանի նահանգում, Նախիջեւանում ու Ղարաբաղում կատարած ասպատակություններն ու զազանությունները պատմում է որպես ականատես, դեպքերի մասնակից։ Նա նույնիսկ մի բացառիկ խանդավառությամբ ու հպարտությամբ է պատմում իր հայրենակիցների չարագործությունները։ Ահա՛, թուրք ասպատակիչները մտնում են Երեւան քաղաք։ *«Նրանք շահի* (խոսքը պարսից շահի մասին է, որը Երեւանի տիրակալն էր թուրքերի նվաճումից առաջ.- Բ. ՈՒ.), *նրա որդու եւ մի շարք անվանի խանների ու սուլթանների հոյակապ եւ գեղազարդ պալատները, պարտեզներն ու այգիները, հատկապես «Սուլթանական բաղ» անունով հայտնի զբաղեցման այգին, բոլորը հրի մատնեցին, այրեցին ու հողին հավասարեցրին»։* Այս եւ ուրիշ նման «քաջ»ագործություններից հետո թուրքերը *«մտան Ղարաբաղ կոչված երկիրը, որն իր լեռներով եւ հարուստ այգիներով շատ հայտնի մի գավառ է Աջեմի* (Պարսկաստանի-այսինքն՝ Պարսկաստանին հպատակ. - Բ. ՈՒ.) *երկրում։ Անապատելի կերպով երկիրը մի այնպիսի փոշով ծածկվեց, որ մարդը մարդուց չէր կարելի ջոկել, լուսավոր ցերեկը մութ գիշերվա վերածվեց։ Այս գավառի բնակչությունն այնպես էր ցրվել ու ոչնչացվել, որ մարդու հետք անգամ չերեւաց։ Սակայն գտնվեցին որոշ տեղերում պահված եւ քարայրերում թաքցված գանձեր ու զանազան ապրանքներ։ Բանակն անսահման հարստություն ու ավար ձեռք բերեց, իսկ հարստությունների մի մասը, որ տանելու հնարավորություն չկար, կրակ տվին ու այրեցին»*[1]։

Այսպիսի դեպքերի համար է, որ ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են։

Մեհրաբ բեկի ժառանգներից հայտնի են չորսը՝ Ջալալը, որ իշխանական աթոռին պիտի հաջորդեր հորը, Բաղդասար բեկը, որ նշանակալից վաստակ չուներ եւ հիշվում է միայն հետագայում կաթողիկոս դարձած որդի Դավթի կապակցությամբ, ապա եւ Գրիգորիսն ու Հովհաննեսը, որոնք կաթողիկոսական գահն են զբաղեցրել տարբեր ժամանակներում։

Հետաքրքիր դասավորություն ունեցավ Գրիգորիսի կյանքը։ Նա Գանձասարի կաթողիկոս է հիշվում 1559 թվականից։ 1574 թ., ինչպես պատմում է ժամանակագիրը, Անդրկովկասում տեղի ունեցած հակապարսկական ընդվզումների համար Պարսից արքունիք կանչեցին Գանձասարի կաթողիկոս Գրիգորիսին եւ Վրաց թագավոր Սիմեոնին։ Երկուսն էլ այնտեղ իրենց պահեցին համարձակ եւ դրա համար արժանացան հրեշավոր պատժի. շահի հրամանով նրանց երկուսին էլ թլպատեցին, իբր, դարձրին *«մահմեդական»։ «Հավատափոխվածները»* դարձան իրենց երկրները։ Վրաց թագավորը շարունակեց գահակալել, որպես թե ոչինչ էլ չի եղել, իսկ Գանձասարի

---

1 «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի եւ Անդրկովկասի...մասին», Ա, Ե., 1961, էջ 33։

կաթողիկոսին հենց նրա հայրենակիցներն արժանացրին նոր մի պատժի՝ կախեցին Գանձասարի զանգակատնից։

1570-90-ական թվականներին, օսմանա-թրքական արշավանքների շրջանում Արցախ-Խաչենի տերն էր Ջալալ Գ իշխանը։ Այս արշավանքների եւ ցույց տված դիմադրական կռիվների մասին պատմում են ինչպես Ջալալ Գ-ի հիշատակարանները՝ գրված Գանձասարում պահվող իրենց տոհմական Ավետարանում (այն, որ XIII դ. սկզբին ընդօրինակվել է Վախտանգ-Տանգիկի ու Խորիշահի պատվերով)[1], այնպես էլ Հովհաննիսիկ Ծարեցու եւ Իսրայել երեցի ժամանակագրական երկերում։

Ծարի իշխանությունն այս ժամանակներում արդեն ցույց էր տալիս մանրանալու, զավառապետական վարչությունների վերածվելու միտումներ։ Նախորդ էջերից ծանոթ Ջհանշահի որդի Միրզաջանն էր, որ նստում էր Ծարում, հոգեւոր կենտրոն ուներ Դադիվանքը։ Իսկ Ուլուբեկի ժառանգների աթոռանիստը Համամ-Գրիգորի կենտրոններից մեկն էր՝ Մեծ Մազրան, որը պետք է դառնար մելիք Շահնազար Ա-ի անունով ստեղծվելիք նոր իշխանության, ավելի ճիշտ՝ մելիքական տան աթոռանիստն ու քաղաքական կարեւոր խմբումների կենտրոնը։

1 Մատենադարան, ձեռ. No 378, էջ 7ա։

ԱԶԳԱՅԻՆ - ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆԸ (XVII-XIII ԴԱՐԵՐ)

Հայ ժողովրդի պատմության մեջ քաղաքական դարակազմիկ երեւույթները միշտ էլ կապված են եղել տարբեր նահանգների, աշխարհագրական տարբեր միջավայրերի հետ։ Վասպուրական աշխարհն էր մեր պետականության ծննդավայրը, նրա կազմավորման ու հաստատման տարածքը, ազգային քաղաքական միասնության դարբնոցը։ Մեր թվականությունից առաջ III-II հազարամյակներին Հայկական բարձրավանդակում գոյություն ունեցած հայկական պետական ցաք ու ցրիվ կազմավորումները II հազարամյակի վերջերին ու I-ի սկզբներին միավորվեցին այստեղ ձեւավորված Վան-Բիաինական թագավորության ուժով, մ.թ.ա. IX-VII դարերում միասնական թագավորությունն ապրեց քաղաքական, տնտեսական ու մշակութային մի այնպիսի կյանք, առանց որի դժվար է պատկերացնել նույն ժամանակների Արեւելքի պատմությունը։

Հայոց պետականության հետագա զարգացումն ու գործունեության նոր վերելքը կապված են Արարատյան աշխարհի հետ։ Մեր ազգային վարչական միտքն այստեղ է ուղիներ որոնել հարեւան բռնատիրությունների ուծացնող քաղաքականությունը դիմազրավելու համար եւ փարել է քրիստոնեական հավատին, ստեղծել իր գիրն ու դրությունը՝ իբրեւ յուրահատուկ զենքեր անկախ ինքնությունը պաշտպանելու համար։ Հետագայում նման բախտորոշ դեր կարող էին կատարել Սասունն ու Կիլիկիան։ Սակայն արտաքին պայմանները խափանարար եղան, եւ հնարավորություն չստեղծվեց նրանց ազգափրկիչ դերի լրման համար։

Ուշ միջնադարյան Հայաստանում, երբ, ժողովրդական խոսքով ասած, դանակը ոսկորին էր հասել, եւ հանուր հայությունը պետք է ամենավճռական պայքարի ելներ իր ազգային ինքնուրույնության պահպանման եւ միասնական պետականություն ստեղծելու, ուրիշ խոսքով՝ հայ ազգի հարատեւումը փրկելու համար, իրեն վերապահված պատմական դերի մեջ մտավ Արցախական աշխարհը։

Նոր ժամանակների հայոց պատմահայր Լեոն լավ է բնութագրել Արցախ-Ղարաբաղի դերը Հայոց երկրի համար։ Նա գրել է. *«Հյուսիս-արեւելքից եւ արեւելքից Արցախ-Ղարաբաղը ներկայացնում է մի հսկայական միջնաբերդ, որի ճակատը դարձրած է Կուր-արաքսյան եւ Մերձկասպյան անհուն տափաստաններին՝ բնությունից կոչում ստացած լինելով պաշտպանել Հայկական բարձրավանդակն այս տափաստանների կողմից առաջացող շարժումների դեմ։ Այդ հսկայական բերդի ամբողջ նշանակությունը հասկանալու համար պետք է նկատի առնել, որ նա փակում է ազգերի տեղափոխման այն մեծամեծ ճանապարհները, որոնք Կասպից ծովի հյուսիսային եւ հարավային ափերով Միջին Ասիայից բերում են Կուր-արաքսյան արոզավանդ տափաստանները։ Պատմությունը մեզ շատ փաստերով ցույց է տալիս, որ նվաճող ազգերի ահավոր հորձանքները զալիս, ընդհարվում էին Ղարաբաղի լեռնաստանին, փշրվում էին ու ետ դառնում։ Այսպիսով, առանց Ղարաբաղի լեռնաստանի անհնարին է երեւակայել Հայաստանի սրտի, այն է՝ Արարատյան երկրի պաշտպանությունը հյուսիսային եւ արեւելյան տափաստաններից»*։[1]

Ինչպես կարելի է նկատել, ներկայացված տարածքը մի ամբողջություն է կազմում նաեւ ազգագրական տեսակետից. նրա բնակչությունը միատարր հայկական է եղել համարյա միշտ, խոսել է հայերենի այն կուռ ու կոփ բարբառով, որ լեզվաբանները կոչում են Ղարաբաղյան։ Նույն այս տարածքը միասնական պետականության բացակայության պայմաններում էլ պահպանել է բաղաքական միանման վարչաձեւ, ուշ միջնադարում՝ մելիքական կարգը։ Տարածքն այս, ըստ էության, բուն Արցախն էր՝ գումարած Սյունիք-Զանգեզուրի զգալի մասը, այսինքն՝ այն ամբողջությունը, որի դերը բսաներորդ դարի մեր ազգային մտքի ու ռազմավարության հմուտ գործիչներից մեկն էլ այսպես է հասկացել. *«Հայաստանը, ինչպիսի ցուցանակ էլ կրելու լինի, չի կարող գոյություն ունենալ առանց Ղարաբաղի ու Զանգեզուրի»* (Գ. Նժդեհ)։

Ուրեմն, ա՛յս Ղարաբաղի դերն ու պարտականությունն էր **XVII-XVIII** դարերի միջազգային չափազանց բարդ, խառնիճաղանջ պայմաններում տեր կանգնել հայոց գոյապայքարին եւ գտնել նրա հաջողության ուղիները։

Սակայն այս դարերի ազատագրական ոգորումներն ունեին իրենց նախընթացն ու նախապատրաստությունը, որ շուրջ մեկ դար էր տեւել՝ ավարտին հասցնելով վարչաքաղաքական այն պայմանների ու միջավայրի ամբողջությունը, որ կոչվում է մելիքական կարգ։

---

1 Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք երկրորդ, Ե., 1973, էջ 10։

ՀԱՅ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆԸ

Տեսանք, որ Արցախի Առանշահիկ նախարարական-իշխանական տան հիմքի վրա գոյացած մանր իշխանությունները գոյատեւեցին թաթար-մոնղոլական դժնդակ տիրապետության ժամանակներում ու նրանց հետքերով եկած թուրքմեն ֆոչվոր ցեղերի ասպատակությունների օրերում եւ, ավելի մանրացած, կառչեցին իրենց լեռնաստանի տարբեր գավառներին, ջանացին դիմագրավել ճակատագրի բերելիք նոր փորձությունները:

Լավ էր, որ Արցախը միայնակ չէր իր այս վիճակով. գավառական հին ու նոր իշխանություններ կային նաեւ Զանգեզուրում, Լոռու կողմերում եւ լեռնային անմատչելի մի շարք ուրիշ վայրերում:

Արեւելյան ու հյուսիս-արեւելյան Հայաստանը, որի տարածքի հիմնական մասն զբաղեցնում էին գավառային իշխանությունները, գտնվում էր Պարսից շահի տիրապետության ներքո, եւ, բնականաբար, շահը կամ նրա կուսակալներն էին, որ պետք է պարզեին իրենց հարաբերությունները տեղական իշխանությունների հետ:

Առաջին շրջանում Պարսից արքունիքը բազմիցս փորձեց նվաճված երկրում չճանաչել ոչ ոքի եւ ոչինչ՝ իր միահեծան ու անսանձ բռնատիրությունից բացի: Սակայն ամեն անգամ դեմ առավ համառ դիմադրության եւ ստիպված եղավ տեղի տալ: Իսկ տեղի տալ նշանակում էր՝ ճանաչել տեղական իշխանավորների որոշակի իրավունքները, երկրի ժողովրդի հետ խոսել այդ իշխանավորների միջոցով:

XV դարում հայկական գավառական իշխանություններն այնքան ուժ ունեին, որ Պարսից արքունիքին ստիպեցին մտածել, թե դրանք կարող են միավորվել եւ կազմել մի այնպիսի զորություն, որի հետ այլեւս անհնար կդառնար խոսել բռնակալի լեզվով:

Պարսից շահին տիրացած կարա-կոյունլու Ջահանշահը (1437-1467 թթ.) հատուկ հրովարտակով ճանաչեց հայ գավառական իշխանների իրավունքները: Տվյալներ են պահպանվել Արցախի Ծար գավառի տերերին նրա կողմից շնորհված արտոնությունների մասին: Ենթադրվում է, որ համանման արտոնագրեր են տրվել նաեւ հարեւան իշխանավորներին: Այս ժամանակից սկսած էլ հայկական աղբյուրներում *մելիքներ* են կոչվում Արեւելյան Հայաստանի գավառական իշխանները: Ուստի եւ ենթադրվում է, թե հենց Ջահանշահի հրովարտակով է սկզբնավորվել հայ մելիքական կազմակերպությունը:

Սակայն պահպանված աղբյուրների համաձայն՝ մելիքական իշխանությունը կանոնավոր ընթացքի մեջ դրվեց Շահ-Աբաս Ա-ի (1587-1629 թթ.) գահակալության ժամանակ, երբ Իրանի խորամանկ տիրակալը որոշեց Հայոց երկրի քաղաքական ու տնտեսական ուժերը գործադրել Օսմանյան Թուրքիայի դեմ: Նա հրովարտակներով ամրապնդեց հայ մելիքների իրավունքները, խրախուսեց նրանց ռազմական ուժերի աճը՝ համոզված, որ դա է լինելու մրցակից Թուրքիայի ծավալապաշտության դեմ կանգնեցվելիք հուսալի պատվարը:

Շահ Աբասը գիտեր նաեւ մելիքներին իրարից հեռու պահելու, միասնության հնարավորությունները խեղդելու եղանակը: Առանձին-առանձին հովանավորում էր նը-

բանց, պատրաստում մրցակիցներ, բայց երբեմ դաշնակիցներ։ Երբեմն մելիք էր կարգում ոչ ազնվական մեկին՝ նվաճելով նրա համակրանքը՝ համոզված, որ հարեւան իշխանազունը չի դաշնակցի նրա հետ։ Զաքարիա Սարկավագ Քանաքեռցին պատմում է, թե 1606-ին Թիֆլիսից դառնալիս Կայանո ձորում շահն ուզում էր ծանոթանալ հպատակների վիճակին եւ ծպտված գնաց Միափոր գյուղի հովիվ Աթայի տունը, զրուցեց նրա ու կնոջ հետ, հետո էլ նոտարին կարգադրեց ***«գրել նոմոս, որ է «բազամ մելիքութեան եւ ետ նոցա յորդւոց որդիս լինել մելիք այնմ գաւառի»***[1]։

Հպատակ երկրի այս չբռունցքվող մասնատվածության խրախուսումը բոլոր հին ու նոր բռնակալների բաղձականությունն է եղել։ Մելիքությունն սկզբնավորող Զահանշահը ոչ միայն զավառական իշխանություններն էր իրարից հեռու պահում, այլեւ երկատեց Հայաստան երկրի միասնական կաթողիկոսությունը՝ Էջմիածնի վեհապետի մրցակից ու հավակնոտ մի նվիրապետություն էլ ստեղծելով Աղթամարում։

Պահպանված հրովարտակներից կարելի է եզրակացնել, թե արքունիքի հավանությանն արժանանալու համար մելիքության ժառանգորդը պարտավոր էր ներկայացնել իր զավառի բնակչության ստորագրություններով հաստատված համաձայնությունը։ Այսպես, Վարանդայի մելիք Բաղիի որդի մելիք Շահնազարին վերաբերող հրովարտակի մեջ գրված է, թե հիջրայի 1042 թ. (1664) Վարանդա զավառի մելիքությունը ***«հանձնված է եղել մելիք Բաղի քրիստոնյային՝ հպատակների գրավոր համաձայնությամբ»***։ Հետո հիջրայի 1055 (1677) թ. Բաղիի որդի Շահնազարը, Շահ-Աբաս Բ-ին ներկայանալով, վերստին հաստատել է, որ իր հայր Բաղին եղել է իշխանավորը հիշյալ զավառի, ապա՝ ***«հպատակներն իրենց ստորագրություններն ու կնիքներն են դրել այն խնդրագրի տակ, որով մելիք Շահնազարին իրենց վրա իշխանավոր են ճանաչում»***։

Այս կարգն ընդհանրական է եղել թե ոչ, հիմա անհնար է որոշել՝ տվյալների բացակայության պատճառով։ Սակայն հրովարտակներում միշտ էլ գլխավոր տեղ էին բռնում հպատակների հանդեպ արդարամտության եւ հոգատարության պահանջները, ինչպես նաեւ մելիքի անսահմանափակ իրավունքները, դատաստանի իրավունքը, արքունիքին վճարելիք հարկի (շահլուղ) կանոնավոր հավաքումը։

«Մելիք» արաբական բառ է, որ նշանակում է իշխանավոր, տիրակալ, նույնիսկ թագավոր։ Իրանի շահերն, իհարկե, այս տիտղոսի մեջ տեսնում էին միայն իրենց ենթակա զավառական մի կառավարիչ, որի հիմնական պարտականությունն իրենց նկատմամբ՝ հարկեր հավաքելն ու արքունիք ներկայացնելն էր։ Սակայն իրականում համարյա անսահմանափակ էին մելիքի իրավունքները սեփական զավառ-տիրույթում։

Լեոն իրավացիորեն գրել է. ***«Շահական հրովարտակներով այսպես էր պատկերանում մելիքների անձնավորության մեջ կենտրոնացած հայ ազգային իշխանությունը. մելիքը տեր էր, տիրապետող, այն էլ ինքնագլուխ***

---

1 Զաքարիա Սարկաւագ, Պատմագրութիւն, հ. Ա., Վ.- պատ, էջ 25-26։

ու միահեծան, ոչ ոք իրավունք չուներ ընկերանալ նրա իշխանությանը։ Ամենքը պիտի հնազանդվեին մելիքին, կատարեին նրա հրամանները, որովհետև մելիքը բարձր իշխանության կողմից նշանակված իշխանավոր էր։ Իր կողմից մելիքը պարտավոր էր լինել արդարադատ, պիտի հոգ տաներ իր երկրի բարօրության մասին...»[1]։

Այս ամենից բացի, մելիքն ուներ զորք պահելու իրավունք։ Զորահրամանատարներ էին նշանակվում մելիքական տոհմի ո՛չ ավագ ժառանգները, որոնք կոչվում էին բեկ, հարյուրապետ (յուզբաշի), հազարապետ։

Սակայն, անկախ այս իրավունքներից ու հարկադիր պարտականություններից, մելիքի դերը մեծագույն մասամբ պայմանավորված էր լինում նրա անձնական կարողություններով ու արժանավորություններով։ Պատմությունը մեզ տալիս է բազմաթիվ ապացույցներն այն հանգամանքի, որ անհարակ աթոռակալը չի էլ վայելել շահական ֆարմանով իրեն արտոնված իրավունքները, իսկ ձեռներեց ու խելամիտ զավառապետ-մելիքը հանախ ոչ միայն հզոր իշխանություն է ունեցել իր տիրույթներում, այլեւ գերազահություն է ձեռք բերել հարեւան մելիքությունների վրա, դարձել շահի մահմեդական կուսակալներից անկախ ու ինքնիշխան մի կառավարիչ։ Այդպիսիներից էր, օրինակ, Սոդքի ու Ծարի տեր Շահնազար Ա-ը XVI դ. վերջին ու XVII դ. սկզբին, Շահ-Աբաս Ա-ի օրերում։

ՍՈԴՔԻ ՈՒ ԳԵՂԱՄԱ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐ Ա-Ը

Պատմական աղբյուրներով գծվում են բոլոր մանրամասները, որոնք վերաբերում են Վերին Խաչենի կամ Ծարի Դոփյան իշխանության՝ Սոդքում ու Գեղամա զավառում բնավորված ճյուղին եւ ցույց են տալիս այդ իշխանության XV-XVI դարերի տոհմաշղթան։ XVI դ. սկզբին Դոփյան Հասան Գ-ի որդի Շահանշեն էր զավառի տերը, որից հետո եղել է նրա որդի Սայտուն-Սեյտին, որի մասին վկայություններ են պահպանվել 1411, 1430 թվականներից։ Ապա Սայտունի որդի Ուլուբեկն է իշխանությունը վարել մի քանի տասնամյակ։ Սրա անունից էլ տոհմը կոչվում էր Ուլուբեկանց։ Ուլուբեկին հաջորդել է որդի Միրզաջանը՝ հիշատակված 1502 թվականին, սակայն տիրություն արած, հավանաբար, երկար տարիներ։ Միրզաջանին հաջորդել է նրա ավագ որդի Մելիքբեկը, որի իշխանությունը հասել է մինչեւ 1580-ականների սկիզբը։ Եվ, ահա՛, այս ժամանակից էլ Գեղամա ու Սոդքի իշխանության աթոռին տիրացավ Մելիքբեկի ավագ որդի *Շահնազարը*, որի գործունեությունը նշանավորվեց օսմանյան թուրքերի ու կովկասյան լեռնականների դեմ վարած մի շարք հաղթական

1 Լեո, նույն տեղում, հ. երրորդ, Ե., 1946, էջ 501-502։

պատերազմներով, ինչպես նաեւ Պարսից արքունիքի կողմից նրա եւ հարեւան մյուս մելիքների իրավունքների ճանաչումով։

XVI դ. վերջին տասնամյակներին Սոդքի եւ Արցախի մյուս մելիքները պարսկա-օսմանյան բախումներում կռվել են պարսիկների հետ միասին եւ օժանդակել նրանց հաղթանակներին։ Սակայն պատահեց, որ Պարսից զորքերը ետ քաշվեցին, եւ մելիքական ուժերը միայնակ մնացին թուրքերի դեմ-հանդիման։ Այն ժամանակ օսմանցիները, Արարատյան երկիրը ոտքի տակ տալուց հետո, շարժվեցին Գեղամա գավառի վրա։ Շահնազարը, նախապես իմացած լինելով արշավանքի մասին, պատրաստել էր ինչպես իր, այնպես էլ հարեւան մելիքությունների զորքերը, որդի Օրի բեկի հետ միասին, գրոհ կազմակերպեց թուրքերի դեմ, ջարդեց նրանց, զորապետների գլուխներն էլ տարավ, ***«դրեց Պարսից արքայի առաջ»։*** Եվ արքան, ի նշան գոհունակության ու շնորհակալության, մեծագին նվերներով պատվեց նրան եւ հրամանով վերստին վավերացրեց իր գավառում անկախ իշխելու նրա իրավունքը։[1]

Այս Շահնազարը հմտորեն կազմակերպում էր նաեւ իր տիրույթների տնտեսական, շինարարական ու մշակութային կյանքը։

Հետաքրքիր է, որ Պարսից արքունիքը Շահնազարի նկատմամբ ունեցած բարյացակամությունը շարունակեց նաեւ հաջորդների հանդեպ։ 1606 թ. Շահնազարը նոր էր մահացել, որ շահ Աբաս Ա-ը այցելեց մելիքանիստ Մեծ Մազրա, վայելեց Շահնազարի որդիներ Օրիի (Յավրի) ու Քամալ-բեկի հյուրընկալությունը, հրամանագրով նորից նրանց հաստատեց գավառի տեր՝ նվիրելով նաեւ ուրիշ գյուղեր ու դաստակերտներ, իսկ մելիք Շահնազարի կրտսեր եղբայր Միրզա-բեկին էլ մելիք կարգեց Վարանդայում։

Սոդքի մելիքության ժառանգորդ Յավրի-Օրին վախճանվել է 1621-ին, եւ աթոռակալ է դարձել մյուս եղբայր Քամալը, որին էլ հաջորդել է նրա ավագ որդի Աստվածապովը՝ հիշատակված մինչեւ դարի 50-ական թվականները։ Սրան էլ հաջորդել է իր որդի Մելիք-բեկը՝ հիշված մինչեւ 70-ական թվականների վերջը։ Սրանից հետո մելիք է հիշվում արդեն Շահնազար Բ-ը, որն իշխել է մինչեւ դարի վերջը։

Այս ժամանակներում արդեն բավական զորացել էր մելիք Շահնազարյան տոհմի Վարանդայի ճյուղը, որի մելիքանիստն էր հին Ավետարանոց (Զանախչի) ավանը։

ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XVII դարում Արցախի քաղաքական աշխարհագրության մեջ մի սրբագրություն կատարվեց. «Ղարաբաղ» տեղանվան ներքո ըմբռնվում էր հիմնականում Մուխանքի դաշտաբերանից մինչեւ Դիզափայտ-Քիրս-Ղարաբաղյան լեռնաշղթա գիծը, եւ նրանից դուրս էին մնում Սեւանի արեւելյան ափերը, որոնք գտնվում էին Ծար-Սոդքի

1 Տե՛ս Մատենադարան, ձեռ. No 519, թ. 76 բ-77ա։ Հմմտ. Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վ. պատ, 1896, էջ 96։

կամ Գեղամա մելիքության իրավասության տակ։ Եվ այս տարածքն ընդգրկող Ղարաբաղի անունն էլ «խամսա» էր կոչվում պարսկերեն հորջորջմամբ («խամսա» - բառացի՝ «հնգյակ»), որովհետեւ իր մեջ էր առնում Արցախի հինգ մելիքությունները։ Դրանք էին.

1. Գյուլիստան կամ Թալիշ, որ բռնում էր Կուրակ գետակից, այսինքն՝ Գանձակ գավառի սահմաններից մինչեւ Թարթառի հոսանքը։
2. Ջրաբերդ, որ ընդգրկում էր Թարթառից մինչեւ խաչենագետ ընկած տարածքը։
3. Խաչեն՝ խաչենագետից մինչեւ Կարկառ։
4. Վարանդա՝ Կարկառ գետից մինչեւ Մեծ Քիրսի հարավային փեշերը։
5. Դիզակ ՝ Մեծ Քիրսի հարավային փեշերից մինչեւ Երասխ գետը։

Ինչպես վերը տեսանք, պատմական աղբյուրներով հաստատվում են այս մելիքություններում իշխող տների ժառանգական կապերը Արցախի տեր հինավուրց Առանշահիկ նախարարության տարբեր ճյուղերի հետ։ Առաջին չորս մելիքությունների եւ Սոդքի տերերի կապն Առանշահիկների հետ ցույց ենք տվել տոհմաշղթայի համապատասխան օղակներով։ Միայն Դիզակի մելիքության կապն է, որ չի ապացուցվում ընկզբնաղբյուրներով։ Ավելին, երկու պատկառելի հեղինակություններ՝ Ռաֆֆին ու Լեոն այս մելիքության հիմնադիր են համարում XVIII դարի առաջին կեսին միայն Դիզակում իշխանություն ունեցած մելիք Ավան-Եզանին՝ նրան էլ բերելով Լոռու կողմերից (դժբախտաբար, առանց որեւէ աղբյուր ցույց տալու)։ Իբր, այնտեղ նա՝ լինելով Լոռիս-Մելիքյանների իշխանական տոհմի ներկայացուցիչը, անհամաձայնություն ու կռիվ ուներ իր տոհմակիցների հետ, թողեց հայրենի Լոռին եւ իր հայր Ղուկաս վարդապետի հետ փոխադրվեց Դիզակ, այստեղ մելիքական իրավունք ստացավ, թուրք-օսմանցիների դեմ մղած հաջող կռիվներով դարձավ Պարսից շահի սիրելին, մինչեւ վերջ էլ վայելեց նրա հովանավորությունը, այնքան, որ կենդանության ժամանակ ինքը՝ մելիք Եզանն էր խամսայի մելիքությունների զահերեցը Պարսից արքունիքի համար։

Մելիքություններից յուրաքանչյուրն ուներ իր նստավայր- բերդամրոցը կամ դրանցից մի քանիսը՝ նայած բնական պայմաններին ու մելիքության հնարավորություններին։ Գյուլիստանի կամ Թալիշի բերդամրոցը գտնվում էր Գյուլիստան (Վարդուտ) գյուղի թիկունքում, անմատչելի սարի գագաթին եւ հենց Գյուլիստան էլ կոչվում էր։ Այս մելիքության մի այլ բերդն էլ գտնվում էր Թալիշ ավանի մոտ, Հուռեկա վանքի հանդեպ։

Ջրաբերդի մելիքի համար համանուն հնամենի ամրոցն էր կատարում նստավայրի ու պաշտոնական դիրքի հուսալի դերը։ Այս Ջրաբերդ ամրոցը գտնվում է Թարթառի ու նրա օժանդակ Թրղիի միախառնումից գոյացած թերակղզու վրա, Եիցմանկունք վանքի դիմաց։

Խաչենի մելիքներին էին պատկանում Հասան-Ջալալի հռչակավոր ամրոցները՝ Խոխանաբերդը Գանձասարի դիմաց եւ Կաչաղակաբերդը նրանից քիչ դեպի հարավ։

Վարանդայի մելիքի նստավայր-ամրոցն էր Ավետարանոցի (Զանախչի) կողքին կառուցված բերդը, սակայն մեծ վտանգների ժամանակ գավառի ու շրջակաների համար ամենահուսալի ապաստանն էր դառնում Քարագլուխ-Բերդաքարը (ուշ շրջանի Շոշի բերդ-Շուշին)։

Դիզակի մելիքանիստը Դող ավանն էր, բերդամրոցը՝ Աբու-Մուսե Եսայու ժամանակներից հայտնի Գտիչը կամ Գորոզը՝ Դողի ու Տումու արանքում բարձրացած սարի գագաթին։

Ահա այսպես էր ներկայանում Արցախ-Ղարաբաղ-խամսան XVII դարի սկզբին, ազգային ազատագրական ոգորումների նախաշեմին, երբ Օսմանյան Թուրքիան ըսպառնում էր հավերժական ստրկության դատապարտել Հայաստանը, ուրեմն եւ Արցախը, կամ ոչնչացնել այն՝ իբրեւ իր նվաճողական ծրագրերին խանգարող պատնեշ։ Պարսկաստանը դիվանագիտական խաղեր էր անում՝ հայոց ուժերն օգտագործելով իր հակաթուրքական ծրագրերի իրականացման համար... Իսկ երրորդը չկար, երրորդը եւ այնպիսին, որից հնարավոր լիներ սպասել փրկարար օգնություն կամ, որի հետ համագործակցելով, կարելի լիներ ազատության դրոշ պարզել եւ կռվել մինչեւ վերջ։

Ուրեմն, առայժմ պետք էր հույսը դնել լեռնաստանի ընձեռած հնարավորությունների վրա, ճակատամարտեր տալ մելիքությունների սահմաններում պարբերաբար հայտնվող ասպատակիչ խմբերի, նույնիսկ զորաբանակների դեմ՝ համոզված լինելով, որ հաղթանակն արդարի կողմն է լինում, հնարամիտ ու արթուն արդարի։

Կարեւոր է նշել, որ այս ժամանակներում Գանձասարի կաթողիկոսությունը եւս իր ուշադրության կենտրոնում էր պահում երկրի պաշտպանությունն օտար բռնագրավիչներից։ XVII դարում ստեղծված ձեռագիր մատյանների հիշատակարանները, հատկապես Արցախում գրվածները, հիշատակելով մելիքական զորաջոկատների բախումներն օսմանյան թուրքերի, կովկասյան լեռնցիների հետ, ցույց տալով ու փառաբանելով նրանց խիզախության բազմաթիվ փաստերը, երազում են այն օրը, երբ հայրենի իշխանությունները պիտի միավորվեն եւ համազգային հզոր ուժով կործանիչ հարվածներ տան թշնամուն, նրան հեռու վանեն Հայոց երկրից։ Եւ Գանձասարի կաթողիկոսարանն էր, որ հայրենիքը հզորացնելու, երկրի պաշտպանությունը հուսալի դարձնելու միջոցներ փնտրելիս կապվեց դեպի հյուսիսի ու արեւմուտքի երկրները երթեւեկող ազգակից վաճառականների հետ, փորձեց նրանց միջոցով հասնել որեւէ դրական քայլի։

* * *

1653 թ. Գանձասարի կաթողիկոս դարձավ Պետրոս խանձթեցին[1]։

1 Խանձթը գյուղ էր այն ժամանակվա Խաչեն գավառում, Հասան-Ջալալյանների տիրույթում, եւ հավանաբար այնտեղ էր բնակվում այդ տոհմի որեւէ երկրորդական ճյուղ, որից էլ սերված էր Պետրոսը (հայտնի է, որ XIV դարի վերջից սկսած Գանձասարի կաթողիկոսական գահը Հասան-Ջալալյանների մենաշնորհն էր, եւ դա ընդունում էին Ամենայն հայոց կաթողիկոսները, երբ Գանձասարի որեւէ նոր աթոռակալի ձեռնադրությունը պիտի հաստատեին)։

Նախորդների օրոմ եւս մայր աթոռը երկրի իշխանությունների հետ էր հայրենի եզերքի պաշտպանության հարցերը լուծելիս։ Եվ Պետրոս կաթողիկոսը նոր ուղիներ չպետք է փնտրեր կամ կարիք չպետք է ունենար մելիքների շրջանում նոր հայտնվելու։ Նրա ավելի քան երկու տասնամյա գահակալությունը (1653-1675 թթ.) հայտնի է, իհարկե, հոգեւոր-մշակութային գործի մի վերելքով, որի մասին հիշատակագիրները հիացմունքով էին խոսում։ Բավական է հիշել, որ նա վերանորոգեց Ամարասը, պարբսպապատեց այն՝ դարձնելով գավառի բերդերից մեկը։ Զարկ տվեց ձեռագիր մատյանների ընդօրինակման գործին, բարեկարգեց վանական համալիրներին կից գործող դպրատները։ Եվ, այսքանի կողքին, կապվեց Սպահանի հայ վաճառականների հետ, նրանց միջոցով նամակ հղեց Ռուսաստանի ցար Ալեքսեյ Միխայլովիչին՝ խնդրելով հովանավորել այդ վաճառականներին եւ ամբողջ հայ ազգին։ Բայց լավ է խոսքը տանք իրեն՝ Պետրոս կաթողիկոսին։ Նախ ներկայանում է որպես Պետրոս կաթողիկոս՝ ձեռնադրված Մեծ Հայքի լուսավորիչ Գրիգորի օրհնությամբ, աթոռակալ Գանձասարի, որտեղ պահվող՝ Հովհաննես Մկրտչի, Գրիգոր Լուսավորչի եւ այլոց սրբազան մասունքներով պաղատում է Աստծուն, որ Սուրբ Հոգին միշտ էլ հովանի լինի արքայանիստ Մոսկվայի ու համայն Ռուսիայի վրա։ Ապա խնդրում է, որպեսզի Ռուսաց մեծ ու հզոր երկրի թագավորն իր զորավոր ուշադրությամբ պաշտպան կանգնի հայ վաճառականներին, որոնք Իրանի եւ հարեւան երկրների առեւտուրն են անում Ռուսաստանի հետ։ Եվ ապա ու ամենակարեւորը. *«Նաեւ աղոթում ենք տեր Աստծուն,*- գրում է Պետրոս կաթողիկոսը, - *որպեսզի նա (Աստվածը) քո տերությունն ու քո փառքը բազմապատկի եւ հաստատ պահի, քո բոլոր թշնամիներին հաղթած թափի քո ոտքերի առաջ, ինչպես որ Սողոմոնի [ոտքերի առաջ], եւ որ մեր ժողովրդին հովանավորես, որպեսզի անօրենների շրջապատման մեջ մենք չմնանք անզարմանելի»*[1]։

Նկատի առնենք, որ սա Հայաստանից Ռուսաստանի արքունիք գնացած առաջին պաշտոնական գիրն է, եւ սրանից տարիներ հետո էր, որ Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին ցարին նամակ հղեց՝ խնդրելով օգնել, որպեսզի վերջ տրվի պարսկահպատակ հայերի դեմ գործադրվող բռնություններին։ Եվ գրագրությունն էլ կանոնավոր ընթացքի մեջ պիտի մտներ XVII դարի սկզբին, Իսրայել Օրիի նախաձեռնությամբ։

* * *

XVII դարը հասունացրել էր հայոց ազատագրության խնդիրը։ Բանիմաց մարդիկ հասկանում էին, որ այլեւս անհնար է ազգային գոյությունը պահպանել օտարների տիրապետության տակ, այն էլ այնպիսի օտարների, ինչպիսիք Սեֆյան Իրանն ու Օս-

1 "Армяно-русские отношения в XVII веке" (сборник документов), Ереван, 1953, стр. 91-92.

մանյան Թուրքիան են։ Անհնար է, դա գիտակցում էին բոլորը։

Բայց ինչպե՞ս փրկել ազգը, ի՞նչ ուժով, ո՞ւմ օգնությամբ, երբ հայրենիքում մելիքների սակավաթիվ զորագնդերն էին միայն, իսկ օտար երկրներից ամեն մեկն էլ նման հանգամանքներում փնտրում էր իր շահը, թելադրում էր իր պայմանները, որոնք պակաս վնասաբեր չեն, քան հարեւան բռնակալի լուծը։

Եվ, ահա՛, այս ժամանակ ազատասեր ու հեռատես մի մելիքազուն, որ ժառանգն էր Առանշահիկներից սերված Խաղբակյան-Պռոշյան իշխանական տոհմի եւ կոչվում էր Իսրայել Օրի, 1680-90-ական թվականներին Եվրոպական մեծ տերությունների կառավարների հետ շփվելով, նրանց տրամադրություններն ու խոստումները ճանաչելով, XVIII դ. արշալույսին էլ անցավ Ռուսաստան, տեսավ ու ճանաչեց այս երկիրը, ծանոթացավ քաղաքական հեռանկարներին ու ծրագրերին եւ համոզվեց, որ աշխարհում եթե կա մի երկիր, որ կարող է օգնել հայ ժողովրդի ազատագրությանը, դա Ռուսաստանն է։ Երկիրը մեծ էր, հզոր, հեռանկարները՝ հուսատու, իսկ կայսրության գահակալ երիտասարդ Պետրոս Առաջինն էլ մեծ ախորժակ ուներ շարժվելու դեպի հարավ, իր գայիսոնի տակ առնելու Կովկասն ու նրանից հարավ ընկած երկրները...

Հեռաթափանց Իսրայել Օրին Ռուսաստանի այս ծրագրերի հետ էր կապում հայոց ազատագրությունը եւ, շտապելով հայրենիք, այնտեղ աշխարհիկ ու հոգեւոր առաջնորդներին վարակեց իր տրամադրությամբ, դարձրեց գինվորները քաղաքական-դիվանագիտական հեղափոխիչ մի ծրագրի, որ պիտի կոչվեր հայ ժողովրդի ռուսական կողմնորոշում։

Իսրայել Օրիի կազմակերպած առաջին նամակը, որ հայ մելիքներն էին ստորագրել Սիսիանի Անգեղակոթ գյուղում՝ հղելով Պետրոս Մեծին, սրտի խոսքն էր նաեւ Արցախի տերերի, եւ Օրիի մոսկովյան նոր ուղեւորությանն էլ ուղեկից դարձավ Արցախի Մեծառանից գավառի Սուրբ Հակոբավանքի վարդապետ Մինասը։ Մելիքները նրան այսպես էին երաշխավորել. ***«Զ Մինաս վարդապետն Սուրբ Յակոբա վանիցն... մեզ խոստովանահայր կարգեցինք եւ ուղարկեցինք ի հետ պարոն Իսրայէլին, որ երկուսն էլ հաւատիւ եւ ճշմարիտ գիտակ են մերոց»***[1]։

Սա 1699-ի ապրիլին էր։ ***«Մենք Մեծ Հայաստանեացս իշխանքներս եւ մելիքներս,*** - գրում էին նամակն ստորագրողները, - ***... վաղեմէ ունէաք ումուտ մեր սուրբ գրոցն եւ նախնեացն, որ քեզանով պիտի լինի մեզ իմտատ աշխարհի (քեզնով պիտի լինի մեր աշխարհի փրկչական օգնութիւնը) եւ ամենայն քրիստոնէից հաւատոյն արձակութիւն... Զունինք այլ ուստէքէ ումուտ (ուրիշ ոչ մի տեղից հույս չունենք)։ Ունինք ի վերուստ զԱստուած եւ յերկրի՝ զքեզ... Մեր խորհուրդն այն է, որ մենք մեր իշխանքնով եւ պարոնօքս ամենեքեանքս հնազանդ լինինք քո մեծ թագաւորութեանդ»***[2]։

---

1 "Армяно-русские отношения в первой трети XVIII века" (сб. документов), т. II, ч. I, Е., 1964, стр. 184-185.

2 Նույն տեղում, էջ 185։

Առայժմ այսքանը՝ հույս, հավատ, հպատակություն՝ ի գին այն օգնության, որ Մեծ Ռուսիան պիտի ցույց տա հայերին՝ մահմեդական ստրկությունից փրկվելու համար։

Հետո Օրին, հավանաբար, ճշտելով իր ստացած տեղեկությունները Ռուսաստանի հարավային ծրագրերի վերաբերյալ, Պետրոսին գրով հաղորդում էր մելիքների պատրաստակամությունը՝ օգնելու ամեն ինչով, որ իրենք ունեն՝ զինուժ եւ նյութական հարստություն։ Ապա նա զեկույց ներկայացրեց հարավի երկրների վիճակի, ռազմական ու տնտեսական պայմանների մասին, տվեց բոլոր այն տեղեկությունները, որոնք կարող էին հետաքրքրել դեպի հարավ ձգտող թագավորին։

Հետագայում մելիքները հավաքվում էին Աղվեն՝ Գանձասարի դիմացի իշխանական ապարանքը, եւ այնտեղից էին Պետրոս Մեծին հղում իրենց նամակները, այն հին ու սուրբ վայրից, ուր Վաչագան թագավորն իր կանոնական սահմանադրությունն էր ընդունել, ուր X դարում Արեւելյան Հայաստանի եկեղեցու հայրերն էին հավաքվել՝ դեմ կանգնելու հակահայկական հոգեւոր ու մարմնավոր աղետներին։ Եվ մելիքները նորից նոր հաստատում էին իրենց հավատարմությունը Ռուսաց թագավորին, իրենց հույսն ու ջերմագին հորդորները։ Նամակներ էին հղում նաեւ արքունիքի ուրիշ գործիչների։ Երեւի տեղեկացել էին, որ այնտեղ կաշառքը հրաշքներ է գործում, պետական կանցլեր Գոլովինին էին թուղթ ուղարկում՝ պարտավորվելով նրան վճարել 20 հազար ոսկի, եթե իր օժանդակությամբ աջողացնի Հայոց երկրին հասնելիք օգնությունը...

Եվ, վերջապես, Օրին Ռուսաստանի կառավարական մի մեծ պատվիրակության գլուխ անցած՝ ռուսական գնդապետի աստիճանով, 1707 թ. ուղեւորվեց Այսրկովկաս ու Պարսկաստան։ Նպատակն, իհարկե, հայ ժողովրդի ու հարեւանների ուժերի համախմբումն էր ապագա ռուսական արշավանքը հաջողությամբ պսակելու համար։ Այդ նպատակով նա հանդիպումներ ունեցավ այս վայրերի մեծ ու փոքր շատ գործիչների հետ։ Այս գործիչների շարքում առանձնահատուկ տեղ էր գրավում Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը։ Երեւի պատմիչ ու հայրենասեր Եսայի կաթողիկոսը մեծ հյուրին տեղեկացրել էր նրա խաղբակյան տոհմի ակունքներին, պատմել էր, որ նրանք եւս Գանձասարի կողմերի տերերից են եղել, Հասան-Ջալալյանների տոհմակիցները, XII դարի վերջին Զաքարյանների հակաթուրքական արշավանքներում ցույց տված անօրինակ խիզախությունների համար, իբրեւ արյան գին, ստացել են Վայոց ձորի մի մասը, հիմնավորվել այնտեղ, ստեղծել իրենց նոր իշխանությունը, որի ռազմաքաղաքական ու մշակութային մեծագործությունները ոսկե տառերով են գրվել հայոց պատմության մեջ... Եւ ահա Վայոց ձորի խաղբակյան իշխանության նոր պայազատը՝ Իսրայել Օրին, քաջ եւ իմաստուն ժառանգն իր տոհմի, եկել է վաղընջական նախնյաց հողը, այն ազատագրելու ուղիներ է փնտրում, օտարների դռներն է ծեծում... Մի՞թե հարկ չէ, որ առաջին հերթին նույն Առանշահիկ տոհմի երկու ժառանգները ձեռք ձեռքի տան, միաձուլեն իրենց կարողությունները եւ այդպե՛ս լծվեն ազգի փրկության սուրբ գործին։

Եսայի կաթողիկոսը դարձավ Օրիի լծակիցը եւ նրա պատվիրակության կազմում

ճանապարհվեց Ռուսաստան՝ արքունիքի մեծամեծների հետ խոսելու իր ազգի անունից՝ իբրեւ հոգեւոր նվիրապետության գերագույն գլխավոր եւ աշխարհիկ իշխանությունների լիիրավ պատգամախոս։

1711-ի ամառը նրանք հասան Աստրախան, եւ այնտեղ տեղի ունեցավ մեծ ողբերգությունը. Իսրայել Օրուն մահադեղ տալով սպանեցին, ինչպես հետո է պարզվել, թաքցնելու համար նրանից կորզած հարստությունը եւ Պարսկաստանից նրա միջոցով Մոսկվա փոխադրվող բեռների մեծ մասի յուրացումը զանազան պաշտոնյաների կողմից։

Եսայի կաթողիկոսը վերադարձավ Գանձասար եւ Խամսայի ու հարեւան հայկական մարզերի ու գավառների բոլոր ուժերը շուտ տվեց ինքնապաշտպանության գործը կազմակերպելու վրա։ Նա ինքնապաշտպան ուժերի առաջնորդն էր ու ոգին։ Ամենքին համոզել էր, որ հայությունը պիտի տա իր ազատագրական պատերազմներից ամենաճակատագրականը։ Եվ պատահական չէ, որ ինքնապաշտպանության տագնապալից կանչին Արցախ եկան նաեւ բուն Աղվանից երկրի հայության մի քանի զորապետներ իրենց ջոկատներով։

Ինքնապաշտպանության փող էին հնչեցրել նաեւ հարեւան Սյունիքում, ուր մելիքները ոտքի էին ելել եւ պատրաստ էին վճռական մարտերի։

ՍՂՆԱԽԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Այս շրջանի պայքարը չի կարելի չկոչել հայ ժողովրդի ազատամարտերի բազմադարյան ընթացքի ամենահասուն շրջանի հզոր պոռթկումը՝ պարզորոշ իր քաղաքական նպատակասլացությամբ եւ լայնահուն իր ընդգրկումներով։ Արցախում եւ Սյունիքում բռնկված ազատագրական շարժումն արձագանք տվեց հայկական ու հայաբնակ բոլոր շրջաններում, դարձավ ամենայն հայության մեծագույն մտահոգությունը։ Գանձակի ու Շամախու կողմերից հայ կամավորական զորամասեր եկան, սկսեցին կռվել ղարաբաղցիների ու սյունեցիների հետ կողք կողքի։ Շարժման նախապատրաստությունն ու ընթացքը ոգեւորել էին նաեւ զաղութահայության լայն շերտերին, եւ կողմնակի նյութերից կարելի է ենթադրել, թե նրանցից, հատկապես լեհահայերից ու ղրիմահայերից առանձին ջոկատներ իրենց մասնակցությունն են բերել լեռնահայկական նահանգների ազատագրական մարտերին։ Շուրջ մեկ տասնամյակ տեւած հերոսական պայքարն աստիճանաբար մարեց, սակայն չպարտվեց։ Պայքարի դրոշ բարձրացրած ժողովուրդը խոր պաշտպանության անցավ, ղեկավարները շարունակեցին օգնության կոչերով դիմել ռուսական արքունիք։ Եղան եւ այնպիսիք, որոնք, դադարի փող հնչեցնելով, փորձեցին առժամանակ հանգիստ առնել եւ որոնալ ապագայում անելիքը։ Հենց այդ ժամանակ էլ ազատագրական շարժման մասնակիցները հոգացին բուն պայքարն անմահացնելու մասին. գրեցին կամ գրել տվին այդ պայքարի պատմությունը։ Սյունյաց ազատամարտերի երկու մասնակիցներ՝ Ստեփանոս Շահումյանն ու տեր Ավետիքը, ընկնելով Վենետիկ, իրար լրացնելով պատմեցին հայրենի լեռների գլխով անցածը,

եւ երիտասարդ վանական Ղուկաս Սեբաստացին ամենայն մանրամասնությամբ գրի առավ նրանց պատմածը, ստացվեց այժմ լայնորեն հայտնի «Պատմութիւն Դավիթ-բէկի» գիրքը։ Իսկ Եսայի Հասան-Ջալալյանը՝ Արցախական աշխարհի մելիքական ուժերի կազմակերպիչն ու առաջնորդը, եթե կրծքին կաթողիկոսական խաչ ուներ կախած, կողքին՝ զորավարական թուր, ապա ձեռքից վար չէր դնում պատմիչի գրիչը, որը թուրք նվաճողների դեմ մղած թեժ մարտերի կարճ դադարներին անպանույշ լեզվով, բաշխիմացությամբ ու արդար խոսքով զալոց սերունդներին էր հանձնում կրակոտ օրերի շունչը, հայրենապաշտպան զորքերի սխրագործությունները, հայ-վրացական զինակցության փառավոր դասերը, հայոց ռուսական կողմնորոշման, ռուսական արքունիքի հետ կապված հույսի ու ակնկալության վառ արտահայտությունները։ Տպագրված մեզ է հասել Եսայի կաթողիկոսի պատմության մի հատվածը միայն, ամբողջը՝ ձեռագիր վիճակում, կորած է համարվում, եւ պիտի հուսալ, թե երբեւէ կելնի իր թաքստոցից, սերունդներին կպատմի Արցախի սղնախական ազատամարտերի ճշմարիտ ամբողջությունը։

Լեռնահայաստանի ինքնապաշտպանական մարտերը լայնորեն արտացոլված են նաեւ նրանց մասնակիցների պաշտոնական զրագրություններում, նամակներում եւ այլազան վավերագրերում։ Բարեբախտաբար դրանք համարյա բոլորն էլ հրապարակված են արդեն, եւ հետազոտողները հնարավորություն ունեն ստանալու մինչեւ վերջ ճշմարիտ այնքան տեղեկություններ ժողովրդի կենաց ու մահու կռիվների մասին։

Կարելի էր կարծել, թե Արցախի ու Սյունիքի հայությանն ըմբոստ ինքնապաշտպանության մղեցին դաղստանցիների պարբերական հարձակումներն Այսրկովկասի վրա։ **XVIII** դարի սկզբին լեռնաբնակ հրոսակախմբերն իրենց ապրուստի միակ միջոցն էին դարձրել այն ասպատակությունները, որոնց ենթարկում էին Վրաստանը, Հյուսիսային Հայաստանն ու Շիրվանը։ Ավերիչ հեղեղի պես Դաղստանից իջնում էին անպաշտպան բաղաքների ու գյուղերի վրա, կոտորում, կողոպտում, ինչ որ չէին կարող փախցնել՝ մատնում հրդեհի եւ, իրենց ետեւից ավեր ու մոխիր, մահ ու դժբախտություն թողնելով, հեռանում։

Հայկական նահանգների վրա դաղստանցիները եկան 1722 թ.։ Հասնելով Մուղան, ծովեցին դեպի Դիզակ եւ, դիմադրության հանդիպելով, կոտորեցին տեղի հայերին։ Հարեւան Վարանդան նրանք շրջանցեցին՝ ընդունելով մելիք Բաղիրի առատ ընծաները։ Սակայն ընդդիմության հանդիպելով Խաչենում ու Զրաբերդում՝ նորից արյունոտ հաշվեհարդար տեսան բնակչության հետ, կողոպտեցին բնակավայրերը, կոտորեցին մարդկանց, գերեվարեցին ողջ մնացածներին...

Դաժանությամբ բացառիկ այս դեպքերի մասին հայ մելիքները նամակ հղեցին Պետրոս Մեծին եւ, մեկ առ մեկ նկարագրելով դաղստանցիների անողորմ արարքները, տեղեկացրին նաեւ, որ ***«ետ մնացածն տեղոյս բռնակալաց թուրքերն այրելով, խորովելով հարկս պահանջէին, ամէնն թափառու թալան հափշտակէին»***։

Եվ այստեղ էր, որ տառապանքն իմաստնացրեց մարդկանց. նրանք հասկացան, որ լավ է կռվելով պաշտպանվել, քան ողորմություն սպասել թշնամուց, որը գալիս է կոտորելու եւ կողոպտելու։

Հայտնի է, որ XVIII դարի սկզբից ի վեր Արցախի հայությունը, մելիքների գլխավորությամբ, զինվում էր ու պատրաստվում վճռական ճակատամարտերի։ Ճիշտ է, նրան համոզել էին, թե այդ ճակատամարտում որոշիչը լինելու է հյուսիսի մեծ թագավորի ուժը։ Սակայն, այսուհանդերձ, նախապատրաստվել էին, զինվել, հավատացել, թե թշնամուն հնարավոր է հաղթել։

Այստեղ մեծ դեր խաղաց Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը։ Իր գահակալության առաջին իսկ տարիներին, կապվելով Իսրայել Օրիի հետ, փայփայելով ռուսաց օգնությամբ հայությունը թուրքաց ու պարսից բռնակալություններից ազատագրելու գաղափարը, նա հավատում էր իր ազգի աստղին։ Նա իր կաթողիկոսական տիտղոսը հանգիստ չէր թողնում Պետրոս Մեծի զորությունն Այսրկովկաս բերելու համար։ Եվ հետաքրքիր է, որ իր թղթերում դույզն իսկ տեղ չէր թողնում այնպիսի պատկերացման համար, թե այն երկիրը, որ կարիք ունի փրկության, գտնվում է ողորմելի մի վիճակում, աղքատ ու անօգնական, եւ Ռուսաց արքան միայն հավատակցի իր պարտքն է կատարելու նրան ազատագրելիս։ *Ոչ,*- գրում էր Եսայի կաթողիկոսը,- *բարեբեր է մեր երկիրը, քաջ են ու հայրենասեր նրա զավակները,*- երդվելու պես տեղեկացնում էր Եսային։- Պարզապես մեր թշնամիներն են շատ։ Շատ եւ նենգ։ ***«Սոքա խորամանկ օձ զոլով օր յաւուր զմեզ նեղութիւն յավելում են եւ կարողութենէ հատում զմեզ»։***

Եսային իր հավատացյալ ժողովրդին հորդորում էր պատրաստվել բախտորոշ ճակատամարտերի։ Վրաց թագավոր Վախտանգին, որ Պարսից հավատարմատարն էր Կովկասում եւ նրան հպատակ զորքերի սպարապետը, համոզում էր այդ զորքերն առժամանակ օգտագործել թուրքաց դեմ, ապա Ռուսաց օժանդակությամբ եւ այսրկովկասյան ազգերի միացյալ ուժերով երկրից վռնդել նաեւ պարսիկներին։

Հայոց պատմության հին փորձը հրաշալի գիտեր Եսայի կաթողիկոսը, որ իր ձեռքն էր վերցրել Արցախի ազատագրական պայքարի ղեկը։ Նա համոզված էր, որ բարեկամի ու հարեւանի օժանդակությամբ ավելի հեշտ է ձեռք բերվում հաղթանակը։ Սակայն ազգը պետք է պատրաստ լինի մենակ ու սեփական ուժերով պաշտպանելու իր երկիրը։ Հնարավոր է, որ թշնամիները ջանային հարցը լուծել ավելի վաղ, քան վրա կհասներ այն օգնությունը, որ խոստանում էին հարեւաններն ու հյուսիսի բարեկամը։ Դրա համար էլ նա Արցախը պատրաստեց ինքնապաշտպանության, ստեղծեց լեռնային երկրամասի ազատագրական պայքարի մի կուռ եղանակ, որը մեր պատմությանը հայտնի է իբրեւ սղնախների ինքնապաշտպանություն։

Սղնախներ էին կոչվում Արեւելյան Հայաստանի լեռնային այն բերդերն ու բնական ամրությունները, որոնց ապավինած բնակչությունը պաշտպանվում էր դրսի թշնամիների ասպատակություններից եւ արշավանքներից։ «Սղնախ» - «սղմախ» թուրքական բառ է, որ նշանակում է «սեղմել» - «ամրացնել»։ Ռուսական վավերագրերում «սղնախի» փոխարեն գործ էր ածվում "Армянское собрание", որ պետք է թարգմանվի «հայկական հավաքատեղի»։

Սղնախներ կային օտար բռնակալների դեմ պայքարող հայկական համարյա բոլոր նահանգներում։ Սակայն աղբյուրագիտական հարուստ նյութեր են պահպանվել միայն

Ղարաբաղի եւ մասամբ էլ Սյունիքի սղնախների մասին, քանի որ Արեւելյան Հայաստանի այս երկու նահանգների մելիքական տների կազմակերպած ազատագրական ոգորումները ռազմադիվանագիտական տեսակետից սերտորեն աղերսված էին հարեւան ժողովուրդների ու ռուսական արքունիքի հետ, եւ ռուսական դիվաններում են պահպանվել վավերագրական հսկայական նյութեր այդ սղնախների գործունեության մասին։

Ղարաբաղի հինգ մելիքություններից յուրաքանչյուրն ուներ իր մեծ ու փոքր սղնախները։ Դրանց մի մասը դեռեւս վաղ միջնադարից հայտնի բերդամրոցներն էին՝ Գտիչ-Գորոզը, Ջրաբերդը, Կաչաղակաբերդը, Շիկաքար-Բերդաքար-Քարագլուխը (հետագայի Շոշի բերդը) եւ այլն։ Կառուցվեցին նաեւ նորերը, ինչպես Գյուլիստանը Թարթառի ափին, Ավետարանոցը Քիրսա սարի ստորոտում եւ Քոչիզը՝ Հերհեր ու Ծովատեղ գյուղերի թիկունքում։ Այս բոլորի զինական ուժերը ղեկավարվում էին Մեծ սղնախի կողմից, որի գլուխ էին կանգնած Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը եւ ռազմաքաղաքական նշանավոր գործիչ Ավան հարյուրապետը։ Ղարաբաղյան բոլոր զորքերի ղեկավարի կամ Մեծ սղնախի դեր սկզբնապես ուներ Ջրաբերդը։ 1721 թ. զարնանն այստեղ հայոց զորքերի կողմից մեծ ջարդ ստացած ավարառու լեռնականները նահանջեցին դեպի Կուրի ձախափնյակը եւ այլեւս չհամարձակվեցին երեւալ Ղարաբաղի կողմերում։ Հետագայում Մեծ սղնախ էր կոչվում Շոշ գյուղի բերդը կամ Քարագլուխը, ուր տեղակայված էին Ավան հարյուրապետը, նրա եղբայր Թարխանը եւ մյուս զորապետները։ Նրանք այստեղից գլխավորում էին հակաթուրքական եւ հակապարսկական պայքարի ելած բոլոր ուժերին։

Ավան հարյուրապետն այստեղ բերդի բնական հարմարություններին եւ նախորդ հարյուրամյակներում կառուցված պարիսպներին նորերն էր ավելացրել, կանգնեցրել դիտակետեր ու հրակնատներ եւ միջնադարյան Բերդաքարը դարձել էր Հայաստանի ամենահզոր ամրոցներից մեկը։ Մինչեւ վերջին ժամանակներս էլ բերդի հարավային ժայռեղեն պատի տարբեր մասերում պահպանված բարեշեն քարայրեր կային, որոնք ժողովրդի հիշողության մեջ հայտնի էին «Ավան յուզբաշու կացարաններ» անունով։ Իսկ հետագայում կառուցված բերդապարսպի առանձին հատվածներ մատնում էին իրենց հնությունը, եւ ժողովուրդը հիշում էր, որ դա ավան յուզբաշու կառուցածն է։

Դիզակի գավառի սղնախը Տողա բերդն էր։ Վարանդայի զորքերը տեղավորված էին Քոչիզում (Հերհերի ու Ծովատեղի արանքում), ինչպես նաեւ Ավետարանոցի կողքի բերդում, որն այն ժամանակից ի վեր Սղնախ էր կոչվում եւ հիմա էլ պահպանվում է իբրեւ գյուղանուն։

Թարթառի ու Խաչենի հովիտներում ամրացվել էին Գյուլիստանի հզոր բերդը, հինավուրց Ջրաբերդը, Հավքախաղացն ու Կաչաղակաբերդը։ Ստույգ տեղեկություններով՝ Ղարաբաղի սղնախներում տեղակայված էին շուրջ 30 հազար հեծյալներ եւ 20 հազար հետեւակայիններ, իսկ զինաբախումների ժամանակ զենքի տակ էր առնվում ամբողջ բնակչության մեծամասնությունը։ Սղնախներում ամրացած հայ զինվորությունը փաստորեն ապահովել էր նահանգի անկախությունը, եւ շուրջ վեց տարի, 1721-1727 թթ., Ղարաբաղի գավառներն այլեւս հարկ չէին վճարում պարսիկ կամ թուրք բռնակալներին։ Եսայի կաթողիկոսի վստահելի տեղեկությամբ՝ հենց այս ժամանակ էլ ժո-

ղովուրդն ու նրա պարագլուխները փայփայում էին հինավուրց ազգային պետականության ***«նոր նորոգումը»***, այսինքն՝ վերականգնումը: Բայց որովհետեւ նրանք գիտակցում էին նաեւ այդպիսի իշխանության մեկուսի գոյության անհնարինությունը, կանոնավոր դիվանագիտական հարաբերությունների մեջ մտան եւ համագործակցության ծրագիր մշակեցին Վրաց Վախտանգ թագավորի, Պետրոս Մեծի արքունիքի, նույնիսկ Գանձակի մահմեդական բնակչության հետ՝ նպատակ ունենալով ստեղծել հայ-վրացական հզոր թագավորություն՝ Ռուսական կայսրության հովանու ներքո:

1722 թ. ռուսական զորքերը մտան Դերբենդ եւ պիտի շարժվեին դեպի հարավ, նվաճեին Այսրկովկասն ու Կասպից ծովի հարավային ափերը:

Նախապես իրենց համագործակցությունն ու հպատակությունը հայտնած վրացիներին եւ հայոց սղնախականներին Պետրոս Մեծը հանձնարարել էր ընդառաջ ելնել՝ Շիրվանում հանդիպելու եւ արշավանքը համատեղ շարունակելու համար: Վրաց 30 հազարանոց զորքը Վախտանգ թագավորի գլխավորությամբ եւ 10 հազար սղնախականներ էլ Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի առաջնորդությամբ 1722 թ. սեպտեմբերի 22-ին իրար խառնվեցին Գանձակի մոտ, Զոլակ գյուղում: Ցնծությունը բացառիկ էր, վերահաս ազատագրության հեռանկարը՝ պարզ ու մոտիկ: Սակայն երկու ամիս Գանձակի մոտերքում սպասելուց հետո հայ եւ վրացի զորքերն ստիպված եղան տուն վերադառնալ, որովհետեւ նոյեմբերին միայն լուր առան, որ ռուսները վերադարձել են Աստրախան, եւ արշավանքը հետաձգվում է անորոշ ժամանակով:

Եսայի կաթողիկոսն ու նրա զինակիցները հաշտվեցին կատարվածի հետ եւ շարունակեցին սղնախների գործը: Լեռնական հայությունը չէր ընդունում շահի գործակալներին, կռվում էր Ղարաբաղի մատույցները կրծող թուրք զորքերի դեմ եւ հույս ուներ, թե Պետրոս Մեծի բանակները շուտով կհասնեն Այսրկովկաս, եւ միասնական ուժերով իրենք մեկընդմիշտ կազատագրվեն պարսից ու թուրքաց ճիրաններից: Սակայն այստեղ էլ խանգարեց ռուսական արքունիքի դիվանագիտությունը: Հավատացած չլինելով, թե միաժամանակ պատերազմի մեջ մտնելով պարսիկների եւ թուրքերի հետ, անպայման կհաղթի՝ Պետրոսը 1724-ի հուլիսի 12-ին պայմանագիր կնքեց Թուրքիայի սուլթանի հետ: Նրա ներկայացուցիչները Կ.Պոլսում այդ պայմանագիրն ստորագրելով, հաստատեցին, որ Ռուսաստանը տեր է մնում Կասպից ծովի ափերին՝ Դերբենդից մինչեւ Մազանդարան, իսկ Թուրքիան՝ Այսրկովկասին եւ համարյա ամբողջ Ատրպատականին: Դրանից հետո թուրքաց զորքերը նոր համալրումներով շարժվեցին դեպի Այսրկովկաս՝ նախապես հրամայելով, որպեսզի դիմադրողները զենքերը ցած դնեն:

Պետրոս Մեծի բանբերներն էլ հայոց նահանգների բնակիչներին անորոշ խոստումներ էին տալիս, բայց որոշակի առաջարկում՝ գաղթել հայրենի վայրերից եւ բընակվել ռուսաց կողմից նոր նվաճված Կասպիականի ափերին:

Ի՞նչ պիտի աներ հայ ժողովուրդը, որ իր հին երկու բռնակալ թշնամիների դիմաց մնացել էր միայնակ: Շարունակեց կռվել ու պաշտպանվել: Սղնախներն ավելի ամրացան, հայրենիքի պաշտպանների շարքերը միանգամից խտացան: Եսայի կաթողիկոսն ու զորապետները ոչ միայն սղնախներում էին, այլեւ գյուղերում ու ավաններում:

Հուսադրում էին ինքնապաշտպանության, տառացիորեն ինքնապաշտպանության ելած լեռնական գյուղացիությանը, ոգեկոչում էին հայ ժողովրդի անցյալ պատմության հերոսների ու հերոսուհիների անձնազոհությունը: Եվ ինքնապաշտպանության գենք բարձրացրածները երդվում էին թշնամուն չգիջել ոչինչ, կռվել բոլոր միջոցներով, դիմադրել մինչեւ վերջին շունչը:

1725 թ. փետրվարին թուրքական վեցհազարանոց մի զորամաս՝ Շահին, Սալահ եւ Ալի փաշաների գլխավորությամբ, խորանալով Հայաստանի մեջ, հասավ Արցախ: Վարանդայում նրանց բաշխեցին ըստ գավառի գյուղերի, եւ գիշերը, նախօրոք դրված պայմանով ու ահազանգով, *«հյուրընկալները»* կոտորեցին թուրքերին: Մարտի 10-ին, նաեւ հուլիսի 25-ին Պետրոս Մեծին գրած նամակներում Եսայի կաթողիկոսն ու մելիքները միամտորեն դեռ հավատում էին ցարից ստանալիք օգնությանը եւ պատմում էին Վարանդայում տված ջարդը՝ տեղեկացնելով նաեւ, որ փաշաներից մեկին կենդանի էին թողել ու հարցաքննել: *«Ձնա խոսացրինք,*- գրում են սղնախականները:- *Դուք ինչպ՞ս եք եկել այս երկիրը:* Նա ասաց. *«Մեր թագավորն հրաման է արարեալ, որ պիտի մեք այս երկրներիս հայն ու զղջաշն փչացնեմք, չուն որ ըռուս թագավորի զորքն ծովի այս կողմս են անցել, նոցա վերա պիտի գնամք, հայն այս մէջս չպիտի եւ այս երկրներս խարապ պիտի լինի, որ մեր ճանապարհն բացվի: Նաեւ ասաց այս փաշան, թե դուք չէիք այս միջումս, մենք հիմա Դարպանդու եւ Պաքու վերայ էինք գնացել, որ դատի մի մերս է»*[1]:

Ուրեմն, թուրքերն իրենցն էին համարում Դերբենդն ու Բաքուն եւ հայերին համարում էին այն սեպը, որ խրված է *իրենց*ու *իրենցը*համարվող *Դերբենդ-Բաքվի*միջեւ: Հայերին պիտի ոչնչացնեն, որպեսզի իրենք միանան *«իրենց»* եւ կանխեն ռուսների ելքը դեպի Կասպիականի ու Միջերկրականի ափերը: Սղնախականները թուրքաց քաղաքականության այս ծալքերն էին բացում Պետրոս Մեծի առաջ, քաղաքականություն, որին հարազատ պիտի մնար սուլթանությունն իր հետագա ամբողջ կյանքում, եւ որը ժառանգություն պիտի մնար նույնիսկ երիտթուրքերին ու նրանց հետնորդներին:

Իսկ հայերը, իբրեւ սեպ՝ խրված Թուրքիայի ու թրքության երազների արանքը, բոլորովին էլ ցանկություն չունեին ո՛չ տեղահանվելու, ո՛չ էլ, մանավանդ, վերանալու:

Այս ժամանակ էլ նրանք ցարի արքունիքից ստացան գիր, որով առաջարկվում էր, որ արցախցիները վերաբնակության գնան Ռուսաստանին անցած նոր հողերը՝ Կասպիականի ափերին: Դիվանագիտության հարցերում չորեքթաք տալն անգամ չսովորած սղնախականները, բռնագրավիչների դեմ համառորեն կանգնած ու արյուն տալով՝ Պետրոս Մեծին պատասխանում են հավատով ու հավատարմությամբ, բայց նաեւ հայրենի հողի հանդեպ մի այնպիսի սիրով ու սրբազան երկյուղածությամբ, որ այսօր էլ առանց սարսուռի անհնար է կարդալ նրանց նամակը:

---

1 Նույն ժողովածուն, հ. երկրորդ (Ե., 1967), էջ 249:

Ոչ մի ժամանակ լեռնային երկրամասի տերերի ու բնակիչների, մելիքների ու ենթակաների, մեծի ու փոքրի այնպիսի համերաշխություն չի եղել, ինչպես այն օրհասական օրերին: Նույնիսկ Արցախի երկու հակաթոռ կաթողիկոսները՝ Եսային ու Ներսեսը, անուշի էին եկել, միասին ու միահամուռ էին գործում: Պետրոս Մեծին դիմելով՝ նրանք գրել են. *«Երկրպագութիւն եւ ողջոյն ի հեռուստ մատուցանեմք ազգս հայոց՝ նորընծայ ծառայքս քոյ, պատրիարգօք, իշխանօք, մելիքներօք, հեծելազորօք, տանուտիրօք, ռամկօք եւ առհասարակ միախումբ եւ միաբան եւ միահամուռ ժողովրդօք»*[1]: Իրենց աղետալի վիճակի մասին են պատմում, ապա հիշում կայսերական հրամանը վերաբնակության վերաբերյալ. *«Մեք ելնումք տանով ու տեղով եւ ամենայն ինչիւք զամբ զձեր Պարսից նոր առած երկրներն, որ է Պաքու, Կիլան, Դարպանտ եւ աստ բնակիլ»*: Կամքը ձերն է,- ասում են նամակի հեղինակները,- *մենք ձեզ հպատակութիւն ենք հայտնել եւ պարտավոր ենք ենթարկվել ձեր ամեն մի կարգադրութեանն ու խոսքին («Կամք տեառնդ եղիցի եւ հրամանի քում մահու չափ եմք հնազանդ»)*: Բայց *«ա՛յս, որ հրաման տեառնդ է, յոյժ անկարելի է մեզ, որ բնաւ ձեռք չէ տալ այս քանի պատճառաւս. զի այս երկրներս, որ ծառայքս քո բնակեալ եմք, որ են Գանջայ, Ղարապաղն, Զ (6) մհալ, այլ Գեղարքունի, Բօլանի, Ղափան, Սիսիան եւ այլ երկրներ...», մե՛ն են, մեր ապուպապերից ենք ժառանգութիւն ստացել: Այստեղ են մեր գյուղերն ու ավանները, յուրաքանչյուր նահանգում՝ 30, 40, 50, 60 գյուղեր: Եվ սրանցից ամեն մեկում էլ՝ 30-40-ից մինչեւ 600-700 տուն: «Այս երկրներս սարով ու տեղով շատ ամուր են, եւ մեք այս խալոս ամէքն իւր երկրումն սղնաղ-սղնաղ եմք արել ամուր տեղերն, եւ ամէքս մեկ սղնաղին վերա նստած պահումք»:* Նորից անդրադառնում են իրենց վիճակին.- *«Եվ մեր Դ (4) կողմի երկրներ օտմանցիք առել են, որ մեզ թշնամիք են այլ եւ մեր մեկ կողմն էլ ղզլպաշ են, որ թշնամիք են»*, եւ *«անհաշտելի խռովութիւն է մեր եւ անօրէնից մեջն»: Եվ սակայն, այս պայմաններում անգամ մենք մեր երկիրը չենք կարող թողնել: Իսկ թե կարող ես, օգնիր, որ «մեք այս չար թշնամոցս ազատուիմք»: «Գրեցաւ ՌՃՀԴ (1725) թուիս յուլիսի ԻԵ (25) ի Գանձասար»*[2]:

Հետագայում պարզվում է, որ գաղթելու միտքը Պետրոս Մեծին տված է եղել մի բանագնաց՝ ոմն Անտոն Բահանա: Սա Բյոխվա Զալաբու հետ միասին, Արցախից սղոնախականների խնդրագիրը պիտի տաներ ցարին: Ճանապարհին գրի մեջ, իբրեւ ծայ-

1 Այս նամակը գրելիս (1725 թ. հուլիսի 25) նրանք դեռեւս տեղյակ չէին, որ Պետրոսը վախճանվել է կես տարի առաջ՝ ն.թ. հունվարի 28-ին:

2 Նույն ժողովածուն, հ. երկրորդ, էջ 249-250:

բահեղ միջոց, ավելացրել է այդ զաղթելու թույլտվությունը եւ ստեղծել մի վիճակ, որի համար ազատության ու հայրենիքի զինվորներն իրենց նվաստացած են զգում։ Այս մասին Իվան Կարապետն է պատմել կանցլեր Գ. Ի. Գոլովկինին՝ հայտնելով նաեւ, որ սղնախականներն իրենց երկրից հեռացողը չեն, որովհետեւ պատրաստ են մինչեւ վերջին շունչը պաշտպանվելու։ *«Էսպես կռվարար խալղ, որ էստեղ կայ, ո՛չինչ դեղ չկայ,*- ավելացրել է ցարի պատվիրակը։ - *Ղզլպաշի երկրում* (այսինքն՝ պարսկահպատակ Հայաստանում) *էսօր ԺԲՌ (12 հազար) մարդ ձիով ողջ չախմախով թուֆանկ, ողջ թուրով հազիր են։ Ու առանց ձիով էլ յէնչանք, որ աստուած ա խասպար ու ողջին էլ թուֆանկ կայ։ Ամեն օր Ժ (10) թուֆանկ այ շինում ու չախմախ այ շինում։ Էստեղ բան ան գտել արջիջի, էրկաթի ու պղնձի...»*։

Այո՛, գործի էին դրել Արցախում հնուց ի վեր հայտնի հանքերը Գանձասարում, Թարքառի գույգ ափերում, երկաթ ու պղինձ էին ձուլում։ Արճճի անհուն պաշարներ ունեին հրացանների համար։ Իսկ վառոդ պատրաստում էին անտառանյութի տարբեր տեսակներից։ Եվ, այսպե՛ս, կռվող զինվորությունը զենքի ու զինամթերքի պակաս չէր զգում։

Սղնախականները շարունակեցին կռվել թուրքաց դեմ եւ հավատում էին, որ ռուսներն օգնության պիտի գան, Վրաց թագավոր Վախտանգը պիտի վերադառնա իր հայրենիքը, սատարի իրենց արդար պայքարին։ Եսայի կաթողիկոսն ու մելիքները, զորապետներն ու Ռուսաց արքունիքի բանագնացներն անդադար նամակներ էին հղում ցարին ու նրա ազդեցիկ ներկայացուցիչներին՝ խնդրելով խոստացված օգնությունն ու հովանավորությունը։ Հայ զինվորության համառությամբ ու հերոսությամբ հիացած էին ռուս բարեկամները։ 1726-ի օգոստոսին զորահրամանատար Լեւաշովը հաղորդում էր, թե թուրքերը չորս անգամ վիթխարի ուժեր են հանել հայոց ինքնապաշտպանության դեմ, բայց եւ միշտ էլ պարտվել ու ետ են շպրտվել։

1726 թ. աշնանը, նախորդ տարիների անփառունակ արշավանքներից հետո, Սարը Մուստաֆա փաշայի բանակը ծանր նստեց սղնախների առաջ։ Նրա հիմնական ուժերն ուղղված էին Մեծ սղնախի՝ Շոշի բերդի դեմ։ Ութ օր տեւած թնդանոթային կրակով թուրքերին հաջողվեց գրավել սղնախի մի մասը։ Սակայն մեծ զոհեր տալուց հետո նրանք ետ նահանջեցին եւ տեղավորվեցին Գանձակում։

Հետագա պայքարի կենտրոններ դերձան Ջրաբերդն ու Գյուլիստանը, որոնց մղած հերոսական պաշտպանությունը թուրքերին ստիպեց ձեռ քաշել Ղարաբաղի լեռնային գավառներից։

1727 թ. մայիսի 11-ին Մերձկասպիայի ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Վ. Վ. Դոլգորուկովն իր կառավարությանը հղած զեկույցում զարմացած է սղնախականների քաջությամբ եւ համարում է *«մարդկային բանականությունից վեր մի բան, որ նրանք այդքան հզոր թշնամու դեմ կարողանում են պաշտպանվել»*։ Երկու տարի անց, 1729-ի հոկտեմբերի 21-ին էլ նա պիտի զեկուցեր, որ սղնախականները ոչ միայն դիմադրում ու դիմանում են, այլեւ թուրքերի նանա-

պարհներն այնպես են փակել, որ սրանք ռուս-թուրքական պայմանագրով իրենց հպատակության տակ դրված հայկական գավառներից չեն կարողանում հարկ հավաքել, բացի Ղարաբաղից հեռու այն մի քանի գյուղերից, որոնց պաշտպանելու հնարավորություն չունեն սղնախականները[1]:

Սղնախների պայքարը շարունակվեց նաև հետագայում, չնայած Եսայի կաթողիկոսի մահվանից (1828 թ.) հետո մյուս ղեկավարները, հետագա դիմադրությունն անհուսալի համարելով, անցան Ռուսաստան, ծառայության մտան ցարի բանակում՝ հայրենի երկրի փրկության հույսը դնելով ապագա դեպքերի նպաստավոր դասավորության վրա:

Հաջորդ տարիներին սղնախական պայքարի գլխավոր օջախ էր դարձել Գյուլիստանի բերդը, որտեղից Աբրահամ զորապետի (թուրքական աղբյուներում՝ «Գյավուր Աբրահամի») քաջերը պարբերաբար հարձակվում էին թուրք ասպատակիչների վրա, ցավ ու ցրիվ անում նրանց միավորումները: Եւ Աբրահամի գլխավորած պայքարը՝ Արցախի մյուս սղնախների հետ միասին, այնքան լայն ու հզոր թափ էր ստացել, որ սուլթանն ստիպված եղավ նրա դեմ ուղղել Երեւանի ու Շաքիի խաների, Բայազետի փաշայի զորքերը եւ Դաղստանում, Շիրվանում ու Գանձակում տեղակայված իր զորամասերը:

1729 թ. ամռանը սուլթանը Շաքիի Բեկլարբեկ Ալիին հատուկ ֆարման էր ուղարկել՝ կարգադրելով իր զորքն առած միանալ Գանձակի խան Իբրահիմ փաշային, դաղըստանցիներին ու շրջակայքի տերերին, որպեսզի միասնական ուժերով շարժվեն ապըստամբ սղնախականների վրա: ***«Դուք պարտավոր եք ձեզ հետ վերցնել ձեր հոգեւորականությանը, ձեր գավակներին ու ձեր բեկերի որդիներին ու մընացած հերոսներին, որոնք ընդունակ են սրբազան պատերազմի»***,- հրամայել է սուլթանը[2]:

«Սրբազան պատերա~զմ»: Սա մահմեդական մոլեռանդների ամենակատաղի արշավն էր, որ նրանք ձեռնարկում էին ըմբոստ այլադավանների բնաջնջելու համար:

Չի կարելի կասկածել, որ սուլթանի հրահրած ***«սրբազան պատերազմը»*** տխուր վախճան է ունեցել իր զորքերի համար: Այդ պատճառով էլ նա հաջորդ տարին նոր ֆարման հղեց վերը հիշված Ալիին, Իբրահիմ փաշային եւ մյուսներին՝ նոր պատժարշավի գնալու Աբրահամ զորապետի եւ մյուս սղնախականների դեմ:

Նույն հասցեներով սուլթանական ֆարմաններ ստացվեցին նաեւ 1731 թ. գարնանը: Այս անգամ սուլթանը հիշեցնում էր, որ սղնախականները ոչ միայն տարիներ շարունակ հրաժարվում են հարկ վճարել իր կայսրությանը, այլեւ համառորեն չեն ուզում ճանաչել նրա տիրապետությունը եւ զինված ընդվզումներով վատ օրինակ են տալիս մնացած հպատակներին: Ուստի ***«շարիաթի օրենքներով հարկ է նրանց ոչնչացնել իրենց գործողությունների համար»:*** Հետաքրքիր է սուլթանի ֆար-

1 Տե՛ս նույն տեղում, էջ 297:
2 Նույն տեղում, էջ 320-321:

մանի վերջին հանձնարարությունը. *«Եթե հիշյալ գյավուրները ցանկություն կհայտնեն Գանձակի զանձատուն մուծելու իրենցից պահանջվող հարկը եւ այսուհետ խոսքով ու գործով լինելու հլու հպատակներ՝ ներկայացնելով հավատարիմ պատանդներ, ապա հարգեք նրանց խնդիրքը, հակառակ դեպքում պրշակեք նրանց դեմ, քանդեցեք նրանց բնակավայրերն ու ամրությունները եւ առհասարակ այնտեղ կատարեցեք անհրաժեշտ ավերածություններ...»*[1]:

«Անհրաժեշտ ավերածությունների» հանձնարարությունն էլ չօգնեց սուլթանի կամակատարներին, որոնք չկարողացան կոտրել սղնախականների կամքը:

Սղնախների ազատագրական պայքարի ավանդները վախճան չունեցան: Նրանք փոխանցվեցին հայ զինվորությանը եւ հետագա տասնամյակներում եղան այն դասերն ու պատվիրանները, որոնցով պետք է հայրենիքը պաշտպանվեր թուրք ու պարսիկ բռնակալների նոր հարձակումներից:

ՀԱՐԿԱԴԻՐ ՏԵՂԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԸ

Ահա այս դարի դասերից մեկը՝ մարդկային բնությանը խորթ են ամեն տեսակ ճնշումները: Զնայած ճնշումն ինքն էլ մարդկային է, այսինքն՝ գալիս է մարդուց. մարդ ճնշվում է իր նմանից: Սակայն նույնիսկ ամենաազատասեր, ամենաանհանդուրժող մարդն էլ պետք է կարողանա իրար բերել, ծանրութեթեւ անել իրեն պարտադրված ճնշման տեսակները, մանավանդ, երբ այլ հնար չկա, երբ գոնե ժամանակավորապես պետք է հանդուրժել տանելի մի տարբերակ, մինչեւ կգա նոր ընդվզումի ժամանակը, գոնե մշուշների մեջ նշմարվող ազատության հեռանկարը:

«Մահ կամ ազատություն» կարգախոսն առանձին անհատների՛ շուրթերից պետք է հնչի եւ ոչ թե ողջ ազգի: Ա՛յն անհատների, որոնք պատրաստ են իրենց կյանքը զոհաբերել՝ հաստատ համոզված, որ դա թելադրվում է ազգային գոյության պայմանից, իսկ ավելի ստույգ՝ իրենք մեռնում են, որպեսզի ապրի ազգը, որի զալոց սերունդները վայելելու են իրենց երազած ազատությունը: Այլապես ի՞նչ իմաստ ունի այն մահը, որից հետո չպետք է լինի ո՛չ համազգային կյանք, ոչ այդ մահը հիշող եւ իմաստավորող որեւէ սերունդ:

Այս մտքերն են մեզ պարուրում, երբ հիշում ենք Հայաստանի, առանձնապես Արցախական աշխարհի **XVIII** դարի առաջին երեսնամյակին հաջորդած մի քանի տասնամյակների իրականությունը:

Ռուսաստանը, որի օգնության վրա այնպես հույս էին դրել մելիքները, իր խոստումը դրժեց ամենաանակատագրական պահին, եւ հետո երկիրը մնաց թուրք ու պարսիկ բռնակալների աքցանի մեջ, եթե նկատի էլ չառնենք հյուսիսկովկասյան ասպատակիչները եւ անդրկուրյան մահմեդական խանությունները, որոնց միայն Ռուսաստանի ըս-

1 Նույն տեղում:

պառնալիքներն էին զսպում։ Իսկ հիմա Ռուսաստանը չէր էլ հիշում, որ Կովկասյան լեռնաշղթայից հարավ հավատակիցներ կան, որոնց հանդեպ ինքն ինչ-որ պարտականություն ունի եւ այն կատարելու երդում-հավատ է արել՝ անմիջապես էլ դրժելով այդ երդումը. Կոստանդնուպոլսում 1724-ի հունիսին կնքել էր ռուս-թուրքական խայտառակ պայմանագիրը, որով եթե Ռուսաստանին էին անցել Կասպից ծովի հարավային եւ արեւմտյան ափերը, ապա Թուրքիան տեր էր դարձել Վրաստանին, Հայաստանին եւ արեւելյան Այսրկովկասին՝ մինչեւ Թավրիզ[1]։ Այս պայմանագրով Օսմանյան Թուրքիան իրավունք էր ստացել իր բանակներն անարգել շարժելու դեպի արեւելք՝ ոտքի տակ տալով Վրաստանը, Հայաստանը, Պարսկաստանի ամբողջ հյուսիս-արեւմտյան մասը։ Իսկ որ ավելի ցավալին էր՝ այս պայմանագրի դրույթները համարյա անփոփոխ վերահաստատվեցին նաեւ հետագայում ստորագրված նոր համաձայնագրերով։

Էլ ի՞նչ կարող էին անել Արցախի մելիքները՝ այսքան ծավալուն եւ բարձր իրավունքներ ստացած թուրք հրոսակների դեմ։ Թվում է՝ ոչինչ։ Սակայն, բարեբախտաբար, նրանք ձեռքները չծալեցին, եւ, Ցարական արքունիքից առժամանակ երես դարձնելով, գնացին դեպի Պարսկաստան, որն էլ, իրերի հետաքրքիր բերումով, ապրում էր իր պատմության ամենահետաքրքիր շրջաններից մեկը։

Հենց այս ժամանակ էր, որ Իրանի բախտը տնօրինելու եկավ Նադիր-կուլի խանը՝ վերին աստիճանի շրջահայաց ու խորամանկ մի տիրակալ, որն իր հերթին, մինչեւ Ատրպատականի խորքերը հասած թուրքական ռազմակալությունը խորտակելու, Այսրկովկասին եւ պատմական Հայաստանի հարավային ու արեւմտյան նահանգներին տիրելու գործում չէր տեսնում առավել հուսալի որեւէ միջոց, քան հայոց քաղաքական ու զինական աջակցությունը։ Այդ աջակցությունը ձեռք բերելու համար Նադիրն արեց այնպիսի զիջողություններ, որոնցից հիացած էին հայերը, շշմած՝ շահի հավատակից գործակալները։ Նա Ամենայն Հայոց կաթողիկոսությանը վերադարձրեց հին ավատատիրական իրավունքները, ամեն տեսակ միջոցներով օգնեց վերակառուցելու եւ շքեղացնելու Էջմիածնի մայր տաճարն ու նրա օժանդակ շինությունները։ Եվ, որ վեր էր ամեն տեսակ սպասածից, վանքին նվիրեց 15 կիլոգրամանոց ոսկե մի ջահ եւ կարգադրեց Քիրմանից ամենաընտիր գորգեր բերել եւ նրանցով ծածկել Մայր աթոռի ու վեհարանի սրահները։

Նշանակալից էր այն արտոնյալ վիճակը, որ հայ մելիքներին տվեց նորընծա շահը (թագադրվել է 1736-ի գարնանամուտին, Մուղանի դաշտում, հայ մելիքների եւ Աբրահամ Կրետացի կաթողիկոսի եռանդուն մասնակցությամբ)։ Արարատյան նահանգը փաստորեն ղեկավարում էին Նադիրի հաստատած հայ մելիքները, որոնցից մեկը՝ Երեւանի մելիք Հակոբջանը, հետագայում նույնիսկ իրավունք ստացավ հիմնելու փողերանոց եւ կտրելու արծաթե ու պղնձե դրամներ։ Արարատյան երկրի մելիքների գա-

---

1 Այս պայմանագրի առկայությամբ ծիծաղելի կամ անհեթեթ են հնչում նույն տարվա (1724) նոյեմբերի 10-ին Պետրոս Մեծի ստորագրած այն հրովարտակը, որով նա հայ ժողովրդին առնում էր իր հովանավորության տակ... Զուր չէ, որ ասում են՝ քաղաքականությունն անբարոյականության ամենաայլանդակ տեսակն է։

հերեց (բալանթար) էր ճանաչվում Գեղարքունիքի ու Սոդքի տեր Մելիքջան Մելիք-Շահնազարյանցը։

Նադիր շահի հրովարտակներով մեծ իրավունքների տիրացան Սյունիքի ու Արցախի մելիքները։

Արցախի հինգ մելիքությունները Նադիրի օրոք կազմում էին ռազմաքաղաքական մի ամբողջություն եւ վճռական ուժ էին տիրակալի աչքում։ Եվ պատահական չէ, որ նա հատուկ ուշադրություն դարձրեց հենց այս մելիքությունների վրա՝ զավառապետ-մելիքական իրավունքների մեջ հաստատելով հին մելիքական տների արժանավոր ժառանգներին։ Շահն ամեն կերպ խրախուսեց նրանց միասնությունը, իրար միավորեց եւ նորակազմ դաշնակցության գերագահ-կառավարիչ բեկլարբեկ (իշխանաց իշխան) նշանակեց Դիզակի մելիք Եգանին։

Դիզակի տերն այս ժամանակ արդեն ալեզարդ եւ իմաստուն մի իշխանավոր էր, իր անունը պսակած հակաթուրքական անվեհեր սխրանքներով։ Ավանդությունն այս Եգան-Ավան մելիքին է վերագրում այն հանդուգն միջոցառումը՝ թուրքաց բանակի գիշերային ջարդը, որով շատ երկար ժամանակ օսմանցիների ոտքը կտրվեց Այսրկովկասից ու Արեւելյան Հայաստանից։

Ավանդությունն այս սխրագործության մեջ մի բացառիկ անվեհեր դեր էլ վերապահում է մելիք Եգանի քրոջ աղջիկ Գայանեին, որը Վարանդայի մելիքի դուստրն էր եւ հետո պետք է մտներ կուսանոց ու փայլեր նաեւ գրչության արվեստի մեջ։

Եվ, այսպես, Արցախը, կամ Խամսայի երկիրը, ոչնչացրել էր իր ամենաատելի թշնամուն՝ թուրքական զորքը, որ նաեւ Նադիրի թշնամին էր։ Եւ Պարսից շահն առաջնորդվեց այն իմաստությամբ, որ ասում է՝ թշնամուս թշնամին իմ բարեկամն է։ Փաստորեն այդպես էր նաեւ հայ մելիքների համար։ Նրանք գիտեին, որ ջախջախված թուրքն իրենց հանգիստ թողնողը չէ։ Ուրեմն, անհրաժեշտ էր պատրաստվել նոր արհավիրքներ դիմագրավելու։ Իսկ այս դեպքում ամուր դաշնակից էր պետք, որն այդ ժամանակներում չէր կարող լինել ուրիշ մեկը, քան իր քաղաքական ու ռազմական վերելքն ապրող Նադիրը։

Նադիրը Հայաստանի փառավորված իշխանավոր մելիք Եգանին դարձրեց իր բարեկամն ու խորհրդատուն։ Պարսիկ պատմիչն ասում է՝ շահը ծերունազարդ մելիքին կոչում էր *«բաբալար»*, որ իրենց լեզվով նշանակում է *«հայրացու»։* Ռազմի փառքով ու քաղաքական նվաճումներով դեռեւս չհոգնացած դաշար տիրակալը կարող էր իրեն թույլ տալ մի այդպիսի բարեկամություն հայ մելիքի հետ։ Եգանն էլ օգտվում էր այդ հանգամանքից՝ իր հայրենիքի շահերը պաշտպանելու համար։ Նույն պարսիկ տարեգիրը վկայում է, որ Եգանի խնդրանքով ու խորհուրդներով Նադիրը բազմիցս օգնել է հայերին, նրանց տվել արտոնություններ, որոնք անպայման կմերժեր մնացած հպատակներին։ Նադիրը հենց մելիք Եգանի խորհուրդով էր բարեկամացել Հայոց կաթողիկոսի հետ, այցելել Էջմիածին, օժանդակել նրա վերակառուցումներին, հարգանքի ցույցեր արել հայոց հավատի նկատմամբ։

Եգանի խնդրանքով՝ Նադիրն ազատ է արձակել հազարավոր հայ գերիների, որոնք հավաքվել էին Արեւելյան Հայաստանի տարբեր մասերից, Գանձակից ու շրջականներից

եւ տարազրության պիտի ֆշվեին դեպի Պարսկաստանի խորքերը։ Երբ արեւմտահայկական զավառների համար մղված ճակատամարտերում Նադիրի բանակը գերիներ էր վերցրել, նրանց մեջ կային տասնյակ հազարավոր հայեր, որոնք եւս ազատ արձակվեցին մելիք Եգանի խնդրանքով կամ նրա իսկ միջնորդությամբ գործին խառնված Էջմիածնի վեհապետի աղերսանքով։

Նադիրն ամեն կերպ ջանում էր նվաճել հայոց առաջնորդների, հատկապես մելիքների բարեկամությունն ու վստահությունը։ Նա չէր սխալվել իր հաշիվների մեջ։ Հայ մելիքներն ու ամբողջ ժողովուրդը բոլորանվեր վարձահատույց եղան շահի բարյացակամության համար եւ նրա հակաօսմանյան պատերազմներում՝ Գանձակում ու Շամքորում, հատկապես Եղվարդի դաշտում բռնկված ճակատամարտին ցույց տվին մի այնպիսի խիզախ մասնակցություն, որպիսին նա չէր տեսել իր հին ու նոր ոչ մի դաշնակցից։

Հայերի ամենաեռանդուն աջակցությամբ Արարատյան երկիրը թուրքերից մաքրելով՝ Նադիրն անցավ Շիրակ, նվաճեց նրանից հարավ ու արեւմուտք ընկած հայկական զավառները։ Տիրեց Կարինին, Երզնկային։ Թուրքիան ստիպված եղավ խաղաղության դաշինք կնքել՝ իր համար ստորացուցիչ պայմաններով։

* * *

Ժողովրդական իմաստությունն ասում է՝ բռնակալի հետ բարեկամ լինես թե օձի, միեւնույն է, վաղ կամ անագան թույն կխառնի բարեկամության հացին։

Նադիրը եթե ժանիքի տակ թույն էր պահել հայ ***«բարեկամների»*** համար, չընհասցրեց խառնել նրանց հացին։ Թուրքերի եւ Դաղստանի հետ վարած պատերազմներում մի քանի ձախողանքները բավական էին, որպեսզի նա երեւան հանի բռնակալի իր էությունը. հայ եկեղեցու վրա հարկուտուրքեր դրեց, սկսեց անսանձ պահանջներ ներկայացնել հայ մելիքներին... Սակայն նա արդեն իսկ պատուհաս էր դարձել իր սեփական երկրի, նույնիսկ մերձավորների համար։ Այդ նրա հրամանո՛վ կուրացրին իր իսկ ժառանգին՝ Ռզակուլի Միրզային... Մինչեւ որ մերձավորներն սպանեցին նրան, եւ Իրանը, այս անգամ արդեն երկար ժամանակով, ընկղմվեց միջավատական կռիվների ու անիշխանության ճահիճը։

Հայ մելիքությունները մնացին օսմանյան Թուրքիայի եւ Պարսկական կենտրոնական իշխանությունից անկախացած ու առավել սանձարձակ դարձած խաների մոլեռանդ թշնամության դեմհանդիման։

Ի՞նչ էր լինելու այս ամենի վերջը։

ՎԱՐԱՆԴԱՅԻ ՏԵՐ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՆԵՐԸ

Մեզ ծանոթ է նրանց ակունքը. վերը տեսանք, որ 1606 թ. շահ Աբաս Ա-ի հրովարտակով Վարանդայի մելիք դարձավ Սոդքի մելիք Շահնազար Ա-ի եղբայր Միրզա-բե-

կը, եւ սրանից էլ սկսվեց այս գավառի նոր մելիքության կյանքը, որ մի հետաքրքրական երեւույթ էր Արցախի պատմության մեջ, որովհետեւ Միրզա-բեկը, նրա որդի Բաղր- խանը (մելիք Բաղի), Շահնազար Ա-ը, մելիք Բաղի Բ-ը, սրա եղբայր մելիք Հուսեյնը եւ ուրիշներ աչքի էին ընկնում իրենց հայրենանվեր գործունեությամբ, ազգային ա- վանդների պաշտպանությամբ ու եկեղեցանպաստ գործերով: Սակայն XVIII դարի կեսին, հայրենասեր ու հզոր մելիք Հուսեյնի մահից հետո տեղի ունեցավ լեռնաշխար- հի ավանդները խախտող մի դիպված, որն էլ ողբերգորեն ճակատագրական եղավ այդ աշխարհի համար:

Մելիք Հուսեյնը մահացավ 1736 թվականին, եւ օրինական կարգով հոր աթոռն զբաղեցրեց ավագ որդի Հովսեփը, որը, գուցե եւ ոչ այնքան քաջ ու նախաձեռնող, բայց գրասեր ու բարեկիրթ մարդ էր եւ ավելի շատ հոգ էր տանում գավառի հոգեւոր կյանքի զարգացման համար: Սակայն Հովսեփի կողքին կար եւ կրտսեր մելիքազուն՝ Շահնազար անունով, որը հավակնոտ ու չար մեկն էր եւ զազազած էր այն փաստից, որ մի *«անիմաստ»* օրենքով մելիքական աթոռն զբաղեցնում էր ոչ թե ինքը, այլ Հովսեփը: Եվ զիշերով, մի խումբ դավադիրների հետ միասին, հարձակվեց մելիք եղբոր տան վրա, սպանեց նրան, ոչնչացրեց ընտանիքը, տիրացավ մելիքությանը[1]:

Այս քստմնելի ոճրագործությունը Շահնազարի դեմ հանեց խամսայի մյուս չորս մելիքներին, որովհետեւ, նախ, կատարվածը մի հրեշավոր սրբապղծություն էր, որ չէր կարող անպատիժ մնալ լեռնաստանի ուխտապահ տերերի կողմից, ապա Հովսեփը փեսան էր խաչենի Հասան-Ջալալյանների համբավավոր տան, եղեռնագործությունից փրկված նրա մի որդուն փախցրել էին խաչեն, եւ սա էլ պետք է փոխարիներ հորը: Ուրեմն, կար եւ վրեժխնդրության պարագան, որի շահագրգիռ կողմն էին մեծ հեղինակության տեր Հասան-Ջալալյանները:

Սկսվեց անհաշտ ու անզիջում կռիվ, որի մի կողմ ուխտադրուժ Շահնազարն էր՝ տիրացած Ավետարանոցի մելիքական ապարանքին ու հինավուրց բերդին, մյուս կողմը՝ չորս ուխտապահ ու արդար մելիքներ՝ Գյուլիստանի մելիք Հովսեփը, Ջրաբերդի Ալահ-ղուլի Սուլթանը, Դիզակի մելիք Եսային՝ խաչենի մելիք Ալահվերդի Հասան-Ջալալյանի գլխավորությամբ: Վերջիններս հարձակվեցին Ավետարանոցի վրա, բերդը պաշարեցին, պարբերական հարձակումներով ավերեցին հարեւան գյուղերը: Սակայն վրա հասավ ձմեռը, եւ ուխտապահ մելիքները դարձան իրենց տները՝ որոշած լինելով գարնանը մի նոր ու մեծ հարձակմամբ վերջնականապես պատժել ուխտադրուժ մելիք Շահնազարին:

---

1 Ռաֆֆին Շահնազարի քստմնելի չարագործության պատճառ է համարում ոչ միայն բարձր դիրքի հիվանդոտ տենչը, այլեւ նրա ծագումը. մելիք Հովսեփը եւ Շահնազարը խորթ եղբայրներ էին,- պատմում է Ռաֆֆին.- Հովսեփը ծնվել էր մելիք Հուսեյնի Անանախաթուն կնոջից, որը Դիզակի տեր մելիք Ավանի քույրն էր, իսկ Շահնազարը ծնվել էր Նախիջեւանի խանի դուստր Զոհրա-խանումից, որին նա Նախիջեւանից բերել էր իբրեւ գերի, ապա հետն ամուսնացել: Ռաֆֆին այս թրքական արյան խառնուրդով էլ բացատրում էր մելիք Շահնազարի եղկելի վարքը:

Եվ այս եղբայրասպան գժտությունը պատճառ դարձավ, որպեսզի Արցախ-Ղարաբաղ թափանցի օտար ու սեւ մի ուժ։

Բանն այն էր, որ նախընթաց տասնամյակներին Ղարաբաղի արեւելյան սահմաններում հայտնվել էր Ֆոչվոր թուրք սարըջալու ցեղի մի վտառ՝ ցեղապետ Ֆանահի գլխավորությամբ։ Ֆանահը որոշել էր դառնալ նստակեցության եւ ձեռք ձգել Ղարաբաղի դաշտային մասը։ Նա սկզբում բերդ էր կառուցել Կուրի առափնյա տափարակի Բայաթ վայրում։ Սակայն բաց տարածության մեջ հապշտապ կառուցված բերդը չդիմացավ այլացեղ Ֆոչվորների հարձակումներին, եւ սարըջալուների առաջնորդն իր հաջորդ կացարան դարձրեց Արցախի հյուսիս-արեւելքում գտնվող հին Տիգրանակերտի ավերակները (այժմյան Աղդամից մի 8-10 կիլոմետր դեպի հյուսիս-արեւելք, Շահբուլաղ վայրում)։ Այս հարեւանությունից ոչինչ դրական բան չսպասելով՝ Խաչենի, Զրաբերդի ու Գյուլիստանի մելիքները հարձակվեցին Ֆանահի վրա, նրան քշեցին դեպի արեւելյան տափարակները։

Ապօրինի մելիք Շահնազարը գիտեր Ֆանահի տեղը եւ զարնանամուտին դաշնակցեց նրա հետ, պաշտպանության պատրաստվեց թշնամացած չորս մելիքների դեմ, որոնց վրիժառությունից փրկություն չէր ունենալու։ Սակայն այս դաշնությունն օտար տարրի հետ՝ հայրենի եզերքի շահերի ոտնահարումը, մի ուրիշ ընթացքի մեջ մտավ, երբ հետո էլ Շահնազարը Ֆանահին տարավ, ցույց տվեց իր զավառի հինավուրց ու համբավավոր ամրոցը՝ Բերդաքար-Շոշի բերդը, այն նվիրեց նրան, ապա եւ օգնեց, որ Ֆոչվորը այն վերակառուցի, ավելի ամրացնի, դարձնի իր նստավայրը։

Եվ, այսպիսով, թուրք-սարըջալու Ֆանահը բնավորվեց Շոշի բերդում։ Դա առաջին ո՛չ հայն էր, որ բնակություն էր հաստատում Արցախական աշխարհում։

Սրանով արդեն Արցախի հազարամյա անաղարտ-հայկական միջավայրը ճեղք էր տալիս՝ իր ներսն ընդունելով օտար-թշնամական մի մարմին, որն ահավոր չարիք պիտի դառնար ոչ միայն մելիքության, այլեւ երկրամասի բնիկ տեր հայության ճակատագրի համար։

Սղնախական պայքարի ժամանակներից հայտնի, իսկ նրանից առաջ էլ Արցախի ինքնապաշտպանության համար այնքան մեծ դեր խաղացած Քարագլուխ-Շոշի բերդը պիտի սկսեր իր նոր կյանքը՝ միանգամայն խորթ ու հակառակ նախորդին։ Վերակառուցումը կատարվեց 1752-54 թվականներին։ Ուրեմն, Ֆանահը սրանից հետո՛ հիմնավորվեց այնտեղ, ներս բերեց իր ցեղակիցներին, տաճացրեց իր *«կացարանը»* եւ Շահնազարի զորակցությամբ սկսեց հայ մելիքների դեմ ծրագրած խարդավանքները։

Այսքանից հետո այլեւս դադար չպետք է ունենար պատերազմը, ասպատակություններից ու նենգ դավերից փրկություն չպիտի լիներ չորս մելիքների համար։

Շուտով Ֆանահը Պարսից շահի հրովարտակով խանի իրավունք էլ ստացավ եւ ստիպեց, որ հայ մելիքներն ընդունեն այդ իրավունքն ու իր գերագահությունը, ենթարկվեն իբրեւ շահի կուսակալի։

Պետք է նկատի ունենալ, որ Խամսայի ճեղք տալով, մանավանդ, որ նրանից բաժանվել էր կենտրոնական եւ համեմատաբար խոշոր մելիքությունը, եւ ապա նրանով, որ արդեն թշնամացած այս մելիքության տարածքը նաեւ կտրում էր Դիզակը մյուս

երեքից, ստեղծվեց մի դրություն, երբ մահմեդական հարեւանները, մանավանդ օսմանյան թուրքերի հրահրումով ու աջակցությամբ, հեշտությամբ կարող էին տիրել Արցախին, կամ, համենայն դեպս, պարբերական արշավանքներով այնպես քայքայել, որ այն այլեւս չկարողանա ոտքի կանգնել, պաշտպանել իր վաղեմի ինքնուրույնությունը:

Կարճ ժամանակում Ֆանահը բավական հզորացավ. արդեն դրամ էր կտրում, Շուշի բերդը հայտարարել էր Ֆանահաբադ եւ նույնիսկ հարեւան ցեղակից խաներին ըստիպում էր ճանաչել իր գերագահությունը: Սակայն սատկեց 1762 թ., այսինքն՝ Շուշի բերդի վերակառուցումից (1752-54 թթ.) ութ տարի անց[1], եւ Պարսից շահը խանի աթոռին բազմեցրեց նրա ավագ որդի Իբրահիմ խալիլին:

Ի ցավ Արցախական աշխարհի, Իբահիմը հոր պես ուժեղ ու խորամանկ մեկն էր եւ զահակալության մի քանի տասնամյակը ծառայեցրեց հայ մելիքների միությունը խորտակելու, Արցախ-Ղարաբաղում իր միահեծան տիրապետությունն ստեղծելու նպատակին: Նա միշտ կարողանում էր գտնել իր համար ամենանպաստավոր լուծումները բոլոր այն հարցերի, որոնք առաջանում էին օսմանյան թուրքերի ու Պարսկաստանի՝ Այսրկովկասում տիրական մրցակցությունից ու բախումներից, իսկ վերջում էլ՝ այստեղ հայտնված եւ այլեւս չհեռանալու ծրագրեր մշակած Ռուսական կայսրության քաղաքականությունից:

Շուշիի խանության փաստական հեղինակ մելիք Շահնազարն ապրեց երկար, որպեսզի տեսնի իր չարագործության արդյունքները մինչեւ վերջ: 1792 թ. գերեզման իջավ՝ թողնելով խամսայի վաղեմի հզոր ամբողջությունը քայքայված, Իբրահիմ խանի ու նրա ցեղակիցների վայրագությունների պատճառով Արցախը դժոխք դարձած նրա բնիկ տեր հայության համար:

Շահնազարն իր դստերից մեկին կնության էր տվել Իբրահիմ խանին, ինքն էլ իր տանը պահում էր երեք կին, որոնցից մեկը՝ թրքուհի: Կյանքի վերջում իբր թե քավել էր մեղքերը. դիզած անհուն հարստությունից բաժին էր հանել հայ չքավորներին, վերակառուցել էր Ամարասի վանքը: Սակայն վերջին այս բարեպաշտությունն անգամ պիտի ծառայեր չարին, որովհետեւ վերակառուցած Ամարասում նստեցրել էր Իբրահիմ խանին ծառայող եւ Արցախի եկեղեցու երկփեղկումը խորացնող Իսրայել կաթողիկոսին:

Մի խոսքով՝ չարն էլ վերջ ունեցավ, սակայն, դժբախտաբար, խարդավալից կյանքը լրումին հասցնելուց հետո... Եվ այդ ամբողջ կյանքում եղած միակ բարեհիշատակ բանը, որ մինչեւ այսօր էլ հիշում է արցախահայությունը, այն է, որ Շահնազարի պալատում երկար տարիներ ապրել է ծաղրածու, սրամիտ եւ անողոք արդարախոս մի մարդ՝ Պլլը-Պուղին (խենթ-Պողոս): Ժողովրդի հիշողության մեջ են Պուղու ան-

---

1 Ֆանահ-խանը, հավանաբար, այդպես էլ օտար ու չհարմարվող մարմին մնաց Արցախում կամ գոնե նրա այն մասում, ուր հայոց շունչն էր տիրական: Այդ է պատճառը, որ նրան տարան-թաղեցին Աղդամ քոչվորական բնակավայրի մոտ: Հետագայում նրա գերեզմանի վրա կառուցեցին դամբարան, որն այժմ էլ պահպանվում է:

համար սրամտությունները, զավեշտական պատմություններն ու խրատները, որոնցում շողշողում է ժողովրդական իմաստությունը, ծաղրվում են մելիք Շահնազարի ու Շուշվա խաների չարությունը, շահամոլությունը, խարդավանքները, ինչպես նաեւ հայ մելիքության եւ նրա հպատակ ժողովրդի ազնիվ, անշահախնդիր ծառայությունը հայրենիքին, ազգին, մարդկայնությանը:

ՄԵԼԻՔՆԵՐԻ ՊԱՅՔԱՐՆ ԻԲՐԱՀԻՄ ԽԱՆԻ ԴԵՄ: ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌՈՒՍԱՑ ԱՐՔՈՒՆԻՔԸ

Շոշի բերդ-Շուշիի խան Իբրահիմի երկարատեւ տիրապետությունը լեռնաստանի հայության հազարամյա կյանքի երեւի թե ամենածանր շրջանն էր կազմում:

Եթե հայը բռնավորը խամսայի բնիկ տերերից պահանջում էր միայն հպատակություն, ապա որդին այլեւս չէր հանդուրժում հպատակների հավատը: Այդ նրա արյունոտ միջոցառումների հետեւանքով էր, որ Դիզակի մելիքանիստ Տողի հայերի մի մասը, նույնիսկ հզոր մելիք Եզանի ժառանգներից շատերը, 1780-ական թվականներին բռնությամբ դարձան մահմեդականության: Շոշի բերդի հարավային եզրին, Կարկառի ձորի պոնկին կառուցվեց մի ահարկու բանտ, որի մութ պարունակներում մահ գտան խամսայի մելիքական տոհմերի ներկայացուցիչներից ու հոգեւոր առաջնորդներից շատերը, ժողովրդական հերոս շատ վրիժառուներ, լեռնաստանի օրինական տերերը: Բավական է խանը կասկածեր մեկի հավատարմությանը, բարեկամության երդումով իր մոտ էր հրավիրում եւ կամ իր գործակալների ձեռքով ճանապարհին էր հետքը կորցնում, կամ բանտ էր նետում, նրա կայքը վաճառում իր ցեղակիցներին:

Ջրաբերդի մելիքության գահին բազմած էր ժողովրդական հերոս եւ հակաթուրքական կռիվների հաղթող Ալլահ-ղուլին՝ Նադիրի կողմից պսակված *սուլթան* պատվանունով: Իբրահիմը դավով, մանավանդ մելիք Շահնազարի սադրանքներով, կալանավորել եւ նետել էր իր բանտը, չարաչար մահով վերջ տվեց կյանքին: Այս նահատակությանն էլ պիտի հետեւեր Իբրահիմի չարագործությունը նրա եղբոր՝ մելիք Հաթամի նկատմամբ: Հաթամին միացել էր Գյուլիստանի մելիք Հովսեփը, եւ երկուսով քանի՞ հաջող մարտեր տվին խանի ու նրա սեւ ստվերը դարձած մելիք Շահնազարի դեմ: Սակայն վերջ ի վերջո Հաթամն ու Հովսեփն ստիպված եղան լքել Արցախը, աստանդական դառնալ՝ հետները տանելով հպատակ գյուղացիության մեծ մասին:

Այնուհետեւ աստանդական մելիք Հաթամն ու մելիք Հովսեփը մեծ պատուհաս էին Շուշիի խանի համար: Միացած նրա թշնամի Գանձակի խանի հետ՝ քանի՞-քանի անգամ պաշարեցին Շուշի բերդը, Իբրահիմի ճանապարհները կտրած՝ լեռնային հեղեղի պես իջան նրա զորքի ու տնտեսական գումակների վրա, պատճառեցին մեծ վնասներ եւ կտրեցին նրա կապերն արտաքին աշխարհի հետ:

Վրիժառուների պայքարը խրախուսում էր նաեւ Վրաց թագավորը, որն էլ ի՛ր հաշիվներն ուներ Շուշի բերդի անօրեն տիրոջ հետ: Մինչեւ Փանահի խան դառնալը նա էր Այսրկովկասի ամենաազդեցիկ իշխանավորը, իսկ Հայաստանի ու Վրաստանի

տնօրինությունը նրան էր տրվում, հենց որ Պարսից շահը գլուխ էր թափում իր երկրի ներքին խժդժություններից եւ հիշում էր, իբր թե, ավանդական իր տիրակալության իրավունքը Հայաստանի ու Վրաստանի վրա։ Բայց, ահա՛, շահից խանի ու կուսակալի անսահմանափակ լիազորություններ ստացած Իբրահիմը փորձում էր ոտք ձգել Վրաց թագավորի հետ, դարձել էր նա մրցակիցն ու ազդեցության ոլորտների տիրոջ հավակնորդը։

Իբրահիմ խանին ձեռնտու չէր, որ Խամսայի երկու բաջ մելիքները մնային իր թշնամիների թեւում, եւ նա բանագնացներ ուղարկեց մելիք Հովսեփի ու մելիք Հաթամի մոտ՝ երդում-հավատի ցույցերով նրանց հաղորդելու, որ կարող են վերադառնալ իրենց գավառները, ուր տեր կմնան ավանդական տիրույթներին եւ կլինեն խանի բարեկամներն ու հովանավորյալները։

Ջրաբերդի ու Գյուլիստանի մելիքները հավատացին Իբրահիմ խանի հավաստիացումներին եւ վերադարձան։ Սակայն դա բոլորովին ձեռնտու չէր Գանձակի Շահվերդի խանին, որը պիտի զրկվեր երկու մելիքների բաջավարժ զորախմբերի ուժից։ Մանավանդ, երբ խանը համոզված էր, թե իրենից հեռանալով՝ այդ ուժը պիտի զումարվի իր թշնամու՝ Շուշի բերդի տիրոջ զորությանը։

Վերադարձը տեղի ունեցավ 1760-ական թվականների վերջին։ Եվ նույնքան արյունահեղ մարտերով, որքան տարազրության գնալիս։ Գրավոր աղբյուրներում պահպանվել են երկու մելիքների հայրենադարձումի մանրամասները։ Ճիշտ է, մելիք Հովսեփի եւ մելիք Հաթամի վերադարձն առերես բարեկամությամբ ընդունեց Իբրահիմը, եւ առժամանակ խաղաղություն էր տիրում մելիքների ու հարեւան մահմեդական իշխողի միջեւ։ Սակայն դա վտանգալից այն խաղաղությունն էր, որի ներքո իր նոր խարդավանքներն էր մտմտում Շուշի բերդի դաժան տիրակալը։

Եվ մելիքները հուսավառ իրենց հայացքները դարձրին վերստին դեպի հյուսիսի քրիստոնյա մեծ տերությունը։

Բարեբախտություն էր, որ այս ժամանակ նրանց գաղափարական առաջնորդը դարձավ Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանը։ 1763 թ. բազմելով նվիրապետական աթոռին, հինավուրց իշխանական-կաթողիկոսական տոհմի այս գործունյա ժառանգն ամեն կերպ ջանում էր վերականգնել Խամսայի ամբողջությունը։ Գործակցել էր Արցախում հայտնված Հովսեփ Էմինի հետ, նամակագրական սերտ կապերի մեջ մտել հնդկահայ ազատագրական խմբակի եւ Ռուսաստանում հայ ժողովրդի ազատագրության խնդրով զբաղվող հայ ու ռուս գործիչների հետ։ Նրա նախաձեռնությամբ Խամսայի ու Զանգեզուրի մելիքները պարբերաբար հավաքվում էին, քննում իրենց անելիքները, նամակներ հղում Ռուսաստանի արքունիք, եռանդուն բանագնացություններով նորից բորբոքում ցարի ու նրա գործակալների ուշադրությունը հայոց ազատագրության հանդեպ։

Գանձասարը վերստին ստանձնել էր շարժման մշտաբորբոք օջախի իր դերը, եւ այնտեղից Ռուսական արքունիք ձգված ուղին դարձյալ այնքան բանուկ էր, որ այն օրերի փաստաթղթերին ծանոթանալիս թվում է, թե վերացել էր հազարավոր մղոնների հեռավորությունը, եւ Ռուսաց արքունիքն ու Ղարաբաղի լեռնաստանն իրար հետ նրս-

տել են մի գործնական, համերաշխ ու համաշահ զրույցի, որի արդյունքն ահա շուտով պիտի ճառագի այս լեռնաշխարհի վրա՝ իբրեւ ազատագրության այգալույս։ Տեսեք, ի՞նչ արագությամբ ու վճռականությամբ են ծավալվում գործերը։ 1783 թ. հունվարի 2-ին կաթողիկոս Հովհաննեսը Գանձասարից թուղթ է հղել Եկատերինա Բ-ին՝ պատմելով, որ Ղարաբաղի կամ Խամսայի հինգ մելիքություններն իրենց գլխավորներով՝ մելիքներով, հարյուրապետներով, հոգեւոր առաջնորդներով ու ողջ բնակչությամբ՝ ավելի քան երեսուն հազար ընտանիք, խոնարհաբար հայտնում են իրենց հպատակությունը Ռուսական պետությանը եւ երազելով երազում են այն օրը, երբ ռուս զորքը պիտի հաղթական արշավանք սկսի դեպի հարավային երկրները, պիտի օգնի հայ ժողովրդին եւ նրա հարեւաններին՝ ազատագրվելու նվաճողների անտանելի լծից։

Գանձասարի նվիրապետը թագուհուն հիշեցնում է նաեւ նրա նախնիների՝ Պետրոս Մեծի եւ Եկատերինա Ա Ալեքսեեւնայի տված խոստումներն ու ստանձնած պարտավորությունները 1720-ական թվականների երանելի դեպքերի առթիվ, հույս է հայտնում, թե ոչինչ չպետք է փոխված լինի արքունիքի քաղաքականության մեջ՝ հայ ժողովրդի փրկության գործի վերաբերյալ, իսկ ինքը՝ հայությունը, առաջվա պես պատրաստ է ապրելու եւ կռվելու Ռուսական տերության հովանու ներքո, սերնդե սերունդ, հավիտյանս հավիտենից ծառայելու նրա ծաղկման ու բարգավաճման շահերին[1]։

Հայոց երկրից գնացած գրությունները ցարին կամ արքունի գործիչներին էին հասնում Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանի եւ խոշոր վաճառական-արդյունաբեռող իշխան Հովհաննես Լազարյանի միջոցով։ Հավանաբար այս երկուսը, ինչպես ուրիշ անգամներ, այստեղ էլ Գանձասարի կաթողիկոսին հասկացրել էին անմիջապես, որ Ռուսական արքունիքում բոլոր խնդիրները լուծվում են թագուհու սիրեկան իշխան Գրիգորի Պոտյոմկինի անմիջական մասնակցությամբ, իսկ հարավի երկրների հետ կապված հարցերը՝ հենց նրա՛ ձեռքով, ուստի անհրաժեշտ է, որ հայոց թղթերը գրվեն նաեւ նրա հասցեով կամ թերեւս միայն նրա՛ հասցեով։ Կարեւոր է, որ իշխան Պոտյոմկինի հետ հիշյալ երկու նշանավոր հայերն ունեին նաեւ սերտ բարեկամություն եւ հաճախ էին ունենում շփումներ, որոնց առանցքում միշտ էլ լինում էր հայոց հարցը՝ կապված ռուսաց՝ դեպի հարավ կատարելիք արշավանքի հետ։ Նրանք հայտնում էին նաեւ, որ հարավային այդ աշավանքն էլ գլխավորելու է Գրիգորի Պոտյոմկինի ազգական գեներալ Պավել Պոտյոմկինը, որը հենց նոր նշանակվել էր Հյուսիսային Կովկասի կառավարիչ եւ զորքերի հրամանատար։

Գրիգորի Պոտյոմկինը, իբրեւ ժամանակի Ռուսաստանի պետական խոշորագույն ու ամենահզոր գործիչը կայսրուհուց հետո, մտածում էր իր երկրի հարավային սահմաններն ընդլայնելու մասին եւ ժամանակն էլ համարում էր ամենահարմարը մի այդպիսի խիզախ ձեռնարկումի համար, քանի որ Իրանի պետական մեքենան խարխլված էր հիմնովին՝ անընդունակ վճռական դիմադրության, իսկ Օսմանյան Թուրքիան ու-

1 Տե՛ս "Армяно-русские отношения в XVIII веке", т. IV, Е., 1990, стр. 209-210.

ներ իր ներքին ու արտաքին մաշող հոգսերը, եւ, որ շատ կարեւոր է, Այսրկովկասում նրա տիրապետության դեմ անգիջում պայքարի մեջ էին քրիստոնեական երկու ժողովուրդները՝ վրացիներն ու հայերը, որոնց ռուսական կողմնորոշումը վաղուց հայտնի էր աշխարհին։

Իշխան Պոտյոմկինն անձամբ չէր կարող ռուսական բանակներն առաջնորդել դեպի հարավ։ Բայց հարկ էր, որ այդ արշավանքը գլխավորի իր ամենավստահելի մի բարեկամը, որպիսին ճանաչված էր նրա ազգական գեներալ-պորուչիկ Պավել Սերգեեւիչ Պոտյոմկինը։

Վերջինս մի ձեռներեց զինվորական էր եւ փորձված քաղաքագետ։ Իր հովանավոր-բարեկամի պես նա էլ սերտ կապերի մեջ էր ռուսական ղեկավար շրջաններում բարձր համբավ ու համարում ունեցող հայերի եւ հատկապես Հովսեփ Արղությանի ու Հովհաննես Լազարյանի հետ։ Վերջիններիս հաղորդած տվյալների հիման վրա ծանոթանալով Այսրկովկասի վիճակին եւ կայուն կապ ստեղծելով այնտեղ իրեն հենարաններ հանդիսանալիք հայ մելիքների հետ՝ գեներալը, ոչ առանց Արղությանի ու Լազարյանի օգնության, գործի մեջ քաշեց հայ ուրիշ եռանդուն գործիչների եւս, որոնք պետք է ապահովեին իր ամենօրյա կապը Ղարաբաղի մելիքների եւ Գանձասարի ու Էջմիածնի կաթողիկոսների հետ։ Այդ եռանդուններից էին երկու ռուսահպատակ հայեր, որոնք ռուսական փաստաթղթերում կոչվում են Գաբրիել Կարախանով եւ Մկրտիչ Գեկազով։

Այսպիսով, սկսվեց քաղաքական ու դիվանագիտական կապերի մի խիտ ու աշխույժ ցանց, որի ծայրերը գտնվում էին Պետերբուրգում (Եկատերինա կայսրուհու արքունիքը), Սեւ ծովի ափի չքնաղ Խերսոն վայրում (իշխան Գրիգորի Պոտյոմկինի ապարանքը, ուր համարյա միշտ լինում էր նրա բարձրապատիվ տերը), Կասպից ծովի հյուսիսային ափին (Գեորգիեւսկ բերդը՝ գեներալ Պ. Ս. Պոտյոմկինի զորակայանը), ուսկից ծրագրվում էր Այսրկովկասի նվաճման արշավանքը, եւ Գանձասարի վանքում, ուր այդ ժամանակ դեռեւս կենտրոնացած էին մնում Ղարաբաղի եւ հարակից հայկական շրջանների հոգեւոր նվիրապետությունն ու աշխարհիկ իշխանության բեկորները։

Ասես ամեն ինչ դասավորվում էր հայոց ազատագրության շահերին համապատասխան։

Եվ, ահա՛, 1783 թ. մարտի 5-ին Ղարաբաղի մելիքներն ու հոգեւոր առաջնորդները վերստին հավաքվում են Գանձասար՝ գրելու հավատարմության ու պատրաստակամության նոր թուղթ՝ ուղղված ինչպես Պոտյոմկինին, այնպես էլ նրա ազգական զորավարին։ Այս թուղթը գրված է Գանձասարի կաթողիկոսության (իմա՝ նրա հովանու տակ գտնվող բոլոր թեմերի) եւ Ղարաբաղի հինգ մելիքությունների անունից։ Թուղթն ստորագրել են կաթողիկոս Հովհաննեսը, արքեպիսկոպոս Մելիքսեդեկը, եպիսկոպոսներ Եսային, Գրիգորը, Հովհանը, Հակոբը, Եղիազարն ու Իսրայելը, աշխարհիկ ղեկավարներից՝ Ջրաբերդի տեր մելիք Հաթամ Իսրայելյանը (որդի Իսրայելի), Գյուլիստանի մելիք Աբով Հովսեփյանը, Դանիել Մելիքբեկյանը, Գաբրիել Ջալալյանը եւ մելիք Իսրայելբեկյանը։

Ի՞նչ էր կազմում այդ շատ կարեւոր նամակի բովանդակությունը։ Նախ հավաստիացումներ ռուսների հանդեպ հայ ժողովրդի հավատարմության եւ զինակցելու անհուն պատրաստակամության։ Ապա հայտնվում էր, որ գեներալի ու Հովսեփ Արղությանի կողմից եկած լրաբեր հոգեւորական Գաբրիելը հաղորդել է ամեն ինչ, հատկապես այն հարցերը, որոնք մտահոգում են ռուսական հրամանատարությանը։ Եվ իրենք պատասխանում են՝ հայտնելով, որ Ղարաբաղի հայությունը պատրաստ է ընդունելու, ամեն տեսակ սննդով ու ձիերի կերով ապահովելու փրկարար զորքին, որքան էլ այն լինի մեծաքանակ։ Դա կարվի առանց որեւէ դժվարության, քանի որ,- զեկուցում են նամակի հեղինակները,- երբ Նադիր շահն էր արշավել Այսրկովկաս՝ թուրքերին այնտեղից վռնդելու համար, նրա երեքհարյուրհազարանոց բանակն ամբողջ երեք տարի պարենավորվում էր բացառապես Ղարաբաղի հաշվին։ Պերճախոս տեղեկություններ են հաղորդվում երկրամասի գյուղատնտեսական մթերքների առատության, բնական բազմատեսակ անսպառ հարստությունների մասին, հարեւան մահմեդական վարչական կազմավորումների ուժի ու կարողության եւ Իրանի ողորմելի վիճակի մասին։ Նրանք հանգամանորեն պատմում են նաեւ Շուշվա խան Իբրահիմի ապօրինությունները, հարեւան խանությունների գործակցությամբ նրա կողմից նախապատրաստվող հակառուսական մեքենայությունները։ Այսքանից հետո պաղատագին խնդրում են չուշացնել խոստացած արշավանքը[1]։

Այս նամակը գեներալ-պորուչիկ Պավել Պոտյոմկինին է հասել նույն թվականի ապրիլի 6-ին, այսինքն՝ գրվելու օրից ուղիղ մեկ ամիս հետո։ Ըստ երեւույթին, մոտավորապես նույն ժամանակ, զուցե եւ ավելի վաղ, թուղթը հասել էր նաեւ իշխան Գրիգորի Պոտյոմկինին, որովհետեւ վերջինս ապրիլի 6-ին հատուկ հրամանով գեներալին տվեց հետեւյալ հանձնարարությունը. ***«Շուշվա խան Իբրահիմին պետք է տարպալել, քանի որ սրանից հետո Ղարաբաղը պետք է կազմի հայկական անկախ, Ռուսաստանից բացի ոչ ոքի*** [չենթարկվող] ***մարզ։ Դուք այնտեղ գործադրեցե՛ք ամբողջ ձգտումը, որպեսզի այս նոր մարզը կազմակերպվի ժողովրդի համար ամենաձեռնտու ձեւով։ Սրա միջոցով է, որ հայկական մնացած ուժեղ նահանգներն էլ կամ կհետեւեն նրա օրինակին, կամ մեծ թվով կգան Ղարաբաղ»***[2]։ Հրամանի մեջ կարեւորագույն այս հանձնարարությանը հետեւում են գեներալի տրամադրության տակ դրվող ցամաքային ու ծովային զինական ուժերի ու սպառազինության մասին հանգամանալից տեղեկություններ եւ ընտրությունն այն ուղերթի, որը ռուսական զորքին առաջին անգամ պետք է հասցներ Ղարաբաղ։ ***«Դրա համար,***- կարգադրում է իշխանը,- ***նախ անհրաժեշտ է նվաճել Դերբենդը։ Այս եղանակով դուք կմոտենաք Ղարաբաղին»***։

Նույն այս հարցի կապակցությամբ Գրիգորի Պոտյոմկինը գրավոր տեղեկացնում էր նաեւ կայսրուհի Եկատերինային՝ հաղորդելով իր ազգականին գրած նամակի բո-

1 Նույն տեղում, էջ 225-227։
2 Նույն տեղում, էջ 239։

վանդակությունը եւ վերջինիցս կատարելիք կարեւոր հետեւությունը. Ղարաբաղում կազմակերպվելիք պետության գլուխ կանգնած կլինի մելիքներից մեկը, որի ջանքերով հայկական մյուս նահանգներն էլ կազատագրվեն, կմիանան այդ իշխանությանը: Ուրիշ խոսքով՝ Ղարաբաղը կդառնա ապագա հայկական պետության կորիզը: *«Այսպիսով,*- Եկատերինա թագուհուն գրում էր Գրիգորի Պոտյոմկինը,- *Ասիայում կվերականգնվի մի քրիստոնեական պետություն՝ համաձայն ձեր կայսերական մեծության խոստումների, որոնք իմ միջոցով հաղորդված են հայոց մելիքներին»*[1]:

Չի կարելի միամտություն ունենալ կարծելու, թե ռուսական արքունիքը Կովկասյան լեռնաշղթայից հարավ իջնելու իր պլանները գծելիս հենց միայն բարեգործական նպատակներ էր հետապնդում եւ իր առաջ սոսկ խնդիր էր դրել փրկելու դարերով տառապած, մահմեդական հարեւանների անլուր բռնություններին ենթակա մի ժողովրդի, որպիսին հայությունն էր: Ցարական պետությունը վաղուց ի վեր ցանկություն ուներ տիրելու Կասպից ծովի հարավային ու արեւմտյան ափերին, Կովկասին ու Այսրկովկասին: Ծրագիրն իրականացնելու համար նրան վստահելի հենարաններ ու օգնական ուժեր էին պետք, ինչպիսիք էին Վրաց թագավորությունն ու հայկական մարզերը՝ տասնամյակներ շարունակ Մոսկվայի ու Պետերբուրգի տիրակալներին իրենց օժանդակությունն ու հավատարմությունը հավաստող երկու ժողովուրդներով:

Ղարաբաղը հայկական միակ մարզն էր, որ դեռեւս պահպանում էր իր վաղեմի բաղաքական իշխանության առողջ բեկորները եւ խոստանում էր ոչ միայն հավատարմություն եւ անդավանան օգնություն ապագայում, այլեւ Այսրկովկաս ոտք դնող ռուսական զորքին ապահովելու էր պարենով ու իր ռազմական աջակցությամբ: Կան ռուսական առաջխաղացման նախօրեին Գրիգորի Պոտյոմկինի՝ Հովսեփ Արղությանին ներկայացրած հարցացուցակի մանրամասները, որոնցում գլխավոր տեղ էր բռնում պարենը, որը, ռուսական բաղաքականության ամենաազդեցիկ պաշտոնյայի կարծիքով, ամեն ինչի հիմքն է. *«Ուր որ զորքը կուշտ է, այնտեղ նա գործունյա է: Վա՜յ այն զորավարին, որն իր զորքերը կերակրելու մասին չի մտածում»*: Ղարաբաղի տերերը խոստանում էին *«մինչեւ երեսուն հազար մարդ պահել 25-30 տարի* **(այսինքն՝ որքան անհրաժեշտ լինի ռուսական տիրապետությունն Այսրկովկասում հաստատուն դարձնելու համար. - Բ. Ու.)՝** *առանց որեւէ պարկաության...»*: Եվ սա դատարկ խոստում չէր: Արքունիքի գործակալները բանիցս ստուգել էին տեղում ու համոզվել, որ ղարաբաղցիների խոստումները համապատասխանում են ունեցած հնարավորություններին:

Եվ այսպե՛ս. ցարական Ռուսաստանի ու հայ ժողովրդի շահերը համընկնում էին, եւ ոչինչ չէր խանգարում երկու կողմերի ցանկությունների իրականացմանը: Լեոն ասում է. *«Գործն այս անգամ, ըստ երեւույթին, ամենասպահով ընթացքի մեջ էր: Կայսրուհու խոստումները հաստատուն եւ անփոփոխելի*

1 Նույն տեղում, էջ 241:

էին երեւում։ Կարեւորն այն էր, մանավանդ, որ այդ գործն իր ձեռքն էր վերցրել Ռուսաստանի ամենաուժեղ մարդը՝ կայսրուհու սիրեկանը։ Հորիզոնի վրա չէր երեւում ոչ մի փոքրիկ ամպ, որ մթնեցներ հայոց վառվռուն հույսերը։ Առաջին հարվածը պիտի ոչնչացներ Իբրահիմ խանին։ Այդ քայլից էր սկսվում ամեն ինչ...»[1]։

Սակայն հենց այստեղ էլ, ինչպես ասում են, խոփը քարին դեմ առավ։ Կամ, ինչպես շախմատի լեզվով են ասում, Իբրահիմ խանը ձիու խարդախ քայլ կատարեց։

Իբրահիմը տեղյակ էր մելիքների եւ արքունիքի բանակցություններին։ Տեղյակ էր, սակայն մարաղ մտած սպասում էր ելքին։ Հենց այս ժամանակ էլ Վրաց Հերակլ թագավորը հայտնի դաշնագրով ընդունեց Ռուսաստանի հպատակությունը, եւ ռուսաց զորքերը մտան Թիֆլիս։

Իբրահիմ խանը ճարպիկ քաղաքագետ էր եւ չէր կարող չգուշակել, թե ի՞նչ կլինի իր վիճակը, եթե այդ զորքերը մի օր էլ Ղարաբաղի մելիքների ուղեկցությամբ մոտենան Շուշվա բերդին։

Ուստի նա գերադասեց չուշացնել իր ծրագրած դիվանագիտական խաղի ցուցադրումն ըստ մասերի։ 1783 թ. ապրիլին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Գրիգորի Պոտյոմկին իշխանը կարգադրություն էր հղել իր ազգական գեներալ Պավել Պոտյոմկինին՝ Իբրահիմ խանին տապալելու եւ Ղարաբաղում հայկական նոր պետության հիմքը դնելու մասին, Պավել Պոտյոմկինին հասավ Իբրահիմ խանի նամակը։ Ի՞նչ էր գրում Շուշի բերդի տերը Կովկասի ռուսական զորքերի հրամանատարին։ Իբրահիմ խանը լորձնաշուրթ մի հանոյախոսությամբ հայտնում էր, թե ինքը վաղուց ի վեր ցանկություն է ունեցել դառնալու *«ամենամեծաշուք ռուսական գահի եւ անսպառ արատաձեռնությամբ գահակալող կայսրուհու հավատարիմ ու հաճկատար ստրուկը»։* Սակայն քանի որ մինչեւ այժմ չի ունեցել ո՛չ ծանոթներ, ո՛չ կապեր, ուստի եւ չէր կարողանում *«մտնել այն արահետը, որ տանում է դեպի այդպիսի մի երանություն»։* Դրա համար էլ իրեն մնում էր միայն վշտանալ եւ նախանձով նայել այն իշխանավորներին, որոնք վայելում են ռուսական տիրապետության հպատակությունը։[1]

Շուշվա խանը չէր սխալվել. նրա «հպատակության» գիրն իսկապես ազդեցություն ունեցավ ռուս գեներալի վրա։ Սակայն վերջինս վճռական քայլի դիմել չէր կարող, քանի որ ուներ խանի հանդեպ գործադրելու միանգամայն ուրիշ միջոցառումների կարգադրություն։ Նա Իբրահիմ խանի նամակի մասին շուտափույթ զեկույց ուղարկեց Գրիգորի Պոտյոմկինին, իսկ Իբրահիմին էլ պատասխանեց, թե ավելորդ են եղել ինչպես նրա վիշտը, այնպես էլ ամոթխածությունը. դեռ չի պատահել, որ ռուսական ցարի հովանավորությունը խնդրողներից որեւէ մեկը չստանա այն։ Հետեւապես, դա է այն եղանակը, որով ամեն մի տիրապետող ապահովապես կմնա իր վարչական իրավունքների տերը։

---

1 Լեո, հ. երրորդ, էջ 838։

Տե՛ս ЦГАДА, Госархив, разряд XXIII, ф.13, ч. III, с. 135-136.

Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ հենց այստեղ էլ վճռվել է ամեն ինչ, եւ այս կետից սկսած Պոտյոմկիններն սկսել են հովանավորել Իբրահիմ խանին կամ կատարել քայլեր, որոնք ետին պլան էին մղելու հայոց ազատագրության հարցը:

Գեներալ Պոտյոմկինի զեկույցը հասցեատիրոջը՝ իշխան Պոտյոմկինին է հասել Եկատերինա կայսրուհուն հանձնվելուց հետո: Իսկ Եկատերինան, առանց իմանալու Իբրահիմի ով կամ ինչ լինելը, իշխան Պոտյոմկինին հանձնարարեց ընդունել նրա հպատակությունը, եթե դա չի հանդիպի դժվարության կամ չի ունենա կասկածելի հետեւանք:

Իշխան Պոտյոմկինը, կայսրուհու այս կարգադրությունն ստանալուց առաջ, ինչպես գիտենք, զորավար իր ազգականին կարգադրել էր տապալել Շուշվա խան Իբրահիմին եւ Ղարաբաղում ստեղծել հայկական իշխանություն՝ ապագա միացյալ, միայն Ռուսաստանին ենթակա պետության կորիզը: Ինչպե՞ս վարվել այժմ, երբ հպատակություն էր խնդրել Իբրահիմ խանը, եւ թագուհին էլ, իմանալով այդ մասին, կարգադրել է ընդունել նրա հպատակությունը՝ հետը կնքելով այնպիսի պայմանագիր, ինչպիսին որ արդեն կնքվել է Վրաց Հերակլ թագավորի հետ:

Իշխան Պոտյոմկինը, որքան կարելի է դատել նույն թվականի մայիսի 19-ին իր ազգականին հղած նրա կարգադրությունից, այնքան էլ չէր հավատում Շուշվա խանի հավատարմության երդումին: Սակայն քանի կար այդ երդմնաթուղթը, ապա ինքը պարտավոր էր ընդունել այնպիսի վճիռ, որը երաշխավորում էր խաղաղություն: ***«Շուշվա Իբրահիմ խանի խոնարհությունը եւ նրա խնդրանքն իր հպատակությունն ընդունելու մասին՝ կանխում են նրա տապալումը,***- գրեց իշխան Պոտյոմկինը:- ***Ձերդ գերազանցությունը, առանց իրականացնելու նախորդ հրահանգը՝ նրան տապալելու մասին, միայն նրան հայտնեցեք՝ [միակ] տուրքը, որ հարգում է համառուսաստանյան կայսրուհին, դա հավատարմությունն է: Եվ այդպես, եթե նա աներեր կմնա միության մեջ եւ միշտ պատրաստ կատարելու բարձրագույնի կարգադրությունները, ապա կարող է հուսալ, որ կընդունվի նրա հպատակությունը»:***

Դառնալով Ղարաբաղի բնակչության հարցին, իշխանը գրում էր. ***«Ձերդ գերազանցությունը թող շոյի հայերին եւ տնի նրանց տրամադրվածությունը Ռուսաստանի հանդեպ՝ միշտ ունենալու համար նրանց ջանասիրությունը եւ պատրաստակամությունը կատարելու [բոլոր] միջոցառումները, որ կպահանջեն հանգամանքներն ու մեր գործերի շահը»:***

Այսքանից հետեւում է, որ Իբրահիմ խանի հավատարմության երդումը, որին, ինչպես ինչ հետո կտեսնենք, այնքան էլ հավատ չէին ընծայում ցարական կառավարության ներկայացուցիչները, ոչ մի չափով փոփոխություն չի մտցրել Ղարաբաղին ու հարակից շրջաններին, հատկապես հայկական Ղարաբաղին վերաբերող ռուսական ծրագրի մեջ: Բնական է, որ այդպիսի մի բացահայտ հանգամանքը կհասկանար նաեւ այնքան խորամանկ քաղաքագետը, որպիսին Իբրահիմ խանն էր: Եվ հասկանալի էր նաեւ, թե ինչո՞ւ նա, ռուսներին հավատարմության ու հպատակության երդումներ

ուղարկելուց անմիջապես հետո էլ սկսել էր ավելի ամրացնել Շուշվա բերդը եւ ռազմական նոր պատրաստություններ տեսնել բերդի ներսում։

Այս երկերեսանությունը զաղտնի չմնաց գեներալ Պ. Ս. Պոտյոմկինից, որին զանազան աղբյուրներ հաղորդել էին, թե խանն ինչպես է նախապատրաստվում դիմազրաավելու ռուսական արշավանքին։ Գեներալը Հերակլին գրած մի նամակում (հունիսի 28-ին) այդ ամենը հիշում էր հեգնանքով։ ***«Նորին կայսերական մեծության զորքերի համար տարատիելի չեն այդպիսի ամրությունները,***- գրել է գեներալը։- ***Սակայն անհարմար է հանդուրժել երկերեսանությունը»։*** Հերակլից խնդրելով Շուշվա խանի մասին հաղորդել մանրամասն ու ճշգրիտ տեղեկություններ, գեներալը հիշեցնում էր, որ եթե այդ Իբրահիմ խանը փափագում է կայսրուհու հպատակությունը, ապա պարտավոր է լինել ամենից առաջ անկեղծ եւ ազնիվ ու ապավինել միայն նրա մեծահոգությանը եւ ոչ թե հույս դնել ինչ-որ ***«կասկածելի ամրությունների վրա»։***

Անկասկած, ռուս գործիչներն արդեն ճանաչում էին Իբրահիմ խանին։ Ահա թե գեներալ Պոտյոմկինն ինչ էր գրում իր ազգականին. ***«Ես չեմ կարծում, թե կարելի է հավատալ այս խանի հայտարարություններին, քանի որ սա ծայրահեղորեն վստահելի է թուրքերի համար եւ հիմա սոսկ փնտրում է ծառիթներց մեզ քնեցնելու համար՝ վախենալով, թե մենք հայերին օժանդակություն ցույց տալով՝ իրեն կտապալենք»։***

Այս անվստահությունն էլ պատճառ է եղել, որպեսզի ռուսները Շուշվա խանի հետ կնքելիք պայմանագրին առանձին կարեւորություն չտան, մանավանդ որ հենց նույն ժամանակ էլ նրանք իսկապես լրջորեն զբաղված էին հայոց պետականության վերականգնման հարցի քննությամբ։ Դրա համար իշխան Պոտյոմկինը նույն թվականի նոյեմբերին Շուշվա խանին հղելով մի անորոշ պատասխան՝ պահանջում էր ավելի կոնկրետ գծերով ներկայացնել իր առաջարկներն ու խնդիրը։

Պահպանված փաստաթղթերը հաստատում են, որ ռուսների անվստահությունն Իբրահիմ խանի հանդեպ միանգամայն արդար է եղել եւ ունեցել է իրական անհերքելի հիմքեր։ Այն քայլերից հետո, որ Իբրահիմը կատարել էր՝ իբր թե դառնալու ***«ամենամեծաշուք ռուսական գահի եւ անսպառ առատաձեռնությամբ զահակալող կայսրուհու հավատարիմ ու հաճկատար ստրուկը»*** (այսինքն՝ 1784 թ. ամռանը), նույն Իբրահիմը, Դերբենդի Ֆաթալի խանի ու Խոյի Ահմեդ խանի հետ միասին, թուղթ էր հղել Թուրքիայի սուլթանին՝ հաստատված այդ երեքի, ինչպես նաեւ Դաղստանի մի շարք ցեղապետների ու այլ վայրերի խաների կնիքներով։ Եվ այս թուղթն էլ նրա համար էր, որպեսզի սուլթանն իր հովանու տակ առներ թղթի հեղինակներին։ Հովանավորության խնդիրն էլ քիչ էր, նրանք սուլթանին վստահեցնում էին, որ իրենց ձեռքի տակ կան մեծաքանակ զորքեր, եւ միայն փողի կարիքն է, որ իրենց նեղում է։ Ա՛յ, եթե սուլթանն իրենց ապահովի փողով եւս, այն ժամանակ իրենք առանց այլեւայլության կկանխեն Ռուսաստանի առաջխաղացումը եւ իրենց հպատակեց-

նելու վտանգը... Շատ չանցած նրանք ստացան իրենց խնդրածը. 1785-ի սկզբին թուրքաց նվիրակները Իբրահիմ, Ֆաթալի ու Ահմեդ խաներին հասցրին սուլթանի ընծաները՝ յուրաքանչյուրին հարյուր հազար ոսկի եւ թանկարժեք իրեր։ Մահմեդական բնակչությանը ոգեւորելու նպատակով սուլթանի նամակները հանդիսավոր պայմաններում կարդում էին մզկիթների կամարների ներքո եւ հետո էլ կոչ էին անում, որպեսզի ***«բոլոր մահմեդականները ջանան պաշտպանել իրենց հավատը եւ ռուսներին թույլ չտան գրավել Կովկասը»։***

1785 թ. ամռանը Հյուսիսային Կովկասում, թուրքական սուլթանի հրահրումով եւ չեչեն Մանսուրի գլխավորությամբ, բռնկվեց հակառուսական մի շարժում, որը շատ կարճ ժամանակում ընդգրկեց չեչեններին, լեզգիներին, կաբարդացիներին ու մյուս ցեղերին, եւ ռուսական զորամասերի դեմ մեկը մյուսի ետեւից ձեռք բերած մի քանի մանր հաջողություններից հետո ստեղծվեց այնպիսի վիճակ, երբ ռուսները տեւականորեն կտրվել էին Այսրկովկասից։ Ռուսական հրամանատարությունը նույնիսկ հնարավորություն չունեցավ պարեն ու ռոճիկ ուղարկել Վրաստանում գտնվող իր երկու գումարտակներին։ Ռուսական զորքուն աջակցությունից կտրված Հերակլ թագավորի համար դա մի անտանելի աղետ էր, քանի որ հարեւան թուրքական խանությունները հիմա անպատիժ կերպով զզզում էին նրա երկրի մարմինը՝ իբրեւ ***«վարձատրություն»*** Վրաց թագավորի ռուսական հպատակության։ Հերակլն այս առթիվ Գրիգորի Պոտյոմկինին գրել է. ***«Մեր շրջապատի բոլոր այլացեղ հակառակորդները... ոտքի են ելել մեր դեմ եւ ուզում են թափել իրենց թույնը, որ հնուց ի վեր կուտակած ունեին»։***

* * *

Պատմական դեպքերի մեջ հիմնականում վճռական դեր են խաղում գործողությունը գլխավորող անհատների վերաբերմունքն ու տրամադրվածությունը։ Հովսեփ Արղությանն ու Հովհաննես Լազարյանն անվերջ աշխատում էին ժամանակի Ռուսաստանում դեպքերին ընթացք տվող մեծ անհատների աչքը քաղցր պահել հայոց հարցի վրա։ Նույնը պահանջում էին նաեւ բուն Հայաստանում գործի գլուխ կանգնած հոգեւոր ու աշխարհիկ իշխանավորներից, Հնդկաստանում հայրենիքի փրկության երազանքով ապրող հայրենասերներից։ Սրտահաճ խոսքով փափկացրե՛ք նրանց հոգիները, թանկագին նվերներով ու անուշ խոստումներով ջերմացրե՛ք նրանց,- այս խորհուրդները տիրական էին հայրենակիցների հետ ունեցած նրանց բանավոր ու գրավոր զրույցներում։ Իշխան Գրիգորի Պոտյոմկինին՝ Եկատերինայից հետո կայսրության առաջին մարդուն, նրանք կոչում էին ոչ այլ կերպ, քան ***«Հայոց խնամակալ», «Հայոց հովանավոր»,*** եւ այս նոր տիտղոսը շատ էր շոյում իշխանին, շատ էր պարտավորեցնում նրան՝ ի կատար ածելու ***«Աստուծո կողմից»*** իրեն շնորհված եզակի դերը հայ ժողովրդին անհավատների լծից փրկելու համար։ Իշխան Պոտյոմկինի անունից Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկասին գրած թղթում գեներալ Պոտյոմկինն ասում է՝ Աստված ինքն

է կայսրուհու *«մեծ ու մարդասեր սրտին հուշել պաշտպանելու բազմաչարչար Հայաստանը եւ ազատագրելու նրա հոչակավոր ժողովրդին»*: Ինչ վերաբերում է իրեն, ապա ինքն էլ,- շարունակում է գեներալը,- Աստծո կողմից կոչված է իրականացնելու այս մեծ նախաձեռնությունը: Այսմանից հետո նա կաթողիկոսին հայտնում է, որ ռուսական կայսրությունը հսկայական զորքով գալիս է Հայաստանն ազատագրելու նրան հոշոտող օտարների ճանկերից, եւ անհրաժեշտ է, որ նախօրոք հայտնի լինի, թե ինչպե՞ս է լուծվելու կովողներին սնունդ մատակարարելու հարցը: Գեներալը վստահեցնում է, որ իրենք ձրի չեն վերցնի եւ ոչ մի հատիկ ցորեն, սակայն լավ կլինի, որ նախապես մթերվի համապատասխան քանակությամբ պարեն, որպեսզի զորքը կարողանա այն ստանալ մատչելի գներով:

Ղուկաս կաթողիկոսը, նիշտ է, երազում էր ռուսների հաղթական մուտքը Հայաստան, քանի որ դրանից հետո՛ միայն հայ ժողովուրդը պիտի փրկվեր այլադավանների ճնշումից եւ պիտի լծվեր բարեշինության: Այդ պատճառով էլ նա խոստանում էր աղոթել ռուսների հաղթանակի համար: Իսկ պարենի կամ ուրիշ որեւէ օժանդակության մասին *«խոհեմաբար»* լռում էր՝ գեներալի ուշադրությունը դարձնելով Արցախի վրա:

Ամենայն Հայոց կաթողիկոսի այս դիրքը հայտնապես հեգնեց Հովսեփ Արղությանը՝ գրելով, թե նրանց նմանները ռուսական միապետությունից *«միայն հայցեն, թե զմեզ փրկեցե՛ք»*, իսկ մենք ձեռքներս կրծքներիս խաչած սպասում ենք ձեր փրկարար գալուստին: Էլ չեն մտածում, որ ովքեր էլ լինեն փրկարարները, *«երբ փրկեն սրով, ըստ օրինի թագաւորաց, հարկաւորին ծառայ առնել իւրեանց»*:

Հարցին այդպես չէին մոտենում Ղուկասի ենթակաները Գանձասարում, ինչպես նաեւ այն մելիքները, որոնց Ղուկաս կաթողիկոսը ազատ ու ինքնիշխան էր համարում, մինչդեռ իրականում գերմարդկային ճիգերով թպրտում էին Իբրահիմ խանի խարդավանքների ցանցում:

Գեներալ Պոտյոմկինը համանման նամակ էր հղել նաեւ Գանձասարի կաթողիկոս Հովհաննեսին ու Արցախ-Ղարաբաղի մելիքներին: Այս նամակը ցայսօր չի հայտնաբերվել: Նրա բովանդակության մանրամասներն իմանում ենք ղարաբաղցիների պատասխանից, որի մեջ նրանք խոստանում են ռուսական զորքին պարենով ապահովել ձրի ու ցույց տալ զինական ամենայն աջակցություն: Նրանք այս նույն խոստումները տվին եւ ամենայն պարտավորություններ հանձն առան նաեւ հաջորդ նամակներում, որոնք մեկը մյուսի ետեւից հասնում էին արքունիք եւ նրա հետ իրենց կապող հայ գործիչներին:

* * *

Սակայն դեպքերը զարգանում էին ոչ հայոց իղձերի համաձայն: 1784 թվականից սկսած՝ թուլացավ ռուսական ազդեցությունը Կովկասում ու Այսրկովկասում, որովհետեւ Հյուսիսային Կովկասի մանր ցեղերը, ինչպես տեսանք, ցույց էին տվել ըմբոստության նշաններ, եւ ռուսական զինվորությունը նրանց խաղաղեցնելու գործով էր

գրաղված։ Ճիշտ է, հաջորդ տարին բարենպաստ պայմաններ էր տրամադրել ռուսներին՝ Այսրկովկասը նվաճելու համար, եւ պատահական չէ, որ Հովսեփ Արղությանը Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին հույս էր տալիս, թե ***«գիտաջիք, զոր ինչ լիներոյ է, յայսմ ամի կատարումն լիներոյ է...»***, եւ հաղորդում էր սրտապնդիչ տեղեկություններ։

Հովհաննես կաթողիկոսը նրան պատասխանել էր, թե իրենց վիճակը շատ է ծանրացել, քանի որ Իբրահիմ խանը, ռուսական օգնության հապաղումից ոգեւորված, այնպես որոգայթներ է լարել իրենց շուրջը, որ նույնիսկ չեն կարողանում մեկտեղ հավաքվել, որպեսզի պայմանավորվեն անելիքների մասին։ Բայց, չնայած այս բոլորին, իրենք համառորեն կանգնած են իրենց նախկին դիրքում, պատրաստ են վճռական մարտի համար, եւ նույնիսկ մելիք Շահնազարն էլ իրենց կողմն է անցել ու պատրաստ է մասնակցելու հակախանական միջոցառումներին։

Հովհաննես կաթողիկոսն ու մելիքները միաժամանակ Արղությանի մոտ՝ Աստրախան ուղարկեցին Դանիել Հովհաննիսյան անունով իրենց ներկայացուցչին՝ նպատակ ունենալով Արղությանին հանգամանորեն տեղեկացնելու իրենց վիճակի մասին եւ կոնկրետ իմանալու՝ պիտի գա՞ն ռուսները, թե՞ ոչ։ Մելիքները խնդրել էին հաղորդել, թե ***«բավական է՝ ռուսական բանակը հասնի Գանձակ, որպեսզի իրենք նրանց միանալով նվաճեն ոչ միայն ամբողջ Ղարաբաղը, այլեւ Շուշին»***։

Սակայն այս տարում եւս բախտը հայերին չժպտաց։ Ռուսները չկարողացան տիրել Այսրկովկասին, ավելին՝ չկարողացան իրենց երկու զումարտակ զորքը, որ բունկալի դեր էր կատարում, պահել Վրաստանում։

Շուշվա խանի ողորմածությանը հանձնված հայ մելիքների ու հոգեւոր առաջնորդների վիճակը դարձել էր ողբերգական։

1787 թ. հուլիսին Կովկասի ռուսական զորամասի հրամանատար Բուրնաշովը գեներալ Պ. Ս. Պոտյոմկինին գրավոր զեկուցում էր Ղարաբաղի հայության ծանր վիճակի եւ Իբրահիմ խանի կամայականությունների մասին։ Գրում էր, թե հուլիսի 1-ին Ղարաբաղից իր մոտ է ժամանել մելիք Բախտամի որդին, որը պատմել է, թե ինչպես արքունիքի լրաբեր Գաբրիել Կարախանովին բռնելուց եւ հարցաքննելուց հետո Իբրահիմը կալանավորել է Գանձասարի կաթողիկոսին ու Ղարաբաղի բոլոր մելիքներին։ Վերջիններս, ենթարկվելով անասելի տանջանքների, խոստովանել են իրենց կապերը ռուսական արքունիքի գործիչների հետ, հանձնել են Պոտյոմկինից ստացած նամակներն ու նվերները։ Կաթողիկոսը մահացել է, եւ խանի գործակալներն էլ կողոպտել են Գանձասարի վանքը։ ***«Հիմա հայերն այնտեղ ծայրահեղ ճնշման տակ են,*** - շարունակում էր Բուրնաշովը։- ***Իբրահիմ խանը մելիքներից վերցրել է 15000-ական ռուբլի եւ նրանց ազատ արձակել։ Նրանք իրեն*** (մելիք Բախտամի որդուն. - Բ. Ռ.) ***զաղտնի ուղարկել են ցարի մոտ՝ խնդրելու ազատագրություն, հայտնելով նաեւ, որ իրենք բոլորը պատրաստ են ուղղելու զենքը իրենց հարստահարողի դեմ, հենց որ նորին բարձրությունը հայտնվի Ղարաբաղում»***։

Ժամանակի պաշտոնական թղթերում ամենայն մանրամասնությամբ ներկայացված են Ղարաբաղի հայության, ինչպես եւ առհասարակ հայոց ազատագրության գործի համար նակատագրական նշանակություն ունեցող այս դեպքերը։ Գեներալ Պոտյոմկինի եւ Ղարաբաղի մելիքների կապը հաստատուն պահող Գաբրիել Կարախանովին մատնել են Գանձակում, եւ սկզբում նա կալանքի տակ է առնվել ինչ-որ պարտքերի պատճառով։ Իսկ երբ հասցրել են Շուշի, արդեն տանջահարելով ստիպել են իբրեւ Պոտյոմկինի գործակալի։ Գեներալի այն հարցին, թե ինչպես է պատահել, որ Կարախանովը խանի ձեռքն է տվել մելիքների անունները, Բուրնաշովը գրավոր պատասխանել է. ***«... Երբ նա տարվել է Շուշի, այնտեղ արդեն հայտնել է, թե նամակներ է բերել Գանձասարի կաթողիկոսին ու մելիքներին, իսկ չարչարանքների ենթարկվելուց հետո խոստովանել եւ հանձնել է նամակներն ու նվերները»։***

Հովհաննես կաթողիկոսի եղբայր Սարգիս Ջալալյանցի բացատրությունից էլ պարզվում է, որ կաթողիկոսը ոչ թե մահացել է հարցաքննությունից ու տանջանքների ենթարկվելուց, այլ նրան մահադեղ են տվել խանի հրամանով։ Որ կաթողիկոսին թունավորելով են սպանել, հաստատվում է նաեւ Հովսեփ Արղությանի եւ մելիք Շահնազարի որդու հաղորդած զույգ տեղեկություններից։

Իսկ մելիք Աբովն ու մելիք Մեջլումը, որոնք եղել են Իբրահիմ խանի կողմից կալանքի տակ առնվածների ու տանջահարության ենթարկվածների մեջ եւ փախել են բանտից, հետագայում (1788 թ. հունվարին) իրենք են Գրիգորի Պոտյոմկինին գրավոր բացատրել, թե Իբրահիմը միշտ էլ նպատակ ուներ հաշվեհարդար տեսնել իրենց հետ, սակայն վախեցել է ռուսներից։ Սակայն երբ համոզվել է, որ կայսրուհու բարյացակամությունը չի գերանում ու չի տարածվում հայ մելիքների վրա, դարձել է սանձարձակ ու անմիջապես գործի է անցել, իրենց կանչելով Շուշի, իբր թե բարեկամական խորհրդի համար, հետո ուխտադրժորեն կալանքի տակ է առել ու նետել բանտ։

Բանտում սպանվել է նաեւ մելիք Բախտամը՝ Դիզակի տերը, ապա անգլուխ մնացած նրա տիրույթում սկսվել են անսանձ կամայականությունները, որոնց արդյունքն այն է եղել, որ բռնությամբ մահմեդականացվել են մելիքանիստ Տողի հայ բնակչության մի մասը, նույնիսկ Մելիք-Եգանյան տան ներկայացուցիչներից շատերը։

Այս բոլորը, ինչպես նաեւ Հովհաննես կաթողիկոսին մահադեղով սպանելը, տեղի է ունեցել 1787-ի գարնանը, համենայն դեպս մինչեւ ամառը, քանի որ Բուռնաշովը գեներալ Պոտյոմկինին այս առիթով զեկույց էր հղել 1787-ի հուլիսին։

Շուշվա բանտում գտնվող մելիքներին հաջողվեց մի վերջին փորձ եւս կատարել՝ ստանալու ռուսների զինական օժանդակությունը։ Նրանք, մելիք Բախտամի որդուն գաղտնի ուղարկելով Բուրնաշովի մոտ, ռուս հրամանատարությանը հաղորդեցին իրենց վիճակի մանրամասնությունները եւ աղերսեցին օգնություն։ Խնդիրքն ուղղված էր նաեւ Հերակլ թագավորին. մելիքները հայտնում էին, թե բավական է վրաց ու ռուսական զորքերը երեւան Ղարաբաղի սահմաններում, որպեսզի իրենք միավորված ուժերով հարձակվեն ու ջախջախեն խանությունը։

Հերակլը ցանկանում էր օգնել մելիքներին։ Նրա համար Շուշվա խանն այլեւս անհանդուրժելի մի թշնամի էր, քանի որ տարբեր ակունքներից քաղված լուրերը միա-

համոզ ապացուցում էին, որ Իբրահիմն ու այսրկովկասյան մյուս խանությունները, Թուրքիայի թելադրանքով հավատի պատերազմ են նախապատրաստել քրիստոնեության դեմ, եւ ահա ուր որ է կռիվ կսկսվի մի այնպիսի թափով, որպիսին չի եղել վաղուց ի վեր։ Հերակլը դեռեւս 1787-ի մայիսի 25-ին էր Պ. Ս. Պոտյոմկինին հաղորդել, որ Իբրահիմ խանը, Ախալցխայի փաշա Սուլեյմանը, Էրզրումի, Գանձակի ու Դաղըստանի խաները որոշել են միացյալ ուժերով գրավել Երեւանը։ Ապա տեղեկացնում էր, որ ***«Շուշվա Իբրահիմ խանն ամեն կերպ ջանում է չարագործություն անել մեր դեմ, նա իր գործակալներին հղել է տարբեր տեղեր, այսինքն՝ Ախալցխա, Էրզրում ու Դաղստան, օգնություն է խնդրում նրանցից, որոնք եւ նպատակ ունեն կարճ ժամանակից հարձակվել մեր թագավորության վրա»***։

Սեպտեմբերի սկզբին Հերակլի ու Բուրնաշովի զորքերը բանակ դրին Գանձակի արեւմտյան մատույցներում։ Մերձակայքի հայ բնակչությունը խանդավառությամբ դիմավորեց նրանց։ Սակայն, տեսնելով նրանց փոքր քանակը եւ հույս չունենալով, թե այդ սակավ զորքով հնարավոր կլինի հաղթել հակառակորդներին, նրանք դիմեցին մի անհույս քայլի՝ Հերակլին խնդրեցին իրենց վերաբնակության տեղ տալ Վրաստանում։ Շուտով (սեպտ. 13-ին) բանակատեղի հասավ նաեւ Ղարաբաղի մելիքների սուրհանդակը եւ հաղորդեց, որ Գյուլիստանի ***«Մելիք Աբովը, փրկվելով կալանքից, Շուշուց փախել է, իր ժողովրդի հետի ամրացել բերդում*** (երեւի Գյուլիստան ամրոցում. - Բ. Ու.), ***այսպես էլ՝ նաեւ մելիք Մեջլումը, եւ սպասում են թագավորի օգնությանը, քանի որ նրանք բացահայտ կռվի են ելել Իբրահիմ խանի դեմ»***։ Հակառակ դեպքում նրանք եւս խնդրում էին իրենց 12 հազար տուն հպատակներին հնարավորություն տալ վերաբնակվելու Վրաստանում։

Հերակլ թագավորն ու Բուրնաշովը որոշել էին շարժվել դեպի հարավ, որ պիտի նշանակեր օգնել Ղարաբաղի մելիքներին՝ լուծելու ոչ թե վերաբնակության, այլ իրենց ավանդական հայրենիքում ազատ ապրելու, իրենց բախտի տերը մնալու հարցը։

Եվ հենց այս ժամանակ էլ բանակատեղի հասավ գեներալ Պոտյոմկինի սուրհանդակը՝ Բուրնաշովին հանձնելու մի հրահանգ, որով կարգադրվում էր ռուսական զորքն անմիջապես հանել Վրաստանից՝ ռուս-թուրքական պատերազմին մասնակցելու համար։

Այսրկովկասցիների համար ծանր այս կարգադրության մասին տեղեկանալով՝ Հերակլը Բուրնաշովին խնդրեց զորքերի ետքաշումը հետաձգել գոնե մի քանի օրով, որպեսզի ***«չոչնչանան Գանձակի հետ կնքվելիք պայմանագիրը եւ հայ մելիքների փրկության գործը»***։ Սակայն Բուրնաշովն անդրդվելի մնաց եւ անհապաղ կատարեց վերին հրամանատարության կարգադրությունը։

Բանն այն էր, որ օգոստոսի սկզբին Թուրքիայի սուլթանը Ռուսական կայսրությունից ետ էր պահանջել Ղրիմը եւ, հավանաբար, մերժում ստանալով, նույն ամսի վերջին (օգոստ. 24-ին) հայտարարել պատերազմ։ Թուրքաց դեմ Սեւ ծովի ափերին ծավալ-

ված պատերազմը գլխավորում էր գեներալ-ֆելդմարշալ Գրիգորի Պոտյոմկինը։ Այդ պատերազմի մեջ պիտի ներքաշվեին բոլոր այն ուժերը, որոնք ռուսաց հրամանատարությունը նախատեսել էր Այսրկովկասն ու Հայաստանը գրավելու համար։

Ռուսաստանն ստիպված էր առժամանակ մոռանալ Այսրկովկասը եւ թուրքերի դեմ վարել իր ամենաճակատագրական պատերազմներից մեկը։

Դրությունն ավելի ծանրացավ նրանով, որ Ռուսիայի հին թշնամիներից մեկը՝ Շվեդիան, նախապես դաշինք կնքած լինելով Թուրքիայի հետ, հյուսիսից պատերազմի էր նետվել Ռուսական կայսրության դեմ։

Օրհասական էր Ղարաբաղի ապստամբ մելիքների եւ առհասարակ հայության վիճակը։ Ռուսների օգնությունից զրկված հայ ժողովուրդն ասես երկաթե վանդակ էր նետված, եւ նրա վրա բաց էին թողել սանձակոտոր մի գիշատիչ։

ՆՈՐ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XVIII դարի վերջն ու **XIX**-ի սկիզբը, շուրջ մեկ քառասնամյակ, կազմում էր փոթորկոտ վայրիվերումներով հարուստ մի շրջան, երբ վերջնականապես պետք է լուծվեր Այսրկովկասում Ռուսաց կայսրության հաստատման հարցը։ Ցավալին այն է, սակայն, որ դա կատարվեց ռուսական զորքերի ոչ թե մեկ վճռական հաղթանակով, այլ պարբերական տեղատվություններով։ Իսկ սրանք նշանակում էին հայության ու հարեւան քրիստոնյաների, հատկապես վրացոց գլխներին թափված նորանոր աղետներ։ Ռուսների ամեն մի նահանջից հետո պարսից գազազած բանակները գալիս էին վերանվաճելու եւ պատժելու։ Նրանք նվաճում էին քաղաքներն ու գյուղերը, կոտորում բնակիչներին, ավերում ամեն ինչ։ Ինչպիսի՞ աղետների ենթարկվեցին Թիֆլիսը, Երեւանը, Շուշին, մնացած մեծ ու փոքր բնակավայրերը։ Եվ այս ամենին ի՞նչ մասնակցություն ունեին տեղական մահմեդական կառավարիչները, որոնք հրաշալի գիտեին, թե ու՞մ պետք է պատժել առաջին հերթին եւ ինչպես պետք է անել, որպեսզի ժողովուրդն այլեւս գլուխ չբարձրացնի։ Սակայն բարձրացնում էր, նորից նոր միանում էր իր հերթական արշավանքը ձեռնարկած ռուս զորքին, ցույց էր տալիս այնպիսի խիզախություն, որից շշմում էին իրենք՝ ռուսները։ Ռուս սպաներն իրենց զեկույցներում հիացմունքով ու երախտագիտությամբ էին խոսում Արցախի մելիքների, նրանց զինվորության, հասարակ շինականի անվեհերության մասին, պատմում էին նրանց անշահախնդիր օգնությունն ամեն ինչով, երբ իրենք՝ այդ օգնողները, կարիքի մեջ էին, տուն ու տեղից կտրված, անապահով։

1796 թ. ապրիլին ռուսական զորքը, կոմս Վալերիան Զուբովի հրամանատարությամբ շարժվեց դեպի հարավ՝ իբր թե քրիստոնյաներին փրկելու մահմեդական բռնությունից, բայց հիմնական նպատակ ունենալով վերջնականապես ծնկի բերելու Պարսկաստանը, որպեսզի այն այլեւս ոչ մի հավակնություն չունենա Այսրկովկասի վրա։ Հրամանատար Զուբովին, իբրեւ տեղանքին եւ երկրի ժողովուրդների նիստուկացին, առհասարակ բոլոր հանգամանքներին քաջածանոթ, մանավանդ հավատարիմ մարդ, ուղեկ-

ցում էր Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանը։ Հայոց հարցի տեսակետից էլ ծրագրված էր Արարատյան երկիրը լոկ Վրաց թագավորին ենթարկեցնել՝ բացառելով որեւէ մահմեդական երկրի ազդեցությունը։ Ինչ վերաբերում է Ղարաբաղին, ապա մելիքներին ու բնակչությանը պիտի վերջնականապես ազատագրեին Պարսից շահի ու նրան ենթակա խանի լծից, մելիքները պիտի դառնային անկախ իշխաններ՝ ենթակա միայն Ռուսական արքունիքին։

Դժվար չէ պատկերացնել այն խանդավառությունը, որ ամենուրեք ապրում էին հայերը՝ սկսած Ղզլարից ու Աստրախանից, որտեղից արշավն էին սկսել ռուսական զնդերը, մինչեւ Արցախ ու Արարատյան երկիր, ուր պատրաստ էին ռազմական ու նյութական ամեն օգնություն հասցնելու ռուսական փրկարար զորքերին։

Զուբովի ռազմերթը տեղի ուներ աներեւակայելի մի հաջողությամբ։ Ճանապարհին, առանց որեւէ դիմադրության, մեկը մյուսի ետեւից հանձնվում եւ հպատակություն էին հայտնում մահմեդական խաները։ Աշնանն արդեն ռուսներն Այսրկովկասի հարավ-արեւելյան եզրին էին, Կուրի ու Երասխի միախառնման վայրում, եւ օրակարգի հարց էր հաղթական գրոհը Պարսկաստանի վրա։

Շուշվա խան Իբրահիմը հպատակության երդմնագիր էր հղել եւ պատրաստվում էր Շուշիի բերդը դնել Ռուսաստանի իրավունքի տակ։ Երդմնագրերից մեկում նա պնդում էր, թե Շուշին Ռուսաստանի քաղաքն է եւ այդպիսին էլ կմնա։ Զուբովն Արղությանին հավատացնում էր, թե ինքը չի հավատում խանի սուտ երդմանն ու բծնալից հավաստիացումներին, ահա շուտով նրան ցած կբերի իր բարձրությունից, եւ Ղարաբաղը կդառնա իր մելիքների երկիրը ու կճանաչի միայն Ռուսաստանի գերագույն իշխանությունը...

Սակայն 1796 թ. նոյեմբերի 6-ին մեռավ Եկատերինա կայսրուհին, եւ նրա զահին տիրացած Պավելը կարգադրեց, որպեսզի Կոմս Զուբովը դադարեցնի հարավային արշավանքը, վերադառնա Ռուսաստան։

Ռուսական զորքը միանգամից ու հանկարծակի թողեց Այսրկովկասը եւ փախչելու պես վերադարձավ տուն՝ առանց հոգալու այն մասին, թե ինչ դրություն է ստեղծվում այն քրիստոնյաների համար, որոնց փրկության հեռանկարը հետներին՝ իրենք անցել էին Կովկասյան լեռնաշղթան։ Իսկ արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը, վերադառնալով Պետրոգրադ, սկսեց մտածել իր խոստումներին այնքան հավատացած ու հարեւան մահմեդական տիրողների դեմ վճռական մարտի նետված հայության դառը ճակատագրի մասին։

Զուբովի արշավանքի ցավալի վերջավորության պատճառով հայրենի եզերքներից տեղահանված երկու մելիքներ՝ Վարանդայի տեր Զումշուդն ու Գյուլիստանի տեր Ֆրեյդունը, այս անգամ եւս հույս դնելով արքեպիսկոպոս Արղությանի խոստումների վրա, 1797 թ. գնացին Աստրախան, որպեսզի հետո էլ Պետերբուրգ հասնեն, հանդիպեն նոր կայսր Պավելի հետ, նրան հասցնեն արցախահայության հավատարմության խոսքն ու փրկության աղերսանքը։ Շուրջ երկու տարի սպասեցին այնտեղ, մինչեւ որ 1799-ին տեղ հասան եւ կարողացան միայն աղերսագրեր ստորագրել եւ ներկայացնել ցարին։ Այդ գրություններից մեկը, որ, անկասկած, Արղությանի հորինածն է,- բո-

վանդակությամբ էլ հիմնականում նրա տրամադրություններն է արտահայտում եւ ոչ թե հինգ մելիք-ստորագրողների կամքը,- նախ պաղատագին խնդրում է, որ կայսրն ընդունի իրենց հպատակությունը, զորք ուղարկի, ազատագրի միայն իրենց պատկանող հինգ հայկական գավառները: Իսկ եթե դա հնարավոր չէ, ապա իրենց ազատ հողեր տա այն ընդարձակ երկրում, ***«որ տարածված է Մոժար կոչվող տեղից մինչեւ Եկատերինոդրադ ու նրա շրջանները»***, որպեսզի դարաբաղցիներն ու նրանց միանալիք մնացած հայերը, իրենց երկիրը թողած, զաղթական դառնան, գնան վերաբնակության եւ ստեղծեն մի ***«Փոքր Հայաստան Ռուսաց երկրում»***: Իսկ եթե սա էլ անհնար կլինի, ապա,- խնդրում են մելիքները,- թող կայսրը կարգադրի, որպեսզի Վրաց թագավորն իրե՛նց հատկացնի Գուգարաց աշխարհը, որ այժմ Ղազախ է կոչվում եւ տարածված է մինչեւ Լոռի: Այս գրությանը կից ներկայացվել է մի թուղթ՝ աղերսագիրն, իբր, իրենց սրտի խոսք համարող մելիքների ցուցակը: Ահա՛ նրա համառոտագրությունը.

«Մելիք Ջումշուդ՝ որդի մելիք Շահնազարի, որի գավառը կոչվում է Վարանդա, բերդը՝ Շուշի»:

«Մելիք Աբով որդի մելիք Հովսեփի, որի գավառը կոչվում է Իզիրմիզորդ, բերդը՝ Գյուլիստան»:

«Մելիք Ռոստոմ՝ որդի յուզբաշի Ավահվերդիի, տեղապահ վախճանված մելիք Մեժլումի..., որի գավառը կոչվում է Ջրաբերդ»:

«Մելիք Աբաս՝ որդի մելիք Բախտամի, որի գավառը կոչվում է Դիզակ»:

«Մելիք Ավահվերդի՝ որդի մելիք Միրզախանի, որի գավառը կոչվում է Խաչեն»:

Չի կարելի կասկածել, որ ո՛չ Պետերբուրգում աղերսագիրն ստորագրած մելիք Ջումշուդն ու մելիք Ֆրեյդունը, ո՛չ էլ հատկապես աղերսագրից անտեղյակ մյուս երեք մելիքները լուր չունեին, թե որտե՛ղ է գտնվում Եկատերինոդրադ քաղաքը՝ «Մոժար կոչվող տեղի» հետ միասին: Չէին պատկերացնում, թե ինչպե՛ս կարելի է հրաժարվել սեփական ազատության ու անկախության համար պայքարելուց, Արցախ-Ղարաբաղը պարպել իր հազարամյա տեր հայերից եւ այն ոտով-գլխով պարզեւ թողնել մի Բոչվորի, որն այնտեղ հայտնվել է ընդամենը չորս-հինգ տասնամյակ առաջ: Բայց, ահա՛, Ռուսաստանի հայության հոգեւոր առաջնորդ Հովսեփ Արղությանը նախաձեռնում էր մի այդպիսի, մեղմ ասած, անմիտ միջոցառում՝ այն ներկայացնելով որպես Արցախի հայության ու հայ մելիքության փրկություն:

Բարեբախտաբար, Պավել ցարը չէր կարող իրականացնել աղերսագրի առաջին խնդիրը (մի մեծ զաղթականական գործ իրականացնելու համար անհրաժեշտ էին մեծամեծ միջոցներ՝ չհաշված մնացած գլխացավանքները), սակայն մասամբ կատարեց երկրորդը՝ հատուկ հրովարտակով Վրաց թագավորին հանձնարարեց տեղ տալ իր երկրում, որպեսզի մելիքներն ու նրանց հպատակներն ապրեն: Սա էլ, հավանաբար, կատարվել էր ո՛չ այնքան բարյացակամ ձեւով, որի պատճառով նույն մելիք Ջումշուդը, մելիք Ֆրեյդունն ու իրենց ուղեկցած Պետրոս Մադաթովը ամիսներ անց, 1799-ի

մարտի 29-ին, նորից դիմել են ցարին՝ խնդրելով, որ իրենց հարցը լուծվի, եւ խաղաղ կյանք ապահովվի Վրաստանում կուտակված իրենց տոհմակիցների ու հպատակների համար։

Նամակներից մեկում մելիք Ջումշուդը (ի դեպ, նա մելիք Փրեյդունի բեռին էր) միանգամայն անկեղծ գրել էր, թե մեր մի կողմը թուրքերն են, մյուս կողմը՝ պարսիկները, երրորդ կողմը՝ Դաղստանի լեզգիները։ Եվ, այսուհանդերձ, մենք կարողանում էինք *«ըստ պարակայից երբեմն բարեկամաբար եւ երբեմն թշնամաբար եւ կալով ի նոյնս, իսկ զաւառս մեր ունէաք զլիակատար իշխանութիւն եւ զազատ խօստովանութիւնս մէրոյ օրինի»՝ մինչեւ կոմս Զուբովի գալը։ Նա եկավ, մեզ ստիպեց հրապարակավ հպատակության երդում տալ եւ իր զորքի հետ մեր զորքով շարժվել դեպի թշնամիները... Եվ հետո էլ հանկարծ նա մեզ թողեց, վերադարձավ Ռուսաստան, մենք մնացինք անարգ ու վայրագ թշնամիների չար դատաստանին ենթակա...»*։

Վրաստան գաղթած մելիքներն ու նրանց հպատակներն ստացան հող եւ իրենց կյանքը դասավորելու հնարավորություններ։ Իսկ հայրենի Արցախում Իբրահիմ խանի սադրանքներին էլ գումարվել էին երկու նոր չարիք՝ սովն ու ժանտախտը։

XIX դարի արշալույսին Ռուսական կայսրությունը նորից օրակարգ մտցրեց Այսրկովկասում իր տիրապետությունը հաստատելու հարցը։ Եվ 1801 թվականից Վրաստանն ու հարակից հայկական շրջանները վերջնականապես միացվեցին Ռուսաստանին։ Հենց այս էլ դարձավ նոր ահազանգ, որպեսզի Հայաստանի տարբեր նահանգներում վերստին բորբոքվեն ազատագրական շարժումները, ոտքի կանգնեն ժողովրդական ինքնապաշտպանության ուժերը եւ, խառնվելով առաջ շարժվող ռուսական զորքերին, իրենց երկիրն ազատագրեն պարսկական լծից։

Հայկական տարբեր նահանգներ տարբեր ժամանակներում մտան ռուսական տիրապետության տակ, իսկ Արեւմտյան Հայաստանի մեծագույն մասն այնպես էլ մնաց ենթակա թուրքական վայրագություններին։ Այսպես. 1801 թ. Ռուսաստանին միացվեց Արեւելյան Վրաստանը, եւ նրա հետ էլ՝ հայկական Լոռի, Փամբակ, Ղազախ, Բորչալու գավառները։

1804-ին Ռուսաստանը նվաճեց Գանձակի խանության տարածքը, եւ Ռուսաստանին միացվեցին Շամշադինի, Բասարգեչարի ու հարակից շրջանները։

1805-ին ռուսական զորքերը նվաճեցին արեւելյան Շիրակը՝ Արթիկ կենտրոնով։ Եվ այս տարում էլ Ռուսաստանի կառավարության ներկայացուցիչն առաջին անգամ վճռական քայլ կատարեց Արցախ-Ղարաբաղի հարցում։ Դավադիր քայլ։

ՔՈՒՐԱԿՉԱՅԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅ ՄԵԼԻՔՈՒԹՅԱՆ ՏԽՈՒՐ ՎԱԽՃԱՆԸ

XIX դարն Այսրկովկասի համար բացվում էր Ռուսական կայսրության տիրապե-

տության հաստատումով, բայց ո՛չ այն վարդագույն ու պատրանալից գույներով, որոնք նախորդ տասնամյակներին ուրվագծում էին այդ տիրապետությունը։ 1801 թ. Վրաստանը վերջնականապես կցվեց Ռուսաստանին, իսկ նրա թագավորությունը վերացվեց, եւ թագաժառանգներն ու թագուհին ենթարկվեցին այնպիսի նվաստացման ու չարչարանքների, որպիսիք անհնար էր սպասել նույնիսկ բիրտ այլահավատներից։

Իրավացի էր Լեոն՝ այս ժամանակ *«Ռուսական շարժումն... այլեւս չէր ըմբռնվում ոսկեզօծ եւ փայլփլուն խաղալիք-զաղափարներով, որպես են, օրինակի համար, փոքրիկ ազգերի անկախություն, նոր քրիստոնյա պետությունների կերտում եւ այլն։ Այժմ ամեն ինչ բաց ու պարզ էր. Ռուսաստանը նվաճում էր Մերձավոր արեւելքը, ենթարկում էր նրան իր ցարական բյուրոկրատական ծանր ռեժիմին։ Բայց այս ռեժիմը, համենայն դեպս, ո՛չ սուլթանական-փաշայական էր, ո՛չ շահական-խանական»*[1]։ Եվ նորանվաճ ազգերը հենց սրանով էլ ուրախ ու երախտապարտ պիտի լինեին,- մտածում էր ռուս նվաճողը։ Այդ պատճառով էլ հայ մելիքությունը երեւի թե ինչ-որ չափով նախապատրաստված էր իր վախճանին։ Լեոն վերը մեջբերված իր խոսքին ավելացրել է, թե *«Հայերը վրացիներից անհամեմատ ավելի դժբախտ քաղաքական կացության մեջ էին գտնվում։ Եվ երբ նրանց ասացին, թե անցել են Եկատերինաների, պոտյոմկինների, սուվորովների, զուբովների ժամանակները, որ հայերի հետ այլեւս անկախության խոսք չպիտի լինի, այլ նրանք այժմ պատրաստ են ամեն կերպ աջակցել, որ ռուսաց զորքերը գնան, մտնեն նրանց երկիրը եւ ամենքին զարձնեն ցարին հպատակ, հայերին ոչինչ չէր մնում, բայց միայն ընդդիմել այդ դերը, թողնել ամեն մի ծրագիր ու ձգտում եւ բավականանալ նրանով, որ ռուսական ավիները բերում են իրենց հետ ֆիզիկական գոյության ապահովություն, խաղաղ աշխատանքի, զարգացման, կարգ ու կանոնի եւ սեփականատիրական իրավունքի հաստատուն երաշխիքներ»*[2]։

1805 թ. առաջին անգամ պետք է վավերացվեր Արցախ-Ղարաբաղի կցումը Ռուսաստանին, եւ այդ գործարքը կատարվելու էր մի կողմից ռուս պաշտոնեության, մյուս կողմից՝ Իբրահիմ խանի միջոցով։ Ռուսաստանը ներկայացնում էր ռուսացած վրացի, մոլի հայատյաց իշխան Ցիցիանովը (նախկինում՝ Ցիցիշվիլի), իր ազգից այնքան հեռացած մի զինվորական ու բյուրոկրատ, որ իր սեփական ձեռքով ավարտին հասցրեց Վրաստանի թագավորական ողջ տոհմի արտաքսումը հայրենիքից... Պատահական չէ, որ սա հեգնոտ ծիծաղում էր Արցախի մելիքների վրա՝ միայն նրա համար, որ այդ միամիտ մարդիկ իրենց տոհմակցությունը էին համարում հին հայկական թագավորական զերդաստանը։

---

1 Լեո, Հայոց պատմություն, չորրորդ հատոր, Ե., 1984, էջ 25։
2 Նույն տեղում, էջ 26։

Եվ, ահա՛, այդ Ցիցիանովը բանակցությունների մեջ մտավ Իբրահիմ խանի հետ, դաշնագիր ստորագրելու տեղ նշանակեց Կուրակչայ վայրը՝ Կուր գետի օժանդակներից մեկի մոտ, Գանձակից 30 վերստ հեռավորության վրա։ Այստեղ Ցիցիանովն ու Իբրահիմ խանը կնքեցին դաշնագիր, որով Ղարաբաղն՝ իր միահեծան տեր խանի գերդաստանով, նրա անբեկանելի իշխողի իրավունքներով անցնում էր Ռուսաստանի գերիշխանության տակ։

Դաշնագրի առաջին հոդվածը, որ Իբրահիմ խանի անունից է, ասում է. *«Ես՝ Շուշու եւ Ղարաբաղի Իբրահիմ խանս, իմ, իմ ժառանգների եւ հաջորդների անունից հանդիսավորապես ընդմիշտ հրաժարվում եմ Պարսկաստանից կամ մի այլ պետությունից վասալական կամ առհասարակ ուրիշ որեւէ տիտղոս ունեցող որեւէ կախում ունենալուց եւ սրանով հայտարարում եմ ամբողջ աշխարհի առաջ, որ ես ինձ եւ իմ հաջորդների վրա չեմ ճանաչում ուրիշ մի ինքնակալություն, բացի նորին կայսերական մեծության համառուսական մեծ թագավոր կայսրին եւ նրա բարձր ժառանգների եւ համառուսաստանյան կայսերական գահի ժառանգների գերագույն իշխանությունը՝ խոստանալով նույն գահին հավատարմություն, ինչպես նրա հավատարիմ ստրուկը, որի համար եւ պիտի երդվեմ սուրբ Ղուրանի վրա»*[1]։

Ցարական կողմի խոստումն է, որ ցարի ու *«նրա հաջորդների անունից շնորհն ու բարեխնամությունը Շուշու եւ Ղարաբաղի Իբրահիմ խանից ու նրա ժառանգներից, ինչպես եւ իրեն հավատարիմ հպատակից երբեք չեն խլվի..., նորին բարձրատոհանության ու նրա ժառանգների ներկա կալվածների ամբողջականությունը պահպանված կլինի»*[2]։

Ցարական կողմը խոստանում էր նաեւ մի կոկիկ զորաջոկատ՝ թնդանոթներով՝ *«խանին եւ նրա ժառանգներին ու հաջորդներին անպատճառ Շուշիի խանության վրա պահպանելու համար»*։

Ոչ մի խոսք Ղարաբաղի իսկական տեր հայ մելիքների, նրանց իշխանության ներքո գտնվող բնիկ հայության, սրանց իրավունքների, կյանքի ու գույքի պահպանության ապահովության մասին։ Այս էլ երեւի նրա համար, որ «ցարական կողմն» արդեն համոզված ու վստահ էր, որ այդ հայ մելիքները հավատարիմ են ու նվիրված, իսկ այսքանից հետո էլ ինչ կարիք լեզու թափելու։ Խանին ու նրա գերդաստանին չէին հավատում, դրա համար էլ պիտի սուտ երդումներ տային, եւ լպրծուն խոսքերով շղարշեին փոխադարձ անվստահությունը։

Կուրակչայի դաշնագիրը կնքվեց 1805 թ. մայիսի 14-ին։

Մեկ տարի էլ չէր անցել, որ պարսիկները նոր արշավանքի եկան՝ իրենց տիրապե-

---

1. Նույն, հ. չորրորդ, էջ 249։
2. Նույն տեղում։

տությունը վերահաստատելու Այսրկովկասի վրա։ Իբրահիմ խանը, մոռացած դաշնագրում տված իր երդում-խոստումները, պատրաստվեց ընդունել իր վաղեմի հովանավորին, նորից մտնել նրա հպատակության տակ, օգնել վերջ տալու *«անհավատ ռուսների»* տիրապետությանը։ Այսմանը տեսնելով՝ Ցիցիանովը հիշեց Արցախի հայերին եւ *«եղբայրական»* կոչով դիմեց նրանց. *«Ինձ հայտնի է ձեր վաղեմի քաջությունը, ուստի եւ կանչում եմ ձեզ՝ մեծ եւ ամենազոր թագավոր կայսրի սրբազան անունով միանալ նրա մեծափառ եւ անպարտելի համառուսական զինվորներին՝ ընդդեմ պարսկական զորքերի, որոնք ձեռնարկել են ավերելու Ղարաբաղ երկիրը եւ հափշտակելու ձեր ամեն մեկիդ անձնական կայքը։ Ձեզանից պահանջված ամբողջ օգնությունը կլինի այն, որ մինչեւ ռուսական անպարտելի զորքերը կկոտորեն թշնամուն, դուք թիկունքից խփեք նրան ձեր հեծելազորով եւ փախչողին կհարվածեք ու կոչնչացնեք։ Այս բանի համար ուղարկում եմ ձեզ մոտ, զորքերի նոր ուժեղացումով քաջ եւ հրացանի տակ մազերը ճերմակած, ռուս զորքերի զնդապետ Կարյագինին եւ նորից կոչ եմ անում ձեզ աջակցել նրան պատերազմական գործողությունների մեջ։ Ուշքի՜ եկեք, ներշնչվեցեք ձեր նախկին քաջությամբ, պատրաստ եղեք այս տարվա հաղթություններին եւ ռուսական զորքերի ուժեղ օգնությամբ ցույց տվեք, որ դուք այժմ էլ նույն քաջ ղարաբաղցի հայերն եք, ինչպես առաջ եղել եք ահարկու պարսկական հեծելազորի համար»*[1]։

Արցախահայերն, իհարկե, նորից նետվեցին պատերազմի, Կարյագինի եւ մյուս ռուս զորապետների հետ միասին կռվեցին թշնամու դեմ, հաջության նորանոր ապացույցներ տվին, նվիրվածության այնպիսի օրինակներ, որ պիտի մտնեին ռուսաց արշավանքների պատմության մեջ, փառաբանվեին հենց իրենց՝ ռուս պատմաբանների կողմից։

Իսկ Իբրահիմ խանի ցեղակիցները 1806 թ. փետրվարի 8-ին Բաքվում դավադրաբար սպանեցին Ցիցիանովին, կտրած գլուխը նվեր տարան Պարսից զահաժառանգ Աբաս-Միրզային։

Նույն տարվա (1806) մայիսին էլ Իբրահիմն իր զառամյալ ոսկորները հարշ տալով՝ Շուշվա ապարանքից դուրս էր եկել, որ պարսից զորքերին դիմավորի, համբուրի նրանց հաղթական դրոշի փեշերը։ Եվ «խանի բաղ» կոչված ձորում նրան հետապնդող ռուս զինվորներն սպանեցին երդմնուրաց խանին ու նրան ուղեկցող հարազատներին։

Այսմանից հետո էր, որ նրա որդի Մեհթի-ղուլին երդում-հավատով գնաց, ռուս հրամանատարության առաջ շողոքորթեց, դարձավ հոր խանական աթոռի ժառանգորդը եւ, շատ չանցած, ուխտադրժությամբ ու երկերեսանությամբ ապացուցեց, որ հոր

1 "Акты Кавказской археологической комиссии", т. II, Тифлис, 1868, док. No 1714.

հարազատ որդին է. Պարսից արքունիքի հետ սերտ կապեր էր պաշտպանում՝ այնտեղ փախած իր եղբայր Աբուլ-ֆետ խանի միջոցով, իսկ ռուսներին ցույց էր տալիս, թե հավատարմորեն պիտի ծառայի մինչեւ վերջին շունչը: *«Հավատարմությունն»* էլ ապացուցեց նրանով, որ ռուս-պարսկական վերջին ու վճռական պատերազմից առաջ արդեն փախել էր Պարսկաստան եւ տմբանում էր շահի հովանու տակ:

Իսկ հայ մելիքնե՞ր: Նրանք դեռ պիտի կռվեին Ռուսաստանի տիրապետության հաստատման համար, դեռ իրենց բաջությամբ ու հավատարմությամբ ռուս զորավարներին պիտի ցույց տային, թե ի՞նչ հրաշքների է ընդունակ Արցախական աշխարհի տերը, եթե խնդիր ունի պաշտպանելու իր հայրենի հողը եւ հաստատելու նրա վրա ազատ ապրելու սեփական իրավունքը:

Դեռեւս 1806 թ. Պետերբուրգից մեծահարուստ, Լազարյան հոչակավոր գերդաստանի ներկայացուցիչ Մինաս-աղա Լազարյանը մի գրությամբ Արցախի մելիքներին հանձնարարում էր դիմել Ցիցիանովի տեղը նշանակված կոմս Իվան Գուդովիչին եւ հայտնել իրենց խնդիրքն ու պահանջը, հայության նկատառումները սեփական երկրի ապագայի վերաբերյալ: Եվ, ահա՛, անցյալ երկար փորձություններից ու ծանր փորձանքներից դաս առած մելիքները, երեւի վերջին անգամ իրար եկած ու միավորված, հենց իրեն՝ Մինաս-աղա Լազարյանին գրեցին մի նամակ-պատասխան, որ շատ է խոսուն, մանավանդ շատ է բնորոշում իրենց՝ այլեւս սուտ խոստումներին չհավատացող, սակայն հոգու խորքում դարձյալ ինչ-որ լույսի շող պահած մարդկանց: Ո՛չ, ասում են, մենք չենք կարող դիմել ուղիղ Գուդովիչին, որովհետեւ նա խանին է լսում եւ ոչ թե մեզ, եթե կարող ես, դու ինքդ՝ ցարի գերդաստանի հետ կապ ունեցող մարդ, այդտե՛ղ խոսիր, պայմանավորվիր, որպեսզի հնարավորություն տան՝ մեր հայրենի, ավանդական հողի վրա հավաքելու խանի խարդավանքների պատճառով ցրված, թափառական դարձած մեր ժողովուրդը, *«որպեսզի մենք ազատվենք խանի իշխանությունից եւ որպեսզի մեր ժողովուրդը բաժանվի թուրքերից... եւ, երրորդ, որպեսզի մեզ շնորհվի, ինչպես այդ խոստացված է եղել վաղ ժամանակներից, նույն ամենաողորմած արտոնությունը..., որպեսզի մեր իրավունքը եւ դատավարությունը հիմնված լինեն մեր նախնիների սովորույթի եւ ավանդությունների վրա... Եվ եթե մեզ արված կլինի այսպիսի արտոնություն..., այն ժամանակ կտեսնեք, թե ինչի՞ ենք ընդունակ մենք, եւ թե ինչպիսի՞ն է մեր ազգի քաջությունը»*:

Նամակն ստորագրել են.

«Փոխգնդապետ եւ Վարանդայի տեր մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյան,

Գյուլիստանի տերեր՝ մելիք Բաղր եւ մելիք Աբով Մելիք-Բեգլարյան, Մելիք-Հովհաննիսյաններ,

Խաչենի տեր մելիք Ալահվերդի Մելիք-Միրզախանյան,

Ջրաբերդի տեր մելիք Հաթամ Մելիք-Մեժումյան,

Դիզակի տեր մելիք Ղահրաման Մելիք-Ավանյանը[1]:

Սա երեւի թե Արցախական աշխարհի մելիքների վերջին համախոսականն էր, որ արտացոլում էր նրանց միասնության պատկերը, արտահայտում նրանց կամքը, երկրամասի ազատության ու ինքնուրույնության վճիռը, նաեւ երազանքը:

Դրան հետեւելու էր ռուս պաշտոնեության դաժան տիրապետությունը, որի ամենակարող լծակներն էին կամայականությունը, կաշառակերությունը, մեծապետական արհամարհանքն այլազգիների հանդեպ:

* * *

Քուրակչայի դաշնագրից հետո եւս եղան մեծ ու փոքր բախումներ ռուսների եւ պարսիկների, ռուսների ու թուրքերի միջեւ: Տարբեր շրջաններ ձեռքից ձեռք էին անցնում, մինչեւ որ Նապոլեոնի դեմ հայրենական պատերազմը շահած ռուսական զորքը վերստին իր դեմքը շրջեց դեպի հարավ, եւ Ղարաբաղի Գյուլիստան բերդավանում 1813 թ. կնքված հաշտության պայմանագրով Պարսկաստանը մեկընդմիշտ ճանաչեց Ղարաբաղի հարավային սահմանից՝ Արաքսի ափից մինչեւ Դերբենդ ընկած ամբողջ տարածքի, ինչպես նաեւ Լոռու, Փամբակի, Շորագյալի, Շամշադինի ու Զանգեզուրի գրավումը Ռուսաստանի կողմից:

Սրանով, իհարկե, Հայաստանի ու հայ ժողովրդի հարցը վերջնական լուծում չընտացավ, քանի որ, նախ՝ դեռեւս ռուսական տիրապետությունից դուրս էին մնում Արարատյան կամ Երեւանի նահանգն ու Նախիջեւանի մարզը, ապա՝ Պարսից արքունիքը որոնում էր նոր բորբոքելիք մի պատերազմ, որով հույս ուներ նորից իր ձեռքը ձգել Այսրկովկասյան այն մարզերը, որոնք ստիպված էր եղել զիջելու Ռուսաստանին:

Այդ պատերազմը շատ չուշացավ:

1826 թ. հուլիսի կեսին պարսկական բազմաթանակ զորքերը խուժել էին Ղարաբաղ, Շորագյալի ու Փամբակի շրջանները, եւ սկսվեց ռուս-պարսկական երկրորդ մեծ պատերազմը:

Պարսիկ բռնագրավիչների առաջին խնդիրն էր պաշարել Ղարաբաղի սիրտը՝ Շուշի բերդաքաղաքը, որի բնակչության մեծամասնությունը հայերն էին կազմում: Շուշիի բնակիչներն առաջին իսկ օրից ռուսական կայազորի հետ միասին խիզախ պաշտպանության անցան: Պարսկական հարձակումից ոգեւորված՝ Երեւանի ու Նախիջեւանի խաներն էլ հարձակվեցին շրջակայքի հայկական գավառների վրա, կողոպտեցին ու ավերեցին Փոքրիկ Ղարաքիլիսան, Շիրակի, Զանգեզուրի ու Լոռու բազմաթիվ գյուղեր:

Պարսկական զորաբանակը հիմնականում զբաղված էր Շուշիի ու Գանձակ-Ելիզա-

---

1 "Кавказская старина", Тифлис, 1872, с. 40-41.

վետպոլի նվաճման գործով։ Երկրորդն ընկավ կաճ ժամանակում։ Իսկ Շուշին պաշտպանող 1700 ռուս զինվորները, հայ բնակիչներն ու հարեւան գյուղերից հավաքված հայկական աշխարհազորայինները շուրջ մեկ ու կես ամիս հերոսաբար պաշտպանվեցին պարսիկ գահաժառանգ Աբաս-Միրզայի մեծաքանակ զորքերից։

Այս պաշտպանության ընթացքում հայերի ցուցաբերած անձնվիրության մասին բերդապահ ռուսական կայազորի պետ Ռեուտը գեներալ Երմոլովին գրել է. *«Բերդը պաշտպանող հայերի վերաբերյալ պարտքս եմ համարում բացատրել, որ նրանց ծառայությունն արժանի է ամենայն ուշադրության, որովհետեւ նրանք անխտիր գործում էին գերազանց քաջությամբ, դիմացան բազմաթիվ գրոհների, եւ մոտեցին թշնամուն՝ պատճառելով խոշոր կորուստներ, արհամարհում էին պարենի պակասը եւ բնավ չէին մտածում բերդը հանձնելու մասին, թեեւ վրա էր հասել կատարյալ սովը»*[1]։

Շուշիի հերոսական պաշտպանությունն ու Շիրակ-Լոռի-Փամբակի ճակատամարտերը կլանել էին պարսկական զորքերին՝ Թիֆլիսում ու մյուս կենտրոններում տեղակայված ռուս կայազորին հնարավորություն տալով ի մի հավաքվել, կենտրոնանալ եւ լրացուցիչ զինական ուժեր ստանալ Ռուսաստանից՝ բախտորոշ ճակատամարտի նետվելու համար։ Այժմ արդեն հարձակում պիտի սկսեր ռուսական զորքը, որի հրամանատարն էր գեներալ-ադյուտանտ Ալեքսեյ Երմոլովը, եւ նրա օգնականն էր հայազգի գեներալ-լեյտենանտ Վալերիան (Ռոստոմ) Մադաթովը։

1826 թ. սեպտեմբերից սկսած ռուսներն ու նրանց ամեն ինչով օգնող այսրկովկասցիները ռազմաճակատի բոլոր կետերում ջարդ էին տալիս պարսիկ զորքերին։ Այդ հաջողություններից առաջինը Շամքորի ճակատամարտն էր, որով 2000 ռուս զինվորներ, Մադաթովի գլխավորությամբ, ջախջախեցին տասհազարանոց պարսկական բանակը եւ առաջ շարժվելով՝ նվաճեցին Գանձակ-Ելիզավետպոլը։

Հաջողությունն էր ուղեկցում նաեւ ռազմաճակատի մյուս կետերում մարտնչող ռուսներին ու աշխարհազորայիններին։ Նրանք իրար ետեւից գրավում էին պարսիկներին անցած բնակավայրերը, ազատագրում բնակչությանը։

1827 թ. հոկտեմբերի 1-ը նշանավորվեց որպես Երեւանի ազատագրության օր։ Այդ առթիվ թողարկվեց հատուկ կրծքանշան, որով պարգեւատրվեցին Երեւանի գրավմանը մասնակցած հազարավոր զինվորականներ ու հասարակ աշխատավորներ։

Երեւանի ազատագրումը ցնծությամբ լցրեց բոլոր հայերի սրտերը։ Այդ մեծ հաղթանակի ականատես Խ. Աբովյանը գրել է, թե *«... ժողովրդի քանդվելը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երեւանու բերդի առնելը հայերի համար»։* Խանդավառությամբ էին համակվել նաեւ հայկական հեռու եւ մոտ գաղթավայրերը։ Հնդկահայ գաղութի ազատագրական տրամադրություններն արտահայտելով՝ Մեսրոպ Թաղիադյանը հեռու Կալկաթայից իր հայրենակիցներին շնորհավորում

1 В. Потто, Первые добровольцы Карабаха..., Тифлис, стр. 62.

էր. *«Աչքներդ լո՜ւյս, որ մեր քաղցր աշխարքն պարսից դառն չարչարանքներից ազատվեց»*։

Երեւանի ազատագրությունը հետագայում իրավացիորեն շատ բարձր է գնահատել Հովհաննես Թումանյանը։ *«Դրանով իսկ,- գրել է Թումանյանը,- Հայ ժողովուրդն ազատվում էր մի դժողքից, որ նրա համար ստեղծել էր պարսկական կոպիտ ու խավար բռնակալությունը, մի բռնակալություն, որի վայրագությունը ոչ մի սահման ու չափ չէր ճանաչում, ո՛չ օրենք, ո՛չ իրավունք, ո՛չ խրնդրանք, ո՛չ աղաչանք, ո՛չ կրոն, ո՛չ սրբություն, ո՛չ կայք, ո՛չ կյանք, ո՛չ կին, ո՛չ պատիվ, ո՛չ ամոթ, ո՛չ խղճմտանք... Եվ այդ դժողքի միջնաբերդը Երեւանն էր... Երեւանի առումով Ռուսաստանին միացավ Մասիսի էս կողմը գտնվող հայությունը, ու էդ օրվանից հայ ժողովրդի կյանքի ու պատմության մեջ բացվեց մի նոր շրջան»*։

1828 թ. փետրվարի 10 (22)-ին Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա, *Թուրքմենչայ* գյուղում, Ռուսաստանի եւ Իրանի միջեւ կնքվեց պայմանագիր, որով Ռուսաստանին անցան Երեւանի ու Նախիջեւանի նահանգները, եւ հարավում Ռուսական կայսրության պետական սահմանը հաստատվեց Արաքս գետի հոսանքով։ Այդ պայմանագրով՝ Պարսկաստանում բնակվող հայերին հնարավորություն էր տրվում վերադառնալ Հայաստան ու շենացնել հայաթափ դարձած հայրենի գավառները։

Պարսկաստանից հայրենիք վերադարձած հայության մի մասն էլ բնակություն հաստատեց Արցախի Ջրաբերդի գավառում՝ շենացնելով Թարթառի դաշտահովտի Մարաղա, Զայլու-Գետավան գյուղերը։

Այսպես փակվեց Արցախի ազատության ու անկախության համար մղված դժվար պայքարի շրջանը։ Այս բնաշխարհի հայությունը մեկընդմիշտ փրկվեց պարսիկ ու թուրք բռնակալների տիրապետությունից։ Սակայն ցարերի խոստացած անկախությունն այնպես էլ մնաց երազ։ Ավելին, կատարվեց առավել վատթարը՝ վերացվեց մելիքական կարգը՝ հայոց ազգային պետականության այդ վերջին բեկորը, որ նախընթացին ո՛չ Պարսից շահերն էին կարողացել, ո՛չ էլ նրա դրածո Շուշիի խանը։ Եվ որ դարձյալ շատ ցավալի էր, մելիքական տիրույթներին, ցարական իշխանությունների հովանավորությամբ, տեր էին դառնում խանի մերձավորներն ու ցեղակից զանազան ստահակներ։

Այս էր մելիքության ու նրա գլխավորած արցախահայության վարձատրությունն այն հավատարմության, անձնազոհ ծառայության ու զինակցության դիմաց, որ վայելել էին ցարերն ու նրանց ներկայացուցիչները։ Ռաֆֆին, որ գրել է մելիքության արդար ու ինքնավայել պատմությունը, զարմացած էր այս վերաբերմունքից եւ իրավացիորեն գրել է. *«Ռուսները Ղարաբաղի մելիքների ջանքերով տիրելով Ղարաբաղին, նույն մելիքների վաղեմի թշնամի Իբրահիմ խանին թողեցին որպես այդ երկրի գլխավոր կառավարիչ։ Իբրահիմ խանը զավաճանեց ռուսներին եւ ապանվեցավ։ Նրա տեղը նշանակեցին զավաճանի մեծ որդի Մեհտի խանին, ավելի ընդարձակ իրավունքներով. դա եւս ավելի մեծ զավա-*

ճանություն գործեց. 1822 թվին Ղարաբաղից փախավ Պարսկաստան եւ պարսից զորքերի հետ վերադառնալով, սկսեց պատերազմել ռուսների հետ։ Անհասկանալի է, թե նույն ժամանակվա ռուսաց պաշտոնակալները ի՞նչ էին գտնում այդ նենգավոր խաների մեջ, որ նրանց գերադասում էին հայոց մելիքներից, որոնք ամենայն զոհաբերությամբ անձնատուր էին եղած Ռուսաստանին»։

Ինչեւէ, երախտագիտությամբ փակենք Արցախի մելիքության կենսագրությունը եւ փառք տանք մեր նակատագրին, որ այն կար, պահեց ժողովուրդն ու հողը։

Դիզակի մելիք Եգանի այն ինքնազնահատականը, թե *«Ես թողեցի՛ ոչ Հայաստանաս եսիր տարու»*,- միայն գեղեցիկ խոսք չէ, որ հանախ զարդարում է այս կամ այն գործչին։ Դա արդար գնահատականն է մելիք Եգանի ու նրա փառավոր դասակիցների գերմարդկային ջանքերի, միաժամանակ, եւ, վերջապես, ինքնահանգստացման այն հպարտ գիտակցությունը, թե իրենց՝ այդ անվեհեր մարդկանց, հաջողվեց կատարել գերմարդկայինը, սովորական մահկանացուի ուժերից վեր, անեզրորեն հերոսականն ու հայրենասիրականը՝ մի դարում, երբ հերոսությունը գործվում էր ոչ միայն ռազմի դաշտում, այլեւ հարեւան բռնատիրությունների եւ ներքին չար ու բարի ուժերի հյուսած քառսի մեջ, քաղաքական ու դիվանագիտական մշուշոտ խաչուղիներում։

«Ես թողեցի՛ ոչ Հայաստանաս եսիր տարու»։ Սա սրբազան խոստովանանք է ու ինքնազնահատականի հպարտ կանչ եւ զարդարում է նակատն այն հերոսապատումի, որ գրեցին հայ մելիքներն ու նրանց անվեհեր զինվորությունը իրենց դառն ու դժվար դարում։

ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ (1805-1917 թթ.)

ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՈՒԹԱԿԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ցարական Ռուսաստանն Այսրկովկասի նվաճումով ոչ միայն մեկընդմիշտ մոռացավ հայերին խոստացած ինքնավարության, հայկական հողերը միավորելու եւ նրման ուրիշ անուշ-անուշ խոստումները, մանավանդ Ղարաբաղի մելիքներին տված այնքան սրտագրավ բարեկամությունը, այլեւ ամեն միջոց գործադրեց՝ բաժան-բաժան անելու նույնիսկ Արեւելահայաստանի տարածքը, այնպես իրարից հեռացնելու նրա առանձին մասերը, որպեսզի ոչնչով չհիշվի ամբողջականությունը: 1828 թ. մարտի 21-ին ցար Նիկոլայ Ա-ի հրամանագրով, իբր, ստեղծվել էր Հայկական մարզ, որը, սակայն, ընդգրկում էր միայն Երեւանի ու Նախիջեւանի նահանգները: Ամենակարեւորը՝ մարզի վարչական կազմում լոկ մեկ ներկայացուցիչ ուներ հայ վերնախավը, երբ Նախիջեւանի եւ առհասարակ մարզի մահմեդականներն իրենք էին իրենց կառավարում: Երեւի ղեկավարության մեջ մեկ ներկայացուցիչ ունենալը եւս մեծ զիջում էր համարվում հայերի համար. 1840-ի ապրիլի 10-ի օրինագծով Հայկական մարզն էլ վերացվեց, եւ նրան պատկանած տարածքները, վրացական տարբեր նահանգների հետ միասին, մտցվեցին, այսպես կոչված, Վրացա-Իմերեթական միավորի մեջ, իսկ Ղարաբաղը մտցվեց Արեւելյան Այսրկովկասն ընդգրկող, այսպես կոչված, Կասպիական մարզի մեջ՝ Շամախի կենտրոնով:

Այս բզկտված Հայաստանն, այնուամենայնիվ, մի առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնում էր Ռուսաստանի համար. հայության զգալի մասը գտնվում էր հարավի սահմանակից երկրներում, մանավանդ Թուրքիայում եւ անպայման կարող էր օգտակար լինել այդ երկրներում ապագային ձեռնարկելիք դիվանագիտական

ու քաղաքական խաղերի մեջ։ Ցարական արքունիքը տեղյակ էր հայ ժողովրդի կյանքում եկեղեցու ունեցած դերի, միավորող ուժի ու հնարավորությունների մասին եւ, եկեղեցուն սիրաշահելու նպատակով, 1836 թ. ընդունեց նրա գործունեությունը պետական կարգ ու կանոնի տակ առնող ընդարձակ մի օրենք (կանոնադրություն), որը հայտնի է «Պոլոժենիե» անունով։

«Պոլոժենիեն» բավական լայն ազատություն էր տալիս հայ եկեղեցուն, նրա իրավասության տակ դնում ժողովրդական լուսավորության գործը՝ դրա հետ առնչվող բազմաթիվ օղակներով։

«Պոլոժենիեն» ինչ-որ չափով Արցախ-Ղարաբաղը կապեց Հայաստանին, որովհետեւ նախապես վերացված Գանձասարի կաթողիկոսությանը ենթակա ամբողջ թեմը (այժմ մետրոպոլիտություն) ենթակա էր դարձնում Ամենայն Հայոց Մայր աթոռին։

Հայաստանի, ուրեմն եւ Արցախ-Ղարաբաղի, Ռուսաստանին միացնելու հանգամանքները բնված մեր հետազոտողները մինչեւ այժմ փառաբանել-դրոշի վրա են բարձրացրել մի շարք խնդիրներ՝ իրավացի ու անիրավ։ Կարեւորն այն է, որ ճակատագրական այդ միջոցառումը մեկընդմիշտ լուծում էր Ռուսական կայսրությանը միացած հայկական շրջանների բնակչության ֆիզիկական գոյության հարցը։ Մինչդեռ այդ անհնար էր պատկերացնել պարսկական, առավել եւս՝ թուրքական տիրապետության պայմաններում։

Այսքան բան, մնացածը պատրանք էր, եւ դա չուշացավ երեւալ իր ամբողջ ահագնությամբ։ Եթե մի կողմ էլ դնենք վարչաքաղաքական ինքնավարությունը, որի մասին ռուսական պաշտոնեությունն այնպես մոռացավ, ասես ինքն ու իր ցարերը չէին, որ ո՛չ վաղ անցյալում այնքան առատաձեռն բաժին էին հանում Ղարաբաղի մելիքներին։ Իսկ գյուղի աշխատավորության վիճա՞կը։ Ճորտության կարգն իր երկրում այնպես դաժանորեն կիրառող բռնագրավիչն ինչպե՞ս պիտի հարգեր նվաճած երկրի գյուղացու իրավունքները։ Եվ միանգամայն բնական էր, որ Ղարաբաղին տեր դառնալուց հետո նրա գյուղացիության բախտի տնօրինությունը նախ հանձնեց Փանահ խանի հետնորդների արյունոտ ձեռքը, իսկ նրանց սեւ դավաճանությունից ու արժանի վախճանից հետո էլ հանձնեց սեփական չինովնիկներին, որոնք ոչնչով բարի չէին, ասենք, Մեհտի-Ղուլի խանից կամ նրա ցեղակից այս ու այն բեկից։

Արցախի գյուղացիության վիճակն այնքան ծանր չէր եղել երբեք, որքան ռուսական տիրապետության հաստատումից հետո ասպարեզում հայտնված ինքնակոչ թորք բեկերի ու աղալարների օրոք։ Խանի հարազատներն ու մերձավորները կաշառքով ռուս իշխանավորներից իրավունք էին ստացել տեր դառնալ հայ գյուղերում եւ, ժամանակավոր տիրությունից առավելագույն օգուտը քաղելու համար, կատարում էին ամենայն վայրագություն։

Մելիքության շրջանում գյուղացին ենթարկվում էր միայն իր մելիքի կարգ ու կանոններին եւ պաշտպանված էր ուրիշ ամեն տեսակ ճնշումից։ Մելիքն էլ շահագրգռված էր սեփական շինականների բարեկեցությամբ, նրանց տնտեսական հզորությամբ, որովհետեւ ստեղծված էր նահապետական մի կենցաղավարություն, որով մելիքն իր

գավառի ոչ միայն տերն էր, այլեւ հոգատար հայրը։

Ռուսական տիրապետությունն սկզբում այնքան էլ սարսափելի չէր՝ թերեւս այն պատճառով, որ բարձր իշխանության ներկայացուցիչներն ու նրանց տեղական գործակիցները դեռեւս իրար հետ լեզու չէին գտել, հանցավոր գործակցության մեջ ձեռք ձեռքի տված չէին։ Հայտնի է, օրինակ, որ 1821 թ., երբ Ամենայն Հայոց կաթողիկոսությունը պարսից իշխանության ներքո հյուծվում էր ահռելի տուրքերից ու ճնշումներից, Եփրեմ կաթողիկոսը զզված թողեց Մայր աթոռը, տեղափոխվեց Շուշի, այնտեղ, ինչպես նաեւ գավառներում համեմատաբար բարվոք ապրող ազգակիցներից մի պատկառելի գումար հավաքեց, որ տանի, էջմիածինը փրկի տնտեսական աղետալի դրությունից։

Սակայն շատ շուտով ռուս իշխանության ներկայացուցիչները, որ սովորաբար հեշտությամբ տրվում են կաշառակերության եւ ուրիշ ստոր գործարքների, մերվեցին իրենց ընդունած կամ նոր կարգած տեղական ազնվականների հետ եւ օրենքն ու մարդկային բարոյականության նորմերը մոռացան։

Հիմա կաշառքով եւ ուրիշ ամեն տեսակ միջոցներով կամ հենց պատահաբար այս ու այն գյուղի տեր դարձած օտար, մեծ մասամբ թորք մեկը, պարզ է, մելիքի պես իրեն մշտական տեր ու պատասխանատու չէր կարող զգալ եւ անխղճորեն շահագործում էր իր իրավասությանը հանձնված գյուղացուն, քամում նրա վերջին հնարավորությունները։

Դրանցից ավելի տանելի չէին եւ գավառի կամ նահանգի տեր կարգած ռուս իշխանավորները, որոնք գյուղապետ-բեկերից կաշառված, հանդուրժում էին նրանց կողոպուտն ու բռնությունը։ Ղարաբաղի, Շաքիի ու Շիրվանի ռազմաշրջանային վարչության գլխավոր եղած ժամանակ գեներալ Մադաթովն անօրինություններ շատ էր արել (հայտնի է, որ նա նույնիսկ իր հարազատ Վարանդայի շատ գյուղեր հանձնել էր Շուշիի տեր Մեհտի-Ղուլիին եւ նրա զիշատիչ հարազատներին, որովհետեւ փափուկ-փափուկ կաշառք էր ընդունել)։ Մադաթովը հայերի նկատմամբ ոչ այնքան բարյացակամ Երմոլովի մարդն էր։ Հայաստանը վերջնականապես Ռուսաստանին միացնելուց հետո Կովկասի տեր դարձած գեներալ Պասկեւիչը, իբրեւ շահամոլ մարդու, Մադաթովին հեռացրեց եւ նրա տեղ նշանակեց իր հավանած իշխան Աբխազովին։ Սակայն սա եւս, դարձյալ կաշառակերությամբ եւ զանազան կեղծարարություններով գյուղացիությանն այն սեւ օրին հասցրեց, որ լուրը հասավ վերեւներ, եւ Պասկեւիչն ստիպված եղավ իր պաշտոնյաներից մեկին՝ ինչ-որ Զուբարյովի ուղարկել Ղարաբաղ, որպեսզի քննի, պարզի վիճակը։ Սա էլ քննեց-պարզեց, ապա Պասկեւիչին գրավոր զեկուցեց, որ Աբխազովն ու նրա ստորադաս պաշտոնյաները, որ մեծ մասամբ մահմեդականներ են՝ կաշառքով դիրքի ու պաշտոնի հասած, մարզի արքունական հողերը բաժանել են իրենց միջեւ, նույնիսկ պետական գումարներ են խժռում, իսկ գյուղացուն կողոպտում են մինչեւ ունեցվածքի վերջին մնացորդը։ Աբխազովը Շուշիում էլ քաղաքային դատարանի գլխավոր էր նշանակել մի կապիտան Միրզա-Ադիգյոզալովի, որի կամայական ու անհեթեթ վճիռները սովորաբար լինում էին ապօրինի, ոտնահարում էին ժողովրդի, մանավանդ հայ մարդկանց շահերը։ Եվ այսքանից հետո էլ Ադիգյոզալովը

վրդի, մանավանդ հայ մարդկանց շահերը։ Եվ այսմանից հետո էլ Ադիգյոզալովը հովանավորում էր ցեղակից ավազակներին ու սրանց տարբեր խմբերին, որոնց միջոցով սարսափի մեջ էր պահում հայ գյուղացիությանը։ Եվ այստեղից էլ թորք բեկերի, աղալարների, առհասարակ թրքության կամայականությունները, որոնց դեմ ոչինչ չէին կարող անել հայ իրավազուրկ մարդիկ։

Զուբարյովը նշում էր, որ հայերը պաշտպանված չեն նաեւ արյունակիցների անարդարություններից։ Նկարագրում էր Կաղարծի գյուղում տիրություն անող մի նոր Մելիք-Շահնազարյանի (խուդադատ՝ Մելիք-Շահնազարի որդին), որի անսանձ բռնություններից, ծեծ ու զզվոտուքից փրկություն չունեն մարդիկ։ Այս չարագործն իր տնօրինությանը հանձնված գյուղում նորապսակ մի զույգից պահանջել էր հարսի առաջին գիշերվա իրավունքը։

Անհնար էր տանել նման վիճակը։ Եվ հայ գյուղացիությունն այս ու այնտեղ ընդվզում էր իշխողների դեմ, իր դժգոհությունն ու զայրույթն արտահայտում տարերային անկազմակերպ պայքարի ձեւով։ Այդպիսի ընդվզումներ էին արձանագրվել Վերին Թաղավարդ (Զարդանաշեն) գյուղում, Դիզակի Բանաձորում։ Առաջինում գյուղապետ Հովսեփ բեկ Մադաթյանի պահանջով եկած ոստիկանները ձերբակալեցին ըմբոստ գյուղացիներից մի քանիսին։ Իսկ երբ այս մասին գյուղամիջում դժգոհությամբ խոսեց քահանա Տեր-Բարսեղյանը, հիմա էլ նրան եւ ունկնդիրներին ձերբակալեցին, մեկ տարով ամսորեցին Թիֆլիսի կողմերը։

Բանաձորի դեպքը տեղի էր ունեցել 1842 թ.։ Գյուղը ոտքի էր կանգնել կալվածատեր զնդապետ Զաֆար-Ղուլի աղայի դեմ՝ պահանջելով, որ նա խղճմտանքով վերաբերվի շինականին, թեթեւացնի հարկերը։ Եվ որովհետեւ գյուղացիությունը տրամադիր էր հարցը լուծել խաղաղ ճանապարհով, մի փոքրիկ խումբ նրա մոտ էր ուղարկել փիլոնավոր քահանա Մինաս Միրզաբեկյանի գլխավորությամբ։ Ասում են՝ Շուշիի խաների ժառանգ Զաֆար-Ղուլին կատաղել էր շինականի այս հանդգնության վրա, կարգադրել, որ քահանայի փիլոնը գցեն իր շան մեջքին եւ գյուղացիներից էլ պահանջել, որ երկրպագեն *«փիլոնավոր»* շանը։ Այս պատմությունը քննության առարկա դարձավ զավառական իշխանության համար։ Գյուղացիներին մեղադրեցին *«սպառամբական»* տրամադրության համար, եւ վարկաբեկված քահանան ու մի քանի հետեւորդներ էլ տարբեր պատիժների արժանացան։

Այս էր հավատակից ռուսական իշխանության պատասխանը հայ գյուղացու արդար բողոքին ու կրած կրոնական վիրավորանքին։

ՇՈՒՇԻ՝ - ՇՈՒՇԻ՝

Ռուսաց տիրապետության մեկ դարն Արցախում նախ եւ առաջ նրա կենտրոն Շուշիի ծաղկման ու բարգավաճման շրջանն էր՝ ողբերգական վախճանով[1]։

---

1 Այս ենթագլուխը շարադրելիս մեծապես օգտվել ենք Լեոյի «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի» (Թիֆլիս, 1914) գրքից։

Ծաղկումն անկասկած պայմանավորված էր արեւելահայկական այլեւայլ գավառների բնակչության վարար ներհոսքով։ Խանն իր ցեղակիցներին քշել-բերել էր, դարձրել նրա բնակիչները։ Սակայն սրանք նոր միայն նստակեցության դարձած այն քոչվորներն էին, որոնք ոչ մի կապ չունեին քաղաքակրթության հետ։ Իսկ հայերը՝ մեծ մասամբ արհեստավորներ ու առեւտրականներ, անմիջապես գույն էին տալիս հին բերդի նոր կենցաղին, պայմանավորում նրա զարգացումը, օրեցոր ծաղկող քաղաքը կապում արտաքին աշխարհի հետ, ներմուծում քաղաքակրթական-մշակութային այնպիսի նորույթներ, որոնք պիտի որոշեին քաղաքի դեմքը, այն դարձնեին Այսրկովկասի երկու-երեք լավագույն կենտրոններից մեկը։

Ճիշտ է, այստեղի հայ բնակչությունը ներկայացնում էր Արեւելյան Հայաստանի համարյա բոլոր գավառները։ Սակայն մեծազանգված ներհոսք եղավ երեք ամենակարեւոր կետերից, որոնք եւ իրենց խոսքը պիտի ասեին քաղաքի հայաշունչ կյանքի ընթացքի մեջ։ Դրանք էին՝ Մեղրին, Ագուլիսը եւ Նուխի-Շաքիի Ղազանչի ավանը։ Այս երեք կետերի հայ զանգվածները հայրենի բնակավայրերը թողել էին՝ զզված խաների բռնություններից եւ, այստեղ կազմելով իրենց առանձին թաղերը, նույնիսկ կառուցելով իրենց թաղային եկեղեցիները (Ագուլեցոց, Մեղրեցոց եւ Ղազանչեցոց), այնուամենայնիվ, ձուլվեցին տեղաբնիկների ու առհասարակ Ղարաբաղի տարբեր վայրերից հավաքվածների հետ, ստեղծեցին Շուշիի հայության այն զարմանահրաշ համաձուլվածքը, որ շատ շուտով հայտնի պիտի դառնար իր կիսաքաղաքային-կիսագեղջկական նիստ ու կացով, նահապետականից այնքան էլ չհեռացած բարոյական ըմբռնումներով, համահայկական մշակութային-լուսավորական պատկերին իր ինքնատիպ գույներն ավելացնելու արդյունավետ ջանքերով։

1821 թ. Շուշի գալով կաթողիկոսական պատվիրակության կազմում Մեսրոպ Թաղիադյանը տեսավ այսքանը եւ արձանագրեց՝ Շուշիի համար կանխատեսելով մի ավելի պայծառ հեռանկար։ Այն ժամանակ նրա ճանաչած շուշեցի մեծահարուստներն արդեն առեւտրական ու արտադրական հարաբերություններ ունեին Արեւելքի ու Արեւմուտքի հետ, իսկ Ռուսաստանի կենտրոններում իրենց գործն էին անում՝ որպես իրենց տանը։ Մարկոս Թառումյանցը, որ գլխավորում էր Կասպիականի ձկնորսության բնագավառը եւ առեւտուր ուներ աշխարհի չորս ծագերում, ասում են, մեռնելուց առաջ հայրենակիցներին տված բոլոր պարտքերի թղթերը մի տեղ է հավաքել-վառել, ապա կարգադրել, որ իր մահից հետո երկու պարկ ոսկի բաժանեն աղքատներին։

Թաղիադյանը զարմացած էր այսօրինակ փաստերով եւ մտածում էր, թե հայը բռնել է քաղաքակրթության ճանապարհը, բայց իր հետ ունի հինավուրց բարի ժամանակների սրբազան ավանդները. Մարկոս Թառումյանցին էին թաղում, սակայն ոնց որ Արտաշես Մեծ թագավորի ժամանակները լինեին...

Ուրեմն, Շուշին ուներ եկվորների կառուցած երեք նշանավոր եկեղեցիները՝ Մեղրեցոց, Ագուլեցոց, Ղազանչեցոց։ Բայց դրանից առաջ տեղացիներն էլ ունեցել էին իրենցը, որ կոչվում էր Քամու խաչ։ Կար նաեւ Կանանց ժամ, ինչպես նաեւ Ռուսաց եկեղեցի (սրանք բոլորն էլ, Ղազանչեցոց Ամենափրկիչ տաճարից բացի, ավերվել են թորքերի ձեռքով, մեծ մասը՝ 1960-ական թվականներին)։ Մահմեդականներն

էլ ունեին իրենց մզկիթը, որ գտնվում է իրենց թաղի եզրին, կենտրոնական շուկայի մոտ եւ այժմ էլ կանգուն է։

* * *

XIX դարում Շուշին կառուցապատվել է գլխավոր հատակագծով, որը կազմվել է 1820-ական թվականներին եւ վերակազմվել ու վերամշակվել 1837, 1884, 1885 թթ.։ Թորֆի թաղամասը, հիմնականում բաղկացած էր գլխատուն (դարադամ) կոչված բնակելիներից։ Հայկական բնակելի տների ճարտարապետությունը բազմազան էր, բազմակերպար։ Երկու-երեք հարկանի, կամարազարդ պատուհաններով ու դռներով, կոպտատաշ ու սրբատաշ ճերմակ քարերն իրար հանգուցող ծեփակարերով այդ առանձնատները նման չէին իրար, չէին կրկնում մեկմեկու ձեւերը, բայց եւ իրար հետ կապված էին արցախյան հինավուրց ճարտարապետության ընդհանրական ձեւերով։ Այստեղ ինքնատիպ ճարտարապետություն էր մշակվել նաեւ մեծազանգված հասարակական, մշակութային շենքերի համար։ Դպրոցների (Թեմական, Ռեալական), թատրոնի (մեծահարուստ Խանդամիրյանի կառուցած), գրադարանի շենքերն առանձնահատուկ շուք էին տալիս քաղաքին։ Սակայն քաղաքի ճարտարապետության թագն ու պսակը Ղազանչեցոց Ամենափրկիչ տաճարն էր (1868-87 թթ.), Էջմիածնի Մայր տաճարի ծավալատարածական հորինվածքով կառուցված հայկական խոշորագույն եկեղեցիներից մեկը, որն, առանց վարանումի, կարելի է դասել մեր ազգային քարարվեստի մեծ նվաճումների շարքը։

Շուշին համարյա չուներ արդյունաբերություն՝ այս բառի ժամանակակից իմաստով։ Եվայդ ֆոնի վրա նշանակալից երեւույթ էր մետաքսակարժական արտադրությունը, որ ստեղծվեց գավառներից ներմուծվող հումքի վրա, արագությամբ ձեռք բերեց մեծ համարում Ռուսաստանի ու եվրոպական ուրիշ երկրների շուկաներում։ Շուշիում եւ մի շարք գյուղերում (Քարինտակ, Խանքենդի, Հադրութ, Մարտակերտ եւն) արտադրված մետաքսեղենը բարձր էր գնահատվում ամենուրեք։

Լայն սպառում ունեին Շուշիի գորգագործների, այլազան արհեստավորների արտադրանքները, գավառներում պատրաստվող գինիները, թթի օղին, մրգեղենը։

Մեծ մշակույթը XIX դարում նոր միայն ոտք էր դնում հայկական աշխարհ, եւ նրա առաջին օջախներից մեկը դարձավ Շուշին։ Դարակեսից սկսած այստեղ թերթեր ու հանդեսներ էին տպագրվում։ Առաջիններից էին՝ գրական, կրոնական-մանկավարժական «Հայկական աշխարհը» (1864-71, 1874-79), «Գործը» (1882-1884), «Կռունկը» (1898-1900), «Ազգագրական հանդեսի» առաջին գիրքը (1895), «Ղարաբաղը» (1911-12), «Ծիածան» ամսագիրը (1916), «Փայլակը», «Նեցուկը», (1917), «Ապառաժը» (1917-1919), «Ղարաբաղի սուրհանդակը» (1919), «Նոր կյանքը» (1919) եւ այլ թերթեր։

Շուշին կենսական հզոր լիցքեր է հաղորդել ինչպես համահայկական, այնպես էլ Ադրբեջանի ժողովրդական երաժշտության զարգացմանը։ Այն հայ թատերական արվեստի կենսառատ օրրաններից մեկն էր։ 1865 թ. թիֆլիսահայ դերասաններ Գ.

Զմշկյանը, Մ. Ամրիկյանը, Ս. Մանդինյանը, տեղական ինքնագործ ուժերի հետ միասին, բեմադրել են «Վարդան Մամիկոնյան», «Շուշանիկ», «Շկոլի վարժապետը» եւն, որոնց օրինակով էլ հետագայում բեմադրվել են նաեւ տեղական բարբառով գրված պիեսներ (Տ. Նազարյանի «Ճրպատդ բոլադ կտրի», Կ. Մելիք-Շահնազարյանի «Տմբլաչի խաչանը» եւն)։ 1882-ի օգոստոսին այստեղ հյուրախաղերով հանդես է եկել Պետրոս Ադամյանը։ Նրան էլ հետեւել են Սիրանույշի, Հ. Աբելյանի, Սաֆրազյան ամուսինների եւլոց հյուրախաղերը։ Իսկ 1891-ից կանոնավոր գործել է խանդամիրյանի թատրոնը, որ ուներ իր թատերախումբը, հարմարավետ շենքը եւ հաճախ էլ հանդես էր գալիս գավառներում։

Քաղաքի լուսավորության գործով սկզբնական շրջանում եկեղեցիներն էին զբաղվում։ Մինչեւ որ եվրոպացիներն այնտեղ ոտք դրին եւ սկզբնավորեցին մի մեծ շարժում, որը պետք է ընդգրկեր ողջ Արցախը։

1823 թ. Շուշիում իրենց գործունեությունը ծավալեցին Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» ներկայացուցիչներ Ավգուստ Դիտրիխն ու Ֆիլիցիան Զարեմբան, որոնք նախ հայկական ու թորքի թաղերի սահմանագլխին ընդարձակ հողամաս գնեցին, կառուցեցին հարմարավետ մի շենք՝ ուսումնարանի, տպարանի ու մշակութային այլեւայլ միջոցառումների համար։ Զնայած նրանց հիմնական նպատակն էր բողոքական քարոզչությունը, լծվեցին քաղաքի լուսավորության հոգսերին եւ զգալի արդյունքների հասան։ 1827-ին նրանց բացած դպրոցում արդեն սովորում էին 130 մանուկներ՝ հիմնականում չքավորներից։ Ուսուցչություն էին անում նաեւ երկու հայեր։ Դասավանդումը կատարվում էր բավական լայն ծրագրով, իրենց իսկ տպագրած հայերեն դասագրքերով։ Սովորեցնում էին նաեւ ռուսերեն եւ որեւէ օտար լեզու։ Այս դպրոցն ավարտածներն էլ հետո իրենց դպրոցները բացեցին, երկուսը՝ քաղաքում, երեքը՝ գյուղերում։ ***«Լոկ կրոնական նպատակ ունեցող եվրոպացի բողոքականները հայ մատաղ սերնդին տալիս էին մի կրթություն, որ, կրոնական լինելով հանդերձ, ներկայացնում էր դաստիարակչական շատ գեղեցիկ նորույթ... եւ, այս տեսակետից, այն մոտավորապես նույն դերն էր կատարում, ինչ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը»*** (Լեո)։

Բազելի հոգեւորականներից վարակված՝ ռուսական իշխանությունները եւս, հենց Շուշիի օրինակով, գավառական կոչված պետական դպրոցներ բացեցին ամբողջ Այսրկովկասում, դրանցից մեկն էլ՝ Շուշիում։

Բազելի քարոզիչների գործի մի պատկառելի մասն էր կազմում հրատարակչությունը։ Շուշիում հիմնեցին տպարան, որը Կովկասում հայկական երկրորդ այդպիսի օջախն էր (առաջինը՝ Էջմիածնում)։ Այստեղ եւ Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանում բազելցիները ծավալեցին բավական օգտակար հրատարակչական գործ։ Լույս ընծայածներն աստվածաբանական ու բարոյագիտական հանրամատչելի, օգտակար բովանդակություն ունեին, իսկ ամենակարեւորը, դրանց մեծ մասն աշխարհաբար էր, եւ դրանով իսկ արեւելահայկական միջավայրում սկզբնավորվում էր աշխարհաբարի ուսուցումը։

Սակայն շատ չանցած (1835 թ.), իբր, հայ հոգեւորականներից ոմանց բողոքների համաձայն, ռուսական իշխանությունները բազելցիներին ազելեցին գործել Շուշիում: Սրանք 1837-ին գնացին, իսկ սկսած մշակութային շարժումը մնաց եւ ծավալվեց:

Բազելցիների հեռանալով Շուշիի եւ առհասարակ ողջ նահանգի մշակութային-լուսավորական կյանքը մտավ մի ուրիշ հուն՝ պայմանավորված ցարական իշխանության անմիջական միջամտությամբ: 1836 թ. մարտի 11-ին ընդունված «Պոլոժենիով» Ռուսաց Հայաստանում ստեղծվում էին վեց թեմեր, որոնցից մեկն էր Ղարաբաղինը՝ Ղարաբաղ նահանգի եւ Շաֆի ու Թալիշ գավառների ընդգրկումով: Հոգեւոր ու մշակութային կենտրոնն էր համարվում Շուշին: 1840 թ. հաշվառումով՝ թեմն ուներ երեք քաղաք՝ Շուշի, Նուխի, Լենքորան, 156 գյուղ եւ 7167 տուն հայ բնակչություն:

«Պոլոժենիեով» նոր թափ ստացավ թեմի հասարակական կյանքը: Մշակույթը, հատկապես լուսավորությունը, այլեւս անհատ սիրողների գործ չէր, այլ պիտի ուղղություն ստանար եւ առաջ գնար հատուկ մարմնի՝ եկեղեցու կողմից:

Ասպարեզի տերն էին դառնում ժամանակի առաջավոր, եռանդուն մի շարք գործիչներ, որոնց շնորհիվ Արցախական աշխարհը բռնում էր ճշմարիտ լուսավորության ուղին: Այդ գործիչների շարքում առաջին տեղն էր բռնում Հովսեփ Արցախեցին (Հովսեփ վարդապետ Տեր-Ավագյան), որ դպրոցներ ուներ Գանձասարում ու Սուրբ Հակոբա վանքում: Նրա դպրոցներից են ելել Արցախի այն ժամանակվա լավագույն հոգեւորականներն ու մտավոր գործիչները: Ինքը՝ Հովսեփ վարդապետը, թողել է ժամանակի համար բավական արժեքավոր գիտական գործեր, որոնցից տպագիր՝ «Համառօտ բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառն ի պէտս համբակաց» (1830, Շուշի), «Առաջին մասն փիլիսոփայութեան, որ ասի տրամաբանութիւն» (Շուշի, 1840), ձեռագիր՝ քերականության դասագիրք:

Հովսեփ վարդապետի նախաձեռնությամբ էր, որ բազելցիները դպրոցում ու հրատարակչական գործում նախապատվություն էին տալիս աշխարհաբար հայերենին, եւ դրա ապացույցն է նրա բառարանը՝ գրաբարից աշխարհաբար, որ շատ հետաքրքիր երեւույթ էր նաեւ գիտական առումով:

Հայտնի է մի այլ մանկավարժ գործիչ եւս՝ Պողոս վարդապետ Ղարաբաղցին, որ դպրոց ուներ Շուշիում, սակայն հայտնի էր նաեւ ուրիշ վայրերում կատարած եռանդուն մանկավարժական գործունեությամբ (նրա աշակերտներից էին Մեսրոպ Թաղիադյանը, Ստեփանոս Նազարյանը):

Սակայն ժամանակը, մինչեւ դարակես, իրենով լցրեց մշակութային մի ուրիշ գործիչ, որ բացառիկ էր գործնական հատկանիշներով, առաջադիմական տրամադրություններով եւ մարդկային այլեւայլ բարեմասնություններով: Դա հոգեւորական Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանն էր (ծնվ. 1775 թ. Վանք-Գանձասար գյուղ-մահ. 1854, Շուշի, թաղված է Գանձասարի վանքի բակում): Բաղդասարը, որ եղբորորդին էր Հովհաննես եւ Սարգիս ապաբախտ կաթողիկոսների եւ իր տոհմի հետ աստանդական էր դարձել Իբրահիմ խանի չարություններից, ուսում առավ Գանձակում, հոգեվոր կյանքի նվիրվեց, ապա ուսումը շարունակեց Թիֆլիսում, Սերովբե Պատկանյանի մոտ: 1808-ին եկավ Գանձասար, այն ամայացած գտնելով՝ լծվեց վերականգնմանն

ու շենացմանը։ Եվ կարճ ժամանակում ոչ միայն վանական համալիրը կարգի բերեց, այլեւ նրա ունեցվածքն ու կալվածքները փրկեց, վերադարձրեց վանքին։ Երբ ամեն ինչ կարգավորված էր, գրեց, որ Հաղբատում առաջնորդ մնացած հորեղբայրը գա։ Սա եկավ, դարձավ կաթողիկոս՝ Մեհտի-Ղուլի խանի պաշտպանությամբ, Էջմիածնի ընդդիմության պայմաններում։ Էջմիածինը շատ ջանքեր գործադրեց Գանձասարի կաթողիկոսությունը վերացնելու համար։ Այստեղ նրան օգնում էր Ներսես Աշտարակեցին՝ Ռուսաց արքունիքի համար բարձր մի հեղինակություն։ Եւ 1815-ին Սարգիսը զրկվեց կաթողիկոսի տիտղոսից, իրավունք ստացավ կոչվել մետրոպոլիտ։

1820-ին Էջմիածնից եպիսկոպոսության աստիճան ստացավ Բաղդասարը, իսկ 1830-ին դարձավ երկու տարի առաջ վախճանված հորեղբոր փոխանորդը՝ Գանձասարի մետրոպոլիտ, եւ սկսեց շինարարական, հոգեւոր ու լուսավորական մի գործունեություն, որին կնախանձեին իր տոհմի նախկին եռանդուն գործիչները։ Նախ Գանձասարի բակում երկհարկանի շենք կառուցեց եւ Հովսեփ Արցախեցու աջակցությամբ այն դարձրեց հոգեւոր դպրոց։

«Պոլոժենիեի» շնորհիվ Բաղդասար մետրոպոլիտը 1837-ին Գանձասարից փոխադրվեց Շուշի, այնտեղ ստեղծեց հոգեւոր կոնսիստորիա՝ ստանձնելով նրա նախագահի պաշտոնը։

Բաղդասար մետրոպոլիտն էր, որ գնեց բազելցիների տպարանը եւ հետագա տարիներին աշխատեցրեց անխափան։ Եվ նրա նախաձեռնությամբ տպագրված առաջին գիրքն էլ՝ Շիլլերի «Շիլիոնյան կալանավորն» էր (1837)։ Այստեղ է տպագրվել նաեւ Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմութիւնը...» (1839), իսկ հետագայում՝ «Մաշտոց», «Բերականութիւն համառօտ», «Տետր այբբենարան» եւն։

Բաղդասարին կոչում էին շինարար մետրոպոլիտ, որովհետեւ ամբողջ կյանքում շինարական գործով էր զբաղվել՝ ինչպես Շուշիում, այնպես էլ վանքերում։ Նա հենց միայն իր անձնական միջոցներից 5000 ռուբլի ծախսելով վերանորոգել-բարեկարգել է Գանձասարը, եւ սա մեծ գործ էր։

Իսկ այն ջանքե՞ր, որ մետրոպոլիտն էր նվիրում՝ վանքերին ու եկեղեցիներին վերադարձնելու նրանց հարստությունները, կալվածքները, շարժական ու անշարժ գույքը։ Հենց միայն Խութավանք-Դադիվանքի իրավունքների վերականգնման համար մղած կռիվը մի սխրագործություն էր, որովհետեւ կռվի մեծ մասը վարել էր այլադավան ավազակախմբերի ու Մեհտի-Ղուլի խանի ժառանգների հետ։ Վարե՛լ ու շահե՛լ։ Նա Բոլանի բրդերից թափել էր այս վանքի 140 հազար դեսյատին տարածք ընդգրկող կալվածքներ։ Ինքն էր ասում՝ միայն այս կալվածքներում կարելի է 2000 ընտանիք տեղավորել, եւ երազում էր այն օրը, երբ այդ հայերը վերստին շենացնելու են Թարթառի վերին հովիտը։

Դարասկզբին Ամարասին տեր էր դարձել ռուսական կառավարությունը. այն դարձրել էր մաքսատուն եւ վերածել մի արեւելյան շուկայի։ 15 տարվա անդուլ պայքարով մետրոպոլիտն այն ազատեց իր նոր-հզոր տիրոջից եւ հանձնեց հայ հոգեւորականներին, նրանց ձեռքերով խաղողի ու թթենու ընդարձակ այգիներ զցել տվեց շրջակայքում։

Բաղդասար մետրոպոլիտի ջանքերով է բացվել Ղարաբաղի հոգեւոր թեմական դպրոցը 1838 թ.՝ սկզբում 20 աշակերտով։ Ասում են՝ ուսումը տեղի ուներ Հովսեփ Արցախեցու դպրոցների սկզբունքով։ Անցնում էին՝ օրենք աստվածային, սրբազան պատմություն, հայոց քերականություն, ռուսերեն լեզվի ընթերցանություն եւ քերականություն, պարսկերեն, թվաբանություն, երգեցողություն։ Ծախսերը հոգալու համար սկզբնական շրջանում թեմի յուրաքանչյուր ընտանիքից գանձվում էր 20 կոպեկ, որ կոչվում էր սրբադրամ։ Հետագայում Շուշիի բնակիչներից հավաքված մի փոքր գումարի հիմքի վրա էլ գումարվեց Խանդամիրյան Անդրեաս ու Մարտիրոս եղբայրների մի շքեղ դրամագլուխը, եւ դպրոցը նյութապես ապահովվեց։

Հայտնի է, որ ուրիշ տեղերում հոգեւոր սեմինարիայում սովորում էին միայն հոգեւորականների զավակները։ Շուշիինն այս տեսակետից ուներ մեծ առավելություններ. ազատ էր մուտքը նաեւ ամեն տեսակ աշխարհականի երեխայի համար։

«Պոլոժենիեն» թույլ էր տալիս վանքերին ու եկեղեցիներին կից բացել ծխական դպրոցներ։ Բացվեցին եւ այդպիսիք, ընդ որում Ամարասի դպրոցը (1857/8 թ.) պատրաստում էր հոգեւորականներ։

Կյանքի վերջին շրջանը Բաղդասար մետրոպոլիտն անց է կացրել մարմնական ծանր վիճակում. հոդացավերով տառապում էր՝ զամված անշարժության։ Տեղից տեղ էր շարժվում սայլակով։ Սակայն այս վիճակում էլ շարունակում էր եկեղեցանպաստ ժրաջան աշխատանքը։ Վախճանվել է 1854 թ.։ Թաղումը վեր է ածվել համաարցախյան սգահանդեսի։ Ասում են՝ սգո թափորի մի ծայրը Շուշիում էր՝ իր երախտալից գործունեության կենտրոնատեղիում, մյուս ծայրը՝ Գանձասարում՝ իր ու տոհմակից փառապանծ մեծերի վերջին հանգրվանում։

* * *

Թեմական դպրոցն իրավամբ համարվում էր Բաղդասար մետրոպոլիտի հոգեզավակը, որի համար նա չէր խնայել ո՛չ միջոցներ, ո՛չ ջանք ու եռանդ։ Եվ հետագա տնօրենները չէին մոռանում հիմնադրի երախտիքը։

1860 թ. Թեմականի համար ընտրվեց հոգաբարձուների խումբ՝ քաղաքի ու թեմի մեծահարուստներից ու հեղինակավոր մտավորականներից, եւ այնուհետեւ նա էր, որ հոգում էր ուսումնական գործը, հատկապես տնտեսական, նյութական ամեն կարիքները։

Հաջորդ տարում ընդունվեց դպրոցի կանոնադրությունը, Էջմիածնի Սինոդի ու կաթողիկոսի համաձայնությամբ՝ հոգաբարձության իրավասությանն անցան թեմի վանքերի ու եկեղեցիների բոլոր կալվածքները, որ Բաղդասար մետրոպոլիտի համառ ջանքերով ազատագրվել էին անօրեններից, դարձել հոգեւոր օջախների սեփականությունը։

Այս երկու միջոցառումները դարձան արցախյան դպրոցն ամրապնդելու, նրա կյանքը եւ առհասարակ ամբողջ թեմի ուսումնական գործը կարգավորելու հիմք։ Սրա-

նից հետո էր, որ ծխական դպրոցներ բացվեցին շատ վանքերում ու եկեղեցիներում, թեմի համարյա բոլոր մեծ բնակավայրերում։

1863 թ. Թեմական դպրոցի տեսուչ նշանակվեց ժամանակի հայկական լուսավորական գործի նշանավոր կազմակերպիչ, եվրոպական բազմակողմանի կրթությամբ զինված եւ բնական ձիրքերի տեր Պետրոս Շանշյանը, որի տեսչության ընթացքում բավական մեծ առաջընթաց արձանագրվեց, հատկապես հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության, հանրակրթական ուրիշ առարկաների, հայրենասիրական դաստիարակության տեսակետից։ Հիշենք թեկուզ միայն այս մեկը. դպրոցը Շանշյանի նախաձեռնությամբ կոչվեց «Եղիշյան ազգային դպրոց», եւ սա Եղիշե պատմիչն էր, Վարդանանց ոգու հավերժական խորհրդանիշը։

Շանշյանի գործունեությունը տարածվում էր նաեւ Շուշիի հասարակական կյանքի այլ բնագավառների վրա, մշակութային գործն է թափ ստանում։ 1864-ին նրա նախաձեռնությամբ եւ մեծահարուստ Համբարձում-աղա Հախումյանի նյութական աջակցությամբ բացվեց օրիորդաց դպրոց։ Ճիշտ է, մինչ այդ էլ Հախումյանի կին Մարիամը, որ Մելիք-Շահնազարյան տան դուստրն էր, իր ապարանքում դպրոց էր ստեղծել եւ կրթում-դաստիարակում էր աղքատ ընտանիքներից հրավիրված աղջիկների։ Եվ, ահա՛, Շանշյանի հորդորով, տիկին Մարիամը, քաղաքի բազմաթիվ բարեպաշտ տիկնանց աջակցությամբ, առավել ընդլայնեց իր գործը, դպրոցը դարձրեց կանոնավոր, այն կոչեց «Սուրբ տիրամայր Մարիամու անվան Օրիորդաց ուսումնարան», որն առաջին տարին (1864) ուներ 40-ից ավել սանուհիներ։ Այս ուսումնարանի կանոնադրությունը գրել է տնօրինուհի տ. Մարիամ Հախումյանը։

Ուսումնարանի բացման ու ծրագրերի մասին, իբրեւ հայոց մեջ մի լուսավորական փայլուն նախաձեռնության, գրքույկ գրեց եւ նույն տարին էլ տպագրեց Թեմականի ուսուցիչ Պերճ Պռոշյանը։

Սա անկասկած, առաջադիմական կարեւոր քայլ էր հայոց մշակութային կյանքում, քանի որ այն ժամանակ օրիորդաց Գայանյան դպրոցը նոր էր միայն բացվել Թիֆլիսում, իսկ մնացած հայաբնակ վայրերում երազ էր նման ուսումնական հաստատությունը։

Մարիամյան դպրոցի բացման հանդիսությանն աղջիկներից մեկը տեղում հյուսված բանաստեղծություն կարդաց՝ այսպիսի մի քառյակով.

«Մա՜յր մեր Անի, ցնծա՛ այսօր անտրտում,
Քո որդիքը թմրությունից են զարթնում,
Ղարաբաղում այսօր ծագեց մի նոր լույս,
Մի՛ լար, Անի՜, նոր հույս ենք քեզ ավետում»։

Օրիորդաց այս դպրոցը գոյություն ունեցավ ոչ շատ երկար։ Սակայն Քաղաքի եւ Արցախի հայության մեջ վառած իր լույսով մնաց անմար։

1859 թ. Շուշիում տպագրվեց Չամչյանի ստվարածավալ քերականությունը դրպրոցների համար, 1864-ին՝ «Ներքին կյանք հին Հայաստանի, պատմաբանական քննություն» Կ. Եզյանի գործը՝ Պ. Պռոշյանի թարգմանությամբ։

Թեմական դպրոցի, Մարիամյանի եւ տպագրական գործի առաջամայլերը կատարվում էին Թեմականի տեսուչ Շանշյանի գլխավորությամբ, որը վայելում էր բաղմի ողջ հասարակության համակրանքն ու երախտագիտությունը: Սակայն բնած չէին եւ մութ ուժերը, որոնք 1864-ին մի զրպարտագիր հղեցին Էջմիածին, կաթողիկոս Մատթեոսին, եւ նա էլ Շանշյանին տեսչությունից հանելու իր կոնդակն ուղարկեց Շուշի: Սակայն այս անգամ հոգաբարձուները մի ընդարձակ նամակով պաշտպանեցին իրենց տեսչին՝ հրապարակի վրա դնելով նրա երախտալից գործունեության մանրամասներն ամենայն բարեխղճությամբ ու խելահասությամբ, պահանջեցին ջնջել լոկ մութ ուժերին ընդառաջող այդ կոնդակը: Ականատեսներից մեկը, պատմելով Շանշյանի շուրջ ստեղծված խանդավառ նվիրվածությունը, գրել է, թե այդ իսկական լուսավորչի հեղինակությունը մարդկանց ստիպում է աշխատել՝ առանց մտածելու վարձի կամ որեւէ հատուցման մասին. օրինակ, համբավավոր նկարիչ Ներսես Ներսիսյանը (Մեսրոպ Մաշտոցի ոգեղինացած նկարի հեղինակը), որ ապրում էր Խանքենդում, համարյա ամեն օր ոտքով Շուշի էր գալիս, որպեսզի ձրի նկարչություն սովորեցնի աշակերտներին եւ, «ձեռագործության օրինակներն էլ ինքն էր գծագրում իրենց երկրի բնական ծաղիկներեն, ծառերեն, տերեւներեն եւ կամ գեղեցիկ տեսարաններեն»:

Մատթեոս կաթողիկոսը, իսկապես ընդառաջելով Շուշվա մութ ուժերին, նոր մի կոնդակ էլ ուղարկեց այնտեղ եւ Շանշյանին հեռացրեց տեսչությունից: Հոգաբարձուները նոր մի համախոսականով պաշտպանեցին արժանավոր տեսչին: Համանման համախոսականներ գրեցին նաեւ ուսուցիչները, սաները, բաղմի պատկառելի մարդիկ... Սակայն հայոց եկեղեցու այդ անհաջող, բայց ինքնաբավությունից տրամվող պետը մնաց անդրդվելի, եւ Արցախական աշխարհի նոր լուսավորիչը հեռացվեց աշխատանքից, գնաց Թիֆլիս: Նրա կողմնակիցները, հիմնականում լուսավոր ու եռանդուն մարդիկ, հալածական դարձան Մատթեոս կաթողիկոսի դրածոների սադրանքներից:

Շանշյանի գործունեության կարճ շրջանը գնահատելով իբրեւ ազգային լուսավորական գործի մի պայծառ շրջան՝ Լեոն գրել է. Շանշյանի ***«գործունեությունը, նրա անձնավորությունը, նրա պաշտպանած դատը եւ նրա պայծառ գաղափարներն ստեղծեցին նրա համար անմահ մի հմայք, իսկ դպրոցի այդ կարճ ժամանակամիջոցը դարձավ մինչեւ այսօր էլ ժողովրդի մեջ ապրող նվիրական հասկացողություն, սրբազան ավանդություն, որի մեջ հերոսացած է մեր վերածնության ժամանակների լավ մարդը»***:

1865 թ. Շուշիում Սարգիս Հասան-Զալալյանն էր թեմի առաջնորդ: Այս արժանահիշատակ տոհմի ո՛չ այնքան արժանավոր զավակը, ըստ ճանաչողների միահամուռ կարծիքի, մի նեղմիտ, կրոնական հարցերի մեջ խիստ պահպանողական անձ է եղել, հոգեբանությամբ էլ ո՛չ այնքան օրինակելի, ուստի Թեմական դպրոցի առաջադիմությունը չէր կարող գլխավորել: Եվ, այսուամենայնիվ, դպրոցն առաջադիմել է վանեցի Մաղաքիա Պլուզյանի տեսչությամբ (1870-1873): Դրական բայլերը նկատելի էին հատկապես հայագիտության բնագավառում. թեմականն ավարտողն արդեն ծանոթ էր ժամանակի հայագիտական տարբեր բնագավառներում եղած նյութերին, եւ, ամե-

նակարեւորը, խրախուսվում էր գրական-ստեղծագործական աշխատանքը, սաները գրական փորձեր էին կատարում, նույնիսկ երեւում ժամանակի պարբերականներում։ Պլուզյանի աշակերտներից էին Գաբրիել Ղուլիբեխյանը, Սիմեոն Հախումյանը, Կոստանդին Մելիք-Շահնազարյանցը (Տմբլաչի խաչան), Մուրացանը, Լեոն։

Պլուզյանին հաջորդեց Խորեն Ստեփանեն, որը, ինչպես Լեոն է վկայում, բարբարոսական ծեծն էր դպրոց մտցրել իբրեւ դաստիարակության կարեւոր միջոց, արժանացավ պարսավանքի եւ դպրոցը թողեց, հեռացավ։ Հիշվում է այս մանկավարժի մի դրական գործը. շարունակել էր իր «Հայկական աշխարհ» հանդեսի հրատարակությունը Շուշիում՝ իբրեւ այստեղ դեռ չեղած-չտեսնված մի երեւույթ (Զնայած դեռ կար բազելցիների տպարանը, գրքեր էր տպագրում. օրինակ, Ավետարան-1870, Ս. Հասան-Ջալալյանի «Բարեկարգութիւնքը»)։ Խորեն Ստեփանեն թողեց Թեմականը, բայց մընաց Շուշիում, հիմնեց ռուսաց օրիորդաց դպրոց (Հոիփսիմյան) եւ նոր միայն գնաց Բաքու՝ այնտեղ շարունակելու իր խռովալից գործունեությունը։

1875-ին Սարգիս Հասան-Ջալալյանին, իբրեւ առաջնորդ, փոխարինեց Գեւորգ Սուրենյանցը (Տփղիսեցի-Ղարաբաղցի կաթողիկոս Գեւորգ Ե, Սարդարապատի նահատամարտի հրահրողը)։

1877-ին Գեւորգ Ե-ին փոխանեց Արիստակես վարդապետ Սեդրակյանցը՝ նաեւ Թեմական դպրոցի տեսչի ու թեմի լուսավորության ղեկավարի պարտականությունների համատեղումով։

Արիստակեսն առաջին իսկ տարում Շուշիում բացեց Օրիորդաց ծխական դպրոց եւ Տղայոց երկու դպրոց՝ ղեկավարելով նաեւ այս երեքի ընթացքը։

1877-78 ուս. տարում դպրոցում լավ հիմքերի վրա դրվեց վաղուց արդեն գոյություն ունեցած գրադարանը, եւ ստեղծվեց թատերախումբ, ինչպես նաեւ կարգավորվեց տպարանի գործը...

1878-ից Թեմականի ուսուցիչ էր նաեւ Ղազարոս Աղայանը, որին տրված էին պատրաստական դասարանի բոլոր առարկաները, հայոց լեզու եւ թվաբանություն՝ բարձր դասարանում։

1879-ին Թեմականն ուներ 334 աշակերտ, Օրիորդացը՝ 113։

1880-ից Թեմականի տեսուչ եւ ուսուցիչ էր Սեդրակ Մանդինյանը, որը դպրոցի վերջին դասարանում մանկավարժության դասեր էր տալիս, աշակերտների հետ գործնական աշխատանքներ տանում՝ ուսուցչական գործին հմտացնելու համար, եւ հաջորդ տարին արդեն դպրոցը երիտասարդ ուսուցիչներ էր թողարկում թեմի ծխական դպրոցների համար։

Այս տարին սկսեց հրատարակվել «Գործ» ամսագիրը (խմբագիր Ս. Հախումյան)։

1881 թ. բացվեց Շուշիի Ռեալական ուսումնարանը, որի կողքին գոյատեւելը շատ պիտի դժվարանա,- մտածում էր Մանդինյանը.- *«Որքա՜ն պիտի պակասի ժողովրդի համակրությունը դեպի մեր Թեմական դպրանոցը՝ լոկ միայն այն պատճառով, որ սորա կշտին կանգնած կլինի արտոնություններով ապահովված մի ուսումնարան, թեեւ ո՛չ ազգային։ Որպեսզի ազգային դաս-*

տիարակության հարգը հարատև պահպանվի մեր ժողովրդյան սրտի մեջ... հարկ են ապահով միջոցներ, մեծ ու եռանդուն գործ, նվիրվածություն»:

Եղավ այն, ինչից վախենում էր Մանդինյանը. Ռեալականն իր կտուրի տակ հավաքեց բոլոր ունևոր ծնողների երեխաներին: Հասարակության, մանավանդ բարձր խավերի, հայացքները նրա վրա էին:

1881-ին Թեմականի տեսուչ էր Համբարձում Առաքելյանը եւ տեղակալ՝ Ղազարոս Աղայանը: Հետագա տարիներին ուսուցիչներ եղան Մանուկ Աբեղյանը, Մակար վարդապետ Բարխուտարյանը:

1884-ին էր, որ ցարական կառավարությունը փակեց ազգային բազմաթիվ դրպրոցներ: Սակայն ժողովրդական բուռն դժգոհություններն ստիպեցին վերանայել բռնապետական վճիռը, եւ հայկական դպրոցները վերաբացվեցին:

1892-ին դպրոցը վերելք ապրեց Լեւոն Սարգսյանի տեսչությամբ: Այս ժամանակ դպրոցն ուներ շուրջ 500 աշակերտ: Ստեփան Դեմուրյանը, որ դպրոցի երգեցողության դասատուն էր, պատրաստել էր քառաձայն երգչախումբ, որով ողջ քաղաքն էր հպարտանում (անհամար ելույթները դպրոցի, քաղաքի հանդեսներին, եկեղեցում մեծապես նպաստել էին նրա հեղինակության ստեղծմանը):

1896-ից տեսուչ էր Մեսրոպ Տեր-Մովսիսյանը՝ խոշոր եկեղեցական գործիչ, հայագետ: Հաջորդ տարիներին այստեղ ուսուցչավարել են Հրաչյա Անառյանը, Վրթանես Փափազյանը: Գյուղատնտեսությունը դարձել էր դասավանդվող հիմնական առարկա՝ շնորհիվ բազմահմուտ գյուղատնտես Լեւոն Թախտաջյանի (ականավոր բուսաբան, ակադեմիկոս Արմեն Թախտաջյանի հայրը):

* * *

1903 թ. հունիսի 12-ի հրամանագրով ցար Նիկոլայ Բ-ը հաստատում էր հայկական եկեղեցուն պատկանող հողերի ու գույքի բռնագրավման օրենքը: Իշխան Գոլիցինը, որ մինչ այդ էլ իր անսանձ ատելությունն էր դրսեւորել հայ ժողովրդի, մանավանդ արցախահայության դեմ[1], հիմա ցարի հրամանի դրոշով արշավանք սկսեց՝ ամենակարճ ժամանակում բռնագրավելու եկեղեցական կալվածքները, հայոց մշակույթի նրվազագույն առաջընթացը սնող հարստությունը, ամեն տեսակ ունեցվածքն ու գույքը: Ըստ երեւույթին որոշվել էր հայ եկեղեցու ինքնուրույնությունը վերացնել, այն դարձնել ռուսաց ուղղափառության կցոնը, որից հետո, կարծում էին, հեշտությամբ կվերանա նաեւ ազգային մշակույթը:

Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը հատուկ կոնդակով հրամայեց չենթարկվել

---

1 Լեոն գրել է. «Հայտնի է, որ իշխան Գոլիցինը ծրագրել էր, պաշտպանում էլ էր Պետրոգրադում, բայց չկարողացավ ընդունել տալ բարձր կառավարիչ շրջաններին Շուշու հայ բնակչությունը բռնի կերպով Ռուսաստան գաղթեցնելու միտքը» (Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց Թեմական հոգեւոր դպրոցի, էջ 579):

իշխանություններին, նրանց չհանձնել ոչինչ, մինչեւ որ ինքը գերագույն իշխանության հետ կպայմանավորվի այդ վայրենի կարգադրությունն ի չիք դարձնելու մասին։ Ժողովուրդն ամենուրեք ոտքի ելավ պաշտպանելու իր հավատի նյութական հիմքը։ Խռովություններն սկսվեցին Շուշիի Թեմականից։ Աշակերտներն ու դասատուները բողոքի ցույց կազմակերպեցին, ելույթ ունեցողները ցարի հրամանագիրը համարեցին հայասպան վճիռ, կոչ արին ազգովին կռվել նրա դեմ, մինչեւ վերջին կաթիլ արյունը պաշտպանել սեփական ազգային հարստությունն ու իրավունքը։ Բռնություններ ըսկըսվեցին ցուցարարների դեմ, ուսանողներից մի քանիսին բանտ նետեցին, ապա ազատելով՝ կարգադրեցին դուրս անել դպրոցից։ Սա՝ սկզբնական շրջանում. մի քանի ամիս անց, դեկտեմբերին, Կովկասի վարչապետ Գոլիցինի կարգադրությամբ Թեմականը փակվեց՝ ***«Ի պատճառս մնասակար ընթացից որպէս կառավարող անձանց, նոյնպես եւ սանուց նորին»։*** Թեմականին էլ հետեւեցին ծխական դպրոցները, որոնք այլեւս գոյություն ունենալ չէին կարող, քանի որ զրկվում էին նյութական միջոցներից։

Միայն 1905-ի ամռանը, երբ հեղափոխական շարժումները վերացնելու եւ երկրում ***«խաղաղություն ու կարգ»*** սահմանելու համար ցարն Այսրկովկասում վերականգնեց փոխարքայական կարգը՝ փոքարքա նշանակելով կոմս Վորոնցով-Դաշկովին (փետրվարի 28), վերջինիս միջնորդությամբ հրապարակվեց ցարի նոր հրովարտակը՝ բռնազրավված հայկական եկեղեցական գույքը վերադարձնելու եւ դպրոցները վերաբացելու մասին։ Ամբողջ հայության շրջանում փակված ուսումնական հաստատություններից առաջինը վերաբացվեց Շուշիի Թեմական դպրոցը, ապա աստիճանաբար՝ եւ մյուսները։

Նորից ապրեց Թեմականը։ Հին ու լավ օրերի ավանդներով, ժամանակի առաջավոր կրթական փորձ ու գործով զինված դպրոցը վերստին դարձավ մեր ազգային լուսավորական սիրելի կենտրոնը եւ հետագա տարիներին եւս պահեց ու բազմապատկեց իր փառքը։ Եվ երբ 1913 թ. հայությունն ազգովին նշում էր նրա 75-ամյակը, տոնախմբության անմիջական մասնակիցներն իրավացիորեն զտնում էին, որ այն, Արեւելյան Հայաստանի մյուս երեք համբավավոր կրթական օջախների՝ Գեւորգյանի, Ներսիսյանի ու Երեւանի Թեմականի հետ միասին, կազմում է մի սուրբ չորրորդություն, որով պայմանավորված է նորագույն ժամանակների հայկական ո՛չ միայն լուսավորական գործի, այլեւ առհասարակ մշակութային կյանքի առաջընթացը։

75-ամյակի տոնախմբությունների առթիվ մեծամեծ նվիրատվություններ արին շատ ու շատ արցախցիներ, հատկապես այն մեծահարուստները, որոնք ապրում ու գործում էին հայրենի եզերքներից հեռու։ Ահա նրանցից մեկը՝ նախկին վերինթաղավարդցի, մոսկվաբնակ Բաղդասար Արզումանյանը, միանվագ դպրանոցին էր հատկացնում 200 հազար ռուբլի, երբ դպրոցի ամենամյա բոլոր ծախսերը կազմում էին ընդամենը 10 հազար։ Եվ պայման էր դնում ամեն տարի դպրոցին փոխանցել նրա եկամտի 5 տոկոսը, որը կազմում էր հենց 10 հազար։ Նվիրում էր նաեւ Մոսկվայի մոտ՝ "Покровка, Чистые пруды" կոչված կենտրոնական քաղաքամասում գտնվող իր կալվածքը՝

այնտեղ կառուցված շինությամբ հանդերձ՝ *«ավելի խոշոր արժողությամբ, քան նվիրաբերածս գումարը»։*

Եվ այսքանի փոխարեն ի՞նչ էր պահանջում. *«Իմ ծննդավայր Զարդանաշեն (Վարանդայի Վերին Թաղավարդ) գյուղի չքավոր մանուկներից, վիճակ ձգելով, յուրաքանչյուր տարի ընդունել ձրիավարժ աշակերտներ երկու հոգի՝ իբրեւ որդեգիր իմ անվան»։*

Բարերարները գիտեին, որ Թեմականը, նրա թեւերի տակ ծվարած Մարիամյանն ու ծխականները չունեն բարեկարգ շենքեր, եւ, ահա՛, հոչակավոր Արամյան գերդաստանի ներկայացուցիչը՝ Միքայել անունով, դպրոցին էր նվիրում Շուշիում կառուցած իրենց մի հարմարավետ շենք։

Իսկ Ղուկասյան շուշեցի գերդաստա՞նը։ Այն, որ այդ ժամանակները «Ղուկասյան մատենադարան» շարքով մեր հին մատենագրության երկերն էր հրատարակում եւ հայագիտական այլեւայլ գոհարներ,- Թեմականին իր օժանդակությունը ցույց տալու հետ միասին, նրա կողքին էլ մի նոր օրիորդաց դպրոց հիմնեց՝ հոգալով ոչ միայն հիմնադրության ու հետագա գործունեության ծախսերը, այլեւ անմիջապես լուծելով նոր դպրոցի շենքի խնդիրը։

Ահա թե այդ առթիվ հրապարակած իր հայրապետական կոնդակում ի՞նչ է գրել Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Ե Ղարաբաղցի-Տփղիսեցին։ *«Գոհութեամբ սրտի տեղեկացաք, զի զերամեծար եղբարք պարոններ Պօղոս, Արշակ, Յակոբ եւ Աբրահամ Յովսեփեան-Ղուկասեանք, վասն յաւերժացուցանելոյ զբարի յիշատակ քեռն իւրեանց Հանգուցեալ Մարիամու՝ հիմնեն ի հայրենի Շուշի քաղաքի զեկեղեցական-ծխական դպրոց օրիորդաց յանուն հանգուցելոյն՝ սիրահոժար կամօք իւրովք նուիրաբերելով վասն իրագործելոյ զազգօգուտ կրթական նպատակն իւրեանց զերկերիւր հազար ռուբլիս, որ լիցի դրամագլուխ անձեռնմխելի, եւ զերկյարկանի սեփական տունն ի Շուշի քաղաքի՝ վասն դպրոցին, հանդերձ ընդարձակ բակով եւ պարտեզաւ»։*

Իսկ Ղուկասյան բարեգործ եղբայրնե՛րն ինչ էին ուզում իրենց հայրենասիրական ձեռնարկի դիմաց։ Որ նորաստեղծ դպրոցը կոչվի իրենց հանգուցյալ քրոջ անվամբ՝ «Մարիամ Ղուկասյան», եւ մեկ էլ՝ որպեսզի այդ «Մարիամ Ղուկասյան» դպրոցը կառավարվի հայոց եկեղեցական-ծխական կամ միջնակարգ դպրոցների կանոնադրությամբ, դասատվությունն էլ լինի անպայմա՛ն հայերեն լեզվով։

Երբ այսօրվա հեռվից մի ընդհանուր հայացք ես ձգում Շուշիի Թեմական ուսումնարանի երախտալից գործունեության վրա, չես կարող հպարտությամբ չլցվել նրա համար, որ այնտեղ են գործել մեր ազգային մշակույթի փառավորված բազմաթիվ գործիչներ, այլեւ այն պատճառով, որ այնտեղից են ելել այդ գործիչների մտքերի ու բաղձանքների իրականացնողները՝ դարձյալ փառավոր շատ անուններ։ Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանն էր կանգնած Թեմականի ակունքում։ Իսկ ովքե՞ր անմահ պահեցին նրա լույսի ջահը, ի՞նչ անուններ. Պետրոս Շանշյան ու Սեդրակ

Մանդինյան, Պերճ Պոռշյան եւ Ղազարոս Աղայան, Հրաչյա Աճառյան ու Մանուկ Աբեղյան, Ներսես Ներսիսյան ու Աշոտ Հովհաննիսյան, այս անունների կողքին հիշվելու արժանի շա՞տ ուրիշներ։ Իսկ նրանց սանե՞րը. Մուրացանը, Լեոն իրենց պանծալի դասակիցներով։ Փորձեմ աչքի անցկացնել XIX դարի վերջի եւ XX-ի սկզբի մեր ազգային-ազատագական պայքարի սրբացած հերոսների կենսագրությունները, կպարզվի, որ նանց մեծ մասը, մանավանդ Արեւելահայաստանում ծնվածներից շատ շատերն ուսանել են Շուշիի Թեմականում, թրծվել են նրա հայրենասիրական բուրայում։ Ահա մի քանիսը. Նիկոլ Դուման, Հոնան Դավթյան, Միքայել Վարանդյան, Թուման Թումյան, Մենակ (Գեւորգ Առստամյան), Արամ Մանուկյան, Վանի Իշխան...

Սա է Ղարաբաղի հայոց հոգեւոր թեմական դպրոցի կամ, կարճ անունով, Շուշիի թեմականի կենսագրությունը։ Փառավո՞ր կենսագրություն։

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Շուշիում եւ մարզի գավառներում տեղի ունեցան 1905-ի երկրորդ կեսին, երբ թաթարական շրջաններում սկսվել էին ամիսներ առաջ, իսկ Բաքվում, որ ասես ահազանգն էր, փետրվարի 6-ին։

Այո՛, Բաքվում ամենից առաջ։ Բայց ի՞նչն էր պատճառը, ո՞վ հրահրեց, ի՞նչ նպատակով, ո՞ւմ էր այն ձեռնտու։

Մինչեւ հիմա մեր պատմաբանները մի երգ ունեին իբրեւ դրա պատասխան. ցարական կառավարությունն էր հրահրել, եւ նպատակն էլ այն էր, որ ազգամիջյան խառնակչություններով ժողովուրդների ուշադրությունը շեղի մի կողմ, խլացնի հեղափոխական շարժումը։

Երեւի սա եւս նշանակալից դեր ունեցել է։ Սակայն, հավանաբար, իրավացի են այն հեղինակները, որոնք հայ-թաթարական բախումների հիմնական պատճառներն ուրիշ տեղերում են տեսնում։ Ա՛յ, օրինակ, նրանո՛ւմ, որ օսմանյան քարոզիչներն իրենց կովկասյան ցեղակիցներին լարում էին հայերի դեմ՝ պնդելով, թե նրանք այսօր Թուրքիայում են ինքնավարություն պահանջում, պայքարում, արյունահեղ մարտեր մղում այդ անկախության համար, վաղն էլ նույնն են անելու Բաքվում, Այսրկովկասի ուրիշ վայրերում։ Եվ այս թաթարները, առանց այդ էլ Բաքվի հայերի դեմ լարված, իրենց մթին հաշիվներն ունենալով (որովհետեւ երեկ-մեկել օրն այնտեղ ոտք դրած այդ հայերն արդեն իրենց ձեռքն էին առել նավթարդյունաբերության եւ տնտեսության մյուս բնագավառների սանձերը, իրենք էին դրության տերը, իրենք էին թելադրողը), ավելի էին բորբոքվում։ Հնարավոր է, որ ցարական կառավարության ներկայացուցիչները թաթարներին հուշել են, թե հայերի հարցը լուծելու ամենահարմար պահն է։ Չէ՞ որ Բաքվում էր հայության արնախում թշնամի Նակաշիձեն՝ Բաքվի նահանգապետը։ Եվ, այսպիսով, ***«Բաքվի թուրքերի մեջ արդեն իսկ տարածված էր այն չարաշուք***

համոզումը, որ կարող են անպատիժ թալանել ու կոտորել հայերին, եւ որ կառավարությունն իրենց կողմն է»[1]:

Անմիջապես հայտնվեց նաեւ առիթը՝ նշանավոր հրոսակապետ Աշուրբեկովի ըսպանությունը հայ զինվորի գնդակով, որն արձակվել էր իր ծառայողական պարտականության թելադրությամբ:

Թորք ղոչիբաշիները, ցեղակից հանցագործների գլուխն անցած, հարձակվում էին հայերի վրա, կոտորում, կողոպտում, ավերում տները, պահանջում, որ մնացածները թողնեն, հեռանան:

Եվ այս ամենը նահանգապետի աչքի առաջ, նրա թույլտվությամբ ու, թերեւս նաեւ, խրախույսներով:

Հայերն, իհարկե, անցան ինքնապաշտպանության: Բալախանիի նավթահանքերում գտնվող Նիկոլ Դումանը, այդ առասպելական հայդուկապետը, փութով քաղաք հասավ, ոտքի հանեց երիտասարդ, մարտական ընկերներին:

Ավազակախմբերի հարձակումները կասեցվեցին, պատժվեցին շատ չարագործներ: Այնպես, որ չորրորդ օրը թուրքերն իրենք առաջարկեցին *«բարեշլեղ» («հաշտություն»)*:

Արժանի պատժի ենթարկվեց նաեւ չարահուշ Նակաշիձեն. մայիսի 11-ին Դրոյի նետած ռումբը ջախջախեց նրան:

Սակայն Բաքվի խժդժությունը Բաքվում էլ չամփոփվեց: Զնայած Բաքվում եւս այն նորոգվեց օգոստոսին եւ տարածվեց նավթահանքերում: Դեռ փետրվար-մարտին այն տարածվեց ամբողջ նահանգում, թափանցեց հայաբնակ մյուս շրջանները եւ Ղարաբաղ հասավ օգոստոսին:

Շուշիում եւ առհասարակ Ղարաբաղում դրան սպասում էին: Նույնիսկ պատրաստվել էին հակահարվածի ու պաշտպանության: Հայ հեղափոխական դաշնակցության կենտրոնը, կանխազգալով, որ բախման ամենացնցող կետերը Ղարաբաղում են լինելու, այստեղ ստեղծել էր պաշտպանական մարմին, որի ղեկավար էր նշանակված նշանավոր հայդուկապետ Վարդանը (Խանասորի Վարդան-Սարգիս Մեհրաբյան): Բայց եւ այնպես Շուշիում թաթարներն առաջին հարվածով շատ մեծ աղետ պատճառեցին հայությանը: Հարձակվելով հայկական մասի վրա՝ թորք խուժանն անմիջապես էլ հրդեհի էր մատնել բազմաթիվ տներ: *«Զարհուրելի, չտեսնված հրդեհը լափեց հարյուրավոր տներ քաղաքի կենտրոնական մասում, հարյուրավոր խանութներ այրվեցին, եւ նրանց մեջ եղած հարստությունները կորան: Միաժամանակ եւ սկսվեց թալանը. կրակից ազատվածը գողացվեց»*[2]:

Քաղաքի եւ նահանգի ղեկավարությունից օգնություն սպասելը զուր էր, որովհետեւ *«Թորք էր Շուշիի ոստիկանապետը, Թորքեր էին բազմաթիվ այլ պաշտոնյաներ քաղաքում ու գավառում, իսկ վերին կառավարիչը՝ Գանձակի*

---

1 Միքայել Վարանդյան, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, առաջին հատոր, Պարիզ, 1932, էջ 361-362: Տե՛ս նաեւ գրքի նախորդ ու հաջորդ էջերը:

2 Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 584-585:

նահանգապետը, դարձյալ վրացի զորավար մը՝ Տակայշվիլի, քրոջորդին հռչակավոր Նակաշիձեի»[1]:

Ասում են՝ հայ պաշտպանվողները մի հնամաշ թնդանոթ էին գտել, *«Երկաթի, հարթուկի կտորտանք լեցուցին մեջը եւ երեք անգամ արձակեցին, ... Թորքերն անմիջապես պարզեցին ճերմակ դրոշը»*[2]:

Ճշգրիտ որոշել, թե կողմերից յուրաքանչյուրն ինչքան զոհ է տվել, այդպես էլ ոչ ոք չի պարզել: Ա-Դոյի գրքում Շուշիի հայ նահատակները հաշված են 126 հոգի: Սակայն, ամենայն հավանականությամբ, իրականում ավելին են եղել: Օրինակ, մինչեւ վերջին ժամանակները Ռեալական դպրոցից դեպի Քարինտակ տանող կածանի կողքի գերեզմանատանը կար մի գերեզմանքար, որի գիրը պատմում էր, թե ինչպես թորք խուժանը գիշերով մտել է մի տուն եւ սրի քաշել յոթ երեխաներին, նրանց հորն ու մորը եւ երկու հյուրերին: Ընտանիքի 9 անդամները մեկ ազգանունով էին հիշվում (դժբախտաբար արձանագրությունը չեմ արտագրել, որ նշեմ ազգանունը): Իսկ Ա-Դոյի ցուցակում այսքան զոհեր չկան միեւնույն ազգանվամբ:

Հայ նահատակների մեջ է եղել նաեւ դաշնակցական հայտնի գործիչ Մարգար Ժամհարյանը՝ Ժամհարյան մեծահարուստ տան ժառանգ, որ Ռեալականն ավարտելուց հետո էլ սովորել էր Պետերբուրգում, Գերմանիայում... Ապա Նիկոլ Դումանի հետ եղավ արեւմտահայության փրկության կոիվներում: Իսկ երբ հայրենի Շուշիում դրությունը ծանր էր, եկավ, գլխավորեց ինքնապաշտպան ջոկատներից մեկը եւ նահատակվեց:

* * *

Շուշիի դեպքերից ոչ պակաս սաստկությամբ բախումները տարածվել էին գավառներում: Աղդամում բնավորված ոհմակները պարբերաբար ասպատակությունների էին ելնում դեպի Ասկերան ու Մարտակերտի կողմերը: Խոսք չէր կարող լինել Շուշի-Եվլախ խճուղու մասին, որի հայ ուղեւորներն աղդամցիների կողմից ենթարկվում էին ամենաքստմնելի չարչարանքների:

Բախումները մեծ ու կատաղի չափերի էին հասել քոչի ժամանակ: Եվ այստեղ եւս թորքերն ավելի շահավետ վիճակում էին, որովհետեւ շարժվում էին զինված պահակային ջոկատների ուղեկցությամբ, իսկ հայկական բնակավայրերում, որոնցով նրանք էին շարժվում, զենք չկար եւ չէին նախապատրաստվել նման անակնկալների:

Այնուհանդերձ, շատ վայրերում հայ ինքնապաշտպանությունն ակնհայտ հաջողություններ ունեցավ: Ասկերանի ձորի պաշտպանությունը գլխավորում էր վանեցի խմբապետ Համազասպը, որի խմբի պարտականությունն էր՝ փակել Աղդամի ճանապարհը դեպի Շուշի եւ սանձ դնել մոտակա թորքի գյուղերի՝ Խոջալուի, Մալիբեյլիի եւնի

---

1 Միքայել Վարանդյան, Նույն տեղում, էջ 387:

2 Անդ, էջ 389:

ասպատակիչներին։ Համազասպ Սրվանձտյանի ջոկատն այդ խնդիրը կատարում էր մեծ հաջողությամբ, եւ զուր չէ, որ ասում են՝ Համազասպն այստե՛ղ ստեղծեց իր հռչակը, եւ այստեղի՛ց սկսվեց նրա հերոսական ուղին (Միհ. Վարանդյան)։ Իսկ Ղարաբաղում նրա մասին երգ էին հյուսել, որ տարածված էր.

Ամբողջ աշխարհն հռչակվեցավ
Համազա՜սպը պանծալի...

Վարանդայի հյուսիս-արեւմտյան մասում հայկական գյուղերի արանքը մխրճված թորֆի երկու գյուղ՝ Ավդալն ու Գիլափլուն, որ սովորական ժամանակներում էլ միշտ զբաղված էին լինում հայերին կողոպտելով ու տարբեր չարություններ նյութելով, այն օրերին այսքանն անում էին ավելի մեծ չափերով, առավել կատաղի։ Նրանք սեպտեմբերի 2-ին հարձակվեցին հարեւան հայկական Մյուրիշենի վրա, կողոպտեցին, բարուքանդ արին բազմաթիվ տներ, մնացածներն էլ վառեցին, սպանեցին մի ջահել հարսի, երկու երեխայի, ինքնապաշտպանության փորձ կատարած մեկ տասնյակ տղամարդկանց։ Այն ժամանակ հայ ինքնապաշտպանական ուժերը, շուրջ 250 հոգի, հանկարծակի հարձակվեցին զույգ ավազակաորջերի վրա, ցաք ու ցրիվ արին զինված խմբերը՝ նրանց մեծ մասը ոչնչացնելով, բնակիչներին ի բաց վանելով։ Ապա կատարեցին այն, ինչ տեղի էր ունեցել Մյուրիշենում։ Եվ Ավդալի ու Գիլափլուի տեղ մնացին մոխրակույտերը։ Ատամն ընդ ատաման։

* * *

Ժամանակի մամուլը բազմիցս անդրադարձել է Մինքենդի հայ բնակչության կոտորածին՝ ամեն անգամ բացելով նրա իրականացման այնպիսի մանրամասներ, որոնք նորություն էին չարագործությունների համաշխարհային պատմության մեջ եւ միայն տաս տարի հետո Օսմանյան Թուրքիայում պիտի կիրառվեին։

Մինքենդը գտնվում է Լաչինի շրջանում, բայց այն ժամանակ մտնում էր Գորիսի գավառի մեջ եւ ուներ իր 696 հայ բնակիչները, որոնք հարեւան թաթարների հետ ապրում էին, իբր թե, առանց որեւէ անախորժության։ Այն օրերին այլացեղ համազյուղացիները հանկարծ ձեւափոխվել էին, գազազել, ծարավել հարեւան հայերի արյանը, որովհետեւ գյուղ էին եկել կասկածելի թաթար մարդիկ, որոնք պատմում էին, թե իրենց հարազատներին ինչպես են կոտորել Շուշիում, Գորիսում, այս ու այնտեղ։ Այս զրզռիչ լուրերի բոբոքած կրքերից ոչինչ լավ բան չսպասելով՝ հայերը որոշեցին գյուղը թողնել, հեռանալ։ Սակայն գավառապետ Ավալիանին, պրիստավ Սադրխ-բեկ Մելիք-Ասլանովը եւ ուրիշ պաշտոնյաներ թույլ չէին տալիս։ Առաջին օրերին նույնիսկ կոզակներ բերեցին՝ հայտարարելով, թե նրանք պաշտպանելու են հայերի անվտանգությունը։ Սակայն օգոստոսի 23-ին այս պաշտպաններն անհետացան, գյուղ թափվեցին մոտակայքում գտնվող Քոչվոր-թարաքյամաները եւ տեղացի ցեղակիցների հետ միասին սկսեցին հայերի նախճիրը։

Ով կարող էր, փախավ-պրծավ՝ թողներով իր տունն ու հարստությունը։ Զնայած հարց է, թե Մինիֆենդից փախչողը փրկվե՞ց հարեւան գյուղերի չարագործներից։ Իսկ տեղում մնացածների, անօգնական ծերերի ու երեխաների, մանավանդ կանանց հետ *«աշնանները»* վարվեցին այնպես, ինչպես միայն թորքը կարող է։

Այս կոտորածների ամենավստահելի նկարագրողներից մեկը՝ Ա-Դոն, գրել է, թե գյուղում գտնվող միակ ընդարձակ շենքում՝ այսպես կոչված "Заезжий" տանը պատրսպարված ավելի քան երկու հարյուր հոգուն մի առ մի հանեցին *«եւ սկսեցին սրերով, կացիններով եւ հազար ու մի բութ գործիքներով կոտորել անխնա...*

Թշվառ մարդկանց տանջանքներն ավելի եւս տեւական դարձնելու համար, նախքան մահացնելը, մաս-մաս կտրտում էին նրանց մարմնի անդամները։ Այդպիսի տանջանքների ենթարկվեցին 20 տարեկան Խաչատուր Դավթյանը, 60 տարեկան Մանուշակ Հայրյանը, որի նախ ծծերը կտրտեցին եւ ապա ձեռքերը։

22 տարեկան Համբարձում Գալստյանի մազերից բռնելով՝ կոկորդը կտրեցին ճիշտ այնպես, ինչպես զասաբը՝ ոչխարի գլուխը։

65 տարեկան Աննա Դավթյանցին եւ իր երեք թոռներին՝ 6 տարեկան Գյուլնշանին, 5 տարեկան Սառային եւ 4 տարեկան Անդրեասին, մեկը մյուսի ետեւ շարք կանգնեցնելով՝ Ջաբրայիլ Շախսուվարովը փորձեց մեկ գնդակով չորսին միանգամից սպանել։

Մանուշար Գրիգորյանի հղի կնոջ՝ Նավոմի փորը պատռեցին եւ երեխան սրի ծայրին մեխած դուրս բերին արգանդից»[1]։

Կարելի է զարմանալ թորքի հնարամտության վրա, եթե օսմանցի ցեղակիցները հետագայում, նրա հետ մրցության մեջ մտնելով, նվաճած չլինեին գերազանցությունը։

Եվ այսպե՛ս. կոտորածները, ուղեկից ունենալով զանազան մանր ու մեծ ուրիշ թշնամական բախումներ, շարունակվեցին ավելի քան երկու տարի։ Ինչպես 1905-ին, այնպես էլ 1906-07 թվականներին, ավելի շատ տուժում էին հայերը, որովհետեւ թորքերն ավելի լավ էին զինված, կարողանում էին յուրայիններին հասնել ամենուրեք եւ, ամենակարեւորը, հիմնականում գործում էր ավազակային հարձակումների, գողության ու կողոպուտի եղանակը։ Իսկ այստեղ թորքը երեւի թե անմրցակից է։

Հայությունը, տվյալ դեպքում՝ արցախահայերը դաս առա՞ն այս ամենից, որպեսզի հաջորդ նման պարագայում հանկարծակիի չգան, տանուլ չտան չար խաղը։ Հազի՞վ թե։ Ապացույց՝ 1920-ի դեպքերը եւ հատկապես Շուշիի հայկական մասի կործանումն այդ թվականին։

---

1 Ա-Դո, Հայ-թրքական ընդհարումները Կովկասում, էջ 259։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՔԻՆ, ԲԱՅՑ ՆՐԱՆԻՑ ԲԱԺԱՆ[1]

ԲԱԹՈՒՄԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ ԵՎ ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱՂԸ

Ռուսական մեծ հեղափոխությունը, ինչպես ամեն մի հեղափոխություն կամ բաղաքական հեղաշրջում, տակնուվրա էր արել աշխարհը, եւ Արցախ-Ղարաբաղն էլ բռնված էր նրա բերած վայրիվերումներով: Շուշիում ու գավառներում անտիրություն էր: Ա՛յն անտիրությունը, երբ դրության իրական տերեր են դառնում արկածախնդիրներն ու չարագործները, տվյալ դեպքում՝ թորք ավազակախմբերը: Այսպես կոչված հեղափոխական ուժերը հասարակական կյանքի այնպիսի քաոս ու խառնիճաղանջ էին ընտեղծել, որ ժողովուրդը հանգիստ չուներ: Ամենուր «ազատություն, հավասարություն, ժողովրդավարություն» էին գոռում, սակայն իրականում դրանց հակառակ երեւույթներն էին տարածված: Շուշիի ժամանակագիրը գրել է, թե ***«Ազատություն» խոսքն այնպես էր հասկացվում, թե մարդ իրավունք ունի ազատ խոսելու, հայհոյելու, վիրավորելու, մինչեւ անգամ սպանելու եւ մնալու անպատիժ»*** (Միրզա Տեր-Սարգսյան):

Աշխարհից կտրված Արցախում այս քաոսն ու տակնուվրայությունն առավել զգալի էին, որովհետեւ շրջապատում մոլեգնած թորք ավազակախմբերը գործում էին գիշերցերեկ, եւ հայ գյուղացին՝ ենթակա նրանց ավազակային ասպատակություններին, թվում էր, փրկություն չպետք է ունենար:

---

1 Այս գլուխը շարադրելիս օգտվել ենք Հարություն Թումյանի «Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917-1920 թթ.)» աշխատությունից, որն անտիպ է:

Բայց ինչո՞ւ միայն Արցախի գյուղացին։ 1918 թ. հունվարին Շամքորի մոտ «Դիկայա դիվիզիա» կոչված զինավառ թորք զորամասը հարձակվեց Կովկասյան ճակատից տուն դարձող ռուսական ջոկատների վրա, նախ բռնագրավեց ամբողջ զենքն ու զինամթերքը, ապա կոտորեց անզեն մարտիկներին։

Այն ժամանակ էր, որ տունդարձի ճամփան բռնեց նաեւ Շուշիում տեղակայված 532-րդ կամ Սիմբիրսկյան զորամասը՝ քաղաքի ու շրջակա գյուղերի միակ պաշտպանը։ Զորամասը նոր էր Աղդամն անցել, որ ենթարկվեց հարձակման ու կողոպուտի եւ սպառվեց մինչեւ Եվլախ հասնելը։

Արցախի ողբերգական վիճակով մտահոգ հայկական տարբեր շրջաններ փրկության միջոցներ էին մտմտում։ Թիֆլիսի Արցախյան հայրենակցական միությունն էլ հայրենակից երիտասարդներից կազմակերպեց Արցախի կամ Շուշիի գունդ եւ ուղարկեց՝ պաշտպանելու հայրենի եզերքը։ Գունդը երեք ամսում հազիվ հասավ Սեւանի ափը։ Այստեղ էլ տեղեկացավ, թե օսմանա-թրքական բանակը կանգնած է Էջմիածնի ու Երեւանի դարպասների մոտ, եւ հարցականի տակ է հայության վաղվա օրը։ Արցախյան գունդն իր ճանապարհը շեղեց դեպի Արարատյան դաշտը, հայ ինքնապաշտպանությանը միացավ այն պահին, երբ Սարդարապատի ճակատամարտն էր սկսվում։ Հրամանատարությունն այս գունդը միացրեց Սարդարապատի ճակատի կենտրոնում գտնվող, հիմնականում ղարաբաղցիներից կազմված 5-րդ գնդին եւ, Վանի պաշտպանությունից հայտնի զնդապետ Պողոս-բեկ Փիրումյանի հրամանատարությամբ, նետվեց մարտի։

Պողոս-բեկը Վարանդայի Նախիջեւանիկ գյուղի Փիրումյան հին ազնվական տոհմի ժառանգներից էր։ Սարդարապատի ռազմաճակատի գլխավոր հրամանատարն էլ նրա հորեղբորորդի Դանիել-բեկն էր՝ ռուսական զորքի հետ Արեւմտահայաստանի զինաբախումներում թուրքերի դեմ քանի՞-քանի անգամ իր ռազմական քաջությունն ու հմտությունն ապացուցած մի զորական (ռուսաց զորական տարեգրություններում նա հայտնի էր իբրեւ Էրզրումի հերոս)։

Ղարաբաղցի էր նաեւ Սարդարապատի ճակատամարտի մարտաշունչ քարոզիչը՝ արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը, որ վճռական մարտի գնացող ռազմաշարքերի առաջ Ղարաբաղյան միացյալ զորախումբը կնքեց «Մահապարտների գունդ» անունով եւ ասաց՝ ***«Այդ անունից ազատվելու միայն մե՛կ ճանապարհ ունեք՝ թշնամուն հաղթելո՛ւ ճանապարհը»։***

Հայտնի է Սարդարապատի ճակատամարտի ելքը. 1918 թ. մայիսի 22-26-ը հայերը թուրք բռնագրավիչներին հասցրին վճռական ջախջախիչ հարվածը։ Հայտնի է նաեւ «Մահապարտ» Ղարաբաղյան գնդի խաղացած հերոսական դերն այդ վճռական կռվում։ Ճակատամարտի մասնակից, ապագա աշխարհահռչակ մարշալ Հովհաննես Բաղրամյանը տասնամյակներ հետո պիտի գրեր, թե ղարաբաղցիներն այնտեղ ցույց տվին, որ իրենք անմրցակից կռվողներ են, եւ հայրենիքը պետք է հպարտանա նրանցով։

Թուրքերի սարդարապատյան պարտությունն ահազանգ եղավ, որ նրանց պարագլուխները խաղաղություն առաջարկեն հայերին, իսկ Բաքումում խաղաղության բանակցությունների նստած կառավարական չորս պատվիրակություններ՝ Թուրքիայինն

ու այսրկովկասյան երեք ժողովուրդներինը, համաձայնության եկան, որպեսզի Ռուսաստանի տիրապետությունից ազատագրված Այսրկովկասի երեք ժողովուրդները՝ վրացիները, թաթարները եւ հայերը, կազմեն իրենց հանրապետությունները եւ դրանք հայտարարեն անկախ ու ինքնիշխան։ Մայիսի 26-ին վրացիք կազմեցին իրենց անկախ Վրաստանի հանրապետությունը, 27-ին՝ թաթարները (նրանց հանրապետությունը մի քանի շաբաթ հետո՛ պիտի կոչվեր Ադրբեջան, երբ այդ Ադրբեջան-Ատրպատական անունով դարեր շարունակ Իրանի հյուսիս-արեւմտյան մասն է կոչվել), եւ հայերն էլ, ուրիշ ելք չունենալով, իրենց անկախ հանրապետության ծնունդը հայտարարեցին մայիսի 28-ին։

Բաթումում գծվեցին նաեւ նորաստեղծ հանրապետությունների սահմանները։ Թուրքական պատվիրակության ճնշման տակ թաթարներն իրենց՝ դեռեւս անուն չունեցող հանրապետությանը կցեցին Արցախ-Ղարաբաղը եւ ուրիշ հայաբնակ շրջաններ, առանց որոնց անհնար էր կենսունակ Հայաստան պատկերացնել։ Հետաքրքիր է, որ թաթար պատվիրակությունը, ոգեւորված Ղարաբաղը ձեռք ձգելու հեշտին արարողությունից, պահանջում էր նաեւ Զանգեզուրը...

Թիֆլիսի Արցախյան հայրենակցական միության նախագահ եւ մեծ պատմաբան Լեոն գրել է, թե Բաթումում Հայաստանը ներկայացնող պատվիրակությունը (նախագահ՝ Ալ. Խատիսյան, անդամներ՝ Քաջազնունի, Պապաջանյան) կազմված էր մարդկանցից, ***«որոնք ոչինչ հասկացողություն չունեին ո՛չ Ղարաբաղի, ո՛չ էլ Զանգեզուրի մասին»***[1]։

Այսպե՛ս, ուրեմն. երկրի սահմաններից հեռու, առանց նրա ժողովրդի կամքն ու կարծիքը հարցնելու, որոշվում էր Արցախի ճակատագիրը։ Եվ երբ այդ անհեռատես գործարքի լուրը հասավ Արցախական աշխարհ, ընդվզեց ժողովուրդը, ընդունված որոշումը համարեց հիմարություն, հայտարարեց իր վճիռը՝ լինել միայն Հայաստանի պետական կազմավորման սահմաններում, մայր ժողովրդի հետ միասին կառուցել իր ապագան։

Այս պայմաններում, միայն իր հույսին մնացած Արցախի հասարակական կյանքի վրա ազդեցություն ունեցող ուժերը, այն ժամանակ գործող կուսակցությունները, Հայ հեղափոխական դաշնակցության ամենաեռանդուն մասնակցությամբ, որոշեցին ստեղծել մարզի կյանքի կարգավորման մի վարչություն՝ նրա վրա դնելով որոշումներ ընդունելու եւ այդ որոշումներով առաջնորդվելու իրավունքներն ու պարտականությունները։

Բայց ինչպիսի՞ն պիտի լիներ այդ վարչությունը, ղեկավար այդ մարմինը։ Պետական կառավարության ի՞նչ սկզբունքներով պիտի առաջնորդվեր։ Եղան ամենատարբեր առաջարկություններ՝ ժամանակի առաջավոր ժողովրդավարական կազմակերպություններից մինչեւ դիկտատորական կամ միապետական ապարատը։ Նույնիսկ առաջարկ եղավ վերականգնելու մելիքական կարգը, որ ավելի քան երեք դար շարունակ, պար-

1 Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 425։

սից ու թուրքաց բռնատիրությունների դժնդակ աքցանի մեջ, պահպանել էր Արցախ-խամսայի հայկական ինքնավարությունը։

«Դաշնակցություն կուսակցության հարող մտավորականության եւ ղեկավարների մի մասը պահանջում էր իշխանություն ստեղծել՝ բաղկացած բացառապես դաշնակցականներից։ Իրա՛վ է, Լեռնային Ղարաբաղում այդ ժամանակ չկար հասարակական ուժեղ հենարան ունեցող մի այլ քաղաքական հակակշիռ ուժ» (Հ. Թումյան)։ Եվ, այսուհանդերձ, իրենք՝ դաշնակցականներն էլ վերջում եկան այն եզրակացության, որ պետք է ստեղծել բոլոր կուսակցությունները, հասարակական խավերն ու հոսանքները ներկայացնող կոալիցիոն հեղինակավոր մարմին։

Այսպես էր, որ կազմվեց *«Կուսակցությունների ու կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ»*՝ բաղկացած 14 հոգուց, նախագահությամբ Հայրապետ Մուսայելյանի, քարտուղարությամբ Նիկոլայ Իսախանյանի։ Հետագայում այս խորհուրդը պիտի կոչվեր *«Միջկուսակցական բյուրո»* (Հ. Թումյան)։

Անմիջապես գործի անցնելով՝ բյուրոն ճշգրտեց իր պարտականություններն ու անելիքները, տեղում ստեղծեց իր ներկայացուցչությունները, ժողովրդին ոտքի հանեց ինքնապաշտպանության եւ անսայթաք գործունեության համար։ Բյուրոյին ենթակա զինված ջոկատներն ու միլիցիական կետերը պատշաճ կարգ սահմանեցին ինչպես Շուշիում, այնպես էլ գավառներում։

Բյուրոն կարճ ժամանակում տանելի փոխհարաբերությունների մեջ մտավ նաեւ Շուշվա թաթար բնակչության հետ։ Նրա ջանքերի շնորհիվ էր, որ կազմվեց Ազգամիջյան մարմին՝ 6 հայերի ու 6 թաթարների կազմով եւ գլխավորությամբ վրացի, Շուշվա նախկին հաշտարար դատավոր Իոսիֆ Իլարիոնովիչ Կոբիեւի։

Բյուրոյում շատ լավ էին հասկանում մարզի ռազմագիտական դիրքն ու վիճակը, եւ պատահական չէ, որ նրա առաջին մտահոգություններից մեկը դարձավ զինվորական պատրաստությունը։

Բյուրոյում ռազմական գործերը ղեկավարում էր Հարություն Թումյանը՝ հայտնի ֆիդայի Թուման Թումյանի կրտսեր եղբայրը, բանիմաց ու քաջ մի մարդ, որն Արցախի պաշտպանությունն ու ռազմական գործը նախապատրաստելու համար կատարում էր ամեն հնարավորը։

Ապրիլի վերջին Բաքվում Ստեփան Շահումյանի ստեղծած ժողովրդական կոմիսարների խորհրդի գործունեությունը ոգեւորել էր Միջկուսակցական բյուրոյին, որն իր նիստերից մեկում կոմիսարներ կոչեց աշխատանքային տարբեր բնագավառների ղեկավարներին եւ որոշեց սերտ կապեր ստեղծել Բաքվի կոմունայի հետ, համատեղ միջոցներ փնտրել ու գործունեություն ծավալել թուրքական վտանգը կանխելու համար։

Շուտով պարզ դարձավ, որ Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը, Օսմանյան Թուրքիայի՝ Ադրբեջան թափանցած գործակալները եւ մանավանդ Գանձակում *«մուսուլմանական բանակ»* կազմող Նուրի փաշան լուրջ ծրագրեր ունեն Արցախն Ադրբեջանին բռնակցելու գործը շուտափույտ իրականացնելու համար, եւ Միջկուսակցա-

կան բյուրոն որոշեց հրավիրել արցախահայության *առաջին համագումարը*, ընտեղծել իրենց իսկական ու լիիրավ կառավարությունը:

Համագումարն սկսվեց 1918 թ. հուլիսի 22-ին Շուշիում եւ ավարտվեց 24-ին: Նիստերը տեղի էին ունենում Թեմական դպրոցի դահլիճում: Մասնակցում էին գավառների համարյա բոլոր գյուղերի պատգամավորները, շուրջ 180 հոգի: Սկզբում նախագահ ընտրվեց բոլշեւիկ Ալեքսանդր Ծատուրյան-Ռուբենին, որն առաջին իսկ նիստից հետո, առանց լուրջ պատճառաբանության, հրաժարվեց նախագահել՝ տարակուսանք եւ դժգոհություն առաջ բերելով պատգամավորների շրջանում:

Միջկուսակցական բյուրոյի կամ կոմիսարների խորհրդի գործունեության մասին հաշվետու զեկուցումով հանդես եկած Հ. Մուսայելյանը, հանգամանորեն ներկայացնելով այն օրերի քաղաքական դրությունը՝ Հայաստանի Հանրապետության առաջին քայլերի ծանրությունը, առանձնապես ընգծում էր արցախահայության խնդիրները՝ ստեղծված բարդ, պարզապես անելանելի իրավիճակից դուրս գալու համար:

Ելույթներում քննության են առնվում մարզի անիշխանության ու անկարգապահության վերացմանը, թուրքական վտանգի դեմ ռազմական ու քաղաքական ապահովություն ստեղծելուն ուղղված միջոցառումներ: Եվ որոշվում է գյուղական համայնքներին բաժանելու համար բռնագրավել, այսպես կոչված, ամենաբերրի տարածությունները, որոնք Շուշվա թորք խանի հարազատներին էին նվիրաբերվել XIX դարի սկզբին, ռուսական տիրապետության առաջին իսկ տարիներին, կաշառված ռուս չինովնիկների օգնությամբ:

Գետաշենի պատվիրակներն էլ պահանջում էին երբեք աչքաթող չանել Գյուլիստանի գավառը եւ ապագա բոլոր միջոցառումներում նրա գյուղացիության հոգսերին մոտենալ սրտացավությամբ, առհասարակ երբեք չմոռանալ Արցախի ամբողջականությունը:

Կազմվում է «Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը»՝ հետեւյալ յոթ անձերից.

1. Եղիշե Իշխանյան՝ նախագահ եւ կառավարիչ ներքին ու արտաքին գործերի,
2. Արշավիր Քամալյան՝ կառավարիչ հողային ու արդարադատության գործերի,
3. Արսո Հովհաննիսյան՝ կառավարիչ պարենավորման գործերի,
4. Մարկոս Տեր-Աստվածատրյան՝ կառավարիչ ֆինանսների,
5. Հարություն Թումյան՝ կառավարիչ զինվորական գործերի,
6. Մարտիրոս Այվազյան՝ կառավարիչ հաղորդակցության,
7. Մելիքսեթ Եսայան՝ կառավարիչ քարտուղար:

Բավական նպատակասլաց ու մարտական էր համագումարի հռչակագիր-դեկլարացիան, որի առանցքն էին կազմում ժողովրդի միասնության ու մարտունակության ապահովման, ազգային ինքնորոշման ճանապարհով անկախ ազգային գոյության հասնելու խնդիրը:

«Քաղաքական վայրիվերումներից առանձնացած, կղզիացած մնաց Ղարաբաղը,»- գրված էր հռչակագրում:- *Կտրված աշխարհից նա ամբողջ ութ*

ամիս մնում էր միևնույն մեռյալ կետում։ Սակայն մահացու կլիներ իր վիճակը կապել իրերի քմահաճ ընթացքին։ Ղարաբաղը գիտակցեց պահի լրջությունը։ Ժողովրդին հատուկ առողջ բնազդով Ղարաբաղի ամբողջ հայ բնակչությունը վճռեց չսպասել, մինչև կգա եղբայրական ուժը, որը պիտի ազատեր նրան շղթաներից։ Այդ ընթացքը վտանգի կենթարկեր բոլոր արժեքները։ Եվ, ահա՛, հավաքվել էին Լեռնային Ղարաբաղի հայության ժողովրդական ներկայացուցիչները՝ տնօրինելու երկրի ճակատագրիր։

Համագումարը մի անգամ ևս ընդգծեց իր բարեկամական վերաբերմունքը դեպի մյուս ազգությունների դեմոկրատիան։ Այդ ճանապարհով մենք կարող ենք հասնել ռուսական հեղափոխության հայտարարած վսեմ գաղափարներից մեկի՝ ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացմանը։

Եվ դա՛ է լինելու Ղարաբաղի կառավարության գործունեության ելակետը։ Համագումարի ընտրած կառավարությունը կոչված է իրագործելու առաջին հերթին ժողովրդի կամքի այդ արտահայտությունը»։

Նորընտիր ժողովրդական կառավարությունն արդեն գործում էր։ Առաջին հաջող ձեռնարկումներից ոգեշնչված՝ փորձեց դեպի Զանգեզուր տանող ճանապարհները մաքրել թուրք-թաթար-քուրդ ավազակախմբերից, կապվել Զանգեզուրի եւ մանավանդ այնտեղ գտնվող Անդրանիկի հետ, որն արեւմտահայ գաղթականների մի հոծ խումբ եւ իր մարտական զորաջոկատն առել, նստել էր Զանգեզուրում ու սպասում էր դեպքերի զարգացմանը։ Ցավոք, արցախցիների մարտական ձեռնարկն անհաջող անցավ, եւ Անդրանիկն էլ Ղարաբաղին օգնության հասնելու ոչ մի նշան ցույց չտվեց։

Սարդարապատի ճակատամարտից հետո Արցախյան կամ Շուշվա գունդը հայրենիք պիտի վերադառնար։ Այն իր հետ պիտի բերեր զենքի ու զինամթերքի բավական պատկառելի մի քանակություն։ Սակայն սկզբում իշխանությունները խանգարեցին վերադարձի գործին, հետո էլ, երբ գունդը հասավ Գորիս, այստեղ նրա ունեցվածքի մի զգալի մասին տեր կանգնեցին տեղի զինվորական մարմնի ղեկավարները։ Եվ երբ կազմավորումից շուրջ մեկ տարի հետո, 1918-ի աշնանը, գունդը Շուշի հասավ, պարզվեց, որ այն զինաթափված է։

Սեպտեմբերի սկզբին Աղդամում հակաարցախյան ծրագրեր որոնացող թուրք գործիչ Զամիլ Զահիդ բեյը մի գրությամբ Ղարաբաղի հայությունից պահանջեց ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը եւ ոչ մի կապ չունենալ ո՛չ Զանգեզուրի, ո՛չ էլ այնտեղ նստած Անդրանիկի հետ։ Այս գրությունը ներկայացվեց որպես Ադրբեջանի կառավարության նոտա։ Պետք է պատասխան տրվեր, եւ արցախահայության ներկայացուցիչները հավաքվեցին իրենց *երկրորդ համագումարին*, որը տեղի ունեցավ սեպտեմբերի առաջին կեսին, շուրջ 200 պատգամավորներով։

Համագումարը լսեց ժողովրդական կառավարության հաշվետվությունը, որոշեց մարզը շրջապատող թուրքի շրջաններում տեղակայված ռազմաժանդարմական խմբերի (*«կոմենդատներ»* կոչված) սադրանքներին դիմակայելու միջոցներ մշակել, Զամիլ Զահիդ բեյի նոտային պատասխանելու համար էլ կազմեց հինգ հոգուց բաղկացած պատվիրակություն, որը պիտի բանակցություններ զնար Աղդամ։

Համագումարը կարճ տեւեց, ընդամենը երեք նիստ, եւ սեպտեմբերի 16-ին պատգամավորներն շտապեցին տեղերը, որպեսզի պատրաստվեն ինքնապաշտպանության։

Երբ Շուշիի հայոց պատվիրակությունը հասավ Աղդամ՝ Զամիլ Զահիդ բեյի հետ բանակցություններ վարելու, այնտեղ արդեն առել էին Բաքվում Ստեփան Շահումյանի ժողովրդական կառավարության անկման եւ թուրքերի Բաքու ներխուժելու լուրը։ Հայտնի էր նաեւ, որ սկսված է Բաքվի հայերի կոտորածը, թուրք-թաթարական եռօրյա (սեպտ. 15-17) այն դիվային խրախճանքը, որին զոհ գնացին ավելի քան 30 հազար հայեր։

Զամիլ Զահիդ բեյը, պատվիրակության ողջույնին պատասխանելու փոխարեն, երեսներին շպրտեց.

- Ղարաբաղը չենթարկեցի՞ք Ադրբեջանին, դեհ, վայելեցեք պատասխանը։ Դա միայն սկիզբն է, իմացած լինեք...

Ապա ներկայացրեց իր հրովարտակն Արցախի հայերին։ Այն կարճ էր ու կտրական՝ զենքերը հանձնել եւ հպատակություն հայտնել Ադրբեջանին։

Աղդամում տիրություն անողն արդեն Նուրի փաշան էր՝ Թուրքիայի հայտնի զորավարը, որն էլ իր հերթին վերջնագիր ուղարկեց ղարաբաղցիներին՝ պահանջելով զինաթափվել եւ հանձնվել թորքի ողորմածությանը, քանի որ թուրքական զորքերը, Բաքուն նվաճելուց հետո, շարժվում են դեպի Ղարաբաղ։ Մեկ էլ պահանջում էր բացել իրենց զորքերի ճանապարհը դեպի Շուշի։

Արցախի կառավարության խորհուրդը սուրհանդակի միջոցով Նուրի փաշային պատասխանեց, թե վերջնագրին պատասխան տալու իրավունք ունի միայն համագումարը։ Եվ հրավիրեց արցախահայության *երրորդ-արտակարգ համագումարը*, որի ավելի քան 600 պատգամավորները (յուրաքանչյուր գյուղից երկուսը) սեպտեմբերի 27-ին Շուշի հավաքվեցին ջղագրգիռ վիճակում։

Համագումարը երկու պահանջներն էլ, Եւ Ադրբեջանի գերիշխանության ընդունումը, Եւ թուրքաց առաջ ճանապարհ բացելը դեպի Շուշի, մերժեց։ Այն ժամանակ Աղդամում տեղադրված հեռահար հրետանիներն ահեղ կրակ թափեցին սահմանային բնակավայրերի՝ Խրամորթ ու Խնածախ, Նախիջեւանիկ ու Վարազաբույն, Դահրավ ու Քյաթուկ գյուղերի վրա։ Եվ հայկական կողմն ստիպված եղավ գնալ զիջումի՝ թույլ տալ, որ թորքի մի ջոկատ, թվով հազար ասկյար, մտնի Շուշի եւ տեղավորվի իրենց թաղամասում։

Սակայն բանակցության պայմանները խախտելով՝ թորքերը քաղաք մտցրին ավելի քան երկու հազար զինվոր, որոնց տեղավորեցին հայկական մասի բարեկարգ հասարակական շենքերում (Ռեալական ու Թեմական դպրոցները, Օրիորդաց միջնակարգը, նախկին ռուսական զորանոցը եւն)։

Երեւի նախապես թորքերին թվացել էր, թե Շուշի մտնելը բավական է լինելու, որ իրենք տեր դառնան ամբողջ Արցախին։ Սակայն այնպես էլ չկարողացան որեւէ կապ ունենալ գյուղացիների հետ, հակառակը, սրանք էին, որ, ամրակուռ պաշտպանական կետերին հենված, հսկում էին թորքերի ամեն մի տեղաշարժի վրա, հետախուզական իրենց միջոցառումներով հաճախ հասնում էին հին բերդի պարիսպներին՝ տագնապահար անելով թորքերին։

Հոկտեմբերի երկրորդ կեսին թորքի հրամանատարությունը որոշեց իրեն խեղդող պարանը կտրել բարակ տեղից. Կարյագինոյի փաշայի անունից Դիզակի գավառին կարգադրեց ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Դիզակի ժողովրդական զինվորության հրամանատար Արտեմ Լալայանը խրոխտ պատասխան ուղարկեց թորք կոմենդանտին: Այնտեղ ասված էր՝ մեր գավառը փոքր է ու ոչ այնքան հրապուրիչ, բայց այն երբեք չի խոնարհվել օտար բռնավորի առաջ՝ սկսած վաղ միջնադարից, երբ մեր Եսայի Աբու-Մուսե իշխանն իր Գտիչ բերդի տակ ջարդեց արյունռուշտ Բուղա թորք զորավարին: Իսկ եթե կուզենաք ստուգել մեր խոսքի ճշմարտությունը, փորձեք զենքով գալ մեզ վրա:

Երեւի Կարյագինոյի փաշայի վրա շշմեցնող ազդեցություն էր ունեցել այս ըմբոստ պատասխանը: Նա որոշեց քարոզանդ անել Դիզակի ամբողջ գավառը եւ դրա համար օգնական զորք պահանջեց Շուշիի կայազորից: Այն ժամանակ 400 ընտիր զինվորներից կազմված մի ջոկատ, Շուշիից ելնելով, Վարանդայով պիտի գնար Հադրութի վրա: Լալայանն իմացավ այս զորաշարժի մանրամասները եւ, Դիզակի սահմաններն անցնելով, մի քաջավարժ ջոկատ ուղարկեց թորքերին ընդառաջ: Ջոկատը ղեկավարում էր կեմրակուեցի Ասլանիկ անունով մի երիտասարդ սպա, որն իր խմբով դարանակալեց Վարանդայի Մսմնա գյուղի անտառում, եւ, երբ թորքերը գյուղի տակի ձորով անցնում էին, հանկածակի վրա տվեց, ջարդեց՝ մինչեւ վերջին զինվորը:

Երեւի, այնուամենայնիվ, փախչող-փրկվող էլ էր եղել, որովհետեւ հաջորդ օրվա՝ հոկտ. 29-ի երեկոյան արդեն Շուշիում Ջամիլ Ջահիդ բեյը քաղաքի հայերից պահանջում էր, որ նրանք մարդիկ ուղակեն Վարանդա եւ այնտեղից ետ բերեն իրենց ***«կորցրած»*** թնդանոթն ու գնդացիրները:

Հայոց զինվորական կառավարիչը վկայում է, որ Վարանդայի ու Դիզակի ըմբոստներն այդ անհաճո հանձնարարությամբ իրենց մոտ գնացածներին ձեռնունայն ետ էին տվել՝ սպառնալով, թե իրենք այդպես պիտի վարվեն լեռնաստանի բոլոր անկոչ հյուրերի հետ:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՌԱԶՄԱԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽԱՐԴԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1918 թ. վերջերին Թուրքիան, իբրեւ պարտություն կրած կողմ, պարտավորվել էր իր զորքերը դուրս բերել Բալկաններից, Մերձավոր Արեւելքի երկրներից ու Այսրկովկասից: Հասկանալի է, որ Արցախից եւս պիտի հեռանային: Սակայն շրջակա թաթարական գավառներում մնացին նրանց զորապետներից շատերը (Նուրի փաշա, Խալիլ փաշա, Քյազիմ փաշա), որոնք պիտի մարզեին տեղացիներին, գլխավորեին նրանց հակահայկական խարդավանքները:

Հայաստանի կառավարությունը կարո՞ղ էր օգտվել հանգամանքների այսպիսի դասավորությունից եւ իր զորքերը մտցնել Արցախ: Իհակե, կարող էր եւ այդ պետք

է աներ։ Դրանով մեկընդմիշտ կազատվեր գլխացավանքից։ Սակայն այդօրինակ մի քայլ ձեռնակելու եւ հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ էր արտակարգ ճկունություն, իրադրությունը գնահատելու եւ նրանից իր առավելագույն օգուտը քաղելու հմտություն, որ, ցավոք, մեր հանրապետությունը չուներ։ Նրա փոխարեն այդ ամենը եւ էլի ուրիշ բազմաթիվ գծեր, ինչպես խորամանկություն, կաշառքով ու զանազան սադրանքով իր շահերն առաջ տանելու վարպետություն, ուներ հակառակորդը, որ Ադրբեջանի մուսավաթական հանրապետությունն էր։

Այն տարվա (1918) վերջերին, արցախցիների խնդրանքով, Անդրանիկը որոշել էր մտնել Շուշի, մեկընդմիշտ լուծել մարզի հայության ազատագրության հարցը։ Նրա զորաշարժի լուրն առնելով՝ Արցախի գավառները ոտքի էին ելել, պատրաստ էին վճռական գործողությունների։ Իսկ Շուշիում ու հարեւան թորքաբնակ գյուղերում տագնապ էր ընկել։ Ականատեսն ասում է. ***«Շուշվա թաթարներից շատերը կատաղով ու ֆուրգոններով իրենց ունեցվածքն էին տեղափոխում Եվլախ, որ գյուխ պրծացնեն վերահաս աղետից»*** (Հ. Թումյան)։

Նոյեմբերի 15-ին սկսվեց Անդրանիկի ռազմերթը։ Մի քանի օր հետո նա արդեն Ավդալլար (այժմ՝ Լաչին) ավանն անցել, հասել էր Տասվերստ կոչված վայրը՝ առանց լուրջ դժվարությունների։ Սակայն այնտեղ նրան ներկայացան Ադրբեջանում Անգլիայի դիվանագիտական ու ռազմական միսիայի ղեկավար գեներալ Թոմսոնի ուղարկած մարդիկ եւ, հանձնելով գեներալի գրությունը, ստիպեցին, որ Անդրանիկը ետ դառնա Գորիս, ապա թե ոչ, իբր, պատճառ կդառնա, որ Անգլիան թշնամաբար տրամադրվի հայկական հարցում, իսկ Ղարաբաղի խնդիրը պիտի լուծվի մոտ ժամանակները գումարվելիք Փարիզի խորհրդաժողովում։ Իբր, մինչ Ղարաբաղի խնդրի վերջնական լուծումն էլ անգլիական միսիան ամեն ինչ կանի այնտեղ խաղաղություն ու կարգ պահպանելու համար։

Անդրանիկը վստահեց Թոմսոնի գրությանն ու լրաբերների բարբաջանքներին, որոնք միայն Բաքվի մուսավաթական տերերի կազմակերպածն էին, եւ վերադարձավ Գորիս։

Ականատեսները պատմում են, թե Արցախի ներկայացուցիչները զորավար Անդրանիկին պաղատագին խնդրում էին ուշք չդարձնել Թոմսոնի խաբեբայությանը, մըտնել Արցախ եւ լուծել նրա զորդյան հանգույցը։ Չէ՞ որ հնարավոր է, շա՞տ է հնարավոր, որ այլեւս չստեղծվի նման հարմարագույն պարագա։

Ինչեւէ, Անդրանիկը կատարեց Թոմսոնի պահանջը. վերադարձավ Գորիս՝ արցախահայությանը թողնելով իր վճռական օգնությանը կարոտ, Ադրբեջանի նոր խարդավանքների առաջ մեն-մենակ ու անօգնական։

* * *

Գեներալ Թոմսոնի խոստումը կատարվեց կարճ ժամանակում. դեկտեմբերի 18-ին Արցախ մտավ ***«խաղաղարար»*** անգլիական ներկայացուցչությունը՝ մայոր Մաք-Մոզը-

նի գլխավորությամբ, սկզբում 50 զինվորի հետ միասին։ Դրան էլ հետեւեցին թուրք սպաների ղեկավարությամբ հարեւան շրջաններում գործող թաթար զորաջոկատների հարձակումները Դիզակի ու Վարանդայի մի շարք գյուղերի վրա (Խծաբերդ, Թեզխաբաբ, Խանձաձոր, Պետրոսաշեն, Ղարաղշլաղ, Սոս, Մանկալաչեն, Ճարտար)։

Մեկ ամիս էլ չէր անցել, 1919-ի հունվարի 15-ին, Ադրբեջանի կառավարությունը, իհարկե, ո՛չ առանց գեներալ Թոմսոնի համաձայնության, Արցախի ու Զանգեզուրի գեներալ-նահանգապետ նշանակեց բժիշկ Խոսրով բեկ Սուլթանովին, որը նախընթացին Արցախի կողմերում հայտնի էր եղել իր հակահայկական ջարդարարական գործերով, իսկ առհասարակ երիտթուրքերի գործակալն էր Այսրկովկասում։

Արցախն ապստամբեց բացահայտորեն վայրենի այս գործարքի դեմ։ Հունվարի 26-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանն իր բողոքի ու մերժումի գիրն ուղարկեց Ադրբեջանի կառավարությանը. ո՞նց թե հայաբնակ ու հայկական անկախ լեռնաստանում գեներալ-նահանգապետ պիտի նստի Ադրբեջանի ներկայացուցիչը, այդ ո՞ր օրենքով, ի՞նչ իրավունքով... Եվ Ադրբեջանի կառավարությունն այս գիրը համարեց ադրբեջանական իշխանությունների հեղինակության դեմ կատարված ոտնձգություն, Ադրբեջանի *«ներքին գործերին միջամտելու փորձ»։*

Երեւանում էլ ստացան գեներալ Թոմսոնի մի գրությունը, որը փաստորեն պատասխան էր տալիս Տիգրանյանի բողոքին։ Այնտեղ գրված էր. *«Դոկտոր Սուլթանովը գնում է Շուշի՝ իբրեւ ընդհանուր նահանգապետ Զանգեզուրի, Շուշիի եւ Ղարաբաղի շրջանների։ Նա այդ անում է՝ առանց դնելու որեւէ պահանջ Ադրբեջանի ապագա վարչության վերաբերմամբ։ Նա գնում է այնտեղ միայն օրենքը եւ կարգը պահպանելու համար»։*

Ահա այսպե՛ս, ցինիկորեն մերկ ու գռեհիկ. հակահայ ջարդարարը պիտի հայկական երկու մարզերում օրենք ու կարգ պահպանի։ Եվ նրան թեւ ու թիկունք պիտի լիներ անգլիական միսիան՝ մայոր Մաք-Մոզընի գլխավորությամբ, որը Սուլթանովի ժամանելուն պես հրավարտակ հրապարակեց՝ հայտարարելով, թե *«գեներալ-նահանգապետության ու նրա մարմինների կողմից տրվող ամեն տեսակ հրամաններն ու հանձնարարությունները պետք է անհապաղ իրականացվեն նահանգի բոլոր բնակիչների կողմից։ Յուրաքանչյուր դիմադրություն կխափանվի բրիտանական հրամանատարության կողմից ամենայն վճռակամությամբ»։*

Հունվարի 15-ին Արցախի հայոց Ազգային խորհուրդը Բաքվի հայոց Ազգային խորհրդին (թերեւս նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարությանը) մի ընդարձակ զեկույց էր ներկայացրել, որով փորձում էր պատկերացում տալ անգլիական նվաճողների տիրապետության բերած աղետների մասին։ Թե ինչպես արցախահայությունը կտրված է Հայաստանից եւ առհասարակ արտաքին աշխարհից։ Թե ինչպես փակ են ամեն տեսակ ճանապարհները (Եվլախ-Զաբուղ-Գորիս), հեռագրական կապ չկա,

նույնիսկ ձորով ու անտառներով անցնող կածանները բռնված են մուսավաթական ավազակախմբերով: Թե ինչպես Բաքվի թերթերը տպագրում են ստահոդ հազար տեսակ լուրեր արցախահայերի ինչ-որ ապստամբության մասին, եւ *«մեզանից ոչ ոք հնարավորություն չունի հերքելու, որովհետեւ հեռագրատները նրանց (թորքերի) ձեռքին են, եւ մեր բողոքը տեղ չի հասնում։*

... Մինչեւ օրս մենք պաշտպանվել ենք տաճկական ու տեղական մահմեդականների դեմ եւ ինքներս մեզ կառավարել ենք՝ առանց դրսից որեւէ օգնություն ստանալու։ Մի ամբողջ տարի մենք տարել ենք հազար ու մի տանջանք, բայց ոչ ոքի թույլ չենք տվել բռնանալու մեր ազատության ու անկախության վրա։

... Որպեսզի ավելի պարզ լինի մեր ներկա վիճակը, կարեւոր ենք համարում հայտնել, որ հունվարի 5-ից սկսած Ադրբեջանի զորքերը, Ղարաբաղում մնացած թորք ասկյարները եւ մուսուլմանական զանազան խմբեր զինվորական շտաբ են կազմակերպել Աղդամում՝ տաճիկ սպաների գլխավորությամբ, բերել են տվել մեծ քանակությամբ ռազմամթերք, թնդանոթներ, գնդացիրներ, մի քանի հազար մարդուց բաղկացած բանակն էլ ուղարկել են Ջաբուղի ձորը եւ գրավելով Ասկերանը՝ նորից զորք են մտցրել Խանքենդի։

Այս ամենից երեւում է, որ մեզ շրջապատում են թե ճակատից եւ թե թիկունքից... Իսկ մենք, ճշտությամբ կատարելով անգլիական միսիայի պահանջները, ոչ մի միջոց չենք ձեռնարկում դրա առաջն առնելու համար, ուրիշ խոսքով՝ մենք մեր ձեռքով փորում ենք Ղարաբաղի հայության գերեզմանը»։

1919 թ. փետրվարի կեսերին Շուշվա Թեմական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ Արցախի հայության *չորրորդ համագումարը:* Այն վերստին պիտի պատասխան տար անգլիացիների ու Սուլթանովի կտրական առաջարկին՝ ընդունելու Ադրբեջանի տիրապետությունը, ինչպես նաեւ որոշելու այն միջոցառումները, որոնց իրականացումն ապահովելու էր մարզի անկախ ու ինքնուրույն գոյությունը:

Ընդունվեցին մի շարք որոշումներ, որոնց մեջ էլ երկար ու տաք բանավեճի արդյունք՝ հետեւյալ որոշում-բանաձեւը.

«ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ ՂԱՐԱԲԱՂՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԻ ՄԱՍԻՆ

Կանգնած լինելով ժողովրդի ինքնորոշման սկզբունքի վրա՝ Ղարաբաղի հայ բնակչությունը հարգանքով է վերաբերվում դեպի հարեւան թորք ժո-

ղովրդի ինքնորոշման սկզբունքը եւ դրա հետ միաժամանակ ամբողջ աշխարհի առաջ վճռականորեն բողոքում է ադրբեջանական կառավարության փորձերի դեմ, որոնցով նա ցանկանում է ոչնչացնել այդ սկզբունքը հայկական Ղարաբաղի նկատմամբ, որն իր վրա չի ընդունում եւ երբեք չի ընդունելու Ադրբեջանի իշխանությունը։ Համագումարը պնդում է իր իրավունքների պաշտպանության վրա՝ թե՛ Կովկասում գտնված դաշնակից պետությունների ներկայացուցիչների եւ թե՛ Եվրոպայի խաղաղարար համագումարի առաջ։

Այս բողոքն ուղարկվում է նաեւ Բաքվի դաշնակից պետությունների հրամանատարությանը, գեներալ Թոմսոնին, Ադրբեջանի կառավարությանը եւ Եվրոպայի խաղաղարար համագումարի հայ պատգամավորներին։

Համագումարի նախագահ՝ Շահնազարյան
Քարտուղար՝ Առաքելյան»։

Փետրվարի 20-ին համագումարն ընտրեց Ազգային խորհուրդ՝ նրան վստահելով մարզի հայության ճակատագրի տնօրինությունը։

Ազգային խորհուրդը նոր էր ընտրվել, որ Մաֆ-Մոզրնը մի սպառնալից գրությամբ հայերից պահանջեց հնազանդվել խոսրով բեկ Սուլթանովին՝ նրան տալով մեկ հայ օգնական, անմոռուչ կատարել Սուլթանովի նահանգապետության բոլոր որոշումներն ու հրահանգները, եւ որ *«Ընդդիմությունը կպատժվի ամենավճռական միջոցներով»։*

Ազգային խորհուրդը հանգամանորեն վերլուծեց Մաֆ-Մոզրնի հերյուրած թուղթը, նրան տվեց մի պատասխան, որ միայն այս ըմբոստ լեռնաստանին կվայելի։ Ահա այն.

«ՇՈՒՇՈՒ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՄԻՍԻԱՅԻՆ

Ղարաբաղի հայության Ազգային խորհուրդն իր ամբողջ կազմով, Ղարաբաղի բոլոր շրջանների հրամանատարների հետ, քննելով Ադրբեջանի կառավարության կողմից Ղարաբաղում գեներալ-նահանգապետ նշանակելու փաստը, *եկավ այն եզրակացության, որ հայկական Ղարաբաղը չի կարող հաշտվել դրա հետ, որովհետեւ կախումը* Ադրբեջանի կառավարությունից, ինչպիսի ~ ձեւով էլ այն արտահայտվելու լինի, *Ղարաբաղի հայությունը համարում է անընդունելի՝ շնորհիվ այն բռնությունների եւ իրավունքների ոտնահարման, որոնց շարունակաբար ենթարկվել է մինչեւ վերջին ժամանակներս հայությունը Ադրբեջանի կառավարության կողմից ամենուրեք, որտեղ նա կապել է իր վիճակն այդ կառավարության հետ։ Հայկական*

Ղարաբաղն ամբողջ աշխարհին ցույց է տվել, որ նա փաստորեն չի ճանաչել եւ չի ճանաչում իր սահմաններում Ադրբեջանի կառավարության իշխանությունը, ինչպես այդ վճռեց օրերս Ղարաբաղի հայության համազումարը»։

Եվ այսմանից հետո անում են քաղաքավարական մի զիջում. եթե կուզեք, նշանակեք անգլիացի գեներալ-նահանգապետ, դա կհանդուրժենք եւ կսպասենք խաղաղության խորհրդաժողովի որոշմանը։

Անհնար է ասել ավելի պարզ, ավելի վճռական, մանավանդ առավել անփոփոխելի ու հավերժական, ասել՝ ահա այսպե՛ս, մենք վճիռ ենք հանում բոլոր ժամանակների ու բոլոր հանգամանքների համար. արցախահայությունն իր Ազգային խորհրդի ու զինվորական գործի ղեկավարների անունից մերժում է ո՛չ միայն խոսքով բեկ Սուլթանովի գեներալ-նահանգապետությունը, այլեւ *«առհասարակ կախումն Ադրբեջանի կառավարությունից, ինչպիսի ձեւով էլ այն արտահայտվելու լինի»։*

Ազգային խորհրդից մերժված Մաք-Մոզրնը դիմեց Արցախյան զորքերի հրամանատարներին՝ հուսալով, որ սրանք համաձայնության կգան։ Սակայն այստեղ եւս կրտրական մերժման արժանացավ։

Իսկ Ազգային խորհուրդն իր վճիռն ուղարկեց նաեւ Բաքու, գեներալ Թոմսոնին։

Ի պատասխան այս վճռական դիրքի՝ Թոմսոնն ու Մաք-Մոզրնը, ամենայն հավանականությամբ, Բաքվի մուսավաթ պարագլուխների թելադրանքով, հայտնեցին իրենց հետեւյալ վճիռը. համաձայն են, որ Լեռնային Ղարաբաղը սերտորեն կապվի Դաշտային Ղարաբաղի հետ՝ փոխանակ Զանգեզուրի հետ ունենալիք վարչական ու տնտեսական առնչությունների։

Դժվար չէր հասկանալ Ադրբեջանի այս նոր զառանցանքի փակ երեսը. Ղարաբաղը, հայկական Զանգեզուրից ընդմիշտ կտրվի, կապվի Դաշտային Ղարաբաղի մուսուլմանությանը, կազմի մի նոր վարչական միավոր, որի շրջանակներում ինքն այլեւս ազգային մեծամասնություն չի կազմի, եւ, այսպիսով, կմեռնեն նաեւ ղարաբաղահայության ազգային ինքնավարության խնդիրն ու նրանով պայմանավորված քաղաքական-իրավական արտոնությունները։

Ազգային խորհուրդը հատուկ գրությամբ մերժեց նաեւ այս առաջարկությունը՝ որպես Արցախի բռնակցման նոր տարբերակ։

Թոմսոնն ու Ադրբեջանի ղեկավարները հասկացել էին, որ արցախահայության դիրքերն այդպես աներեր ու վճռական են նրա ղեկավարության միասնականության շնորհիվ։ Որոշեցին խարխլել այդ ղեկավարությունը։ Իսկ խարխլելու ի՞նչ միջոցներ կան. կաշառքը, բարձր դիրք ու պաշտոնի առաջարկությունը..., վերջապես, շարքից հանելը։ Եվ որոշեցին այդ ղեկավարներին հրավիրել Բաքու՝ իբր, բանակցությունների, այն էլ անպայման նշելով պատվիրակության կազմը՝ վեց հոգի, որոնց շարքում Ազգային խորհրդի նախագահն ու նրա երկու տեղակալները՝ անպայման։

Ազգային խորհրդում հասկացան, որ թակարդ է լարված իրենց դեմ եւ մերժեցին

Թոմսոնին, չգնացին բանակցության։ Ոչ միայն չգնացին, այլեւ մարտի 13-ին մի նամակով դիմեցին Թիֆլիսում նստած Դաշնակիցների կովկասյան հրամանատարությանը, պահանջեցին, որ միջոցներ ձեռնարկվեն արցախահայության իրավունքները պաշտպանելու, անգլիական միսիայի անօրինություններին վերջ տալու համար։ Այստեղ էլ ոտքի ելան Թիֆլիսի Արցախյան հայրենակցական միությունը, հայկական մյուս կազմակերպությունները, շարժվեց նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարությունը (վարչապետ Ալ. Խատիսյանը երեւի հիշել էր, որ իր մեղքով էր Բաքումում Ադրբեջանի առաջ նետվել հայկական Ղարաբաղը)... Սակայն դրական եւ ո՛չ մի քայլ։

Մի քանի օր հետո Թոմսոնը կարգվեց Այսրկովկասում բրիտանական գլխավոր հրամանատար։ Նրա փոխարեն Բաքու գնաց գնդապետ Շատելվորտը, որը գործի անցավ հայերի հանդեպ թոմսոնյան քաղաքականությունն անշեղորեն իրականացնելու ծրագրով։ Արցախ հասած նրա առաջին խոսքը 1919 թ. ապրիլի 3-ի հրամանն էր, որով Շուշու, Զանգեզուրի, Զաբրայիլի ու Ջիվանշիրի հայ բնակչությունից պահանջում էր անմռունչ ենթարկվել գեներալ-նահանգապետ Սուլթանովին։

Լեոն լավ է ասել, թե կաշառված անգլիացիների համար այն օրերին անգիր արված մի կարգախոս կար՝ կա՛մ խոսրով բեկ Սուլթանով, կա՛մ ջրհեղեղ[1]։

Արցախահայությունը Շատելվորտի հրամանը եւս համարեց դատարկ ու անարժեք խոսք։ Շուշվա հայությունը, զավառի մեծաթիվ ներկայացուցիչների հետ միասին, բողոքի ցույց կազմակերպեց քաղաքում։ Անգլիական միսիայի շենքի մոտ եղույթ ունեցողները պահանջեցին Սուլթանովին հեռացնել Արցախից եւ վերջ տալ անգլիական հովանավորությամբ կազմակերպվող հակահայկական վայրագություններին։ Իսկ Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարն այս առթիվ հայտարարեց, թե ***«Հայաստանի կառավարության կարծիքն ու որոշումը մնում են անփոփոխ, այսինքն՝ Զանգեզուրի ու Ղարաբաղի հայ բնակչությանը չի կարելի ստիպել ենթարկվելու Ադրբեջանին»։***

Ըստ երեւույթին այդ Շատելվորտն ավելի ***«գործնական»*** մարդ էր, քան նախորդը՝ Թոմսոնը. իր հրամանի ետեւից գնաց-հասավ Շուշի եւ ստիպեց, որ մարզի հայությունն անմռունչ կատարի իր պահանջը՝ ենթարկվի Սուլթանովին, նրա միջոցով էլ՝ Ադրբեջանին։

Ապրիլի 23-ին, ո՛չ առանց Շատելվորտի հարկադրանքի, Շուշիում բացվեց մարզի հայության *հինգերորդ համագումարը*, որին մասնակցեցին 69 պատգամավորներ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության մի խումբ ներկայացուցիչներ։

Առաջին իսկ նիստում եղույթ ունեցավ Շատելվորտը եւ պահանջեց, որ համագումարն ընդունի Ադրբեջանի կազմած եւ անգլիական միսիայի կողմից հավանության արժանացած նախագիծը Ղարաբաղի վարչական կազմակերպման վերաբերյալ։ Ուրիշ խոսքով՝ Արցախն իր վիզը պիտի դներ Ադրբեջանի լծի տակ եւ այդ օրվանից դառնար նրա հպատակը։ Խնդիրը դյուրացնելու համար անգլիական սպան հայտարա-

---

1 Լեո, Անցյալից, էջ 427։

րեց նաեւ, թե Հայաստանի կառավարությունն էլ արդեն տվել է իր համաձայնությունը, որպեսզի Արցախը համարվի Ադրբեջանի մաս։

Հայաստանի Հանրապետության երկու ներկայացուցիչներ՝ Միխայել (Միշա) Արզումանյանն ու Հովսեփ Արղությանը, որոնք ներկա էին համագումարին, ելույթ ունեցան եւ տեղնուտեղը մերկացրին այդ խաբեությունը։

Շատելվորտի բերած ծրագիրն ուրիշ բան չէր, քան այն գրությունը, որ դեռեւս փետրվարին Թոմսոնն էր ջանում փաթաթել Արցախի վզին։ Համագումարն այն քննեց ամենայն մանրամասներով եւ ընդունեց մի ընդարձակ որոշում, որից ես քաղում եմ նրա վճռական մասը.

«Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը, 1919 թ. ապրիլի 23-ին, լսելով անգլիական հրամանատարության ներկայացուցիչ գնդապետ Շատելվորտի առաջարկությունը Ղարաբաղի ժամանակավոր վարչական կազմակերպության մասին եւ քննելով այդ հարցն ապրիլի 24-ի իր պաշտոնական նիստում, որոշեց.

... Համագումարն անընդունելի է համարում ամեն մի վարչական ծրագիր, որը որեւէ կապ կհաստատի Ադրբեջանի հետ, իսկ այդպիսի ծրագրի բռնի գործադրությունը, համագումարի կարծիքով, լուրջ ազգամիջյան կրռիվներ ու արյունահեղություն կառաջացնի, որի համար Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը ոչ մի դեպքում չի կարող պատասխանատու լինել»։

Շատելվորտը համագումարին հանձնարարեց քննության առնել դաշտային Ադրբեջանից սար բարձրացող քոչի հարցը եւ երաշխավորություն տալ, որ խաշնարածների երթուդարձը լինելու է անվտանգ։

Համագումարն այդ հարցի առթիվ վճիռ հանեց պայմաններով՝ նախ, որպեսզի քոչվորներն այլեւս զինված չլինեն, ապա եւ ամենակարեւորը՝ ճանապարհին կատարած ամեն մի զանցառության, մանավանդ գողության համար պատասխանատվության ենթարկվեն։

Շատելվորտը կատաղած էր այդ պայմանների դեմ, սակայն ոչինչ անել չէր կարող. համագումարն անդրդվելի էր։

Շուշիում վարկաբեկիչ պարտություն կրելով՝ անգլիական սպան ուղեւորվեց Գորիս։ Հույս ուներ այնտեղ պատշաճ կարգ ստեղծել եւ դաս տալ բրիտանական միսիայի հանձնարարականներն արհամարհող զանգեզուրցիներին։

Հայտնի է, դրանից շուրջ մեկ ամիս առաջ, Զանգեզուրից Անդրանիկի հեռանալուց հետո, Հայաստանի Հանրապետությունը փոխգնդապետ Արսեն Շահմազյանին ուղարկել էր Գորիս՝ Արցախի ու Զանգեզուրի գեներալ-կոմիսարի պաշտոնով։ Զանգեզուր հասնելով՝ Շահմազյանն անմիջապես կապ էր հաստատել Արցախի Ազգային խորհրդի ու ինքնապաշտպանության օղակների հետ, եւ ամեն ինչից երեւում էր, որ

փոխադարձ կապերն ու համաձայնեցված միջոցառումները պիտի գործուն հունի մեջ դնեն երկու նահանգների ուժը, հնարավորությունները։

Մարտի 31-ին Գորիսում համազանգեզուրյան համագումարը, որին մասնակցում էին նաեւ Արցախի ներկայացուցիչները, նահանգի Ազգային խորհուրդը ցրեց՝ նրա փոխարեն ընտրելով Զանգեզուր-Արցախյան շրջանային խորհուրդ, որով ասես նվիրագործվեց երկու նահանգների միությունը, եւ առավել իրական հիմքի վրա դրվեց նրա միացումը Հայաստանին։ Խորհրդի մեջ մտան հինգական անդամներ երկու նահանգներից՝ ներկայացնելով տարբեր կուսակցություններ։

Դեռ Շուշիում տեղեկանալով այս ամենին՝ Շատելվորտը կատաղել-փրփրել էր։ Գորիսում արդեն նա դեմ առավ լեռնցիների ավանդական համառությանը։ Երբ հրապարակավ փորձեց մեջտեղ բաշել իր միսիայի սերտած կարգախոսը՝ ընդունել Ադրբեջանի նշանակած նահանգական ղեկավարությունը..., զանգեզուրցիները զինված ցույց արին նրա ինքնաշարժի շուրջ եւ ինչ էր մնում ձերբակալեին իրեն։

Այս առթիվ Շատելվորտը հայերին դատապարտող զեկույց հղեց Թոմսոնին, Բաքու վերադառնալով էլ, հավանաբար, խորհրդակցեց թորք ղեկավարների հետ, գործողության ծրագիր մշակեցին Արցախը խեղճացնելու համար։ Եվ արդյունքը չուշացավ. Արցախը թորք ավազակախմբերի շրջափակման մեջ առնվեց։ Լեռնային գյուղերը, նույնիսկ Շուշիի հայությունը զրկվեցին արտաքին աշխարհի հետ ունեցած ամեն տեսակ կապերից, նավթամթերք ու աղ առնելու հնարավորությունից։ Շուշիում մի թորք գիշերով կերոսին էր վաճառել իր հարեւան հայ ֆիրվային, եւ այդ մասին իմանալով՝ Սուլթանովը հրապարակավ նրան կախաղանի հանեց, որպեսզի այդ ահավոր պատիժը դաս դառնա ուրիշների համար։

Իսկ գավառներում հայերի համար դաշտային աշխատանքի դուրս գալը դարձել էր անհնար. ամենուր թորք ավազակախմբեր էին վխտում։

Հունիսի 4-ին Շուշվա թորքի թաղից հարձակվեցին հայկական թաղի մոտիկ տների ու արհեստանոցների վրա։ Ապա հայտնի դարձավ, որ թորքի թաղում աշխատող հայ 17 արհեստավորներ տանջամահ են արվել։

Այդ վայրենի գործողություններին մասնակցում էին նաեւ բրիտանական միսիայի հնդիկ մուսուլման զինվորները, այս էլ՝ Մաֆ-Մոզընի իմացությամբ։

Երբ Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը Մաֆ-Մոզընին բողոքեց իր հոտի նկատմամբ գործադրվող վայրագությունների դեմ, անգլիացի սպան պահանջեց, որ իրեն նեկայանան Ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը, ռազմական գործերի ղեկավար Հարություն Թումյանը եւ Աստվածատուր Ավետիսյանը։

«... Հունիսի 5-ին... «Ֆիկապ» մեքենաների վրա, անգլիական սպաների եւ հնդիկ զինվորների ուղեկցությամբ Ղարաբաղից վտարվեցին Իշխանյանը, Թումյանն ու Ավետիսյանը» (Հ. Թումյան)։

Երեքին աքսորել էին առավոտյան։ Կեսօրվա դեմ Սուլթանովի զորքերն ու շուրջ երկու հազար քուրդ ավազակներ՝ Սուլթանովի եղբայր Սելիմ բեկի գլխավորությամբ հարձակվեցին Շուշուց հարավ-արեւելք 5-6կմ հեռավորության վրա գտնվող Ղայբալիշենը կործանելու։ Արնածարավ ասպատակիչները սրի քաշեցին անզեն-անպաշտպան

բնակչությանը, կողոպտեցին, ավերեցին տները։ 700 շունչ հայ բնակիչներից փրկվեցին հազիվ 11 տղամարդ եւ 87 կին ու երեխա։

Վկաները պատմում են, որ անգլիական միսիայի ներկայացուցիչները Շուշվա բերդից անտարբեր դիտում էին օր-ցերեկով իրականացվող ոճիրը։ Իսկ նրանց զորքը հսկում էր Բաղաֆից ելնող ճանապարհի վրա, որպեսզի Շուշվա հայ զինվորությունն օգնության չգնա յուրայիններին։ Հաջորդ օրերին էլ ջարդարար խուժանը, խանիենդում կուտակված ադրբեջանական զորամասերի հետ միասին, նույն սպանդը սարքեց նաեւ Ջամիլու, Փահլուլ, Կրկժան եւ Դաշուշեն գյուղերի հայության վրա։

Հետո նույն բախտին պիտի արժանարար Բարինտակ գյուղը, Շուշվա բերդից ներքեւ, Կարկառ գետի ձախ ափին կուչ եկած այն արծվաբույնը, որի բանջարանոցներից ու այգիներից բաղված բարիքներով էր ապրում Շուշին։ Նախորդ երեք օրերի անսանձ ու անպատիժ չարագործություններով հարբած թորք ու քուրդ զորաջոկատները որոշել էին բնաջնջել ձորապոնկին կպած գյուղը, ապա շարժվել դեպի Շոշ եւ սրա թիկունքին շարված բնակավայրերը։

Ոտքի կանգնեց Բարինտակի երիտասարդությունը եւ մահն աչքի առաջ դրած՝ դիմադրեց, որքան կարող էր։ Հակառակորդը երեւի չէր ուզում զոհեր տալ, կատվի խաղ էր անում զոհի հանդեպ՝ սպասելով, որ պաշտպանվողները դուրս գան թաֆստոցներից, մերկանան բաց տարածության մեջ։ Մինչդեռ Բարինտակի երիտասարդները պաշտպանությունը ձգում էին եւ գիտեին, որ շուտով վրա է հասնելու փրկարար օգնությունը. սուրհանդակ էին ուղարկել Սղնախ գյուղը, ուր նոր միայն ոտք էին դրել Դիզակի ու Վարանդայի զինված ուժերը։

Օգնությունը հասավ այնպես հանկարծակի, փախուստի ճանապարհները միանգամից փակելով, եւ դիմացի անտառից այնպիսի լավա թափեց թորք ու քուրդ զորաշարքերի վրա, որ մի քանի ժամվա ընթացքում դիակներով ծածկվեցին ձորալանջերը։ Բարանեղքերում ու քարայրերում թաք կացածներին էլ բարինտակցիները դուրս բերեցին եւ անխնա կոտորեցին՝ հիշեցնելով, որ դա վրեժն է Ղայբալիշենի ու մյուս գյուղերի անմեղ նահատակների։

Այսրկովկասում եւ Ռուսաստանում փոթորկվել էին այն մեծ ու փոքր բաղաքները, որոնցում հայեր էին ապրում։ Թիֆլիսում տեղի ունեցան բազմահազարանոց հրապարակային երկու ժողովներ՝ հունիսի 8-ին ու 22-ին։ ***«Մասնակցում էին քառասունից ավելի ազգային ու հայրենակցական կազմակերպություններ... Նախագահում էր Հովհաննես Թումանյանը։ Ընդունած բանաձեւը պահանջում էր զաշնակիցների միջամտությունը, դոկտոր Սուլթանովի վտարումը Ղարաբաղից, կոտորածի հեղինակների ձերբակալությունն ու պատժելը եւ Ղարաբաղի միացումը Հայաստանին»***[1]։

Հետաքրքիր է հունիսի 16-ին Երեւանում տեղի ունեցած բազմահազարանոց ցույ-

---

1 Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 318։

ցի որոշում-կոչը, որը ոչ միայն անարգանքի սյունին էր գամում տեղի ունեցածի զազրելի հեղինակներին, այլեւ ազգային քաղաքական ուժերից պահանջում էր գործնական քայլեր: Ահա նրա հիմնական մասը.

«Հունիսի 16-ի հրապարակային ժողովը խորը հուզմունքով լսեց այն լուրը, որ Ղարաբաղում Անգլիական միսիայի աչքերի առջեւ Ադրբեջանի զորքը Սուլթանովի գլխավորությամբ ավերել է վեց հայկական գյուղեր..., սպառնում է շարունակել կոտորածը եւ ստիպել հայկական Ղարաբաղը արյան մեջ ողողելու: Մենք համոզված ենք, որ սա շարունակությո՛ւնն է Էնվեր-Թալեաթյան քաղաքականության: Այնտեղ, Թուրքիայում, ամբողջ քաղաքակիրթ մարդկության աչքի առջեւ կոտորածի ենթարկվեց միլիոնավոր հայ ժողովուրդը: Այստեղ, Ադրբեջանում, դաշնակից ժողովուրդների աչքերի առջեւ, աշխատում են ոչնչացնել Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը եւ հաստատել իրենց արյունոտ կարգերն այս երկրում... Պահանջում ենք, որ դաշնակից պետությունների՝ Կովկասում գտնվող ներկայացուցիչները վերջ դնեն կոտորածի եւ ավերի քաղաքականությանը: Պահանջում ենք հայկական կառավարությունից՝ բուռն կերպով բողոքել դաշնակիցների ներկայացուցիչներին եւ, հանուն քաղաքակրթության ու մեր ժողովրդի ֆիզիկական գոյության, պաշտպանել հայ ժողովուրդը՝ ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներով: Մենք բողոքում ենք ու մեր հիացմունքն ենք արտահայտում Ղարաբաղի մեր եղբայրներին, որոնք հերոսաբար կռվում են Սուլթանովի բռնակալության դեմ՝ հանուն ժողովուրդների ինքնորոշության ու քաղաքակրթության»[1]:

Թիֆլիսի ղարաբաղյան հայրենակցական միությունը փորձեց հարցը բարձրացնել Փարիզում, դաշնակիցների դիվանագիտական բարձրագույն ատյանում: Դիմում-հեռագիր հղեց այնտեղ գտնվող հայկական պատվիրակության ղեկավարին՝ հուսալով, թե նա կհետեւի, որ հարցը պատշաճ քննություն ու արդյունք ունենա:

Ի՞նչ եղավ այսմանից հետո, Արցախն ինչի՞ տեր դարձավ միջազգային, համարյա համաշխարհային այս աղմուկի շնորհիվ:

Նախ հունիսի 12-ին Արցախից հեռացան Մաֆ-Մոզրնի գլխավորած անգլիական ներկայացուցչությունն ու զորքը: Եվ խոսրով բեկ Սուլթանովը, նրա կուտակած ադրբեջանական զորքերն ու քրդական ավազակախմբերը մնացին դեմ-հանդիման՝ անպաշտպան ու անօգնական, դրսից բացարձակապես ոչ մի օժանդակություն չսպասող արցախահայության հետ:

Ազգային խորհուրդը, Շուշիում մնալն այլեւս անհնար համարելով, անցել էր

1 Նույն տեղում, էջ 317:

գավառ, Շոշում կամ Տրնավարգում էր անցկացնում իր օրերը եւ էլի բողոքի գրություններ էր հղում Թիֆլիս, Երեւան, Բաքու, հուսո իր հավատամքն էր պնդում. իբր ոչ մի նշանակություն չունի, որ Շուշին անցել է Սուլթանովին, կարեւորը գավառներն են, որոնք պիտի կովեն մինչեւ վերջին շունչը:

Իհարկե, Արցախի հայության համար ստեղծվել էր ողբերգական վիճակ, որից դուրս գալու համար աշխարհում լոկ մի հույս էր մնացել՝ Հայաստանի Հանրապետության օգնությունը: Իսկ եղա՞վ այն: Հայտնի է, որ այն օրերին Շուշի էր եկել հանրապետության կառավարության ազդեցիկ անդամներից մեկը՝ Հովսեփ Արղությանը (Իշխան): Մասնակցեց Ազգային խորհրդի վերջին նիստին, միասին որոշեցին, որ խորհուրդը թողնի Շուշին: Ինքն էլ թողեց, գնաց Երեւան, Ղարաբաղի վիճակը ներկայացրեց իր կառավարությանը:

Արդյո՞ւնքը: Երեւի ոչինչ, բանի որ, եթե գործնական քայլեր արված լինեին, հնարավոր կլիներ պարզել:

Այս պայմաններում էր, որ Շոշ գյուղում գումարվեց մարզի հայության *վեցերորդ համագումարը* (1919 թ. հունիսի 28-30):

Նախապես պայմանավորվել էին, որ ներկա է լինելու Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչը, որպեսզի համատեղ ջանքերով խաղաղության ճանապարհը գտնվի, եւ աշխատավոր գյուղացիությունը հնարավորություն ստանա դժվարին պայմաններում աճեցրած բերքը հավաքելու, խաղաղ շունչ քաշելու իր հայրենի երկրում:

Սակայն օտար հրավիրվածներն իրենց խոստումը չկատարեցին, չներկայացան, եւ համագումարը համարյա նախորդների ոգով մի ընդարձակ բանաձեւ ընդունեց՝ նրանում պաշտպանելով իր ինքնորոշման իրավունքը եւ բողոք ու զայրույթ հայտնելով այդ իրավունքը ոտնահարողների դեմ:

Համագումարի ցրվելուց մի քանի օր հետո Շոշ գյուղը գնացին ադրբեջանական կառավարության ներկայացուցիչները՝ խնդրելով նոր համագումար հրավիրել եւ որոշումը նորոգել: Բացասական պատասխան ստանալով՝ վերադարձան, եւ մի քանի օր հետո Սուլթանովի հրոսակները թնդանոթներով ու գնդացիրներով հարձակվեցին Դիզակի Դոլանլար ու Բինյաթլու գյուղերի վրա, կողոպտեցին, հրդեհի մատնեցին: Սակայն երբ փորձեցին նույնը կատարել նաեւ Առաքյալ գյուղում, տեղական ուժերը՝ արդեն միավորված ու կազմակերպված, խիզախ դիմադրություն ցույց տվին, նույնիսկ հալածեցին կողոպուտի ու ավերածությունների վարպետներին:

Սրանով վերջ չտրվեց, իհարկե, սուլթանովյան ավազակախմբերի գործունեությանը: Դաշտային աշխատանքների ամենաեռուն շրջանն էր, հայ գյուղերում հնձի ու կալի գործերն իրականացվում էին վտանգներով լի մթնոլորտում: ***«Մուսլմանական բանդաները գիշերները... հրդեհի էին մատնում խուրձերը եւ դեռեւս չհնձած արտերը, իսկ ցերեկը կրակ էին բացում դաշտերում աշխատող գյուղացիների վրա»*** (Հ. Թումյան):

Այս պայմաններում էլ օգոստոսի 13-ին Շոշում բացվեց Արցախի հայության *յոթերորդ համագումարը*, որին մասնակցում էին 135 պատգամավորներ: Դարձյալ

երկար ու տաք վեճեր եղան Արցախի եւ Ադրբեջանի հետագա փոխհարաբերության հարցի շուրջ, եւ ի վերջո կազմվեց մի հանձնաժողով (նախագահ՝ Արշ. Քամալյան), որը պատրաստեց բանաձեւ, փոխհարաբերությունները տանելի դարձնելու նպատակով, Ադրբեջանի կառավարության հետ բանակցություններ վարելու մասին (համագումարն ***«ընդառաջ է գնում Ադրբեջանի կառավարության առաջարկին՝ բանակցությունների միջոցով խաղաղ ճանապարհով լուծելու ներկա ճգնաժամային խնդիրը՝ իբրեւ հավասար կողմեր եւ որոշում է պաշտոնական բանակցությունների մեջ մտնել այդ նպատակով»***):

Տեսնելով, որ հարցի լուծումը ձգձգվում է, Սուլթանովն օգոստոսի 14-ին վերջնագիր հղեց համագումարին՝ պահանջելով 48 ժամվա ընթացքում որոշակի պատասխանել՝ Արցախը ճանաչո՞ւմ է Ադրբեջանի իշխանությունը, թե՞ ոչ:

Վերջապես պատրաստվեց համաձայնության մի նախագիծ, որը Սուլթանովի եւ նրա կառավարության կողմից լրացվելուց հետո հրապարակվեց հետեւյալ բովանդակությամբ:

Երկու կողմերը, ժամանակավոր համաձայնության են գալիս՝ ***«մինչեւ խնդրի լուծումը խաղաղարար կոնֆերանսում»***, Ղարաբաղի բնակչությունն այդ ընթացքում, այսինքն՝ ժամանակավոր, մինչեւ հարցի լուծումը խաղաղարար կոնֆերանսում, ***«իրեն ճանաչում է Ադրբեջանի Հանրապետության սահմաններում»***, միայն թե հայաբնակ շրջանների ղեկավարները հայեր են լինելու, չի մոռացվում նաեւ հայերի ինքնավարության իրավունքը, որը պիտի իրագործվեր Ազգային խորհրդի միջոցով:

Այս փաստաթուղթն ստորագրվել է 1919 թ. օգոստոսի 22-ին:

Համաձայնագիրն ըստ էության իրենից չէր ներկայացնում ճակատագրական մի երեւույթ, որն, իբր, սահմանագիծ դառնալով՝ արցախահայության կյանքը տարել է մի այլ ընթացքով, քան մինչ այդ էր՝ ավելի քան մեկ տարվա փոթորկալից շրջանում: Միայնակ, անօգնական ու անպաշտպան մնացած մարզի հայերը, պաշարված թուրք-ադրբեջանական-քրդական զորամասերով եւ դաշնակիցների միսիայից էլ հարկադրված, որոշում են ժամանակավորապես համերաշխվել ադրբեջանական վարչության հետ, մինչեւ որ իրենց խնդիրը լուծվի Փարիզի ***«խաղաղարար կոնֆերանսում, որի որոշումը հավասարապես պարտադիր կլինի երկու կողմերի համար»***:

Սակայն ադրբեջանցիներն այսքանն ընդունեցին որպես իրենց լիակատար հաղթանակը:

«Համաձայնությունից» հետո միաժամանակ բարելավվել էր արցախահայության վիճակը. ճանապարհները բացվել էին, երթեւեկելն ազատ էր: Ադրբեջանական շուկաներում եւ առեւտրական տներում հայերի առջեւ այլեւս չէին փակում դռները, նույնիսկ Բաքվից մթերքներ էին հասցնում եւ եղբայրության շողոմ խոսքերով էին բերան դատարկում փոխհարաբերությունների մեջ: Սակայն այսքանը ժամանակավոր ու խաբուսիկ մի խաղ էր: Շուտով այս ամենը վերացավ, եւ տիրական դարձան թշնամանքի ժամանակի սարսափները: Ճանապարհները փակվեցին, գավառներում ժողովուրդը

վերստին նեղվում էր ավազակախմբերի ասպատակություններից, կողոպուտներից ու սպանություններից։

Համաձայնությամբ Ադրբեջանի կառավարությունը պարտավորվել էր իր միջոցներով վերականգնել ավերված հայկական գյուղերը։ Սակայն ոչ միայն իր պարտականությունները չէր կատարում, այլեւ զինական արգելքներ ստեղծեց, երբ հայերն իրենք էին փորձում սեփական տները վերակառուցել եւ փոխադրվել իրենց բնակավայրերը։

Նույն համաձայնությունը թույլ է տալիս Շուշիում ու Խանքենդում պահել միայն խաղաղ ժամանակի կայազորներ։ Սակայն մի ամիս չանցած *«այդ երկու բնակավայրերը վերածվեցին ռազմական ճամբարների, որոնցում կուտակվեցին խոշոր ուժեր Զանգեզուրի վրա արշավելու համար»* (Հ. Թումյան)։

Ադրբեջանի համար շատ կարեւոր էր Զանգեզուրի վրա հարձակվելու խնդիրը։ Սակայն դրանից առաջ անհրաժեշտ էր վերջնականապես լուծել Ղարաբաղի հարցը, որպեսզի Զանգեզուրի վրա արշավող թրքության թիկունքն ապահով լինի։

Ադրբեջանի բանակի գլխավոր շտաբի պետն էր մի ռուս գեներալ՝ Սուլկեւիչ ազգանունով, որը ռուս-թուրքական պատերազմի ժամանակ գեներալ Յուդենիչի հրամանատարության ներքո բավական փորձ ու *«հմտություն»* էր ցուցաբերել արեւմտահայկական նահանգները հայաթափ անելու գործում եւ, հավանաբար, մի քիչ էլ հասկացել էր, թե այդքանից հետո հայ ժողովուրդն ինչ վերաբերմունք կունենա իր պատմական հայրենիքի հյուսիս-արեւելյան նահանգների ճակատագրի հանդեպ։ Ահա այդ գեներալ Սուլկեւիչը 1919 թ. սեպտեմբերի 7-ին զաղտնի մի թուղթ էր հղել Ղարաբաղի նահանգապետ Սուլթանովին՝ շարադրելով իր նկատառումները քննարկվող հարցի կապակցությամբ։ *«Ղարաբաղի հարցի խաղաղ լուծումը,*- գրել էր Սուլկեւիչը՝ նկատի առնելով օգոստոսյան համաձայնագիրը,- *ստիպում է մտածել, որ Զանգեզուրի գավառի միացումը կկատարվի առանց զինաբախման, որովհետեւ նրա հայ բնակչությունը Նախիջեւանի ջարդից հետո*[1]*, այժմ դրված է երկու կրակի արանքում եւ հազիվ թե համարձակվի մեզ դիմադրել՝ իր թիկունքում չունենալով առաջվա պաշտպանությունը»։*

Ուրեմն, ադրբեջանցիների այս ծառան Զանգեզուրի հարցն էլ վերջնականապես վճռված էր համարում։ Բայց եւ այնպես, գիտեր, թե այդ գոտին, մանավանդ Արցախը, ինչ նշանակություն ունի հայ ժողովրդի համար, ուստի նաեւ զգուշացնում էր. *«Հայերը Ղարաբաղը մշտապես կորցնելու հետ հաշտվել չեն կարող եւ անտա-*

---

1 Դաշնակիցների կովկասյան միսիան 1919 թ. մայիսին թույլ էր տվել, որպեսզի Հայաստանը 18 հազար զաղթականներ տեղավորի Նախիջեւանի մարզի պարպված հայկական գյուղերում։ Ադրբեջանի զորքերը, թուրք արնախում փաշաների գլխավորությամբ, մըտան Նախիջեւան եւ հուլիս-օգոստոսին կոտորեցին այդ զաղթականներին, ջախջախեցին զաղթականության ապահովության համար այնտեղ տեղակայված հայ փոքրաքանակ զորաջոկատները։

բակուս պետք է ձգտեն օգտագործել ամեն հնարավորություն՝ կորցրածը ետ բերելու համար»։ Ուրեմն, զգուշացեմ Ղարաբաղից եւ ձեր զինական ամեն տեսակ միջոցներն օգտագործեցեմ Ղարաբաղը՝ այդ ամենակարեւորը, ձեռքից չտալու նպատակով։ Իսկ ո՞րն էր ստուգված կատարյալն *«ամեն տեսակ միջոցներից»։* Ահա այստեղ է, որ գեներալին օգնության է հասնում իր փորձը՝ *«միայն օգտագործել քրդերի ներկայացրած մարտական նյութը՝ նրանցից կազմակերպելով հեծելազոր եւ հետեւակ՝ «համիդիեի»* օրինակով, որի գործնական արժեքը թուրքերն են ստուգել վերջին պատերազմի ժամանակ։

Փոքրասիական, պարսկական ու միջագետքյան ռազմաճակատներում տեղի ունեցած կռիվներին քրդական գնդերի *(«համիդիե») մարտական փառապանծ գործելակերպի մասին միահամուռ խոսում են պատերազմի բոլոր մասնակիցները»,*- խորհուրդ էր տալիս Սուլկեւիչը։

Խոսրով բեկ Սուլթանովը՝ ինքը քուրդ ու ղարաբաղյան հայերի դեմ կռվելու մեծ փորձ ունեցող, Լաչինի գավառի իր ցեղակիցներից նոր զորախմբեր կազմակերպեց եւ եղբորը՝ Սելիմ բեկին հանձնելով՝ լարեց հայերի դեմ։

Ադրբեջանի զորքերով ու Սուլթանովի վարած որոգայթներով շրջափակվեց, արտաքին աշխարհից լիովին կտրվեց Արցախը։ Առաջներում, երբ ճանապարհները փակվում էին, էլի մնում էր Զանգեզուրի հետ միացնող լեռնային կածանների՝ միայն լեռնային բնակիչներին հայտնի ցանցը, եւ Արցախն ու Զանգեզուրն իրար օգնության էին հասնում, լուծում ամենահրատապ հարցերը։ Հիմա Զաբուղի ձորն էին լցվել Սելիմ բեկ Սուլթանովի քրդերն ու ադրբեջանցի հրոսակները, փակել էին անտառներում կորչող արահետներն ու լեռնային անցումները, եւ Արցախը մնացել էր ինքն իր հետ, իր մենության հույսին։

Այս ժամանակ էր, 1919 թ. դեկտեմբերի սկզբին, որ Հայաստանի Հանրապետության հանձնարարությամբ Արցախ մտան մի խումբ փորձառու գործիչներ։ Սրանք, իրենց գործունեության կենտրոն դարձնելով Զրաբերդն ու Խաչենը, ստեղծեցին Արցախի ինքնապաշտպանության մարմին՝ աշխատելով իրենց ձեռքը վերցնել բոլոր գավառների զինված ուժերի ղեկավարությունը։

Կարելի է մտածել, մանավանդ մարդկային սովորական փոխհարաբերություններից ելնելով, որ Ադրբեջանի կառավարությունը, եթե շրջահայաց ու նրբանկատ լիներ, արցախահայության 7-րդ համագումարի որոշակի զիջողական վճռից հետո կջանար այդ ինքնասեր ու ըմբոստ լեռնաստանում վարել մեղմ, բարեկամական քաղաքականություն եւ դրանով ամրապնդել կապը կամ գոնե պահպանել ձեռք բերածը։ Սակայն բռնակալական-նվաճողական մոլուցքներ ունեցող վարչարարները, բնա՛վ, այդպիսի հասկացողությունից հեռու են լինում եւ ամեն պարագայում իրենց առաջին խնդիրն են համարում ճնշել ու բռնանալ՝ երեւի հույս ունենալով, թե դրանով իրենց կհաջողվի նաեւ խեղճացնել։ Իսկ խեղճացածները, սովորական բան է, ուրիշ ճար չեն ունենում, բան զլուխ խոնարհելը հակառակորդի առաջ։

1920 թ. փետրվարի 19-ին Սուլթանովը հատուկ գրով Արցախի Ազգային խորհրդ-

դից պահանջեց, որ այն վերջնականապես հպատակվի Ադրբեջանի կառավարությանը եւ թույլ տա ադրբեջանական զորքեր մտցնել գավառները: Մինչեւ այդ հաջողվել էր իր գինվորության որջեր դարձնել Շուշին ու Խանքենդին, իսկ գյուղական շրջանները, Արցախի ամբողջ գյուղացիությունը, անկախ էին, զինված ու իրենց ինքնապաշտպանությանը պատրաստ:

Սուլթանովը նպատակ ուներ իր զորքը գավառներ մտցնելուն պես զինաթափ անել հայությանը... Իսկ դրանից հետո ի՞նչ մի դժվարություն կարող էր ներկայացնել հարցը թրքավարի կարգադրելը՝ հպատակվեցե՛ք, այլապես պիտի կոտորենք կամ բռնագաղթի ենթարկենք:

Ազգային խորհուրդը մերժեց բռնավորի պահանջը՝ պատասխանելով, թե դրա առթիվ վճիռ հանելու իրավունք ունի միայն ժողովրդական համագումարը:

Այնուհետեւ Սուլթանովը փորձեց հրամանն իրականացնել միայն Ջրաբերդ գավառի մի մասում. առաջարկեց թույլ տալ, որ ադրբեջանական զորքը տեղավորվի Ավան-Յուզբաշյանի կալվածքում՝ Մարգուշեւանում: Այդ առթիվ էլ վճիռ հանելու համար Մարտակերտում հավաքվեցին գավառի գյուղերի 86 ներկայացուցիչներ եւ միահամուռ որոշեցին մերժել բռնավորի հակահայկական պահանջը:

Սակայն դրանով հարցն առավել խճճվում էր, քանի որ Մարգուշեւան բերելիք զորքից քանակապես ավելին եւ առավել սպառազեն զորամասեր տեղադրվեցին Թարթառում, Աղդամում եւ հայոց հետ շփում ունեցող ուրիշ մի քանի կետերում:

Սեւ ամպեր էին կախվում Արցախի հայության վրա, եւ նրա բախտի տնօրենները նորից նոր ջանքեր գործադրեցին փոքորիկը կանխելու համար:

Դեռեւս հունվարի վերջերին միջկուսակցական բյուրոն Ազգային խորհրդին առաջարկություն ներկայացրեց հրավիրելու հերթական *ութերորդ համագումարը*, որը պիտի բներ մարզի աղետալի վիճակը եւ նշեր նրանից ելնելու ուղիները:

Նախնական պայմանավորվածության համաձայն՝ ութերորդ համագումարը պիտի տեղի ունենար Շոշ գյուղում, գեներալ-նահանգապետից անկախ վայրում եւ պիտի սկսվեր փետրվարի 28-ին, ամբողջ հայ բնակչության կողմից ընտրված 168 պատվիրակների կազմով:

Սակայն սկսվելու օրը պարզվեց, որ շուշեցի պատգամավորները չեն կարող մասնակցել համագումարին, որովհետեւ Սուլթանովը նրանց արգելում էր Շոշ գնալ:

Շոշում հավաքված 96 պատգամավորներ, որոնք լիապես ներկայացնում էին արցախահայ ամբողջ գյուղացիությունը, գումարեցին իրենց ութերորդ համագումարը: Ընդունված որոշում-բանաձեւն օգոստոսյան համաձայնությունը համարում էր ժամանակի անելանելի վիճակի թելադրանքը, որի էությունը կոպտորեն խախտվել է Ադրբեջանի կառավարության կողմից: Այդ կառավարությունը ոչ միայն չօգնեց իրականացնելու նրա նախագծումները մինչեւ խաղաղարար խորհրդաժողովի ընդունելիք վճիռը, այլեւ ստեղծեց թշնամական մթնոլորտ, արցախահայությանը վանեց անդառնալիորեն: «*Ժամանակավոր համաձայնության ամենաշլխավոր կետերը միանգամայն խախտված են Ադրբեջանի կառավարության կողմից,*- աս-

վում էր բանաձեւում, ապա մեկ առ մեկ հիշվում էին այդ կետերը, ապացուցվում էր նրանց ոտնահարման սուլթանովյան եւ առհասարակ Ադրբեջանի կառավարության որդեգրած հակահայկական էությունը (հայկական բնակավայրերում կատարված կոոպուտներն ու զանգվածային ջարդերը, վայրենի զորաշարժերը, որոնց պատճառով տեղահանվում, փախստական են դառնում հայ մարդիկ, Սուլթանովի գռեհիկ կեցվածքը հայերի պահանջների հանդեպ)։ Ապա համագումարը դիմում էր ***«քաղաքակիրթ աշխարհի խղճին՝ վերջ տալու Ադրբեջանի այսօրինակ քաղաքականության։ Հակառակ դեպքում,*** - ասված էր բանաձեւում,- ***Ղարաբաղի հայությունն ստիպված կլինի իր կյանքի եւ պատվի պաշտպանության համար դիմել համապատասխան միջոցների»։***

Բանաձեւը հրապարակվեց, հայկական մամուլի տարբեր մարմիններ տագնապ բարձրացրին արցախահայության շլնիին փաթաթված ադրբեջանական բռնության շուրջ։ Օրինակ, Թիֆլիսում լույս տեսնող «Աշխատավորը» մարտի 5-ին, այսինքն՝ համագումարի ավարտից մեկ օր անց, հնչեցրեց այս տիպի ահազանգ.

«Ադրբեջանի տարբեր վայրերում տեղի ունեցած հայկական մասնակի կոտորածները նպատակ ունեին ոչ միայն թուլացնել հայկական տարրը այդ պետության սահմաններում առհասարակ, այլեւ ահաբեկել Ղարաբաղը, կոնկրետ կերպով ցույց տալով այն հեռանկարը, որ նրան սպասում է։ Մարգարե չպետք է լինել գուշակելու համար, որ Ղարաբաղը կանգնած է արյունալի նախճիրների նախօրյակին, որովհետեւ կասկածից դուրս է, որ տեղացի հայությունը երբեք կամովին չի համաձայնի իր վիզը թեքել թրքական յաթաղանի առաջ...

Ինչպես անցյալում, այնպես էլ այժմ, Ղարաբաղի փրկությունը նրա կազմակերպված կամքն է ու կատարյալ վճռականությունը՝ ամեն գնով ապահովել իր ազատությունը, միանգամայն հավատացած լինելով, որ իր հետ է այդ գործում ամբողջ հայությունը...»։

«Աշխատավորը» մարգարե չէր, սակայն լավ գուշակել էր Արցախի մոտիկ ապագան, մանավանդ ***«արյունալի նախճիրները»։***

Արցախահայությունը կանգնած էր իր հին ու նոր պատմության մեծագույն փորձության առաջ, եւ հարկ էր, որ նրա ղեկավարները լրջորեն, ամենամեծ պատասխանատվությամբ կշռադատեին, որոշեին կատարելիք յուրաքանչյուր քայլը... Եվ որքան էլ ցավալի, հենց այստե՛ղ, ամենաճակատագրականի առա՛ջ նրանք սայթաքեցին՝ թույլ տալով մի, մեղմ ասած, անխոհեմություն, որն անելանելի անդունդի մեջ պիտի նետեր Շուշին՝ մշուշով ծածկելով նաեւ ամբողջ Արցախի ապագան։

Մարտի 23-ին, Նովրուզի (մահմեդական նոր տարվա) տոնի օրը, հայ-թաթարական կռիվ բռնկվեց Շուշիում։ Առաջին գիշերն իսկ թաթարները հրկիզեցին հայկական թաղամասի տները, տագնապի ու խուճապի մատնեցին անզեն բնակիչներին, ապա վայրի խուժանը քշեցին նրանց վրա... Եվ երեք օրը բավական եղա՛վ, որպեսզի քաղաքի փա-

ռաշում մասից՝ Հայկական թաղից մնան կողոպտված ու ավերված տներ, անթաղ դիակների կույտեր ու մի աննախադեպ ողբերգություն։

Այս ամենը կազմակերպել էին Բուրդ բժիշկ Սուլթանովն ու թորք բժիշկ Մեհմանդարովը։ *«Այդ երկու բժիշկները,*- գրել է Լեոն,- *տանջվող մարդկությանը ծառայելու ակադեմիական ուխտ արած, հրամայում են խուժանին՝ կոտորեցե՛ք, այրեցե՛ք, կողոպտեցե՛ք, ձերն են հայերի կանայք ու աղջիկները։ Եվ դրժբախտ քաղաքը լցվում է սարսափներով։ Առնվազն յոթ հազար անմեղ մարդիկ մորթվում են։ Մի հատ տուն չի ազատվում բոցերից։ Հայ կանանց ու աղջիկների լկումն ու տանջանքները անցնում են ամեն չափ ու սահման։ Մոտ հինգ հազար հոգի կարողանում են ազատվել փախչելով։ Մոտ 2-3 հազար հոգի գերի են մնում Սուլթանով եւ Մեհմանդարով բժիշկների ձեռքին։ Գանձակի կողմից ադրբեջանական մեծ արշավանք է սկսվում, որ ճանապարհին ոչնչացնում է տասնյակներով հայ գյուղեր...»*[1]։

Այո՛, Լեոն Շուշվա զոհերի թիվը յոթ հազար է համարում։ Բայց ո՞վ է հաշվել, երբ ամիսներ անց էլ ճկուղներում ու ջրհորներում իրար վրա թափված են եղել դիակները, իսկ վեց տարի հետո անգամ Մարիետա Շահինյանը Բաղաբի փողոցների եզրերի առուներում տեսել է նահատակված կանանց ու աղջիկների վարսափնջերը։

Ո՞վ է հաշվել, ո՞վ է բնել այս չարագործության մանրամասները, որոնք աննախադեպ էին, չեղած-չտեսնված եւ գուցե թե իրենց նմանակը չունեին նույնիսկ իրենցից հինգ տարի առաջ արեւմտահայկական նահանգներում գործված վայրագությունների մեջ։

Ադրբեջանի արնախում կառավարությունը Շուշիի հայկական մասը ոչնչացնելով չգոհացավ. իր զորքերը՝ օսմանյան զորապետների ղեկավարությամբ եւ բրդական ավազակախմբերի ուղեկցությամբ, բշեց գավառների վրա եւ ուր որ պաշտպանությունը թույլ էր, ջարդեց, ոչնչացրեց, արյուն ու մոխիր թողեց նախկին բնակավայրերի տեղ։

Գրող Մ. Շահինյանն ահա թե ի՞նչ է գրել Արցախի նկատմամբ Ադրբեջանի մուսավաթական կառավարության եւ նրա հետագա ժառանգ բոլշեւիկյան իշխանության վարած բաղաբականության մասին։ 1926-ին էլ դեռ թարմ էին ավերի ու ավարի, կոտորածի ու չարագործության մյուս տեսակների հետքերը։ *«Երկու բլուրները կանգնած էին իմ առաջ,*- Բաղաբի հայկական մասի տարածքն այսպես է տեսել գրողը,- *կանգնած էին տների կմախքների շարքերով։ Չի մնացել ոչինչ, որ կյանք հիշեցնի. ո՛չ տանիքներ, ո՛չ դռներ, ո՛չ պատուհանի շրջանակներ, ո՛չ տախտակե հատակ, ո՛չ երկաթ, ո՛չ ծառ, ո՛չ փայտամած, ո՛չ մեխ։ Միայն ավերակներ, քարեր ու քարեր՝ ինչպես անատոմիական կմախքի քերված, կրծված ու չորացած ոսկորները։*

---

1 Լեո, Անցյալից, էջ 438։

... Առաջինը, որ ինձ ցնցեց, լռությունն էր։ Այդքան սարսափելի լռություն ես չէի զգացել ո՛չ մի տեղ, երբե՛ք, եւ անմիջապես այն ինձ թվաց անբնական։ Հանկարծ մարդուն թվում է, թե լռությունը քրթմնջում է. քարերը շշնջում են, օրորվում, խշխշում, եւ գլխիդ մազերը բիզ-բիզ կանգնում են։ Այստեղ 1920 թվականի մարտին երեք օրվա ընթացքում հրդեհի ու ավերի են ենթարկվել 7000 տներ եւ մորթվել են,- տարբեր թվեր են ասում,- մեկն ասում է՝ երեք-չորս հազար, ուրիշները՝ ավելի քան տասներկու հազար հայեր։ Իրողությունն այն է, որ երեսունհինգ հազար հայերից Շուշիում չի մնացել ո՛չ մեկը։ Առուներում այսուայնտեղ դեռ կարելի է տեսնել կանանց վարսափնջեր՝ նրանց վրա չորացած սեւ արյան հետ միասին։ Երեվակայություն ունեցող մարդն այստեղ դժվար կշնչի. գնում ես, գնում ծխաթակ պատերի, ավելի ճիշտ՝ նրանց բեկորների մոտով, շտապում ես հեռանալ եւ վախենում ես, թե երբեք էլ դուրս չես ելնի։ Սպասում ես, թե լռությունը փշուր-փշուր կլինի, վերջապես, գլխիդ վրա եւ հնար կտա, որ թոքերդ օդ առնես...»[1]։

Շահինյանը գիտեր, որ Շուշվա կործանումը եղել է ոչ թե մի առանձին ու պատահական դեպք, այլ թորքի հակահայկական վայրագությունների շարքի մեծ օղակը, նրա վերջին ու դժոխային արարը։ Արցախի *«212 գյուղերի ընդհանուր թվից 59-ը ջնջվել է հողի երեսից. բնակչության մեկ քառորդը (37 հազար մարդ) մնացել է անտուն, յոթ հազար տնտեսություն հրի մատնվել...»*,- վիճակագրական ճշգրտությամբ հաստատում է գրողը։

Գավառներում սանձազերծված պատերազմն սկսվեց 1920-ի մարտի 30-ին, Շուշիի կործանումից մեկ շաբաթ անց, երբ այդ մեկ շաբաթվա դադարի ընթացքում հրեշը համոզվել էր, որ իր արյունոտ թաթը բռնող չկա, իրեն դատապարտող չկա։

Հիմա Ադրբեջանի պատմաբանները խոստովանում են, որ այն ժամանակ Արցախի վրա է ուղղված եղել մուսավաթական կառավարության ամբողջ զինական ուժը։ Մրտածել են, որ այստեղ, Արցախյան լեռնաստանում է լուծվում թուրք-թաթարական մեծ երազի ամենակարեւոր օղակի հարցը։ Արցախի տեր դառնալուց հետո պիտի անցնեն Զանգեզուրի, ապա Նախիջեւանի նվաճմանը, եւ պիտի բացվեր Թուրքիա-Ադրբեջան միջանցքը։ Իսկ Արցախը կորցնելով՝ զրկվելու էին այդ միջանցքն ստեղծելու հնարավորությունից։ Եվ Արցախի վրա էին ուղղել Ադրբեջանի ամբողջ զինական ուժը՝ մերկ ու անպաշտպան թողնելով հյուսիսային սահմանները։ Մերկ ու անպաշտպան, որի պատճառով էլ հյուսիսից եկավ ռուսական 11-րդ բանակը եւ, առանց մի գնդակ արձակելու, նվաճեց Բաքուն, տիրացավ Ադրբեջանին։

Այսպե՛ս, ուրեմն. մուսավաթական Ադրբեջանն իր ամբողջ զորությամբ հարձակվել էր Արցախի վրա։

---

1 Мариэтта Шагинян, Нагорный Карабах, М., 1930, с. 41-42.

Պատերազմ տեղի ուներ Արցախի բոլոր գավառներում, Դիզակից մինչեւ Գյուլիստան եւ Զաբուղի ձորից մինչեւ Զաբրայիլի ու Աղդամի մատույցները: Սակայն ամենից կատաղի ու ամենից վճռականը Ասկերանի ձորի բախումներն էին, հին բերդից արեւելք, Վարազաբույնից մինչեւ Քարագլուխ, շուրջ 15 կմ ճակատով ձգված այն մարտերը, որոնցով թուրքերը պիտի ***վերականգնեին Աղդամ-Շուշի խափանված կապը***, այնտեղից էլ անցնեին Քրդստան, Հաջի Սամլու (այժմյան Լաչինի շրջանը) եւ տարածվեին դեպի Զանգեզուր-Նախիջեւան: Իսկ հայերը նրանց առաջ փակել էին այդ ամենակարեւոր ճանապարհը եւ, հենված իրենց լեռնաստանին, քաջության ու հնարամտության հրաշալի օրինակներ էին ցույց տալիս:

Ասկերանի կռիվը ղեկավարում էր զանձակցի մի խիզախ ֆիդայի՝ Դալի Ղազար մականունով (իսկականը՝ Միքայել Բաղալյոխյան), որի անունը հայտնի էր կամավորական հերոսամարտերից, եւ հիմա էլ Հայաստանից բերած մի ջոկատ քաջորդիների հետ դարձել էր Ասկերանի հայոց ճակատի ոգին: Առաջին օրերին հայերը հաջողությամբ պաշտպանում էին իրենց դիրքերը, երբեմն էլ դուրս էին գալիս ու խուճապահար փախչող ասկյարներին հետապնդում մինչեւ Աղդամ: Թումյանը պատմում է, թե 1918-ին Մոմնայի տակ օսմանցիներից խլած «Շնեյդեր» սիստեմի լեռնային հրանոթը, որի համար ունեին միայն 60 արկ, իր ահարկու ազդեցությունն էր ունեցել թորքերի վրա, երբ դիպուկ կրակով ավերել էր նրանց մարտկոցների շարքերը:

Սակայն հակառակորդը որոշել էր Ասկերանի ձորում վճռել պատերազմի ու առհասարակ Արցախի հարցը եւ դրա համար արագորեն այստեղ կատարեց մեծ համալրումներ, ամբողջ ճակատի երկարությամբ դասավորեց վրա հասած զնդերը՝ նորագույն զինավառությամբ, եւ սկսեց ահարկու ճակատամարտը:

Երբ հայ պաշտպանվողների վիճակը ծանրացել էր, այնտեղ սպայակույտի պետ ուղարկվեց նախկին ժողովրդական կառավարության զինվորական կոմիսար Հ. Թումյանը, եւ այս հմուտ մարտավարը բավական ամրացրեց պաշտպանությունը:

Սակայն ինչ էլ որ լիներ, Արցախն ինչպես էլ որ կռվեր, դժբախտաբար պատերազմի ելքը պայմանավորված էր այն ամենակարեւոր հանգամանքով, որ Ասկերանում հայությունը պիտի դիմագրավեր ոչ միայն Ադրբեջանի սեփական ռազմական ուժին, այլեւ Բուրդ հրոսակախմբերին եւ Ադրբեջանը ոտքի կանգնեցնելու համար այնտեղ գտնվող օսմանյան ուժերին:

Զանգեզուրից սուրհանդակներ էին եկել, հաղորդեցին, թե շուտով օգնության կրգան Հայաստանի կառավարության հանձնարարությամբ առանձնացված հետեւակ ու հեծյալ զորամասեր՝ ժողովրդական հերոս Դրոյի ղեկավարությամբ: Սակայն դժնդակ օրերն անցնում էին, եւ այդ օգնական-փրկարար զորամասերը տեղ չէին հասնում:

Մարտի վերջին օրերին եւ ապրիլի 1-2-ին խալիլ փաշան չորս կատաղի գրոհ կազմակերպեց հայկական դիրքերի վրա եւ չորս անգամ էլ պարտություն կրելով ու տալով մեծաթիվ զոհեր՝ նահանջեց: Միայն ապրիլի 3-ին, օգտվելով դիրքերի վրա նստած թանձր մառախուղից՝ նրա գրոհող տարատեսակ զորախմբերն անտեսանելի հասան հայոց դիրքերին, նետվեցին ձեռնամարտի... Թվական ահռելի գերակշռու-

թյունը հաղթեց, եւ թորքերը նախ տիրեցին Խրամորթ գյուղին, ապա լցվեցին խճուղին եւ շարժվեցին դեպի Շուշի։

Ասում են՝ ապրիլի 3-ի օրհասական ժամերին հայոց հերոս հրամանատար Դալի Ղազարը, տեսնելով, որ արդեն սպառված է զինամթերքը, վճռված է ճակատամարտի բախտը եւ չկա ոչ մի փրկություն, վերջին զինվորներին կարգադրել է թողնել դիրքերը, իսկ ինքը միայնակ, ատրճանակը ձեռքին սպասել է այնքան, որ տաճկական առաջապահ զինվորներն իրենց հրամանատարի հետ կիպ մոտենան։ Անվրեպ կրակոցներով գետին է տապալել առաջից մոտեցող սպային ու երեք ասկյարների, իսկ վերջին գնդակն ուղղել իր քունքին։

Հակառակորդն արդեն նվաճել էր Կարկառի ձորը՝ Աղդամից մինչեւ Շուշի, հետեւաբար եւ տերն էր Եվլախ-Աղդամ-Շուշի-Զաբուղ ճանապարհի։ Այդ նշանակում է՝ մեջտեղից կիսված է Արցախը, իրարից կտրված էին Դիզակ-Վարանդան եւ Խաչեն-Զրաբերդ-Գյուլիստանը։ Բաժանված, իրար օգնության հասնելու, միասնաբար կռվելու անընդունակ։

Մոլեգնել էր թրքությունը, իր կառավարության կարգադրությամբ պիտի ավերեր հայկական բնակավայրերը, բնաջնջեր նրանց բնակչությունը, մանավանդ Գանձակի շրջաններում, այնտեղ, ուր հայությունն ասես պատանդ էր կամ ռազմագերի՝ իր երդվյալ թշնամու իշխանության ներքո։

Եղան, իհարկե, մխիթարական դրվագներ եւս. ապրիլի 11-12-ին թորքերը խայտառակ պարտություն կրեցին Գետաշենի տակ։ Քարհատի ու Շամքորի լեռնային գյուղերը հաջողությամբ ետ էին մղում ասպատակիչների հարձակումները։ Թորք ստվար մի զորախումբ Աղդամի կողմից հարձակվել էր Վարանդայի Նորշեն գյուղի վրա, սաստիկ ջարդ կերավ եւ չնչին մնացորդներո՛վ միայն վերադարձավ Աղդամ... Սակայն օսմանցի Քյազիմ բեյի հրամանատարությամբ գործող ադրբեջանական ավազակախմբերը կողոպտեցին ու հրդեհի մատնեցին Ազատ, Արմավիր, Սուլակ, Մանաշեն, Մանասբեկ եւ այլ գյուղերը։ Նուխիի ու Արեշի գավառների 36 հայկական բնակավայրեր՝ շուրջ 50 հազար բնակիչներ, որոնք ողջ էին մնացել 1918 թ. կոտորածից հետո, իրենց մահը գտան այս նոր եղեռնի ժամանակ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՇԱՑԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի առաջին տասնօրյակին, վերջապես, Արցախ հասավ Հայաստանի Հանրապետության խոստացած օգնությունը։ Գորիսից եկավ փոխգնդապետ Թարվերդյանը՝ իր հետ բերելով բավական զենք ու զինամթերք եւ թնդանոթներ։ Երեւանից ժամանողները հայկական չեկերով մի մեծ դրամագլուխ բերին՝ արցախցիներին պատճառելով այն ուրախությունը, որ իրենք էլ օգտվում են հայատառ դրամանիշով, ուրեմն Հայոց պետության կազմի մեջ են։

Վաղուց լուր էր հասել, թե Դրոն (Դրաստամատ Կանայան) նշանակված է Արցախ-Զանգեզուրի ընդհանուր հրամանատար եւ ահա ուր-որ է, պիտի գա, Շուշուց

դուրս քշի Սուլթանովի ռոմակը, հայոց իշխանությունը հաստատի ամբողջ մարզում: Սակայն նա Արցախ հասավ միայն ապրիլի երկրորդ տասնօրյակում, երբ կոծանված էին Շուշին ու տասնյակ ուրիշ բնակավայրեր, թշնամին կոտրել էր հայոց դիմադրության ողնաշարը:

Դրոն իր հետ բերել էր փոքրիկ մի զորաջոկատ: Սակայն դա էլ բավական էր, մանավանդ հրամանատարի հմուտ ու անվեհեր վրիժառու անունը, որպեսզի Արցախը վերստին փարի փոքր-ինչ սասանված իր հավատին:

Դրոն նստավայր դարձրեց Վարանդայի Ղարաբուլախ գյուղը եւ մի քանի օրում հեռախոսային կանոնավոր կապ ստեղծել տվեց գավառների ու Գորիսի միջեւ, հանգամանորեն ծանոթացավ շրջաններին ու նրանց ռազմագիտական հնարավորություններին:

Դրոյի ետեւից էլ եկավ Նժդեհ-Գարեգին Հարությունյանը եւ, անցնելով Դիզակ, այնտեղ ոտքի հանեց բոլոր կարող ուժերը:

Նժդեհը՝ աստվածընտիր այդ զորավարն ու հայրենասերը, մի քանի օրվա ընթացքում Դիզակը դարձրեց լայնածիր զորակայան, գտավ-ճանաչեց գավառի հմուտ զորականներին եւ իր տեղապահը դարձրեց նրանցից մեկին՝ տումեցի Թեւան Ստեփանյանին, որը հետագա տարիներին լինելու էր ադրբեջանական-չեկիստական հրոսակախմբերի հոգեառը, Դիզակի հայության անձնազոհ պաշտպանը:

Առաջնահերթ խնդիր էր մարզի իշխանության ստեղծումը, եւ Դրոն առաջին իսկ օրերին կազմակերպեց Արցախի վարիչների խորհուրդը՝ Ասլան Շահնազարյանի նախագահությամբ: Խորհրդի անդամներն էին նախորդ երկու տարիներին ղեկավարության փորձ ձեռք բերած Ա. Ավետիսյանը (նեֆին գործոց վարիչ), բժիշկ Տեր-Գրիգորյանը (առողջապահության), Գր. Ղազարյանը (լուսավորության), Խ. Մելքումյանը (պարենավորման), Հ. Թումյանը (գաղթականական գործերի), Արշ. Քամալյանը (գյուղատնտեսության), Հայաստանի Հանրապետության լիազոր Ա. Միքայելյանը (քաղաքացիական ու զինվորական գործերի միջեւ կապ ապահովող):

Շուշեցի գաղթականները սփռված էին հիմնականում Վարանդայի ու Դիզակի բնակավայրերում: Նրանց վերաբերող հարցերը Դրոյի կարգադրությամբ դարձան գավառական վարչությունների ուշադրության կենտրոնը:

Վարանդայում ու Դիզակում նոր զորահավաք արին, եւ ամենակարճ ժամանակում զենքի տակ դրվեցին շուրջ երեք հազար երիտասարդներ: Նրանց համար զենք ու ձի էին հայթայթվում Երեւանից բերված չեկերով: Դրոյի կարգադրությունն էր, որպեսզի Արցախի տանջահար գյուղացուն այլեւս ոչ ոք չնեղի զորքի համար զինամթերք ու պարեն հայթայթելիս:

Դիզակում ու Վարանդայում շատ շուտով գործերը կանոնավոր հունի մեջ էին մտել: Մնում էին Խաչենը, Ջրաբերդն ու Գյուլիստանը: Այդ կողմերն էլ ապրիլի 24-ին գործուղվեցին երկու բարձրաստիճան զինվորականներ (փոխգնդապետներ)՝ Զ. Մեսյանն ու Գ. Ղարագյոզյանը, որոնք Դրոյից առաջ էին ժամանել Արցախ եւ մասնակցել էին նախորդ ճակատամարտերին: Ապիլի 25-ին Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ Արցախի գյուղացիության *ինքնորդ համագումարը*, որի պատգամավորներն

էին հիմնականում Վարանդայի ու Դիզակի ներկայացուցիչները, քանի որ հյուսիսային գավառներում խառնակ դրություն էր, եւ նրանց պատգամավորներն էլ Մարտակերտում պիտի հավաքվեին՝ քննելու միեւնույն օրակարգի հարցերը։

Համագումարի Թաղավարդի նիստը երեք հարց ուներ. մարզի վարիչների խորհրդի հաստատումը, ռազմական վիճակը կազավորելու միջոցառումների մշակումը, ապա վերջինը՝ ***«որոշել Ղարաբաղի քաղաքական դիրքը հանդեպ Հայաստանի եւ ընտրել ներկայացուցիչներ՝ Անդրկովկասյան խորհրդաժողովի առջեւ Ղարաբաղի դատը պաշտպանելու համար»։***

Պատգամավորները միաձայն ու միահամուռ էին իրենց վճիռներում եւ ընդունեցին համապատասխան որոշումներ։

Համագումարի մարտակերտյան մասը տեղի ունեցավ ապրիլի 29-ին (62 պատգամավորներ ներկայացնում էին Խաչենի, Զրաբերդի ու Գյուլիստանի 70 գյուղերը)։

Անդրկովկասյան հանրապետությունների Թբիլիսյան խորհրդաժողովի պատվիրակներ ընտրելուց հետո քննության դրվեց օրակարգի հիմնական հարցը՝ *«Համագումարը Հայաստանի ու Ադրբեջանի հանրապետություններից որի՞ օրինենտացիան է ընդունում»։* Եվ կարճ, կտրական ելույթներից հետո համագումարը որոշեց ***«ընդունել Հայաստանի Հանրապետության օրինենտացիան եւ ոչ մի դեպքում [ոչ մի] պայմանով չենթարկվել Ադրբեջանի խան-բեկական կառավարությանը»։***

Արձանագրությունն ստորագրել են բոլոր պատգամավորները, նախագահ Ա. Վերդյանն ու քարտուղար Հ. Երիցյանը։

Եվ, այսպե՛ս, արցախահայության IX (երկճյուղ) համագումարը եւս նախորդներին հատուկ վճռականությամբ մերժում ու դատապարտում էր ադրբեջանական ամեն մի հավակնություն հայկական Արցախի, հայոց բաջության ու անկախության այդ ավանդական միջնաբերդի վրա, արտահայտում իր անսասան կամքն ու վճիռը լինելու մայր ժողովրդի հետ, նրա պետության կազմում...

Մինչդեռ Արցախում այս գեղեցիկ ծրագիրն էին մշակում, ապրիլի 26-ին հյուսիսից Ադրբեջան մտած ռուսական Տասնմեկերորդ կարմիր բանակը 28-ին Բաքվում ստեղծեց Հեղկոմ, որն էլ այդ օրն իսկ Ադրբեջանը հայտարարեց խորհրդային։ «Խորհրդայնացան» նաեւ Շուշիի մուսավաթականները. Սուլթանովը միանգամից դարձավ «բոլշեւիկ» եւ նույն 28-ին իր ավազակախումբը հայտարարեց Ղարաբաղի Հեղկոմ, իրեն էլ՝ Հեղկոմի նախագահ։

Ադրբեջանի մեկ օրական կառավարության անունից նրա արտաքին գործոց նախարար Հուսեյնովն ապրիլի 29-ին ամբարտավան մի վերջնագիր հղեց Հայաստանի կառավարությանը՝ պահանջելով Ղարաբաղն ու Զանգեզուրը մաքրել իր զորքերից, ***«դադարեցնել ազգամիջյան կոտորածը»։***

Նման մի վերջնագիր էլ նույն օրը Սուլթանովի ստորագրությամբ ուղղվեց Ղարաբաղի հայկական նորակազմ իշխանությանը։ Այն ավարտվում էր ***«Խորհրդային Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի դաշնության»*** հավաստումով, որը

ցավալի իրողությունն էր՝ մերկացված այդ հիմար զավառացու կողմից։

Ամենացավալին այն էր, որ անօրենների իշխանությունն Արցախ էր մտնում հայ բոլշեւիկների ուղեկցությամբ եւ նվաճող 11-րդ բանակի արնաներկ դրոշներով։ Գյուղերն էին լցվել հայ բոլշեւիկ ագիտատորները եւ քարոզում էին նոր իշխանության խոստումներն ազգային ու մարդկային երջանկությունների վերաբերյալ։

Իսկ ի՞նչ պիտի աներ նախորդ տարիների արյան նախճիրից ու վայրի բռնություններից դեռեւս աչք չբացած հայ գյուղացիությունը։

Դրոն մայիսի 19-ին հեռագրով իր կառավարությանը հաղորդեց, թե բոլշեւիկյան զորքերը Ս. Օրջոնիկիձեի գլխավորությամբ Ղարաբաղ են մտել, պահանջում են այն՝ մինչեւ Հազարի գետը հանձնել Ադրբեջանին, ժողովուրդն էլ այս ու այնտեղ ոգեւորված բոլշեւիկյան քարոզչությունից, չի ենթակվում իրենց։ Ուստի խնդրում էր օգնություն՝ միաժամանակ դիմել Ռուսաստանի կառավարությանը եւ պահանջել, որ այն հարգի իր հռչակած սկզբունքներն ազգային հարցում, հատկապես *«ազգային ինքնորոշումը»։*

Հայաստանի արտգործնախարար Համո Օհանջանյանը, որ դեռեւս մայիսի 3-ին Ռուսաստանի ժողկոմխորհի նախագահ Լենինին ու արտգործնախարար Չիչերինին հեռագրով հայտնել էր, թե մուսավաթական Ադրբեջանն արյունոտ չարագործություններ է անում Ղարաբաղում ու Գանձակի լեռնային մասերում, եւ հիմա էլ բոլշեւիկացած մուսավաթականներն այդքանը կատարում են Ռուսաստանի քաղաքական ու ռազմական ուժերի միջոցով, Դրոյի տեղեկություններից հետո, մայիսի 31-ին, Չիչերինին հղած տագնապոտ հեռագրում հաղորդեց, որ Ղարաբաղի հայությունն իր *«բոլոր համագումարներում ամեն անգամ հատուկ կերպով ընդունել է վճռական որոշում հարազատ Հայաստանի Հանրապետության մեջ մտնելու օգտին»։* Իսկ հիմա, ասում է, կոմիսար Օրջոնիկիձեն Ղարաբաղի հայությանն ուժով հարկադրում է, որ այն *«իրեն համարի Ադրբեջանի մաս։ Իմ կառավարությանը հայտնի չէ, թե կոմիսար Օրջոնիկիձեն ո՞ր կառավարության անունից է խոսում՝ Խորհրդային Ռուսաստանի թե՞ Խորհրդային Ադրբեջանի»։*

Հայաստանի արտգործնախարարը երեւի առաջնորդվում էր քաղաքակիրթ աշխարհում ընդունված օրենքներով ու բարոյական նորմերով, չգիտեր, որ բոլշեւիկներն ասպարեզ են եկել այդ օրենքներն ու նորմերը ոտի տակ տալու համար եւ իրենց ճանապարհին կանգ չպիտի առնեն ոչ մի անօրինության ու անմարդկային արարքի առաջ։

Մոսկվա էր գնացել Հայաստանի կառավարության պատվիրակությունը (նախագահ՝ Լեւոն Շանթ, անդամներ՝ Համբարձում Տերտերյան, Լեւոն Զուրաբյան)՝ Ռուսաստանի կառավարության հետ կարեւոր բանակցություններ վարելու համար։ Պատվիրակությունն իր հետ տարել էր նաեւ Ղարաբաղի գյուղացիության ինքնորոշման համագումարի որոշումը՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիության ս.թ. ապրիլի 23-29-ին տեղի ունեցած IX համագումարը որոշեց.

1. VII հոդվածի անունից Ղարաբաղի ու Ադրբեջանի կառավարության միջև ընդունված ժամանակավոր համաձայնությունը համարել խախտված՝ Ղարաբաղի խաղաղ բնակչության վրա ադրբեջանական զորքերի կազմակերպած հարձակումներով, Շուշիի ու գյուղերի բնակչության ջարդերով։

2. Հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը՝ իբրև նրա անբաժանելի մասի։

3. Խնդրել Հայաստանի Հանրապետության Մոսկվայան պատվիրակությանը՝ այս որոշումն ի գիտություն հայտնելու Ռուսաստանի խորհրդային կառավարությանը»։

Պատվիրակությունն իր կառավարությունից եւս հանձնարարություն էր ստացել Արցախի առթիվ։ Հայտնի է, օրինակ, պատվիրակության լուծելիք խնդիրներից ամենահիմնականի բովանդակությունը՝ *«Խորհրդային Ռուսաստանը պետք է ճանաչի Հայաստանի անկախությունը՝ ընդունելով Հայաստանի սահմաններում Ղարաբաղն ու Գյուլիստանը»։*

Այն օրերին Մոսկվայում էր գտնվում նաեւ հայկական մի այլ պատվիրակություն, որը կատարում էր Թիֆլիսի Ղարաբաղյան հայրենակցական կոմիտեի, ինչպես նաեւ Մոսկվայում գտնվող հայ գործիչների հանձնարարությունը։ Պատվիրակության անդամներն էին Արամայիս Երզնկյանն ու Սիմոնիկ Փիրումյանը, որոնց խնդիրն էր *«պաշտպանել խորհրդային կառավարության առաջ Ղարաբաղի հայության շահերը»։*

Նրանք գործի լծեցին նաեւ մոսկովյան հայ բոլշեւիկներին եւ հնարավոր ամեն միջոց գործադրեցին Արցախի հարցին արդար լուծում տալու համար։ Հայտնի է Լենինին ուղղված այն նամակ-խնդրագիրը, որ, անպայման պատվիրակության հորդորով, Մոսկվայում աշխատող բոլշեւիկներ Ռուբեն Քաքանյանն ու Գուրգեն Հայկունին են ստորագրել։

Սակայն բանից պարզվում է, որ այս անգամ էլ Հայաստանի կառավարությունն ուշացել էր։ Մինչեւ հայ բանագնացները Մոսկվա կհասնեին, Թուրքիայի ու Ադրբեջանի գործակալներն այնտեղ էին եւ ծավալել էին հակահայկական մի քարոզչություն, հայերի ու հայոց հանրապետության դեմ ստեղծել էին մի մթնոլորտ, որ հայերը երիցս խելոք կլինեին, եթե այնտեղ չհայտնվեին։ Լեւոն Շանթը՝ ռուս-հայկական բանակցությունների հայկական պատվիրակության ղեկավարը, հետագայում հիշում էր, որ խորհրդային կառավարության ներկայացուցիչ, հայազգի Լեւոն Կարախանի հետ իրենք համարյա բոլոր հիմնական հարցերի գծով համաձայնության էին եկել, երկկողմանիորեն ձեռնտու դաշինք շարադրել-պատրաստել, սակայն Բաքվի «կոմունիստների ճնշման պատճառով ամեն ինչ ի դերեւ ելավ։ Նրանց կարծիքով՝ *«Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը թուրքական հողեր են, անվիճելի թուրքական,*

եւ Հայաստանի հետ միացնելու խոսք անգամ լինել չի կրնար»։

Մոսկվայում ստեղծված հակահայկական մթնոլորտի մանրամասներն ավելի որոշակի արտահայտված են այն զեկուցագրի մեջ, որ Երզնկյանն ու Փիրումյանն են հրապարակել Թիֆլիսի թերթերից մեկում։ Նրանք գրել են *«...առավել ուշագրավ էր ռուսական շրջանակներում ստեղծված այն բնորոշ տրամադրությունը, որ առաջացել է նախքան հայկական պատվիրակության Մոսկվա մեկնելը, թուրք-թաթարական պրովոկացիայի շնորհիվ նպատակ ունենալով մոլորության մեջ պահել Ռուսաստանի հասարակական կարծիքն ու նրա ղեկավար շրջանները։ Պատվիրակները, Մոսկվա հասնելով, շվարած են մնում այն ստերից, որոնցով ընթերցողներին կերակրելիս են եղել կառավարական օրգանները՝ «Իզվեստիան», «Պրավդան» եւ այլ թերթեր։*

Այդ լրագրական հոդվածներում շարունակ այն միտքն է արծարծվել, թե Հայաստանը Լեհաստանի նման, դաշնակիցների գործիքն է, թե իմպերիալիստ դաշնակիցները համարյա թե ամեն օր Հայաստան են ներմուծում լեռների չափ ռազմամթերք, զինագործական արհեստանոցներ, որոնք առանց դադար առնելու ռազմամթերք են պատրաստում, թե գործը փայլուն կերպով է դրված եւ երկաթուղային ցանցի վրա աշխատանքը եռում է։ Ամբողջ աշխարհի բուրժուաները Հայաստան են հավաքվել՝ շահագործելու համար պրոլետարիատին եւ այնպիսի քաղաքականություն են մտցրել, որ ուղղված լինի սոցիալիստական Ադրբեջանի եւ սոցիալիստական Թուրքիայի խեղճ ու կրակ աշխատավոր զանգվածների դեմ։ Այդ երկու երկրների մուսուլման ժողովուրդները հանդիստ չունեն հակահեղափոխական հայոց կառավարության հսկայաթիվ զորքերի նվաճողական հարձակումներից։ Իբր, հակահեղափոխականների ձեռքով հրահրված Ղարաբաղի անցքերի ժամանակ տուժեցին ոչ թե հայերը, այլ խորհրդային իշխանության մշտական կողմնակից մուսուլմանական աշխատավորությունը»։

Հայկական երկու պատվիրակությունները եւս Մոսկվայում Արցախի համար ոչ մի արդյունքի չհասան։

Իսկ Արցախում ուրբաթը շուտ վրա հասավ, բան շաբաթը։ Մարզն իսպառ կտրված էր Հայաստանից, որն, այսպես կոչված, մայիսյան բոլշեւիկյան ապստամբության բռնկումներից հավասարակշռությունը կորցրած, ժամանակ ու հնարավորություն չուներ Արցախով զբաղվելու։ Այն ժամանակ չուներ, Դրոյի կարծիքով էլ՝ Արցախում *«հայկական գյուղացիության միջոցով անհնարին է դիմադրություն ցույց տալ բոլշեւիկներին»։*

Մայիսի 24-ին Ավետարանոց-Զանախչի գյուղում խորհրդակցության հավաքվեցին Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները (Դրո, Նժդեհ, զնդապետ Միրիմանյան, Արս. Միհայելյան) եւ տեղական ուժերի ղեկավարները։ Քննության առնելով իրադրությունը՝ պարզեցին, որ.

«Ա) Ղարաբաղի ժողովրդի տրամադրությունները զգալապես փոփոխության ենթարկված են եւ աստիճանաբար կարող են վերածվել թշնամության.

Բ) Մայիսի 12-ից սկսած Հայաստանի կառավարությունեն, հակառակ բազմիցս եղած դիմումների, ոչ մի տեղեկություն չի ստացվել, ապա ուրեմն Հայաստանի Հանրապետությունը գտնվում է օրհասական վտանգի մեջ.

Գ) Նժդեհի Ղափանի զորամասը չի կարող երկար մնալ Ղարաբաղում, որովհետեւ բոլորն էլ գյուղացիներ են ու կամավոր եւ կը կամենան վերադառնալ հայրենիք՝ դաշտային աշխատանքներու թվելու.

Դ) Ռուսական բանակի որոշ զորամասեր, խճուղու վրայով գրավում են կարեւոր դիրքերը, որով կտրում են Ղարաբաղի հայկական զորամասի նահանջի ճամփան»։

Որոշում են Արցախի իշխանությունը եւ բավական զինամթերք ու հեռախոսային կապի միջոցներ հանձնել հայ բոլշեւիկներին, որոնց գլուխ էր կանգնած բժիշկ Սաֆո Համբարձումյանը։

Հայաստանի Հանրապետության զորքը, Դրոյի առաջնորդությամբ, մայիսի վերջին Քիրսի ստորոտով անցավ Խծաբերդ, այնտեղից էլ՝ Զանգեզուր։

Եվ նորից, երեւի թե վերջին անգամ, Արցախը թողնվեց մեն-մենակ, իր հույսին, որ ասել է՝ անհուսության։ Անհուսությա՛ն, որովհետեւ նրա ճակատագրին տեր պիտի դառնային բոլշեւիկները, մանավանդ հա՛յ բոլշեւիկները, որոնց համար գոյություն չուներ ազգային հարց, որոնք, լծված համաշխարհային հեղափոխության մոտալուտ հաղթանակի, թուրք ու ադրբեջանցի կոմունիստների հետ հաշտ ու համերաշխ այդ հաղթանակի հասնելու նենգապատիր ցնդաբանությանը, պատրաստ էին զոհաբերել ոչ միայն Արցախը, այլեւ ամբողջ Հայաստանն ու հայ ժողովրդին։

1920 թ. մայիսի 26-ին Վարանդայի Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ Արցախի հայության *տասներորդ համագումարը։* Պատգամավորները հիմնականում բոլշեւիկներ էին, եւ ելույթներն ու ընդունած որոշումները՝ հղված վերեւներին, աչքի էին ընկնում աղմկարար այն դատարկաբանությամբ, որ բնորոշ էին լինելու կուսակցության եւ նրա կողմից ստեղծված հասարակարգի էությանը, խոսքին, գործին։ Ողջունեցին 11-րդ կարմիր բանակի մուտքն Արցախ, երկրամասը հայտարարեցին խորհրդային, եւ ստեղծվեց Հեղկոմ՝ Սաֆո Համբարձումյանի նախագահությամբ։

Բաքվի ղեկավարները շուտով *«այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ»* Համբարձումյանին հեռացրին մարզից, ղեկավար պաշտոնների մեծ մասը հանձնեցին իրենց երաշխավորած թորքերին, եւ սկսվեց *«երկու բազմաղարյան եղբայր ժողովուրդների համատեղ ու համերաշխ կյանքը»։*

«ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ» ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ԽԱՂԱՂ-ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ

Ադրբեջանն արդեն Ղարաբաղն իրենն էր դարձրել եւ սկսեց նրա հետ վարվել այնպես, ինչպես իր զաղութակալական կամքն էր թելադրում. ծայրամասային տարածքները կցմցվել էին հարեւան թորք զավառներին. օրինակ, Զրաբերդի մի զգալի մասը՝ Թարթառին, Դիզակինը՝ Զաբրայիլին, Գյուլիստանից պոկել էին իր լավագույն բնակավայրերը՝ Գետաշենն Ալիարակ լճի ափերի զյուղերի հետ միասին:

Այս բռնակցումների, ժողովրդական զանգվածների դեմ զործադրվող բռնությունների ու անարդարությունների, ազգային խտրության ու արհամարհանքի դեմ բողոքի ձայն բարձրացնողները տեղնուտեղը կալանքի տակ էին առնվում, ենթարկվում ռազմական կոմունիզմի բերած, առաջներում չեղած-չտեսնված պատժաձեւերի:

Եվ այս ամենի դեմ ծայր առան ժողովրդական ընդվզումները Վարանդայում ու Դիզակում, Խաչենում ու Զրաբերդում:

Զինված պայքարի առաջին կոչը հնչել էր Դիզակի Տումի զյուղում: Պայքարի ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց Տումու զավակ, ցարական բանակի վախմիստր (հեծյալ զորամիավորման սպա) Թեւան Ստեփանյանը: Նա՛, որ զարնանը, Դիզակի ռազմական ուժերը կարգի բերելիս, Նժդեհի խորհրդատուն էր եղել ու բաջահմուտ օգնականը:

Թեւանի ջոկատը դեռեւս աշնան սկզբից պատժարշավի ելավ Դիզակի զյուղերում սանձազերծված բռնությունների դեմ եւ սարսափի տակ դրեց սոցիալիզմի եւ ադրբեջանական կառավարության անունից արցախցի հայի տունը բանդողներին: Կարճ ժամանակում ակնառու հաջողություններ ձեռք բերեցին ապստամբները՝ Դիզակի լեռնային զյուղերում, Տողի եւ Տումու ենթաշրջանում վերացնելով խորհրդային իշխանությունը եւ վերականգնելով անկախության շրջանի կարգ ու կանոնը: Նոյեմբերի վերջերին թեւանականների դեմ *«սրբազան»* պատերազմի էին ելել Զաբրայիլի կոմունիստական ջոկատները, Դիզակի ու Վարանդայի բոլշեւիկյան զինված խմբերը: Անհավասար պայքարում տեղի տալով՝ Թեւանն ու մի բանի յուրայիններ անցան Զանգեզուր, եւ այնտեղ Նժդեհից համալրումներ ու զինամթերք ստանալով, վերադարձան Արցախ՝ շարունակելու պայքարը: Դեկտեմբերի կեսերին Թեւանի զորախումբը Դիզակում ու Վարանդայում վերստին վերացրել էր խորհրդային իշխանության տեղական մարմինները: Օրեցօր ծավալվում էր նրա ազդեցության ոլորտը, նոր զյուղեր էին հանձնվում ժողովրդական հերոսի տնօրինությանը:

Թեւանի իշխանությունը Դիզակում ու Վարանդայի մի մասում դիմացավ ավելի բան վեց ամիս: Դիմացավ՝ Ադրբեջանի զորքերի ու մարզի բոլշեւիկյան զորաջոկատների հետ կռիվ տալով:

1921 թ. զարնանն Ադրբեջանի կառավարությունն Արցախ ուղարկեց զինական թարմ ու մեծ համալրումներ: Նրանց հետ էին 11-րդ կարմիր բանակի 84-րդ բրիգադի 250, 251 եւ 252-րդ գնդերը՝ ռուս հրամանատարներ Վոյցեխովսկու, Զուլովի եւ

Միզդրիկովի գլխավորությամբ։ Լենային ամրություններին ապավինած, ապստամբ գյուղերում ու անտառներում ապաստանած ազատամարտիկները, ցավոք, ո՛չ մի տեղից օժանդակություն չէին ստանում։ Զանգեզուրը հնարավորություն չուներ հասցընելու իր խոստացած օգնությունը։ Եվ ծանր ու օրհասական կռիվներից հետո ապրիլի վերջին-մայիսի սկզբներին ազատագրական արյունահեղ պայքարը մարեց։ Թեւանն իր մի քանի զինակիցների հետ հեռացավ Պարսկաստան։ Զինվորներից շատերը Խծաբերդի կողմով անցան Զանգեզուր եւ միացան Նժդեհի բանակին։

Թեւանը մեկ էլ հայրենի լեռներում հայտնվեց 30-ական թվականներին։ Համագյուղացիներն ասում էին՝ եկել էր արցախահայությանը նոր պայքարի հանելու Ադրբեջանի ստորացուցիչ իշխանության դեմ։ Սակայն տեսավ մարզի նոր վիճակը, համոզվեց, որ ապստամբությունը կամ ժողովրդական պայքարը նոր պայմաններում խեղճ ու անզոր միջոց պիտի լինեն մի այնպիսի տերության հանդեպ, ինչպիսին ստալինյան բռնապետությունն էր՝ ծանրորեն նստած աշխարհի մեկ-վեցերորդական մասի վրա։ Համոզվեց ու հեռացավ, որպեսզի Հայրենական պատերազմից հետո Իրան մըտած չեկիստները նրան բռնեն ու բերեն, տանջամահ անեն Բաքվում։

* * *

Լեռն Շանթի պատվիրակության եւ Ռուսաստանի արտգործնախարար Չիչերինի ու նրա տեղակալ հայազգի Լեռն Կարախանի բանակցությունների ժամանակ մի մտերիմ զրույցից պազվել էր, որ Ռուսաստանը կողմ է, որպեսզի ***«Նախիջեւանի շրջանը եւ Զանգեզուրն անվերապահորեն համարվեն հայկական հողամասեր, իսկ Ղարաբաղը նկատվի վիճելի, որի իրական վիճակը որոշվելու էր հետագայի ժողովրդական հանրաքվեով»։***

Հայտնի է, որ անմիջական նախընթացին Չիչերինը միշտ էլ Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջեւանը հայկական տարածքներ էր համարում եւ ջանում էր, որ իր կարծիքն ընդունեն նաեւ խորհրդային մյուս ղեկավարները։ Իսկ հայ Կարախանը ոչ միայն այդ կարծիքին էր, այլեւ նրա լուծմանն էր ձգտում՝ չնայած իր փափուկ դիրքին։

Սակայն հայոց կառավարությունը, հարցի լուծումն արագացնելու փոխարեն, ինչ-ինչ նկատառումներով ձգձգում էր այն... Մինչեւ որ ասպարեզում հայտնվեցին Թուրքիայի նոր առաջնորդ Մուստաֆա Քեմալն ու իր գործակալները եւ սկսեցին իրենց ու Ադրբեջանի ***«բոլշեւիկյան»*** շահերը պաշտպանել՝ ընդդեմ ***«իմպերիալիստական Հայաստանի»։*** Եվ սրանց սիրախաղերից հետո էր, որ Հայաստանի պատվիրակությանը հայտնի դարձավ, թե անառարկելի է, որ Ղարաբաղը պիտի տրվի Ադրբեջանին։ Այսքանից հետո՛ անգամ պատվիրակության անդամներն այնքան էլ չվհատվեցին, որովհետեւ, ինչպես հետագայում գրել է նրանցից մեկը՝ Համբարձում Տերտերյանը, ունեին ***«այն խոր համոզումը, որ Ղարաբաղի ազատասեր եւ ըմբոստ հայությունը վաղ թե ուշ պիտի միանար իր մայր հայրենիքին՝ Հայաստանի Հանրապետությանը»։***

Այսպիսին էր հայկական դիվանագիտությունը. Բաքումում Ղարաբաղը նվիրաբերեց ապագա Ադրբեջանին՝ առանց կարգին պատկերացում ունենալու ազգակից այդ նահանգի դերի ու նշանակության վերաբերյալ, հիմա էլ Ադրբեջանին նույն շնորհն էր անում՝ չտեսնելով դիմացը բարձրացող Թուրքիա-Ադրբեջան-Ռուսաստան լծակը, որի տակ պիտի ճզմվեր ո՛չ միայն Ղարաբաղի հարցը, այլեւ Նախիջեւանինը։

Հուլիսի վերջերին հայ-ռուս բանակցությունները փոխադրվեցին Երեւան, եւ ռուսական կողմից խոսք ասողը Բորիս Լեզրանը պիտի լիներ։ Այստեղ էլ, ամենայն հավանականությամբ, հայկական կողմի ձգձգումների պատճառով, բուն բանակցություններն սկսվեցին միայն հոկտեմբերի 13-ին եւ ավարտվեցին 28-ին ընդունված մի դաշնագրով, որը Նախիջեւանն ու Զանգեզուրը տալիս էր Հայաստանին, որպեսզի սա էլ ***«իր հերթին անվերապահորեն հրաժարվի որեւէ պահանջից այսպես կոչված Ղարաբաղի մարզի նկատմամբ»։***

Հայաստանի կառավարությունն ստորագրեց այս որոշման տակ։ Մի որոշման, որի մեջ ***«այսպես կոչված Ղարաբաղի» վերաբերյալ որեւէ պահանջից պիտի «անվերապահորեն հրաժարվի»։*** Այսպես կոչվա՞ծ։ Իսկ հայ ժողովրդի մեծ բարեկամ Սերգեյ Գորոդեցկին դրանից առաջ գրել էր, թե Ղարաբաղը ոչ թե ***«այսպես կոչված»*** մի բան է, այլ ***«հին հայկական առաքինությունները... մաքուր տեսքով պահպանած»*** երկիր, հայոց ***«ազգային կյանքի պատվարն է, հույսերի կղզին, վերածննդի գրավականը»***, եւ ***«Հայաստանի սիրտը՝ դաշտն Արարատյան, անհնար է պաշտպանել, առանց տերը լինելու Ղարաբաղի»։***

Միամտություն չունենանք հավատալու, թե Ռուսաստանն այդ Ղարաբաղը հանձնեց Ադրբեջանին՝ մտածելով, որ դա՛ է հարցի արդար լուծումը, եւ ինքն էլ այն լուծում է իրավարարի արդարամտությամբ։ Բնա՛վ։ Նոր Ռուսաստանը գրված տարածքների հարցում ժառանգել էր ցարիզմի քաղաքականությունը եւ պարզապես հանձին Ղարաբաղի տեսնում էր իրեն վիճակված մի հաղթաթուղթ, որով պիտի զսպեր երկու անվստահելի երկիր՝ Ադրբեջանն ու Հայաստանը. մեկին այդքան երանելի պատառ գցած լինելո՛վ, մյուսին անվերջ հուսադրելո՛վ, թե երբեւէ այն կվերադարձնի, կտա իրեն։

Ահա այս քաղաքական-դիվանագիտական, ամեն պարագայի՝ անբարոյական, խաղի ամենաբնութագրական շրջաններից մեկը, որ կարելի է կոչել ***սոցիալիզմը եւ Արցախը։***

ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴՐԻ ՆՈՐ ԲՌՆԱԴԱՏՈՒՄԸ

1920 թ. նոյեմբերի վերջին օրերին հայ բոլշեւիկների ղեկավարներն Ադրբեջանի Ղազախի կողմով մտան Հայաստան եւ, դեռ նրա մայրաքաղաքը չհասած, երկիրը հայտարարեցին խորհրդային։ Իսկ Հայաստանի կառավարությունն էլ, առանց մի կրակոցի, հաշտ ու խաղաղ, իշխանությունը բոլշեւիկներին հանձնեց դեկտեմբերի 2-ին։

Նոյեմբերի 30-ին, Հայաստանի խորհրդայնացումը հռչակելու հաջորդ օրը, իբր եղբայրական հայ ժողովրդի ցնծության առթիվ, Բաֆվում գտնվող Կիրովի, Օրջոնիկիձեի, Այսրկովկասը խորհրդայնացնելու համար այստեղ գործուղված ուրիշ քաղաքական ու ռազմական գործիչների ճնշման տակ, Ադրբեջանի ղեկավար Նարիման Նարիմանովը հայ ժողովրդին ու նրա բոլշեւիկյան ղեկավարությանն ուղարկեց իր երկրի ողջույնի հետեւյալ խոսքը.

«Ադր. Հեղկոմի ողջույնը՝ բոլորի~ն, բոլորի~ն...

Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անունից հայ ժողովրդին հայտարարեցեք Ադրբեջանի Հեղկոմի նոյեմբերի 30-ի որոշումը. «Ադրբեջանի բանվորա-գյուղացիական կառավարությունը, առանարով ապստամբած գյուղացիների անունից [հղված] ուրախալի լուրը Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հռչակման մասին, ողջունում է եղբայրական ժողովրդի հաղթանակը։ Այսօրվանից վե-

բացված են հայտարարվում սահմանային վեճերը Հայաստանի ու Ադրբեջանի միջև։ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջեւանը համարվում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության մասեր։

Կեցցե՜ Խորհրդային Հայաստանի եւ Ադրբեջանի բանվորների ու գյուղացիների եղբայրությունն ու միությունը։

Ադրբեջանի խորհրդային Հեղկոմի նախագահ
Նարիմանով,
Արտաքին գործոց կոմիսար
Հուսեյնով»[1]*։*

Հայաստանում մարդիկ այս հեռագիրը կարդացել ու չեն հավատացել սեփական աչքերին։ Երեւի այդ է պատճառը, որ այն հրապարակել են մի շաբաթ հետո, դեկտեմբերի 7-ին։

Իսկ Բաքվում սրանից հետո էլ դեկտեմբերի 1-ին կազմակերպվեց Բաղաքի խորհրդի հանդիսավոր նիստ, որին մասնակցում էին վերը հիշված գործիչները, հանրապետության ղեկավարները, բանվորագյուղացիական աշխատավորության ներկայացուցիչները։ Այստեղ Նարիմանովն իր հեռագրի բովանդակությունը հրապարակեց իբեւ հռչակագիր-դեկլարացիա, որը խանդավառությամբ ընդունեցին ու ողջունեցին բոլոր ելույթ ունեցողները՝ Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Բեկզադյանը, 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդի անունից՝ Միխայլովը, Ադր. կուս. Կենտկոմի անունից՝ քարտուղար Կամինսկին։

Կոմունիստական կուսակցության Անդրերկրոմի առաջին քարտուղար Գ. Կ. Օրջոնիկիձեի ելույթն աչքի էր ընկնում իրերի ու կացության խոր ըմբռնումով, սրտացավությամբ ու անկեղծ խոստովանությամբ։ Կարդանք նրա արտասանած, թեկուզ, այս նախադասությունները. *«Խորհրդային Ադրբեջանը հանդես գալով հանձին ընկ. Նարիմանովի, ապացուցեց ամբողջ աշխարհին եւ ամենից առաջ Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին, որ միայն խորհրդային իշխանությունն է ընդունակ լուծելու ազգային թշնամանքի հետ կապված բոլոր անիծյալ հարցերը, որոնք կային այստեղ եւ շատ-շատ են ամբողջ աշխարհում...»։* Ապա դառնալով Զանգեզուրը, Նախիջեւանը եւ Ղարաբաղը խորհրդային Հայաստանին հանձնելու մասին արված հայտարարությանը, նա հաստատում էր, որ *«Այստեղ կարդացված այդ ամբոր խորհրդային կարեւորության ակտ է, որը*

---

1 Այս փաստաթղթի եւ հետագայում վկայակոչվելիքների աղբյուրները չենք նշում՝ նկատի առնելով, որ դրանք վերջին տարիներին բազմիցս հրապարակվել են ու հայտնի են նույնիսկ ոչ մասնագետ ընթերցողներին։

չունի իր օրինակը մարդկության պատմության մեջ...»։

Օրջոնիկիձեն հաջորդ օրն իսկ, դեկտեմբերի 2-ին, հեռագրեց Մոսկվա, Լենինին ու Ստալինին՝ հաստատելով, որ *«Ադրբեջանը երեկ հայտարարել է Նախիջեւանը, Զանգեզուրն ու Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի օգտին հանձնելու մասին»։* Եվ Ստալինն էլ, Ռուսաստանի խորհրդային կառավարության անունից, իր հերթին ողջունելով խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, ընդգծել է, որ *«Դեկտեմբերի 1-ին Խորհրդային Ադրբեջանն ինքնակամ հրաժարվում է վիճելի գավառներից եւ հռչակում Զանգեզուրի, Նախիջեւանի ու Լեռնային Ղարաբաղի հանձնումը Խորհրդային Հայաստանին»։*

Մնում էր, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունն արձագանքեր, իր խոսքն ասեր Ադրբեջանի Հեղկոմի ու կառավարության այդ *«երախտալից»* քայլի մասին։ Այդ պատճառով էլ պատասխանը եղավ բավական ուշ, հունվարին։ Հայաստանի Հեղկոմի նախագահ Ս. Կասյանը հայության եւ իր անունից Նարիմանովին հղեց երախտագիտական նամակ՝ սկզբից իսկ հաղորդելով, որ *«Հայաստանի խորհրդային ռազմահեղափոխական կոմիտեն եղբայրական հիացումի զգացումով ընդունեց Ադրբեջանի խորհրդային իշխանության 1920թ. նոյեմբերի 30-ին [ընդունած] պատմական ակտը Զանգեզուրի, Նախիջեւանի ու Լեռնային Ղարաբաղի մասին»։*

Հետագայում պիտի պարզվեր, որ Նարիմանովի հրապարակած դեկլարացիան միայն երեսպաշտական ու սուտ հայտարարություն է եղել։ Այն Բաքվում տպագրվեց մի քանի օր հետո՝ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ խոսքը խմբագրված այսպես. *«Լեռնային Ղարաբաղին տրվում է ինքնորոշվելու իրավունք»։* Ինչ մնում է Նախիջեւանին, ապա այնտեղ էլ, հավանաբար ոչ առանց նույն Նարիմանովի հանձնարարության, սկսել էին հակահայկական-հակաբոլշեւիկյան մի խառնակչություն, որի կազմակերպիչներից մեկը՝ նախկին մուսավաթական գործիչ Շահթախթինսկին, հայոց դեմ *«սրբազան պատերազմ»* էր հայտարարել ու իր ժողովրդից պահանջում էր *«հայացքը դարձնել դեպի Թուրքերը»։* Եվ ինչ-որ օսմանցի թուրք Վեյսալ բեկ էլ, ինչպես Ռուսաստանի նեկայացուցիչ Բ. Լեզրանն էր հեռագրել իր արտգործկոմ Չիչերինին,- Նախիջեւանում իրեն հայտարարել էր Թուրքիայի ժամանակավոր արտակարգ կոմիսար եւ իր երկրից սպասում էր իսկական տերերի ժամանելուն։

Մնում էր Զանգեզուրը։ Այնտեղ դեռեւս ամռանն էր, որ թորքերը փորձում էին իրենց տիրապետությունը հաստատել կաշառքով, դավով, չարագործություններով։ Պահպանվել են Ղարաբաղի,այսպես կոչված, նահանգային հեղկոմի ղեկավար Ասադ Կարաեւի երկու հեռագրերը, որոնցով Զանգեզուրի իր գործակալներին հանձնարարում էր գենքով տանուլ տված երկրամասը փողով նվաճել (*«Կառավարությունը որոշել է Ղարաբաղն ու Զանգեզուրը Ադրբեջանին միացնելու համար բաց թողնել 200 միլիոն ռուբլի»*,- հաղորդում է Կարաեւը), *նենգորեն գլխատել ժողովրդին («Ջանացեք, որպեսզի բոլոր նշանավոր ու պետական հայերը կար-*

նավորված լինեն»), նյութել այնպիսի դավեր, որոնց մասին այս կողմերում անգամ լսված չլինեն («Զինվորականներով հարուստ ու հայտնի տեղերում, հայերին թուլացնելու նպատակով, մի ռուս զինվոր սպանեցեք եւ դրանում մեղադրեցեք հայերին։ Ձեք պատկերացնում, թե ի՞նչ կանեն ռուսները»)։

Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչն այս հանձնարարությունները տալիս էր ամռանը, հուլիսին։ Իսկ հիմա Զանգեզուրում արդեն Գարեգին Նժդեհի քաջերն էին տիրություն անում, վտանգավոր էր մոտենալը։ Մնում էր դավի եւ ստոր խաղերի թիրախ դարձնել Նախիջեւանն ու Ղարաբաղը։

Նախիջեւանի հարցը լուծվելու էր Թուրքիայի ճնշմամբ։ Իսկ Ղարաբաղի՞ նը... Նրա հայանպաստ լուծման դեմ կանգնած էր մի այնպիսի հայատյաց ու դիվային գործիչ, որպիսին Իոսիֆ Ստալինն էր։

Հայտնի է, որ 1920 թ. վեներում Սերգո Օրջոնիկիձեն սկզբունքորեն կողմ է եղել, որպեսզի Ղարաբաղի ու մյուս հայկական նահանգների, նույնիսկ արեւմտահայկական վիլայեթների, հարցը լուծվի արդարամտությամբ, հօգուտ Հայաստանի։ Տեղեկանալով այս մասին՝ Ռուսաստանի ազգությունների ժողկոմ Ստալինը նրան դաժանորեն կշտամբեց, թե *«չի կարելի շարունակ լարախաղացություն անել կողմերի* (այսինքն՝ Հայաստանի ու Ադրբեջանի-Բ.Ու.) *միջեւ։ Պետք է վճռականորեն պաշտպանել կողմերից մեկին, տվյալ դեպքում՝ Իրարկե, Ադրբեջանին՝ Թուրքիայով հանդերձ»։*

Հետաքրքիր է, որ Ստալինը կշտամբալից մի առաջարկ էլ արել է Լենինին, երբ հարց է բարձրացել արեւմտահայկական նահանգների նկատմամբ խորհրդային Հայաստանի հավակնության մասին։ Նա գրել է. *«Ընկեր Լենին... Այդ հայկական իմպերիալիստական պահանջը չի կարող մեր պահանջը լինել։ Անհրաժեշտ է արգելել ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով Թուրքերին նոտաներ ուղարկելը»։*

Այս մթնոլորտում 1921 թ. մարտի 16-ին կնքված ռուս-թուրքական պայմանագրով Նախիջեւանն Ադրբեջանին պարգեւելուց հետո առկախ էր մնացել Ղարաբաղի հարցը։ Երեւի վինակից դժգոհ Հայաստանի ղեկավարությունը տրտնջացել էր Անդրերկրկոմում, այնտեղ 1921-ի հունիսի 3-ին կուսակցության Կովկասյան բյուրոն ընդունեց որոշում, որով Հայաստանին հանձնարարվում էր ընդունել հռչակագիր, որով պետք է Ղարաբաղն առնվի խորհրդային Հայաստանի սահմանների մեջ։ Եվ այս հիման վրա էլ Հայաստանի ժողկոմխորհն իսկապես ընդունեց հետեւյալ հռչակագիրը.

«Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Հեղկոմի հռչակագրի եւ Հայաստանի ու Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների կառավարությունների միջեւ եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմվանից

կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մասը։

Հայաստանի Սոցիալիստական
Խորհրդային Հանրապետության
Ժողկոմխորհի նախագահ
Ա. Մյասնիկյան (Ա. Մարտունի),
Քարտուղար Մ. Ղարաբեկյան։
1921 թ. հունիսի 12, Երևան։

Երկու *«Հանրապետությունների միջև եղած պայմանավորվածության հիման վրա»* ակնարկը վկայում է, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև այդպիսի պայմանավորվածություն իսկապես եղել է, այսինքն՝ Նարիմանովի կառավարությունը տվել է իր համաձայնությունը, որպեսզի Հայաստանի Ժողկոմխորհն ընդունի նման որոշում եւ հրապարակի։ Այլապես անհնար կլիներ պատկերացնելու հոչակագրի մեջ նույն ակնարկի առկայությունը, մանավանդ այդ հոչակագրի հրապարակումն Ադրբեջանի պաշտոնական մամուլում («Բակինսկի ռաբոչի»)։

Հոչակագրի կապակցությամբ Հայաստանի կառավարությունն ստեղծեց նաեւ Ղարաբաղում Հայաստանի Հանրապետության Արտակարգ լիազորի պաշտոն, եւ այդ պաշտոնին նշանակվեց ժամանակի հայ նշանավոր գործիչներից մեկը՝ Ասմանազ Մրոավյանը։

Մրոավյանն ու Ադրբեջանի ռազմածովային ժողկոմ Ալիհեյդար Կարաեւը Թիֆլիսից Ղարաբաղ ուղեւորվեցին, որպեսզի մարզը Հայաստանին տալու գործը կարգավորեն։ Սակայն երբ գնացքով հասան Եվլախ, Կարաեւը հայտնեց, թե իրենց հանձնարարված է գնալ Բաքու, քանի որ հարցը նոր պարզաբանումների կարիք ունի, եւ դա պիտի արվի Բաքվում։

Հետո պիտի պարզվեր, որ Նարիմանովն ու գործակիցները հրաժարվել են տված համաձայնությունից եւ պահանջում են, որ Անդրերկրկոմը վերստին անդրադառնա Ղարաբաղի խնդրին։

Թիֆլիսում հարցը բուռն վեճեր առաջացրեց, բնությունները նորից փոխադրվեցին Բաքու եւ Երեւան, որպեսզի երկու կողմերը մշակեն իրենց դիրքորոշումները եւ ներկայանան Թիֆլիս՝ հարցը վերջնականապես լուծելու համար։

Կուսակցության Կովկասյան բյուրոյի այն նիստը, որ բնելու էր երեք հանրապետությունների սահմանազատման հարցը, սկսվեց հուլիսի 2-ին։

Երբ արդեն բյուրոյի անդամներն ու հանրապետություններից հրավիրված բազմաթիվ աշխատողներ հավաքվել էին, պարզվեց, որ ներկա է նաեւ Ստալինը։ Եկել էր Նալչիկից, ուր հանգստանում ու բուժվում էր։ Ինչո՞ւ էր եկել, ո՞ւմ հրավերով կամ պահանջով՝ փաստաթղթերը որոշակի ոչինչ չեն հաղորդում այս հարցերի վերաբերյալ։

Լեռնային Ղարաբաղի պատկանելության հարցը բննության դրվեց Կով. բյուրոյի

հուլիսի 4-ի նիստում։ Ներկա էին Ստալինը եւ բյուրոյի 8 անդամները (Օրջոնիկիձե, Կիրով, Մախարաձե, Նարիմանով, Մյասնիկյան, Նազարեթյան, Օրախելաշվիլի, Ֆիզատներ)։

Քննության ընթացքում երեւան եկան երկու տեսակետներ, եւ քվեարկության դրվեցին հետեւյալ հարցերը.

Ա) Ղարաբաղը թողնել Ադրբեջանի սահմաններում։ Կողմ քվեարկեցին Նարիմանովը, Մախարաձեն, Նազարեթյանը, դեմ՝ Օրջոնիկիձեն, Մյասնիկյանը, Կիրովը, Ֆիզատները։

Բ) Հանրաքվե անցկացնել ամբողջ Ղարաբաղում՝ ինչպես հայ, այնպես էլ մահմեդական ամբողջ բնակչության մասնակցությամբ։

Կողմ քվեարկեցին Նարիմանովն ու Մախարաձեն։

Գ) Ղարաբաղի լեռնային մասը մտցնել Հայաստանի կազմի մեջ։

Կողմ քվեարկեցին Օրջոնիկիձեն, Կիրովը, Մյասնիկյանը, Ֆիզատները։

Դ) Հանրաքվե անցկացնել միայն Լեռնային Ղարաբաղում, այսինքն՝ հայերի շրջանում։ Կողմ քվեարկեցին Օրջոնիկիձեն, Մյասնիկյանը, Ֆիզատները, Կիրովը, Նազարեթյանը։

Որոշեցին Լեռնային Ղարաբաղը մտցնել Հայկական ԽՍՀ կազմի մեջ, հանրաքվե անցկացնել միայն Լեռնային Ղարաբաղում։

Այս որոշումն ընդունվելուց հետո էր, որ Նարիմանովը կատարեց հետեւյալ հայտարարությունը. ***«Նկատի առնելով այն կարեւորությունը, որ Ղարաբաղի հարցն ունի Ադրբեջանի համար, անհրաժեշտ եմ համարում վերջնական լուծման համար այն փոխադրել ՌԿ(բ)Կ Կենտկոմ»։*** Եվ, հաշվի առնելով այս հայտարարությունը, Կով. բյուրոն ընդունեց նոր որոշում, որ է. ***«Նկատի առնելով, որ Ղարաբաղի հարցը հարուցել է լուրջ տարաձայնություններ, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կով. բյուրոն անհրաժեշտ է համարում այն փոխադրել ՌԿ(բ)Կ Կենտկոմ՝ վերջնական որոշման համար»։***

Սակայն հաջորդ օրն իսկ բյուրոն, նույն կազմով ու Ստալինի մասնակցությամբ, վերստին անդրադարձավ Ղարաբաղի հարցին (իբր, Օրջոնիկիձեն ու Նազարեթյանը հարց էին բարձրացրել վերանայել նախորդ նիստի որոշումը Ղարաբաղի մասին) եւ, առանց քննարկելու, նույնիսկ առանց քվեարկության դնելու, ընդունեց հետեւյալ որոշումը.

«Ա. Երնելով մահմեդականների ու հայերի միջեւ ազգային խաղաղության անհրաժեշտությունից եւ Վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական կապից, նրա մշտական կապից Ադրբեջանի հետ, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադր. ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն Շուշի քաղաքով, որը մտնում է ինքնավար մարզի մեջ։

Բ. Հանձնարարել Ադրբեջանի Կենտկոմին՝ որոշելու ինքնավար մարզի սահմանները եւ ներկայացնելու ՌԿԿ Կով. բյուրոյի հաստատմանը։

Գ. Կով. բյուրոյի նախագահությանը հանձնարարել պայմանավորվելու Հայաստանի Կենտկոմի ու Ադրբեջանի Կենտկոմի հետ՝ Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսարի թեկնածուի մասին։

Դ. Ադրբեջանի Կենտկոմին՝ պարզել եւ Կով. բյուրոյի հաստատմանը ներկայացնել ինքնավարության ծավալը»։

Հայտնի չէ՝ ինչ գրույց էր նախորդել այս որոշմանը, ինչպե՞ս էր պատճառաբանվել հուլիսի 4-ին ընդունված վերին որոշումն այնպիսի բռնի կերպով բեկանելը... Հասկանալի է մի բան. միայն Ստալինի ներկայությունն ու միապետական, գոեհիկ միջամտությունը կարող էին հնարավոր դարձնել, որպեսզի նման դեպքերի համար նախատեսված բոլոր օրենքներով ընդունված որոշումն առանց պատճառաբանության բեկանվի, եւ ընդունվի նոր որոշում, որը ոչ միայն չունի հիմք, այլեւ չի անցել նման դեպքերի համար պարտադիր քվեարկությամբ։

Նարիմանովն ամսի 4-ին կարողացել էր ի չիք դարձնել Հայաստանի օգտին ընդունված օրինական որոշումը։ Մյասնիկյանը ոչինչ չարեց հուլիսի 5-ին հոչակված ապօրինության դեմ։ Հայտնի է միայն, որ տաս օր անց Հայաստանի կուս. Կենտկոմի բյուրոն անհամաձայնություն է արտահայտել ընդունված անհավասարակշիռ, իր հիմքում սխալ որոշման դեմ, եւ ամիսներ հետո, 1922 թ. հունվարին էլ, Հայաստանի կոմկուսի առաջին համագումարում Ա. Մյասնիկյանն արտահայտել է իր դժգոհությունն Անդրերկրկոմում տիրող մթնոլորտից եւ անհամաձայնությունը Ղարաբաղի խնդրի գոեհիկ լուծման հետ։ Հայտնեց, թե *«Ադրբեջանն ասում էր՝ եթե Հայաստանը Ղարաբաղը պահանջի, ապա ինքը նավթ բաց չի թողնի»։*

* * *

Ադրբեջանական կողմը հասել էր իր նպատակին. Անդրերկրկոմի որոշումով նվաճել էր Լեռնային Ղարաբաղի տարածքը՝ այնտեղի բնակչության 94,6 տոկոսը կազմող հայությանն ինքնավարություն տալու պայմանով։ Սակայն ամեն ինչից երեւում էր, որ այդ ինքնավարությունը չի տրվելու։

Ի՞նչ պիտի անեին հայ գործիչները։ Հիմա էլ պիտի պայքարեին, որպեսզի արցախահայությունը գոնե արժանանա ինքնավարությա՞ն։

Այո՛, ցավոք, նրանք ուրիշ ճար չունեին։

Եվ ադրբեջանական ղեկավարության մեջ այդ ժամանակ բավական նշանակալից կշիռ ձեռք բերած Լեւոն Միրզոյանը գյուղեգյուղ ման էր գալիս, զանազան գրություններ ու համախոսականներ էր ստեղծում, որպեսզի մարզն առանձնացվի իբրեւ ինքնուրույն վարչական միավոր։

Միրզոյանը գյուղերում եղել էր 1921-ի օգոստոսի սկզբներին, Անդրերկրկոմի որոշումից մեկ ամիս հետո։ Եվ ահա օգոստոսի 8-ին, Ղարաբաղից վերադառնալուն պես, զեկույց ներկայացրեց Ադր. կուսակցության Կենտկոմ (պատենը՝Անդրեկրկոմ)՝ պահանջելով շուտափույտ կերպով իրականացնել միջոցառումներ մարզի դրությունը

կարգավորելու համար։ Այդ միջոցառումների մեջ կարեւորագույն տեղն, իհարկե, զբաղում էր ինքնավարության հարցը։ Առաջարկում էր *«Ամբողջ Լեռնային Ղարաբաղն առանձնացնել որպես ինքնուրույն վարչական միավոր...»**)։

Միրզոյանն ի՞նչ կարիք ուներ շեշտելու այդ *«ամբողջ Լեռնային Ղարաբաղը»*, նրա առանձնացումն իբրեւ *«ինքնուրույն վարչական միավորի»։* Պարզվում է, որ դրա կարիքը կար, որովհետեւ Նարիմանովն արդեն զաղտնի խարդավանք էր սկսել իր պնդումով ընդունված որոշման դեմ եւ հիմա էլ հրաժարվում էր հայկական Ղարաբաղին ինքնավարություն տալուց։ Այդ օրերին էր, սեպտեմբերի 26-ին, որ Ադր. Կ(բ) Կազմբյուրոն ու Բաղբյուրոն միացյալ նիստում ընդունեցին որոշում՝ խնդրելու *«Կով. բյուրոյին՝ վերանայելու իր որոշումը Լեռնային Ղարաբաղն առանձնացնելու մասին, այսուհետ ինքնավարություն չհայտարարել»**)։

Հայտնի չէ՝ այս լպիրշ որոշմա՞նն ինչպես է վերաբերվել Կովկասյան բյուրոն։ Բայց ահա տեղում՝ Ադրբեջանում, այն գործողության ծրագիր էր դարձել, եւ ոչ միայն ինքնավարության հարցն օրակարգից հանվեց, այլեւ իշխանությունները Լեռնային Ղարաբաղի շրջաններում լծվեցին հակահայկական մի արշավանքի, որից մարզը պիտի բրբվեր ամենակարճ ժամանակում։

Պահպանվել են այն որոշումները, որոնցով միլիցիական նոր ուժեր են ուղարկվել Ղարաբաղ, գործի է դրվել արնախում Բաղիրովն իր բանդաներով, հրահանգվել է *«անխնա զնդակահարել»* զանգվածային ընդվզումների մասնակիցներին։ Ադրբեջանական շովինիզմի դեմ բարձրացած դժգոհությունն ու զանգատը համարվել են հակախորհրդային ու հակապետական գործունեություն, եւ ընդունվել է դեկավար այսպիսի հրաման՝ *«Ազգայնական հոգի եւ ազգայնական տրամադրություններ ունեցող բոլոր աշխատակիցները պետք է անհետաձգելիորեն դեն շպրտվեն եւ փոխարինվեն ինտերնացիոնալիստ աշխատակիցներով»։*

«Ազգայնական» տվյալ դեպքում նշանակում էր Արցախի հայ, իսկ *«ինտերնացիոնալիստ»*՝ անպայման ադրբեջանցի։

Գավառների աչքաբաց հայ դեկավարներին հայտարարել էին ազգայնամոլներ, ոչընչացրել կամ նետել բանտերը։ Ներքին գործերի կոմիսար Բաղիրովին էին հանձնել տեղական հեղինակությունների հաշիվները մաքրելու արյունոտ գործը, եւ կարճ ժամանակում այդ սադիստի ձեռքով մարզի հայությունը դրվել էր Բաքվից ու ադրբեջանական այլ շրջաններից բերված մահմեդականների ենթակայության տակ։

Այս պայմաններում էր, որ 1921 թ. հոկտեմբերի 21-ին հրավիրեցին Ղարաբաղի, այսպես կոչված, *«պատասխանատու աշխատողների»* (նիշտը՝ Նարիմանովի ու

---

*) Այս եւ հետագայում վկայակոչվող տվյալները պարունակող փաստաթղթերը հրապարակված են հետեւյալ ժողովածուի մեջ. "К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, 1918-1925, документы и материалы", Баку, 1989.

Բաղիրովի ադրբեջանցի դրածոների) կոնֆերանս եւ ջանացին որոշել մարզի հետագա քաղաքական կյանքի կերպարանքը։ Եվ ինչպես որ պետք էր սպասել, ընդունվեց այսպիսի որոշում. ***«Ղարաբաղի աշխատողների կոնֆերանսն աննպատակահարմար է համարում Լեռնային Ղարաբաղի բաժանումն իբրեւ առանձին ինքնավար մարզի եւ գտնում է, որ բոլոր միջոցառումները, որոնք նշվում են վերը՝ (կոնֆերանսի) բանաձեւում, հենց հանդիսանում են ղարաբաղյան հարցի լուծում»։***

Իսկ ի՞նչ միջոցառումներ էին նշված ***«վերը»***. զնդակահարությունն իբրեւ կարգ ու կանոն հաստատելու միջոց, գյուղերի կործանումը, երբ նրանք փորձում էին թաքցնել իշխանության բերած չարիքների դեմ ըմբոստացողներին... Իսկ վերջին (12-րդ) կետով առաջարկվում էր ***«կազմակերպել կապը կենտրոնի ու Եվլախի հետ»։***

Ինքնավարություն տալու փոխարեն հայկական Ղարաբաղը կապել երկաթուղային ավազականոց Եվլախի հետ։

1922 թ. փետրվարին Թիֆլիսում գումարվեց Այսրկովկասի կոմունիստական կազմակերպությունների առաջին միացյալ համագումարը։ Օրջոնիկիձեն Կով. բյուրոյի հաշվետվության մեջ շոշափեց Ղարաբաղի հարցը. ***«Ճիշտ է,- ասել է նա,- Ադրբեջանում մենք երկար զբաղվեցինք ղարաբաղյան հարցով, սակայն վերջ ի վերջո որոշեցինք ղարաբաղյան բնակչությանը՝ Լեռնային Ղարաբաղի հայերին, տալ ինքնավարություն՝ Ադրբեջանի խորհրդային հանրապետության սահմաններում։ Գործնականում այդ ինքնավարության կենսագործումը հանձնարարվել էր Ադր. ԿԿ Կենտկոմին։ Ես խոսեցի ընկ. Կիրովի հետ. ինչո՞ւ դա դեռեւս չի արվել, եւ նա նշեց, թե հայերն ու մուսուլմանները համաձայնել են, որ այդ ինքնավարության անհրաժեշտությունը չկա։ Ես չգիտեմ՝ դա այդպե՞ս է, թե մի ուրիշ կերպ»...։***

Եվ անմիջապես ելույթ ունեցավ Ադրբեջանի ներկայացուցիչ ինչ-որ Կուլիեւ, դատապարտեց Կով. բյուրոյի որոշումը, տեղեկացրեց. ***«Ադրբեջանական ԿԿ Կենտկոմն էլ, որ Ղարաբաղի հարցի պարզաբանման համար հանձնաժողով էր ընտրել, շատ ճիշտ վարվեց, երբ ասում էր՝ Ղարաբաղում պետք չէ ոչ մի ինքնավարություն։ Այդ մոտեցումը ճիշտ էր եւ այդպես պետք էր մոտենալ, որպեսզի հաստատվի իսկական խաղաղություն ե՛ւ Ղարաբաղում, ե՛ւ ամբողջ Անդրկովկասում»։***

Ապա խոսեց նույն Ադրբեջանի պատվիրակության անդամ Լեւոն Միրզոյանը եւ, անկասկած, նկատի առնելով Ղարաբաղի շուրջ եղած խոսակցությունը, այն համարեց ***«էական սխալ»***՝ զգուշացնելով, թե ***«այս հարցում չի կարելի ինքն իրեն կերակրել պատրանքներով»։***

Հայաստանի ԿԿ Կենտկոմի քարտուղար Սարգիս Լուկաշին-Սրապիոնյանն ավելի հեռուն գնաց՝ հայտնելով այն միտքը, թե ***«Ղարաբաղի հարցը մեկն է այն հարցե-***

ըից, որոնց մասին չի կարելի չխոսել, եւ որոնք անհնար է լուծել մի քանի ժամվա ընթացքում, թեկուզ եւ կոմունիստական ուղղությամբ», ապա ավելացնելով, թե *«Մենք մինչեւ այժմ չենք լուծել ազգային հարցը* (խոսքը Ղարաբաղին էր վերաբերում - Բ. Ու.), *«բայց մենք կոչված ենք այն լուծելու»։*

Սղագրության նապաղ ակնարկներից դժվար է պատկերացնել, թե էլ ինչ արծարծումներ է ունեցել Ղարաբաղի հարցը, որի *«մասին չի կարելի չխոսել»*, եւ որն *«անհնար է լուծել մի քանի ժամվա ընթացքում»։* Սակայն հաշվի առնելով, որ հենց այդ օրերից սկսած շահագրգիռ մարմինները գործնականորեն զբաղվում էին նրանով, կարելի է կարծել, որ սառույցը կոտրված էր արդեն։

Նույն թվականի փետրվարի 5-ին Ադր. կուս. Կենտկոմը Ղարաբաղ աշխատանքի ուղարկեց Արմենակ Կարակոզովին՝ իբրեւ Ադրբեջանի ու Հայաստանի Հեղկոմների ներկայացուցչի։

Հավանական է, հույս կար, թե նա այնտեղ հարցն աստիճանաբար կխլացնի, քանի որ հայտնի էր նրա ադրբեջանամետ քաղաքական կողմնորոշումը։ Եվ պատահական չէ, որ մի քանի ամիս անց, հունիսի 5-ին, Հայաստանի ԿԿ Կենտկոմի պլենումն ընդունեց հետեւյալ որոշումը. *«Բարտուղարությանը հանձնարարել դիմելու Անդրբերկրկոմ՝ պատճառաբանված խնդիրքով իրականացնելու Կովկասյան բյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղին Ադրբեջանի հովանավորության տակ ինքնավարություն տալու մասին»։*

Ուրեմն, այսպես՝ նարահատյա՛լ։ Առաջ պայքարում էին մարզի հայության ազգային ինքնորոշման իրավունքի, մարդկային հասարակ ու սովորական տրամաբանության հաղթանակի համար։ Իսկ հիմա՝ պահեցե՛ք *«Ադրբեջանի հովանավորության տակ»*, բայց զոնե ինքնավարության իրավունքով։

Եվ միայն ն.թ. հոկտեմբերի 27-ին Անդրերկրկոմի նախագահությունը համարձակություն ստացավ Ադրբեջանի ԿԿ Կենտկոմին հանձնարարելու, որ այն իրականացնի Անդրերկրկոմի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումը Լեռնային Ղարաբաղին ինքնուրույնություն տալու մասին։ Նախագահության հենց այս նիստը միաժամանակ Ա. Կարակոզովին նշանակեց Ղարաբաղի գործկոմի նախագահ եւ Սուրեն Շադունցին էլ երաշխավորեց մարզում պատասխանատու աշխատանքի։

Այսքանից հետո՛ անգամ Ադրբեջանում քաշքշում էին հարցը, մի ժողովից մյուսին փոխադրում, անվճռական ու ապակողմնորոշող պատասխաններ տալիս հարցապնդումներին։ Մինչեւ որ 1923 թ. հունիսի 27-ին Անդրերկրկոմը պահանջեց *«մեկ ամսվա ժամկետում Լեռնային Ղարաբաղն անջատել իբրեւ ինքնավար մարզ»։*

Անջատե՛լ։ Անդրերկրկոմի նախորդ որոշումներում այս բառը չէր օգտագործվում։

Ի՞նչ էր պատահել, ինչպե՞ս եղավ, որ Անդրերկրկոմը հանկարծ այսքան համաձակ ու հետեւողական դարձավ եւ երկու տարի առաջ ընդունած իր որոշումը կատարելու համար հիմա տալիս էր ընդամենը մեկ ամիս ժամանակ։ Եվ, ո՞վ զարմանք, Ադրբե-

ջանի ղեկավարությունն էլ, ոչ թե մեկ ամսվա ժամկետում, այլ ուղիղ երեք օր անց, հուլիսի 1-ին, իր Կենտգործկոմին հանձնարարեց *«Հռչակել Լեռնային Ղարաբաղի ինքնավարություն»։*

Ղարաբաղի հարցն այսպես հապշտապ լուծելու համարձակություն ու վճռականություն էր տվել Նարիման Նարիմանովի բացակայությունը։ Հայտնի է, որ Ադրբեջանի ամենակարող ղեկավարին 1922-ի վերջին Մոսկվա էին տարել, եւ նա այնտեղ էր աշխատում իբրեւ Միության Կենտգործկոմի նախագահներից մեկը։

Այստեղ չի կարելի երկու խոսք չասել ժամանակի մի հայ գործչի մասին, որի դերն իր հայրենի Արցախի ճակատագրի համար նույնքան ողբերգական էր, որքան Մյասնիկյանինն ու Միրզոյանինը։ Դա Սուրեն Շադունցն էր, որն իբրեւ արցախցի՝ Անդրերկրկոմն էր ներկայացնում մարզում եւ այն ժամանակ էլ զբաղվորում էր ինքնավարության հարցերը լուծող, այսպես կոչված, Լեռնային Ղարաբաղի կոմիտեն։

Հետաքրքիր է նրա մի հոդվածը, որը գրվել է երեւի մինչեւ Արցախում գործի անցնելը եւ տպագրվել 1922-ի աշնանը։ Այնտեղ, առանց խորանալու իրերի պատճառական կապերի մեջ, հեղհեղուկ ու սայթաքուն տպավորություններ են հաղորդվում Արցախի անցյալ ու ներկա վիճակների մասին, արվում հայտարարություններ, որոնք շատ պիտի դուր եկած լինեին նարիմանովականներին։ Բի՞չ բան էր հենց միայն մարզի ողբերգության հիմնական պատճառը, որ նա տեսնում էր դաշնակցական իշխանության մեջ, կամ այն հայտարարությունը, թե ադրբեջանական ղեկավարությունը քայլեր է կատարում մարզի աշխատավորության հոգսերը վերացնելու համար։

Սակայն մարդը հասավ Արցախ, ծանոթացավ երկրամասի վիճակին, ժողովրդի ցավերին ու ձգտումներին, մանավանդ ադրբեջանական ղեկավարության զաղութակալական կամայականությունները բնեց, եւ նրա հոգին ծառս ելավ դժոխային վիճակի դեմ։ Ինչպե՞ս թե Լեռնային Ղարաբաղը պետք է հանձնել Ադրբեջանին... Եվ ի՞նչ տարբերություն, որ հիմա արդեն ոչ թե մուսավաթական, այլ խորհրդային-բոլշեւիկյան Ադրբեջան է։ Չէ՞ որ մարզի հայության հանդեպ վարած քաղաքականությամբ դրանք ոչնչով էլ չեն տարբերվում իրարից։

Բայց ի՞նչ անել, երբ Անդրերկրկոմն արդեն ուներ իր որոշումը, եւ այն բեկանելն անհնար է, ինչ միջոցների էլ որ դիմես։

Եվ այսքանը քաջ գիտակցելով՝ Շադունցն ուրիշ ճար չէր տեսնում, քան առաջարկել, որ Լեռնային Ղարաբաղը տան ո՛չ Ադրբեջանին, ո՛չ Հայաստանին...

Ահա այս առթիվ նրա գրած փաստաթղթի բովանդակությունը։

Շադունցը՝ Անդրերկրկոմի կողմից ստեղծված Լեռնային Ղարաբաղի Կոմիտեի ղեկավար անդամը, Կոմիտեի պատրաստած հատուկ զեկույցին կից ուղարկում էր նաեւ իր սեփական տեսակետը՝ այն հասցեագրելով Օրջոնիկիձեին, պատճենները՝ Ադր. ԿԿ Կենտկոմին ու ՀԿԿ Կենտկոմին։ Սկզբից իսկ հաղորդում էր, թե Լեռնային Ղարաբաղի Կոմիտեում Ղարաբաղի իշխանության կազմակերպման հարցը բնելիս ինքն այդ հարցը դրել է՝ կապված Զանգեզուրի հետ։ Ապա պնդում է, որ *«Այժմ, ըստ իս, չի կարելի խոսել Ղարաբաղի վերականգնման մասին՝ աչք փակե-*

լով մի ուրիշ, նրա հարեւան ամենահարուստ երկրամասի քայքայվելու նը-կատմամբ։ Զանգեզուրը կապված է Ղարաբաղի հետ, երկուսի հարցն էլ պետք է լուծել միասին»։

«Ես գտնում եմ, որ ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Զանգեզուրում ազգային հարցը ճիշտ լուծելու համար եւ այդ երկրամասի (Ղարաբաղի ու Զանգեզուրի) տնտեսական վերածննդի համար անհրաժեշտ է Ղարաբաղի լեռնային մասը Զանգեզուրի հետ միասին առանձնացնել իբրեւ մեկ ինքնավար միավոր»։

Նամակում ակնարկ կա այն մասին, որ կոմիտեի ընդունած նախագծի մեջ շարադրված են եղել նախընթացի հայ-ադրբեջանական հարաբերությունների տխուր փաստերը։ Եվ այժմ էլ՝ *«Բերված փաստերը... (հայերի ջարդը Շուշիում, Զանգեզուրի կոմ. ջոկատի զինաթափումը Շուշիում, լեռնային գոտու շահերը լրիվ արհամարհելը) բավական ակնառու կերպով ասում են, որ այդ երկրամասը թողնել Ադրբեջանի սահմաններում՝ այն հարաբերությունների պայմաններում, որոնք եղել են մինչեւ հիմա, չի՛ կարելի։ Ուստի եւ ես գտնում եմ, որ այդ ինքնավար մարզը պետք է կապված լինի անմիջապես Անդրժողկոմխորհի հետ»։*

Հետաքրքիր է առաջարկության տրամաբանությունը։ Մարդն անպայման համոզված է, որ Լեռնային Ղարաբաղն առանձին վերցրած ո՛չ Հայաստանին կթողնեն, ո՛չ էլ ենթակա կդարձնեն Անդրժողկոմխորհին։ Բայց ահա Ղարաբաղն ու Զանգեզուրը միասին՝ պիտի ներկայանան որպես տնտեսական ու վարչական մի պատկառելի միավոր, եւ անհնար է, որ այն չգրավի շահագրգռված մարդկանց ուշադրությունը...

Բայց արդյո՞ք շահագրգռված էին։ Սա՛ է հարցը, որ այնպես խղճալի ու ողբերգական է դարձնում մեր երրորդ հերոսի դիրքը։

Շադունցի նամակը գրված է եղել 1923 թ. հունիսի 13-ին։ Դրանից երկու շաբաթ հետո էր, որ Անդրերկրկոմի պլենումը նույն Շադունցի ու Կարակոզովի զեկուցման հիման վրա կտրուկ վճիռ հանեց Լեռնային Ղարաբաղն առանձին ինքնավար մարզ դարձնելու մասին եւ Ադր. ԿԿ Կենտկոմին հրահանգեց մեկ ամսվա ընթացքում իրականացնել այդ որոշումը։

Անդրերկրկոմի 1923 թ. հունիսի 23-ի որոշմամբ հանձնարարված է եղել ստեղծելիք ինքնավար մարզի հոչակագրի մեջ մարզի տարածքի հողի ու ջրի տեր համարել նույն տարածքի բնակիչ հայ գյուղացիությանը։ Եվ, ահա, Ադրբեջանի Կենտգործկոմի ընդունած հոչակագրի (1923 թ. հուլիսի 7-ի) առաջին կետով շեշտվում է՝ *«Լեռնային Ղարաբաղի հայկական մասից կազմել ինքնավար մարզ...»*, իսկ երրորդ կետի ծանոթագրությամբ նշվում է, որ *«բոլոր արոտավայրերը, անտառները, այգիները եւ հողի ու ջրի փաստական տնօրինությունը պահպանվում է [են] ներկայիս տերերի* [պարզ է՝ հայ բնակչության. - Բ. Ու.] *ձեռքում»։*

Սակայն նույն որոշան հիմնական մասն էր կազմում եւս մի հարց, որը ճակատագրական դեր պիտի խաղար ինքնավարության համար. ինքնավար մարզի սահմանների որոշման հետ էին կապվում *«Բուրդիստանի գրությունը»* եւ *«Ներքին Ղարաբաղի վարչական բաժանումը»*։

Իրերին անտեղյակ մարդը կարող է մտածել, թե դրանք իսկապես առնչություն ունեն Լեռնային Ղարաբաղի հետ եւ մարզի սահմանները որոշելու կապակցությամբ պետք է որ հանգամանորեն քննության առնվեին։ Սակայն հետագա իրողությունները ցույց տվին, որ այդ երկու, իբրեւ թե, ստեղծվելիք վարչական միավորներն ասպարեզ են բաշվել նոր կազմվող հայկական մարզն անձուկ սահմանների մեջ խեղդելու համար։

Սահմանները որոշող հանձնաժողովի նախագահ էր նշանակված Ադրբեջանի ռազմածովային ժողկոմ Կարաեւը, անդամներ՝ Կարակոզովը, Սվիրիդովը, Իլդրիմը եւ Բունիաթզադեն։

Նարիմանովը չկար, սակայն հենց այդ Կարաեւն ու Բունիաթզադեն բավական էին, որպեսզի ոտնահարվեն արցախահայության երազանքները։ Այդ նրանք էին, որ Բուրդիստանի սարքովի հարց մեջտեղ բաշեցին, մի նեղ ու երկար շերտով Արաքսի ափից մինչեւ Փոքր Կովկասյան լեռնաստանի հյուսիսային փեշերը տարածեցին, որպեսզի նոր կազմվող մարզը շփման ոչ մի կետ չունենա Հայաստանի Հանրապետության հետ։ Շփման կետեր կամ սահմանակցություն կարող էր ստեղծվել Բերդաձոր (Կալադարասի)-Զաբուղի ձոր-Տեղ-Կոռնիձոր գծով։ Կամ այդպիսի գոտի կարելի էր դարձնել Հարար-Պետրոսաշեն-Սպիտակշեն շերտը, որով Դիզակ-Հադրութ գավառը Հազարի ու Որոտան գետակների հովտի վրա անմիջապես կապվում էր Սյունիք-Զանգեզուրի հետ։ Այսպիսով այլեւս ոչինչ չէր կարող խանգարել հայոց հանրապետության եւ հայկական մարզի սահմանակցությանը... Սակայն երկու տեղամասերում էլ անցկացրին անջատման գոտիներ, որպեսզի հետագայում դրանք բնակեցնեն մահմեդականներով եւ անջատումը դարձնեն անխուսափելի...

Ադր. Կ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1923 թ. հուլիսի 16-ի նիստի որոշման մի կետով հանձնարարվում էր *«Բրդերի գրաղեցրած տարածքից կազմել «Բուրդիստանի գավառը»*։ Հետագայում եւս այն հիշատակվում է մի շարք որոշումներում ու բանաձեւերում։ Սակայն որովհետեւ այն ժամանակ արդեն նույն տարածքի բրդերի թրքացումը համարյա իրողություն էր, իսկ նրա ավարտի համար Ադրբեջանի ղեկավար մարմինները գործադրում էին բոլոր ու ամեն տեսակ միջոցներ, ապա կարճ ժամանակ անց ավելորդ ճանաչվեց Բուրդիստան տարբերակիչը, մանրացավ՝ վերածվելով այն շրջանային բաժանումներին (Քելբաջարի, Լաչինի, Կուբաթլիի, Զանգելանի), որպիսիք այժմ գոյություն ունեն։

Այսքանից հետո կարելի է եզրակացնել, որ Բուրդիստան կոչված, իբր թե, վարչական-ազգագրական միավորը, Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հետ միաժամանակ ու միասին հրապարակ նետվելով, Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմանակցությունը խափանելու իր միակ դերը կատա-

ռելով՝ աստիճանաբար մարել է, անհետացել՝ ոչ մի նշանակալից հետք չթողնելով իր ետեւից։

Նույնպիսի դերով պիտի բավարարվեր նաեւ Ներքին կամ Դաշտային Ղարաբաղ կոչվածը։ Նորակազմ հայկական մարզը, ըստ հռչակագրի, ընդգրկելու էր Լեռնային Ղարաբաղի հայաբնակ տարածքը։ Սակայն նրանից անջատեցին ամբողջ հյուսիսային Արցախը՝ նախկին Գյուլիստանի մելիքության տարածքը, Թալիշի մոտերքից մինչեւ Ակարակ լեռ (Գյոլ-գյոլ) հարավային ափերը, ուր անառիկ Գետաշեն ավանն էր՝ մերձակա հայկական գյուղերով։ Մարզից անջատվեցին եւ հարեւան ադրբեջանական գավառներին տրվեցին Դիզակի, Վարանդայի ու Զրաբերդի արեւելյան մասերի մի շարք գյուղեր իրենց բերրի հողատարածություններով։ Եվ այս կողոպտված մարզի ներսում էլ անհրաժեշտ համարեցին իրականացնել հակահայկական մի այնպիսի միջոցառում, որը եւս նակատագրական էր լինելու հետագա պատմաշրջանում։ Հռչակագրի մասին խոսող փաստաթղթերում մարզի կենտրոն էր համարվում ոչ թե ավանդական Շուշին, այլ Խանքենդի անշուք ու խղճուկ (հինավուրց Վարարակն) ավանը, որն էլ Ղարաբաղի կուսակցական մարզկոմի 1923 թ. սեպտեմբերի 18-ի որոշմամբ Ստեփան Շահումյանի անունով կոչվեց Ստեփանակերտ։

Եվ նույնիսկ հարցի այդպիսի լուծումն էլ աչքի փուշ դարձավ Նարիմանովի համար, որը, Մոսկայում նստած, անուժ լինելով սեփական ձեռքով խափանել արցախահայությանը տրված ինքնավարությունը, փորձում էր օգտվել Ստալինի ամենազոր ծառայությունից. նրան մի ընդարձակ բողոք-նամակ գրեց այդ առթիվ։

Ահա մեկը նրա սարքած այն հրեշավոր զրպարտություններից, որոնցով լիքն է սույն նամակ-բամբասագիրը։ Նա գրել է. ***«Լեռնային Ղարաբաղը Միրզոյանի ուժգին ճնշման տակ հայտարարված է ինքնուրույն մարզ։ Իմ օրոք դա չէր հաջողվում ո՛չ թե այն պատճառով, որ ես դեմ էի այդ ինքնավարությանը, այլ պարզապես որովհետեւ իրենք՝ հայ գյուղացիները, դա չէին ցանկանում։ Միրզոյանն այդ ընթացքում հայ դաշնակ ուսուցիչների օժանդակությամբ հող է պատրաստել եւ հարցն անց է կացրել Անդրերկրկոմում։ Այդ պահից կտրուկ սրվել են հայ գյուղացիների ու թուրք գյուղացիների հարաբերությունները։ Հետո էլ հարցը կդառնա Գանձակի լեռնային մասին եւն։ Ադրբեջանում դաշնակցական քաղաքականությունն առաջ է գնում ամբողջ ուժով»։***

Նարիմանովը լավ էր ճանաչում Ստալինին. ***«դաշնակցական»*** բառն ասա, այդ միեւնույնն է, թե կարմիր շոր թափ տաս խելագար ցուլի առաջ։ Վստահ էր, որ այդ ցուլը կոչնչացնի Ադրբեջան լցված դաշնակցական հայերին եւ կցրի նրանց հորինած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը։

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ 65 ՏԱՐԻՆԵՐԸ (1923-1988 թթ.)

Խորհրդային իրականության մեջ ինքնավար չէին նույնիսկ միութենական հանրապետությունները, իսկ մարզային ինքնավարության մեջ որեւէ ազատ կամ անկախ ազգային քաղաքականություն, նույնիսկ դրա շորշոփներ փնտրելը կլիներ պարապ գործ: Սակայն այս վիճակն անգամ հանգիստ չէր տալիս Ադրբեջանի ազգայնամոլ ղեկավարներին: Երեւի մտածում էին, թե այդ ***«ինքնավար մարզ»*** անունը մի պարունակ է, որի մեջ առած Ղարաբաղը, մեկ էլ տեսար, տվին Հայաստանին: Եվ դա կանխելու համար Ղարաբաղի, մանավանդ ինքնավար մարզի անունը տալուց առաջ նախապես պիտի հիշեցրած լինեն ***«Ադրբեջանական Հանրապետության անբաժանելի մաս»*** սպառնալից տարբերակիչը:

Իսկ Ղարաբաղի հայ բնակչությունը երբեք էլ չհաշտվեց ոչ այդ ***«անբաժանելի»*** պատժի, ոչ էլ իր նկատմամբ կիրառվող ազգային խտրականության՝ թերեւս միայն Ադրբեջանին հատուկ ստորացուցիչ ձեւերի հետ: Դժգոհությունն ու բողոքն էր արտահայտում Եւ իր ներսում՝ զանազան ժողովներում, Եւ վերադաս իշխանության մարմիններին անդադար ուղարկած դիմումներով ու հանրագրերով:

Ժամանակի մամուլում ու պաշտոնական թղթերում այս բողոքները շատ քիչ էին արտացոլվում. նման սովորություն չկար: Բայց սփյուռքահայ թերթերն ու հանդեսներն արձագանքում էին՝ մեծ մասամբ աղբյուր ունենալով դաժան պատիժների ահից կեղծ անուններով հանդես եկող հեղինակներին:

1920-30 թվականներին Խորհրդային Միությունում բանտ ու ախտոր են քշվել միլիոնավոր անմեղ քաղաքացիներ: Ղարաբաղում մարդիկ համեմատաբար ավելի շատ էին նման ճնշումների ենթարկվում եւ բոլոր դեպքերում՝ լոկ մի ***«մեղքով»***. ուզում են Ղարաբաղը միացնել Հայաստանին:

1926 թ. Մարիետա Շահինյանը վկայել է, թե ***«երկրամասի բյուջեն իր զբրկվածությամբ ամենաողբերգականներից մեկն է ամբողջ Միության մեջ»***[1]: Այդ վիճակը շարունակվեց, եթե չասենք՝ առավել վատթարացավ հետագա տասնամյակներում, երբ հանրապետությունը քամում էր նրա գյուղատնտեսության ու աղքատիկ արդյունաբերության եկամուտները, առանց որեւէ հատուցման կամ հետագա զարգացումն ապահովող միջոցներ տրամադրելու:

Արցախական աշխարհի բոլոր գետերն էլ՝ Թարթառն ու Խաչենը, Կարկառն ու Բալուջան, Իզակն ու Իշխանագետը, լեռնային, գահավեժ հոսող ջրեր ունեն ու կարող են աշխատեցնել անհամար մեծ ու փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնց արտադրած էներգիան կլինի ամենաէժանը:

1930-ական թվականներին Թարթառի միջին հոսանքներում, պատմական Մատաղիս ավանի մոտ կառուցվել էր հիդրոկայան, որը բավարարում էր ոչ միայն Մարտակեր-

1 Տե՛ս վերը վկայակոչված գրքույկը:

տի շրջանի, այլեւ հարեւան Միր-Բաշիրի, Աղդամի ու Բարդայի շրջանների բնակավայրերի մեծ մասի պահանջները։ ՀԷԿ-ի կառուցումը, որն իրականացվել էր համարյա մերկ ձեռքերով, տեղական ուժերի նախաձեռնությամբ (հակառակ հանրապետական անբարյացակամության), ստեղծել էր համապատասխան շինարարական կադրեր՝ ինժեներատեխնիկական աշխատողներից մինչեւ շարքային բանվորությունը։ Եթե հնարավորություն ընձեռնվեր, նրանք Թարքառի ու Խաչենի ամբողջ երկարությամբ ուլունքաշարի պես մեծ ու փոքր ՀԷԿ-եր կկանգնեցնեին, եւ մարզը լիուլի կբավարարվեր ամենաէժան էլեկտրաէներգիայով։ Սակայն հանրապետության ղեկավարներն այդ բավարարումի ակունքում իսկ տեսնում էին մի ահավոր վտանգ եւ պատերազմի նախօրեին փակեցին Թարքառհէկը, կարճ ժամանակում բարուքանդ արին տառապանքով ի մի բերված սարքավորումները, ավերեցին շինությունները, թե ի՞նչ է, Կուր գետի վրա Մինգեչաուրի հիդրոհանգույց է հիմնադրվում, եւ ոչ մի կարիք չկա, որպեսզի հանրապետության տարբեր մասերում գոյություն ունենան ջրատնտեսական ուրիշ կառույցներ։ Մարզը ոչ միայն չափազանց մեծ չափերի հասնող ֆինանսական վնաս կրեց՝ կորցնելով հարյուր միլիոնների հասնող նյութատեխնիկական հնարավորությունները, այլեւ զրկվեց մասնագիտական բանուժից, որը գայթակղիչ խոստումներով փոխադրվեց Մինգեչաուրի հիդրոհանգույցի շինարարություն եւ հանրապետության այլեւայլ շինտեղամասեր։

Մատաղիսի նախկին բանավանի ու ՀԷԿ-ի՝ հրաշքով փրկված շինություններում բամիներ էին խաղում։ Մարզի ղեկավարները պատերազմի ծանր պայմաններում այնտեղ ստեղծեցին փայտամշակման գործարան եւ լուցկու ֆաբրիկա։ Միութենական համապատասխան գերատեսչությունների բարյացակամությամբ էլ բուսական հումքի վրա գործող կաուչուկի արտադրություն հիմնեցին, որովհետեւ Մարտակերտի դաշտի մի հսկայական տարածության վրա սոյա էին աճեցնում եւ, մասնագետների կածիքով, այն, սոյա մշակող ուրիշ շրջանների համեմատությամբ, տալիս էր ամենաէժան ու ամենաորակյալ հումքը։

Ադրբեջանի ղեկավարներն այսքանի մեջ էլ տեսան հեռահար նպատակներ հետապնդող դավադրություն եւ վերացրին ինչպես կաուչուկի գործարանն ու նրա հիմքը՝ սոյայի արտադրությունը, այնպես էլ փայտամշակման գործարանն ու լուցկու ֆաբրիկան։ Մարզն իրավունք չուներ փայտ մշակելու։ Նա միայն պիտի կտրեր իր անգուգական անտառների ընտիր ծառերը, գերանները համարյա անվճար ուղարկեր Կիրովաբադի ու Բաքվի փայտամշակման գործարանները։

Երբ Մատաղիսում վերացնում էին բուսական կաուչուկի արտադրությունը, օդը լիքն էր Սումգայիթի հիմնադրության, նրա կաուչուկի եւ մյուս արտադրական հեռանկարների պարգեւելիք մարդկային երջանկության խոստումներով։ Մինգեչաուրն, իբր, ինչ աշխատուժ էր անդարձ կլանել Արցախից, հիմա էլ Մարտակերտից ու մյուս շրջաններից սկսվեց վարար մի հոսք դեպի այդ օտար արշակակավանը։

Չի կարելի մոռանալ եւ Ստեփանակերտի ՀԷԿ-ի պատմությունը։ Հենց քաղաքի փեշով հոսող Կարկառի վրա կառուցվել էր էլեկտրակայան, որը բավարարում էր մարզկենտրոնի էներգետիկ կարիքները։ Հանրապետության ղեկավարները երեւի մը-

տածում էին, թե այս հնարամիտ արցախցիք կվերցնեն ու Կարկառի ամբողջ հնարավորությունը կօգտագործեն, այն ժամանակ էլ ո՞ւմ պետք կլինի Մինգաչաուրից տալիք ողորմությունը: 50-ականների սկզբին Ստեփանակերտի ՀԷԿ-ն էլ փակեցին:

Եվ, այսպես, աստծու տված ամեն տեսակ բարիքներ ու հնարավորություններ ունեցող Արցախն էլեկտրական էներգիայի տեսակետից դարձավ միայն սպառող, որը, կապված Մինգեչաուրին, պարտավոր էր վիզը ծուռ նայել Ադրբեջանի ձեռքին: Անցյալ տասնամյակներին շատ է պատահել, որ զանազան պատրվակներով հոսանքը կտրեն եւ մարզը թողնեն նավթի նրագի հույսին...

Դժվար է մեկ առ մեկ թվարկել, ցույց տալ այդ հայակործան ծրագրի բոլոր կետերը: Բայց նայենք մարզի արդյունաբերությանը: Նրա ամենահզոր օղակը Ղարմետաֆսկոմբինատն էր՝ Խորհրդային Միությունում բնական մետաֆս արտադրող երեք խոշորագույն ձեռնարկություններից մեկը: Այն արտադրում էր տարեկան շուրջ 16 միլիոն մետր մետաֆսեղեն, բնական ամենաթանկարժեք մետաֆսի գործվածքներ: Սակայն կոմբինատն ու նրա տեր մարզը հազիվ քարշ էին տալիս իենց գոյությունը, որովհետեւ հանրապետության ղեկավարությունը հմտորեն այս կոմբինատը կապել էր իրենից ավելի փոքր հզորություն ունեցող Նուխի-Շաքիի կոմբինատի պոչին եւ քամում էր ու քամում:

Իր սեփական ավարտուն մետաֆսե արտադրանքը տալու համար Ղարմետաֆսկոմբինատին միայն մի բան էր պետք՝ ներկարարական ցեխ, որը չուներ եւ չէր կարողանում ստեղծել, քանի որ հանրապետության ղեկավարությունը չէր ուզում, որ այն ավարտուն արտադրանք տա, օգտվի իր եկամուտներից, ունենա ***«ինքնավարություն»:***

Պատերազմից հետո Կուր գետի վրա կառուցվեց Մինգեչաուրի հիդրոհանգույցն իր վիթխարի ջրամբարով: Հանգույցի կառուցմանն իր մասնակցությունն էր ունեցել Արցախի հայությունը՝ ինչպես կառավարության պարտադրած աշխատանքային հավաքագրումներով, այնպես էլ ոգեւորված այն կախարդիչ խոստումներով, թե հանրապետության ամբողջ տարածքում ստեղծվելիք ոռոգման ցանցի մեջ է առնվելու նաեւ Լեռնային Ղարաբաղի տարածքը: Սակայն շինարարությունն ավարտվեց, մարզի ամբողջ լայնությամբ կտրեցին-անցան Աղդամի, Կարյագինոյի ու Զաբրայիլի շրջանների հողատարածությունները ոռոգող առուները, իսկ մարզում ոչ մի քառակուսի մետր հող ոռոգման հնարավորություն չստացավ, որովհետեւ առուները փորվել էին 8-10 մետր խորությամբ, եւ նրանց ամբողջ երկարությամբ էլ գիշեր-ցերեկ ադրբեջանցի հսկիչներ էին կարգված, որպեսզի առուների եզերքներին խաշվող արտերի, այգիների ու բանջարանոցների տեր հայ մարդիկ որեւէ հնարքով չօգտվեն այդ ջրերից:

Երբ Արցախի անիրավված տերերը բողոքում էին, պատասխանը մեկն էր լինում. ***«Շուտով Թարթառի վրա խոշոր ջրամբար ու ՀԷԿ կկառուցենք, եւ մարզի բոլոր պահանջները կբավարարվեն»:*** Այն էլ կառուցվեց Սարսանգ տեղամասում՝ կլանելով հայկական չորս գյուղ, մի քանի հազար հեկտար ցանքատարածություն ու անտառ: Եվ երբ ամեն ինչ ավարտվեց, ՀԷԿ-ն ու ջրամբարը գործարկվեցին, պարզվեց զավեշտական մի բան. Մարտակերտի շրջանը, որ, իբր թե, հիդրոհանգույցի տերն

էր, ջրամբարից հիմա ավելի քիչ էր օգտվում, քան առաջներում Թարթառից հանված ձեռնաշեն առուներից... Եվ, մանավանդ, հանգույցի տնօրենը նստում էր հարեւան Միր-Բաշիրի շրջկենտրոնում ու այն էլ ջրերը բաշխում էր միայն իր հանրապետության շրջաններին։

Ադրբեջանի ղեկավարները ԼՂԻ Մարզը խեղդամահ անելու հետաքրքիր եղանակ էին ստեղծել. 60-ական թվականներին, օրինակ, մարզի շինարարական վարչությունը ենթակա էր Մինգեչաուրի տրեստին, անտառային տնտեսությունը՝ անտառազուրկ Աղդամի *«անտառտնտեսության»։* Նույնիսկ Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանը՝ Աղդամի յոթնամյա դպրոցին։

Ազգային խտրականության, ճնշման ու հալածանքի քաղաքականությունն առավել մոլեգնորեն կիրառվում էր մշակույթի ու ժողովրդական կրթության ոլորտներում։

Ինքնավարության առաջին տարիներին, հավանաբար Անդրֆեդերացիայի հսկողության ներքո, մարզը կապված էր Հայկական ԽՍՀ մշակութային ղեկավար կազմակերպությունների հետ, համատեղ միջոցառումներ էին կազմակերպվում արցախահայությանը հանրապետության բնակչության մշակութային առաջընթացին համաչափ առաջ տանելու համար։ Մարզում հայերեն դասագրքեր էին տպագրվում, լույս էին տեսնում հայերեն գրական հանդես, երիտասարդական թերթ...

Սակայն աստիճանաբար վերացան այս բոլորը։ Անբեկանելի կարգով մարզի առողջապահությունն ու ժողովրդական կրթությունը պետք է մասնագետներ ստանային ուղիղ Բաքվից, եւ այդ մասնագետներն էլ պետք է լինեին միայն ադրբեջանցիներ։ Մարզի հայկական դպրոցը երկաթե վարագույրով անջատվեց մայր Հայաստանի դպրոցական կյանքից։ Ոչ միայն դպրոցը, արցախահայն այնպես բաժանվեց իր ազգային վարչական մշակութային առավել խոշոր միավորից, որ Հայաստան ուսման գնալը կամ այնտեղ կատարած սովորական երթեւեկը դիտվում էր որպես քաղաքական անհուսալիության դրսեւորում։ Սակայն առավել վտանգավորն ու դատապարտելին համարվում էր Հայաստանի հայի հայտնվելն Արցախում, նրա որեւէ առնչությունն Արցախի հասարակական կյանքի հետ։ Հայ գրողը, հայկական մշակույթի գործիչը, հայ գիտնականն ու արվեստագետը իրավունք չունեին ոտք դնելու Արցախում, հանդիպելու իրենց հայրենակիցների հետ, որոնք, իբր թե, ունեին սեփական ինքնավարություն եւ կարող էին վայելել դրա ընձեռած ազգային մշակույթի ու առաջադիմության պտուղները։ Միայն 1948 թ. ամռանն Ավետիք Իսահակյանն այցելեց Արցախ, եւ կուսակցության մարզկոմում ու Ստեփանակերտի ինստիտուտում էլ հայ մարդիկ համարձակվեցին ընդունել իրենց ազգային մեծ բանաստեղծին... Սա բավական էր, որ Մ. Ջ. Բաղիրովը կուսակցության մարզային արտահերթ կոնֆերանս հրավիրել տար, մարզկոմը ցրեր, իսկ մարզում էլ կազմակերպեր գաղափարական շանտաժի ու ձերբակալությունների տեւական մի շրջան, բանտ ու աքսոր քշեր մարզի լավագույն մտավորականներին։

Ազգային խտրականության, տնտեսական ճնշման քաղաքականությունը, մշակութային կանոնավոր ընթացքից զրկված լինելը տվել են իրենց տխուր արդյունքը. Եթե 1923 թ. մարզի բնակչության 94,6 տոկոսն էին կազմում հայերը, 1959-ին իջան 80 տոկոսի, իսկ 80-ականների սկզբին արդեն 75 տոկոս էին։

Կարելի է Ադրբեջանում տասնամյակներ շարունակ մոլեգնած ազգային խտրականության, իսկ իր իսկական անունով՝ վայրագ շովինիզմի այս օրինակները շարունակ թվել, եւ նրանց վերջը չի լինի: Իսկ ամենակարեւորը՝ նրանք անառարկելիորեն կապացուցեն, որ Ադրբեջանի ղեկավարությունն այդ քաղաքականությանը որդեգրված է եղել խորհրդային կարգերի հաստատման սկզբից եւ հայ բնակչության նկատմամբ այն անվերջ ու անխնա կիրառել է հետագա բոլոր տասնամյակներին:

* * *

Իսկ այս ամենին ինչպե՞ս էր վերաբերվում խորհրդային Հայաստանի ղեկավարությունը: Իհարկե, ցավով ու կարեկցանքով եւ ո՛չ ավելին, քանի որ ստալինյան բռնապետության պայմաններում բացառված էր ամեն տեսակ միջամտություն:

Հայտնի է Աղասի Խանջյանի եւ նրա գործակիցների ողբերգական վախճանը 1930-ական թվականներին: Խանջյանին հասցեագրված մեղադրանքների մեջ եղել է նաեւ Ղարաբաղի ճակատագրով մտահոգվելը: Եվ այսուամենայնիվ, 1945 թ. վերջին Գրիգոր Հարությունով-Հարությունյանը համարձակվեց ուղղակի դիմել Ստալինին եւ առաջարկել, որ Լեռնային Ղարաբաղը միացվի Հայաստանին:

Հարությունյանի դիմումը, ճիշտ է, ներկայացված է իբրեւ *«Հայաստանի ԿԿ-ի ու Ժողկոմխորհի»* առաջարկություն, սակայն տակը միայն իր ստորագրությունն է, եւ նրան մոտիկից ճանաչող մարդիկ դա բացատրում էին նրանով, որ մարդը, գիտակցելով ժամանակի համար նման քայլի վտանգավորությունը, պարզապես լծակիցներին է հեռու պահել հնարավոր կործանարար պատասխանատվությունից:

«ՀամԿ(բ) Կենտկոմ, ընկեր Ստալինին.

Իոսիֆ Վիսարիոնովիչ,

Հայաստանի տարածքին հարող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը 1923 թվականից մտնում է Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ։

Այդ մարզի բնակչությունը հիմնականում հայկական է։ 153 հազար բնակիչներից 137 հազարը հայեր են։

Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսությունը հար ու նման է Հայաստանի լեռնային մասի գյուղատնտեսությանը։ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ մտցնելը մեծապես կնպաստեր նրա զարգացմանը եւ կբարելավեր տնտեսության ղեկավարումը։

Բնակչության մշակութային-զանգվածային եւ քաղաքական սպասարկումը մայրենի լեզվով կուժեղանար Հայաստանի Հանրապետության մարմինների կողմից ղեկավարվելու դեպքում։

Լեռնային Ղարաբաղի մարզի Հայաստանի կազմի մեջ մտնելը տեղական կադրերին հնարավորություն կտար շարունակել մայրենի լեզվով բարձրագույն կրթությունը Հայաստանի բուհերում։ Մյուս կողմից՝ Հայկական ԽՍՀ-ը կկարողանար Լեռնային Ղարաբաղի մարզից ստանալ ազգային կադրեր, որոնք աչքի են ընկնում իրենց գործարարությամբ եւ ներկայումս, բնականաբար, չեն կարող լրիվ օգտագործվել Ադրբեջանում։

Ելնելով դրանից եւ Լեռնային Ղարաբաղի բնակչության ցանկությունից՝ Հայաստանի Կենտրոնական Կոմիտեն եւ Ժողկոմխորհը Համկ(բ)Կ Կենտկոմի եւ միութենական կառավարության քննարկմանն են ներկայացնում Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ, որպես Ղարաբաղի մարզ, մտցնելու հարցը։

Այդ հարցի դրական լուծման դեպքում Կենտկոմը եւ Հայաստանի Ժողկոմխորհը կառավարությանն առաջարկություն կներկայացնեն Ղարաբաղի նախկին կենտրոնի՝ Շուշի քաղաքի վերականգնման մասին, որն ավերվել էր խորհրդային իշխանության հաստատումից առաջ։

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի
քարտուղար Գր. Հարությունով։
1945 թ. նոյեմբերի 11»։

Ստալինն ինչպե՞ս է ընդունել այս դիմումը, որ փաստորեն ուղղված էր իր իսկ մասնակցությամբ հունցված հանցավոր խմորի դեմ, երբ առանց դրան էլ նամակ-դիմումն ինքնին կարող էր դառնալ մի գլխակեր բայլ։

Արխիվային նյութերից պարզվում է, որ Հարությունյանի նամակն ուղարկված է եղել Ադրբեջանի ղեկավար Միր Ջաֆար Բաղիրովին՝ ծանոթանալու եւ արված առաջարկի նկատմամբ իր կարծիքը հայտնելու հանձնարարությամբ։ Բաղիրովն իր պատասխան գրի մեջ, իբր, մերժել է Հարությունյանի բոլոր փաստարկները, սակայն միաժամանակ տվել է իր համաձայնությունը Հայկական ԽՍՀ-ին միացնելու ԼՂԻՄ-ը՝ առանց *«բացառապես ադրբեջանցիներով բնակեցված»* Շուշվա շրջանի՝ միայն պայմանով, որ Ադրբեջանի կազմի մեջ էլ մտցվեն Հայկ. ԽՍՀ երեք շրջանները, որոնք հարակից են Ադրբեջանին եւ ունեն գերազանցապես ադրբեջանցի բնակչություն։

Գր. Հարությունյանի դիմումն ըստ էության մերժվեց։ Բայց եւ այնպես Բաղիրովը փորձեց այն օգտագործել Ղարարբաղի հարցը վերջնականապես թաղելու համար։ Նա Ստալինին ներկայացրեց մի առաջարկություն, որի մեջ բացատրվում էր, թե իբր, Մինգեչաուրի հիդրոհանգույցի շնորհիվ նոր հողատարածություններ շահագործելու հնարավորություն է ստեղծվել եւ այդ նպատակով անհրաժեշտ է Ադրբեջան փոխադրել-բնակեցնել Հայաստանում ապրող ավելի քան հարյուր հազար ադրբեջանցիներին,

որոնց ազատած բնակավայրերն էլ կօգտագործվեն հայրենադարձված հայերի կողմից, եւ միջոցառումը կդառնա Ադրբեջանի եղբայրական յուրահատուկ օգնությունը Հայաստանին։ Գայթակղի՞չ առաջարկություն, որը պատրաստակամությամբ ընդունեց միութեանական ղեկավարությունը, հատկացրեց բավարար միջոցներ եւ Հայաստանում էլ առաջացրեց մեծ խանդավառություն։ Բաղիրովն իր հարյուր հազար ցեղակիցներին հանեց Մասիսի, Վեդիի, Վարդենիսի շրջաններից, փոխադրեց Ադրբեջան, սակայն նրանց մեծագույն մասը տեղավորեց ոչ թե Մինգեչաուրի շնորհիվ շահագործելիք նոր հողերի վրա, այլ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում։ Իր այս քայլն էլ բացատրեց նրանով, որ Ղարաբաղի շեն ու բարեկեցիկ գյուղերում նրանց տեղավորելու հնարավորությունը կա, առայժմ տեղ կտան իրենց ավանդական եղբայրներին, կշահեն-կպահեն, մինչեւ որ նոր յուրացվելիք հողամասերում իրենք պայմաններ կստեղծեն եւ նրանց կփոխադրեն... Եվ միաժամանակ էլ վերաբնակվածներին պետական միջոցներ էին տալիս՝ հենց այստեղ՝ Ղարաբաղում տներ կառուցելու, հիմնավորվելու համար։

Վերաբնակեցումը կատարվել էր 1947 թ. ամառնամուտին։ Խաբված ղարաբաղցիները սիրով ու ամենայն հոգատարությամբ եկվորներին էին տրամադրել իրենց բնակելի ավելցուկները, գոմերն ու մարագները։ Սակայն շատ չանցած հասկացան, որ Բաղիրովը տրոյական ձի է տեղադրել մարզում, դրանո՛վ պիտի վերացնի հայ բնակչության գերամասնությունը,- եւ մեկ աշնան ու ձմռան ընթացքում այնպիսի տանտիրություն ցույց տվին անկոչ հյուրերին, որ գարունը բացվելուն պես հեռանալու տուտը բացվեց, աստիճանաբար զանգվածային բնույթ կրեց, եւ ամռանն այլեւս նրանցից ոչ ոք չկար Ղարաբաղում։

Ստալինի մահից (1953 թ. մարտ) հետո Բաղիրովին ու գործակիցներին ասպարեզից հանեցին։ Լեռնային Ղարաբաղի հայությունը որոշ ժամանակ ազատ շունչ քաշեց, փորձեց հայավարի ապրել։ Ազգային կյանքի թարմացումը գլխավորում էին կուսակցության մարզկոմի քարտուղարներ Եղիշե Գրիգորյանն ու Սարգիս Աբրահամյանը, մարզի աչքաբաց մտավորականները։

Սակայն ինքն չէին Բաքվում, ու Բաղիրովից հետո էլ մնացել էր նրա ոգին, որն ասես անմահ է եւ պետք է ապրի-գործի հանրապետության բոլոր ղեկավար սերունդների մեջ։ Սրանք 1958 թ. աշխատանքից ազատեցին մարզկոմի առաջին քարտուղար Եղիշե Գրիգորյանին, նրա տեղ նշանակեցին Նիկոլայ Շահնազարովին, որը նախընթացի տաս տարիներին եղել էր Նախիջեւանի Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալը եւ կարեւորագույն դեր էր կատարել այդ հանրապետության հայ բնակչության վերջին մնացորդները հեռացնելու գործում։

Շահնազարովը կարճ ժամանակում տեղական հարմար գործակիցներ էլ գտավ կամ պատրաստեց եւ կուսակցության մարզկոմի ու մարզխորհրդի գործկոմի աշխատանքին այնպիսի ընթացք տվեց, որ թվում էր, թե նա եկել է մարզը թորքացնելու։ Դրա կողքին էլ ամենուրեք սկիզբ առան, տարածվեցին կաշառակերությունը, գողությունն ու հովանավորչությունը, որոնցից նախկինում զերծ էր եղել մարզը։ Ժողո-

վուրդն այս ամենի դեմ ըմբոստացավ, պայքարեց եւ հասավ նրան, որ մարզն ազատվեց Շահնազարովից ու շահնազարովականներից։

Դա 1962 թվականին էր։ Նույն տարին էր, որ մարզի ավտոտնտեսության աշխատողները, շուրջ 350 հոգի, հատուկ նամակով դիմեցին ԽՄԿԿ Կենտկոմ՝ պահանջելով, որ Լեռնային Ղարաբաղը վերամիացվի Խորհրդային Հայաստանին։ Նամակում նրանք պատմել էին մարզի տնտեսության ծանր վիճակի, նրա զարգացման դեմ հանրապետության ղեկավարների ավանդական թշնամանքի եւ առհասարակ ամեն տեսակ խտրականության մասին եւ, իբրեւ միակ ելք, առաջարկել մարզն Ադրբեջանից հանել։ ***«Մի՞թե Խորհրդային Միությանը ձեռնտու է, որպեսզի մի մարզ աշխատի միայն իր հնարավորությունների չնչին մասով, որը չի էլ ապահովում իր իսկ պահանջները, քրքրվի իր ազգային, սոցիալ-տնտեսական, մշակութային հազար ու մի հոգսերից, երբ դրանք հնարավոր է լուծել ամենակարճ ժամանակում, առանց որեւէ դժվարության, մինչդեռ հանրապետության ղեկավարությունը, դրանք լուծելու փոխարեն, օրեցօր նոր հոգսեր է ստեղծում, նոր ցավեր եւ մեր մարզի հայության կյանքը դարձնում անտանելի...»։***

Այս նամակ-համախոսականը, ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Ն. Ս. Խրուշչովի մակագրությամբ, տրվել է Հայաստանի այն օրերի ղեկավարին՝ ծանոթանալու եւ իր եզրակացությունը ԽՄԿԿ Կենտկոմ ներկայացնելու համար։ Ղեկավարը ծանոթացել է եւ համախոսականի վերջին էջի տակ թողել իր ինքնագիրը՝ մոտավորապես այսպիսի բովանդակությամբ. նման տրամադրությունների հիմքն ազգայնամոլությունն է, տվյալ դեպքում՝ դաշնակցական զաղափարախոսությունը, որի դեմ մենք ամենօրյա պայքար ենք մղում։

Տարիներ հետո, երբ իրողությանը ծանոթ մարդիկ այս ղեկավար ընկերոջը հարց են տվել, թե ինքն ինչպե՞ս է զնացել նման քայլի՝ բազմաչարչար հայկական Ղարաբաղը մայր Հայաստանին վերամիացնելու առաջարկը համարելով ազգայնամոլություն, նա՝ արդեն զղջումի ու ինքնադատափետումի խոր ցավով պատասխանել է. ***«Ես այն ժամանակ Ղարաբաղի մասին համարյա ոչինչ չգիտեի, չէի պատկերացնում նրա դերն ու նշանակությունը։ Հետո՝ միայն...»։***

Ուրեմն, դարձյալ այսպես է եղել. Ղարաբաղի հարցը նորից բաժին է հասել նրա ցավից ու տառապանքից անտեղյակ, դերն ու նշանակությունը չհասկացող մարդուն, եւ վերստին հարցը մահացու հարված է ստացել, թաղվել անորոշ ժամանակով։

Բարեբախտաբար, այս անորոշն այնքան էլ երկար չտեւեց։ 1965 թ. ամռանը մարզի ղեկավար աշխատողներից տասներեք հոգի մի նոր, ընդարձակ, բավականաչափ հանգամանալից նամակով դիմեցին ԽՄԿԿ Կենտկոմ, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ ու Մինիստրների խորհուրդ եւ, նկարագրելով մարզի քաղաքական, տնտեսական, մշակութային անտանելի վիճակը, բացատրելով, որ այդ վիճակը մարզում տիրապետում է 1921 թվականից ի վեր, երբ մարզն Ստալինի ու Նարիմանովի դաժան կամքով բռնակցվել է Ադրբեջանին։ Տասնամյակներ շարունակ մարզի հայությունը գտնվել

է զաղութակալական ճնշման տակ։ Փոխվել, իրար հաջորդել են Ադրբեջանի ղեկավարները, սակայն անփոփոխ ու անհողդողդ է մնացել նրանց բաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հայության հանդեպ, խտրական-թշնամական, դաժան զաղութակալական բաղաքականությունը։ Ուստի եւ այդ հայության, ինքնավար կոչված մարզի միակ փրկությունը նրա մեջ է, որ այն միացվի հարեւան Խորհրդային Հայաստանին, նույն երկրի սահմաններից ներս գտնվող նույն ազգային պետականությանը։ Նամակի տակ ստորագրություններն ունեցել են հետեւյալ շարքը.

«1. Բագրատ Ուլուբաբյան - Գրողների միության մարզային բաժանմունքի պատասխանատու բարտուղար,

2. Սերգեյ Շաքարյան - Ստեփանակերտի բաղխորհրդի գործկոմի նախագահ,

3. Լազր Գասպարյան - «Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթի խմբագիր,

4. Գրիգոր Ստեփանյան - մարզային ռադիոյի ավագ խմբագիր,

5. Արամ Բաբայան - Ստեփանակերտի No 2 սովխոզի դիրեկտոր,

6. Արսեն Մուքանյան - Սոսի Շահումյանի անվան կոլխոզի նախագահ, Ադրբ. Գերագույն խորհրդի դեպուտատ,

7. Գուրգեն Գաբրիելյան - կուլտուրայի մարզային վարչության պետ,

8. Բոգդան Ջանյան - բանաստեղծ,

9. Միքայել Կորգանյան - հանրապետության ժողովրդական դերասան, Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի դիրեկտոր,

10. Արկադի Մանուչարյան - Ստեփ. No 59 շինվարչության պետ,

11. Ալբերտ Սեյրանյան - Ստեփ. էլեկտրատեխնիկական գործարանի դիրեկտոր,

12. Մաքսիմ Ավանեսյան - Ստեփ. ռադիոյի ավագ խմբագիր,

13. Սերգեյ Գրիգորյան - No 59 շինվարչության գլխավոր ինժեներ»։

Նամակը գրվել է 1965 թ. հունիսի սկզբին, ԽՄԿԿ Կենտկոմ է հանձնվել նույն ամսի 28-ին։

Նամակը Մոսկվա տանողը մայրաքաղաքում լայն գործունեություն ծավալեց հարցի քննարկման ու լուծման գործին աջակից դարձնելու այնտեղի բոլոր նշանավոր հայերին՝ պետական պաշտոնյա թե ռազմական գործիչ, գրական թե գիտական աշխատավոր։ Հնարավոր եղավ գործի լծել նրանցից մի քանիսին միայն՝ հայտնի դիվանագետ Համո Հարությունյանին, ասմունքի վարպետ Սուրեն Քոչարյանին, ակադեմիկոս Անդրանիկ Իոսիփյանին, Գրողների միության աշխատակից Գրիգոր Մանասյանին, «Դրուժբա նարոդով» հանդեսի խմբագրի առաջին տեղակալ Հակոբ Սալախյանին եւ էլի մի քանի հոգու։

Կուսակցության Կենտկոմում խոստացան հանձնաժողով ուղարկել Ղարաբաղ, որպեսզի այն տեղում քննի հարցը, ծանոթանա ժողովրդի տրամադրությանը եւ ներկայացնի իր առաջարկությունները։

Այս խոստումը կատարվեց. Ղարաբաղ եկավ ԽՄԿԿ Կենտկոմի հանձնաժողովը, որը, սակայն, գրաբար ասած՝ յամել էր Բաքվում (յամել - հապաղել, դեգերել, ուշանալ)։ Յամել էր, ոչ միայն այս բառի գրաբար ընթերցանության առումով, այլեւ մեր

օրերի, որ կտա մի նոր իմաստ՝ համն առնել, ադրբեջանական կաշառակերության համը։

Հանձնաժողովը մարզում սկզբից եւեթ իրեն ուղեկիցներ էր վերցրել Բաքվի դրածոներին, ապա եւ շարժվելու, իրերի դրությանը ծանոթանալու համար ընտրեց մի երթուղի, որից չէր կարելի սպասել ուրիշ որեւէ բան, քան այն, որ վերադառնալուց Բաղբյուրոյին զեկուցեց, թե իբր, Լեռնային Ղարաբաղում լուրջ ոչինչ չկա, թերություններ են, որոնց նմաններն ուրիշ տեղերում ավելի շատ կան, եւ պետք է հուսալ, թե Ադրբեջանի ավանդական ինտերնացիոնալիստական ոգին ժառանգած ղեկավարները կարճ ժամանակում կվերացնեն այդ սխալներն ու թերացումները։

Դրան էլ հետեւեցին հանրապետության ղեկավարների (Կենտկոմի, Մինիստրների խորհրդի, մինիստրությունների) խմբայցերը մարզ։ Գալիս էին, անուշ-անուշ խոսում, մեծ-մեծ խոստումներ տալիս, գնում։ Մինիստրների խորհրդի նախագահն էլ մարզին պարգեւեց 42 կետից բաղկացած իր կարգադրությունը, որի 40 կետերը վերաբերում էին հիմնականում *«ադրբեջանական»* Շուշիի շրջանին, մնացած երկուսը՝ մարզին։ Մի կետով մազութատար մեքենա էր հատկացնում որեւէ կոլխոզի, մյուսով ծրագրում էր մարզի շրջաններն իրար կապող ավտոուղիները վերակառուցել... Մի խոսքով՝ հայկական ինքնավար մարզի պահանջմունքները լրիվ կատարելու հիմքերն *«էր ապահովում»։*

Ստեփանակերտ ժամանեց նաեւ Ադր. կուս. Կենտկոմի քարտուղար Ելիստրատովը եւ, մեծապետական դիրքերից խոսելով նամակի հեղինակների հետ, վերադարձավ Բաքու՝ երեւի մտածելով, թե այսքանը բավական է, որպեսզի կողքահաստ ղարաբաղցիները հասկանան, որ Ադրբեջանի հետ խաղի մեջ մտնելն անիմաստ է, եթե չասենք վտանգավոր։

Սրանից հետո նամակի հեղինակներից չորսը (Բ. Ուլուբաբյան, Ս. Շահարյան, Լ. Գասպարյան, Գր. Ստեփանյան) նոր նամակ հղեցին ԽՄԿԿ Կենտկոմի Նախագահություն՝ պատմելով կատարվածը, այն գնահատելով որպես ժողովրդավարական կարգի գռեհիկ ոտնահարման, արցախահայության ազգային ու մարդկային իրավունքներն արհամարհելու ցուցադրություն... Մենք պատմել ենք մեր ինքնավար մարզի կյանքը դժոխք դարձնող մարդկանց հակաօրինական ու անբարոյական արարքները, եւ հենց նրանք էլ զբաղվել են մեր դիմումի քննությամբ։ Այլեւս ո՞ւմ դիմենք, ի՞նչ անենք, ո՞ւր գնանք, որտե՞ղ փնտրենք արդարությունը,- հարց էին տալիս դիմումի հեղինակները։

Նամակը ԽՄԿԿ Կենտկոմ էր ուղարկվել սեպտեմբերի 22-ին։ Դրանից մի քանի օր հետո տեղի ունեցավ Կենտկոմի պլենումի նիստ, որին, բնականաբար, հրավիրված էին հանրապետության ու մարզի ղեկավարները։ Նրանք ծանոթացան երկրորդ նամակին եւ, հավանաբար, կշտամբանքի խոսքեր լսած լինելով Կենտկոմի ղեկավարներից, վերադարձան՝ հաստատ վճռած հաշվեհարդար տեսնել տասներեքի, մանավանդ չորսի հետ։

Հաշվեհարդարին նախապատրաստվեցին ավելի քան երկու ամիս եւ դեկտեմբերի

9-ին կուսակցության մարզկոմի ընդլայնված նիստում քննության դրին երկու դիմումները։

Այս ժողովում ելույթ ունեցան մարզային ու շրջանային աշխատողներից 34 հոգի, որոնցից մեկը՝ կուս. մարզկոմի գյուղբաժնի վարիչ Սերգեյ Ալանյանը, պաշտպանեց դիմումները, ինքն էլ իր հերթին հիշեց փաստեր, որոնք ցույց են տալիս, որ մարզը թողնել Ադրբեջանի կազմում, նրա միշտ հայատյաց ղեկավարությանը ենթակա, պարզապես անմարդկային է։ Երեք-չորս հոգի գտան, որ դիմումներն արտահայտություն են մարզի ծանր վիճակից դժգոհ, ազնիվ մարդկանց հոգեկան պոռթկումի, եւ չի կարելի դրանց մեջ տեսնել հակաօրինական կամ հակակուսակցական որեւէ բան։ Չէ՞ որ, վերջապես, նրանք իրենց կուսակցության կենտրոնական կոմիտեին են դիմել, որպիսի իրավունք նրանց տրված է Կենտկոմի կանոնադրությամբ։

Մյուս բոլորը, շուրջ 30 հոգի, մարզի առաջին ղեկավարները՝ սկսած մարզկոմի առաջին քարտուղար Գուրգեն Մելքումյանից, մարզգործկոմի նախագահ Մուշեղ Օհանջանյանից, մինչեւ մարզային ու շրջանային մյուս օղակների ղեկավարները, տարբեր աստիճանի երկերեսանիներ ու ստորաբարշներ, իրենց պաշտոնական հեղհեղուկ դիրքերում ամրապնդվելու համար մարտնչողներ կամ պարզապես ավելի բարձր պաշտոնների հավակնող հացկատակներ, դատապարտեցին դիմումները, նրանց հեղինակներին համարեցին ադրբեջանական բարերար, ինտենացիոնալիստական, հայասեր ու մարդասեր ղեկավարության վրա կեղտ շպրտողներ, որոնք, իբր, միայն մեկ նպատակ ունեն՝ սեպ խրել հայ-ադրբեջանական հազարամյա բարեկամության մեջ։

Խոսեցին նաեւ նամակների հեղինակներից շատերը։ Նորից նոր հաստատեցին իրենց դիրքի արդարացիությունը, մերկացրին նամակների հակառակորդների երկերեսանությունն ու վկայակոչած առարկությունների բացահայտ սնանկությունը... Դահլիճը համաձայն էր նրանց հետ, նույնիսկ իրենք՝ այդ հակառակորդներից շատերը, համերաշխության ու զոհունակության աղմուկ էին անում՝ արժանանալով բարձր ղեկավարների կշտամբանքին։ Սակայն ի՞նչ օգուտ, երբ պիտի ընդունվեր որոշում այն մասին, որ կուսակցության մարզկոմի բյուրոյի ընդլայնված նիստը, մարզի կուսակցական ու խորհրդային ակտիվի հետ միասին, դատապարտում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանին միացնելու առաջարկը՝ այն համարելով հակաօրինական, հակակուսակցական, հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների եղբայրական բարեկամությունը խարխլող... Ա՛յն, որ պետք էր Ադրբեջանի ղեկավարներին։ Շա՜տ էր պետք։

Ապա հետեւեց նամակների հեղինակների համար նախատեսված պատիժները. Բ. Ուլուբաբյանին՝ իբրեւ այդ ամենի կազմակերպչի, կուսակցական խիստ նկատողություն վերջին նախազգուշացումով, գրանցելով անձնական քարտի մեջ, Ս. Շաֆարյանին, Լ. Գասպարյանին, Գ. Գաբրիելյանին, Գր. Ստեփանյանին՝ ազատել զբաղեցրած պաշտոններից, մյուսներին՝ զգուշացում։

* * *

Ժողովուրդը զայրացած էր իր ղեկավարության եւ նրա շուրջը պտտվող ապիկար

ու ազգուրաց հանկատարների դեմ։ Հիմնարկներում հանախակի էին բախումներ լինում այն ղեկավարների հետ, որոնք հայտնի ժողովում դատապարտել էին դիմումներն ու նրանց հեղինակներին։

Իսկ Ադրբեջանը կատաղի լայնածավալ արշավանքի էր անցել մարզի հայության դեմ։ Հայ անմեղ մարդկանց սպանում էին՝ որտեղ պատահեր, Շուշիում, Աղդամում, Մարտակերտի դաշտում, Ժդանովի շրջանի ձմեռանոցներում։ Կառավարության տարբեր մարմիններ մոռացել էին մի քանի ամիս առաջ տված իրենց լորձնաշուրթ խոստումները, խեղդում էին մարզի տնտեսությունը, դպրոցները, մշակույթը, ողջ ժողովրդին։ Ասես կրակի օղակ էր պատրաստվել, նրանով շրջափակել էին մարզը եւ անընդհատ սեղմում էին օղակը...

Եվ ահա այս ժամանակ էլ Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղում տարածվեց սրտապարար մի լուր այն մասին, որ ԽՄԿԿ Կենտկոմը որոշում է ընդունել Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու վերաբերյալ, մնում է այն իրականացնել։

Իսկապես. 1966 թ. օգոստոսի 8-ին Կենտկոմի քարտուղարությունն ընդունել էր որոշում, որով հանձնարարվում էր Ադրբեջանի ու Հայաստանի երեքական ղեկավարներին (Ադրբեջանից՝ Ախունդով, Ալիխանով, Իսկենդերով, Հայաստանից՝ Քոչինյան, Մուրադյան, Հարությունյան)՝ համատեղ ջանքերով քննել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանի Խորհրդային Հանրապետությանը միացնելու հնարավորությունը եւ իրենց առաջարկությունները ներկայացնել ԽՄԿԿ Կենտկոմ՝ հարցի վերջնական լուծման համար։ Նշվում էր նաեւ հիմքը՝ Լեռնային Ղարաբաղից ստացված համապատասխան դիմումներն ու համախոսականները, ինչպես նաեւ Հայաստանի նշանավոր մարդկանց ստորագրություններով հենց վերջերս ստացված մի դիմումը։

Ոտքի ելավ ամբողջ հայ ժողովուրդը, որ ամենուրեք իր ցնծությունն էր արտահայտում, պահանջում հարցի շուտափույտ վերջնական լուծում։ Իսկ Ղարաբաղում այդ ցնծությունն առավել գործնական բնույթ ստացավ. կազմակերպվեցին նոր համախոսականներ, որոնց տակ ստորագրեցին շուրջ 50 հազար մարդիկ, այսինքն՝ մարզի ամբողջ հասուն բնակչությունը։ Համախոսականները երեք հասցեով՝ ԽՄԿԿ Կենտկոմ, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ եւ Մինիստրների խորհուրդ, տեղ հասան օգոստոսին...

Իսկ երկու հանրապետությունների ղեկավարնե՞ր։ Որոշում-հանձնարարական ստանալուն պես ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը զանգել էր Ադրբեջանի իր պաշտոնակից Վալի Ախունդովին, որպեսզի պայմանավորվեն հանդիպման ու կատարելիք աշխատանքի մասին։ Եվ Վալին, ինչպես վայել է իրենց, անուշ-մեղուշ խոսքերով հալ-ահվալ հարցնելուց հետո, խնդրել էր ժամանակ, որ բերքահավաքն ավարտեն։ Մանավանդ բամբակաքաղի ծանր ու պատասխանատու շրջանն էր սկսվում... Այս ամենից հետո, իբր, կպայմանավորվեն, հանգիստ սրտով կհանդիպեն, գլուխ-գլխի կտան...

Հայտնի է, որ բամբակաքաղը ձգվում է մինչեւ ձմեռ։ Ուրեմն, բանակցությունների համար այդքան պիտի սպասեին։

Հայաստանի ղեկավարներն սպասում էին։ Իսկ Ախունդովն ու յուրայինները, բեր-

բահավամբ մոռացած, թափվեցին Մոսկվա՝ հնարավոր ու անհնար բոլոր խողովակներով Կենտկոմի Նախագահության անդամներին լարեցին Ղարաբաղի հարցի դեմ: Այն ներկայացնում էին իբրեւ Հայաստանի ազգայնամոլ տարրերի հերյուրյած եւ երկու եղբայրական հանրապետություններն իրար դեմ հանող միջոցառում, որ հղի է ազգամիջյան բարդությամբ ու նոր կոտորածի վտանգով: Իսկ եթե կուզեմ՝ մեծ հարեւան Թուրքիայի եւ առահասարակ մահմեդական Արեւելքի թշնամանքով ու անկանխատեսելի ուրիշ հետեւանքներով:

Ինչպես հետագայում տեղյակ աղբյուրներից հայտնի էր դարձել, Ադրբեջանի ղեկավարներին այս գործում մեծապես օգնել են Սուսլովն ու Միկոյանը, առաջինը՝ որպես Կենտկոմում վճռական ձայն ունեցող մեկը, իսկ Միկոյանը՝ երկրի Գերագույն խորհրդի նախագահը եւ հարցի ակունքին ու ընթացքին քաջատեղյակ, ամենավստահելի խոսքի տեր մարդը:

Զուշացավ եւ արդյունքը. ԽՄԿԿ Կենտկոմից Անտոն Քոչինյանին հանձնարարեցին վերադարձնել Քարտուղարության օգոստոսի 8-ի որոշման օրինակը եւ զբաղվել իր հանրապետության ազգայնամոլ ու խառնակիչ տարրերի վերադաստիարակությամբ: Իսկ Ադրբեջանի ղեկավարները նոր, կատաղի արշավանք սկսեցին Ղարաբաղի հայության դեմ: Մարզի ղեկավարներն ստացան ազգայնամոլ տարրերին, մանավանդ նախորդ տարվա ***«հերոսներին»*** մարզից հեռացնելու, այլ խոսքով՝ մարզը մաքրելու, պատասխանատու պաշտոններում ադրբեջանցիներ տեղավորելու, Հայաստանից Ղարաբաղ թափանցող ազգայնական ու հակախորհրդային տրամադրությունները վերացնելու ավելի պարզ՝ Հայաստանի հետ ոչ մի շփում չունենալու անհետաձգելի առաջադրանքներ:

Ղարաբաղում վերականգնվել էին չարահուշ Սուլթանովի նահանգապետության շրջանի «կարգերը». հայ մարդկանց կողոպտում ու սպանում էին օրը ցերեկով, եւ ոչ ոք պատժի չէր ենթարկվում: Զինված ավազակախմբերը գիշեր-ցերեկ հայկական գյուղերից քշում-տանում էին անասունները, պաշտպանվելու փորձ անողներին տանջամահ էին անում:

Մարտունու շրջանի Կուրոպատկինոյի խաղողագործական սովխոզում, գիշերային աշխատանքների ժամանակ, սպանել էին գլխավոր ագրոնոմին: Ամիսներ անց էլ սպանեցին նրա հաջորդի՝ Բենիկ Մովսիսյանի 9 տարեկան որդուն: Պարզվեց, որ սպանությունների կազմակերպիչը գյուղի դպրոցի դիրեկտոր Արշադ Մամեդովն է: Դպրոցի պահակի օգնությամբ երեխային քարշ էին տվել, մտցրել նկուղը, հոշոտել, գլխին մեխեր տնկելով սպանել:

Արշադ Մամեդովի հանցանքի նախաքննությունը տեւեց ավելի քան մեկ տարի: Այդ ընթացքում մարզի տարբեր վայրերում տեղի ունեցան նոր սպանությունների դեպքեր, որոնցից չէր կարելի չեզրակացնել, որ գործում է դիվային մի ծրագիր, որի նպատակն է հայերին ստիպել, որ հեռանան անտանելի դժոխք դարձած իրենց բնակավայրերից: Մարտակերտի սովխոզի պահակին, նրա կնոջն ու երեխաներին վառել էին պահականոցում: Մարտունու շրջանի Նորշենի կոլտնտեսության երկու տրակտորիստների սպանեցին գիշերավարի ժամանակ: Շուշվա փողոցում օրը ցերեկով սպա-

նեցին երիտասարդ մի հայի, Աղդամում՝ Ստեփանակերտի բնակիչ Ջավադ Ավանեսյանի որդուն: Երկու դեպքում էլ սպանողները մնացին անհայտ, որովհետեւ ոչ ոք վկա չէր կանգնում, որ հանցագործի ինքնությունը պարզվի:

Իմիշլիում երեք հայ արհեստավորներ ադրբջանցու համար տուն կառուցելիս են եղել: Տանտերը գիշերով բարձր լարման էլեկտրական հոսանք է միացրել բնած երեքին, եւ նրանք այլեւս չեն արթնացել...

Շուշիում մոլեգնել էր մի բարբարոսություն, որին զոհ գնացին քաղաքի հայկական չորս գերեզմանատներն իրենց փառաշուք շիրմաքարերով, խաչքար-կոթողներով: Կոչը վերեւից էր տրված. "Строитель" թերթի 1966 թ. փետրվարի 2-ի համարում նարտարապետ մի ոմն Ռ. Սեիդով ***«խորհուրդ էր տալիս»*** Շուշվա թրքությանը փրկել գերեզմանական շրջապատից (բառացի՝ "мертвые сьели живых"), եւ վայրի խուժանը գործի էր անցել շինարարական առաջնակարգ մեքենաներով:

Արշադ Մամեդովի դատավարության հանգամանքները եւս ցույց տվին, որ հրեշավոր ծրագիրն իսկապես գործում է: Նախ դատավարությունն անցկացրին (1967 թ. հուլիսին) բացօթյա, Ստեփանակերտի ամառային զբոսայգու տարածքում, ապա մի քանի օր շարունակ գայրույթից եռացող հասարակայնության առաջ հայտնեցին, թե արնախում չարագործը դատապարտվում է ընդամենը 10 տարվա ազատազրկման: Երբ նրա կինն ու մյուս հարազատներն էլ արել էին նախաստեղծ սցենարով իրենց վերապահված հայտարարությունները (***«Արշադ, պայմանավորվել ենք, տաս օր էլ չես նստելու», «քո կշռով մեկ ոսկի ենք ծախսել, դու հանգիստ եղիր»...***), հավասարակշռությունը կորցրած ժողովուրդը հարձակվեց, պահակներից խլեց հանցագործին ու նրա գործակցին եւ մի երրորդ սրիկայի, որը փորձել էր դեմ կանգնել ինքնադատաստանին: Երեքին էլ սպանեցին ու դիակները վառեցին զբոսայգում սարքած խարույկի վրա:

Վառված հանցագործների թաղումը կատարվեց հանրապետական փայլ ու շուքով: Այն գլխավորում էր Ադր. Մինիստրների խորհրդի նախագահ Ալիխանովը, որն իր հետ Բաքվից բերել էր երաժշտախումբ ու մոլլաներ: Իսկ հետո էլ կարճ ժամանակում կանգնեցնել տվեց արժանավոր գերեզմանակոթող՝ միաձույլ շիրմաքարի վերեւ բացված գիրք, որը խորհրդանշում է ազգի արժանավոր մտավորական հանգուցյալի զրաքիրությունը...

Այս աննախադեպ տեսարանի հեռատես հեղինակները, այսպիսով, հասան իրենց նպատակին: Ղարաբաղի հայերը կատարել էին ինքնադատաստան, հակաօրինական մի արարք, որով ադրբեջանական շովինիստների ձեռքերն ազատվեցին՝ կատարելու հայերի նոր զանգվածային կալանավորումներ եւ բռնադատումներ: Անմիջապես բանտերը նետվեցին ավելի քան 50 մարդ, որոնցից շատերը մահացան խոշտանգումներից:

Այսքանին էլ հետեւեցին նոր չարագործություններ, արցախահայության դեմ շարունակաբար կիրառվող նոր սադրանքներ, որոնց համար ոչ ոք պատասխանատու չէր, եւ բողոքողներն էլ ոչ թե առաջների պես մնում էին անպատասխան, այլ բողոքները հետապնդվում ու հալածանքների էին ենթարկվում՝ իբրեւ խլրտումներ սերմանողներ:

Այո՛, Ադրբեջանի ղեկավարությունը կարողացավ օգտագործել իրենց հատուկ ծրագրով կատարված տեսարանի ընձեռած բոլոր հնարավորությունները: Մարզի հա-

յությունը *«հակաադրբեջանական ինքնադատաստան էր արել»*՝ հանցանքներից ամենավտանգավորը, եւ հիմա նրա դեմ ինչ խժդժություններ էլ կատարվեն, բողոքը ոչ ոք չպետք է լսի, չպետք է ուշադրության արժանացնի։

Սակայն կար, մնում էր մարզի հայության կատարած մեկ վիթխարի *«հանցանքը»*, որը դեռ պատասխան չէր ստացել, եւ դրանից անհանգիստ էր, պատեպատ էր զարկվում Ադրբեջանի ղեկավարությունը։ 1966 թվականին Մոսկվա հասած 50 հազար ստորագրություններ՝ որոնք ներկայացնում են Ղարաբաղի հայ բնակչության ձայնը, եւ այն պահանջում է մարզը միացնել Հայաստանին։

1973 թ. կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Գ. Մելքումյանին ազատեցին եւ նրա տեղը նշանակեցին ինչ-որ Բ. Կեւորկովի, որը նախապես հանձնարարություն ուներ, ինչ գնով էլ լինի, ստեղծել այդ 50 հազար ստորագրությունների հակակշիռը եւ առհասարակ մարզի ազգագրական պատկերը դարձնել այնպիսին, որն այլեւս ոչ մի հնարավորություն չտա խոսելու հայկական մեծամասնության մասին։ Կեւորկովի ետեւից էլ մարզում ուրիշ բարձր ղեկավար պաշտոններ զբաղեցրին թքլպատված ազգանուններով ուրիշները՝ Ասլանով, Մուրադով, Իսազուլով, Սամվելով եւն, որոնք իրենց իրավասության սահմաններում հայերեն խոսք լսելիս միայն զզվանքով մոլտում էին։

Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժանմունքը փակեցին, փոխարենն Ստեփանակերտում բացեցին մանկավարժական ինստիտուտ՝ ադրբեջանական բաժանմունքով, որն իր ծավալով գերազանցում էր հայկականին։ Ադրբեջանական բաժանմունքներ ստացան քաղաքի տեխնիկումներն ու մնացած մասնագիտական դպրոցները։ Եվ այսքանի արդյունքն այն եղավ, որ մարզի մայրաքաղաքի բնակչության մի զգալի մասը կազմեցին ադրբեջանցիները, որոնք ամեն մի հնարավորություն ու արտոնություն ունեին ներս հրավիրելու, տաք տեղեր տալու ցեղակիցներին։

Իսկ 1975-ի գարնանամուտին Բ. Կեւորկովը ձեռնարկեց իր ամենահիմնական խնդրի կատարմանը։ Հրավիրեց կուսակցության մարզային կոմիտեի պլենում (այն սկսվել է մարտի 21-ին) եւ, քննության դնելով աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության խնդիրները, հիմնականում տրորեց մի հարց՝ *«Լեռնային Ղարաբաղի տեղը»*։

Իրադրությանն անծանոթ մարդը կարող էր մտածել, թե Ղարաբաղն անհայտ աշխարհ է կամ ինչ-որ ժամանակ կորած մի տարածք, եւ, ահա՛, Բ. Կեւորկովը փորձում է գտնել, պարզել նրա տեղը։ Ո՛չ, այդպես չէ։ Նա ուզում է որոշել Ղարաբաղի տիրոջ հարցը։ Բայց մի՞թե դա էլ հարց է։ Չէ՞ որ բոլոր ժամանակներում ամեն մի երկիր պատկանել է նրան, ով ապրել է այդ երկրում։ Իսկ Ղարաբաղում անհիշելի ժամանակներից մինչեւ այսօր անընդմեջ ապրում է հայ ժողովրդի մի մասը եւ, չմոռանանք, ա՛յն մասը, որն ուշ միջնադարի ամենածանր մղձավանջում անգամ բնիկ ազգային պետական կազմավորում ունեցող միակ մարզն էր։ Եվ խորհրդային շրջանում դարձյալ Ղարաբաղի բնակչության հիմնական, գերակշիռ զանգվածն է կազմում հայ ժողովուրդը։

Ո՛չ, Բ. Կեւորկովին անհանգստացնողը հարցի այս կողմն էլ չէր։ Նա ուզում

էր պարզել, ցույց տալ Ղարաբաղի վարչական պատկանելությունը եւ չէր բավարարվում այսօրվա վիճակով (որ այն, իբրեւ ինքնավար հայկական ազգային մարզ, գտնըվում է Ադրբեջանական ԽՍՀ սահմանների մեջ), փորձում էր պատմականորեն ցույց տալ ու ապացուցել Ադրբեջանի անկապտելի իրավունքը (այլ խոսքով՝ տիրապետությունը) Ղարաբաղի ու նրա հայ բնակչության վրա: Հենց այստեղ էլ նա, պատմական անառարկելի փաստերն ու փաստաթղթերը մի կողմ թողած, պատմության փոշու տակից հանում էր պատեհապատշաճ եղանակով ժամանակին մոգոնված թղթեր, դրանք իրար կցմցում, սազացնում առաջադիր նպատակին, առանց ամաչելու այն ահավոր կեղծիքից ու ախտավոր ***«տրամաբանությունից»***, որոնք չեն կարող թաքցվել նույնիսկ գիտական պատրաստություն չունեցող մարդկանց աչքից: Բ. Կեւորկովը հայտարարում էր, թե միայն դաշնակներն էին, որ ցանկանում էին Ղարաբաղը միացնել Հայաստանին, որով, իբր, ուզում էին հասնել իրենց դիվային նպատակին՝ ***«Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը թշնամացնել իրենց դարավոր եղբայրների հետ»***, որոնք ադրբեջանցիներն են:

Կեւորկովն ամեն կերպ ջանում էր ապացուցել, թե Լեռնային Ղարաբաղը ոչ մի ժամանակ ոչ մի կապ չի ունեցել Երեւանի, ուրեմն եւ Հայաստանի հետ, չունի այժմ եւ չի ուզում ունենալ երբեւէ: Եվ բոլոր նրանք, ովքեր ինչ-որ ժամանակ փորձել են ստեղծել այդպիսի կապեր, ադրբեջանական ժողովրդի, հետեւապես եւ ինտերնացիոնալիզմի ու խորհրդային համակեցության թշնամիներն են: Սույն սկզբունքից ելնելով էլ դատափետման էր ենթարկում անցյալի առումով՝ մարզի այն 13 ղեկավար աշխատողներին, որոնք 60-ական թվականներին ելնելով ***«Ադրբեջանի հարազատ ղեկավարության դեմ»*** ըստ էության ընկան ***«դաշնակցության ճահիճը»***: ***«Բազրատ Ուլուբաբյանն ու նրան համախոհ հետամնաց, գաղափարապես չհասունացած մարդիկ,***- գրել էր Կեւորկովը,- ***փորձեցին Ղարաբաղի հարցը մեկնաբանել ազգային էգոիզմի ու ազգային սահմանափակվածության արատավոր դիրքերից»***:

Պլենումն ընդունեց որոշում, որի հիմքում ընկած էր ***«Լեռնային Ղարաբաղի տեղի»*** հարցը, որ մարզը ոչ մի ժամանակ որեւէ կապ չի ունեցել Հայկական Հանրապետության հետ, չունի եւ չի ուզում ունենալ:

Պլենումի նիստը կեւորկովյան առաքելության իրականացման առաջին վճռական քայլն էր: Ապա նույն հարցը նա քննության դրեց նաեւ կուսակցական շրջկոմների պլենումների նիստերում, կոմերիտմիության մարզկոմի, շրջկոմների ու սկզբնական կազմակերպությունների, արհմիությունների մարզխորհրդի, շրջկոմների ու տեղկոմների նիստերում: Այլ խոսքով՝ նա իր առաջ քաշած հարցի քննարկմանը մասնակից դարձրեց Լեռնային Ղարաբաղի բնակչության ամբողջ չափահաս մասին եւ, ըստ էության, ընդունված որոշումները պետք է ներկայացներ իբրեւ Ղարաբաղի հայության միահամուռ կամքի արտահայտությունը:

Այս բոլոր որոշումների կնքված թարգմանությունները նվիրաբերվել են Ադրբեջանի այն ժամանակվա ղեկավար եւ Կեւորկովի կնքահայր Հեյդար Ալիեւին, որն էլ շատ է գոհ մնացել իր դրածոյի եռանդուն ձեռնարկից:

Կեւորկովյան միջոցառումները փոթորկել էին ամբողջ հայ ժողովրդին։ Հայաստանում այն ոտքի էր հանել մտավորականությանը։

Թվում էր, թե Հայաստանի ղեկավարությունը (կուս. Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյան) զոնե այս անգամ արժանի հակահարված կտար Կեւորկովին ու գործակիցներին, երբ նրանք բացահայտ արշավի էին ելել Հայաստանի դեմ, նրա վարքն ու քաղաքական դիրքն էին հայհոյում ժողովներում, թերթերի էջերում։ Ցավոք, այդպիսի ոչինչ տեղի չունեցավ։ Հայաստանի գրողների միության վարչության անդամների հետ ունեցած հանդիպման ժամանակ Դեմիրճյանն իր ու յուրայինների դիրքը բացատրեց նրանով, որ ժամանակը հասուն չէ նման քայլի համար։ ***«Կգա հարմար ժամանակը,*** - ասաց նա, - ***մենք կձեռնարկենք խոհուն ու կտրական միջոցներ, եւ կլուծենք զորդյան հանդույցը. Լեռնային Ղարաբաղը կմիանա Հայաստանին»։***

70-ական թականների կեսերին, երբ ԽՍՀՄ Սահմանադրության նախագիծն էր դրված համաժողովրդական քննության, եւ ժողովուրդը, նրա զանազան հատվածները, բոլոր հիմնարկներն ու ձեռնարկությունները, անհատներն ու զանազան խմբակցություններ միութենական Սահմանադրական հանձնաժողովին էին հղում իրենց առաջարկները, պահանջներն ու նկատառումները, մի հեղեղ կազմեցին Արցախի խնդրին վերաբերող թղթերը։ Սրանց ուշադիր քննության շնորհիվ հանվեց հիմնական եզրակացությունը, որն էլ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահության արձանագրության մեջ ստացավ հետեւյալ ձեւակերպումը. ***«Պատմական մի շարք հանգամանքների հետեւանքով մի քանի տասնամյակ առաջ Լեռնային Ղարաբաղն արհեստականորեն միացվել էր Ադրբեջանին։ Ըստ այդմ հաշվի չէին առնվել մարզի պատմական անցյալը, նրա ազգային կազմը, ժողովրդի ցանկությունը եւ տնտեսական շահերը։ Անցել են տասնամյակներ, եւ Ղարաբաղի հարցը շարունակում է հոլովվել, առաջացնել անհանգստություն եւ անբարյացակամության պահեր դարավոր բարեկամությամբ իրար հետ կապված երկու ժողովուրդների միջեւ։ Անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղը (հայերեն՝ «Արցախ») միացնել Հայկական ԽՍՀ-ի հետ։ Այն ժամանակ ամեն ինչ կբռնի իր օրինական տեղը»։***

ԵՎ, ԱՅՆՈՒՀԱՆԴԵՐՁ

Նախորդ էջերում ցույց տրվեց, որ Ադրբեջանի ղեկավարությունը ոչինչ չէր տալիս մարզի տնտեսական զարգացումն ու աշխատավորության կուլտուրական մակարդակի բարձրացումն ապահովելու համար եւ ամեն ինչ անում էր տնտեսության առաջընթացը խափանելու, ժողովրդին մշակութային ցածր մակարդակի վրա պինդ պահելու, էական որեւէ տեղաշարժ անհնար դարձնելու նպատակով։ Եվ, այսուհանդերձ, խորհրդային իշխանության տասնամյակները մարզի կյանքում կազմեցին առաջընթա-

ցի ու զարգացման հետաքրքիր մի շրջան՝ ինչպես արդյունաբերության ու գյուղատնտեսության, այնպես էլ մշակութային բնագավառներում։

Պարծենալու ի՞նչ նյութ կարող է տալ, օրինակ, շինարարական վերելքն ամբողջ մարզում։ Ձեղած տեղում կառուցվել է Ստեփանակերտը, մարզի կանաչափառ ուստանը, իր ճարտարապետական կերպարով, բարեկարգ ու մաքուր փողոցներով, հասարակական շենքերի ու անհատական տների հետաքրքիր լուծումներով, որոնց ամբողջությունն ստեղծել է փոքրիկ, գավառական քաղաքի պայծառ մի օրինակ («գավառականն» այս բառի դրական, հարազատ ու մտերմիկ իմաստով)։ Եվ, որ ամենակարեւորն է. այդ գեղեցիկ քաղաքում ամեն ինչ արվել է նրա բնակիչների ուժերով ու ստեղծագործական հնարավորությունների գերազույն լարումով։ 1950-ական թվականներին մարզային կազմակերպություններին ոչ մի կերպ չէր հաջողվում հանրապետությունից միջոցներ պոկել քաղաքում մարզադաշտ կառուցելու համար։ Մտավորականների կոչով դրամական հանգանակություն կատարվեց, կազմակերպվեցին շաբաթօրյակներ ու ողջ հասարակության անվճար մասնակցությամբ աշխատանքային օրեր, շաբաթներ... Եվ քաղաքը ձեռք բերեց իր մարզադաշտը։

Համարյա այդպես են կառուցվել Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանի բարետես շենքը, Հայրենական պատերազմի զոհերի հուշարձան-համալիրը, «Մենք ենք մեր սարերը» կոթողը եւ բազմաթիվ ուրիշներ, որոնք ամբողջացնում են լեռնաստանի գեղեցկուհու ճարտարապետական ու գեղարվեստական կերպարը։

Արցախի անցյալ դարերի շինարարական կյանքը նշանավորվել է բերդամրոցների, վանական համալիրների, մասամբ իշխանական-մելիքական ապարանքների կառուցումով։ Փա՜ռք այդ հոյակերտների շինարար ճարտարապետներին ու քարգործ վարպետներին, որոնք համարյա ժամանակ ու հնարավորություն չեն ունեցել հասարակ արցախցու բնակելի տուն, կենցաղային ու հասարակական շինություններ կանգնեցնելու համար։ Նոր շրջանի մի քանի տասնամյակի խաղաղ կյանքն արցախյան գյուղն անճանաչելիորեն վերակառուցեց, յուրաքանչյուր ընտանիք դրեց բարեշեն ու հարմարավետ, մեծ մասամբ երկհարկանի տան մեջ։

Արցախի հայ գյուղը պետությունից չէր ստանում ոչ մի շինանյութ, որով լիքն էին հարեւան ադրբեջանական գյուղերի խանութները ու շուկաները։ Այդ արցախահայը, բերանից կտրած միջոցներով, առատության մեջ լող տվող հարեւան թորքից առնում էր շինանյութեր, վառելիք ու զանազան մթերքներ... եւ բերում, կառուցում էր իր տունը, կառուցում էր այնպիսի վարպետությամբ ու հոգածությամբ, որ հետո անհարմար չզգա Գանձասարի ու Գտչավանքի, Եղիշ առաքյալի ու Շուշիի Ամենափրկիչ հոյակերտներին նայելիս։

Արցախյան շուրջ երկու հարյուր գյուղերում հիմա շատ կան եւ մշակույթի տներ, եւ դպրոցական շենքեր, եւ հասարակական այլեւայլ պետքերի համար կանգնած շինություններ։ Նրանցից եւ ոչ մեկը չի կառուցվել պետական միջոցներով, չնայած այն երկիրը, որի մեջ մարզն էր գտնվում, ամեն տարի ժողովրդի մշակութային ու լուսավորական կարիքները հոգալու համար ստանում էր վիթխարի գումարներ։

Մարտունու շրջանի Ճարտար գյուղում 50-ական թվականներին շինարարական եռուզեռ էր։ Իրար ետեւից վեր բարձրացան մշակույթի տունը, հյուրանոցը, դպրոցական շենքերը։ Երեւանից էին բերում շինանյութերը, նախագծերը, նույնիսկ կառուցող ինժեները։ Եվ հիմա այնտեղ կանգնած մշակույթի պալատը պատիվ կարող է բերել առաջնակարգ ամեն մի երկրի մայրաքաղաքին։

Ճարտարի փորձը վարակիչ էր։ Այն անցավ նույն շրջանի Բերդաշեն եւ ուրիշ գյուղերի, Մարտակետի շրջանում՝ կենտրոնին եւ էլի մի քանի գյուղերի։

Մարզում չկար եւ չէր կարող (ավելի ճիշտ՝ հանրապետության ղեկավարների ողորմածության պատճառով չէր կարող) լինել արդյունաբերություն՝ այս բառի լիակատար իմաստով։ Նախախորհրդային շրջանի Շուշիում եւ գավառների մի շարք բնակավայրերում եղած մետաքսակարժական արհեստանոցները միավորելով՝ 20-ական թվականների ձեռներեցներն Ստեփանակերտում ստեղծել էին բնական մետաքսի ֆաբրիկա, որն աճելով ու ծավալվելով բավական մեծացավ, հզորացավ եւ տարեկան արտադրում էր ավելի քան 16 միլիոն մետր մետաքսեղեն։

Մարզի մարմարի հանքերի, անտառներից հանվող ընտիր փայտեղենի եւ մնացած բնական հարստությունների մասին ասվել է։ Ավելորդ է կրկնել, որ դրանց հիմքի վրա արդյունաբերություն չի ստեղծվել՝ վերեւների համառ դիմադրության պատճառով։ Եվ եթե այժմ էլ Ստեփանակերտում էլեկտրատեխնիկական գործարան կա, ապա մոսկվաբնակ արցախցի մեծ գիտնական Անդրանիկ Իոսիֆյանի նախաձեռնությամբ ու ջանքերով։ Եթե կոշիկի ֆաբրիկա է գործում, ապա միայն մի պատճառով. Ստեփանակերտում կառուցված գյուղատնտեսական մթերքների վերամշակման հսկա կոմբինատի գործարկումը կասեցնելու համար մի այդպիսի զիջողություն էր անհրաժեշտ։

Անժխտելի է մարզի գյուղատնտեսության բուռն վերելքը։ Եվ սա՛ որ մարդկանց, այդ գյուղատնտեսության ղեկավարների ու շարքայինների հերոսության շնորհիվ։ Ճարտարի հացագործները պատերազմից անմիջապես հետո էր, որ անջրդի տարածությունների հեկտարից ստացան ավելի քան 30 ցենտներ հացահատիկ, եւ 5 հոգի արժանացան հերոսի կոչման։ 50-ականների սկզբին Մարտունու խաղողագործական սովխոզի ամբողջ այգու (շուրջ 400 հեկտար) յուրաքանչյուր հեկտարից ստացան ավելի քան 350 ցենտներ խաղող, եւ չորս օղակավարներ դարձան հերոս։ Այսօրինակ նվաճումների էին հասել նաեւ Հադրութի ու Մարտակերտի շրջաններում։ Մանավանդ Մարտակերտի սովխոզում, որն իր խաղողենու այգիներից տարեկան 35-40 հազար տոննա խաղող էր ստանում, այնքան, որքան հանրապետության խաղողաքաղ մեծ շրջաններից որեւէ մեկը։

Նման հաջողություններն առկա էին նաեւ այգեգործության մյուս բնագավառներում, անասնապահությունում, որոնց ցուցանիշները միշտ էլ բարձր էին լինում ամբողջ հանրապետությունում։ Եվ դա ոչ թե հանրապետության ղեկավարության հոգատար կամ ուշադիր վերաբերմունքի պատճառով, այլ ի հեճուկս նրա։ 60-ական թվականների առաջին կեսին Ճարտարի կոլխոզում հայտնաբերել էին ***«անօրեն գործարքների»*** մի ամբողջ շարք. կոլխոզը հարեւան Ֆիզուլու շրջանի կոլխոզներից բարձր գներով հայթայթել էր միայն ավտոդողեր՝ ավելի քան 600 հատ։ Ինչպե՞ս

եւ ինչո՞ւ։ Պարզ հաշիվ էր. մարզը, ուրեմն եւ ճարտարը, ոչինչ չէր ստանում, իսկ հարեւան ադրբեջանական շրջանին բաժին էր հասնում այնքան, որ այն Եւ սեփական կարիքներն էր հոգում, Եւ հնաավորություն ուներ զրկված հայ հարեւանին վանառելու սպեկուլյատիվ գներով... Եվ ճարտարը մեղավոր էր, զրկվա՞ծ ճարտարը, իսկ նրա զրկողը ո՛չ մի մեղք չուներ։ Նույնիսկ սպեկուլյատիվ գներով նրան ավտոդողեր վաճառո՛ղը։

Եվ ճարտարն, այսուհանդերձ, ստանում էր հանապետությունում ամենաբարձր բերքը հացագործությունից, այգեգործությունից, անասնապահությունից։ Նորի՛ց ի հեճուկս հանրապետության ղեկավարների քինոտ վերաբերմունքի։

Հիշվեց, որ 1926 թ. Մարիետա Շահինյանը գրել էր, թե Ղարաբաղի բյուջեն ամենազրկվածն է ամբողջ Խորհրդային Միության մեջ։ Նույն վիճակն էր նաեւ հետագա բոլոր տարիներին։ Եվ, այսուհանդերձ, 30-ական թվականներին մարզն ստեղծեց իր դրամատիկական թատրոնը, 50-ականներին՝ ժողովրդական երգի-պարի անսամբլը, որոնք իրենց գեղարվեստական մակարդակով, առանց ամաչելու, կարող են կանգնել ցանկացած հանրապետության համանման կոլեկտիվների կողքին։ Մարզի գրողները՝ 37-ին տաժանակրության մեջ իր մահկանացուն կնքած Գրիգոր Ներսիսյանը, 40-50-ականներին այդ վիճակը վայելած ու վերադարձած Բոգդան Ջանյանը, նորերը՝ Սարգիս Աբահամյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Վարդան Հակոբյանը, Վազգեն Օվյանը, Հրաչյա Բեգլարյանը եւ շատ ուրիշներ, դարձյալ ի հեճուկս հանրապետության աղաների չկամության, ստեղծել են գրական հրաշալի ստեղծագործություններ, որոնք անուրանալի մնայուն արժեքներ են նաեւ ողջ հայ գրականության համար։

Իսկ Արցախից ելած այն տասնյակ ու տասնյակ երախտավորնե՞ր՝ գիտնականներ, գրողներ, արվեստագետներ, որոնց անունները զարդարում են ինչպես Հայաստանի, այնպես էլ այն ժամանակվա խորհրդային երկրի գիտության ու մշակույթի ամենատարբեր բնագավառները։ Հիշենք շուշեցիներ բժշկապետ Լեւոն Հովհաննիսյանին, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանին, դերասան Վաղարշ Վաղարշյանին, բուսաբան Արմեն Թախտաջյանին, ծմակահողցի էլեկտրամեխանիկ Անդրանիկ Իոսիփյանին, թաղավարդցի անասնաբույծ Երվանդ Արզումանյանին... Այս ցուցակը կարելի է շարունակել, մինչեւ որ հասնենք նորերին՝ ճարտարցի ակադեմիկոս Արտյոմ Սարգսյանին, նորշենցի գրող Լեոնիդ Հուրունցին, ստեփանակերտցի հրապարակախոս Զորի Բալայանին...

Մի մեծ ու քաղաքակիրթ ազգի կբավանակացներ այսքան շքեղ մի աստղաբույլ, որը Լեռնային Ղարաբաղն է տվել, Արցախական աշխա՞րհը։

Վերջերս Արցախում էր եղել ամերիկյան լրագրողներից մեկը, որ, հայրենիք վերադառնալով, ասուլիսներ է ունեցել, պատմել իր ազատության համար մարտնչող փոքրիկ մարզի մեծ հաջողությունների մասին։ Թերահավատ ունկնդիրները զարմացած հարց են տվել. ***«Բայց մի՞թե հնարավոր է, որ փոքրիկ մի մարզ շուրջ 140-200 հազար բնակչով, այդպիսի հաջողություններ ունի այն կռվում, որ մղում է յոթմիլիոնանոց Ադրբեջանի պես պատկառելի մի հանրապետության դեմ, երբ սրա թիկունքում էլ, ո՞վ գիտի, ինչքան ուրիշներ կան...»։***

Եվ լրագողը նրանց բացել է գաղտնիքը։ Ասել է՝ այդ փոքրիկ մարզը, նախ կռվում է իր ազատության համար, ապա կա ամենակարեւորը. այն խիզախ կռվողների երկիր է, ճանաչված զինվորների ու զորապետների հայրենիք։ Հենց միայն Խորհրդային Միությանը չորս մարշալներ է տվել, իսկ գեներալների մասին խոսելն ավելորդ է...

Չորս մարշալներ՝ մի փոքրիկ մարզից։ Սա ինքնին շատ բան է ասում...

Եվ այսքանից հետո, երբ 88-ին մարզը ոտքի է ելել իր ազգային ու մարդկային իրավունքները պաշտպանելու, պահանջում էր բաժանում խորթ մայր Ադրբեջանից, Բաքվում զայրացած իրենց ձայնը բարձրացրին հանրապետության նախկին ու ներկա ղեկավարները՝ Իմամ Մուստաֆաեւը, Միրզա Իբրահիմովը, Այազ Մութալիբովը։ Ի՞նչն էր նրանց զայրույթի հիմքը. Լեռնային Ղարաբաղը՝ իրենց չարության զոհը եւ 70-ամյա գրկվածը, միշտ էլ ավելի բարեկարգ ու հարուստ է եղել, ավելի բարեկեցիկ ու ապահով, ավելի շատ մեծ մարդիկ է տվել, քան Ադրբեջանի մնացած շրջանները՝ միասին վերցրած, էլ ինչո՞ւ է դժգոհ, ինչի՞ց է փախչում։

Այո՛, ավելի բարեկեցիկ ու ապահով, բայց շնորհիվ իր ավանդական ջանասիրության, իր աստվածատուր ձիրքերի ու առասպելական տքնության։ Եվ, իհարկե, նաեւ ի հեռուկս ձեր չկամության ու չար ջանքերի։

ԵՐԵՎՈՒԹԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Խորհրդային երկրում 1985 թ. գարնանը տեղի ունեցած սուտ հեղափոխությունը, որ պետական շրջաններում կոչվում էր վերակառուցում եւ հրապարակը լցրել էր ժողովրդավարության, հրապարակայնության, անհատի ու ազգի իրավունքների պաշտպանության բարձրագոչ խոստումներով, երեւի թե ամենից շատ ոգեւորել էր հայ ժողովրդին, իսկ հայ ժողովրդի մեջ էլ՝ արցախահայությանը։ Մարզի ամբողջ հայ բնակչությունը, ղեկավարներից (չհաշված Կեւորկովին ու նմաններին) մինչեւ հողագործ ու անասնապահ, բանվոր ու արհեստավոր, միանգամից խանդավառ եռուզեռ ապրեց՝ հուսալով իրականացած տեսնել տասնամյակների իր երազանքը։ Աշխատավորության խմբեր ու անհատներ էին գալիս Երեւան, առաջարկում էին վերստին բարձրացնել մարզը Հայաստանին վերամիացնելու հարցը, պահանջել ու պայքարել, որ այն վերջնական լուծում ստանա։ Այդ ներկայացուցիչների ու առանձին խմբերի ծայրը Մոսկվա էր հասել. գնում էին, իրենց ծանոթների միջոցով կամ ինքնուրույն դիմում կուսակցական ու կառավարական վերին մարմիններին... Եվ որովհետեւ ոչինչ չտվող կարգախոսների ու շռայլ խոստումների ժամանակ էր, արժանանում էին բարյացակամ ընդունելության, տուն էին դառնում հուսավառ տրամադրություններով, մոտալուտ երջանկության սպասումով։

1987 թ. դեկտեմբերին արցախցի աշխատավորական պատկառելի մի պատվիրակություն, որի կազմում կային դեպուտատներ (մեկը՝ ԽՍՀՄ ԳԽ-ի), պաշտոնյաներ, մշակույթի անվանի մարդիկ, ուղեւորվեց Մոսկվա, հանդիպումներ ունեցավ մի շարք ղեկավարների, նույնիսկ ԳԽ-ի Նախագահության նախագահի տեղակալ Դեմիչեւի

հետ, վերադարձավ այն համոզմամբ, թե երկրի ղեկավարությունը պատրաստ է մարզը միացնելու Հայաստանին: Դեմիչեւն, օրինակ, պատվիրակությանն ասել է՝ ոչինչ չի կարող խանգարել, որպեսզի հայկական ինքնավար մարզի հիմնական բնակչության միահամուռ-միասնական ցանկությունը կատարվի: Հասկացրել է նաեւ, որ դրա համար անհրաժեշտ պիտի լինի նոր համախոսականներ կազմակերպել:

Մի քանի օր հետո սկսվեց դիմում-համախոսականների հոսքը Ստեփանակերտից Մոսկվա: Այս գործի գլուխ էր կանգնած Զորի Բալայանը, եւ չէր կարելի կասկածել, որ ամեն ինչ կատարվելու է բարեհաջող ու բարձր մակարդակով. մի քանի օրում Մոսկվա տարան ավելի շատ համախոսականներ, քան 1966 թվականին էր եղել:

Արցախյան երկրորդ պատվիրակությունը Մոսկվա հասավ հունվարի 7-ին: Նրա ղեկավարն էր ԽՍՀՄ ԳԽ-ի պատգամավոր Վազգեն Բալայանը (Մարտունու շրջանի Սոս գյուղից), իսկ անդամները՝ Արկադի Կարապետյանը (Ստեփանակերտ), Սերժ Առուշանյանը (Ասկերան), Գուրգեն Շահրամանյանը (Մարտունի), Արթուր Մկրտչյանը (Հադրութ) եւ ուրիշներ, բոլորն էլ հեղինակավոր մարդիկ, որոնք ներկայացնում էին մարզի քաղաքային ու գյուղական աշխատավորությունը, մտավորական շրջանները: Երեւանում սրանց միացավ նախկին հադրութեցի, տնտեսագետ Իգոր Մուրադյանը:

Մոսկվա հասնելուն պես պատվիրակությունը հայտնվեց ԽՄԿԿ Կենտկոմի ու ԳԽ Նախագահության ընդունարաններում, եւ արդյունքն այն եղավ, որ հունվարի 8-ին ընդունեց ԳԽ-ի Նախագահության նախագահի առաջին տեղակալ Պ. Ն. Դեմիչեւը, իսկ հունվարի 11-ին՝ Կենտկոմի ազգային հարաբերությունների սեկտորի վարիչ Վ. Ա. Միխայլովը:

Պատվիրակությունը Դեմիչեւին հանձնեց մարզի բոլոր մակարդակների պատգամավորների, ղեկավար աշխատողների եւ աշխատավորության հեղինակավոր ներկայացուցիչների (260 հոգի) հանրագիրը, որի մեջ ո՞ր երրորդ անգամ նկարագրվում էր մարզի հայության զաղութային վիճակը եւ պահանջվում էր մարզը հանել ադրբեջանական հանրապետության կազմից, վերամիացնել Հայաստանին:

Պատվիրակությունը կուսակցության Կենտկոմի ազգային հարաբերությունների սեկտորի վարիչ Վ. Ա. Միխայլովի ընդունելությանը զնացել էր բավական սրտովացած. չէ՞ որ Դեմիչեւը ոչ միայն Գերագույն խորհրդի Նախագահության նախագահի առաջին տեղակալն էր, այլեւ կուսակցության Կենտկոմի քաղբյուրոյի անդամը, որի բարյացակամ վերաբերմունքը չէր կարող իշխող չլինել նաեւ Կենտկոմում: Արցախցիները Միխայլովին հանձնեցին հանրագրի երկրորդ օրինակը, մարզի հարյուրավոր բնակիչների անհատական ու խմբակային բազմաթիվ նամակներ եւ հարցին վերաբերող հին ու նոր կարեւոր փաստաթղթեր: Եվ Միխայլովից էլ ստացան հարցի լուծման հեռանկարի խոստում ու գործը շարունակելու խրախուսանք:

Պատվիրակությունն Արցախ վերադարձավ հունվարի 13-ին եւ մարզը գտավ փոթորկված վիճակում: Եթե առաջները մարդիկ իրենց տրտունջներն ու Հայաստանին միանալու ցանկությունն արտահայտում էին կիսաձայն, զգուշանալով շրջապատից (Կեւորկովն ու մնացած «ով»-երը, աչք ու ականջ դարձած, հետեւում էին, որպեսզի *«դաշնակցական տրամադրությունները»* չտարածվեն, չընդգրկեն աշխատավորա-

կան լայն զանգվածներին), ապա այժմ ժողովներ ու զանազան հանրահավաքներ էին անում, տասնամյակներ շարունակ հոգու խորքերում պահած դժգոհությունն ու զայրույթն արտահայտում: Եվ ամենուրեք նույն աներեր վճիռն էր թնդում՝ Արցախը պետք է հանել Ադրբեջանի կազմից, միացնել Հայաստանի Հանրապետությանը: Միացո՜ւմ, միացո՜ւմ: Հունվար էր, ձմռան ցուրտ, բայց օդը շիկացած էր այդ ամենազոր հրեղեն բառից:

Այն օրերին արցախահայության տրամադրությունը բաժանում էր նաև հարեւան ադրբեջանցիների մի զգալի մասը: Հայտնի է, որ բազմաթիվ ադրբեջանցիներ, մանավանդ աշխատավորության հասարակ ներկայացուցիչներ ու մասնագետներ, որոնք ակընկալություն չունեին պաշտոնների ու վերեւներից կաթող արտոնությունների եւ զբաղահատում էին արդարությունն ու հասարակության առողջ անդորրը, ստորագրել էին արցախահայության հանրագրերին, նույնիսկ հանրահավաքներում բնաղատել ու դատապարտել Ադրբեջանի ղեկավարության խտրական քաղաքականությունը մարզի հանդեպ:

Իսկ հայե՜րը, հայությո՜ւնը, հին Արցախական աշխարհի տերերն ու մեծ զբրկյալնե՜րը ոտքի էին ելել եւ անհողդողդ վճիռ ունեին այս անգամ պայքարել մինչեւ վերջ, մինչեւ հաղթանակ: Հաղթանա՜կ, որ միացումն էր լինելու:

Արցախահայության երրորդ պատվիրակությունը կազմված էր հիմնականում մարզի մշակույթի գործիչներից:

Ահա պատվիրակության կազմը. Վաչե Սարուխանյան (թատերական գործիչ, պատվիրակության ղեկավար), Գուրգեն Գաբրիելյան (բանաստեղծ), Վարդան Հակոբյան (Գրողների միության մարզային բաժանմունքի քարտուղար), Հրաչյա Բեգլարյան (բանաստեղծ), Էդուարդ Ղազարյանց (երգահան), Գոհարիկ Սարինյան (սոց. աշխ. հերոս), Բենիկ Օվչյան (ժողովրդական արտիստ), Ժաննա Գալստյան (վաստակավոր արտիստուհի), Արմեն Հակոբյան (քանդակագործ):

Մոսկվայում պատվիրակությանն անմիջապես տեր են կանգնել պրոֆ. Եպիսկոպոսյանը, գեներալ Հարությունովն ու մեր մյուս եռանդունները, եւ փետրվարի 10-ին նրանց ընդունել է ԽՄԿԿ Կենտկոմի ազգային հարաբերությունների սեկտորի վարիչ Վ. Ա. Միխայլովը: Խոսել են պատվիրակության բոլոր անդամները, ջահել ու լեզվանի Վաչե Սարուխանյանից մինչեւ տարեց, ալեհեր Բենիկ Օվչյանը: Պատմել են մարզի հայության ցավերի ու հոգսերի մասին, յուրաքանչյուրն իր բնագավառի վիճակն է նկարագրել, ներկայացրել մարզի գաղութային վիճակը եւ առաջարկել նրա փրկության միակ ճանապարհը՝ վերամիացումը Հայաստանին: Այն ժամանակ Միխայլովը դարձյալ սրտապնդիչ խոսքեր է ասել եւ խոստացել պատվիրակության պահանջը հաղորդել վերեւներին:

Գուրգեն Գաբրիելյանն իր օրագրում նշում է, թե վերջում, բաժանվելիս, ինքն իր սովորության համաձայն Միխայլովի մեջքը թփթփացրել եւ հարց է տվել.

– Վերջապես մենք իրավունք ունե՞նք լավատես լինելու. կա՞ թեկուզ մի փոքրիկ վարդագույն հույս:

Եվ Կենտկոմի ներկայացուցիչը խանդավառությամբ, ժպտուրախ հավատիացրել է.

- Իսկ ինչո՞ւ փոքրիկ եւ ինչո՞ւ վարդագույն։ Կա մի մեծ ու կարմիր հույս, որը ձեզ է սպասում։

Այս մեծ ու կարմիր հույսի խոստումից երջանկացած պատվիրակությունը Մոսկվայում մնացել է եւս մի քանի օր։

Փետրվարի 12-ին մեծ ընդունելություն է եղել Հայաստանի կառավարության մոսկովյան մշտական ներկայացուցչությունում, ուր արցախյան մուսետիկներին տեսնելու եւ լսելու էին հավաքվել մայրաքաղաքում բնակվող հարյուրավոր հայեր։ Բոլորին պարուրել էր մի գերագույն երջանկություն։ Կենտկոմի համարյա երկրորդական մի աշխատողի ոչինչ չորոշող խոստումն ասես նրանց էր պարգեւել Արցախը, եւ մնում էր մի ձեւական բան՝ Կենտկոմի որոշումը կամ Գերագույն խորհրդի հրամանագիրը։ Տրամադրությունների այս հեղափոխության հիմքը հավանաբար ոչ այնքան խոստումն էր եղել, որքան ժամանակի շունչը, մթնոլորտում թեւածող կարգախոսներն ու հայտարարությունները *Վերակառուցում* կոչված այն երեւույթի, որն սկզբնապես թվում էր այնպես մարդկային, արդար ու հեղաշրջող։ Մշտական ներկայացուցչության ղեկավար Հայկազյանն էլ ոգեւորված խոստացել էր կազմակերպել պատվիակության հանդիպումը Հայաստանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հետ, որն այն օրերին անպայման պիտի Մոսկվա ժամաներ։

Դեմիրճյանը Մոսկվա ժամանեց, իհարկե, սակայն հրաժարվեց ընդունել Ղարաբաղի պատվիրակությանը։

Պատվիրակությանն սպասում էին Արցախում։ Սպասում էին ու գործում։ Խլվլում էր ամբողջ մարզը։ Շրջկենտրոններում ու գյուղերում ժողովրդական ցույցեր էին անում, ժողովների էին հավաքվում, ընդունում որոշումներ, ուղարկում վերեւները, Մոսկվա։

Արցախ էին հորդացել Ադրբեջանի ղեկավարները (Կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովը, երկրորդ քարտուղար Կոնդրատեւը, ԿԿ բաժնի վարիչ Ասադովը եւլք), ինչպես նաեւ ԽՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատակից Յաշինը։ Նրանք նախ առատ խոստումներ էին տալիս մարզի տարբեր վայրերում ունեցած հանդիպումների ժամանակ, երդվում հենց տեղնուտեղը վճռել ամեն խնդիր ու ցանկություն, եթե միայն մեջտեղից վերանա այդ չարաբաստիկ միացման թե միավորման պահանջը։ Սակայն պայծառ հեռանկարներով հարբած բազմությունները լսել անգամ չէին ուզում այդ հիմար խոստումները եւ միաբերան պնդում էին իրենց վճիռը... Այն ժամանակ մեծապետական պարոնները միանգամից կերպարանափոխվեցին, մտան իրենց հին ու սովորական դերի մեջ։ Կոնդրատեւը, օրինակ, հայտարարեց, թե վերակառուցումը սովորական միջոցառում է, որի օրերը հաշված են, ղարաբաղցիները զուր են նրա հետ որեւէ հույս կապում։ Բաղիրովը բառացի թափ տվեց արցախահայերի դեմ, սպառնաց, թե հաշվեհարդար կտեսնի խռովարարների հետ, որոնք ոտնահարում են խորհրդային օրինականությունն ու ժողովուրդների ինտերնացիոնալ միասնությունը։ Իսկ Ասադովը հրապարակեց մի մեծ գաղտնիք, ասաց՝ Ղարաբաղի սահմաններում պատրաստ են եւ իրենց հրամանին են սպասում հարյուր հազար զինված մուսուլմաններ... Եվ այսքանից հետո էլ խոսեց Կեւորկովը.

- Ա՛յ կողոհասաստ ղարաբաղցիներ,- ասաց,- ուշի՛ եկեք, եթե չեք ուզում այս մարզը դարձնել հայոց նոր գերեզման։

Հայտնի է նաեւ արդյունքը։ Փետրվարի 16-ի ու 17-ի գիշերները Արցախ հասցվեցին ներքին զորքերի միավորումներ, որոնք էլ սկսեցին վերահսկել մարզ մտնող բոլոր ուղիները։

Իսկ Արցախական աշխարհը ոտքի վրա էր, պատրաստ իր պատմության երկար ճանապարհի ամենավճռական քայլերից մեկին, թերեւս հենց ամենավճռականին։ Վերամիավորման պահանջով որոշումներ էին ընդունել մարզի բոլոր չորս շրջխորհուրդները (բացի Շուշիից), որոնք միաժամանակ պահանջում էին նույնպիսի որոշում ընդունելու համար հրավիրել մարզխորհրդի արտակարգ նստաշրջան։ Մարզխորհրդի արտակարգ նստաշրջան հրավիրելու համար կազմվել էր նաեւ պահանջվող թվով դեպուտատների ստորագրությամբ մի վճիռ-կարգադրություն։

Իսկ Ադրբեջանի ղեկավարությունը, ինչպես եւ նրա հարկադրանքով Արցախ ժամանած ղեկավար մոսկվացիները, ոտուձեռ ընկած փորձում էին կասեցնել վերահաս ***«աղետը»։***

Ստեփանակերտի կենտրոնական հրապարակը գիշեր-ցերեկ լեփ-լեցուն էր վճռական պայքարի ելած եւ ***«միացում-միացում»*** վանկարկող արցախցիներով, որոնց մեջ եթե մեծամասնություն էին կազմում ստեփանակերտցիները, ապա առկա էին նաեւ մյուս բոլոր շրջաններից ժամանած հոծ բազմություններ։

ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՊՈՌԹԿՈՒՄԸ

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ՊԱՏՄԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՆԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ԴԵՊՔԵՐԸ

Կրկնենք. Խորհրդային Երկրում ուրիշ ոչ մի տեղ այնպես անվերապահորեն ու անմնացորդ չէին հավատում Երկրի նոր ղեկավար Միխայիլ Գորբաչովի հայտարարած վերակառուցմանը եւ սրան ուղեկցած կոչերին ու կարգախոսներին, ինչպես Լեռնային Ղարաբաղում: Եվ, հավանական է, այստեղ ամենից շատ ոգեւորված էին նրանով, որ Գորբաչովը ներկայանում էր որպես հավատարիմ լենինյան, ճաճուպատառ էր լինում ապացուցելու, թե ինքը գիշեր-ցերեկ առաջնորդվում է Լենինի ուսմունքով, պատգամներով, անձնական օրինակով: Իսկ այն ժամանակ բոլորին էր հայտնի, նույնիսկ թերուսներին ու անգրագետներին, որ Լենինն ազգային բաղաքականության հիմնաքար է համարել ինքնորոշումը: Մանավանդ ազգային փոքրամասնության ինքնորոշման իրավունքը, որը հոչակել էր վեր ու վճռական, բան տիրապետող ազգերի կամքը, պետությունների ուժն ու դիրքը:

Մոլագարության հասնող այս հավատի ու համոզումի մթնոլորտում ոչ ոքի մտքով իսկ չէր անցնում բնական հայացքով նայել այդ Լենինի բարոզած *«ճշմարտություններին»* ու գործունեության զոնե ամենաէական փաստերին, ա՛յ թեկուզ հենց այդ *«ինքնորոշում»* կոչված հարցո՛ւմ, որպեսզի տեսնի, ճանաչի իսկական Լենինին, ղարաբաղցու ասած՝ մաք մնա այն հրեշավոր հակասությունից, որ գոյություն է ունեցել նրա խոսքի ու գործի, գրածի ու կատարածի միջեւ: Այս հիմա է, որ կարող ենք ասել՝ եթե լենինիզմն այն է, ինչ Լենինն է գրել, ապա ամենակատաղի հակալենինյանն էլ ինքը՝ Լենինն էր, երբ պետք է իրականացներ իր գրածները:

Եվ եթե այս է Լենինը, ապա ի՞նչ պիտի լիներ հավատարիմ լենինյանը։ Մանավանդ, երբ մինչեւ հիմա էլ այս երկիրը քանդող բոլոր ղեկավար շառլատանները հենց այդ պիտակով են ներկայացել ժողովրդին՝ ճամփա՝ տվեք եւ հետեւեցե՞ք մեզ՝ հավատարիմ լենինյանների՞ս։

Ինչեւէ։ Բացվում էր 1988-ի փետրվարի 20-ը, որ դառնալու էր լեռնաստանի պատմության ամենանշանակալից օրերից մեկը։ Եթե ո՛չ ամենանշանակալիցը։ Նախորդ օրերի ժողովրդական հանրահավաքների ընդունած վճիռներով, ժողովրդական պատգամավորների շրջանային չորս խորհուրդների, կուսակցական որոշ շրջկոմների պլենումների նիստերում ընդունված որոշումներով պահանջվում էր, որպեսզի մարզխորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրվի, ընդունվի որոշում Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմից հանելու եւ Հայաստանին միացնելու համար։ Մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կեւորկովն ու մարզգործկոմի նախագահ Վ. Օսիպովը, որոնք այդպիսի որոշումը ոչ միայն անցանկալի էին համարում, այլեւ թշնամական ու անհանդուրժելի, հանրապետության ղեկավարների ու միութենական ղեկավարության ներկայացուցչի հետ միասին, կաշվից դուրս էին գալիս ծրագրված նստաշրջանը խափանելու համար։

Հանրապետության ղեկավարներն ու Մոսկվայի ներկայացուցիչն արդեն համոզվել էին, որ խաղաղ խոսքով անհնար է կասեցնել <u>աղետը</u>, եւ կարգադրեցին փակել մարզի շրջաններն Ստեփանակերտին կապող ճանապարհները, որպեսզի դեպուտատները քաղաք հասնելու հնարավորություն չունենան, եւ մարզխորհրդի նստաշրջանը տապալվի։ Առայ՞ժմ, իսկ հետո՞, հույս ունեին, մի ճար կանեն, կխափանեն ճակատագրականը։

Սակայն նստաշրջանի կազմակերպիչներն անդրդվելի էին. շրջանների դեպուտատներից ոմանք Ստեփանակերտում էին, ուրիշներն էլ տեղ հասան լեռնային կածաններով, անտառներով, եւ ժամը 16-ին հրավիրված նստաշրջանն սկսվեց 20-ին, մարզխորհրդի 149 դեպուտատներից 110-ի ներկայությամբ։

Բաղիրովն ու Կեւորկովը սրանից հետո եւս փորձեր արին նստաշրջանը բեկանելու, սակայն չհասան իրենց նպատակին։ Եվ նստաշրջանը, դեպուտատների բուռն ու սրտաբաց ելույթներից, միաձայն ու միահամուռ առաջարկություններից հետո ընդունեց հետեւյալ պատմական, մարզի հայության կենսագրության մեջ նոր դարագլուխ սկզբնավորող որոշումը.

«Լսելով եւ քննարկելով ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների Մարզային խորհրդի դեպուտատների ելույթներն Ադրբեջանական ԽՍՀ ու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առաջ միջնորդելու՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ կազմ մտցնելու մասին, Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշեց.

Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորության ցանկություններին՝ խնդրել

Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին ու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր գիտակցություն ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրձերի նկատմամբ եւ լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմին տալու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջ՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմին տալու հարցը դրականորեն լուծելու համար։

1988 թ. փետրվարի 20,
Ստեփանակերտ»։

Ականատեսները պատմում են, որ Բաղիրովն ու Յաշինը նստաշրջանից առաջ եւ նրա ընթացքում ու հետո համարյա անընդհատ հեռախոսով կապված են եղել Մոսկվայի, ԽՄԿԿ Կենտկոմի ապարատի հետ, հաղորդել են տեղեկություններ՝ հիմնականում ապակողմնորոշող ու իրականությունն աղավաղող եւ, այսպիսով, նախապատրաստել են Կենտկոմի սխալ կարծիքն ու դրա հիման վրա հաջորդ օրը, փետրվարի 21-ին, ընդունելիք «Լեռնային Ղարաբաղի դեպքերի մասին», ըստ էության դատապարտող, որոշումը։

Մարզխորհրդի նստաշրջանի որոշումը հապարակվեց «Խորհրդային Ղարաբաղ» (հայերեն եւ ռուսերեն) թերթի փետրվարի 21-ի համարում, չնայած Բաղիրովն ու Կեւորկովը կարգադրել էին այն չհրապարակել, իսկ Կեւորկովը կատարել էր նաեւ միամիտ-բախտախնդրական մի կարգադրություն եւս. մարզգործկոմի նախագահ Վ. Օսիպովին ասել էր՝ մարզգործկոմի կնիքն առ, գետնի տակն անցիր, որպեսզի որոշումը չկնքվի-չհաստատվի։ Եվ այդպես էլ որոշումը մնացել էր չկնքված։

Այդ օրերին, Արցախի հետ միասին, փոթորկված Երեւանը, որ թափվել էր Լենինի (այժմ՝ Հանրապետության) ու օպերայի հրապարակները եւ իր սրտակցությունն էր ատահայտում արցախահայությանը՝ ինքն էլ իր ղեկավարությունից պահանջելով սատարել հարցի լուծմանը, պայքարել մինչեւ վերջ, մինչեւ արդարության հաղթանակ, փետրվարի 21-ին առավել փոթորկվեց, հիմա արդեն ընդվզեց կատարվածի դեմ, որովհետեւ առավոտյան առել էր ԽՄԿԿ Կենտկոմի որոշման լուրը եւ գիտեր, որ այն ընդունվել է Ադրբեջանի ղեկավարության պահանջով եւ Հայաստանի ղեկավարության անտարբեր թողտվությամբ։

21-ին արդեն Երեւանում էին Արցախի սուրհանդակները, որոնք իրենց հետ բերել էին «Խորհրդային Ղարաբաղում» հրապարակված որոշումը՝ հուսալով, թե այն կբհանձնեն Հայաստանի ղեկավարությանը, եւ նա կլծվի գործին, Արցախի պայքարին տեր կդառնա, կգլխավորի այն, եւ խնդիրը զերծ կմնա խարխափումներից։ Փորձեցին որոշումը հանձնել կուս. Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանին։ Սակայն Դեմիրճյանի օգնականը, հայտնի չէ՝ նրան զեկուցել էր թե ոչ, Արցախի սուրհանդակներին ընդունարանից ետ վանեց՝ խորհուրդ տալով, որ նրանք իրենց *«շարը»* հեռու պահեն Հայաստանի Կենտկոմից։

Իսկապես հայտնի չէր եւ անհնար էլ կլիներ պարզել՝ օգնականն Արցախի ներկայացուցիչների խնդիրը զեկուցե՞լ էր Դեմիրճյանին, թե՞ մերժման վճիռն ինքնուրույն էր հանել։ Սակայն պարզ է մի բան. Դեմիրճյանն այդպես էլ չխառնվեց Արցախի *«շարին»։* Մինչդեռ խառնվելն ու զլխավորելն իր սրբազան պարտքն էր, թերեւս նաեւ իր անձնական շահի թելադրանքը։ Նախընթացին միութենական կենտկոմում աննըպաստ կարծիք էր ստեղծվել իր զլխավորած Հայաստանի ղեկավարության վերաբերյալ։ Դա մի քանի անգամ իր արտացոլումը գտավ նաեւ «Պրավդայի» այն օրերի պաշտոնական հրապարակումներում։ Նման վերաբերմունքի վերջը սովորաբար լինում էր պաշտոնանկ լինելը, եւ անշուշտ դա էր լինելու նաեւ Դեմիրճյանի պաշտոնավարության վախճանը։ Բայց այս պարագային ավելի լա՞վ չէր՝ նա իր պաշտոնին հրաժեշտ տար հայրենասիրական մի ձեռնարկի մեջ լուսապսակ վաստակելով, քան թե իր ժողովրդի համազգային պոռթկմանն անհաղորդ մնալով։

Փետրվարի 22-ի երեկոյան Դեմիրճյանը հայկական հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ եւ արտահայտեց, իբր թե, իր կարծիքն արցախահայության պահանջի վերաբերյալ։ Ահա այն. ***«Այդ ռեզիոնում զոյություն ունեցող ազգային-տերիտորիալ կառուցվածքի վերանայմանն ուղղված գործողություններն ու պահանջները հակասում են Հայկական ԽՍՀ եւ Ադրբեջանական ԽՍՀ աշխատավորների շահերին»։***

Ուրեմն, Արցախի միացման պահանջը հակասո՛ւմ է Հայկական ԽՍՀ աշխատավորների շահերին։ Բայց Հայկական ԽՍՀ աշխատավորներն այն օրերին հարյուր հազարներով, միահամուռ ելել էին փողոցները եւ երդում-հավատ էին անում, թե կողմ են ու պաշտպանում են Արցախի պահանջը։ Մի՞թե նրանք անտեղյակ էին իրենց շահերից։

Իսկ մի քանի օր անց Հայաստանի նույն ղեկավարը, հրապարակը լցված ցուցարարների պահանջով, դժկամությամբ ներկայացավ ցույցի վայր եւ արհամարհանքով արտահայտեց նրանց հանրությունը վիրավորող այսպիսի մի խոսք. ***«Ի՞նչ է, ձեզ չի զոհացնում այնքանը, որ վեր եմ կացել, իմ ոտքով եկել այստեղ»։***

Շատ է ցավալի, որ այն ժամանակ այսպիսին էր Հայաստանի ու հայ ժողովրդի առաջին ղեկավարի կեցվածքը։

Իսկ եթե ուրիշ կե՞րպ լիներ, այնպե՛ս, ինչպես պահանջում էր մեր ազգային շա՞հը, Արցախի խնդի՞րը։ Անկասկած է, որ իրադրությունը կդասավորվեր ավելի բարենպաստ՝ մեր ազգի, Հայաստանի, Արցախի համար, եւ մենք կփրկվեինք այնպիսի ձախողանքներից, որոնք հետեւանք էին ադրբեջանական սանձարձակության ու հայ ղեկավարների երկչոտ ու անվճռական, հաճախ նույնիսկ անձնատրական քայլերի։ Իսկ բոլոր այն դեպքերում, երբ հայ ղեկավարները հանդես են եկել ժողովրդի ու նրա ներկայացուցիչների (ասենք՝ Գերագույն խորհրդի պատգամավոր ազգակիցներ) հետ միահամուռ, վճռաբար դիմադրել են թորքի եւ վերին հակառակորդի կամայականություններին, մեզ ուղեկցել է հաջողությունը։

Եվ այսպես. Արցախն ընդունել էր իր ճակատագրական վճիռը, այն տարածել։ Աշխարհի ռադիոձայներն ու լրատվական մյուս աղբյուրներն այդ մասին էին խոսում։

Հայաստանը նրա հետ էր, Երեւանը՝ փողոցներն ու հրապարակները լցված, պահանջում էր հարգել իր հարազատների որոշումը։ Հայտնի է, որ ոտի են ելել նաեւ ըսփյուռքահայությունն ու խորհրդային մյուս հանրապետություններում ապրող հայերը։ Ոչ շատ ժամանակ անց ամերիկահայ մի լրագրող-հասարակական գործիչ պիտի հաստատեր, որ Արցախի խնդիրն առաջին իսկ օրվանից բարձրացրեց ամբողջ հայությանը, մոռացնել տվեց կուսակցական ու այլազան ամեն տարաձայնություն, միասնական ու կուռ շարքերի մեջ առավ մեր ազգության բոլոր խավերին ու խմբակցություններին։

Եվ թորոն ու իր ղեկավարությունն էլ գործում էին միահամուռ ու այնպես վճռական, ասես ելել են իրենց վերջին ու ամենավճռական ճակատամարտին։

Բաղիրովն իր համհարզներով գտնվում էր Ստեփանակերտում։ Եվ նրա հանձնարարությամբ էլ Աղդամ էին ժամանել հանապետության մշակույթի անվանի մի շարք գործիչներ՝ Բ. Վահաբզադեն, Ֆ. Մեհդին, Ս. Ալիյարովը, Խ. Մամեդովը, Ջ. Գուլիեւը, Մ. Աբբասովը եւլք («Սոցալիստիչեսկայա ինդուստրիա», 1988, մարտի 27)։

Միութեանական Կենտկոմի որոշումն ստանալուն պես Ստեփանակերտում Բաղիրովը կուսակցության մարզկոմի բյուրոյի նիստ գումարեց եւ, առանց երկար-բարակ քննարկում կազմակերպելու, մարզկոմի ընդունելությանն ու հավանությանն արժանացրեց Կենտկոմի որոշումը, ապա հանձնարարեց, որ առանց վայրկյան կորցնելու, բյուրոյի անդամներն շտապեն շրջանները, շրջկոմների պլենումների նիստեր հրավիրեն, այդ մակարդակներում եւս ապահովեն Կենտկոմի որոշման հավանությունը։ Իսկ ինքը սուրաց Աղդամ, այնտեղ հանդիպեց Ստեփանակերտի «խառնակչությանը» հետեւողների խմբի հետ, տվեց ղեկավար ցուցումներ ու վերադարձավ Ստեփանակերտ, ուր չտեսավ ու չլսեց մխիթարական որեւէ բան. շրջաններում, Շուշիից բացի, անհնար է ընդունել տալ նպաստավոր որոշում, հակառակը, կուս. շրջկոմների պլենումների անդամները պահանջում են հրավիրել կուսակցական մարզային կոնֆերանս կամ գոնե պլենում եւ հավանություն տալ մարզխորհդի որոշմանը։

Այս ամենը հավասարակշռությունից հանեց առանց այն էլ գլուխը կորցրած Բաղիրովին ու յուրայիններին։ Այդպես էր, որ փետրվարի 22-ին Աղդամը խլրտաց Կենտկոմի առաջին քարտուղարի հանձնարարությամբ ու Բաքվից հատուկ դրա համար հրավիրված նշանավոր գործիչների կոչերով։ Արշավանք սկսվեց դեպի Ստեփանակերտ։ Արշավանքին մասնակցում էին ոչ միայն դրա համար կազմ ու պատրաստ աղդամցիները, այլեւ շրջակա գյուղերի, նույնիսկ Բարդայի կողմերի ռազմաշունչ ներկայացուցիչները, շուրջ 8-10 հազարանոց մի *«զորախումբ»։* Ճանապարհին ոտի տակ տալով խրամորթի ու խանապատի այգիները, անասնապահական շենքերը, ջարդելով ու հրի մատնելով դեմ առած ամեն ինչ, *«զորախումբն»* առաջ էր շարժվում։

Որսորդական զենքերով, թրերով ու կացիններով, զանազան բութ առարկաներով զինված ավազակախումբը խնդիր ուներ Ղարաբաղն Ադրբեջանից բաժանելու որոշում ընդունած հայությանը մի լավ դաս տալ եւ հասկացնել, թե հետո՛ ինչ տեղի կունենա, եթե այդ որոշումից չհրաժարվեն։

Այս նախազգուշական միջոցառումն ուներ նաեւ մի ուրիշ կարեւոր նպատակ։ Այդօր առավոտյան Ստեփանակերտ էին ժամանել ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Գ.

Ռազումովսկին ու ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահի տեղակալ Պ. Դեմիչեւը։ Հարձակումն ու խժդժությունը դաս կլինեին նաեւ նրանց համար. կգնան Գորբաչովին կպատմեն, թե ինչպես Ղարաբաղի որոշումը համաադրբեջանական ահռելի ցասում է առաջացրել, եւ թե սա ի՞նչ հետեւանքներով է հղի, եթե չկանխվի հետագա զարգացումը։

Ավազակախումբն, իհարկե, հակահարված ստացավ Ասկերանի մատույցներում եւ, երկու զոհ տալով ու մի քանի տասնյակ վիրավորներով վերադարձավ Աղդամ։

Ավազակախումբը պատժվեց, իսկ շրջաններում ավելի սաստկացան բախումները։ Սահմանակից թորքի շրջանները շրջափակել էին մարզը, ճանապարհներին հանդիպող հայերին կողոպտում էին, ծեծում ու ջարդում։ Հեռուստատեսությամբ ցույց տվին մի քանի կիսամեռ հայերի, որոնք հասցվել էին մարզային հիվանդանոց։

Հաջորդ օրը տեղի ունեցավ կուսակցության Ղարմարզկոմի նիստը, որը մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնից ազատեց Բորիս Կեւորկովին եւ նրա տեղն ընտրեց Հենրիխ Պողոսյանին։ Մարզի նոր ղեկավարը Ռազումովսկուն ու Դեմիչեւին ուղեկցեց քաղաքի կենտրոնական հրապարակում հավաքված ցուցարարների մոտ։ Կենտրոնի ներկայացուցիչները փորձեցին հանգստացնել մարդկանց, խոստանում էին տեղ հասնելուն պես իրադրության մասին ճշմարիտ տեղեկություն հաղորդել եւ օգնել, որ արդար վճիռ հանվի։ Իսկ ցուցարարները նրանցից միայն մեկ խոսք էին սպասում՝ որ հարգվում է իրենց վճիռը, Ղարաբաղն անջատում են Ադրբեջանից։

Այդպես էլ ոչ մի գրույց չստացվեց։

Նույն օրը Երեւանում գումարվեց կուսակցական ակտիվի հանրապետական նիստ, որն ընդունեց որոշում՝ ***«Խնդրել ԽՄԿԿ Կենտկոմին՝ ազգային քաղաքականության խնդիրների առթիվ ԽՄԿԿ պլենում նախապատրաստելիս, այլ հարցերի շարքում, բազմակողմանիորեն քննության առնել նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցը»։*** Նախաձեռնողները երեւի մտածում էին, թե բավական համարձակ որոշում են հանել։ Իսկ ժողովուրդը դժգոհ էր, իր ղեկավարությունից պահանջում էր վճռական քայլեր եւ, այդպիսիք չտեսնելով, շարունակում էր ցույցերը, գործադուլները։ Հանրապետության մյուս քաղաքներից ու շրջաններից Երեւան էին հասնում դժգոհների ու պահանջողների նորանոր խմբեր։

Այդ օրերին ժողովրդական զանգվածների հետ էին հայ մտավորականները, որոնք ոչ միայն ուղղություն էին տալիս, հավասարակշռության մեջ պահում հասարակական պոռթկումները ու ընդվզումները, այլեւ փորձում էին կապ ստեղծել կենտրոնական իշխանությունների հետ, նրանց հասկացնել խնդրի էությունը, օգնել, որ ցուցաբերվի տրամաբանական մոտեցում, ընդունվի սահմանադրական որոշում։ Այսպես էր, որ հենց այդ օրերին ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովը հայ գրողներ Սիլվա Կապուտիկյանին ու Զորի Բալայանին ընդունեց նրանց խնդրանքով եւ այն հարցին, թե երկրի ղեկավարությունն ինչո՞ւ է ձգձգում Արցախի խնդրի լուծումը, պատասխանեց հարցով. դուք Արցախի մասին եք մտածում, իսկ պատկերացնո՞ւմ եք, թե այդ հարցի լուծումից հետո ի՞նչ պիտի կատարվի այն կես միլիոն հայերի հետ, որոնք

բնակվում են Բաքվում եւ Ադրբեջանի մյուս քաղաքներում ու գյուղական շրջաններում:

Բարի մարդիկ այս հարցի մեջ փորձեցին տեսնել մեծ երկրի ղեկավարի մտահոգությունը հայ ազգի ճակատագրի հանդեպ: Սակայն դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ ղեկավարն Ադրբեջանի տերերի՛ն էր հուշում նրանց անելիքը: Կամ, թերեւս, Ադրբեջանի տերերն արդեն նրան տեղեկացրել էին իրենց մոտակա անելիքի մասին: Եվ տվյալ պարագային այնքան էլ կարեւոր չէր, թե այս երկու վարկածից ո՛րն է առավել ճշմարիտը: Կարեւորն այն էր, որ Գորբաչովն ինքը՝ շատ լավ տեղյակ կատարվելիքին, կանգնեց չարագործների թիկունքում եւ հետագա ամբողջ ընթացքում պաշտպանեց նրանց:

Դրա առաջին ու ողբերգական ապացույցն էլ չուշացավ: Փետրվարի 26-ին Ադրբեջանի ու Հայաստանի ժողովուրդներին Գորբաչովը կոչ էր հղել, հաղորդում էր իր անհանգստությունը Ղարաբաղի հարցի ու նրա շուրջ ստեղծված տագնապալից մթնոլորտի համար, հայտնում, թե երկրի ղեկավարությունը գիտե, որքան չլուծված հարցեր կան (կարելի էր կարծել՝ դրանցից մեկն էլ Ղարաբաղի հարցը), որոնք պետք է լուծել, սակայն, ***«հանգիստ, ժողովրդավարության ու օրինականության սահմաններում»:***

Եվ այս կոչի, իբր, խաղաղարար տրամադրությանն անսալով՝ հայերը թողեցին գործադուլն ու հանրահավաքը եւ, չնայած շաբաթ օր էր, գնացին աշխատանքի, իսկ Ադրբեջանում փոթորկվեցին, գազազեցին (ո՞նց թե հարցը պիտի լուծել, այն էլ ժողովրդավարության ու օրինականության ոգով): Սկսվեց Սումգայիթի հայության ըսպանդը, եւ ծայր առան հակահայկական ոտնձգությունները Կիրովաբադում, Նուխիում, ԼՂԻՄ-ի սահմաններում:

Սումգայիթը դարձավ հասարակ, գործածական անուն-ընդհանրացում, որ նշանակում է զանգվածային բռնության ու կոտորածի, կողոպուտի ու անմարդկային չարագործությունների մոլեգնում, անսանձ ու անպատիժ ցեղասպանություն:

Փետրվարի 26-ի ետմիջօրեին էր սկսվել Սումգայիթի թորքերի հարձակումը հայերի վրա: Նախապատրաստված, հատուկ ծրագրով մշակված հարձակումը, որ շարունակվեց հաջորդ օրերին, ավարտվեց փետրվարի 29-ին:

Բավական է հիշել, որ նախապես անջատվել են քաղաքում ապրող հայերի բնակարանների հեռախոսները, հարձակվող խմբերն ունեցել են հարձակման ենթակա հայերի հասցեները, եւ ցույցերի ու հանրահավաքների, փողոցային երթերի կազմակերպիչներն են եղել քաղաքի կուսակցական ու խորհրդային ղեկավարները՝ քաղկոմի առաջին քարտուղար Մուսլիմզադեն, երկրորդ քարտուղար Բայրամովան, Բաքվից ժամանած բանաստեղծ Բ. Վահաբզադեն, գիտնականներ ու դերասաններ..., նույնիսկ հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահ Սեիդովը, որի ճառով 27-ին քաղաքի գլխավոր հապարակում բացված հանրահավաքն անցել է ***«Կորչե՛ն հայերը Սումգայիթից», «Մա՛հ հայերին», «Հայերը մեր հավատի թշնամիներն են ու առաջընթացի խանգարիչները, կոտորեցե՛ք նրանց»*** կոչերով:

— Չորս օր շարունակվել են անսանձ բռնությունները, կոտորածը, կողոպուտը, ջարդը: Վկաները հետագայում պատմում էին տասնյակ ու տասնյակ դեպքեր, երբ հայ

երեխաներին ու ծերերին, կանանց ու տղամարդկանց անխնա հոշոտել են արնախումների խմբերը, ապա դիակների վրա բենզին լցրել-վառել: Զարչարել ու Խստմնելի տանջանքների են ենթարկել իրենց զոհերին, հոտերով հարձակվել են միայնակ աղջիկների, հղի հարսների, նույնիսկ պառավ կանանց վրա, բռնաբարել, ապա ենթարկել այնպիսի խոշտանգումների, որոնցից կխորշեին վայրի գազաններն անգամ:

Իհարկե, եղել են դեպքեր, երբ հարձակման ենթարկվածները դիմադրել են, մի քանի ժամով հետաձգել իրենց ահավոր վախճանը: Պատահել է՝ ադրբեջանցի հարեվանն ի տանը թաքցրել է որեւէ հայի, ապա ծպտված հեռացրել դեպի Բաքու... Սակայն սրանք մասնավոր դեպքեր էին, մարդկայնության կաթիլներ, որոնք չեն կարող փոխել սումգայիթյան դժոխքի էությունը:

Այս վայրագության մասին տագնապի առաջին ահազանգը Բաքվից հնչեցրել են ամսի 26-ի երեկոյան: Հաջորդ օրերին արդեն ռադիոն ու հեռուստատեսությունն են հաղորդել հայերի զանգվածային ջարդերի մասին:

Վերին ղեկավարության եւ ո՛չ մի վերաբերմունք կամ միջամտություն: Վկաներն ու տանջահարության ենթարկվածները հետագայում պատմում էին, որ Սումգայիթի փողոցներում խորհրդային բանակի ջոկատներն անտարբեր դիտել են չարագործությունները: Երբ նրանց հարցրել են, թե ինչո՞ւ չեն միջամտում, չեն կասեցնում սպանդը, հրամանատարները լոկ ուսերն են թոթվել. ***«Կարգադրություն չկա»:***

Իսկ Գորբաչովն ու թիմակիցները, եթե այն օրերին ոչնչով չարձագանքեցին ցեղասպանությունը դատապարտող հատ ու կենտ մարդկանց, հետագայում հերստվում էին, եթե իրենց ներկայությամբ որեւէ մեկը համարձակվում էր կատարվածը համարել ցեղասպանություն:

Ինչ վերաբերում է ԼՂ-ի մարզխորհրդի որոշման շուրջ ստեղծված մթնոլորտին, ապա, դարձյալ Գորբաչովի ստոր խաղերի շնորհիվ, այն օրեցոր մթագնում էր, դառնում անտանելի՝ հայկական կողմի համար: Եթե ընդունման հաջորդ օրն իսկ այն դատապարտվել էր գորբաչովյան Կենտկոմում, ապա անշուշտ նույն Կենտկոմի, ավելի ճիշտ՝ գլխավոր քարտուղար Գորբաչովի հանձնարարությամբ, դրանից մեկ օր հետո, փետրվարի 22-ին, ԽՍՀՄ կազմի մեջ մտնող բոլոր հանրապետությունների Գերագույն խորհուրդների Նախագահությունները քննեցին ԼՂԻՄ-ում ստեղծված վիճակը եւ ընդունեցին իրենց հերթին այդ որոշումը դատապարտող վճիռներ: Սրանից հետո էր, մարտի 24-ին, որ ԽՄԿԿ Կենտկոմն ու ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդն ընդունեցին որոշում «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995 թթ. արագացնելու միջոցառումների մասին»:

Ուրեմն, զարգացումը կար, մնում էր ապահովել նրա արագացումը: Եվ ամենակարեւորը. կարծես մեծահոգաբար ասում էին նաեւ, թե մենք միայն այդքա՞ն կարող ենք, իսկ դուք խելոք պիտի լինեք, որպեսզի դրանով բավարարվեք եւ ընդունեք եղբայրական Ադրբեջանի հասցրած ու հասցնելիք հարվածները՝ մեկը մյուսից դաժան ու աննախադեպ: Քաղաքակիրթ հասարակարգին խորթ ու օտար:

ԽՍՀՄ ԳԽ-ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՈՒՎԻՍԻ 18-Ի ՆԻՍՏԸ

Այն հաղորդվում էր հեռուստատեսությամբ ու ռադիոյով, նվիրված էր միայն Ղարաբաղի խնդրին եւ ձգձգվեց բավական երկար, որովհետեւ ելույթ ունեցան բոլոր հանրապետությունների ներկայացուցիչները՝ յուրաքանչյուրի ԳԽ-ի նախագահը կամ կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղարը, կամ հենց երկուսն էլ եւ դրան զուգարած մի զրող, գիտնական կամ ***«աշխատավորության ներկայացուցիչ»***, որովհետեւ չնայած ԳԽ-ի Նախագահության նիստն էր, եւ խոսում էին միայն դեպուտատները, սակայն պիտի այն տպավորությունն ստացվեր, թե հարցը քննում է (ըստ էության՝ հայ էքստրեմիստներին դատապարտում է) ամբողջ Խորհրդային Միությունը՝ յուր հասարակության բոլոր խավերի մասնակցությամբ: Թե չէ, օրինակ, ինչո՞ւ պիտի խոսեին Զելենոգրադի շինարարական բրիգադիր Ն. Ա. Զլոբինը կամ Կիրովոգրադի մարզի տրակտորային բրիգադիր Ա. Վ. Գիտալովը, որոնք հարցից ոչ միայն անտեղյակ, այլեւ անընդունակ տեղեկանալու, զարմացած էին, թե ինչպե՞ս է լինում , որ այդ Ղարաբաղի հայերը չեն կարողանում հաշտ ու համերաշխ ապրել ադրբեջանցիների հետ, երբ իրենց բրիգադներում մի տասնյակից ավելի ***«ազգերի ու ազգությունների»*** ներկայացուցիչներ են աշխատում, իրար հետ հաշտ ու խաղաղ գործում են, ուտում-խմում, եւ ոչ մի անախորժ խնդիր չի առաջանում:

Նիստն, իբր, Նախագահության նախագահ Գրոմիկոն էր ղեկավարում, սակայն տնօրինություն անողը Գորբաչովն էր, որը Գրոմիկոյին թույլ տվեց միայն նիստը բաց հայտարարել, ապա սանձերն իր ձեռքը հավաքեց ու քշեց... Իսկ երբ խոսք պիտի ասեին ադրբեջանցիներն ու հայերը, առաջիններին մտերիմ-խրախուսող խոսքերով ***«մեջք էր թփթփացնում»***, երկրորդներին հարցակոխ անում, զայրացած զոմռում, ոնց որ իր դատած հացն ուտող այդ անիրավները ոչ միայն համարձակվել են նիստին ներկայանալ, այլեւ աներեսի պես խոսում էլ են...

Նիստը, հայտարարվածի համաձայն, նվիրված էր Լեռնային Ղարաբաղի մասին Հայաստանի ու Ադրբեջանի Գերագույն խորհուրդների որոշումների քննությանը: Հաղորդումներ արին Հայաստանի ԳԽ-ի Նախագահության նախագահ Ոսկանյանը, Ադրբեջանի նրա պաշտոնակից Թաթլիեւը, Լեռնային Ղարաբաղի կուս. մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանը, եւ կարելի էր այդքանով էլ հարցը փակված համարել, որովհետեւ արդեն պարզ էր ամեն ինչ. Ոսկանյանի զուսպ, ընդհանուր առմամբ խեղճ խոսքը, որ, այդուամենայնիվ, քանիցս խանգարվեց Գորբաչովի առայժմ ոչ այնքան թունոտ միջամտություններով, նրա հավանության մոլտոցներով՝ երբ Թաթլիեւն էր խոսում ու բիրտ հարձակումներ գործում առհասարակ հայերի դեմ, իսկ Ղարաբաղին դառնալիս անհոդաբաշխ զոմռում, եւ, վերջապես, Հենրիկ Պողոսյանի համարձակ ու խելոք, ամեն ինչ մինչեւ խորք բացահայտող քննությունը, որի ամբողջ ընթացքում ոչ միայն դահլիճը, այլեւ ինքը՝ Գորբաչովը, շունչը պահած լսում էր, քանի որ նման խոսքն ընդհատելը կդիտվեր իբրեւ բացահայտ վայրենություն... Այո՛, այսքանով ամեն ինչ պարզ էր, մնացածն ի՞նչ պիտի ավելացներ գործին:

Չէ՞ որ նախապես ամեն ինչ պարզ էր, վճիռը՝ հայտնի, որոշումը, ոչ թե իբրեւ նախագիծ, այլ պատրաստ-ընդունված վճիռ՝ Նախագահության անդամների առաջ դրված թղթապանակներում...

Ամեն ինչից երեւում էր, որ Գորբաչովն այդ ժողովին էր եկել հայերին իրենց տեղը մի լավ, հիմնավոր նստեցնելու համար, աշխարհին ցույց տալու, թե ինչպես անխելք է նրանց ընտրած ու բռնած դիրքը (բավական չէ այս արեւի տակ անկաշկանդ ապրում են, հիմա էլ վեր են կացել հարեւան հանրապետության հողի վրա են աչք տնկել, Ղարաբաղ են ուզում)։

Բայց այդ Հենրիկ Պողոսյանի ելույթը համուն տվեց նրա ծրագրերը, բռնելիք դիրքը նախապես դարձրեց հեղհեղուկ ու անտրամաբանական։

Ահա այդ ելույթի մի քանի կարեւոր դրույթները.

Սկզբից իսկ. *«Տեղյակ մարդկանց համար ոչ մի կասկած չկա, որ Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես եղել է հայերի բնակավայրը եւ հանդիսանում է նրանց հայրենիքի մի մասը։*

Այդ դեպքում նույն Լեռնային Ղարաբաղն ինչպե՞ս է հայտնվել Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ։ Դժբախտաբար դա եղել է զիջում այն ժամանակվա Ադրբեջանի ղեկավարության բռնակցումային ձգտումներին, որոնք պաշտպանվել են Ստալինի կողմից եւ, խորամանկորեն խաղալով Այսրկովկասի ու Ռուսաստանի չափազանց բարդ իրավիճակի վրա, ըստ պատվերով երկիրը գրկել կեղծինից, հրապուրելով քեմալիստներին Խորհրդային Ռուսաստանի կողմը քաշելու կասկածելի հնարավորությամբ, առանց խորշելու սպառնալիքներից ու սադրանքներից, կաշառքով ու փաստերի նենգափոխությամբ Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ են մղտցրել մի մարզ, որի բնակչության ավելի քան 94 %-ը հայեր էին։

Այսպես կոչված ինքնավարության հետագա 65 տարիները եղել են մարզի հայ բնակչության իրավունքների ոտնահարման, հալածանքների եւ ամեն տեսակ կեղեքումների տարիներ։

Ադրբեջանի կադրային քաղաքականությունը ծառայել է ամեն ճանապարհով ընդունակ երիտասարդությանը Լեռնային Ղարաբաղից դուրս քշելու նպատակին։ Մարզի ղեկավարության բոլոր կարեւոր օղակներում նշանակվել են Բաքվի էմիսարները»։

Ամենուրեք այն կարծիքն է ստեղծվել, թե Լեռնային Ղարաբաղը նստած է Ադրբեջանի շլնքին։ *«Մինչեւ վերջին տասնամյակներում մարզի հատկացումներն ամեն աստիճանի բյուջեներին՝ կազմել են տարեկան 91 միլիոն ռուբլի, իսկ մարզի բյուջեն կազմում է 42 միլիոն, կամ հատկացումների 46 տոկոսը, այնպես որ մենք երբեք էլ նվիրաբերումներ չենք ստացել։ Ի դեպ, ինչպես եւ ոմանք են պնդում, ուտող-բերաններ էլ չենք եղել երբեք։ Մարզը*

բնակչության յուրաքանչյուր շնչի դիմաց արտադրում է 67 կգ միս՝ Հանրապետության 27 կգ-ի դիմաց, կաթ՝ 320 կգ՝ 155-ի դիմաց...»

Հունիսի 17-ին տեղի է ունեցել Ադրբեջանի ԳԽ-ի նստաշրջանը: Եվ այնտեղ ի՞նչ էին խոսում Ղարաբաղի խնդրի մասին՝ իբր, Ադրբեջանի սահմանները պայմանական են, մենք ոչ ոքի բռնած չենք պահում, ով չի ուզում մեզ հետ մնալ, թող հեռանա: Իսկ ոմանք արտահայտվում էին որքա՜ն ուղղագիծ. *«Թող գնան-կորչեն»:*

Շա՜տ լավ, բայց ի՞նչ անել այն պարագային, որ մեզ Ադրբեջանի կազմի մեջ են մտցրել *«մեր ինքնավարությամբ եւ մեր հողով հանդերձ»* (հիշեցնում է Ադրբեջանի Կենտգործկոմի 1923-ի հուլիսի 7-ի հրամանագիրը.«Լեռնային Ղարաբաղի հայկական մասից կազմել ինքնավար մարզ»):

Ադրբեջանի ԳԽ-ի Նախագահության նախագահ Թաթլիեւը «Բակինսկի ռաբոչի» թերթին տված հայտարարությունում (1988, հունիսի 24) հայերին սպառնալիք է տվել նոր ջարդերի հնարավորությամբ: *«Ստացվում է, որ, ընդունելով հանրապետության բնակչության առանձին խմբերի ագրեսիվությունը հայերի նկատմամբ, մենք նույն այդ հայերի կյանքը դատապարտում ենք մշտական տագնապի. չէ՞ որ ագրեսիվ դրսեւորումները կարող են պայթել ցանկացած առիթով, ցանկացած տեղում եւ ցանկացած ժամանակ»:*

«Համաշխարհային իրականության մեջ, ինչպես եւ մեր երկրում, հայտնի են մեկ ժողովրդի երկու մասերի միավորման բազմաթիվ փաստեր, որոնց ընթացքում, առանց բարդությունների, լուծվել են նաեւ զուգահեռաբար առաջ եկած տարածքային հարցերը: Խորհրդային Միությունը ողջունում է այդպիսի դեպքերը՝ դրանք գնահատելով որպես մարդասիրության ու պատմական արդարամտության վերականգնման գործողություններ: Իսկ ինչո՞ւ մեր դեպքում դա գնահատվում է որպես ադրբեջանական ժողովրդի վարկաբեկում ու արժանապատվության ոտնահարում, որպես սահմանադրության խախտում, որ քիչ է մնում սահմանակցվի հանցագործության հետ...»

«Մեր ընդդիմախոսները ներկայացնում են նաեւ այսպիսի առաջարկություն. Լեռնային Ղարաբաղը չի կարող մտնել Հայաստանի կազմի մեջ, քանի որ նրանք նույնիսկ ընդհանուր սահման չունեն՝ մոռանալով, որ մարզը 7 անգամ ավելի մոտ է Հայաստանի սահմանին, քան Նախիջեւանը՝ Ադրբեջանին:

Ընկերնե՛ր, խնդրում եմ ճիշտ հասկանալ ինձ. Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը չի կարող զոհանալ միայն նյութական բարիքներով ի վնաս ազգային-մշակութային ու հոգեւոր զարգացման»: Մանավանդ, որ այդ «նյութական բարիքները» յուրացնելն էլ անհնար է նույն զրկվածության պատճառով. տեսե՛ք. ԽՍՀՄ ղեկավարությունը մարդին հատկացրել

է 400 միլիոն ռուբլի, որը պետք է յուրացվի յոթ տարում։ Բայց «Մեր շինարարական կազմակերպությունների արտադրական հզորությունը 20 միլիոնի է... Մեր փոխարեն ո՞վ է այդ միջոցները յուրացնելու, եթե մենք չունենք համապատասխան արտադրական հզորություն»։

Ապա խոսեց երկու ժողովուրդների հարաբերությունների մեջ ստեղծված ահռելի ճեղքվածքի մասին, այն վիհի, որ այժմ ո՛չ փակել կլինի, ո՛չ շրջանցել. երկար տարիներ են պետք, որպեսզի այն սպիանա, որպեսզի մոռացվի Սումգայիթը։ *«Երկու ազգերի ներկայացուցիչների միջև օրական հազար ու հազար շփումներ պիտի լինեն։ Այսօր դրանք չեն ստացվում»։* Ուրեմն, ի՞նչ է մնում.*«Ստեղծված իրավիճակում միակ ճիշտ վճիռը կլինի Լեռնային Ղարաբաղի անջատումն Ադրբեջանից։ Այլընտրանք չեմ տեսնում»։* Անջատո՛ւմը, թող որ առանց միանալո՛ւ Հայաստանին։

Եվ այս բոլորը հեռարձակվում էր ամբողջ Խորհրդային Միության ու աշխարհի աչքի առաջ։ Դրա համար էլ ժողովի հետագա ընթացքը դարձավ Գորբաչով՝ կողմնացույցը կորցրած մարդու մի դեգերում, որն իրեն զարկում է պատեպատ, հանախ էլ ընկնում մի այնպիսի փոս, որի մեջ երբեմ չի գտնվել Խորհրդային ոչ մի ղեկավար, նույնիսկ իր անմիջական նախորդի՝ Չեռնենկոյի պես ողորմելի մեկը։ Այդպիսի փոս դարձավ նրա լեզվակռիվը Երևանի համալսարանի ռեկտոր Սերգեյ Համբարձումյանի հետ։ Տեսնվա՞ծ բան է, որ երկրի առաջին ղեկավարը բարձրագույն ատյանում նկատողություն անի մեկին, եւ սա ոչ միայն համարձակվի ծպտուն հանել, այլեւ պատասխան տա, այնպիսի՞ պատասխան, որից այդ ղեկավարը գլուխը կորցնի։

Երբ Համբարձումյանն իր դանդաղասահ, տեղին ու պինդ պատասխաններն էր տալիս, ոնց որ ծանր-ծանր հարվածներ, երեւի թե հեռուստացույց նայող, այդ պատասխանները լսող ամեն մի հայ, մանավանդ սեփական ազգային պատմությանը ծանոթ հայ, մտածում էր, թե այսպես է եղել Տիգրոնում, Պարսից արքունիքում, ուր արքայից արքան, իբր թե, բնելու-դատելու կանչած Հայոց մեծամեծներին կոպտել, մեղադրանքներ է ներկայացրել, սպառնալիքներ տվել, եւ մի Վարդան Մամիկոնյան էլ ընդոստ վեր է թռել, նրան ուղղել արժանապատիվ իր պատասխանները, ասել է թե՝ արքայից արքային նստեցրել իր տեղը եւ ստիպել, որ սա չափ դնի լեզվին...

Դրանից հետո Գորբաչովն իր տեղը հանգիստ նստել չէր կարողանում։ Անժամանակ, անտեղի միջամտում էր խոսողներին, մեծ մասամբ անում դիտողություններ, որոնք ոչինչ չէին տալիս բնության ընթացքին, արդեն տրամաբանական ուղղությունը կորցրած բնությա՛ն։ Կարելի՞ էր պատկերացնել, թե մի ակադեմիկոս, այսինքն՝ ղեկավարության ծանր հրետանին, վեր պիտի կենա, ասի՝ հարցի համար ոչ մի նշանակություն չունի պատմությո՞ւնը, պատմական իրավո՞ւնքը։ Ուրեմն, դու՝ ղարաբաղցի հայդ, եթե հազարամյակներ շարունակ ապրել ես քո հողի վրա, նրա տերն ես եղել, դա ոչինչ չի նշանակում ու ոչ մի դեր չի խաղում (Պրիմակով)։

Իսկ մի ուրիշ ակադեմիկոս էլ մեկ նալին զարկի, մեկ՝ մեխին, ու մարդիկ չհաս-

կանան, թե ինչպես է լինում, որ խելոք մարդը, լծվելով անիմաստ ու ծուռ վճռին, սկսում է խելքից հեռու բաներ դուրս տալ (Ն. Բասով)։

Գորբաչովը մի քիչ աշխուժացավ, իրեն դրության տեր զգաց թորք գրող Միրզա Իբրահիմովի օգնությամբ։ Սա Ադրբեջանի աղսախկալն է, իսկ երաժշտասերների խոսքով ասած՝ Ադրբեջանի գլխավոր, բազմամյա դիրիժորը, որի ճիպոտով է շարժվել հանրապետությունը՝ Բաղիրով մեծից մինչեւ փոքրը, եւ սրան հաջորդած Վեզիրովն էլ շարժվելու է միշտ ու ամենուր, քանի կա Միրզա մուալիմը՝ այդ կախարդական ճիպոտի տերը։

– Արեւելքում իմաստուն խոսք կա, ասում է՝ ալլահը թե որ մեկին պիտի պատժի, նախ նրա խելքն է առնում,– աղսախկալի, շեյխի կեցվածքով ամբիոնի ետեւից բարբառեց Միրզա մուալիմը, եւ հոհոացին նրա ցեղակիցները, աշխուժացավ, ժպտուրախ գլուխը տմբտմբացրեց, ասել է՝ նրա հետ համաձայնեց Գորբաչովը։

Ուրեմն, ալլահը հայերի խելքն առել է, եւ հիմա այս անխելքները վեր են կացել, Ղարաբաղի հարց բարձրացրել, մեր սեփական, կոմունիստական կուսակցության կենտրոնական ղեկավարության կողմից մեզ վրա հաստատած, սրբագործած հողն են ուզում։ Եվ սրանք այնքան խելագուրկ են, այնքան պարպված ամենահասարակ հասկացողությունից, որ չկարողացան իրենց անելիքը գլխի ընկնել նույնիսկ Սումգայիթից հետո։ Անելիքը, որ պիտի լիներ հանգիստ իրենց տեղը նստել եւ զոհանալ այն ամենով, ինչ ունեն, եւ հարեւաններն էլ դա հանդուրժում են...

Այս էր Միրզա մուալիմի ասածի էությունը, եւ սա, ըստ երեւույթին, դուր եկավ Գորբաչովին, զոհացրեց, ոնց որ ինքն ասելիս լիներ՝ իբրեւ դաս, կարգադրություն, վճիռ։

Սակայն եղան նաեւ ուրիշ տեսակ խոսքեր։ Եղավ մտածող մարդու խոսք, որ չէր կարող հեռուստատեսության առաջ նստածներին մտածելու չմղել, բանականության ոլորտը չմտցնել ու չստիպել, որ նրանք մարդանան ու հասկական իրենց նմանների ճակատագիրը, չցավեն այդ ճակատագրի չար խաղի համար։

Խորհրդային երկրի մեծ գրողներից մեկի՝ Ռասուլ Համզաթովի խոսքն էր դա։

Ելույթ ունեցողները՝ գլխավորապես պաշտոնյաներ, Ադրբեջանի ցավաքաշներ կամ Գորբաչովի տրամադրությանը ծանոթ, ուրեմն եւ նրան հաճոյանալու համար բերան պարպողներ, մեղադրում էին հայերին, նրանց համարում անխոհեմ մարդիկ, որոնք վերակառուցման աշխարհաշեն երթին են խանգարում իրենց մանր, նեղ ազգային խնդրով։

«–Ո՞վ է մեղավոր եւ ինչի՞ մեջ,– ի պատասխան այդպիսի մեղադրանքների՝ ասաց Համզաթովը։ – *Ես հասկանում եմ հինավուրց ու մեծ հայ ժողովրդի զգացումը, բազմաչարչա՜ր ժողովրդի, որն իր ճակատագրի մեջ շատ փորձություններ է ենթարկվել. եղել են ողբերգական շատ վիճակներ։ [Եվ հիմա նրանք] մեկ լեզվի, մեկ ճակատագրի, մեկ մշակույթի, մեկ հնագույն գրի տեր մարդիկ, ուզում են միասին ապրել»։*

Ի՞նչ հետեւություն պետք է արվեր այս խոսքից։ Մարդկայնորեն միայն մեկ. որ

այդ հայերի պահանջը տրամաբանական է, օրինական, արդար, իսկ իրենց ճակատագրի թելադրանքով՝ առավե՞լ այդպիսին: Եվ մեր պարտքն է ոչ թե խրտչել ու պոզահարել, այլ մարդկայնորեն հարգել այդ պահանջը, ընդառաջել, լուծման ճանապարհ ու ելք գտնել: Իսկ եթե..., եթե այսքան բարդացել է դրությունը, եւ անհնար է վերջնական լուծումն այսօր, ապա փնտրել այլընտրանքային լուծման որեւէ խելամիտ եղանակ: Ես, օրինակ, այսպես եմ մտածում...

Եվ մեծ բանաստեղծը, մեծ մարդն ու երկրի իմաստուն քաղաքացին իր մտածածն այսպես արտահայտեց.

«-Գուցե թե, մինչեւ ընդհանուր սկզբունքային վճիռներ մշակելը, Լեռնային Ղարաբաղի նկատմամբ թույլ տալ միջակա կարգավորումների հնարավորություն: Դա ինձ թվում է հետեւյալ կերպ. այժմ չանդրադառնալով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վարչատարածքային ու պետական կարգավիճակի հարցին, մարզի ժամանակավոր ղեկավարությունը հանձնել անմիջապես ԽՍՀՄ Գերագույն խորհրդին կամ Մինիստրների խորհրդին, կամ ստեղծել ինչ-որ հատուկ ձեւ, մտածել ժամանակավորապես... Եթե երկրաշարժ է տեղի ունենում (Հայաստանում դեռ երկրաշարժը չէր եղել.- Բ. ՈՒ.) *, ապա բոլոր հանրապետությունները շտապում են օգնել այն գոտուն, ուր երկրաշարժ է եղել... Եթե հիմա մենք սրտի տրոփ ունենք, ինչո՞ւ չենք շտապում ինչ-որ բան անել, օգնել մարդկանց՝ հանգստանալու, ընդունելու լուրջ միջոցներ»:*

Սա ըստ էության այն էր, ինչ Հենրիկ Պողոսյանն էր պահանջում. անջատել Ադրբեջանից, հնարավորություն տալ, որ կրթերը հանգստանան, իսկ հետո՞...

Հաջորդ օրվա թերթում («Իզվեստիա») հաղորդվում էր, թե Նախագահության նիստի նյութերն ու ընդունված որոշումը կհրապարակվեն առաջիկայում:

Սովորաբար որոշումները հրապարակվում են անմիջապես: Այս անգամ ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ այն հետաձգվում էր: Դա պարզվեց 20-ին հրապարակված որոշման բովանդակությունից, որը հիմնականում հարազատ էր գորբաչովյան ոգուն. ճիշտ է, մարզի նկատմամբ տեղի են ունեցել լենինյան ազգային քաղաքականության խախտումներ, արհամարհվել են հայ աշխատավորության ազգային շահերը, *«հատկապես մշակույթի, կրթության, կադրային քաղաքականության ոլորտում, խախտվել են ինքնավար մարզի սահմանադրական իրավունքները»:* Սակայն ԳԽ-ի Նախագահությունը մերժում է Հայաստանի ԳԽ-ի խնդիրը՝ ԼՂԻՄ-ը Հայաստանին միացնելու մասին, քանի որ դա կհակասեր ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածի էությանը, որի համաձայն՝ *«միութենական հանրապետության տարածքը չի կարող փոփոխվել առանց նրա համաձայնության»,* ապա ընկրգիցեւեթ հրապարակ հանված մի անմտություն. *«Ուրիշ որեւէ որոշում կհակասեր երկու հանրապետությունների բնիկ ժողովուրդների* (ուրեմն եւ հա՛յ ժողովրդի.- Բ. Ու.) *արմատական շահերին»:*

Այս կտրուկ ու, թվում է, անբեկանելի վճռի կողմին, սակայն, ասվում էր նաեւ. ***«ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահությունը նպատակահարմար է համարում Լեռնային Ղարաբաղ ուղարկել իր ներկայացուցիչներին, որոնք պետք է գործեն ընդունված որոշումներն անպայման կատարելու համար սերտորեն համագործակցած Ադրբեջանական ԽՍՀ ու Հայկական ԽՍՀ ներկայացուցիչների հետ»։***

Բայց Հայկական ԽՍՀ ներկայացուցիչներն ի՞նչ իրավունք ունեն Լեռնային Ղարաբաղում, երբ այն գտնվում է Ադրբեջանական ԽՍՀ կազմում, եւ ուրիշ հանրապետությունների ամեն միջամտություն նրա ներքին գործերին՝ պիտի արգելվի ԽՍՀՄ Սահմանադրության ոչ միայն 78-րդ, այլեւ ուրիշ հոդվածներով։ Թե՞ սա էլ Հ. Պողոսյանի ու Ռ. Համզաթովի առաջարկություններից բխած մի լրացում է, որ հակասում է որոշման ընդհանուր ոգուն եւ, այդուհանդերձ, նրա մեջ է մտել՝ իբրեւ հետագա ինչ-որ ***«լուրջ միջոցի»*** նախանշան։

Մանավանդ, որ հետո էլ այլեւս ոչ մի կասկած չհարուցող, սակայն բավական մանվածապատ խոսքն է Ազգությունների խորհրդի ինչ-որ հանձնաժողովի մասին, որն էլի ինչ-որ հարցեր պիտի մշակի, ներկայացնի ԳԽ-ի Նախագահության քննարկմանը։

* * *

Նախագահության նիստի ընդհանուր տպավորությունը շատ էր ճնշող հայկական կողմի, առհասարակ ամեն մի հայի համար։ Չնայած բարոյական այն հաղթանակին, որին ամբիոնի վրա հասան դեպուտատները, եւ դա խոստովանեցին, հաստատեցին, բարձր գնահատեցին ռուս մշակույթի անվանի մի շարք ներկայացուցիչներ՝ հարցին վերաբերող իրենց հրապարակային ելույթներում ու գրություններում։

* * *

Մի շաբաթ հետո կենտրոնական թերթերում հրապարակվեցին ԽՄԿԿ Կենտկոմի ու ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահության որոշումը՝ հուլիսի 18-ի հանձնարարականներն իրականացնելու համար կուս. Կենտկոմի ու ԳԽ-ի Նախագահության ներկայացուցիչ Ա. Վոլսկուն Լեռնային Ղարաբաղ ուղարկելու մասին։ Նշվում էր, որ ներկայացուցիչն օժտված է ***«համապատասխան լիազորություններով»***, եւ որ Ադրբեջանի ու Հայաստանի ղեկավար մարմինները եւ ո՛չ միայն նրանք, այլեւ միութենական մինիստրությունները պարտավոր են նրան ցույց տալ ամենայն օգնություն՝ ***«ընդունված կուսակցական ու պետական որոշումներն անվերապահորեն իրականացնելու»։***

Վոլսկին իր խմբով Ստեփանակերտ հասավ հուլիսի 27-ին։ Եվ մարզի ղեկավարության ու ժողովրդի ներկայացուցիչների հետ հանդիպեց իբրեւ հին ծանոթ, նույնիսկ բարեկամ, որ եկել է նրանց հետ ապրելու եւ աշխատելու։

Մի երկու օր հետո նրա հրավերով Ստեփանակերտում հայտնվեցին նաեւ Ադրբեջանի կուս. Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Վեզիրովն ու Հայաստանի նրա պաշտոնակից Ս. Հարությունյանը, հանդիպում եղավ մարզի ղեկավար մարմինների աշխատողների հետ, պայմանավորվեցին մարզի աշխատավորության առաջ կանգնած խնդիրների ու դրանց լուծումն իրականացնելիք միջոցառումների մասին:

Դրան էլ հետեւեցին ԽՍՀՄ պետշինի նախագահի եւ երկու հանրապետությունների Մինիստրների խորհուրդների նախագահների տեղակալների ժամանումն Ստեփանակերտ, մեծ խորհրդակցություն ու գործնական մի շարք քայլեր մարզի շինարարական աշխատանքները նորմալ հունի մեջ դնելու համար:

Մի քանի օր հետո հայտնի դարձավ, որ, Մոսկվայի ներկայացուցչի Ստեփանակերտ ժամանելը հավասարակշռելու նպատակով, Շուշիում էլ նստած է Բաքվի ներկայացուցիչը՝ կուս. Կենտկոմի քարտուղար Թ. Օրուջեւը, որը քաղաքում տեղավորում է Հայաստանից փախստական դարձած իր ազգակիցներին, անախորժ վիճակ է ստեղծում շուշիաբնակ հայերի համար:

Վոլսկին Օրուջեւին, հավանաբար նաեւ Ա. Վեզիրովին հայտնել էր իր դժգոհությունը նման ինքնագործունեությունից, եւ մի քանի օր անց (օգոստոսի 19-ին) Շուշիում Օրուջեւին փոխարինեց հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Հասանովը:

Իհարկե, Ա. Վոլսկին ու նրա հետ Ստեփանակերտ եկած մարդիկ, որոնք իրենց համարում էին ԽՍՀՄ ԳԽ-ի Ազգությունների խորհրդի հանձնաժողով, մարզում ինչոր գործ կատարում էին, փորձում էին զոնե անդորր հաստատել բնակավայրերում, վերջ տալ հանրային դաշտերում կատարվող քրեական անախորժություններին: Սակայն նրանց ջանքերն այդպես էլ ապարդյուն մնացին, որովհետեւ մարզում ու հարեվան ադրբեջանական շրջաններում շատ ցայտուն ծրագրով գործում էր անտեսանելի մի ուժ, որի շոշափուկներն ամենուր էին եւ հանգիստ չպիտի թողնեին մարզի հայությանը: Մեկ այս կամ այն հարեւան գյուղի անասնապահական ֆերմաներն էին կողոպտում հարեւան ադրբեջանական գյուղի կամ շրջանի զինված ավազակախմբերը: Մեկ նանապարհներն էին փակում, ծեծում, սպանում մենավոր հայ ուղեւորներին: Երեւան գնացող-դարձող ավտոբուսների քարկոծումները, ուղեւորների վրա կատարվող հարձակումները դարձել էին սովորական: Ամեն անգամ էլ հանդիսավոր հասկացնում էին, նույնիսկ գրավոր հայտարարություններ տարածում այն մասին, որ այդ բոլորն անում են հայերին խելքի բերելու համար եւ հանգիստ կթողնեն միայն մի ժամանակ, երբ նրանք մոռացած կլինեն իրենց *«Մխասոմը»* կամ կիեռանան Ղարաբաղից:

Օգոստոսի սկզբներին լուր տարածվեց, թե Շուշիում հայերի մեծ ջարդ է նախապատրաստվում, որն իրենց՝ ադրբեջանցիների համար անվտանգ անցկացնելու նպատակով, արդեն Ստեփանակերտում ապրող ցեղակից կանանց ու երեխաներին տեղափոխել են ուրիշ տեղեր, իսկ տղամարդիկ զինված անցել են քաղաքի ադրբեջանաբնակ թաղամասը՝ Կրկժան, եւ մոտակա Խոջալու գյուղը:

Օգոստոսի 18-ին իսկապես սկսվեց Շուշիի հայերի դեմ ծրագրված չարագործությունը, որի մասին Ստեփանակերտում իմացան քարագլխի տարբեր կետերում բորբոքված

հրդեհներից. երեկոյան պարզ երեւում էին Բաղաբի հայկական մասում կրակի մատնված երեք տների ու Ղազանչեցոց եկեղեցու պատերի տակ կանգնած փայտամածների բոցերը:

Ստեփանակերտում, անցյալ ամիսներին նման գործողությունների համարժեքներից հրաժարվելու սովորությունը խախտելով, իրենք էլ հրդեհի մատնեցին ադրբեջանցիների երկու տուն եւ փորձեցին պատժել նրանց բնակիչներին: Սակայն սեփական տանը ոչ մի ադրբեջանցի չգտան: Իսկ գիշերվա կեսին սրանք Կրկժանից սկսեցին գնդակոծել Ստեփանակերտի կենտրոնը:

Բախումներ տեղի ունեցան նաեւ հաջորդ օրերին: Եվ արդյունքն այն եղավ, որ սեպտեմբերի երկրորդ կեսից ԼՂԻՄ-ում ու Աղդամի շրջանում հայտարարվեց պարետային ժամ:

Հոկտեմբերի 3-6-ը ԼՂԻՄ-ում էր գտնվում մոսկովյան մի պատկառելի հանձնաժողով՝ ԽՍՀՄ ԳԽ-ի Ազգությունների խորհրդի նախագահ Ա. Վոսսի գլխավորությամբ:

Բանն այն է, որ մարզի աշխատավորությունն ու նրա ղեկավարությունը ոչ մի կերպ չէին հաշտվում բարձրացված հարցը լուծելու մեջ վերին ղեկավարության անվճռական դիրքի ու ընդունած կիսատ-պռատ, էականորեն ոչինչ չվճռող որոշումների հետ: Մարզխորհուրդը մեկ էլ օգոստոսի 24-ին էր իր նստաշրջանում ընդունել որոշում, որով պահանջում էր սկզբունքորեն բննել ու լուծել հարցը՝ առանց այն ձգձգելու, որովհետեւ ստեղծված իրադրության մեջ յուրաքանչյուր նոր օրը հղի է մի նոր աղետով: ***«Մարզխորհրդի նստաշրջանը,*** - ասվում էր որոշման մեջ, - ***վերստին հաստատում է մարզի աշխատավորության անկումն վճռականությունը՝ անպայման հասցնելու ԼՂԻՄ-ն Ադրբեջանական ԽՍՀ վարչական ենթակայությունից հանելուն եւ Հայկական ԽՍՀ հետ միացնելուն»:***

Եվ Վոսսի հանձնաժողովը չորս օր շարունակ հանդիպումներ էր ունենում Ստեփանակերտի արտադրական տարբեր կոլեկտիվների, ստեղծագործական կազմակերպությունների, մտավորականության ներկայացուցիչների հետ, ամենայն ուշադրությամբ լսում էր նրանց բնաղատական դիտողություններն ու առաջարկությունները, որոնց կենտրոնում մարզի հայությունն ադրբեջանական բռնությունից ազատագրելու հարցն էր:

Վերջին հանդիպմանը Ա. Վոսսը հանձնաժողովի անունից հանդիսավոր խոսք տրվեց Մոսկվա վերադառնալուն պես միութենական ղեկավարությանը ներկայացնել հանգամանալից ու արդար զեկույց մարզի աշխատավորության վիճակի, պահանջների ու բաղձանքների մասին, ամեն ինչ անել հարցին արդար լուծում տալու համար:

Պարապ չէր նաեւ, այսպես կոչված, ադրբեջանական կողմը. ավելի շատացել ու կատաղի բնույթ էին ստացել վերը նշված ավազակային հարձակումները հայկական գյուղերի վրա, ճանապարհային պատահարների սաստկացման պատճառով պարզապես անհնար էր դարձել ոչ միայն կապն արտաքին աշխարհի հետ, այլեւ երթեւեկելը մարզի շրջաններում, քանի որ միջշրջանային ճանապարհների ռազմագիտական ամենակարեւոր կետերում տնկված էին ադրբեջանաբնակ գյուղերը՝ Խոջալուն, Մալիբեյլին, Ղարադաղլուն, Խոջավանդը, Սրխավենդը, Իմերեթ-Բերավանդը եւ նման ուրիշ ա-

վազակարջեր, որոնց զինված խմբերը տիրություն էին անում բոլոր ճանապարհների վրա։

Այսպանի կողմին էլ՝ առավել վայրագը. անջատել էին մարզն էլեկտրաէներգիայով սնող բոլոր գծերը, փակել երկաթուղին, եւ մարզը հայտնվել էր հեղձուցիչ շրջափակման մեջ։

Դեռ ամռանը հայտնի էր դարձել, որ ադրբեջանցիները չնախատեսված շինարարական աշխատանքներ են կատարում Շուշիում, Խոջալուում, Մալիբեյլիում. իբր բնակարաններ են կառուցում անտունների համար։ Իսկ աշնան կեսերին արդեն հենց միայն Շուշիում շուրջ երկու հազար մարդ՝ Հայաստանից փախած ադրբեջանցիներ, բնավորված էին, չնայած կար միութենական ղեկավարության կարգադրությունը՝ Ղարաբաղում բնակչության ազգագրական կազմը փոփոխող միջոցառումներն արգելելու վերաբերյալ։ Մարզային կազմակերպությունները պայքարում էին դրա դեմ, Վոլսկու խումբը կտրականապես պահանջում էր փախստականներին դուրս բերել Շուշուց։ Ադրբեջանի ղեկավարությունն էլ խոստանում էր կատարել այդ պահանջը, նույնիսկ Վեզիրովը բանիցս հանդիսավոր խոսք էր տվել... Սակայն ադրբեջանցի փախստականներն օրեցօր շատանում էին Ղարաբաղում։ Իսկ Խոջալուում շինարարությունն այնպիսի թափ էր ստացել, ասես որոշել էին Ղարաբաղի ***«զարգացումն արագացնելու»*** համար հատկացված 400 միլիոն ռուբլին մեկ տարում ծախսել հենց միայն այստեղ։ Բազմահարկ բնակելի շենքեր էին կառուցում, հանրապետության խոշորագույն արդյունաբերական ձեռնարկների բաժանմունքներ, մշակութային, առեւտրական եւ այնպիսի կետեր, որ կարելի էր կարծել, թե հանրապետության կենտրոնն այստեղ են փոխադրելու։

Այս ամենի դեմ համաժողովրդական ցույցեր եղան Ստեփանակերտում, մարզային ղեկավարությունն իր կտրական բողոքը հայտնեց Միության համապատասխան մարմիններին։ Սրանց ներկայացուցիչներին էլ (օրինակ, ԽՍՀՄ գլխավոր դատախազ Սուխարեւը եւլք) գալիս, արձանագրում էին անօրինությունները, խոստանում կարգի հրավիրել։ Իսկ նրանք, որոնք պիտի կարգի հրավիրվեին, գործում էին ավելի կատաղի, առավել բորբոքում էին իրենց ամբոխների կրքերը։ Հակահայկական բացահայտ քարոզչությունն ու բռնությունները աշնանն արդեն բռնել էին Բաքուն, Կիրովաբադը, Նուխին եւ այլ շրջաններ, որոնցում հայերի դեմ սանձազերծված բռնություններն օրեցօր դառնում էին անտանելի։ Իսկ հայաբնակ շրջանների բնակչությունը հայտնվել էր պաշարման վիճակում եւ պարբերաբար էլ զգուշացվում էր, թե հայերը պետք է թոչեն Հայաստան, եթե ուզում են ապրել...

Այս ամենի համար, իհարկե, մեղավոր էին, այն ժամանակ շատ մեծ տարածում ունեցող բառերով՝ էքստրեմիստներն ու նացիոնալիստները, իսկ ավելի հասկանալի խոսքով՝ Ադրբեջանի մտավորականությունը։ Սակայն առջեւից գնացողը հանրապետության կուսակցական ղեկավարությունն էր՝ Կենտկոմի առաջին քարտուղար Վեզիրովի գլխավորությամբ։ Նախընթացին նա՞ չէր, որ հրապարակորեն, միութենական լրատվության ներկայացուցիչների առաջ (Անդրեյ Սախարովի հետ ունեցած հանդիպմանը) հայտարարեց, թե հողը չեն պարգեւում, հողն արյամբ նվաճում են։ Այսինքն՝ հայերը,

եթե մեզանից Ղարաբաղ են ուզում, թող արյուն թափեն եւ արյուն տան...

Եվ Վեզիրովի այս արյունոտ հայտարարության տարբերակներն էլ կուսակցական մյուս ղեկավարների բերաններին էին՝ բարտուղար Օրուջեւի, բարոզչական բաժնի վարիչ Դաշտամիրովի, կուս. մարմինների բաժնի պետ Ասադովի..., նրանց ղեկավարած ամբողջ կուսակցության։

Իսկ այս պայմաններում մի՞թե անհեթեթություն չէր, որ Ղարաբաղի կուսակցական կազմակերպությունը, թեկուզ եւ անվանապես, դեռեւս գտնվում էր Ադրբեջանական կոմկուսի կազմի մեջ։ Այդ պատճառով էլ նոյեմբերի 25-ին տեղի ունեցավ կուսակցության Ղարմարզկոմի պլենումի նիստը, որն ընդունեց որոշում։ Սրա հենց առաջին կետն ասում էր. ***«Նկատի առնելով ԼՂԻՄ-ի շուրջ ստեղծված ծայրահեղորեն վտանգավոր կացությունը, հանրապետությունում սանձազերծված հակահայկական տրամադրությունները, կուսակցական, պետական ու տնտեսական մակարդակների վրա իրական փոխհարաբերությունների բացակայությունը, անհնար համարել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կուսակցական կազմակերպության հետագա գտնվելը Ադրբեջանի կուսակազմակերպության կազմում։***

ԽՄԿԿ Կենտկոմին խնդրել Լեռնային Ղարաբաղի մարզի կուս. կազմակերպությունն անմիջապես ենթարկեցնել ԽՄԿԿ Կենտկոմին եւ կուս. մարզկոմը վերանվանել ԽՄԿԿ ԼՂ-ի մարզկոմ»։

Ապա 2-րդ կետով նորից անդրադառնում էր հիմնական հարցին՝ հիշեցնելով նախկինում ընդունված որոշումները եւ պահանջելով, որ այն անհապաղ լուծվի, քանի որ ստեղծված պայմաններում հայ բնակչության համար ամեն նոր օրը հղի է ամբողջ Ադրբեջանը Սումգայիթի վերածելու վտանգով։

Մարզի այս որոշումը երեւի թե Ադրբեջանի ղեկավարությանը հուշեց անհետաձգելիորեն լուծելու մի խնդիր, որը, նրա կարծիքով, վճռական նշանակություն պետք է ունենար՝ կուս. մարզկոմի առաջին բարտուղար Հենրիկ Պողոսյանին շարքից հանելու խնդիրը։

Ի՞նչ խոսք, շարժման առաջին իսկ օրերից բարձր դիրքում գտնվելով՝ Պողոսյանը ցուցադրել էր շրջահայաց, համարձակ ու խելամիտ ղեկավարի հատկանիշներ, որոնցով մեծապես պայմանավորված էր շարժման համարյա անխաթար ընթացքը։ Հիշենք մարզային կազմակերպությունների ընդունած որոշումները, որոնց ստեղծմանն ինքը միշտ էլ ունեցել է անմիջական, մեծ մասամբ վճռական մասնակցություն։ Նրա ելույթները, հենց թեկուզ այն, որ ունեցավ հուլիսի 18-ին ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահության նիստում, նրա բանակցությունները մոսկովյան տարբեր խմբերի, հատկապես Վոսսի հանձնաժողովի հետ, որից հետո Վոսսն ինքը Ստեփանակերտում հայտարարեց, թե Պողոսյանի պես ղեկավարի համար ոչ մի դժվարություն չի ներկայացնի ցանկացած մարդուն համոզել ղարաբաղցիների պահանջի արդար լինելը, էությունը եւ անմիջապես լուծելու անհրաժեշտությունը։

Եվ հիմա Ադրբեջանի ղեկավարության առաջին խնդիրն էր դարձել Հ. Պողոսյա-

նին Ղարաբաղից հեռացնելը։ Բնական է, որ դրան պետք է հասնեին Գորբաչովի միջոցով, հետեւաբար եւ նրան պիտի խոստանային ամեն տեսակ աջակցություն, նույնիսկ զիջումների գնալու պատրաստակամություն։

Զուշացավ եւ արդյունքը։ Նոյեմբերի վերջին ԽՍՀՄ ԳԽ-ի հայ դեպուտատները Մոսկվայում բավական եռանդուն գործունեություն էին ծավալել։ Նրանց ընդառաջելով՝ դեկտեմբերի 1-ին Մ. Գորբաչովը խորհրդակցության նստեց Հայաստանի, Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի ղեկավարների եւ Գերագույն խորհրդի դեպուտատների հետ. որոշվեց ստեղծել երկու հանրապետությունների ղեկավարներից ու Բաղբյուրոյի անդամներից կազմված մի հանձնաժողով, որը փոխադարձ զիջումների ճանապարհով կգնա դեպի հարցի լուծման մի ընդունելի տարբերակ, որն էլ, առանց Ադրբեջանի ամբողջությունը խաթարելու, իբր, մարզին կտա այն, ինչ նա ուզում է...

Այս խորհրդակցությանը չէր մասնակցում կուսակցության Ղարմարզկոմի առաջին քարտուղար Հ. Պողոսյանը։ Գորբաչովը նրան Ղարաբաղ էր ուղարկել, եւ ասում էին՝ նաեւ կարգադրել էր, որպեսզի դիմում գրի, գնա թոշակի։

Մոսկվայում գաղտնի ու բացահայտ գործարքներ էին գնում քաղաքական այս նոր խաղի շուրջ, որոնցից ոչինչ լավ բան չէր կարող սպասել հայությունը։ Եվ, կարծես նրա տագնապն ու ողբերգությունը կատարյալ դարձնելու համար, տեղի ունեցավ դեկտեմբերի 7-ի մեծ ու ահավոր երկրաշարժը Շիրակում։ Մեկ-երկու րոպեի ընթացքում կործանվեցին Լենինականը, Կիրովականը, Սպիտակը, Ստեփանավանը։ Հողին հավասարվեցին տասնյակ ու տասնյակ բարեշեն գյուղեր՝ իրենց հետ հողի տակ առնելով բազմահազար բնակիչների։ Աշխարհը ցնցված էր բնության այս դաժան խաղից։ Հողագնդի բոլոր մեծ ու փոքր երկրներից գալիս էին ցավակցության սրտագին խոսքեր, օգնության էին շտապում փրկարար ջոկատներ, բժիշկների ու առաջին օգնության մասնագիտացված ամենատարբեր խմբեր։ Աշխարհը նորից նոր ցույց էր տալիս, որ արթուն է մարդկայնությունը, որ կարեկցանքն ու փրկության ձեռք մեկնելը հողագնդի տիրոջ առաջին պարտականությունն է։ Եվ Ադրբեջանն էլ իր դեմքն է ցուցադրում. հաջորդ օրերի կենտրոնական թերթերը հաղորդեցին, որ Բաքվում ու հանրապետության մյուս քաղաքներում ցնծության շքերթներ են կազմակերպել, հրավառություններ ու տոնախմբություններ են կատարել, հազարավոր հեռագրեր են ուղարկել Հայաստան՝ շնորհավորելով երկրաշարժը։ Նույն բովանդակությամբ ցուցանակներ էին իրենց վրա Հայաստան բերում Ադրբեջանով անցնող երկաթուղային շարժակազմերը... Որպեսզի մի քանի օր հետո էլ վերականգնման համար բարեկամների ուղարկած ցեմենտը տեղ հասցվի ջուր լցրած-քարացրած, կամ ժամանակավոր տնակներն ու տեխնիկական սարքերը՝ ավերված, քարուքանդ արված։

Իսկ Մոսկվայի հեռուստատեսությունը հենց առաջին օրն էլ հաղորդվող ինչ-որ թխած կարեկցական հեռագիր էր քանիցս կրկնում Ադրբեջանի ղեկավարության անունից եւ տեղեկություն այն մասին, որ, իբր, հանրապետության մեծագին օգնությունն է հասել աղետի գոտի, եւ առավել ստոր մի սուտ՝ թե ադրբեջանցի բժիշկներն արդեն գործում են երկրաշարժից կործանված վայրերում... Այսօրինակ ստեր՝ մոգոնված այն

օրերին Մոսկովյան հեռուստատեսության "Время" ծրագրի խմբագրության մի ադրբեջանցի աշխատակցի նախաձեռնությամբ։

Իսկ Բաֆվում չարախնդումի ցույցերն այնպիսի չափեր էին ընդունել, որ գեներալ-գնդապետ Տյագունովը հեռուստատեսությամբ նկատողություն արեց. ամո՛թ է, ուրիշի ցավի վրա չարախնդալը չարագործությո՛ն է։ Ապա եւ արեց նշանակալի տեղեկատվություն՝ թե իր զորքերին հաջողվեց Բաֆվում խափանել Սումգայիթի կրկնությունը։ Ուրեմն Հայաստանի աղետը պիտի նշեին Բաֆվի հայերի կոտորածով, որը խափանվել էր ռուս գեներալի կողմից։

Երկրաշարժի օրը Միխ. Գորբաչովը գտնվում էր ԱՄՆ-ում. պետական բարձրագույն մակարդակի հանդիպումների ու բանակցությունների էր գնացել։ Իմացավ թե չէ, կարգադրեց, որ երկրի մյուս ղեկավարները՝ Մինիստրների խորհրդի նախագահ Ռիժկովի գլխավորությամբ շտապեն Հայաստան, կազմակերպեն օգնության առաջին միջոցառումները, ժողովրդին հաղորդեն իր պատրաստակամությունը կործանվածը երկու տարում վերականգնելու։ Իսկ ինքը, հանդիպումները կիսատ թողնելով, վերադարձավ, Ռայիսա Մաքսիմովնային էլ առած, շտապեց Շիրակ։ Երեւի մտածում էր, որ ահավոր աղետը մոռացրած պիտի լինի Ղարաբաղի խնդիրը, եւ ցավալի է, իհարկե, պատահածը, բայց գոնե մխիթարական մի բան կա. ինքը կփրկվի այդ Ղարաբաղից։ Սակայն, ուր որ ոտք էր դնում, Ղարաբա՜ղ հա Ղարաբա՜ղ, եւ այնքան համառորեն էին պահանջում, կարծես ազգն ուրիշ հոգս չունի, եւ դա է, որ փրկելու է աղետյալներին։ Այն ժամանակ Լենինականում զավեշտական զրույցներ էլ էին հորինել պահանջատիրության վերաբերյալ։ Օրինակ, ասում էին՝ փլատակների տակից մեկին հանել են, համարյա մեռած-պրծած։ Մի կերպ ուշքի են բերել։ Աչքերը բացել է, հարցը շուրթերին՝ ***«Ի՞նչ եղավ Ղարաբաղի խնդիրը»։***

Գորբաչովը զազազած էր այս համառությունից։ Թղթակիցների հետ խոսելիս, մարդկանց հարցերին պատասխանելիս ջղագրգիռ, հանգամանքներին չվայելող խոսքեր էր ասում, կոպտում ու վիրավորում. ոնց որ հայերն այդ երկրաշարժը սարքել են իրենց գլխին, որպեսզի ինքը խղճահարվի, Ղարաբաղը հանձնի Հայաստանին։ Եվ այդ ամբողջ խառնիճաղանջի մեջ մեղավորներ էին պետք, հայտնաբերեց՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ու կարգադրեց, որ նրանց կալանքի տակ առնեն։

ԱՐԿԱԴԻ ՎՈԼՍԿՈՒ ԿՈՄԻՏԵՆ

1989 թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը վերստին անդրադարձավ Ղարաբաղի խնդրին, Ընդունեց որոշում «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը կառավարման հատուկ ձեւ մտցնելու մասին»։ Վարչական այդ արտակարգ մարմինը, որ ստեղծվեց սույն որոշումով, կոչվում էր «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հատուկ կառավարման կոմիտե»։ Բայց որովհետեւ ղեկավար Արկադի Իվանովիչ Վոլսկին էր նրա ոգին, ամենավճռական դեմքը, որն իր գործնական ու զաղափարական, մանավանդ պարզապես արցախասիրական հատկանիշներով

որոշում էր կոմիտեի գործունեության որակը, կարելի է կոչել այսպես, այն ժամանակ ժողովրդի շուրթերին սովորական դարձած անվամբ՝ Վոլսկու կոմիտե։

Չի կարելի կարծել, թե Հատուկ կոմիտե կոչվածը Ղարաբաղում հայտնվեց միանգամից, ինչ-որ մեկի չար կամ բարի կամքով։ Սումգայիթից ու վերին ղեկավարության ճարահատ սոցիալ-տնտեսական միջոցառումներից անմիջապես հետո էր, 88-ի մարտին, որ ասպարեզ եկավ ակադեմիկոս Անդրեյ Սախարովը եւ պահանջեց, որ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն իր ձեռքը վերցնի հարցի լուծման նախաձեռնությունը եւ իրավարար նախաձեռնություն ցուցաբերի մարզի հայությանը փրկելու նպատակով։ Շատ շուտով էլ նա, իր այդ առաջարկությունը զարգացնելով, պիտի առաջարկեր ապահովել մարզի ինքնավարությունը՝ թեկուզ եւ չտալով այն ո՛չ Հայաստանին, ո՛չ էլ Ադրբեջանին։

Այս կարծիքը հասարակայնության կողմից այնքան ճանաչվեց, ընդունելի դարձավ, որ, ինչպես վերը տեսանք, բանաստեղծ Ռասուլ Համզաթովը, 1988-ի հուլիսի 18-ի ԳԽ-ի Նախագահության հայտնի նիստում նույնը կրկնեց, պահանջեց Ղարաբաղի հայությունը փրկելու մի նոր ձեւ ստեղծել։

Եվ Հատուկ կոմիտեն էլ հենց այդ ձեւն էր։ Ադրբեջանում այն ընդունեցին, որովհետեւ նրանով, նախ, Հ. Պողոսյանին ու մյուս անհաճո ղեկավարներին էին հեռացնում ասպարեզից, ապա եւ համոզված էին, թե շատ կարճ ժամանակում *հատուկ լեզու* կգտնեն այդ Հատուկ կոմիտեի հետ եւ բոլոր հարցերը կլուծեն իրենց ուզածի պես։ Հայաստանում ու Ղարաբաղում էլ շուրջ մեկ տարվա ընթացքում տեսել էին ամեն ինչ, մի քիչ կյանք էին ճանաչել եւ մտածում էին, թե, իբր առաջին քայլ, այն բոլորովին էլ վատ չէ։ Մանավանդ, երբ Կոմիտեի ղեկավար Վոլսկուն էլ ճանաչում էին արդեն եւ չէին սպասում, թե նա կանի մի բան, որ վատ լինի մարզի համար։ Զարմանալի՞ է, օրինակ, որ մարզի ղեկավար աշխատողներից մեկը՝ լուրջ ու ճիշտ մտածող Բորիս Դադամյանը, Վոլսկու առաքելության ավարտին, այսինքն՝ նրա գործն ու փորձը լիակատար վայելելուց հետո, մոսկովյան թերթերից մեկի հարցումին արել է այսպիսի հայտարարություն. ***«Ուրիշ այնպիսի մարդ, ինչպիսին Վոլսկին է՝ բարեկրթության, վարվելաձեւի, զարգացողության, սկզբունքայնության, նպատակամղվածության տեսակետից, ես չեմ ճանաչում Կենտկոմի անդամների ու աշխատակիցների մեջ»։***

Ահա՛, ուրեմն, ստեղծվել էր Կառավարման հատուկ կոմիտե, եւ նրա ղեկավարն էլ այս մարդն էր՝ Արկադի Իվանովիչ Վոլսկին։

Վոլսկին, ինչպես արդեն տեսանք, ղարաբաղյան խնդրի մեջ էր սկզբից եւեթ. 1988 թ. մարտից արդեն, իբրեւ ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ, երեւի Գորբաչովի հանձնարարությամբ, զբաղվում էր մեծ երկրի արդյունաբերական ձեռնարկների օժանդակությամբ Ղարաբաղի արդյունաբերության եւ առհասարակ տնտեսության առաջնահերթ խնդիրների լուծման հարցով։ Եվ այն ժամանակ մարզի բոլոր ղեկավարներն էլ գոհ էին նրա բազմակողմանի ու շահավետ օգնությունից։

Շատ շուտով Վոլսկին դարձավ *ղարաբաղցի*. 88-ի ամառվանից արդեն Ստե-

փանակերտում էր գտնվում՝ մի քանի հոգու հետ միասին եւ, երեւի թե, նախապատրաստում էր մարզի *անջատումն* Ադրբեջանից։ Իսկ 89-ի հունվարի 12-ին ստեղծված Հատուկ կոմիտեում իր հետ Ղարաբաղում պիտի աշխատեին միութենական տարբեր հիմնարկների մի շարք պատասխանատու աշխատողներ, ինչպես Կենտկոմից՝ Վ. Սիդոդովը, Պրոֆ. կենտխորհրդից՝ նրա քարտուղար Վ. Միշինը, ներքին գործերի մինիստրությունից՝ գեներալ-մայոր Ս. Կուպրեեւը, մինիստրի տեղակալ Վ. Պլիսովը, երեք հոգի էլ մարզից՝ մարզգործկոմի նախագահ Ս. Բաբայանը, մարզի ժող. վերահսկողության կոմիտեի նախագահ Վ. Թովմասյանը եւ Շուշվա կուսշրջկոմի քարտուղար Վ. Զաքարովը։

Կոմիտեի ստեղծումով, իբր, վերացվել էին մարզգործկոմը եւ կուս. մարզկոմը, իսկ իրականում գործում էին նրանց բոլոր բաժիններն ու ենթակա մյուս հաստատությունները։ Ինչպես վերն ասվեց, անտրամաբանական այս գործողությունն էլ կատարվել էր մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանից ազատվելու համար (միայն ա՛յս պայմանով Բաքուն կհամաձայներ հարցի ամեն տեսակ լուծման)։ Եվ, իսկապե՛ս, Պողոսյանին, իբր, առողջական վիճակի պատճառով, թոշակի ուղարկեցին՝ նրան բնակարան հատկացնելով Մոսկվայում։

Վոլսկին Ղարաբաղում աշխատանքի անցնելու առաջին իսկ օրերին այսպիսի հայտարարություններ էր արել.

«Մենք այստեղ ենք եկել մաքուր հոգով, մաքուր սրտով եւ ջանում ենք մեր աշխատանքը կատարել ազնվորեն, բարեխղճորեն»։

«Մենք ապրում ենք նույն հոգսերով, ինչ հոգսերով դուք եք ապրում։ Ուրեմն, եկեք հավատանք միմյանց, ապրենք փոխադարձ վստահությամբ»։

Նոր պաշտոնին նշանակվելուն պես «Պրավդայի» աշխատակցի հետ ունեցած հարցազրույցում Վոլսկին հայտարարեց. ***«Երկրում կատարած ուղեւորություններիս ժամանակ ես ոչ մի տեղ չեմ տեսել այնպիսի անխնամ վիճակ, մարդկանց ճակատագրի հանդեպ այնպիսի արհամարհանք, ինչպիսին Լեռնային Ղարաբաղում է»։***

Նա գիտեր, համոզված էր, որ այս ամենի պատճառն ադրբեջանական ղեկավարությունն է, հայկական մարզն Ադրբեջանի պոչից կապած լինելը։

Եվ իրական կյանքում ապացուցեց, որ իրեն տանջում է Ղարաբաղի այդ մեծ, առաջին ու վերջին ցավը։ Կարճ ժամանակում (ոչ թե աստիճանաբար, այլ կտրականապես) մարզի ուսերից թոթափեց Ադրբեջանի կառավարության ամեն մի ազդեցություն։

Հունվարի կեսերին Ստեփանակերտ ժամանեց ԽՍՀՄ ներքին գործերի մինիստր Վ. Բակատինը, եւ որոշվեց, որ ԼՂԻՄ-ի ներքին գործերի վարչությունը գործնականում ենթարկվի միայն ԽՍՀՄ ներքգործմինիստրությանը։ Մարզի կենտրոն հրավիրվեցին Երեւանի քաղկոմի քարտուղարը, քաղգործկոմի նախագահը, մինիստրներ եւ տնտեսական այլեւայլ գերատեսչությունների ղեկավարներ, որոնց հետ համագործակցելով՝ մարզի արդյունաբերական ձեռնարկությունները կապեց Երեւանի ու հանրապետության ուրիշ համապատասխան օղակների հետ, պարզապես դարձրեց նրանց բաժանմունքները

Ղարաբաղում: Գյուղական տնտեսության հիմնական ճյուղերը եւս կապվեցին Հայաստանի հետ, դարձան նրա հոգածության առարկան: Մշակութային օջախները, դպրոցները եւ տարբեր ուսումնարաններ նման պարագայում ոչ մի դժվարություն չունեին Հայաստանի համապատասխան մարմինների հետ կապվելու, նրանց նյութական ու բարոյական լայն աջակցությանն արժանանալու համար: Մարզի ստեղծագործական կազմակերպություններն ընդլայնվեցին, ինքնուրույնացան՝ կապվելով միայն Միության համապատասխան մարմիններին, սակայն եւ միաժամանակ ամենօրյա կապեր ունեին Հայաստանի հետ եւ ստանում էին այստեղի ստեղծագործական միությունների գործնական օգնությունը:

Կոմիտեի ստեղծումից մեկ ամիս էլ չէր անցել, որ Վոլսկու ստորագրությամբ նամակ հասավ Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ Վլ. Մարգարյանցին: Այնտեղ խոսք էր գնում մարզի պատմաճարտարապետական հուշարձանների վիճակի, նրանցից շատերի վերականգնման, առհասարակ նրանց ճակատագիրը քաղաքակիրթ եղանակով տնօրինելու հարցերի վերաբերյալ: Խնդիր էր դրվում, որպեսզի հուշարձանների ուսումնասիրության գործին լծվի Հայաստանի ակադեմիան, վերակառուցման գործերը կատարվեն Երեւանի մասնագիտական կազմակերպությունների գլխավորությամբ, եւ սա դառնա այդ բնագավառի աշխատանքի սկզբունքը:

Սովորաբար որեւէ երկրի ինքնուրույնության աստիճանի մասին դատում են տընտեսության ու բյուջեի նկատմամբ նրա ունեցած իրավունքով: ԼՂԻՄ-ն ինքն էր որոշում իր տնտեսության խնդիրները, ֆինանսավորումը գալիս էր ուղիղ Մոսկվայից: Այն ժամանակ զարմանալի մի փաստ էին մատնանշում. որ ԼՂԻՄ-ը ԽՍՀՄ պետպլանում ու պետմատում 15 հանրապետություններից հետո զբաղեցնում էր 16- րդ տեղը:

Այս հանգամանքը նշված էր Հատուկ կոմիտեի ստեղծման հաջորդ օրն իսկ Մինիստրների խորհրդի ընդունած որոշմամբ, որի հենց առաջին կետով հանձնարարվում էր ԽՍՀՄ պետպլանին ու ֆինանսների մինիստրությանը՝ ***«Պետական պլանում ԽՍՀՄ պետական բյուջեի մեջ 1989 թվականից հատուկ կետով նախատեսել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման կարեւորագույն ցուցանիշները, ինչպես նաեւ խնդիրների իրականացման միջոցառումները...***

ԽՍՀՄ պետմատին՝ առանձին տողով առանձնացնել նշված առաջադրանքների կատարման համար հատկացվող նյութատեխնիկական միջոցները...»:

Եվ, այսպե՛ս, շատ կարճ ժամանակում պարզ դարձավ, որ Վոլսկին ճիշտ է ասել Ղարաբաղում գործի անցնելու առաջին իսկ օրերին՝ ինքն ու իր կոմիտեն ապրում են այն հոգսերով, որոնք տասնամյակներ շարունակ պաշարած են եղել Ղարաբաղի հայությանը: Եվ դա առաջին հերթին տեսան ու հասկացան Ադրբեջանի ղեկավարները: Հասկացան ու սկսեցին պայքարել Կոմիտեի, Վոլսկու, նրա մյուս աշխատողների դեմ: Ադրբեջանի Գերագույն խորհրդի մի ամբողջ նստաշրջան խնդիր ուներ միայն Կոմիտեի ցրումը, Վոլսկու կոմիտեի, որին ներկայացնում էին ամեն տեսակ մեղք ու հան-

ցանի՝ հակաադրբեջանական բարոզչությունից մինչեւ Ղարաբաղի ու Հայաստանի միացումը վերջնականապես իրականացնելու դավադրություն։

Վոլսկին, իհարկե, համեմատաբար զուսպ ու զգաստ մարդ էր, արած-թողածի մասին խոսելիս ջանում էր աղմուկ չանել, հակառակորդին շատ չգրգռել։ Միութենական ամբիոններից խոսելիս եթե Ադրբեջանի մեղքերը բնաղատում էր, աշխատում էր նման զանցանքներ վերագրել նաեւ Հայաստանին։ Երեւի մտածելով, թե կաեւորը գործն է, որին նայող խելահաս մարդը կհասկանա, թե ինչն ինչո՞ց է։ Իսկ նույն Կոմիտեի մյուս աշխատողները, օրինակ, զաղափարական-մշակութային հարցերով զբաղվող Վլադիմիր Սիդորովը կամ մեկ ուրիշը, զգուշանալու ի՞նչ ունեին։ Եվ մի անգամ, այդ արդեն 89-ի հոկտեմբերի սկզբին էր, շուրջ ինն ամսվա աշխատանքից հետո, միութենական թերթը հարցազրույց էր ունեցել Սիդորովի հետ, ու նա բացեիբաց հայտարարեց, թե Ղարաբաղի հարցի *«լուծումը լինելու է դժվար։ Բայց պետք է լուծել, այն էլ առանց ուշացնելու։ Հարցը չափազանց հասունացել է»։* Այն լուծելիս պետք է նկատի առնել ոչ թե ադրբեջանական կամ հայկական զորձոնը, այլ միայն ու միայն *«ազգային ինքնորոշման զաղափարը»։ «Անկասկած այստեղ կարող են լինել իրողությունը նկատի առնող մի շարք փուլեր։ Այսօր, օրինակ, ես չեմ տեսնում ուրիշ որեւէ համարժեք, քան հատուկ վարչությունն է, ԼՂԻՄ-ի ժամանակավոր ենթակայությունը կենտրոնին։ Ժամանակավոր՝ մինչեւ այն պահը, երբ կմարեն կրքերը եւ հնարավոր կլինի հարցը լուծել հիմնավոր կերպով»* («Արգումենտի ի ֆակտի», 1989, No 39)։

Ուրեմն, Ղարաբաղի հարցը պիտի լուծել՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի առումով, առանց կանգ առնելու ուրիշ որեւէ խնդրի առաջ։ Սակայն, բանի հիմա ազգամիջյան բախումների ծանր շրջանն է, հարկ է ժամանակավորապես հետաձգել հարցի լուծումը, որպեսզի կրքերը մարեն... Իսկ այս *«ժամանակավորապես»* ամենահարմար ձեւն էլ Հատուկ կոմիտեն է, որը, ինչպես վերը տեսանք, գործում է հոգուտ արցախահայության շահերի, այսինքն՝ Արցախն Ադրբեջանից անջատելու եւ Հայաստանի հետ միացնելու հեռանկարով։

Կարո՞ղ ենք մտածել, թե Սիդորովը, միութենական թերթում հանդես գալով, արտահայտում էր լոկ իր անձնական կարծիքը եւ ոչ թե այն, ինչ մտածում էր նաեւ իր նախագահը, ինչ նպատակով գործում էր Հատուկ կոմիտեն։ Իհարկե, ո՛չ։ Հակառակ դեպքում Ա. Վոլսկին որեւէ կերպ կհասկացներ, թե Սիդորովի խոսքերի տերը միայն ու միայն ինքը՝ Սիդորովն է... Բայց նման բան տեղի չունեցավ։

Ադրբեջանական կողմն այդպես էլ հասկացավ եւ, Սիդորովի ու Կոմիտեի դեմ, փոթորկվեց, ժայթքեց մի կատաղություն, որի նմանը չէր եղել 88-ի փետրվարից ի վեր։ Արշավանք սկսվեց Ադրբեջանի ռադիոյի ու հեռուստատեսության, թերթերի ու հանդեսների կողմից։ Կուսակցական Կենտկոմը կատարվածը դատապարտող որոշում ընդունեց։ Բողոքի հեղեղ հոսեց դեպի կենտրոնական լրատվություն, դեպի միութենական ղեկավարություն...

Իսկ հանրապետության Գերագույն խորհուրդը սեպտեմբերի 15-ին անցկացրած

իր արտակարգ նստաշրջանում ոչ միայն նորից դատապարտեց Հատուկ կոմիտեի ու նրա ղեկավար Ա. Վոլսկու, աշխատակից Վլ. Սիդորովի գործունեությունը, այլեւ ընդունեց հատուկ որոշում Կոմիտեն ցրելու եւ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանին վերաենթարկեցնելու մասին:

Դժբախտաբար նույնը կատարվեց նաեւ Հայաստանում, նույնիսկ Արցախում: Այստեղ եւս հարմար ժամանակ համարեցին պայքարի ելնելու Ա. Վոլսկու, նրա Կոմիտեի, առհասարակ հարցը լուծելու այս *ընդմիջման* դեմ: Սկսվելով փողոցից, հանրահավաքներից ու ցույցերից՝ այն փոխադրվեց լրատվության մարմիններ, ռադիո ու հեռուստատեսություն, նաեւ Հայաստանի կոմկուսի Կենտկոմ եւ հանրապետության Գերագույն խորհուրդ:

Ցավոք, Հատուկ կոմիտեի ստեղծումից հետո Հայաստանի ղեկավարությունը ոչ թե մտածված ու ճկուն համագործակցություն էր սկսել նրա հետ, ոչ թե աջակցում էր նրան, հաճախ նույնիսկ թելադրում անելիքը եւ հորդորում, այլ բռնել էր մի դիրք, որ կարելի է կոչել կողմնակի դիտողի... Իսկ երբ արդեն գլուխ էին բարձրացրել առավել անհանդուժողական տարրերը, ապա նրանց ազդեցությունից տագնապած՝ ընկրսեց նույն երգը, ըստ էության օգնեց, որպեսզի վարչությունը ճանաչվի ավելորդ: Տեսեք՝ Հատուկ կոմիտեի դերն ու գործն ինչպես էր գնահատում, օրինակ, Հայաստանի առաջին ղեկավարը՝ կուս. Կենտկոմի քարտուղար Ս. Հարությունյանը դեռեւս 1989թ. մայիսի 24-ին (ռուս. «Կոմունիստ»), այսինքն՝ երբ այն միայն երեք ամիս էր գործել: Ասում է. ***«Կոմիտեն չի դարձել կենտրոնական, կամ, ինչպես ընդունված է կոչել շատ երկրներում, պրեզիդենտական վարչության նոր լիակատար ձեւը»:***

Ինչո՞ւ չի դարձել, երբ նրա առաջին ու երկրորդ քայլերը հենց այդպիսի վարչության քայլեր էին: Օգնեի՞ր նրան, հենց ինքդ, որպես շահագրգռված կողմի գերագույն ղեկավար, ամեն միջոցի դիմեիր, որպեսզի այդ ձեւն իրականացներ նաեւ իր հաջորդ քայլերը, իր իսկական դերը:

«Մենք մինչեւ այսօր չենք ունեցել ճշգրիտ, կարգին լրատվություն ԼՂԻՄ-ից,- գանգատվում էր Հայաստանի կուս. Կենտկոմի քարտուղարը,- ***մեր ժողովրդին չէինք կարող ասել, թե արդեն ինչ է կատարված Լեռնային Ղարաբաղում...»:***

Ուրեմն, Հայաստանի ղեկավարն ինքը մի կարգին տեղեկություն չուներ, թե ինչ է կատարվում Ղարաբաղում եւ, հավանաբար, մտածում էր, թե Արկադի Վոլսկուն այնտեղ են ուղարկել, որպեսզի Հայաստանի կուս. Կենտկոմին լուրեր հաղորդի, ապահովի այդ ***«ճշգրիտ, կարգին լրատվությունը»,*** եւ նա էլ չի կատարում լրատուի իր այս դերը:

Նույն այս կրավորական տրտունջը նա արտահայտեց նաեւ մի քանի օր հետո բացված ԽՍՀՄ ժող. դեպուտատների համագումարում, առանց քաշվելու հայտարարելով, թե իր հանրապետության ղեկավարները չեն կարող հաճախել ԼՂԻՄ, ***«Առանց ար-***

գելքների Լեռնային Ղարաբաղում չեն կարող լինել գիտության ու մշակույթի գործիչները»։

Կարելի էր կարծել, թե Կոմիտեն էր նրանց խանգարում։ Բայց չէ՞ որ Կոմիտեի նախագահ Վոլսկին ինքն էր նրանց հրավիրում, համագործակցության եղանակներ հուշում ու կատարում...

Ս. Հարությունյանի համար ամենաձեռնտու եղանակն այն էր, որ չաներ իր անելիքը, չաներ եւ զանգատվեր։ Իսկ վերջում էլ ասեր. *«Արդեն հայտնվել է մարդկանց անվստահությունը Կոմիտեի նկատմամբ»։*

Նոյեմբերին զումարված Հայկ. ԽՍՀ ԳԽ-ի նստաշրջանին ներկա էր նաեւ Ա. Վոլսկին։ Հայաստանի ու Ադրբեջանի շրջաններում մոլեգնած ադրբեջանական խռովություններից, հակահայկական վայրագություններից զգուշացնելով՝ նա ժողովարարներին խորհուրդ էր տալիս թողնել դահլիճը, գնալ շրջանները, տեղերում գործ կատարել, խափանել ամեն մի չարություն։ Նստաշրջանում, ապա եւ նրա շարունակությունը դարձած նոյեմբերի վերջի-դեկտեմբերի 1-ի նիստում սա գնահատվեց որպես ծրագրված թշնամական ելույթ հայ ժողովրդի դեմ։ Մենք պետք է ինքներս ենք լուծենք Ղարաբաղի հարցը, նա խանգարեց մեզ՝ իրականացնելով միութենական ղեկավարության կարգադրությունը,- Վոլսկու դիրքն այսպես էին բացատրում Հայկական ԽՍՀ ԳԽ-ի դեպուտատներից ոմանք։ Սրան էլ հետեւեց 89-ի դեկտեմբերի 1-ի որոշումը, որը Կոմիտեին իսպառ զրկում էր գործունեության ասպարեզից...

89-ի նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը Ղարաբաղի մասին ընդունել էր մի նոր որոշում, որը ոչնչով չէր լուծում հարցը, հակառակը, այն ավելի էր խճճում՝ Կոմիտեի կողքին ստեղծելով ինչ-որ նոր մարմին (հանրապետական կազմկոմիտե), որը, ինչպես հետո երեւաց, պարզապես մի տրոյական ձի էր եւ մարզում Ադրբեջանի բռնություններն էր վերահաստատելու։

Նույնիսկ այս պարագային էլ դեռեւս պահպանվում էր Վոլսկու Կոմիտեն, որը գուցե թե հնարավորություն ունենար զսպելու չար ուժերին...

Սակայն Հայաստանի անկախության փողհարներն ու նրանց ղարաբաղցի ձայնակցորդներն այսքանից հետո էլ հանգիստ չթողեցին Կոմիտեին։ Եվ շուրջ մեկ ամիս հետո Միխայիլ Գորբաչովը վերացրեց Կոմիտեն՝ դա պատճառաբանելով այսպես. կոմիտեն ստեղծված էր հայ-ադրբեջանական հակամարտությունը մեղմելու, գլխավոր հարցի լուծումը մոտեցնելու նպատակով։ Ադրբեջանական կողմն այն թշնամաբար էր ընդունում։ Դա թերեւս հասկանալի է։ Սակայն հայկական կողմի՞ թշնամանքը... Այս դեպքում էլ ի՞նչ իմաստ ունի Կոմիտեի գոյությունը։

1990 թ. Բաքվի դեպքերից հետո Գորբաչովի նոր որոշումով լուծարքի ենթարկվեց ԼՂԻՄ-ի կառավարման Հատուկ կոմիտեն, Վոլսկու կոմիտեն։ Նրա փոխարեն մարզ եկավ ու հիմնավորվեց Պոլյանիչկոյի հանրապետական կազմկոմիտեն, որին տեղացիներ (հայեր) եւս պիտի անդամակցեին։ Զանդամակցեցին, չուզեցին գործակցել այդ անօրեն մարմնի կազմակերպելիք միջոցառումներին, որովհետեւ նախօրոք ծանոթ էին Պոլյանիչկո կոչված երեւույթին՝ ինչպես Աֆղանստանում խաղացած նրա դերից, այնպես էլ Բաքվում արած հայտարարություններից (բավական է հիշել «Կոմս.

պրավդայի» զարմացական հայտարարությունը, թե Պոլյանիչկոն թորֆերին կշտամբում է իսլամի դավանության կարգերը խախտելու մեջ)։

Այսպես եղավ, որ հայ մարդիկ թորֆին օգնեցին Վոլսկու կոմիտեն մարզից վռնդելու։ Վոլսկուն հեռացրին եւ նրա տեղ Ղարաբաղին պարգեւեցին մի Պոլյանիչկո, մի Սաֆոնով եւ ուրիշ այսպիսի ճիվաղներ։

ԲԱԲՎԻ ՀԱՅԵՐԻ ՀՈՒՆՎԱՐՅԱՆ ՋԱՐԴԸ ԵՎ ԳՈՐԲԱՉՈՎԻ ՆՈՐ ՍԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Բաֆվում հայերի վիճակն անտանելի էր դարձել դարաբաղյան դեպքերի առաջին իսկ օրերից, այն ժամանակից (1988-ի փետրվար), երբ Գորբաչովը թորֆ ջարդարարներին հուշել էր, առանց այդ էլ, նրանց շատ լավ սերտած անելիքը։ Թել Ավիվում լույս տեսնող «Կրուգ» շաբաթաթերթն 89-ի հուլիսին տպագրել է նախկին բաֆվաբնակ մի հրեայի օրագիրը, որը պատմում է հենց 88-ին սկսած բռնությունները, բացահայտ հալածանքներն ու ջարդերը, որոնք անարգել գործադրվում էին ամենուրեք, եւ ոչ ոք դրա համար պատասխանատու չէր։[1]

89-ի աշնանն արդեն բախումները, ավելի ճիշտ՝ միակողմանի ու անպատիժ վայրագությունները այն աստիճանի էին հասել, որ նույնիսկ միութենական թերթերն ու հեռուստատեսությունն էին համարյա ամեն օր տագնապած հաղորդում, պահանջում դիմել կտրական միջոցների, կանխել սպասվող աղետը։ Հայաստանի ու ԼՂ-ի պատգամավորներն այնքան էին Գերագույն խորհրդի ամբիոնն օգտագործել իրենց ազգակիցների դեմ գործվող չարագործությունները դադարեցնելու կոչերով, որ այլազգի պատգամավորները, Գորբաչովի ու նրա տեղակալ Լուկյանովի անտարբերությունից վարակված, արդեն ձանձրացել էին եւ մտածում էին, թե այդ հայերն ուրիշ երգ չգիտե՞ն։

Իսկ ա՛յդ հայերը բացատրում էին, որ այնտեղ, Ադրբեջանում, Բաֆվում ու մյուս քաղաքներում եւ շրջաններում, ծրագրված իրականացվում է ադրբեջանաբնակ հայության վերջին զանգվածների բնաջնջումը, նույնիսկ բացատրում էին, թե եղել են հանրապետության ղեկավարների հեռուստատեսային ելույթները, կոչերը, ծրագրված հայկական ջարդը կազմակերպված, միահամուռ ու միանգամից կատարելու հրահանգները։

Արցախում այն օրերին համաժողովրդական զայրույթն ահավոր չափերի էին հասցրել հանրապետության ղեկավար Ա. Վեզիրովի հեռուստաելույթները, որոնց սանձարձակ, արյունահեղության մղող տոնը վայելում էր լոկ փողոցի խուժանին։

1990-ի հունվարն սկսվեց հակահայկական չարությունների մի տեսարանով, որից չէր կարելի չենթադրել, թե Ադրբեջանն ու կենտրոնական իշխանությունները շատ ավելի ահավոր մի ծրագիր ունեն, միայն թե հարմար եղանակներ են մտմտում։

---

1 Տե՛ս "Нагорный Карабах и вокруг него", ժող., Ե., 1991, էջ 179-189։

Հունվարի 2-ին Աղդամից Շուշի պիտի գնար ավտոբուսների մի շարասյուն, որն, իբր, 150 ադրբեջանցիներ պիտի փոխադրեր՝ Կրասնոյարսկի ռազմական թե միլիցիական դպրոցի սաների հսկիչ-ուղեկցությամբ։ Աղդամից Շուշի ուղիղ ավտոճանապարհն անցնում է Կարկառ գետի եզերքով եւ չի մտնում Ստեփանակերտ։ Սակայն շարասյունը որոշել էր անցնել Ստեփանակերտով՝ ցուցադրաբար աղմուկ-աղաղակ անելով, երեւի քաղաքի բնակիչներին ցույց տալու համար, թե ահա այսպե՛ս, մենք ձեզ ոչ մի բանի տեղ չենք դնում։ Ստեփանակերտցիները կանգնեցրել են շարասյունը՝ փորձելով պարզել, թե ինչո՞ւ եւ ինչպե՞ս է կատարվում այդ երթը, երբ օրենքի համաձայն նման դեպքերը պետք է իրականացվեն տեղական իշխանության ու պարետի թույլտվությամբ։ Շարասյան ուղեկցորդները հենց դրան էլ սպասում էին. կրակ բաց արին իրենց աշխույժ զբոսանքը խանգարողների վրա, հետո էլ ավտոմատների կրակահերթերով հաղթականորեն անցան իրենց ճանապարհը քաղաքի վարի ծայրից մինչեւ վերեւ՝ մարզային հիվանդանոցի մոտերքը։ Ծանր վերքեր հասցրին մեկ տասնյակից ավելի մարդկանց, որոնցից մեկը՝ անվանի քանդակագործ Արմեն Հովսեփյանը, մահացավ։

Մարզի ղեկավարները բողոքեցին այս կազմակերպված սադրանքի դեմ, հայ պատգամավորները նորից աղմուկ բարձրացրին երկրի Գերագույն խորհրդում։ Սակայն ո՛չ մի արդյունք։ Նույնիսկ հասարակ մի քննություն էլ չկազմակերպվեց, որպեսզի պարզվի, թե ո՛վ էր նախաձեռնողը, եւ հետո՛ ինչ պիտի կատարվի։ Երկիրն զբաղված էր ուրիշ մի գործով. Ադրբեջանի ժողովուրդը քրիստոնեական նոր տարին դիմավորել էր իր նորանկախ պետության հարավային ամբողջ սահմանը վերացնելով։ Ադրբեջան էին ժամանել ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Գիրենկոն, հանրահռչակ Նիշանովը եւ ուրիշ բազմաթիվ դզող-փչողներ՝ իբր, տեղի ունեցածը քննելու, աննախադեպ հանցագործության պատճառները որոշելու համար... Սակայն հերյուրում էին այն քողարկելու ձեւ ու եղանակ, արդարացնելու միջոցներ։ Մինչդեռ հաղորդվող սուտ-փուտ տեղեկություններ միջից մեկ-մեկ էլ դուրս էին պրծնում տվյալներ, որոնցից պարզվում էր, որ դեռեւս դեկտեմբերի սկզբներին, Նախիջեւանի սահմանը ոտքի տակ տալով նրանց այսպես կոչված ժողովրդական ճակատի ռազմամոլ մի խումբ խառնվել է Իրանի ցեղակիցների հետ, բարձրագոչ հայտարարել, թե իրենք, այսինքն՝ Հարավային Ադրբեջանն ու Հյուսիսայինը, պիտի միավորվեն, դառնան մի հզոր պետություն, թոթափեն ինչպես Ռուսաստանի լուծը, այնպես էլ Իրանի... Դեկտեմբերի 12-ին արդեն ժողճակատայիններն սահմանապահ զորքերի հրամանատարությանը հրահանգել են, որպեսզի նրանք իրենց ու Իրանի միջեւ եղած սահմանն ազատեն արգելափակոցներից, հակառակ դեպքում իրենք կքանդեն ամեն ինչ, կջարդեն իրենց միավորմանը խանգարող բոլոր սարքերը, շինություններն ու ամրությունները։ Հրամանատարությունն ընդառաջել էր սանձարձակ ժողճակատայիններին, եւ նրանք դեկտեմբերի 31-ին Նախիջեւանի ամբողջ սահմանի երկարությամբ ***«միավորել են»*** իրենց երկու պետությունները...

Գիրենկոն ու Նիշանովը ժամանել էին ադրբեջանցիների սահմանախախտության գործով, սակայն որոշեցին միաժամանակ զբաղվել նաեւ Ղարաբաղի հարցով եւ,

հունվարի 9-ին հասնելով Ստեփանակերտի օդանավակայանը, պիտի մտնեին քաղաք, որպեսզի Պոլյանիչկոյին հասցնեին այնտեղ՝ մարզը հանձնեին նրա տնօրինությանը՝ իբրեւ նոյեմբերի 28-ի կարեւորագույն որոշման իրականացում:

Ստեփանակերտում ոտքի ելավ ամբողջ բնակչությունը: Զնայած ճանապարհները բռնված էին զինվորության ու զրահատեխնիկայի շարքերով, անկոչ հյուրերը չկարողացան քաղաք մտնել եւ ետ դարձան լրիվ ձախողված:

Կարելի էր մտածել, թե ձեռք է բերվել փոքրիկ մի հաջողություն, եւ վերին իշխանությունը կփորձի մարզի հետ խոսել ուրիշ տեսակ: Մանավանդ, որ Երեւանում էլ Գերագույն խորհրդի նստաշրջանն էր, որը, ԼՂ Ազգային խորհրդի հետ միասին, հանրապետության զարգացման ու ժողովրդատնտեսական ծրագրի մեջ մտցրեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, նշեց այն խնդիրները, որոնք պետք է իրականացվեն միասնաբար, Արցախին իր գիրկն ընդունած նոր Հայաստանի կողմից (հունվարի 9-10-ի նիստը):

Սակայն հենց այս ժամանակ էլ (հունվարի 10-ին) Մոսկվայում տեղի ուներ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության նիստը, որը չեղյալ ու անօրինական հայտարարեց Հայաստանի ԳԽ-ի ու ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի դեկտ. 1-ի միացյալ որոշումը մարզը Հայաստանին միացնելու մասին՝ իբրեւ անկախ Ադրբեջանի իրավունքները ոտնահարելու փորձ:

Իհարկե, Նախագահությունն ընդունեց մի այլ որոշում եւս, որով դիտողություններ էին արվում Ադրբեջանի ԳԽ-ի դեկտեմբերի 4-ի որոշման առթիվ, որով անիրականանալի են համարվում նոյեմբերի 28-ի հայտնի որոշման որոշ կետեր: Սակայն ինչ էլ որ լինի, Գորբաչովի Նախագահությունը երկու որոշմամբ մեկ անգամ եւս պնդում էր, որ ԼՂԻՄ-ը պետք է մնա Ադրբեջանի կազմում:

Այս որոշումների շուրջ կատաղի հաղորդումներ եղան Ադրբեջանական լրատվական միջոցներով: Վերին իշխանության հակահայկական դիրքից ոգեւորված՝ ժողճակատայիները եւ իշխանության ներկայացուցիչները ժողովրդին կոչում էին միասնության, Ղարաբաղի ու ողջ հայության դեմ վճռական պայքարի: Եվ, իբրեւ արդյունք այս ամենի, սաստկացան բռնությունները հանրապետության հայ բնակչության դեմ: Հունվարի 13-ին Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանը Գորբաչովին ուղղված նամակում տագնապած հայտնում էր, թե Բաքվի, Խանլարի ու Շահումյանի շրջանների հայության դեմ բորբոքված զինյալ հարձակումներն արդեն վեր են ածվել զանգվածային կոտորածների, որոնց համար պատասխանատու են ոչ միայն Ադրբեջանի ղեկավարները, այլեւ այդ հանրապետությունում տեղակայված զինվորական ու ներքին գործերի միավորումների հրամանատարները:

Նշանակալից է Ադրբեջանի ղեկավար Վեզիրովի հեռուստատեսային ելույթը հունվարի 13-ին: Նախապես տեղեկացած լինելով եւ հաղորդելով, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահությունը հունվարի 15-16-ին նորից պիտի անդրադառնա Լեռնային Ղարաբաղի հարցին, նա զազազած կոչ էր անում՝ այդ ***«քննարկումը»*** կատարել տեղում, իրենց ժողովրդական ճակատի առաջարկած եղանակով ու նրա ղեկավարությամբ, որպեսզի Մոսկվային այլեւս ոչինչ չմնա բնելու կամ լուծելու:

Եվ պատահական չէ, որ հենց 13-ն էլ դարձավ ճակատագրական Բաքվի հայության համար։ Այդօր զինված ավազակախմբերը հարձակվեցին հայերի բնակարանների վրա, կատարեցին այն անսանձ վայրագությունները, որոնցից հետո մնում էին դիակներ ու մոխիր, մահ ու ավեր։

Ականատեսները պատմում էին, թե զինված խմբերը հայերի բնակարաններն էին մտնում, բարձրահարկ տների պատուհաններից դուրս շպրտում մանուկներին, ծերերին, կանանց վրա թափվում խումբ-խումբ, ապա հոշոտում-հեռանում...

Իրավապահ մարմինները, ներքին զորքերի ու զինվորության ներկայացուցիչները կա՛մ այս չարագործության մասնակիցներ էին, կա՛մ անտարբեր դիտորդներ։ Այդ հետո՛ պիտի շատ թե քիչ անկողմնապահ լրագրողները պատմեին, թե ի՞նչ ահավոր տառապանքների էին ենթարկվել հայ անպաշտպան մարդիկ, կին ու երեխա, ծեր ու ջահել։ Սաբունչի կայարանի հրապարակում, անցուդարձողների աչքերի առաջ, չորս մարդու կենդանի-կենդանի վառել են, նրանց դիակներից բարձրացող բոցերից տաքացել, որպեսզի անցնեն նոր վայրագության...

Իսկ հանրապետության մյուս քաղաքներում չարագործություններն այնքան սանձարձակ ու հրեշավոր են եղել եւ այնպես ազատ ու անպատիժ, որ վկաներ էլ չեն մնացել։ Միայն հետագայում անկաշառ ու ազնիվ մի քանի հետաքննող պարզել կամ արձանագրել են դեպքեր, որոնք ուղղակի սահմռկեցուցիչ են։ Պետանվտանգության կոմիտեի նախագահ Կրյուչկովն էր ԽՄԿԿ Կենտկոմի պլենումում անուն առ անուն հիշել Գանձակի ծերանոցի այն 12 հայ կենվորներին, որոնց ժողճակատայինները ողջողջ թաղել էին հողում։

Հունվարի 15-ին Հայաստանի կառավարությունն ու կոմկուսի Կենտկոմը երկրի ղեկավար մարմիններին հեռագրով նորից հաղորդեցին Ադրբեջանում հայության դեմ գործվող ցեղասպանության մասին, պահանջեցին, որ ***«վերջ դրվի հայ ժողովրդի դեմ շղաղարող դաժան ու բռնի գործողություններին, ցեղասպանությանը տրվի քաղաքական գնահատական»***։

14-15-ին Բաքվի ցույցերում ու հանրահավաքներում հայերին վերջ տալու կոչերի հետ միասին, արդեն հնչում էին նաեւ հակախորհրդային, ***«շուրա հոքյումաթը»*** ջնջելու հրահանգներ։ Հարձակումներ եղան կառավարական շենքերի, լրատվության կենտրոնների վրա։ Զինված ավազակախմբերը պահանջում էին վերջ տալ իրենց ազգային կյանքը խաթարած խորհրդային կարգերին եւ իշխանությունը հանձնել ժող. ճակատին։

Այս մեկն արդեն չափազանց էր եւ Գորբաչովին սթափեցրեց։

Հունվարի 15-ին, վերջապես, ԽՍՀՄ ԳԽ Նախագահությունն ընդունեց որոշում, որով նշվում էր, թե ***«իրավիճակը հատկապես սրվել է Բաքու, Գանձակ քաղաքներում եւ մի շարք ուրիշ բնակավայրերում։ Բանը հասել է... խորհրդային իշխանությունը զինուժով կործանելու, ԽՍՀՄ Սահմանադրությամբ ամրագրված պետական հասարակական կարգը բռնությամբ փոփոխելու փորձին»***։

Եվ ի՞նչն է այսմանի պատճառը՝ գորբաչովյան հրամանագրի համաձայն: ***«Սրան օժանդակել են,*** - գրված է այնտեղ, - ***ԽՍՀՄ Սահմանադրությանը չհամապատասխանող այն գործողությունները, որոնք Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդն էր ընդունել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ»***:

Ուրեմն, Հայաստանում Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ որոշումներ են ընդունվել, եւ դրա համար էլ Բաքվում խորհրդային կարգերը վերացնելու փորձ են անում:

Ապա որոշումը Բաքվում, Գանձակում եւ մի շարք ուրիշ բնակավայրերում վայրագ խժդժություններին վերջ տալու համար նշում է միջոցառումներ, որոնցից առաջինն էլ՝ ***«Արտակարգ դրություն հայտարարել Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ու նրա հարակից շրջանների, Հայկական ԽՍՀ Գորիսի շրջանի տարածքում...»***:

Խորհրդային իշխանությունը վերացնելու փորձ Բաքվում են կատարել, արտակարգ դրություն հայտարարվում է Ղարաբաղի ու Գորիսի համար:

Մի՞թե պարզ չէ, որ արտակարգ դրություն է ստեղծվում ԼՂԻՄ-ում՝ մարզի հայության համար իր երկիրը կալանատան վերածելու նպատակով, իսկ Գորիսում էլ՝ նրա համար, որպեսզի ճանապարհը փակվի, վերացվի ամեն մի առնչություն մարզի ու Հայաստանի միջեւ:

Որոշման մեջ կար մի կետ էլ, որը հիմք պիտի դառնար այլեւայլ բռնությունների, այդ մարզ-կալանատան մեջ ամեն տեսակ կամայականություն ազատ ու անարգել կատարելու համար: ***«Մտցնել պարետային ժամ, սահմանափակել քաղաքացիների ելքն ու մուտքը, քաղաքացիներին ժամանակավոր արտաքսել շրջաններից...»***:

Սահմանափակել ելքն ու մուտքը, ժամանակավորապես արտաքսել...

Հետո մենք կտեսնենք, թե այս կարգադրությունն ինչպե՞ս էր իրականացվում Կենտրոնի ու Բաքվի սադիստ դրածոների արյունոտ ձեռքերով, ինչ հրեշավոր եղանակներով, անմարդկային ինչ կարգեր արմատավորելով:

Մի կետով էլ՝ ***«Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահությունից պահանջել նախաձեռնելու ամենամեծական քայլեր՝ խափանելու այդ հանրապետության տարածքից եկող սադրիչ գործողությունները, որոնք բորբոքում են ազգամիջյան կրքեր եւ ազգային թշնամանք երկու ժողովուրդների միջեւ»***:

Մի անգամ, երբ Գորբաչովին կշտամբեցին, թե իրենք Սումգայիթ զորք մտցրին՝ այնտեղ հայկական ջարդերի ավարտից հետո, նա անամոթաբար ստեց, թե, իբր, իրենք Սումգայիթում ուշացել են միայն երեք ժամ: Ավելի քան երեք օրը դարձրեց երեք ժամ:

Իսկ հիմա Բաքու զորք մտցրին հայկական ջարդերի ավարտից հետո, երբ այնտեղ այլեւս հայ չէր մնացել, եւ սկսվել էին խժդժությունները ռուսների ու խորհրդային կառավարական մարմիններին դեմ:

Սումգայիթի հայկական ջարդն այսպես թե այնպես դատապարտվեց խորհրդային հասարակության կողմից: Նույնիսկ ցուցադրական-օպերետային մի դատավարություն էլ եղավ, որը հարյուրավոր ու հազարավոր ղեկավար ու շարքային չարագործներից մեկին՝ պարզապես անօգնական դարձած մի երիտասարդի, դատապարտեց մահվան, եւ ստացվեց այն տպավորությունը, թե մեղսագործությունը պատժվում էլ է: Առավել մեծ մասշտաբի ու դաժանության Բաքվի ջարդերի համար, ինչպես ֆիչ առաջ տեսանք, մեղսագործներ ճանաչվեցին հայերն իրենք, իսկ ձեռքերն արնոտ բաքվեցիները՝ Վեզիրովից ու Մուբալիբովից մինչեւ շարքային մարդակերները, ոչ միայն ազատ թողնվեցին, այլեւ իրավունք ստացան ավելի բարձր գոռալու, պահանջելու հատուցում եւ նոր արտոնություններ, որպեսզի շարունակեն հայկական ջարդերն ու այլազան բարբարոսությունները:

ԼՂԻՄ-ի մարզխորհրդի դեպուտատներն այս դեպքերից հետո մի համախոսական էին հղել մեծ տերությունների դեսպանություններին ու ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահությանը եւ, իբր, զարմացած էին, հարց էին տալիս, թե այն ինչպե՞ս է լինում, որ Ադրբեջանի ժողովուրդը քանդեց-հողին հավասարեցրեց Խորհրդային Միության հարավային հզորագույն սահմանը՝ 800-900 կմ երկարությամբ: Եվ Գիրենկոն, Նիշանովն ու այլ ղեկավար ընկերներ ջանում են դա արդարացնել. ասում են՝ նույն ժողովուրդն են սահմանից այս կողմ ու այն կողմ, ուզում են միավորվել... Իսկ մենք, որ դարձյալ նույն ժողովուրդն ենք, բայց ոչ մի սահման էլ չենք ավերում, այլ ուզում ենք միավորվել նույն երկրի ներսում, նույն դրոշի տակ ու նույն պետության հովանավորության ներքո... մեր ցանկությունը համարվում է հակաօրինական ու անմարդկային:

Կամ էլ, օրինակ, ամո՞ թ չլինի հարցնելը. այդ ինչպե՞ս է, որ մեր հարգելի ընկեր Գորբաչովը 1990-ի փետրվարի 2-ին աշխարհի առաջ հայտարարեց, թե շատ բնական ու օրինական է գերմանական ազգային միավորումը: Իսկ հետո էլ կանցլեր Հելմուտ Կոլին ասաց, թե ***«Այժմ ԽՍՀՄ, ԳՖՀ եւ ԳԴՀ միջեւ տարաձայնություն չկա այն առթիվ, որ գերմանական ազգի միասնության հարցը պետք է լուծեն իրենք՝ գերմանացիները...»***

Ուրեմն, ընկ. Գորբաչովը թույլ է տալիս, որ գերմանացիների միավորման հարցը լուծեն իրենք՝ գերմանացիները: Չնայած նրանք այդ միավորումը պետք է իրականացնեին մի դժվար գործ կատարելով՝ Բեռլինի պատը քանդելով: Իսկ մեր՝ հայերիս միավորման հարցը հանձնում է Ադրբեջանին եւ ասում՝ ինչպես կուզես տնօրինիր...

Արցախում ռազմական պարետի իր պաշտոնին վերադարձած գեներալ Սաֆոնովի խմբերը, Գորբաչովի հրամանագիրն իրականացնելու պատրվակով, գյուղերն ընկած՝ հայերից խլում էին որսորդական հրացանները, նույնիսկ սառ զենք կոչված տնային կացիններն ու խոհանոցային դանակները, իսկ թորքերն ազատ կրում էին ամեն տեսակ զենք ու զինամթերք, որոնք գործադրելու ազատություն էլ ունեին: Այն տպավորությունն էր ստացվում, թե հայերից խլում-հավաքում էին, որովհետեւ սրանք չէին օգտագործում ունեցածը: Էլ ի՞նչ իմաստ ուներ թողնել, որ պահեն ու չօգտագործեն:

Այդպես էլ գորբաչովյան ***«անձնազրային ռեժիմն»*** էր անցկացվում՝ կարծես

թորի գյուղերին խրախուսելով, որ գործեն ազատ ու անկաշկանդ, իսկ հայերի դեմ *«ելքն ու մուտքը սահմանափակելու»* իրավունքն օգտագործելով իբրեւ կալանատան կարգ ու կանոն։

Սաֆոնովը 90թ. հունվարի 1-ին մարզկոմի շենքի գլխին էլ տնկել էր տվել Ադրբեջանի դրոշը՝ երեւի համոզված լինելով, որ այն վար բերելու փորձեր կլինեն, եւ ինքն օրինական հիմքեր կունենա պատժելու այդ անդրդվելի ստեփանակերտցիներին։

Այդ օրը մարզգործկոմի բոլոր աշխատողները լքել էին շենքը, որի վրա տնկված էր բռնատիրության դրոշակը, եւ տեղավորվել էին քաղկոմի շենքում։

Սաֆոնովը դեռ չգիտեր, որ լքելու համար էլ կարող է պատժել։

Սակայն հրաման ուներ ազատագրական շարժման ղեկավարներին մեկուսացնելու եւ շարունակեց նախորդի՝ գեներալ Կոսոլապովի գործը, կալանքի տակ առավ ղեկավար ու շարքային բազմաթիվ աշխատողների, եւ այսպես խորհրդային տարբեր բանտերում ու տաժանավայրերում հայտնվեցին, ինչպես ավելի քան մեկ տարի առաջ կալանքի վերցված Արկադի Մանուչարովը, այնպես էլ հետագայում կալանվածները՝ Արկադի Ղուկասյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Ռոլես Աղաջանյանը, Ավետիք Գրիգորյանը, Ռազմիկ Պետրոսյանը եւ ուրիշներ։

Հունվարի 26-ին Ստեփանակերտ ժամանեցին ԽՍՀՄ պաշտպանության նախարար Յազովն ու ներքին գործոց նախարար Բակատինը, որոնք, մարզի կենտրոնում հանդիպումներ ու զրույցներ ունենալուց հետո, թռան Շահումյան ու Գետաշենի ենթաշրջան, ծանոթացան այս տարածքի հայության դաժան շրջափակմանը, տեսան, որ ուղղաթիռային կապը Երեւանի հետ նրա կյանքը մի քիչ էլ կերկարաձգի, մինչեւ որեւէ ելք գտնվի... Եվ կարգադրեցին, որպեսզի դադարեցվի այդ կապը։

Հունվարի 27-ին, գեն. Սաֆոնովի զորամասի ու զրահատեխնիկայի ուղեկցությամբ, Ստեփանակերտ ժամանեց (ո՛չ, խուժե՛ց, որովհետեւ ոչ ոք չէր հրավիրել, եւ մուտքն էլ փակ էր դժգոհ ցուցարարների շարքերով), այսպես կոչված, հանրապետական կազմկոմիտեն՝ Վ. Պոլյանիչկոյի գլխավորությամբ։ Հետաքրքիր տեսք ուներ այդ կոմիտեն՝ բաղկացած երեք ռուսից (Պոլյանիչկո, Գոլուբեւ, Ռադաեւ) եւ հինգ թորից (Ասադով, Վելիմամեդով, Քերիմով, Օրուջեւ, Ջաֆարով)։ Եվ սրանք պիտի ղեկավարեին իր ազգային ինքնուրույնության ու ազատության համար պայքարող արցախահայությանը։

Սրանք պիտի գլխավորեին մարզկոմի ու մարզգործկոմի դեռեւս գործող ապարատները։ Երբ Սաֆոնովի տանկերի ու ավտոմատավորների ուղեկցությամբ նրանք հասան քաղաք, մտան մարզկոմի շենքը եւ ներսիններին առաջարկեցին համագործակցել, վերջինները թքեցին-հեռացան այդ շենքից։

Հունվարի 28-ին խորհրդային լրատվությունը հաղորդեց, թե ԱՄՆ-ի 25 սենատորների ստորագրությամբ նամակ է հասել Գորբաչովին։ Այնտեղ խնդրվում էր արդար լուծում տալ Լեռնային Ղարաբաղի խնդրին, արցախահայությանը պաշտպանել Ադրբեջանից։

Երեւի նիշտ կլիներ, որ գրեին՝ *«արցախահայությանը պաշտպանել Ադրբեջանից ու քեզանից»։*

Գորբաչովյան հովանավորությամբ օժտված Ադրբեջանի հանրապետական մարմինները շտապում էին վերականգնել իրենց տիրապետությունը մարզում. փետրվարին խոսում էին, որ կուս. Կենտկոմը որոշել է ադրբեջաներեն մարզային թերթ («Ղարաբաղ») տպագրել։ Հասել էին նրան, որ ԽՍՀՄ գլխավոր դատախազի հրամանով մարզի բոլոր շրջանների դատախազությունները պիտի ենթարկվեն հանրապետական դատախազությանը։

Փետրվարի երկրորդ կեսին ԽՍՀՄ ԳԽ-ի երրորդ նստաշրջանում վերստին բարձրացվել էր Ղարաբաղի հարցը, եւ Գորբաչովը շարունակում էր համառել իր հին տեսակետի վրա. Ղարաբաղը գտնվում է Ադրբեջանի սահմաններում եւ պետք է ենթարկվի նրան, նրա օրենքներին։

Բայց չէ՞ որ Ադրբեջանում օրենքներ չեն գործում, եւ հայերի նկատմամբ կիրառվում են միայն արնախում խուժանի մութ կրքերը։

Նստաշրջանի նիստերից մեկում ելույթ ունեցավ պատգամավոր Զորի Բալայանը եւ Գորբաչովին ու նրա պես մտածողներին ուղղեց մի այսպիսի բազմանյուղ հարց. ***«Ղարաբաղի հայը կարո՞ղ է այսո՛ր, այս պահի՛ն բուժվելու գնալ Բաքու, ուսման գնալ Բաքու, գործուղման գնալ Բաքու, իջեւանել Բաքվի հյուրանոցում, նստել Բաքվում գումարվող Գերագույն խորհրդի նիստին։ Կարո՞ղ է Բաքվից ընդունել սննդի մթերքներ ու դեղամիջոցներ»։***

Եթե այսօր գտնվի մեկը, որ ասի՝ կարող է, ուրեմն խելագար է։ Ապա՝ դում էլ ինչպե՞ս եք պատկերացնում այդ ղարաբաղցի հայի կենսական հարցերի լուծումը, ո՞ւմ պիտի ենթարկվի այդ ղարաբաղցի հայը, եթե արդեն հայտնի է, որ այժմ եւ դեռ շատ ու շատ երկար ժամանակ անհնար է նրա որեւէ հարաբերություն Բաքվի հետ։

Այս եւ նման շատ խոսքերից հետո ադրբեջանական պատգամավորները նստաշրջանը թողել-հեռացել էին, իսկ մնացածներն էլ համոզվել էին, որ Լեռնային Ղարաբաղն այլեւս չի կարելի պահել Ադրբեջանի կազմում, գոնե պետք է հանել եւ դնել Կենտրոնի ենթակայության տակ։

Սա փետրվարի 19-ի նիստում էր։

Գորբաչովն այս անգամ էլ կարողացավ հարցի այսօրինակ լուծումը հետաձգել, թողնել փետրվարի 24-ի նիստին, որպեսզի մեկ էլ հետաձգի մեկ ուրիշ օրվան, ասենք փետրվարի 27-ին, հետո էլ 28-ին, մարտի 1-ին եւ, վերջապես, մարտի 5-ին, ԳԽ-ի փակ նիստում, ընդունել տալ մի որոշում, որը ոչինչ էլ չէր որոշում՝ ***«հանձնարարելով»***, որ երկու հանրապետությունների ղեկավարները, առանց ձգձգելու, նստեն բանակցությունների սեղանի շուրջ, պայմանավորվեն իրենց անելիքները՝ երկու ժողովուրդների հարաբերությունները վերականգնելու համար՝ ***«ելնելով երկու հանրապետությունների իրավահավասարության, անկախության եւ տարածքային ամբողջականության պահպանելու շահերից»***։

Կարելի էր ծիծաղել որոշում կոչված այս խայտառակության վրա, եթե այնքան ողբերգական չլիներ արդյունքը՝ արցախահայության համար ձեւած-կարած իրավիճակը, ուր տեր ու տնօրեն պիտի լինեին վերին իշխանության կաշառված զորախմբերի լիակատար հովանավորությունը վայելող թորքերը։

Բաքվի հունվարյան ողբերգությունից հետո, երբ Ադրբեջանի մայրաքաղաքում ապրած 200 թե 300 հազար հայերից այլեւս չէր մնացել ոչ ոք, որովհետեւ մի մասին կոտորել էին, մյուսին ջարդել ու դուրս արել, եւ չնչին մնացորդներն էլ պարզապես գլուխ էին պրծացրել, որովհետեւ մեկ օր իսկ չէին կարող մնալ այդ գեհենում,- ի՞նչ էր մտածում երկու ժողովուրդների համերաշխ համակեցության ջատագով Գորբաչովը, կարելի՞ էր ԼՂԻՄ-ը պահել Ադրբեջանի կազմում, ավելի ճիշտ՝ այդպիսի Բաքվի վերահսկողության տակ: Կարելի՞ էր ընդունել նման որոշում: Երեւի Զ. Բալայանի տրված հարցից հետո այդ բայլին գնացողը պարզապես անուղղելի հիմար պիտի լինի կամ արցախահայությանը տանջամահության դատապարտող սադիստ:

ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ո՛չ մեկն էր, ո՛չ էլ մյուսը: Ինչպես երեւում է արձանագրությունից, նրան ցնցել էր Բալայանի բարձրացրած հարցը: Դրա համար էլ Գորբաչովն այս անգամ եւս հետաձգեց հարցի լուծումը՝ տպավորությունը ցրելու, հետագայում իր դիվային վճիռն ինչ-որ ձեւով նրա վզին փաթաթելու համար:

ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՑԱԴՈՒՎԸ

Սովորական կենսական իրադրություններում հացադուլը լինում է արտահայտություն մեծ հուսահատության. երբ մարդն այլեւս հույս չունի օրինական ու բարոյական նորմերի ազդեցության վրա եւ գնում է ծանր ինքնազրկումի այդ բայլին՝ մտածելով, թե գոնե այդ ինքնազրկումը դիմացինի մեջ կարթնացնի թմրած մարդկայինը:

Մեր պայքարի մարդիկ, կենտրոնի հետ ունեցած բախումներում ինքնազրկումի ի՞նչ եղանակների դիմեցին, հնարամիտ ի՞նչ միջոցների... Օրինակ, ինչո՞վ հացադուլ չէր Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Մովսիսյանի՝ 1990-ի սեպտեմբերի 5-ին Գորբաչովին ուղղված նամակի սպառնալիքը...

Շարժման ամբողջ ընթացքում նրա առաջին գծում եղած, իր բանական ու գործնական ունակություններով գործին բավական օժանդակած մարդը, դարձել էր հանրապետության առաջին ղեկավարը, ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ, ստացել ամենայն հնարավորություն շփումներ ունենալու երկրի առաջին մարդու, խնդրի լուծման վրա միահեծան ազդեցություն բանեցնող ղեկավարի հետ: Եվ պարզել է, որ նա ոչ միայն մեր արդարության համակիրը չէ, այլեւ ամեն կերպ ջանում է սպանել այն, եւ դա էլ այն ժամանակ, երբ հայրենի ժողովուրդը գտնվում է վատթարագույն վիճակում, Արցախն ապրում է իր ողբերգության գուցե թե վերջին արարը: Այս բոլորի մասին հաղորդելով հանգամանալից տվյալներ, առաջարկելով դրությունը փրկելու որոշակի բայլեր՝ Մովսիսյանը կատարում էր նաեւ «հացադուլի» գնալու իր վճիռը: Ահա այդ նամակի վերջը. ***«Եթե ամենակարճ ժամանակում Դուք՝ ԽՍՀՄ պրեզիդենտը, չեք անի գործնական քայլեր վերը թվարկված հարցերի լուծման համար՝ կարգավորելու կյանքը ԼՂԻՄ-ում, Շահումյանում ու Գետաշենում, դա վերջնականապես կվարկաբեկի կոմկուսին, եւ ես, գիտակցելով***

իմ անձնական պատասխանատվությունն ու Հանրապետության կոմկուսի պատասխանատվությունը հայ ժողովրդի առաջ, ստիպված կլինեմ հրաժարական տալ եւ դուրս գալ ԽՄԿԿ Բաղբյուրոյի կազմից»։

Սա եթե, մի կողմից, քաղաքական-կուսակցական հացադուլի հայտարարություն էր, ապա մյուս կողմից էլ՝ ապտակ էր դիմացինին, որն այդ երեւի չզգաց էլ, չզգաստացավ եւ չմղվեց մարդկային ու գործնական որեւէ քայլի, որովհետեւ նրա մեջ մեռած էր այդ մարդկայինը կամ էլ, առհասարակ, երբեք կենդանի չէր եղել, գոյություն չէր ունեցել։

Բայց կատարվեց նաեւ իսկական հացադուլը։ Սեպտեմբերի 9-ին, կիրակի, Մոսկվայի «Մոսկվա» հյուրանոցի իր համարում հացադուլի նստեց ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, գրող, հրապարակախոս Զորի Բալայանը։ Այդ առթիվ պրեզիդենտ Գորբաչովին հղած նամակում նա իր հարկադրական քայլը բացատրում էր որպես բողոքի ծայրահեղ միջոց՝ ԼՂԻՄ-ի վարչական իրավասությունը վերացնելուն ուղղված ադրբեջանական սադրանքների, շրջափակման եւ ուրիշ խարդավանալից միջոցառումների դեմ։

Բալայանն իր նամակին կցել էր բազմաթիվ փաստաթղթեր, որոնք հանգամանորեն բացահայտում էին մարզում իրագործվող ապօրինությունները, մարդու իրավունքների վայրենի խախտումները, մանավանդ զորքերի կողմից խաղաղ բնակչության դեմ ձեռնարկվող բռնությունները։

Սեպտեմբերի 12-ին հացադուլավոր Զ. Բալայանին միացավ նաեւ Հայաստանի ԳԱ-ի պրեզիդենտ, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Վիկտոր Համբարձումյանը։ Աշխարհահռչակ գիտնականի եւ բավականին տարեց մարդու (այդ օրերին նա լինում էր 82 տարեկան)՝ անձնազոհության հավասար այս հայրենասիրական քայլի մասին նույն օրն էլ ընդարձակ հաղորդումներ եղան ռադիոյով ու հեռուստատեսությամբ, տագնապ հայտարարեցին թերթերը։

Սեպտեմբերի 13-ին Բալայանին ու Համբարձումյանին միացան նաեւ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ, ԽՍՀՄ ժող. արտիստ Սոս Սարգսյանը, ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի նախագահ Վաչագան Գրիգորյանը, ԼՂԻՄ-ի մարզգործկոմի նախագահ Սիմոն Բաբայանը։

Հետագայում նրանց միացան նաեւ ուրիշները Երեւանում, Ստեփանակերտում։ Նույնիսկ օտար բարեկամները բաժանեցին նրանց զրկանքները։ Ոչ հայ գրողներ, գիտնականներ, հասարակ մարդիկ։ Դրանց շարքում առաջիններից էին ուզբեկ Սուրաթ Շարաֆուտդինովը, նաեւ՝ Տաջիկստանից անվանի գիտնական Շարիֆ Շուքուրովը, որը նախընթացին հոդված էր գրել հայոց եւ իր ազգի արիական ակունքների, հինավուրց հոգեւոր ընդհանրությունների մասին, մտածում էր, թե օտարները պարտավոր են հասկանալ մեր այսօրվա վերքը եւ եթե չեն բուժում, ապա թող գոնե աղ չցանեն վրան։

Սեպտեմբերի 18-ին ԽՍՀՄ ԳԱ պրեզիդենտ Գ. Մարչուկն իր ակադեմիայի Նախագահության անունից հատուկ գրությամբ դիմեց հացադուլավոր Վ. Համբարձումյանին՝ նրան հաղորդելով հետեւյալը. *«ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Նա-*

խազահությունը, պաշտպանելով մեր հասարակական վերակառուցման ընթացքը եւ հանդես գալով մարդու սահմանադրական իրավունքների խախտման բոլոր ձեւերի դեմ, դիմել է ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովին՝ խնդրելով շտապ միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղում սահմանադրական սկզբունքների իրականացման եւ մարդու իրավունքների պաշտպանության նպատակով։

Նամակում շարադրված է մեր դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության տեղական մարմինների գործունեությունը վերականգնելու անհրաժեշտության վերաբերյալ։

ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ

Գ. Ի. Մարչուկ»։

Նույն օրը ԽՍՀՄ պրեզիդենտի մամուլի կենտրոնի ղեկավար Իգնատենկոն այցելեց ակադեմիկոս Համբարձումյանին, իր պրեզիդենտի անունից շնորհավորեց հենց այդ օրը լրացած նրա 82-ամյակի առթիվ։ Եվ ակադեմիկոսը թախծոտ ասաց.

-Այս պահին ինձ համար ամենաթանկագին շնորհավորանքն այն կլիներ, որ հայտնեիք, թե Լեռնային Ղարաբաղում վերականգնված է օրինական իշխանությունը, եւ պրեզիդենտը ճանաչում է արցախահայության իրավունքները։

Աշխարհը փոթորկված էր հայ մտավորականների անօրինակ խիզախության համար (ամոթ մեզ՝ հենց այդ օրերին Երեւանի թերթերում հայտնվել էին կեղտոտբերան գրչակներ, որոնք հայ մտավորականության դեմ լուտանքներ էին թափում, նրան մեղադրում անդիմության, անգործունեության եւ էլի ինչ-ինչ մեղքերի մեջ)։ Նույնիսկ մոսկովյան շատ թերթեր, որ միայն հայության դեմ բամբասանքների մեջ էին վարպետացած, սկսեցին կարեկցանքով գրել հացադուլավորների, նրանց պահանջների, Արցախի հարցին գործնական լուծում տալու անհրաժեշտության մասին։ Հրապարակում էին երկրի նշանավոր մարդկանց եւ շարքային աշխատավորների նամակներ, որոնք ջերմորեն խոսում էին սեփական ազգի ցավի համար իրենց կյանքը վտանգի ենթարկած մարդկանց մասին, կենտրոնին կշտամբում էին ազգային ու մարդկային ցավերի հանդեպ ցուցաբերած քար անտարբերության համար։ Ահա մի նամակ, որ ստորագրել են միության բազմավաստակ, համբավավոր մի խումբ մտավորականներ, մշակութային գործիչներ՝ Ֆ. Բուլացկին, Ա. Գելմանը, Ա. Գոնչարովը, Դ. Գրանինը, Ա. Ժիգուլինը, Մ. Զախարովը, Դ. Կուգուլտինովը, Վ. Կուդրյավցեւը, Լ. Լավլինսկին, Ալ. Միխայլովը, Վ. Ռասպուտինը, Վ. Սոլոուխինը, Մ. Շատրովը, Ի. Շկլյարեւսկին։ *«Մենք չենք պահանջում ավելի ոչինչ, քան օրինականացված է օրենքով,*- նամակի վերջում գրում են նրանք՝ երկրի Գերագույն խորհրդին կոչ անելով, որքան էլ դա ծիծաղելի լինի, հարգել օրենքն ու օրինականությունը։ - *Մենք մարդասիրության*

կոչ ենք անում։ Զափազանց շատ է ողբերգությունը։ Կործանվում է մարդկային մշակույթը։ Մե՜նք ենք կործանվում։

Մենք մեր հայ հայրենակիցներին կոչ ենք անում դադարեցնել հացադուլը։

Մենք ԽՍՀՄ Գերագույն խորհրդին կոչ ենք անում օժանդակել սեփական որոշման իրականացմանը՝ Լեռնային Ղարաբաղում վերականգնել սահմանադրական իշխանությունը»։

Հացադուլավորներին այցելեցին Ռուսաստանի Թատերական գործիչների միության նախագահ Միխ. Ուլյանովը, խաղաղության պաշտպանության խորհրդային կոմիտեի նախագահ Հենրիխ Բորովիկը, ՌԽՖԽՀ ԳԽ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ Ս. Կովալյովը, որոնք, ջերմորեն արտահայտելով իրենց համակրանքն ու սերը հայ պատգամավորների նկատմամբ, պարտավորվեցին աջակցել նրանց ձեռնարկին, պայքարել արդարության հաղթանակի համար։

Ստեղծվեց Զորի Բալայանի կյանքի փրկության կոմիտե՝ ռուս նշանավոր բանաստեղծ Միխայիլ Դուդինի գլխավորությամբ։ Հենց մի քանի ամիս առաջ Բալայանը սրտի ծանր վիրահատություն էր տարել եւ հիմա էլ հանձն էր առել ինքնատանջահարության այդ ծանրագույն տեսակը։ Մոսկվա, Կրեմլ, պրեզիդենտ Գորբաչովին հղված հեռագրում հանձնաժողովը պահանջում էր Լեռնային Ղարաբաղի ու հարակից հայկական շրջանների բնակչությանն ազատագրել Ադրբեջանի ու Կենտրոնը ներկայացնող զորամիավորումների սադրանքներից, Ղարաբաղի խնդիրը լուծել ժողովրդի իրավունքի վերահաստատմամբ եւ ոչ թե նույն ժողովրդի բնաջնջմամբ, որպեսզի մարդիկ այլեւս ստիպված չլինեն գնալու անհավասար պայքարի հուսահատական քայլին՝ հացադուլի։ *«Եթե Բալայանի հայտարարած հացադուլը ողբերգական ավարտ ունենա, ապա դա կդառնա այս վերակառուցում կոչվածի, մեր ողջ երկրի եւ առաջին հերթին պրեզիդենտ Գորբաչովի մեծ խայտառակությունը»*, - գրված է կոմիտեի հեռագրի մեջ։

Գորբաչովին հեռագրեցին նաեւ ԱՄՆ-ում Զ. Բալայանի սրտի վիրահատությունն իրականացրած բժիշկները եւ, իրենց տաղանդավոր ու հրաշալի ձեռքերով փրկված կյանքի համար տագնապած, Գորբաչովին առաջարկում էին մարդ լինել եւ վերացնել մի ամբողջ ազգի տառապանքի հրեշավոր պատճառը։ Նույնպիսի հեռագիր էին ստորագրել նաեւ ԱՄՆ-ի 12 կոնգրեսականներ։

Իսկ Գորբաչովը մա՞րդ էր, ընդունա՞կ պիտի լիներ մարդկային տառապանքն զգալու եւ նրա պատճառը վերացնելու։

Հեռախոսազրույցներից մեկի ժամանակ Զորին հայտնեց, թե Գորբաչովն իրենց գրել է նամակ, ուր *«ափսոսանք է հայտնում եւ խնդրում, հատկապես հաշվի առնելով Վիկտոր Համբարձումյանի տարիքը, դադարեցնել հացադուլը եւ անցնել պայքարի այլ եղանակի։ Այսինքն՝ նա համաձայն է, որ պայքարն անհրաժեշտ է, չնայած հիանալի գիտի, որ մյուս բոլոր եղանակներն արդեն սպառված են, հատկապես իր հետ շփումները, որոնք ոչ մի բանի չեն հար-*

ցրել։ Նա բազմիցս խոստացել է, թե Լեռնային Ղարաբաղում կվերականգնի խորհրդային իշխանությունը եւ չի կատարել այդ խոստումը։ Մենք նույնպիսի բովանդակությամբ նամակներ ենք ստացել Լուկյանովից, Լապտեւից, Նիշանովից»։

Այո՛, Գորբաչովը եւ նրա գործակիցներն են գրել, գրել են, բայց ի՞նչ օգուտ այդպիսի նամակներից եւ նրանց փուչ խոսքերից, որոնց մեջ միայն կեղծիքն է բնավորված, երեսպաշտությունն է իշխում, բար անտարբերությունը մարդկային ցավի հանդեպ։

Մի հարցնող լիներ, թե պայքարի էՀ ինչ եղանակներ կան, որ պատգամավոր, գրող ու հրապարակախոս Զորի Բալայանը եւ նրա բախտակիցները չեն կատարել՝ Գերագույն խորհրդում, մամուլում ու լրատվության մյուս ասպարեզներում, երկրի ղեկավարության հետ ունեցած զրավոր ու բանավոր զրույցներում։ Գուցե միայն կաշա՞ռքը, սիրաշահելու այսօրինակ մյուս եղանակնե՞րը... Բայց չէ՞ որ դրանցում արդեն հին փորձ ու հմտություն են պետք։ Իսկ դրանցով էլ հակառակորդի հետ մրցելը կլիներ անհնար...

Երբ արդեն հացադուլավորների առողջությանն ու կյանքին լուրջ վտանգ էր ըսպառնում, գործին խառնվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը։ Վեր կացավ, գնաց Մոսկվա, այցելեց հացադուլավոր պատգամավորներին, հայրաբար մաղթեց, որ Աստված օգնի նրանց ցավի դարմանումին եւ հայրաբար էլ խնդրեց, որ նրանք դադարեցնեն հացադուլը. չէ՞ որ դեռ պետք են նրանց թանկագին կյանքերը, պայքարը դեռ առջեւում է։ Ու վճռաբար ասաց՝ ***«Առանց ձեզ ես չեմ վերադառնա Սուրբ Էջմիածին»***։

Սեպտեմբերի 29-ին, սկսելու օրից ուղիղ երեք շաբաթ անց, նրանք դադարեցրին հացադուլը։ Այդ առթիվ հայտարարություն էլ հրապարակեցին՝ երդվելով շարունակել պայքարը՝ ***«Հանուն Արցախի, հանուն հայրենիքի ազատագրության, որի համար պատրաստ ենք ամեն տեսակ զոհաբերության»***։

ԳԵՏԱՇԵՆԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ (ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԸՆԹԱՑՔԸ, ԴԱՍԵՐԸ)

Այս ամբողջը տեղի ունեցավ՝ սկսած 1990-ի կեսերից։ Դեռեւս 90-ի օգոստոս-սեպտեմբերին, պարզ էր, որ Ադրբեջանը, խորհրդային բանակի ու ներքին զորքերի ծախու միավորումների հետ, ծրագրել է Գետաշենի ենթաշրջանի հայության հարցի վերջնական լուծումը թորմավարի։ Աշնանը տեղացիների օգնության աղաղակին խառնվել էր նաեւ այն տարածքում հայտնված լրագրողների տագնապոտ ձայնը։ Երեվում էր նաեւ, որ վերին օղակների տերերն էլ հարմար առիթի են սպասում թորքի ծրագրին հավանության քվե տալու, որը եւ Հայաստանի՛ց ստացան։ Այստեղ ԽՍՀՄ կազմից դուրս գալու, անկախությունն այսօր եւեթ ձեռք բերելու, առհասարակ

կենտրոնի հետ ամեն կապ ու հարաբերություն խզելու մի այնպիսի եռուզեռ էր սկսվել, որ կարելի էր կարծել, թե հեղինակներն ուրիշ ոչ մի հոգս չունեն։ Գարնանն արդեն դա նման էր տենդի, որին ենթարկված մարդիկ ընդունակ են դառնում ամեն տեսակ անհավասարակշիռ քայլի ու գործողության։

Ապրիլի 5-ին ՀՀ ՆԳՆ-ն ու ՊԱԿ-ը դիմում հղեցին ԽՍՀՄ ՊԱԿ-ին, Պաշտպանության ու ՆԳ նախարարություններին՝ պատմելով այն վայրագությունների մասին, որ Ադրբեջանի օմոնականներն ու այդ հանրապետությունում տեղակայված զինվորական միավորումներն են կատարում Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում, ինչպես նաեւ ԼՂԻՄ-ում, Շահումյանի շրջանում ու Գետաշենի ենթաշրջանում։ Այսպես. մարտի 30-ի գիշերը Շահումյանի շրջանի Հայ-Պարիս գյուղի ֆերմայից առեւանգել են անասնապահներ 57-ամյա Յա. Հովսեփյանին ու 63-ամյա Ա. Առուշանյանին, որոնց երկար տանջահարելուց հետո կտրել են ականջները, ապա եւ գլուխները։

Դիմումում նշված էր, որ ***«Ադրբեջանի Խանլարի շրջանի Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերի բնակիչները գտնվում են պաշարման մեջ։ 10 օրվա ընթացքում օմոնականների բանդաներով շրջապատված այդ գյուղերը ենթարկվել են գնդակոծության, ընդ որում՝ նաեւ հրանոթներից։ Բարդ վիճակ է ստեղծվել Ստեփանակերտի օդանավակայանում, որտեղ անարգել տիրություն են անում թորք օմոնականները։ Օդանավակայան հասնող ուղեւորներն օմոնականների կողմից ենթարկվում են ամեն տեսակ ստորացումների։ Անգութ ստուգումների ընթացքում այդ օմոնականները կողոպտում են ուղեւորներին՝ խլելով այն ամենը, ինչ իրենց դուր է գալիս։ Այս դեպքում տուժվածների բողոքներին ոչ մի ուշադրություն չի դարձնում ԼՂԻՄ-ի հատուկ դրության ռազմական պարետությունը, որը փաստորեն հրաժարվում է իր վրա դրված պարտականությունը կատարելուց...***

Ապրիլի 7-ին նման մի դիմում-հայտարարություն էլ հրապարակվել է՝ արդեն ՀՀ կառավարության անունից։ Ներկայացվում են անհանդուրժելի նույն դրությունը, օմոնականների ու նրանց հովանավորող զինվորության եւ ՆԳ զորամիավորումների հակահայկական կամայականությունները, բռնությունները, ծրագրված բռնազաղթեցումների ակնհայտ նախապատրաստությունները Շուշվա շրջանի, Շահումյանի շրջանի ու Գետաշենի ենթաշրջանի հայկական բնակավայրերից։ Այստեղ բացառապես մեղադրվում են կենտրոնական իշխանությունների ներկայացուցիչները, հատկապես ԽՍՀՄ ներքին գործերի նախարարությունն ու պաշտպանության նախարարությունը։ Մեծ բաժին է հասնում նաեւ ***«ԽՍՀՄ ղեկավարությանը»***, որը ձգտում է ***«իրադրության ապակայունացման միջոցով հակադրել Հայաստանի Հանրապետության անկախ քաղաքական կուրսին»***, առանց հասկանալու, որ դա ***«հղի է ամենածանր հետեւանքներով ոչ միայն հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների համար, այլեւ, առաջին հերթին, միութենական եւ ադրբեջանական ղեկավարության համար»***։

Ապրիլի 12-ին ՀՀ ԳԽ-ի Նախագահությունը եւ Նախարարների խորհուրդը հրապարակել են համատեղ հայտարարություն, որով նշում են, որ հայ ժողովրդին ծնկի բերելու նպատակով Կենտրոնն ու Ադրբեջանը վերստին սրել են իրավիճակը ԼՂԻՄ-ում, Շահումյանի շրջանում ու Գետաշենի ենթաշրջանում։

«Հայ ազգաբնակչության դեմ ոտնձգությունները հասել են ակնհայտ վայրագության աստիճանի,- գրված է հայտարարության մեջ։- *Խոշտանգումներով մարդկանց սպանելու սոմգայիթյան մեթոդները նորից դրվել են շրջանառության մեջ։ Օրերս գազանային գլխատման են ենթարկել Շահումյանի շրջանի երկու բնակիչների։ Գետաշենում հատուկ նշանառության զենքով սպանել են 11 տարեկան մի տղայի։ Թիվ չկա հայ մարդկանց առեւանգումներին։*

Միութենական մարմինները, դատապարտելի անուշադրության մատնելով Հայաստանի Հանրապետության կառավարության ս.թ. ապրիլի 7-ի հայտարությունն ստեղծված իրավիճակի կապակցությամբ, այս ամենի համար կրում են ուղղակի պատասխանատվություն»։

Ա. Մութալիբովը կտրուկ հայտարարեց, թե ԼՂԻՄ-ում ու Ադրբեջանի այլ վայրերում ապրող հայերը կա՛մ պետք է ընդունեն մեր օրենքները, կա՛մ հեռանան... Հայ գրոհայիններին զինաթափելու համար մենք դիմել ենք ԽՍՀՄ պրեզիդենտին, ՆԳՆ եւ ՄԱԿ։ Հակառակ դեպքում ինքներս այդ կանենք, քանի որ դրա համար ունենք բավականաչափ ուժեր։ Իսկ ծայրահեղականներն ու խռովարարները պետք է թողնեն մարզի տարածքը, այլապես մենք ստիպված կլինենք գործադրել մեր օրենքներն ամենայն խստությամբ։

«Մեր օրենքները» այսինքն՝ ադրբեջանական օրենքները, որոնք անօրինության ու բարբարոսության նոր տեսակն են ներկայացնում ու գործադրվում են քաղաքակիրթ աշխարհի անտարբեր աչքի առաջ։

Դեռեւս ապրիլի 16-ի խորհրդակցությունում Ա. Մութալիբովն իրավապահ մարմիններին՝ ՊԱԿ-ին, ՆԳՆ-ին եւ դատախազությանը կոչ էր արել տեղահանել ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի ու Գետաշենի ենթաշրջանի բնակիչներին, եթե նրանք չենթարկվեն Ադրբեջանի սահմանադրությանը։

Ապրիլի 29-ի գիշերն սկսվեց Գետաշենի ու Մարտունաշենի հերթական, հերթական՝ ն, բայց աննախադեպ հրթիռակոծումը Ղուշչի-Արմավիր ու Սարիսու գյուղերում տեղակայված զորամիավորումների կողմից։ Առավոտյան զրահամեքենաների ուղեկցությամբ զորքերը շարժվեցին երկու հայկական գյուղերի վրա։ Ինքնապաշտպանության ուժերը Մարտունաշենից կրակ բացեցին՝ նպատակ ունենալով կասեցնել հակառակորդի առաջխաղացումը։ Դրան հետեւեց գյուղի կրակակոծումը հրանոթներից ու զնդացիրներից։

Հենց այդ ժամանակ էլ, ներքին գործերի ստորաբաժանման հետ միասին, Գետաշեն խուժեցին ադրբեջանական օմոնի եւ հարեւան թորքի գյուղերի զինված ավազակախմբերը։ Գյուղում սկսվեց ջարդ, որին զոհ գնացին 20 հոգի, շատերը վիրավորվե-

ցին։ Այս արյունահեղությունը շարունակվում էր մինչեւ օրվա կեսը։ Հետո ավազակները, 50 հոգու պատանդ վերցնելով եւ տները կողոպտելով, գյուղից հեռացան։

Ապրիլի 30-ին Գետաշենում կատարված վայրագության մասին ռուս ականատեսը հրապարակել է հետեւյալը. *«Առավոտյան մոտավորապես ժամը 6-ին, հարյուրավոր տանկերով ու զրահամեքենաներով բանակը հարձակվեց Գետաշեն գյուղի վրա։ Մարդիկ կարծեցին, թե դա արվում է իրենց պաշտպանության նպատակով, սակայն զինվորները 29 մարդ հավաքելով նրանց տարան գյուղից դուրս, ստիպեցին բերանքսիվայր պառկել գետնին եւ սկսեցին ոտքերով հարվածել նրանց։ Այնուհետեւ ավազ լեյտենանտը մարդկանց հանձնեց ադրբեջանցի օմոնականներին, որոնք ծեծի ենթարկելուց հետո առաջարկեցին նրանց ստորագրել իրենց իսկ կազմած փաստաթղթերն այն մասին, որ, իբր, բնակչությունը համաձայն է կամովին թողնել սեփական տները եւ տեղափոխվել այլ հանրապետություն։ Իսկ երբ ծեծված մարդիկ հրաժարվեցին ստորագրել, վերստին ծեծի ենթարկվեցին։ Զինվորներն արգելափակեցին բոլոր ճանապարհները, մինչեւ անգամ անտառ տանող արահետները եւ սկսեցին կողոպտել տները...»*[1]

Ապրիլի 30-ի վաղ առավոտյան Մարտունաշենն արդեն պաշարված էր խորհրդային զորքերի եւ ադրբեջանական բաշիբոզուկների կողմից։ Շրջակայքի բարձունքները նվաճած տանկերն սկսեցին գյուղը հրետակոծել։ Ուղղաթիռներն էլ երկնքից էին կրակ թափում գյուղի գլխին։ Այն ժամանակ գյուղի ինքնապաշտպանների «Արաբո» ջոկատի հրամանատար Սիմոն Աչիկգյոզյանը՝ ֆիդայիների սիրելի «Դեդը», զինվորներին կարգադրեց կազմակերպել բնակչության նահանջը դեպի Գետաշեն, իսկ ինքը, բարձրանալով տներից մեկի կտուրը, փորձեց գնդացրային կրակով ապահովել բնակչության նահանջը։ Ասում են՝ կրակում էր ու երգում։ Երեւի գիտեր, որ նահատակվելու է։ Ուզում էր այնպես գեղեցիկ ապրած կյանքն ավարտել սիրած երգով եւ արյունակիցների փրկությանը զոհաբերվելով... Հրանոթի մի արկ ընկավ կողքին, տունը փլցրեց։ Փլատակների տակ մնաց խիզախ հրամանատարը։

Ականատեսները պատմում են, որ գյուղացիներին Գետաշեն փոխադրելու համար ջոկատի երիտասարդ մարտիկները պատրաստ էին վճարելու իրենց մատաղ կյանքերը։ Իսկ գյուղ խուժած նվաճողները՝ զինվոր թե օմոնական, որոշել էին ստվերի տակ թողնել հին ու նոր ժամանակների բոլոր ասպատակիչների դաժանությունները։

Այդօր ՀՀ ԳԽ-ը վերստին հրապարակեց հայտարարություն, որով հիշեցնում էր ապրիլի 25-ին ընդունած իր որոշումը ԽՍՀՄ ժող. պատգամավորների արտահերթ համագումար հրավիրելու պահանջով, հիշեցնում, որ դրանից հետո վիճակն անտանելի է դարձել, դիմում էր աշխարհի պետությունների կառավարություններին, ժողովուրդներին, խնդրում գործադրել միջոցներ, որպեսզի դադարեցվի հայ ժողովրդի դեմ

1 «Ռեսպուբլիկա Արմենիա», 1991 թ. մայիս 4։

սանձազերծված նոր ագրեսիան... Բայց ո՞վ էր լսողը, ո՞վ էր ուշադրություն դարձնողը...

Մայիսի 1-ի կեսօրվա կողմ Շահումյանի շրջանից ուղղաթիռով Երեւան հասավ Զորի Բալայանը եւ պատմեց, որ զինվորականներն իրենց արգելել են Շահումյանից Գետաշենի ենթաշրջան գնալ: Նույնիսկ թույլ չեն տվել այնտեղի ծանր վիրավորներին փոխադրել Շահումյան, ուրկից էլ ուղղաթիռով՝ Երեւան... Այդ պատճառով էլ վեց անօգնական վիրավորներ մահացել են Գետաշենում:

Երեկոյան դեմ, Գետաշենում պատանդ տված 13 զինվորների դիմաց, զինվորական խմբերն արդեն կալանքի տակ էին առել 53 հոգու եւ սանձարձակ վայրագություններով տանջում էին մնացածներին... Գյուղացիները խմբերով փախչում էին դեպի մերձակա անտառը՝ իրենց հետ տանելով, ինչ որ կարող էին, մանավանդ անկարող ու անօգնական համազյուղացիներին:

Մայիսի 2-ին հրապարակվեց ՀՀ ԳԽ-ի հայտարարությունը, որ պարունակում էր դժգոհություն ԽՍՀՄ ժող. պատգամավորների համագումարի արտահերթ նիստ գումարելու մասին իր առաջարկը մերժելու առթիվ, հաղորդում, որ Կենտրոնն ու Ադրբեջանն ագրեսիա են սկսել հայ ժողովրդի դեմ, ուստի ՀՀ ԳԽ-ը գտնում է, որ այս վիճակի համար պատասխանատու են ***«ԽՍՀՄ պրեզիդենտը, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը, ԽՍՀՄ պաշտպանության եւ ներքին գործերի նախարարությունները, ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեն»***:

Հայտարարությունը փակվում էր տիեզերական մի կոչով՝ ***«աշխարհի ժողովուրդներին, պետությունների պառլամենտներին եւ կառավարություններին, միջազգային հանրապետությունների Գերագույն խորհուրդներին, բարի կամքի տեր մարդկանց՝... բոլոր ջանքերը գործադրել հայ ժողովրդի դեմ ուղղված ագրեսիվ գործողությունները դադարեցնելու համար»***:

Այդօր հրապարակվեց նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ուղերձը Գորբաչովին: Այնտեղ շեշտելով իր խորին մտահոգությունն Արցախի, Շահումյանի շրջանի ու Գետաշենի համար, Վեհափառ հայրապետը դիմում էր չեղած բաների՝ Գորբաչովի <u>խղճի ձայնին</u> ու պրեզիդենտական <u>արդար խոսքին</u>:

Դրությունն անհանգիստ էր նաեւ ՀՀ սահմանային շրջաններում՝ Գորիսում, Կապանում, Նոյեմբերյանում ու Իջեւանում:

Օրվա վիճակն ամենից ճիշտ արտահայտվեց մի փաստի մեջ. երեկոյան Մոսկվայում ՀՀ մշտական ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանին զանգել էր ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի հրամանատար գեներալ-գնդապետ Շատալինը եւ սպառնացել, թե հայերը պետք է դադարեցնեն իրենց բողոքներն ու ավելորդ աղմուկը՝ չմոռանալով, որ Հայաստանի ատոմակայանը գտնվում է ԽՍՀՄ ՆԳՆ հսկողության տակ:

Այսինքն՝ դուք բողոքելու իրավունք անգամ չունեք:

Ոչինչ չէր ազդում պատերազմի սանձերն իրենց արյունոտ ձեռքերում պահող քուրմերի վրա, ո՛չ բողոք, ո՛չ անեծք, ո՛չ աղերսանք: Մեռնող ԽՄԿԿ Կենտկոմի պլենումում Լյուդմիլա Հարությունյանն ուղղակի նրանց էր դիմում. ***«Հենց այս բոպե-***

ներին հայկական Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերում մղվում են արյունահեղ մարտեր... Ինչքա՞ն կյանքեր են անհրաժեշտ դեռևս, որպեսզի ԼՂԻՄ-ում կշտացնեք պատերազմի Մողոքին»:

ՀՀ ԳԽ-ի եւ նախարարների խորհրդի Նախագահությունները մայիսի 2-ին ընդունեցին հայտարարության պես մի բան, որով, հավանաբար, ավարտված համարելով Գետաշենի ու Մարտունաշենի չարչարանքի շաբաթը, *«արժանին մատուցելով»* նրանց *«հերոսական բնակչությանը, խորապես ցավակցում են զոհվածների ընտանիքներին ու հարազատներին»*, ապա *«հավաստիացնում են, որ կգործադրեն հնարավոր ամեն ջանք Արցախի ու հարակից շրջանների հայ բնակչության իրավունքները պաշտպանելու համար»:*

Մայիսի 4-ին Գետաշենից երեք ուղղաթիռներ վիրավորներ ու երեխաներ տեղափոխեցին Ստեփանակերտ, եւ սա սկիզբն էր ահավոր բռնագաղթեցման:

Երեկոյան լրատվական միջոցներով հաղորդում էին, որ Շահումյանի ու Մարտակերտի շրջանների ծայրամասերից բռնագաղթեցումը հիմնականում կատարվում է ռազմական ուղղաթիռներով: Նախ ռմբակոծում ու գնդակոծում են խաղաղ ու անպաշտպան բնակավայրերը, ապա այնտեղ վայր է իջնում ռազմական ինքնաթիռը, առաջարկում իր ծառայությունը:

4-ը բեկումնային օր էր ոչ միայն Արցախի, Շահումյանի ու Գետաշենի, այլեւ հայ-ադրբեջանական սահմանային ամբողջ գոտու համար: Սահմանամերձ հայկական գյուղերը ռմբակոծվում էին, ենթարկվում տանկերի ու տարբեր զրահամեքենաների գրոհներին: Սովորական էր դարձել խաղաղ բնակիչների առեւանգումը:

Գորիսից ստացված հաղորդման համաձայն՝ 4-5-ին Կոռնիձոր գյուղից առեւանգվել էին 11 մարդ, որոնցից 9-ը՝ միլիցիայի աշխատողներ, երկուսը՝ տեղական խորհրդի անդամներ: Գերի էին վերցվել նաեւ Գորիսի հեռուստատեսային աշտարակի մի քանի աշխատակիցներ: Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղը եւ գյուղամերձ ճանապարհները չդադարող ռմբակոծությունների ու գնդակոծությունների էին ենթարկվել հարեւան ադրբեջանական Ասկիփարա, Մազումլու եւ Խերբմլու գյուղերում տեղակայված խորհրդային զորքերի ու օմոնի ավազակախմբերի կողմից: Ոսկեպարի ճանապարհի ռմբակոծությամբ կործանվել է մի ավտոբուս, որը գյուղ էր տանում միլիցիայի 11 աշխատողների: Բոլոր տասնմեկն ու վարորդը զոհվել էին ռմբակոծության, ապա եւ դրան հետեւած ուղիղ գնդակոծության հետեւանքով:

Մայիսի 5-ին Ինեսա Բուրկովան, ռուս գրողն ու հասարակական գործիչը, որ այն չորս տարիներին Արցախում էր եղել պարբերաբար, հատկապես նրա դժվար օրերին, այնօր էլ Գետաշենի ողբերգության ականատեսն էր, ահա թե հեռագրով ինչպիսի խոսք հղեց իր հայրենակիցներին, աշխարհի բոլոր մարդկանց, մարդկության խղճին.

«... Խորհրդային բանակի զորամասերը, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումները, ադրբեջանական օմոնականները ոչնչացրին Մարտունաշեն գյուղը,- գրում էր Բուրկովան: - *Վերակառուցման Խաղը է սա*

Փրկվել եւ առայժմ ողջ են շատ քիչ մարտունաշենցիներ։ Սրանք էլ փախել են Գետաշեն, ուր դարձյալ պաշարված են զահիճների կողմից, կամ անտառում են պատսպարվել, ուր օմօնականներն են որսի ելել եւ ավտոմատային կրակահերթերով սանրում են անտառը։ Մեկը կնոջն ու չորս երեխաներին է կորցրել, մյուսը ամուսնուն, երրորդը՝ հարազատներին։ Բոլորն իրենց փոքրը հայրենիքն են կորցրել։ Կորցրել են եւ սերը Մոսկվայի, խորհրդային բանակի, ամեն խորհրդայինի հանդեպ։ Բոլորն անիծում են Գորբաչովին, նրանց հետ էլ՝ ի՛նքս։

Ես՝ ռուս գրող, դիմում եմ բոլորին, ում խիղճը դեռ ողջ է. զարթնե՛ք։ Ես ձեզ եմ դիմում, Սվյատոսլավ Ֆյոդորով, Ֆյոդոր Բուլգակով, Դմիտրի Լիխաչով, Անատոլի Կարպով, Ալբերտ Լիխանով։ Մոռացեք հեռուստամարթոնների ու գովազդների մասին, մարդու կյանքի պաշտպանության համար ոտքի հանեք ձեր՝ մարդու իրավունքների, խաղաղության, մշակույթի, մանկական ընկերությունները եւ հիմնադրամները։ Ահեղորեն բախեք կրեմլյան դռները։

Ես դիմում եմ զինվորների մայրերին՝ ձեր որդիներին արգելեք կրակել բոլոր տարիքի երեխաների, նրանց հայրերի ու մայրերի, պապերի վրա։

Ես դիմում եմ բոլոր ժողովուրդներին, արմատականներին, ազատականներին՝ վե՛ր կացեք արյունալի բռնակալության։

Ես դիմում եմ հայ Սփյուռքին՝ անմիջապես բախեք Բուշի, Միտերանի, ՄԱԿ-ի, Եվրոխորհրդարանի դռները։ Եթե չլսեն ձեզ, ձեր պատմական հայրենիքը ֆիդայիներ ու զենք ուղարկեցեք։ Այստեղ 15 թվականն է։ Սա ասում եմ ես՝ ո՛չ հայուհիս։

Ես չեմ դիմում ԽՍՀՄ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարին, պաշտպանության կոմիտեի նախագահին, խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր Միխայիլ Գորբաչովին։ Չեմ դիմում Յազովին, Պուգոյին, Կրյուչկովին։ Անօգուտ է։ Նրանք մարդկության թշնամիներն են, խուլ են, երկաթով կաղապարված։

Խաղաղ բնակչության հանդեպ արյունալի հաշվեհարդարի կազմակերպիչների նկատմամբ ես միջազգային դատ եմ պահանջում։

Ինեսա Բուրկովա,
մայիսի 5-ի առավոտյան ժ.10,
հաղորդում եմ իրադրության վայրից»։

Մայիսի 6-ին ՀՀ ԳԽ-ը հրապարակեց հայտարարություն՝ *«Հայ ժողովրդի դեմ ձեռնարկվող ցանկացած ոտնձգությանը դիմակայելու իր վճռականության»* մասին։

Հրապարակվեց նաեւ ԳԽ-ի դիմումը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովին: Այս փաստաթուղթը եւս ներկայացնում էր Հայաստանի ու Արցախի դեմ Կենտրոնի սանձազերծած լայնամասշտաբ պատերազմը, որին զոհ էին գնում խաղաղ ու անմեղ մարդիկ, կործանվում էին բնակավայրերը, եւ այս անմարդկային չարագործությունների նպատակն էր՝ իրենց բնաշխարհից բռնագաղթեցնել Արցախի եւ հարեւան շրջանների հայերին, տապալել Հայաստանում սկսված ու հաջողությամբ իրականացվող անկախության գործը:

«Գտնելով, որ դեպքերի նման զարգացումը թելադրում է ՄԱԿ-ի միջամտության անհրաժեշտությունը, - ասվում է դիմումի վերջում, - ***ՀՀ ԳԽ-ը դիմում է ձեզ՝ խնդրանքով, որպեսզի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի դիտորդներ ուղարկեք՝ իրադրությանը տեղում ծանոթանալու եւ համապատասխան հետեւություններ անելու նպատակով»:***

Մայիսի 6-ին, վերջապես, ԽՍՀՄ ԳԽ-ը բարեհաճեց զբաղվել Այսրկովկասում (ոչ թե հայ-ադրբեջանական գոտում, այլ Այսրկովկասում) տիրող լարված իրադրությամբ, եւ Ան. Լուկյանովն առաջարկեց հարցի քննարկումը տեղափոխել Ազգությունների խորհրդի Ազգային բաղամականության ու ազգամիջյան հարաբերությունների հանձնաժողով: Նրա կարծիքով՝ հարցը բարդանում է նրանով, ***«որ Հայաստանի տարածքում ԽՍՀՄ հիմնական օրենքը չի գործում»*** («Հ.», 1991, մայիս): Ուրեմն՝ այնտեղ կարելի է անպատիժ կերպով կոտորել ԽՍՀՄ Սահմանադրության ոլորտից դուրս գտնվող ժողովրդին, - այսպես պիտի հասկանալ ԳԽ-ի նախագահ-մարդատյացի խոսքը:

Մայիսի 8-ին, Գետաշենի ու Մարտունաշենի պարպումից հետո, խորհրդային զորքեր ու մարտական տեխնիկա էին կուտակվում Շահումյանի շրջանում, հայ-ադրբեջանական սահմանի երկարությամբ: Ուրեմն օրակարգի հարց էր դառնում Շահումյանի հայության բռնագաղթեցումը:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՁԱՐԻՔՆԵՐԻՑ ՓՈՔՐԱԳՈՒՅՆԸ

Գետաշենի ողբերգությունը ցույց էր տվել, որ խորհրդային Միության ղեկավարությունը՝ իր զորքով ու ներքին զորքերի զորամիավորումներով, կանգնած է Ադրբեջանի թիկունքում, նրա կամքն է կատարում: Ուստի եւ հաջորդ աղետը գալու է Շահումյանի գլխին, որից հետո այլեւս ոչ մի փրկություն չի լինի Լեռնային Ղարաբաղի համար: Մարդիկ չէին ուզում եւ ժամանակ էլ չունեին քննել-պարզելու համար, թե խորհրդային Միությունն ինչո՞ւ Ադրբեջանի թիկունքում է, ինչո՞ւ Հայաստանը եւ 1989-ի դեկտեմբերի 1-ից նրա հետ ***«միավորված»*** Արցախը միանգամից դարձան աղետի գոտի, որից միակ ելքն էլ դարձել է Լեռնային Ղարաբաղը նորից ոտով-գլխով Ադրբեջանին վերադարձնելը:

Հանձնելու տրամադրությունն այդ օրերին ամենից շատ ու ամենից համառ արտահայտվում էր Հայաստանի ու Արցախի ղեկավար որոշ աշխատողների, մանավանդ

դեպուտատական նեղ շրջանակների հրապարակային ելույթներում։ Երեւանում լուրեր էին պտտվում, թե Արցախում հայտնվել են *«լուրջ ուժեր»*, որոնք պատրաստ են բանակցությունների նստել Ադրբեջանի ղեկավարության հետ, կարգավորել հետագա կյանքը։

ՀՀ ԳԽ-ի մայիսի 16-ի արտահերթ նստաշրջանում գտնվեցին պատգամավորներ, որոնք դեմ արտահայտվեցին բանակցություններ կոչված խաբկանքին, զգուշացրին այդ պարտվողական տրամադրությունից եւ կոչ արին զգաստ լինել. Ադրբեջանը ոչ թե բանակցությունների կգա, այլ պատրաստ է Արցախը հայաթափ անել կամ, լավագույն դեպքում, այնտեղ պահել հայեր, որոնք պիտի հաշտվեն իրենց ստրկական վիճակի հետ։

Իսկ նույն օրը, Արցախում հայտնված *«լուրջ ուժերը»* մարզի աշխատավորության լիազոր ներկայացուցիչների ժողով էին հրավիրել, արցախահայության անունից հրապարակում էին դիմում, որի էությունն այս է. ***«Մ իջազգային կազմակերպությունների եւ արտասահմանյան պետությունների կառավարությունների առաջ հարց հարուցել ինքնավար մարզի ամբողջ հայ բնակչությանը քաղաքական ապաստան տալու մասին։ Դրա հետ մեկտեղ, հետագա արյունահեղությունից խուսափելու նպատակով, ժողովուրդը հայտարարում է.***

- ԼՂԻՄ-ը հավատարիմ է մնում սահմանադրական կարգուկանոնին եւ իր հետագա լիարյուն գոյությունը տեսնում է նորացված միութենական ֆեդերացիայի կազմում։

- Դիմում է ԽՍՀՄ իշխանության բարձրագույն մարմիններին՝ անհապաղ միջամտել եւ ապահովել հայ բնակչության կյանքի, արժանապատվության եւ տարբերական իրավունքների պաշտպանությունը։

Արտակարգ ռեժիմի իրականացումն անհրաժեշտ է ապահովել բացառապես ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության զորքերի կողմից։

- Կոչ է անում մարզի ադրբեջանական համայնքին՝ իշխանության սահմանադրական մարմինների վերականգնման եւ երկու համայնքների փոխհարաբերություններում գոյացած հիմնահարցերի լուծման վերաբերյալ բանակցությունների։ Կոնֆլիկտի մեջ քաշված բոլոր կողմերի բանակցությունների հիման վրա վերանայել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ընդունված հակասահմանադրական բոլոր որոշումները»[1]։

Սովորաբար այդպիսի թուղթը գրվում է մեկի կողմից, ապա ընդունում են նաեւ ուրիշները եւ հրապարակ հանում հանրության անունից։ Համենայն դեպս՝ ոգին Հայաստանի պաշտոնական շրջանում տարածվածն է, ավելացել է միայն ապաստանի խնդրանքը, որն էլ՝ երեւի գուք շարժելու համար։

Պարտվողական, հակաժողովրդական-հակազգային այս պոռթկումը, իհարկե, իր

1 «Դրոշակ», 1992, No 22, էջ 27։

հեռավոր նմանակն ունեցել է՝ դարասկզբի այն փառավոր գոյապայքարի ոլորաններից մեկում, 1919-ի օգոստոսին, երբ արցախահայության 7-րդ համագումարն ընդունեց որոշում՝ ժամանակավորապես, մինչեւ Փարիզի խաղաղարար վեհաժողովում հարցի հիմնավոր լուծումը, հաշտության բանակցությունների գնալ Ադրբեջանի իշխանության հետ...

Ժամանակավոր համաձայնություն կոչված այս գործարքը երկուսուկես տասնյակից ավելի պայմաններ էր դնում հակառակորդի առաջ, պայմաններ, որոնք ի չիք էին դարձնում թորքի իշխանության գերակայությունը, եւ ժողովուրդը դարձյալ տերն էր մնում իր լեռնաստանի:

Հետո էլ, այն ժամանակ արցախահայությունը թորք-քուրդ-օսմանլու եռգլխանի հրեշի դիմաց կանգնած էր միայնակ, ոչ մի օգնության չէր կարող սպասել ոչ մի տեղից, նույնիսկ Հայաստանի Հանրապետությունից, որն ինքը թույլ էր, անօգնական ու թշնամական օղակի մեջ առնված...

91-ի Արցախի վիճակը կարելի՞ է համեմատել նրա հետ: Եվ ամենակարեւորն էլ՝ ***«մարզի ամբողջ հայ բնակչությանը քաղաքական ապաստան տալու մասին»***: Արցախահայությանը որտե՞ղ էին ուզում փոխադրել: Եվ ո՞ւմ էին թողնում երկիրը, ***«մարզի ադրբեջանական համայնքի՞ն»***:

Լիազոր ներկայացուցիչների ժողովի հարուցած խնդիրը մայիսի 20-ին նորից հնչեց, այս անգամ՝ մարզխորհրդի, շրջանային ու քաղաքային խորհուրդների պատգամավորների եւ առհասարակ մարզի ամբողջ պաշտոնեության համախոսականում՝ ուղղված դարձյալ ՄԱԿ-ին, պետությունների խորհրդարաններին ու կառավարություններին, իսկ հաջորդ օրը (մայիսի 21-ին)՝ համայն հայությանը ***(«քաղաքական ապաստան տալ ողջ հայ բնակչությանը»)***:

Մայիսի 25-ին Ռուսաստանի խորհրդարանը, Ղարաբաղ այցելած իր պատգամավորներ Ֆյոդոր Շելով-Կովեդյաեւի ու Սերգեյ Կովալյովի զեկույցը լսելով, ընդունեց հայտարարություն, որով ԽՍՀՄ նախագահից պահանջում էր երկրի զինված ուժերն ու ներքին զորքերը հեռու պահել հակամարտ կողմերից որեւէ մեկին օգնելուց, դադարեցնել բռնությունները, բռնագաղթը, հնարավորություն ստեղծել, որպեսզի բռնագաղթվածները վերադառնան իրենց բնակավայրերը...

Այսպես անորոշ (ո՞վ է ում դեմ բռնանում, բռնագաղթի ենթարկում, ո՞վ պիտի վերադառնա), անատամ ու անհեռանկար:

Մի՞թե այսպիսի խոսքն էլ կարող է ազդել խճճված որեւէ հարցի վրա:

Բոլոր այս եւ ուրիշ նման հարցերի պատասխանը տվեց Այազ Մութալիբովը՝ այս անիմաստ աղմուկից մի քանի շաբաթ անց: Հունիսի 6-ին նրա ստորագրությամբ մի դիմում տարածվեց: Այն հասցեագրված էր ԼՂԻՄ-ի ու Գերանբոյի շրջանի (սա էլ Շահումյանի շրջանի նոր, թորքացրած անունն էր) աշխատավորներին եւ պատասխանն էր, իբր, մայիսին ու հունիսին նրանցից ստացված ***«բազմաթիվ նամակների, հեռագրերի, բանավոր դիմումների»***, որոնցում ***«ազգությամբ հայ քաղաքացիները խնդրում են վճռականապես խափանել Հայաստանից ուղարկվող ա-***

հաբեկիչների ու գրոհայինների գործողությունները, ապահովել յուրաքանչյուր տան, ամեն մի ընտանիքի լիակատար անվտանգության երաշխիքները»: Եվ, իբր, նրանք՝ այն նամակների, հեռագրերի, բանավոր դիմումների հեղինակները, *«դատապարտում են ազգայնամոլ ու անջատողական ուժերին, պատրաստակամություն են արտահայտում առաջնորդվելու ԽՍՀՄ ու Ադրբեջանի սահմանադրություններով»*:

Եվ վզներն Ադրբեջանի թրի տակ դնողներին ի՞նչ էր խոստանում Մութալիբովը. յուրաքանչյուր շրջանում ստեղծել համաձայնությունը կազմակերպող հանձնաժողով, որի մեջ կմտնեն Կազմկոմիտեի երկու համայնքների *«Ադրբեջանի հետ համագործակցելու եւ բարիդրացիության հաստատ կողմնորոշում ունեցող ներկայացուցիչներ»*: Դրանից հետո երեւի թե պետք է լինեն ընտրություններ, որոնց ընթացքում *«իշխանության մարմիններում ընտրվելու համար չեն երաշխավորվի ազգայնամոլ տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչները»*:

Խոսվում է նաեւ Հայաստան-ԼՂԻՄ առնչության անհնարինության մասին: *«Հայաստանի հետ սահմանային շրջաններում... Հինգ կիլոմետրանոց գոտում խստագույն անձնագրային ռեժիմ է մտցվում՝ մշտական գրանցում ունեցող մարդկանց բնակության թույլտվությամբ»*:

Արցախում լավ գիտեին՝ ի՞նչ է նշանակում *«անձնագրային ռեժիմը»* ադրբեջանավարի: Դժվար չէր լինի պատկերացնել նաեւ դրա խոստացվող խստագույն տեսակը:

Ո՛չ մի խոսք փոխզիջումների, որեւէ ձեւի ինքնավարության, առհասարակ մարզի հայության ազգային իրավունքների ու արտոնությունների մասին: Կարելի էր մտածել, որ ազգային կերպարանք չունեցող մի ամբոխ թորք աղային է հանձնվել, եւ նա էլ մեծահոգաբար խոստանում է առայժմ չմորթոտել...

* * *

Դատելով Մութալիբովի դիմումից՝ կարելի էր նաեւ մտածել, որ նա Լեռնային Ղարաբաղն իր գրպանում դրած էր համարում:

Եթե այդպես էլ չէր, ապա, միեւնույն է, արցախահայության վիճակը շատ էր ծանր եւ ժամ առ ժամ դառնում էր անտանելի:

Անհրաժեշտ էր ձեռնարկել արտակարգ միջոցներ: Իսկ ձեռնարկողն ո՞վ պիտի լիներ, եթե ոչ Հայաստանի ղեկավարությունը: Հայաստանի՛, որ պետություն ուներ, աշխարհի հանրության եւ միջազգային քաղաքական ու հասարակական կազմակերպությունների կողմից ճանաչվում էր: Եվ, վերջապես, դեռ կար Խորհրդային Միությունը, որի ձեռքում էին գտնվում Այսրկովկասում իրականացվող բոլոր ծրագրերի սանձերը: Իսկ Հայաստանն այդ Միության անդամն էր երեկ-մեկել օրը եւ դարձյալ կլինի այդպիսին, եթե ցանկանա, եթե գոնե առժամապես հրաժարվի պատվախնդրական այն կեցվածքից, որ պայմանավորված էր, այսպես կոչված, անկախության երթ ու աղմուկով:

Եվ ՀՀ Գերագույն խորհուրդը հատկապես Արցախի խնդրին նվիրեց երկու արտահերթ նիստ՝ հուլիսի 8-ին եւ 15-ին։ Ցավալիորեն երկուսում էլ խոսք ու զրույցը ոչ թե կոնկրետ օգնություն ցույց տալու, արցախահայության փրկության համար ելք փնտրել-գտնելու, այլ դատարկ բաների շուրջ էր։

Ահա այս դատարկ բաներից մեկը. Արցախի պայքարը պե՞տք է կոչել ազգային-ազատագրական թե՞ ոչ։ Իբր, եթե ՀՀ ԳԽ-ը որոշում ընդունի՝ հաստատելով, որ դա ազգային-ազատագրական պայքար է, համաշխարհային հանրությունը կճանաչի ու կխրախուսի այն, հարցը դուրս կգա Ադրբեջանի իրավասությունից, եւ Հայաստանն էլ իրավունք ու հնարավորություն կստանա բացահայտորեն օգնել Արցախին։

Բայց որովհետեւ խորհրդարանի մեծ մասն էլ, նախագահի հետ միասին, իրեն հենց այդ վերջից էր հեռու պահում՝ Արցախին բացահայտորեն օգնելուց, հենց միայն դրա համար հարցը երկար-բարակ վերլուծեց՝ ջուր ծեծելով, վերջում էլ մերժեց՝ նրա դիմաց ընդունելով ինչ-որ նախագիծ, որի համաձայն հավանություն էր տրվում ԼՂԻՄ-ի աշխատավորության լիազոր ներկայացուցիչների մայիսի 16-ի հայտարարությանը, որն, ինչպես ինչ առաջ տեսանք, համաշխարհային հանրությունից ամբողջ արցախահայության համար քաղաքական ապաստան էր խնդրում, պատրաստ էր բանակցությունների գնալ Արցախը ոչ մի զրուցակից էլ չհամարող Ադրբեջանի հետ։

Բանակցություններին վերաբերող ժխորի մեջ այն օրերի Արցախի ղեկավարները, բարեբախտաբար, չկորցրին գլուխները։ Դատելով հրապարակված կցկտուր տեղեկություններից՝ պետք է մտածել, որ նրանք զբաղված էին ամենաառաջնագույն խնդրով, որ մարզի հայության ինքնապաշտպանության կազմակերպումն էր։ Բանակցությունների նախապատրաստության ու անցկացման աղմուկն էլ, ըստ երեւույթին, միանգամայն հարմար հանգամանք էր՝ ժամանակ շահելու, ինքնապաշտպանության նվազագույն պայմաններ ստեղծելու համար։ Դարձյալ չհրապարակված, սակայն միանգամայն հավաստի տվյալների համաձայն՝ հենց այս ժամանակ էր, որ արցախահայության ինքնապաշտպան, սակայն անգեն ջոկատները տեր դարձան այնպիսի զինատեսակների եւ այն քանակությամբ, որ հնարավորություն պիտի ունենային դիմադրելու թորքի օմոնի ու այլազան ավազակախմբերի հարձակումներին։

Ծնունդ էր առնում ու իր առաջին անձնազոհ քայլերը պիտի աներ ինքնապաշտպանությունը, եւ սա ճակատագրական այն օրերի նվաճումն էր։

* * *

Հուլիսի կեսերին Արցախի ղեկավարների պատվիրակության եւ Մութալիբովի *«բանակցությունների»* փորձն էլ եղավ։ Հուլիսի 22-ին Բաքվից վերադարձած պատվիրակության ղեկավար, մարզգործկոմի նախագահի պաշտոնակատար Լեոնարդ Պետրոսյանը հաղորդեց այնքանը միայն, որ իրենք պահանջել են՝ ամենից առաջ վերականգնված տեսնել մարզխորհրդի ու նրա գործկոմի լիազորությունները, ապա եւ դադարեցված՝ բռնությունների ու զաղթեցման քաղաքականությունը։ Իսկ ադրբեջանական կողմը պահանջել է, որ, ամենից առաջ չեղյալ հայտարարվեն Ղարաբաղին վերաբերող *«հակասահմանադրական որոշումները»*։

Որոշումները, հատկապես նրանցից ամենազլխավորը, որ այնպես վառել էր Ադրբեջանին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդն էր ընդունել 1989 թ. դեկտեմբերի 1-ին: Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունն ինչպե՞ս կարող էր Հայաստանի Գերագույն խորհրդի անունից նման խոստում տալ... Դրա համար էլ կողմերը բաժանվել էին՝ առանց որոշակի պայմանավորվածության:

Իսկ արցախահայությունը շարունակում էր պայքարը, վճիռ ուներ զենքով պաշտպանել իր ազատությունը եւ ոչ թե փրկություն մուրալ մութալիբովյան ճիվաղներից, որոնք, հայի արյան ծարավ նախնիների վայրենի սովորությանը հավատարիմ, որոշել էին Արցախը հայաթափ անել եւ այնտեղ ոչխար պահել:

Այս վճռի արտահայտությունն էր եւ զիջումների գնալու, փրկություն մուրալու բաղամականության պատասխանը՝ Արցախի ազատագրության մարտիկների կենտրոնի հայտարարությունը, որ հրապարակվեց մի քանի օր անց, օգոստոսի 15-ին: Այն սկզբում եթեր է արձակվել «Արցախ» ռադիոկայանի կողմից, ապա իբրեւ թռուցիկ տարածվել ամբողջ մարզում:

Արցախի ազատագրության մարտիկները մարզի հայությանը կոչ էին անում չհավատալ հնազանդությունը փրկության ուղի հայտարարողներին, ոչ մի հույս չունենալ, թե Բաքվի կարմիր բասմաչները երբեւէ կհրաժարվեն իրենց հրեշավոր էությունից, եւ երբեք չմոռանալ Արցախի բազմադարյան պատմության ամենաիմաստուն դասը՝ սեփական զենքով պաշտպանել սեփական ազատությունը: ***«Մեր խնդիրն է պաշտպանել մեր հողն ու ազատությունը եւ հանուն դրա մենք բարձրացնում ենք մեր զենքը»***,- այսպես է ավարտվում հայրենի հողի պաշտպանների, ազատամարտիկների կոչը՝ նախապես սպառնալիք տված լինելով նրանց, ովքեր կփորձեն սերմանել անձնատրության որոմը, ովքեր կլքեն ռազմադաշտը՝ ***«սեփական կարշին փրկելու համար, ովքեր չեն կռվի մինչեւ վերջ, մինչեւ Արցախական աշխարհի ազատագրության ու անկախության ապահովումը»***:

Օգոստոսի երկրորդ կեսին, երեք օրվա մեծ խառնակչություն եղավ Ռուսաստանում: Ծրագրված պետական հեղաշրջման փորձը ձախողվեց, եւ կալանքի ենթարկվեցին երկրի մի շարք ղեկավարներ՝ Լուկյանովը, Յազովը, Կրյուչկովը եւ ուրիշներ, որոնց մեծ մասին արցախահայությունը ճանաչում էր իբրեւ իր ողբերգության կազմակերպիչների:

Ղրիմում երեք օրվա շրջափակումից փրկված, Մոսկվա վերադառնալով, Գորբաչովը հեռուստադիտողների առաջ ելույթ ունեցավ՝ ոնց որ հարյուրամյա թմբիրից դեռ լրիվ դուրս չեկած մեկը. սոցիալիզմի ու կոմունիստական իդեալների գովքն էր դուրս տալիս, առանց հասկանալու, որ երեք օրվա ընթացքում դրանք երեք հարյուր անգամ աղբանոց են նետվել...

Դժվար էր հասկանալ, թե ո՞րն է լավը. ա՞յն, որ կալանքի տակ են առնվել վերը թվարկված խրտվիլակները, եւ ազատ է ու իր նոր հիմարություններն է դուրս տալիս Գորբաչովը, թե՞ հակառակը, որ այնպես հնարավոր էր թվում այդ երեք օրվա ընթացքում:

Սակայն, ինչ էլ որ լինի, պարզ է մի բան. չարն էլ է վերջ ունենում: Եվ առավել սրտապարարը՝ Ադրբեջանի դիվային ծրագրերն Արցախում իրականացնող ներքին ու արտաքին զորքերի երկու հրեշ ղեկավարները՝ Յազովն ու Պուգոն, այլևս չեն գործի: Իսկ նրանց խառնակչությանը վերջ տված Բորիս Ելցինը հրապարակը դղրդացնում էր ժողովրդավարության, ազատության ու արդարության անունից:

Այս ամենով ոգեորված արցախահայությունը նոր թափով հավատում էր իր ուժերին: Ազատամարտիկների խմբերը տերն էին դառնում դրության ու օգոստոսի 26-ին հրապարակեցին ուղերձ իրենց բոլոր հայրենակիցներին: Այնտեղ որոշակի հնչում էր ամենաառաջնահերթ խնդիրը՝ ***«ստեղծել սեփական հայկական իշխանություն»***: Եվ ***«բոլորովին էլ կարևոր չէ՝ այդ իշխանությունը կճանաչե՞ն Բաքուն ու Մոսկվան, շատ ավելի կարևոր է, որ այն չծառայի որևէ մեկին, այլ պաշտպանի հայ ժողովրդի շահերն ու երկրամասը: Իսկ մենք զենքի ուժով կպաշտպանենք իրեն՝ մեր իշխանությանը»***:

Ուղերձը պահանջում էր, որ Ադրբեջանը մարզից հեռացնի օմոնականներին եւ ազատի բռնագրված գյուղերը: Հակառակ դեպքում,- վճռաբար հայտնում է այն,- մենք հարկադրված կլինենք ***«այդ բանն անել զենքի ուժով»***:

Որ սա դատարկ խոսք չէր, այլ գործողության, վճռական քայլերի ծրագիր, ապացուցեց հաջորդ օրերի իրադարձությունների սրընթաց հոլովույթը. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի ու Շահումյանի շրջխորհրդի միացյալ նիստը, որը եւ ընդունեց որոշում: Նրա առաջին կետով մարզի ու Շահումյանի շրջանն ընդգրկող տարածքը հռչակում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

«2. Աշխատավորների պատգամավորների Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհուրդը եւ նրա գործադիր կոմիտեն համարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական իշխանության ու կառավարության ժամանակավոր բարձրագույն մարմին՝ մինչեւ համաժողովրդական ընտրությունները եւ Հանրապետության նոր մարմինների ձեւավորումը:

3. Ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործկոմին հանձնարարել՝ ներգրավելով լայն հասարակայնությանը, ձեւավորել եւ ներկայացնել մարզային խորհրդի իշխանության ու կառավարման մարմինների կառուցվածքի եւ ֆունկցիաների վերաբերյալ ժամանակավոր դրույթները:

4. ԼՂՀ տարածքում, մինչեւ Հանրապետության Սահմանադրության եւ օրենքների ընդունումը, գործում է ԽՍՀՄ օրենսդրությունը, ինչպես նաեւ այժմ գործող այլ օրենքներ, որոնք չեն հակասում սույն Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին եւ Հանրապետության առանձնահատկություններին»:

Նույն օրը հրապարակվեց նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին Հռչակագիրը, որն իրավաբանորեն, դիվանագիտական ու քաղաքական հիմքերով ներկայացնում է իր ծնողի իրողությունը, նպատակները, կենսագործունեության ժողովրդավարական սկզբունքները։

ԼՂԻՄ-ի մարզխորհրդի արտահերթ նստաշրջանում գործկոմի նախագահ ընտրվեց մինչ այդ նախագահի պաշտոնակատար աշխատած Լեոնարդ Պետրոսյանը։

Այսպիսով՝ կյանք մտավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ արցախական աշխարհի պետական կազմավորումը, որն իր թիկունքում ունենալով մեկ ու կես հազարամյակի դժվար կենսագրություն, պետք է աներ իր նոր քայլերը՝ առավել բարդ ու դժվար պայմաններում։

* * *

Ստեղծվել, ասպարեզ էր իջել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, եւ օրակարգի ամենահրատապ հարցն այս էր՝ նրան ինչպե՞ս կընդունեն քաղաքական աշխարհը եւ, իհարկե, առաջին հերթին ամենամերձավորը՝ Հայաստանը, ապա երդվյալ թշնամին՝ Ադրբեջանը (ԽՍՀՄ-ն այլեւս ոչ մի նշանակություն չուներ, այն արդեն խարխլվել էր, եւ, փշրանքները հավաքելով, ուզում էին տեղն ինչ-որ պատկեր ամբողջացնել)։

Հայաստանը երկվության մեջ սպասում էր...

Ադրբեջանը չէր կարող սպասել։ Նրա Գերագույն խորհուրդը սեպտեմբերի 3-ին հավաքվեց եւ ընդունեց որոշում, որով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը ճանաչվում էր ապօրինի, Ադրբեջանի ամբողջականության խախտմանն ուղղված թշնամական քայլ։

Ադրբեջանի ԳԽ-ի Նախագահության որոշմամբ՝ հանրապետության ՊԱԿ-ին, ՆԳ նախարարությանը եւ դատախազությանը հանձնարարվում էր խափանել Հռչակագրի իրականացման ցանկացած փորձ, իսկ հանրապետության գլխավոր դատախազին՝ պատասխանատվության կանչել դրա հեղինակներին։

Հանրապետության կազմկոմիտեին հանձնարարված էր ԼՂԻՄ-ում իրավիճակը կայունացնելու եւ երկխոսությունը խորացնելու ուղղությամբ լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել, արագացնել բնակչության զինաթափումը։

Որոշման վերջում Ադրբեջանի ԳԽ-ի Նախագահությունը *«ողջախոհության, միասնականության եւ լրջության կոչ էր անում ադրբեջանական ժողովրդին»*։

Ադրբեջանական ժողովուրդն այսպիսի կոչերն ընկալելու մեծ փորձ ունի. նույն պահից իսկ պիտի ավելի զգազգեր, առավել սաստկացներ հարձակումը հայկական գյուղերի, աչքերին երեւացած ամեն հայկականի վրա։

Սեպտեմբերի 8-ին իր հանրապետության պրեզիդենտը դարձած Մութալիբովը 20 օր անց արդեն Ղարաբաղի մասին խոսում էր իբրեւ արոտավայրի. *«Լեռնային Ղա-*

բաբաղից զատ կա նաեւ դաշտային Ղարաբաղը։ Դեռեւս մինչեւ հեղափոխությունը նրանք անասնապահական զոտի-արոտավայր էին. ամռանն օգտագործվում էին լեռնային արոտավայրերը, ձմռանը՝ դաշտավայրերը։ Ներկայումս փակ են այն ճամփաները, որոնցով հարյուրամյակներ շարունակ հոտերն էին շարժվում։ Դա վիթխարի տնտեսական վնաս է հասցրել Լեռնային Ղարաբաղում ապրող ադրբեջանցիներին ու հայերին...»։

Մութալիբովին մի շաբաթ առաջ հաջողվել էր արոտավայրի այս պատկերացումն անցկացնել, դարձնել նաեւ ընդունելի այն բարձր պաշտոնական հանդիպումներում, որ Ռուսաստանի ղեկավար Ելցինի ու Ղազախստանի ղեկավար Նազարբաեւի գլխավորությամբ անց էին կացվում Ղարաբաղի հարցի շուրջ։ Երկու այս նշանավոր գործիչների գլխավորած միջնորդական առաքելությունը սեպտեմբերի 22-23-ին եղավ Բաքվում, Գանձակում, Ստեփանակերտում, Երեւանում, ապա Ժելեզնովոդսկում ընդհանրացրեց տպավորությունները։ Եղան առաջարկություններ, նշվեցին զոտում խաղաղություն եւ ժողովրդի անվտանգությունն ապահովելու միջոցառումներ... Սակայն այս ամբողջ ներկայացմանը Լեռնային Ղարաբաղը չէր մասնակցում իբրեւ իրավական կողմ, որպես վարչական միավոր։ Նույնիսկ չասվեց կամ չարձանագրվեց մեկ արտահայտություն նրա բառամյա պայքարի մասին, որեւէ խոստում՝ նրա ապագայի վերաբերյալ։ Իսկ երբ կոմյունիկեն էին ստորագրում եւ հարկ էր, որ ԼՂՀ անունից էլ իր ստորագրությունը դներ մարզգործկոմի նախագահ Լ. Պետրոսյանը, Մութալիբովն ստիպեց, որ նրա հետ միասին ստորագրի նաեւ ինչ-որ Ջաֆարով։ Ինչի՞ համար, մարզային ո՞ր իրավասության անունից... Գուցե ոչխարապահների՞... Այդպես էլ բարդույթի երկու կողմ ճանաչվեցին միայն Ադրբեջանն ու Հայաստանը։ Մութալիբովը Ելցինին ու Նազարբաեւին համոզել էր, թե Ադրբեջանի հակառակորդը Հայաստանն է, որն աչք է դրել հարեւանի մի ամբողջ մարզի վրա, այդ մարզն էլ արոտավայր է, որի տերն ինքն է եւ հիմա խոստանում է այն պահել իր երկրի ներքին օրենքներով...

Ժելեզնովոդսկում համատեղ կոմյունիկե հրապարակվեց, ստեղծվեցին դիտորդների, լուրեր տեղ հասցնողների խմբեր, որոնք, իբր, պիտի գործ կազմակերպեին, հետեւեին, որ դրական առաջընթաց լինի... Սակայն այս ամենը նախապես դատապարտված էր ձախողման, որովհետեւ աչքաթող էր արված ամենակարեւորը՝ Արցախի իրավունքը...

Կար մի շատ էական հանգամանք, որ ծայրագույն զգաստության էր մղում արցախցիներին. Ժելեզնովոդսկի հայտարարության մեջ էր մտել (անշուշտ Ադրբեջանի ներկայացուցիչների պարտադրանքով) մի կետ, որով անօրեն էին համարվում բոլոր զինված կազմավորումները եւ պիտի վերացվեին։ Այն ժամանակ հարց էր առաջանում, թե ո՞վ պետք է մարզի անվտանգությունը պաշտպանի, եթե Ադրբեջանը, հավատարիմ իր էությանը, արհամարհի խաղաղության ու չհարձակման ամեն մի պարտադրված խոստում, նորից փորձի բռնությամբ լուծել իր հարցերը։ Այս հարցին պատասխանել է մարզգործկոմի նախագահ Լեոնարդ Պետրոսյանը։ *«Եթե ներքին զորքերը չըստանձնեն հայերի պաշտպանությունը,- Ժելեզնովոդսկից հետո հայտարարել*

է նա,- հայերի՛, որոնք միակողմանի զինաթափվելու են, այդ դեպքում մենք մտածելու ենք սեփական ուժերով պաշտպանելու մասին»։

Այստեղ խոսքն ասվում է ապագայի իմաստով, սակայն հետագա իրադրությունը ցույց տվեց, որ, բարեբախտաբար, Արցախն ինքնապաշտպանության պատրաստ էր զինաթափման սպառնալիքից առաջ...

Ասում են՝ այս բանակցությունների ընթացքում եղել են նաեւ դրական պահեր. օրինակ, ոչ պաշտոնական աղբյուրներից մեկը հաղորդում էր, թե Ելցինն Ստեփանակերտում հաջողություն է մաղթել արցախահայության պայքարին եւ խոստացել իր օգնությունը՝ եղած հնարավորությունների սահմաններում։

* * *

Չնայած ամենազգուշավոր քաղաքագետներն անգամ ժամանակին ակնհայտ վստահությամբ էին խոսում Ելցինի ու Նազարբաեւի դարաբաղյան միջնորդության մասին՝ պնդելով, թե նույնիսկ անձնապես նրանք շահագրգռված են հարցի լուծմամբ. չէ՞ որ Գորբաչովի այնքան երկար ծամծմած հարցը լուծելով՝ նրանք պիտի ապացուցեին, որ իրենք ընդունակ են գործնական քայլերի, շահագրգռված են ժողովուրդների խաղաղ համակեցության ապահովմամբ։ Եվ մի՞թե պակաս հուսադրող էր, որ մի փոքր Ղարաբաղի համար նրանք վեր էին կացել, եկել-հասել Ստեփանակերտ։

Սակայն այս աղմուկն էլ ոչ մի դրական արդյունք չտվեց, եւ շարունակվեց իրավիճակի սրումը։ Հայ-ադրբեջանական բախումներն ավելի հաճախակի էին լինում ինչպես Արցախում, այնպես էլ Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում։

Բնութագրական է, որ հենց Ժելեզնովոդսկի հայտարարության հաջորդ օրը Քելբաջարի թորքերը հարձակում էին գործել Մարտակերտի շրջանի Զափար գյուղի վրա։ Հետո էլ Հադրութի շատ բնակավայրեր դարձան Ֆիզուլիի շրջանի ավազակախմբերի գնդակոծությունների թիրախն ու ասպատակությունների վայրերը...

Դրությունը ծայրահեղորեն սրվեց մի դեպքից, որ Ադրբեջանի ղեկավարության համար դարձավ հարմարագույն միջոց արցախահայությանն աշխարհի առաջ պախարակելու որպես սադրիչ, բարեկամությունն անգամ չարությամբ հատուցող ուժի։ Ժելեզնովոդսկի պայմանագրությունից հետո, նոյեմբերի 20-ին, Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղի մոտ կործանվել էր, այսպես կոչված, խաղաղարար պատվիրակության ինքնաթիռը...

Պատկերն ամբողջացավ, եւ շարժիչ ուժերի ակունքը մի ավելորդ անգամ էլ մերկացավ, երբ նոյեմբերի 26-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը հրապարակեց իր որոշումը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը վերացնելու եւ մարզի մայրաքաղաք Ստեփանակերտի անունը փոխելու (այն դարձնում էին Խանքենդի) մասին։

Ուրեմն ի՞նչ , այս Ադրբեջանի ղեկավարները, քուն թե արթուն, միայն մե՞կ մտահոգություն ունեն՝ նորանոր դիվային չարությունն՞ր անել Արցախի դեմ։

Եվ ԼՂՀ գործկոմը նոյեմբերի 27-ին որոշում ընդունեց, որպեսզի դեկտեմբերի 10-ին հանրաքվե անցկացվի, ու պարզվի արցախահայության վերաբերմունքը Լեռնա-

յին Ղարաբաղի Հանրապետության հանդեպ։ Մի այլ որոշման համաձայն էլ՝ դեկտեմբերի 27-ին պետք է անցկացվեին հանրապետության Գերագույն խորհրդի ընտրությունները։

Երրորդ որոշումով Ադրբեջանի ԳԽ-ի՝ նախօրեին ընդունված որոշումը համարվում էր իրավական հիմքից զուրկ, կոպիտ միջամտություն ուրիշ հանրապետության ներքին գործերին։

Չորրորդ որոշումով հանրապետության տարածքում վերացվում էր Ադրբեջանի իրավասությունը, եւ հանրապետության իրավապահ մարմիններն այնուհետ անցնում էին ԼՂՀ գործկոմի ու ԽՍՀՄ համապատասխան մարմինների իրավասության տակ։

Ընդունվեց դիմում ԽՍՀՄ ԳԽ-ին ու Պետական խորհրդին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչելու խնդրանքով։ Ինչպես նաեւ, Ադրբեջանից ԽՍՀՄ զորքերի դուրս բերման համար արված հրամանի առթիվ, խնդրանք, որպեսզի դուրս բերվող զորամիավորումների մի մասը տեղավորվի ԼՂՀ տարածքում։

Նույն օրը Մոսկվայում մի ավելորդ անգամ եւս արծարծվում էր Ղարաբաղի խնդիրը։ Երեկոյան հաղորդեցին, որ Գորբաչովի ղեկավարած ԽՍՀՄ Պետխորհուրդը մի նոր որոշում է ընդունել՝ հանձնարարելով ԼՂԻՄ-ում վերականգնել սահմանադրական կարգը, չեղյալ համարել նրա մասին հրապարակված բոլոր հակասահմանադրական որոշումներն ու հրամանները, դադարեցնել կրակը, հակամարտության գոտուց հանել ապօրինի զինված բոլոր կազմավորումները...

Այս որոշո՞ւմն ինչ կտար։ Լավատես մարդիկ մտածում էին, որ ԼՂԻՄ-ը վերացնելու մասին Ադրբեջանի խորհրդարանի հրամանագրից հետո ԽՍՀՄ բարձրագույն մի մարմին մարզի իրավասությունն ու ինքնավարությունն էր ճանաչում, եւ դա արդեն շատ մեծ բան է։

Իսկ այդ բարձրագույն մարմինը ե՞րբ է հարգել սեփական խոսքը, պարտադիր համարել նրա անհետաձգելի իրականացումը։

Եվ Արցախում, հետեւելով իրենց դառը փորձով ձեռք բերած իմաստությանը, նորից լծվեցին սեփական բախտը տնօրինելու անսխալ գործին։

ԼՂՀ ՀԱՆՐԱՔՎԵՆ

1991 թ. դեկտեմբերի 10-ը նշանակալից օր էր. ԼՂՀ բնակչությունը հանրաքվեով պետք է արտահայտեր իր վերաբերմունքը ԼՂՀ համար ամենակենսական խնդրի՝ անկախության նկատմամբ։ Հարցաթերթիկում տրվում էր ա՛յս հարցը. ***«Դուք համաձա՞յն եք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ, ուրիշ պետությունների ու ընկերակցությունների հետ իր համագործակցության ձեւն ինքնուրույն որոշող պետություն»***։

Պահանջվում էր ***«Այո»*** կամ ***«Ոչ»*** պատասխանը։

Հանրապետությունում (ԼՂԻՄ-ում ու Շահումյանի շրջանում) բնակվում էր 207.678 մարդ (166.066 հայեր, 36.737 ադրբեջանցիներ եւ 2875 ռուսներ)։

Իրենց լեզուներով քվեաթերթեր էին տրամադրվել նաեւ այլազգիներին (ադրբեջանցիներ, ռուսախոսներ)։ Սակայն ադրբեջանցիները չմասնակցեցին հանրաքվեին։ Ավելին. նրանք ու իրենց թիկունքում գործող զինյալ խմբերը, Ստեփանակերտը եւ մարզի շատ բնակավայրեր ռմբակոծելով, ավազակային ամենատարբեր գործողություններով փորձում էին խափանել հայերի մասնակցությունը համաժողովրդական միջոցառմանը։ Եվ, այսուհանդերձ, քվեարկեցին ոչ միայն հանրապետության հայ եւ ռուսախոս բնակիչները, այլեւ ԼՂՀ տարածքում տեղակայված զորամասերի՝ գրանցում ունեցող սպաները, նաեւ Երեւանի բուհերի արցախցի ուսանողները։

Հանրաքվեին ներկա էին 50-ից ավելի դիտորդներ, որոնց տրվեց ամենայն հնարավորություն՝ լինելու ընտրական բոլոր տեղամասերում, վկա լինելու ժողովրդի մասնակցությամբ իրականացվող միջոցառման հանգամանքներին։ Հետագայում նրանք միահամուռ պետք է հայտարարեին, որ հանրաքվեն կատարվել է օրինականության բծախնդիր կիրառմամբ, համաժողովրդական մեծ խանդավառությամբ։

Արդյունքները. քվեարկության իրավունք ունեցող 119.169 մարդուց հանրաքվեին մասնակցել են 108.814-ը, այսինքն՝ 91,14 տոկոսը։ ***«Այո»*** պատասխանել են 108.805-ը, այսինքն՝ քվեարկածների 99,69 տոկոսը, ***«Ոչ»***՝ 21 մարդ, անվավեր ճանաչվել է 88 քվեաթերթիկ։

Դեկտեմբերի 13-ին, հանրաքվեի փայլուն արդյունքների ընդհանրացումից հետո, ԼՂՀ ժող. պատգամավորների խորհուրդը դիմում հղեց Անկախ պետությունների հանրակցությանը, ՄԱԿ, աշխարհի պետություններին ու նրանց ղեկավարներին։ Դիմումի մեջ համառոտ գծերով ներկայացվում էին ԼՂ-ն Ադրբեջանին բռնակցելուց հետո արցախահայության համար ստեղծված զաղութակալական պայմանները, բազմամյա խուլ ընդվզումները՝ հանուն ազատագրության, 1988-ի փետրվարից ի վեր մարզի մղած օրինական պայքարը՝ ադրբեջանական բռնատիրությունից փրկվելու, Հայաստանին վերամիանալու կամ սեփական ճակատագիրն ինքնուրույնաբար տնօրինելու նպատակով։ Վերջապես այժմ ստեղծվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն,- ասվում է փաստաթղթի վերջում,- ***«Դիմելով ձեզ, մենք խնդրում ենք ԼՂՀ-ը ճանաչել որպես անկախ պետություն, որը երաշխավորում է միջազգայնորեն ճանաչված բոլոր նորմերի, մարդու՝ անկախ ազգային պատկանելությունից եւ կրոնական համոզմունքներից, իրավունքների եւ ազատությունների պաշտպանումը։***

ԼՂՀ-ը ճանաչում է Անկախ պետությունների հանրակցությունը եւ հայտարարում է՝ որպես իրավահավասար անդամ նրա մեջ մտնելու իր պատրաստակամությունը»։

Դեկտեմբերի 19-ին էլ ԼՂ Հանրապետությունը դիմում հղեց Ադրբեջանի կառավարությանը՝ հաստատելով սահմանադրական ու ժողովրդական եղանակներով աշխարհ եկած իր գոյությունը եւ կոչելով բարի դրացիություն։ Ահա այդ դիմումի վերջին՝ առաջարկության մասը. ***«Մենք հայտարարում ենք մեր պատրաստակամությունը՝ բանակցությունների միջոցով եւ միջպետական հարաբերությունների***

այլ ձեւերով քննության առնելու եւ լուծելու մեր պետությունների համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող քաղաքական, տնտեսական եւ այլ հարցեր։

Ներկա դիմումը հարկ է դիտել բացառապես որպես արյունահեղության վերջ դնելու, ինչպես նաեւ երկու ժողովուրդների միջեւ խաղաղությունն ու համաձայնությունը վերականգնելու ձգտում»։

ԱՐՑԱԽՅԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶԻՆՈՒՄԸ

Դեռեւս 90 թվականին արցախյան ինքնապաշտպանական խմբերը զինված էին ինչ-որ չափով եւ զենքն ու զինամթերքն էլ հայթայթել էին այս ու այնտեղից ամենատարբեր եղանակներով՝ գնելուց մինչեւ բռնազավթում։ Երբ ժողովրդի կյանքն անպաշտպան ու վտանգված է՝ իր դեմ եկող կատաղի զորամիավորումների ու օմոնականների վտառներից, արդարացի պիտի լինի նրա պաշտպանության ամեն տեսակ կազմակերպումը։

91-ի սկզբից Ադրբեջանը սեփական բանակ էր պատրաստում, բռնազավթում էր իր տարածքում տեղակայած զորամասերի զենքն ու զինամթերքը։ Տարվա ընթացքում միութենական լրատվությունը բազմաթիվ հաղորդումներով անդրադարձավ Գանձակի ու Քյուրդամիրի, Բաքվի ու Ափշերոնի ռուսական զորանոցների ու նրանց պահեստների կողոպուտներին։

Ամեն ինչից երեւում էր, որ հարեւան հանրապետությունում եռանդագին նախապատրաստվում են պատերազմի, որն իրենց կողմից համարվում է ինքնապաշտպանական, իսկ իրականում լինելու էր նվաճողական ու բռնազավթողական, քանի որ այն լինելու էր մի մարզի դեմ, որն առանց որեւէ կրակոցի, նույնիսկ մի անպարկեշտ խոսքի, աշխարհին հայտարարել էր ինքնորոշման իր կամքը եւ ուզում էր ապրել իր ցանկացած ձեւով՝ մարդավարի, սեփական ազգային ձեւ ու կերպով։

Անշուշտ, ադրբեջանական բանակի ստեղծումը եւ նախապես նրա ահռելի զինավառության ապահովումը մեկ անթաքույց նպատակ ունեին՝ հայկահայկական զորաշարժը։

Ցավալի է, որ այդ ժամանակ եւ դրանից էլ առաջ Հայաստանում իշխում էր միանգամայն ուրիշ մտայնություն. մեզ ո՛չ մի բանակ էլ պետք չէ։ Նույնիսկ տարածվել էր մի այսպիսի ծիծաղելի, ժամանակակից աշխարհում, գոնե մեր եւ հարեւանների փոխհարաբերությունների համար՝ անհեթեթ ձեւակերպում. մեր ուժը մեր թուլության մեջ է։ Որ երեւի պիտի հասկացվեր այսպես. մենք թույլ ենք, ուրեմն եւ արդար աշխարհը մեզ պաշտպանելու է...

Սակայն զանազան ավազակախմբերի չդադարող հարձակումները մեր անպաշտպան բնակավայրերի վրա, պարբերական հրետակոծություններն ու գնդակոծությունները, մանավանդ Շուշիից ու հարակից գյուղերի տարածքներից Ստեփանակերտի ու մյուս

բնակավայրերի վրա տեղացող արկերը վերջնականապես համոզեցին, որ լիարժեք ինքնապաշտպանության համար անհրաժեշտ է զինավառությամբ առնվազն հավասար լինել թշնամուն: Եվ որովհետեւ 91-ի կեսերից սկսած՝ խորհրդային զորքերը հեռանում էին նաեւ Արցախից, ապա ինքնապաշտպանների առաջին խնդիրը դարձավ տեր դառնալ նրանց զենք ու զինամթերքին: Այստեղ միայն երեք ռազմական կետ էր տեղակայված: Ստեփանակերտի զորամասի սեփականության յուրացումը մեծ աղմուկ հանեց. իբր, հարձակումներ են եղել, սուր բախումներ... Սակայն, ըստ երեւույթին, ավելի շատ խոսք ու զրույց էր, քան որեւէ բախում: Նույնը նաեւ Հադրութում տեղակայված սահմանապահ զորամասի ունեցվածքին տեր դառնալու հարցում:

Սակայն այս խնդրին դառնալիս չի կարելի մոռանալ նաեւ շատ կարեւոր մի բան. Արցախում տեղակայված խորհրդային զորամասերը, մանավանդ նրանց հրամանատարական կազմերը սերտորեն կապված էին տեղական բնակչության հետ, այնքան հարազատացած, որ կար այն գիտակցությունը, թե արցախահայությունն է այդ զորագնդերի տերն ու հարազատը, եւ սրանք էլ այստեղ են, որպեսզի պաշտպանեն տեղի ժողովրդին... Եվ հիմա հեռանում էին՝ պարզ տեսնելով, թե չորս կողմերից ինչ զինված հարձակումներ են լինում, ժամանակակից ինչպիսի զենք ու զինամթերքի կիրառումով... Մի՞թե նրանք այնքան անսիրտ ու անգութ մարդիկ էին, ինչպես Գորբաչովն ու Յազովը, որպեսզի տեսնեին այդքանը եւ հեռանային՝ առանց որեւէ ձեւով օգնելու այնպես հարազատացած մարդկանց ինքնապաշտպանությանը: Նույնիսկ կատարվել էր անհավատալին. Կենտրոնից կարգադրություն կար Ստեփանակերտում կուտակված ամեն ինչը դուրս տանել: Դուրս՝ ո՞ւր, իհարկե հանձնել Ադրբեջանին, որովհետեւ Ադրբեջանը կողոպտում-մաքրում էր, նոր միայն բաց թողնում: Իսկ 18-20 թվականներին մաքրած էլ բաց չէր թողնում. հայտնի են ռուս զորաջոկատների զինաթափումն ու ոչնչացումը Խանլարի ու Շամքորի կողմերում, Աղդամ-Եվլախ ճանապարհին:

91-ի վերջին, Ստեփանակերտում կուտակված զենքն ու զինամթերքը դուրս բերելու համար, Արցախ էին մտել դեսանտայիններ՝ իրենց հրամանատարներով, որոնք Կենտրոնին ժամ առ ժամ պիտի զեկուցեին, թե ինչպես է իրականացվում դուրսբերումը... Սակայն Արցախում եղած զենք ու զինամթերքը մնացին ինքնապաշտպաններին, նախ՝ որովհետեւ վերջինները դրա համար պատրաստ էին պայքարել մինչեւ վերջին շունչը, ապա եւ դուրս բերելու հրահանգ ստացածները մարդ էին մնացել...

Չէ՞ որ, վերջապես, հրահանգ էլ կար՝ դուրս բերելու անհնարինության դեպքում ամեն ինչ պայթեցնել, ոչնչացնել տեղում:

«Պայթեցրել-ոչնչացրել» էին:

Եվ 92-ի սկզբին արդեն Արցախի ինքնապաշտպանությունը բավարար զինավառություն ուներ ոչ միայն պաշտպանվելու համար, այլեւ կարող էր սուր կարիքի դեպքում, անցնել հարձակման, կատարել ինքնապաշտպանությանն անհրաժեշտ այնպիսի նվաճումներ, որոնց շնորհիվ երիտասարդ հանրապետությունը պիտի ստանար նաեւ լրացուցիչ պաշտպանական հզորություն:

Չի կարելի մոռանալ նաեւ ինքնապաշտպանական ուժերի սպառազինության երկու շատ կարեւոր առանձնահատկությունը. մեկ՝ որ շատ բան ձեռք էր բերվում հակա-

ռակորդի՛ց։ Հայտնի է, օրինակ, որ Մարտունու զորամասը, արժանահիշատակ Մոնթե Մելքոնյան-Ավոյի օրերին հիմնականում կռվում էր հակառակորդից խլված տանկերով ու զրահամեքենաներով։ Դրանից առաջ էլ Ղարադաղլվի ու ադրբեջանաբնակ մյուս գյուղերի զինապահեստներն էին բավական ծանր ու թեթև զենքեր «մատակարարել»։ Առած էր դարձել Ավոյի հայտնի մաղթանքը՝ ***«Աստված շա՜տ պահի մեր քիրվա Էլչիբեյին, որ այնպես բարեխղճորեն Ռուսաստանի սպառազինությունն է փոխանցում մեզ»։***

Եվ երկրորդ՝ ինքնապաշտպանների զորովազին վերաբերմունքը եղած զենքի ու զինամթերքի նկատմամբ։ Բավական է հիշել ամենուր շրջվող առասպելը Ստեփանակերտի «տանկաշինական» գործարանի մասին։ Այո՛, հանրապետության կենտրոնում կա վերանորոգման գործարան, որտեղ նորոգում, նորից ռազմադաշտ են ուղարկվում զրահատեխնիկայի բոլոր տեսակները, հատկապես տանկերը։ Բայց դա կատարվում է այնպիսի վարպետությամբ, որ կարելի է ասել՝ այնտեղ մեքենաներ են ստեղծվում։ Եվ պատահական չէ, որ 1994-ի հունվարի 10-ին մոսկովյան հեռուստատեսությամբ լրագրող Անդրեյ Կարաուլովը ԼՂՀ Պաշտպանության կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ ունեցած հարցազրույցին, տվեց նաև այսպիսի հարց. ***«Ես գիտեմ, որ դուք Ստեփանակերտում նույնիսկ ունեք գործարան, որտեղ կարող եք տանկ արտադրել»։*** Եվ այսպես. երբ 1991-ի ձմռանը Շուշիից ու շրջակայքի բարձրադիր գյուղերից (Ջանհասան, Շոլան, Ջամիլլու, Ղուշչիլար) «Գրադ» սարքերով եւ ուրիշ ծանր հրետանիներով կրակակոծում էին Ստեփանակերտը, Շոշը, Քարաշենը, Տերնավարզն ու Ստեփանակերտի օդանավակայանը, հայերն էլ նրանց պատասխանում էին նմանատիպ զինատեսակներով, սակայն ավելի դիպուկ ու անվրեպ։

Նշանակալից էր նաև ինքնապաշտպանության կազմակերպված եւ, դարձյալ բնծախնդրորեն, գործող համակարգը։ 91-ի վերջին, ԼՂՀ գործկոմի նախագահ Լ. Պետրոսյանը, երբ իրար հետ համեմատում էր մարզի ինքնապաշտպանության ուժերի եւ հակառակորդի սպառազինության մակարդակները, հաստատեց նրանց ահռելի տարբերությունը՝ ի վնաս ինքնապաշտպանության։ Սակայն դա բոլորին էլ հիմք չէ հոռետեսության,-ասաց նա,-որովհետեւ կա ***«մեր առավելությունը՝ մեր երկրամասի անտառները, սարերն ու գոյություն չունեցող ճանապարհները եւ, ամենակարեւորը՝ դարաբաղցու հավատարմությունն ու նվիրվածությունը հայրենի երկրին, նրա հող ու ջրին»։***

Իսկապես, մի՞թե սրանք պակաս զենքեր են։ Եթե սրանց էլ գումարելու լինենք երկու զինվորների տարբերությունը. մեկը զենք է վերցնում իր տունն ու տեղը, իր գերդաստանի պատիվն ու ազատությունը պաշտպանելու, մյուսը ֆշված գալիս է ընտրկացնելու, որից ունենալիք շահը ո՛չ տեսնում է, ո՛չ էլ առհասարակ ընդունում։

ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԴԱՎԱՆՔՆԵՐԸ

1991 թվականը Լեռնային Ղարաբաղում փակվում էր նորելուկ հանրապետության հաղթական մի քայլով եւս. դեկտ. 28-ին տեղի ունեցան ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրությունները, եւ չդադարող հրետակոծությունների, զինված ավազակախմբերի պարբերական հարձակումների ու պատճառած ավեր-ավարի պայմաններում արցախահայությունը միահամուռ ընտրեց իր պետական մարմինը: Իհարկե, ստեղծված են եղել նաեւ ադրբեջանական համայնքի ընտրական տեղամասեր, առաջարկվել է, որ նրանք եւս օգտվեն իրենց իրավունքից, ընտրեն իրենց պատգամավորներին: Սակայն նրանք հրաժարվեցին՝ երեւի մտածելով, թե դրանով իսկ պիտի տապալեն ընտրությունները, եւ միայն հայերից բաղկացած խորհուրդը չպիտի կարողանա գլուխ պահել:

ԼՂՀ Գերագույն խորհուրդն ընտրված էր, կար, եւ մնում էր ստեղծել նրա գործող մարմինները, անցնել աշխատանքի:

Հետաքրքիր է, որ անկախության գործն սկսվում էր սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած այնպիսի ցնցումներով, որոնցից փրկվելն այլեւս անհնար էր լինելու. դեկտեմբերի 26-ին թորքերը դադարեցրել էին Ստեփանակերտի էլեկտրամատակարարումը: Իսկ երկու օր անց պայթերցին Ստեփանակերտ մտնող, այնտեղից էլ շրջանների վրա բաշխվող գազի գլխավոր գիծը:

Ծանր էր նաեւ ռազմական վիճակը. չհաշված նախընթացի հրետակոծություններն ու ռմբակոծությունները՝ միայն դեկտեմբերի 30-ին Ստեփանակերտում ահռելի ավերվածություններ էին եղել զանգվածային հրթիռակոծության հետեւանքով, սպանվել էին 14 հոգի, նրանցից չորսը՝ իրենապաշտպանության մարտիկներ:

Ստեփանակերտի ՆԳ վարչության հաղորդմամբ՝ վերջին օրերին հանրապետության սահմաններն էին բերվել թորքի 18 զումարտակ, յուրաքանչյուրը՝ 300 ասկյար կազմով:

Իրավասու մարմինները հաշվեկշռի են բերել անցած տարում (1991 թ.) ԼՂՀ տարածքում տեղի ունեցած մարտական գործողությունների արդյունքները: Մխիթարվելու քիչ բան կար. կորսվել էին համարյա ամբողջ Շուշիի շրջանը (այնտեղ դիմանում էր դեռեւս մի հայկական գյուղ՝ Քարինտակը) եւ Հադրութի շրջանի լեռնային մասը: Եթե առաջներում Հայաստանն Արցախից բաժանող գոտին (Լաչինի մոտ) 7-8 կմ լայնություն ուներ, այժմ այն քիչ է մնում հասնի հարյուր կմ-ի: Մեկ տարվա ընթացքում մեր տված զոհերը 270 հոգի էին (մեծ մասամբ խաղաղ բնակիչներ, ծերեր, կանայք ու երեխաներ), ադրբեջանցիներինը՝ 216, զինվորությանը՝ 15: Վիրավորվել էին 400 հայեր, 180 ադրբեջանցիներ, 34 զինվորականներ: Պատանդ էին վերցրել 599 հայեր, որոնցից 226-ը դեռեւս չէին վերադարձվել:

Դրությունն, իհարկե, ծանր էր: Սակայն չէին հուսահատվում ո՛չ նոր իշխանության երիտասարդ այրերը, ո՛չ էլ հատկապես ժողովուրդը: 1992-ի առաջին օրերին (հունվարի 8) հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ ընտրված Արթուր

Մկրտչյանն իր առաջին հրապարակային ելույթներից մեկում, իրատեսորեն գնահատել Արցախի վիճակը, համոզված էր, թե ամենադժվարն արդեն ետեւ է մնացել, եւ ամենակարեւորն էլ այն է, որ հաղթահարվել է վախը: Չէ՞ որ նախորդ տարիները եղել են անվճռականության ու վախի հաղթահարման տարիներ: ***«Եթե 87 թվականին վախենում էինք մի հասարակ թուղթ ստորագրելուց, 88-ին վախենում էինք ցույցի դուրս գալուց, 89-ին վախենում էինք Գորբաչովին քննադատելուց, 90-ին վախենում էինք զենք վերցնելուց, այսօր այդ վախը լրիվ հաղթահարվել է, որովհետեւ ուրիշ ելք չկա. սա վերջին միջոցն է... Եվ ամենակարեւոր հարցերից մեկն էլ՝ արդեն աշխարհին է հայտնի, ու մենք ազգովի հասցրել եւ ընդունում ենք, որ Ղարաբաղի խնդիրը համազգային է ու ամենաառաջնահերթ: Ազգովի՛ն պետք է լուծենք Ղարաբաղի հարցը: Ոչ ոք չի կասկածում, որ բոլորս միասին ենք ու միահամուռ: Այս պայքարը միասին պետք է ավարտենք, եւ համոզված եմ՝ հաղթանակո՛վ»:***

Մարգարեակա՞ն խոսք, որ հնչել էր Քրիստոսի տարիքի ղեկավարից, որն այդ տարիքում էլ պետք է նահատակվեր՝ իր ոգու լույսը պարգեւելով դժվար ու մութ ուղին հաղթահարելու կոչված հայրենակիցներին:

1992-ի հունվարի 2-ին, Ադրբեջանի նախագահ Մութալիբովը հրապարակեց իր հրամանագիրը, որով ժամանակավոր նախագահական կառավարումն էր մտցնում Շուշիի, Ստեփանակերտի եւ մի շարք ուրիշ շրջաններում (մարզը *«վերացրել»* էր, անունը չէր տալիս)՝ իբր, բնակչության անվտանգության ապահովման եւ սահմանադրական կարգի վերականգնման նպատակով:

Այս հրամանագիրը ԼՂՀ-ում չպետք է կիրառվեր, որովհետեւ Մութալիբովի զորածակալները չէին կարող ճեղքել ինքնապաշտպանական շղթան: Եվ դրանից նրանք ավելի էին զազազել, նոր թափով անընդհատ հրետակոծում էին Ստեփանակերտը, Մարտունին, մյուս խոշոր բնակավայրերը: Պարբերաբար պայթեցվում էին Ստեփանակերտն ու մյուս խոշոր բնակավայրերը մտնող ջրատարները: Երեխաներին պատանդ վերցնելը դարձել էր սովորական:

Ստեփանակերտի հոգեառն էին դարձել ոչ միայն Շուշի քաղաքն ու շրջակայքի գյուղերը, այլեւ հենց իր՝ Ստեփանակերտի արվարձան Կրկժանը:

Գնդակոծություններն այս վերջինից, հարեւան տների վրա հարձակումներն ու կողոպուտներն այնքան հաճախակի էին դարձել, որ ինքնապաշտպանությունն ստիպված եղավ դիմել կտրական միջոցի. հունվարի 21-ի լույս 22-ի գիշերը հայ ազատամարտիկները չորս կողմերից հարձակվեցին բլուրներին ամրացած օմոնական դիրքերի վրա, ոչնչացրին, փախուստի մատնեցին թաղամասում բնավորված ավազակներին: Եվ սա «թորքացած» Կրկժանի վերջն էր:

Հունվարի 26-ին, հրետակոծությամբ Քարինտակի բազմաթիվ տներ ավերելուց հետո, Շուշիի օմոնականները, շուրջ 250 ասկյար, հարձակվել էին գյուղի վրա: Ինքնապաշտպանները հերոսաբար ետ մղեցին՝ ոչնչացնելով հարձակվածների մի զգալի մասին (ավելի քան 60 ասկյար):

Թշնամուց սովորելն էլ կարող է օգտակար լինել. հունվարին ինքնապաշտպանները շրջափակեցին Շուշիում բուն դրած հրոսակներին. Շուշին կտրվեց արտաքին աշխարհից, փակվեց Աղդամ-Շուշի ճանապարհը, ավերվեց Լաչին տանող խճուղին: Արդեն քանի օր էր, քաղաքը լույս չուներ:

Հունվարի 28-ին Աղդամից Շուշի թռչող մի ուղղաթիռ կործանվեց Շոշ գյուղի մոտերքում: Թորքերն սկզբնապես ուզում էին այն ներկայացնել ուղեւորատար միջոց. իբր, Աղդամից կանայք ու երեխաներ փոխադրելիս է եղել (պաշարված Շուշի՞): Մասնագիտական քննությունը պարզեց, որ ռազմական ուղղաթիռ է եղել. ռազմամթերք էր փոխադրում եւ պայթել է ներսից...

Հունվարի 26-ին ՀՀ հեռուստատեսությամբ ցույց տվին կռվող Արցախի վերջին օրերից մի ակնարկ: Կադրերում զինված ինքնապաշտպանության խառնիխուռն ջոկատներն էին՝ մորուքավոր երիտասարդներով, բայց եւ նրանց կողքին՝ տարբեր տարիքի երեխաներ, դեռատի աղջիկներ, ծերեր, տարեց կանայք: Ցույց էին տալիս խոր ինքնապաշտպանության անցած գյուղերն ու շրջկենտրոնները, կիսակործան, բայց համառորեն դիմադրող Ստեփանակերտը... Խոսեցնում էին ինքնապաշտպանության հերոսներին ու նրանց օգնության հասած արյունակիցներին, որոնք հպարտորեն բաժանում էին չդադարող կրակի տակ պաշարյալների դժնի ճակատագիրը...

Սկզբից ու վերջից անպանույն խոսքեր կային այս անհողդողդ մարտիրոսության մասին, մխիթարանքի, հուսադրության ու հավատի խոսքեր, որոնք հնչում էին բոլորովին անվարպետ նկարահանողի բերանից: *«Ի՞նչ է ապրում կռվող Արցախը,- ասում էր նա,-դուք տեսա՛ք: Ինչո՞վ նրան կօգնի աշխարհը, անտարբե՞ր աշխարհը: Հայտնի չէ: Զարմանալի՞ է, որ այդ աշխարհը խոսքով, գոնե՛ խոսքով, չի ընդունել իր ազատության համար արնաքամ դարձող երկրի անկախությունը, հանրաքվեն, կրակի տակ ստեղծած պետական իշխանությունը: Բայց դրանից ինչո՞ւ զամանանք, երբ այն դեռեւս չի ընդունվել նույնիսկ մեր արյունակիցների անկախ հանրապետության կողմից: Ասում են՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանում երկար են վիճել՝ ընդունե՞նք թե՞ չընդունենք այդ Արցախի Հանրապետությունը: Եվ այդպես էլ եզրակացության չեն եկել, սպասում են, տեսնեն ի՞նչ կասի կույր ու խուլ, մեզ համար նաեւ համր աշխարհը: Բայց մի՞թե կարեւոր է, թե ի՞նչ կասեն... Չէ՞ որ լեռնաստանը պատրաստ է մինչեւ վերջ կռվելու իր ազատության, անկախության, արժանապատիվ կյանքի համար»:*

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՆԵՐՆ ԱՐՑԱԽԸ ՄԱՔՐՈՒՄ ԵՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՐՔԵՐԻՑ ՈՒ ՀԵՏՔԵՐԻՑ

Աշխարհի լրատվության բազմաթիվ մարմիններ հաղորդումներ էին անում այն մասին, որ ադրբեջանական զորամասերը բոլոր կողմերից մխրճվել են ԼՂՀ տարածքը:

«Ազատություն» ռադիոյից զանգել էին Ադրբեջանի պաշտպանության նախարարին, հարցրել՝ «Ի՞նչ է պատահել, ի՞նչ եք ուզում»։ Թե. ***«Արտակարգ ոչինչ չկա, մեր զորամասերը մեր Ղարաբաղն են մտել՝ բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով»։***

Թորքերն Ասկերանի կողմերում Խրամորթն ու Փառուխը գրավեցին առաջին իսկ օրը։ Նոր հարձակումներ ձեռնարկեցին Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի, Շահումյանի կողմերում Էրքեջ ու Բուզլուխ գյուղերի վրա։ Իսկ Մարտունին, Հադրութը, սրանց մեծ ու փոքր գյուղերն այնպիսի շրջափակման մեջ էին, բոլոր կողմերից այնպես էին հրետակոծվում ու ռմբակոծվում, կարծես եկել է վերջին օրը. վերջին պատերազմն են մղում, կապրեն կամ հոգս կցնդեն։

Այս վերջին կռիվ մղողները նոր էին հասկացել մի շատ կարևոր բան. հիմա պետք է անվտանգ դարձնել իրենց թիկունքը, որ իրենց կուրծքն է նաև։ Ոչնչացնեն հակառակորդի այն ավազակաորջերը, որոնցից ամեն օր աղետ է ցանվում չորս կողմ տարածված Արցախի վրա, նրա՛նք, որ փակել են ճանապարհները, կաթվածահար արել ինքնապաշտպան միասնությունը։ Եվ փետրվարի 10-ին լրատվական մարմինները հաղորդեցին, թե արդեն կործանված են Մալիբեյլիի ու Ղուշչիլարի կրակակետերը։ Նախ կրակակետերը, ապա եւ բնակավայրերը։ Թորքերը Մոսկվայի միջոցով վայնասուն բարձրացրին, թե հայերը հրետակոծել են Շուշին եւ գրավել Մալիբեյլին ու Ղուշչիլարը, կան մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ։

Սրանից հետո Խոջալուի հարցն էր մեջտեղ։ Հաղորդեցին, թե Ստեփանակերտն առաջարկել է, որպեսզի հակառակորդը Խոջալուից հեռացնի քաղաքացիական բնակչությունը, չնայած հայտնի է, որ այնտեղ այդպիսի բնակչություն չկա, եւ Ստեփանակերտն անդադար կարկտահարող, օդանավակայանը կրակի ու պաշարման մեջ պահող արնախում ավազակներն են մնացել։

Ստեփանակերտի առաջարկին հետեւել էր Ստեփանակերտի ու Ասկերանի առավել կատաղի հրետակոծությունը։ Եվ փետրվարի 15-ին արդեն հայոց ինքնապաշտպանական ջոկատները բռնեցին Խոջալուի արեւմտյան սահմանը՝ այս անգամ պահանջելով, որ Մութալիբովի սարքած ***«քաղաքը»*** մինչեւ օրվա ժամը 15-ը դատարկվի, ապա թե ոչ, կբնաջնջվի այդ գյուղն՝ իր անշունչ-շնչավորով։

Սրա պատասխանն էլ այն եղավ, որ Խոջալուից ու Շուշիից վերստին, այս անգամ աննախադեպ ահավոր հրետակոծության ենթարկվեց Ստեփանակերտը։ Այստեղ կործանված մի շենքի փլատակների տակ մնացին (Չկալովի փողոցում) ավելի քան 20 խաղաղ մարդիկ, կործանվեցին ուրիշ 20 շենքեր (բնակելի տներ, դպրոց, մանկապարտեզ, մարզային արխիվի շենքը, պետմատի պահեստները)։

Եվրոպական համագործակցության հանձնաժողովի հինգ ներկայացուցիչներ, որ Ստեփանակերտ էին եկել իրադրությանը ծանոթանալու եւ զեկույց պատրաստելու, նկուղներից դուրս չէին գալիս, որ գոնե հեռախոսով կամ հեռագրով որեւէ տեղեկություն հաղորդեին իրենց վիճակի մասին։

Փետրվարի 26-ին Արցախի ինքնապաշտպանական ուժերը տեր դարձան

Ստեփանակերտի օդանավակայանին ու խոջալուին։ Աշխարհի ռադիոկայանները մի գլուխ այդ մասին էին խոսում։

Մերոնք իրենց մասին էին տեղեկացնում՝ ունենք 30 վիրավոր։ Իսկ ուրիշները հաշվում էին ադրբեջանցիների կորուստները։ Մեկն ասում էր՝ 30 օմոնական է ընկնվել, կան հարյուրավոր վիրավորներ, այդքան էլ գերի են հանձնվել։ Ճողոպրելիս թողել են մեծաքանակ զենք ու զինամթերք։ Ադրբեջանի ՆԳՆ լրատվությունը հավանաբար, ավելի լավ գիտեր. իրենց սպանվածները հաշվում էր հարյուրից ավելի։ Եվ այս բոլորի կողքին՝ հայոց ողորմածությանը հանձնված վեց-յոթ մեսխեթցիներ, որոնք երեւի թե անհուն շնորհակալությամբ պետք է լցված լինեն իրենց բարերար ադրբեջանական կառավարության հանդեպ. բերել, խոջալու էր լցրել, որպեսզի այս տանջվածները պատասխան տան տեղացիների կատարած չարագործությունների համար։

Հետո՛ պիտի հայտնի դառնար, որ 26-ի վաղ առավոտյան ԼՂ Հանրապետության ինքնապաշտպանական ուժերը շրջապատել էին օդանավակայանը եւ խոջալուն՝ հակառակորդից պահանջելով առանց դիմադրության հեռանալ ԼՂ Հանրապետության տարածքից։ Ստանալով մերժում՝ նրանք պատերազմական գործողություններ են ծավալել միաժամանակ բոլոր ուղղություններից՝ Ստեփանակերտից, Մեհտիշենից, Բերդաձորից, Նորագյուղից ու Ասկերանից։ Կոտրելով կատաղի դիմադրությունը, իսկ Աղդամի կողմից էլ ետ մղելով յուրայիններին օգնության շտապող թորք զորամիավորմանը՝ ինքնապաշտպանները երեկոյան լրիվ տնօրինել են դրությանը, նվաճել խոջալուն եւ օդանավակայանը։ Նրանց են անցել նաեւ երեք զրահամեքենա, հրթիռանետ երկու սարք, մեկ թնդանոթ եւ զինամթերքի խոշոր պաշարներ, մարտադաշտից փախուստ տված թորքերի թողած ավելի քան հարյուր միավոր մարտական զենքը։

Ազատամարտիկները հանրապետության իշխանություններին են հանձնել զինամթերքի ու սննդամթերքի պահեստների վիթխարի պարունակությունը։

Ինչ որ է, ընկավ խոջալուն՝ չարիքի բույնը, թունավոր օձերի որջը։ Սումգայիթից հետո առաջինն այնտեղ ջարդ սկսեցին հայերի դեմ։ Ադրբեջանի խարդախ ղեկավարությունն այն փուչ բնակավայրն էր ուռճացնում՝ նրա վրա մսխելով Արցախի համար կենտրոնական կառավարության բաց թողած 400 միլիոն ռուբլին։ Այստեղ, չունեցած բնակչության եւ ամեն տեսակ հնարավորությունների բացակայության պայմաններում, արդյունաբերական ձեռնարկներ էին ստեղծում, տնտեսական հզորություններ էին գործի դրվում... Եվ Մութալիբովն այդ չնչին բնակավայրը հռչակեց քաղաք, որը չը-պետք է ենթարկվեր տեղական իշխանություններին, ժուկով-ժամանակով պիտի դառնար նրանց տիրակալը, Արցախում հաստատվելիք ադրբեջանական բռնատիրության կենտրոնը, մայրաքաղաքը։

Ցույց տվին խոջալուի այսօրվա պատկերը. ամայացած, քարուքանդ տներ, ծխացող շինություններ, որոնցից ոչինչ չի մնա այդ ծխից հետո։ Ա՛յս է չարի վերջը։

* * *

Մարտի առաջին օրերին Ստեփանակերտում տեղակայված խորհրդային 366-րդ

գունդը, դավանանելով, հեռանում էր Արցախից, դա այլևս չէր հետաքրքրում օտար թղթակիցներին, որոնք, Ադրբեջանի բարձրացրած միջազգային հարայ-հրոցին ունկընդիր, Խոջալուի կործանման մանրամասներն էին ուսումնասիրում: «Բաղաքի» տարածքից հեռու, Աղդամի մոտերքում, գտել էին ադրբեջանցիների 30 դիակ (իսկ Մուքալիբովի ազգաններն իրենցից զոհված էին համարում հազար հոգու):

Ինքնապաշտպանները ասում էին՝ այդ երեսունն էլ չէին սպանվի, եթե իրենց հրամանատարությունը նոր մեղքի մեջ մտած չլիներ: Ինքնապաշտպանները Խոջալուի արեւելյան եզրին միջանցք էին ստեղծել եւ ռադիոբարձախոսներով հայտնել, որ բնակիչները կարող են հեռանալ: Այն ժամանակ արդեն դուրս փախած օմոնականները հեռացողների վրա կրակ են բացել...

Մարտին արդեն Ստեփանակերտից ազատ ռմբակոծում էին Շուշին: Ռմբակոծվողները հիմար պետք է լինեին՝ չիմանալու համար, թե դրա վերջն ինչ պիտի լինի: Եվ թորքի հրամանատարությունը քաղաքացիական բնակչության մնացորդները հեռացրեց այնտեղից, հին բերդաքաղաքը լցրեց զինուժով ու հզորագույն զինատեսակներով: Դրանից հետո առավել սաստկացել էին Ստեփանակերտի հրետակոծությունը, չդադարող ավերածությունները:

Ինքապաշտպանությունն ստիպված եղավ գնալ խենթության հավասար մի քայլի՝ Շուշին նվաճելու վճռին:

Այս բերդն իր ավելի քան երկու հարյուրամյա պատմության ընթացքում երբեք չէր նվաճվել, եթե նույնիսկ թշնամին բազմապատիկ հզոր էր եղել ու հնարամիտ: Անառիկ դիրքը, անխոցելի պարիսպները բավական էին, որպեսզի նույնիսկ պաշարված վիճակում ներսինները դիմադրեն, հյուծեն-ուժասպառ անեն եկվոր հակառակորդին: Սակայն այս անգամ նրա դեմ էր գնում լեռնաստանի իսկական տերը, եւ ներսիններն էին, որ օտար էին ու պիտի պարտվեին: Մայիսի 8-ի վաղ առավոտյան, Ջանհասանի, Ղայբալիշենի, Քյոսալարի ու Նաբիլարի հրակետերը հողմացրիվ անելուց հետո, ինքնապաշտպանական զորաջոկատները կայծակի թափով մտան Շուշի: Եվ կեսօրվա դեմ ազատամարտիկների ոտքերի տակ փռված էր չարիքի բույնը, որ դեռեւս այն առավոտյան մութ-լուսին ահավոր արկեր էր թափվում Ստեփանակերտի վրա:

Երեկոյան լրատվական մարմինները հաղորդում էին, թե ընկել է Ադրբեջանի վերջին հենակետը Լեռնային Ղարաբաղում, եւ երկու հակամարտող կողմերն այսօրվանից արդեն իրար հետ պիտի խոսեն ուրիշ լեզվով, ուրիշ վճիռներ հանելու նպատակով:

Կարեւորն այն էր, որ Արցախի ներքին տարածքը մաքրվել էր թշնամուց: Մնում էր կապ ստեղծել Հայաստանի, նրա միջոցով էլ արտաքին աշխարհի հետ: Այն կապը, որ չորս տարի շարունակ պաշարված մարզին անհրաժեշտ էր, ինչպես օդը, ջուրը, ամեն տեսակ սնունդը:

Մայիսի 18-ին ինքնապաշտպանության մի զորամաս տիրաբար մտավ Լիսագոր ու Բերդաձոր՝ դրանով իսկ լիակատար հսկողություն հաստատելով ամբողջ Շուշիի շրջանի վրա: Իսկ մյուս զորամասը, ահռելի զրահատեխնիկայի ուղեկցությամբ, տիրացավ Լաչինին ու շրջականերին՝ փառավոր մի էջ գրելով արցախական զոյապայքարի պատմության մեջ: Ամենափառավոր էջերից մեկը. չէ՞ որ այդպիսով վերանում էր հայոց երկու հանրապետություններն իրարից բաժանող սեւ երիզը, եւ Արցախը միանում էր մայր Հայաստանին:

Կեսօրվա դեմ Գորիսից Ստեփանակերտ հասավ Զաբուղ-Լաչին-Բերդաձոր-Լիսագոր-Շուշի ճանապարհն անցած առաջին ավտոշարասյունը, որը քառամյա շրջափակումից ու չդադարող հրետակոծությունից հյուծված, բրբված Ստեփանակերտին էր տանում բազմատեսակ սնունդ, դեղորայք, փրկության աղաղակ ու երջանկության ավետիս:

Այդ երեկո Մոսկվայի հեռուստատեսությամբ հնչեց մատաղ հանրապետության առաջին դիվանագետի հպարտ ձայնը. ***«Մենք ստիպված էինք ջարդել մեզ կաշկանդող շղթաները: Չորս տարվա դաժան շրջափակումը, Ադրբեջանի անպատիժ չարագործությունները եւ մանավանդ աշխարհի մեծերի անտարբերությունը հուշեցին, որ փրկվելու այլ միջոց չկա, քան սեփական ուժերի լարումն ու հասցնելիք վճռական հարվածը»:***

Արցախի բարեկամները ցնծության մեջ էին աշխարհի բոլոր ծագերում: Նրանք, որ շարժման առաջին իսկ օրերից հետեւում էին անհավասար պայքարի ուղին բռնած լեռնաստանի կռվին եւ ջանում էին սատարել իրենց նյութական ու բարոյական օժանդակությամբ, աղոթքներով...

Հակառակորդ բանակում խլրտում էր ու վայրենի զզվոտոց: Փորձում էին իրենց ձախորդությունները բացատրել դավաճանությամբ, ծախու հոգիների սադրանքներով: Հայաստանի ոտքի հանած համաշխարհային կարծիքն ու օժանդակությունն էին դատապարտում՝ նրա վրա բարդելով մեղքեր ու նենգություններ, որոնց ճանաչված վարպետներն իրե՛նք էին զոնե վերջին այս չորս տարիներին:

Թշնամու ճամբարը հավաքեց իր վերջին ուժերը, դաշնակցեց ասպարեզում եղած ու չեղած բոլոր ծախու տերերի հետ եւ նետվեց մի նոր արշավանքի, որի դեմ, կարծում էր, Արցախը հայաթափ պիտի դառնար մեկ շաբաթվա մեջ: Եվ իսկապե՛ս: Այդ Արցախի ինքնապաշտպանությունն ի՞նչ կարող էր անել վարձկան քաջավարժ մոտոմեքենայացված զորամասերի եւ ռազմական բարձրակարգ օդուժի դեմ:

Հունիսի սկզբին արդեն հայտնի էր, որ Ադրբեջանը նախապատրաստվել էր իր ամենավճռական գրոհին: Այդ մասին աշխարհով մեկ հայտարարել էր հանրապետության ղեկավարի գահն ստանձնած Էլչիբեյը: Նա հրավիրված էր Հարավային Ամերիկայում կազմակերպվող ինչ-որ գիտաժողովի, հրաժարվեց գնալ՝ պատճառաբանելով, թե իր Ադրբեջանը գտնվում է աղետի մեջ, եւ ինքը լծված է նրա փրկությանը:

Հունիսի 12-ի երեկոյան դեմ տեղի ունեցավ այն, ինչ որ սպասվում էր. ժամը 16-17-ի կողմ սահմանամերձ շրջաններում կուտակված թորք զորամիավորումները՝ մի քանի հազար զինվոր, ահռելի քանակության զրահատեխնիկայի ու ռազմաօդային ուժերի ուղեկցությամբ, լայնահուն հարձակման էին անցել ԼՂՀ հյուսիս-արեւելյան, արեւելյան ու հարավ-արեւելյան սահմանի ամբողջ երկարությամբ, Հադրութից մինչեւ Շահումյան՝ հարվածները դաժանորեն ուղղելով երեք հատվածների վրա՝ Ասկերանի, Կիչան-Քոլատակ ուղղության եւ Շահումյանի շրջանի հյուսիս-արեւելյան մասի: Երեկոյան հաղորդումներում պարզ էր արդեն, որ թշնամին հաջողություններ է ունեցել նակատի համարյա բոլոր հատվածներում. Շահումյանի շրջանի մեծ մասը, բացի Շահումյան ավանից եւ Վերիշեն ու Գյուլիստան գյուղերից, նվաճված էր, գյու-

ղերն ավերվել էին, կային մեծ թվով զոհեր ու վիրավորներ։ Ասկերանի ուղղությամբ, Նախիջեւանիկը, Փիրջամալն ու Աղբուլաղը գրաված լինելով, թորքը հարվածներ էր տեղում շրջկենտրոնի վրա։ Իսկ Կիչանը, Նարեշտարն ու Սրխավենդը գրավելուց հետո շարժվում էր դեպի Վաղուհաս, պարզ էր, Մարտակերտ տանող խճուղին ձեռք ձգելու համար, որից հետո արդեն Մարտակերտի ու Շահումյանի շրջանները պիտի կտրվեին ինքնապաշտպանության կենտրոնից եւ խեղդվեին Միր Բաշիրից ու Աղդամից արշավող զորամասերի աքցանի մեջ։

Ռուս թղթակիցների տեղեկությունների համաձայն՝ թորքերի զորամիավորումները հայկական բնակավայրերը նվաճում էին՝ համարյա առանց լուրջ դիմադրության հանդիպելու։

Եվ, իսկապե՛ս, մի՞թե մեկ օրվա ընթացքում հնարավոր էր այդքան կորուստներ տալ. համարյա ամբողջ Շահումյանի շրջանը եւ Մարտակերտի շրջանի դաշտային մասը՝ իր խոշոր բնակավայրերով։

Սակայն հայտնի էր, որ բարվոք չէր դրությունը նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում. հենց միայն Իջեւանի շրջանում վերջին երեք օրերին սպանվել էին մեկ տասնյակից ավելի մարդիկ։ Կապանի ու Գորիսի շրջաններում յոթ անչափահասների պատանդ էին տարել։

Հունիսի 15-ին, երկուշաբթի, պետք է ՀՀ ԳԽ-ի արտակարգ նստաշրջանում քննության առնվեր ԼՂՀ աղետալից վիճակի հարցը, ձեռք առնվեին միջոցներ փրկության համար։ Իսկ պատգամավորների մեծ մասը մտածում էր, որ ամեն ինչ դյուրացնելու նպատակով անհրաժեշտ է նախ եւ առաջ պետականորեն ճանաչել օրհասի դեմ հայտնված այդ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը։ Ճանաչել, ապա ծրագրել ու առանց հապաղելու իրականացնել դրանով պայմանավորված պարտականությունները։

Այն ժամանակ պատգամավոր Ա. Բլեյանն առաջարկեց այդպիսի անխոհեմ քայլերով վտանգի տակ չդնել հայ ժողովրդի գոյությունը։ Իսկ Է. Եգորյանը, խորհրդարանի ՀՀՇ խմբի տեսաբանի դեր ստանձնած, հայտարարեց, որ իրենք միջազգային ատյաններին համոզել են, թե ԼՂՀ ղեկավարությունն անկառավարելի է, հիմա ո՞նց հնարավոր է անկառավարելիի հետ գործարքի մեջ մտնել, եւ առաջարկեց. ***«Խորհրդարանի հանձնաժողովների ուժերով քաղաքական վիճակի բազմակողմանի քննարկումներ կազմակերպել, կատարել բարեխիղճ հետազոտություններ, այս բոլորը ներկայացնել խորհրդարան, որից հետո մտածել որոշման կամ ձեռնարկելիք որոշակի քայլերի մասին»։***

Կործանվում էր Արցախը. Մարտակերտի ու Շահումյանի փախստականները ծվարելու տեղ չունեին եւ ծեծում էին Ստեփանակերտի ու Երեւանի դռները։ Լրատվության մարմիններն ամեն ժամ զարհուրելի տեղեկություններ էին հաղորդում, կործանվող բնակավայրերի, զոհվող մարտիկների, տանջահարության ենթարկվող խաղաղ բնակիչների մասին...Իսկ հայ պատգամավորն առաջարկում էր կատարել ***«բազմակողմանի քննարկումներ», «որից հետո մտածել...»։***

Այս առաջարկությամբ էր, որ Հայաստանի Գերագույն խորհուրդն առաջնորդվեց

շուրջ մեկ ամիս. հարցն ամենատարբեր ձեւերով *«քննարկեց»*, արվող դիտողությունները, առաջարկությունները ետ ու առաջ տալով, ջուր պղտորեց...Վերջում էլ բացատրեց. ***«Եթե մենք այդ առթիվ ընդունեինք որեւէ որոշում, ապա վերջնականապես կփակեինք մեր հայրենակիցների հռչակած Հանրապետության ճանապարհը, եւ միջազգային կազմակերպություններն այլեւս չեն զբաղվի նրա հարցով»։***

Իսկ հակառակորդն առաջ էր շարժվում. հունիսի 5-ին ընկան Մարտակերտը՝ կենտրոնում, Հաթերքը՝ հարավ-արեւմուտքում։ Մարտունու շրջանում հրթիռակոծությունների տակ էր հերոսական Ճարտարը։

Այդօր Էլչիբեյը հեռուստաելույթ ունեցավ՝ իր հաշվով արդեն պարտված Ղարաբաղին խոստանալով մշակութային ինքնավարություն, մի պայմանով միայն, որ Հայաստանն էլ այդպիսի վճիռ հանի զանգեզուրցի իր ցեղակիցների համար։

Հուլիսի 8-ին, վերջապես, Հայաստանի խորհրդարանը բարեհաճեց Արցախի մասին հանել իր «փրկարար» վճիռը. ***«Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որի մեջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»։***

Մոսկվյան հեռուստատեսությամբ հիշեցին այս որոշումը՝ նշելով, որ սա փաստորեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչումն է։ Իսկ մի ամիս շարունակ ո՞ւմ էին մոլորեցնում ՀՀՇ-ական իմաստունները։

Հուլիսի 8-10-ի կողմ ռազմաճակատի տարբեր հատվածներում ինքնապաշտպաններն ուշքի էին գալիս, եւ հույս կար, թե կարող են հակահարված տալ թշնամուն, ետ առնել կորցրածը։ Երեւանի հեռուստատեսությամբ ցույց տվին կոտորված ո՛չ թորք զինվորների, իբր, ավելի քան 800 փաստաթղթերի մի կույտ։ Ուրեմն, վարձկաններ են։ Բայց ինչո՞ւ դա չէր հնչում Մոսկվայից, արտասահմանյան ռադիոձայներով։ Դա ո՞վ պիտի աներ մեր անձեռներեց լրագրողների փոխարեն։

Իսկ Արցախում ինքնապաշտպաններն սթափվել էին պարտությունների պատճառած թմբիրից, ճակատի տարբեր հարվածներում հաջողություններ ունեին։ Հուլիսի 11-ին ազատագրեցին Կուսապատը, Մեհմանան, Ջանյաթաղը, Գյուլաթաղը, Մոխրաթաղը Մարտակերտի շրջանում՝ ոչնչացնելով հակառակորդի ավելի քան 30 ասկյարի։ 15-ին ազատագրեցին Սարսանգի հիդրոհանգույցը։ 19-ին էլ մտան Հաթերք՝ միջնադարյան ոստանը փրկելով պիղծ թորքի ապականումից։ 22-ին ազատագրեցին Զարդախաչ, Իմերեթ-Քերավանդ, Զափար գյուղերը։

Այս օրերին մեկը մյուսի ետեւից կործանվում էին ԼՂՀ տարածքում երեւացած ռազմական օդանավեր եւ ուղղաթիռներ։

Հուլիսի 19-ին էր, մոսկվյան հեռուստատեսության խոսնակը, հայ ազատամարտիկների հաջողությունները նշելով, գաղտնիքն էլ բացեց։ Գորիս-Լաչին-Ստեփանակերտ կենսական ճանապարհը հնարավորություն տվեց, որ բավական զենք ու զինամթերք հասցվի ղարաբաղցիներին։ Եվ ահա արդյունքը. նրանք ազատագրում են իրենց հողն ու բնակավայրերը։

Սակայն օգոստոսին թորքին օգնության եկան վարձկան նոր զորամիավորումներ, զրահատեխնիկայի ու օդային թարմ ուժեր, եւ հաջողությունը նորից անցավ նվաճողին: Մարտակերտի շրջանի շատ գյուղեր, նաեւ Սարսանգի հիդրոհանգույցը, նորից բռնագրավվեցին: Դաս չառնելով նախորդ օրերին ունեցած բազմաթիվ կորուստներից՝ ծախու օդահենները նորից ռմբակոծում էին հանրապետության բնակավայրերը: Օգոստոսի 22-ին ՍՈՒ-25 ինքնաթիռը կես տոննանոց մի ռումբ գցեց Ստեփանակերտում ապաստանած փախստականների հանրակացարանի վրա: Սպանվեցին 20 մարդ, վիրավորվեցին ավելի քան հարյուրը:

Սեպտեմբերին անտանելի դարձավ կրակը Լաչինի միջանցքի եւ այն հսկող կետերի համար: Թորքի ռազմաօդային ուժերն ամեն օր ծանր հարվածներ էին հասցնում Արցախին օգնություն տանող ավտոշարասյուներին, նաեւ այս տարածքի այնպիսի կետերի (Գորիս, Կոռնաձոր, Տեղ, Խնձորեսկ եւն), որոնցից կարելի էր օգնել, պաշտպանության տակ առնել միջանցքը...

Եվ, այնուհանդերձ, անհուսալի չէր դրությունն ամբողջ ռազմաճակատում: Մարտունու շրջանում ինքնապաշտպանությունն օրեցօր անխոցելի էր դառնում խիզախ ու հմուտ զորապետ Ավո-Մոնթե Մելքոնյանի գլխավորությամբ: Ասկերանի կողմերում հենց միայն սեպտեմբերի առաջին օրերին վայր գցեցին մի քանի ինքնաթիռներ, անցան հակահարձակման, միանգամից ազատագրեցին ութ գյուղ՝ Խրամորթը, Դահրավը, Նախիջեւանիկը, Աղբուլաղը, Արանզամինը, Փիրջամալը եւն... Եվ ամենակարեւորը՝ հրետակոծում էին Աղդամն ու շրջակա գյուղերի կրակակետերը, որոնց հասած կործանիչ հարվածներից թորքի լրատվությունը վայնասուն էր բարձրացրել. հայերը հրետակոծում են մեր անզուգական Աղդամն ու մյուս բնակավայրերը, ավերում են, կրակի մատնում:

Կարծես իրենք մեր Ստեփանակերտը հրետակոծելիս ու ռմբակոծելիս առաջնորդվում էին բարի, կառուցողական նպատակներով:

ԱՊՀ չորս տերություններ՝ Ուկրաինան, Ղազախստանը, Բելառուսն ու Ռուսաստանը, նրանց հետ էլ Վրաստանը, պայմանավորվեցին իրենց դիտորդներն ուղարկել հակամարտության գոտի, որպեսզի սրանք հետեւեն նախօրոք սահմանված հրադադարի իրականացմանը, ուսումնասիրեն վիճակը, առաջարկություններ ներկայացնեն խնդիրը կարգավորելու համար:

Հոկտեմբերի 1-ին Ռուսաստանի դիտորդներն արդեն եկել էին (17-ական հոգի յուրաքանչյուր հանրապետությունում), սակայն դեռեւս ոչինչ չէին անում եւ չպիտի էլ անեին:

Հոկտեմբերի 2-ին թորքերը Մուղանլուից, Կուրոպատկինոյից ու Ամիրանլարից հարձակվել էին Մարտունու վրա, մտել նրա հարավ-արեւմտյան արվարձանը: Ինքնապաշտպանները դուրս քշեցին նրանց, հալածեցին մինչեւ իրենց դիրքերը, այնտեղ էլ ջարդեցին, մնացորդներին փախցրին, եւ երեկոյան դեմ երեք գյուղերն արդեն ազատված էին Մոնթե Մելքոնյանի զորամասի կողմից:

Այս ճակատամարտում թորքերը կորցրել են 3 տանկ, 2 զրահամեքենա, հրետանիներ, մեծաքանակ այլ զենք ու զինամթերք, 58 ասկյար:

Թորքերը հիմա էլ Մարտունու հրետակոծությունը սաստկացրել են Ֆիզուլու շրջանից։ Հոկտեմբերի 4-ին Ղաջարից 80 արկ են ուղարկել այս քաղաքի խաղաղ բնակչության վրա։ Կան ավերածություններ ու զոհեր։

Ռուսներից բացի ուրիշ դիտորդներ չեն գալիս։ Իսկ սրանք էլ կան, օրեցօր շատանում են, նույնիսկ ռազմաճակատի տարբեր հատվածներ են գնում։ Սակայն կռիվն ավելի է թեժանում։ Թորքն ավելի կատաղած է կրակ թափում հայոց դիրքերի վրա. հոկտեմբերի 9-ին հրետակոծության տակ են եղել Մարտակերտի շրջանի Վանքը, Կիչանը, Առաջաձորը, ինչպես նաեւ Ասկերանն ու Մարտունին՝ իրենց շատ գյուղերով։

Հոկտեմբերի 10-ին մերոնք Լաչինի միջանցքի շրջանում նվաճել են Ղոչազը՝ հյուսիսում, Փարաջանք-Արփագյաղուկ գիծը՝ հարավում՝ թշնամուց խլելով հինգ տանկ եւ այլ տեխնիկա։

Հայաստանի արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը հոկտեմբերի 14-ին լրատվության մարմիններին հայտարարեց, թե այսօր հայոց ամենաառաջնահերթ խնդիրն է ԼՂՀ ճանաչումը միջազգային հանրության կողմից։

Թղթակիցը հարցրեց.

-Իսկ դուք ինչպե՞ս եք նայում Հայաստանի կողմից ճանաչելուն։

Եվ նա պատասխանեց հարցով.

-Ես ասացի՞, թե Հայաստանը դուրս է միջազգային հանրությունից։

Հոկտեմբերի կեսերին ԼՂՀ Պաշտպանության կոմիտեն հրապարակեց մի տեղեկանք Ադրբեջանի բանակի կորուստների մասին՝ սկսած այս տարվա հունիսի 12-ից, այսինքն՝ շուրջ չորս ամսվա ընթացքում. 104 տանկ, 7 ինքնաթիռ, 10 ուղղաթիռ, շուրջ 400 ասկյար... այսքանը նրա ունեցածների մեկ-երրորդն է կազմում։ Մնացածը չի՞ ուզում խնայել-պահել,-հարցնում էին տեղեկանքի հեղինակները։

Մնացա՞ծը։ Մնացածի սպառումն սկսեց նոյեմբերի 1-ից, երբ Առաջաձորի վրա գրոհի գալով, միանգամից ջարդել տվեց իր ասկյարների մեկ վաշտ, Ս-72 տիպի երկու տանկ եւ ռազմական երեք ինքնաթիռ (2 ՄԻԳ-25 եւ 1 Լ-29)։ Մեկ օրվա ընթացքում։

Նոյեմբերի 12-ին Մարտակերտի շրջանում, Վաղուհաս, Կոնդոտ ու Հարությունագոմեր գյուղերն ազատագրելուց հետո, ինքնապաշտպանները մաքրում էին Զլդրանի ու Պողոսագոմերի ռազմական կետերը։

Նոյեմբերի 15-ին լրիվ ազատագրվեցին Զլդրանն ու Պողոսագոմերը, եւ ինքնապաշտպաններն ընդհուպ մոտեցան Միր Բաշիր-Մարտակերտ-Քելբաջար մայրուղուն։

Նոյեմբերի 17-ին Ստեփանակերտի մոտ վայր գցվեց թորքի ռազմական երկու ինքնաթիռ։ Մի ռազմական ինքնաթիռ էլ Շուշանի երկնքում էր խփվել նոյեմբերի 24-ին։

Նոյեմբերի 29-ին Լաչինի միջանցքի հյուսիսային մասում ինքնապաշտպաններն ամրապնդվեցին Հայի բազար, Լուլիդուզ, Ղոզլու եւ Ղարաջանլի գյուղերում՝ նրանցից դուրս քշելով թորքերին։

Դեկտեմբերի 1-ին թորքերը զիջեցին նաեւ Տիգիկ գյուղը։

Դեկտեմբերի 4-6-ը հայ ինքնապաշտպանությունն զգալի հաջողություններ ունեցավ ռազմաճակատի տարբեր հատվածներում. նվաճեց Աղդամի շրջանի Մարգիլի

գյուղը, մեկ ինքնաթիռ ոչնչացրեց Մարտունու մոտ, մեկն էլ՝ Գանձասարի կողմերում:

Դեկտեմբերի 11-ին աշխարհի լրատվության բազմաթիվ մարմիններ, Ադրբեջանից առնելով, հաղորդեցին, թե հայերը նվաճել են Զանգելանի ու Կուբաթլիի շրջանների մեկ տասնյակ գյուղեր:

Հայ ինքնապաշտպանությունն, իհարկե, մխրճվել էր Կուբաթլուի ու Զանգելանի շրջանները, սակայն մի՞թե այդ շրջանները նվաճելու համար: Բնա՛վ: Պարզապես այն նպատակ ունի թշնամուն հասկացնելու, թե պետք է դադարեցնի իր դավերը Լաչինի միջանցքի դեմ, ապա թե ոչ, կպատժվի, այն էլ ահա այսպե՛ս, ամենախի՛ստ ձևով:

Դեկտեմբերի 17-ին Ադրբեջանի ԳԽ-ի նիստում քննարկեցին Քելբաջարի, Զանգելանի ու Կուբաթլուի վիճակը, որ, իրենց իսկ խոստովանությամբ, անհուսալի էր:

Զգաստ պատգամավորներ կային, որոնք առաջարկում էին զինադադարի առաջարկություն անել հակառակորդին, գնալ բանակցությունների, փոխզիջումների ճանապարհով հասնել հարցի լուծման...Սակայն ղեկավարությունը որոշել էր մի վերջին անգամ էլ զորահավաք անել, բոլոր ուժերով գրոհել ու ծնկի բերել թշնամուն, ստիպել, որ այն համաձայնի իրենց բոլոր առաջարկներին, որոնց առանցքն ու հիմքն է Ադրբեջանի ամբողջականությունը՝ մաքրված բոլոր զինված խմբավորումներից, որ պետք է հասկանալ՝ առհասարակ հայերից:

Եվ այդ զորահավաքն էլ կատարվեց: Լրատվական մարմինները հաղորդում էին, թե հանրապետության քաղաքներում, մեծ ու փոքր բնակավայրերում ավտոմատավորներն են ռազմական կետեր տանում զինապարտներին, Բաքվի փողոցներում ու զանազան թաքստոցներում էին որսում, քշում հավաքակայաններ:

Իսկ ռազմաճակատում նոր թափով գործի էին դրել ունեցած բոլոր հեռահար հրետանիներն ու ռազմական ինքնաթիռները, հրետակոծության ու ռմբակոծության տակ էին պահում Մարտակերտի, Մարտունու, Հադրութի շրջանների սահմանամերձ ու սահմանից շատ հեռու բնակավայրերը:

ԼՂՀ Գերագույն խորհուրդն ու Պաշտպանության պետական կոմիտեն քանիցս դիմեցին Ադրբեջանի ռազմական ու քաղաքական ղեկավարությանը՝ առաջարկելով համաձայնել զինադադարին, վերջ տալ Արցախի խաղաղ քաղաքացիական բնակչության դեմ գործվող հրեշավոր չարություններին: Ամեն անգամ զգուշացնում էին նաև, հասկացնում, որ, հակառակ դեպքում, հայ ինքնապաշտպանությունն ստիպված կլինի դիմել իր խնդիրներից բխող միջոցների...Եվ արդյունքն այն կլինի, որ Ադրբեջանի զորամիավորումները ԼՂՀ սահմաններից հեռու կշպրտվեն առնվազն մեկ արկընկեց տարածություն, որպեսզի նրանց չդադարող հրակոծությունն այլևս ոչ մի վտանգ չներկայացնի բուն Արցախի ու նրա խաղաղ բնակչության համար:

Այս զգուշացումները ոչ միայն որևէ դրական արդյունք չէին տալիս, այլև ավելի էին բորբոքում հակառակորդի կատաղությունը, առավել անտանելի էին դարձնում խաղաղ բնակավայրերի հրետակոծությունն ու ռմբակոծությունը:

Իսկ նրանց առաջնորդ Աբուլֆազ Էլչիբեյը, իր ժողովրդին ոգեւորելու, խանդավառելու համար, հանդիսավոր հայտարարեց, թե կարճ ժամանակում ինքը ոչնչացրած

կլինի Բաքվից Նախիջեւան տանող բոլոր արգելքները եւ այդ ճանապարհին ինքը կը-թեքվի դեպի Սեւան, այնտեղ կլողանա, կթարմացնի ռազմի հաղթանակներից ընդար-մացած մարմինը:

Ռազմաքաղաքական այսպիսի իրադարձությամբ սկսվեց 1993 թվականը, որ Ար-ցախի նորաստեղծ հանրապետության ու նրա օրեցօր կազմավորվող, զորացող բանա-կի տարին էր լինելու: Հաղթանակի տարին, պատերազմի կրակների մեջ թրծվելու տարին:

Հունվարի առաջին տասնօրյակն անցավ Աղդամի ու Ֆիզուլու դեմ զսպողական միջոցառումների ձեռնարկումով:

ԼՂ Հանրապետության հյուսիս-արեւելյան, արեւելյան ու հարավային մասերը հանգիստ չունեին այս երկու ավազակաորջերից ու հարակից ռազմակետերից ու-ղարկված կրակից ու դավերից:

Հունվարի 7-ին Բաքվից վայնասուն բարձրացրին, թե հայերը գրոհել են Ֆիզուլու եւ շրջակաների վրա, իրենք այնտեղ արդեն արտակարգ դրություն են հայտարարում:

Արտակարգ դրությունը ոչնչով չօգնեց հայ ինքնապաշտպանության առաջ խուճա-պահար փախչող ադրբեջանական զորամիավորումներին: Մի քանի ամսվա համառ ու արյունահեղ կռիվներում նրանք զիջեցին ոչ միայն ամբողջ Ֆիզուլու, այլեւ Ջաբ-րայելի, Կուբաթլիի ու Զանգելանի շրջանները հարավային ճակատներում, Լաչինի մնացորդն ու ամբողջ Քելբաջարի շրջանն՝ արեւմուտքում եւ Աղդամի շրջանը՝ հյու-սիս-արեւելքում:

Այսքանից հետո արդեն Ադրբեջանը համաշխարհային աղմուկ բարձրացրեց՝ ջա-նալով ԼՂՀ ինքնապաշտպանությունը ներկայացնել իբրեւ ագրեսոր, որը բռնագրավել է իր հանրապետության տարածքի քսան տոկոսը, տնավեր ու փախստական դարձրել ավելի քան մեկ միլիոն խաղաղ բնակչության, որի մի զգալի մասը, Արաքսն անցնելով, թափվել է Իրանի տարածքը եւ ծվարել ժամանակավոր վրանների տակ:

Բարձրացավ նաեւ Թուրքիան եւ, նոր դավեր ու չարիքներ նյութելով հայության դեմ, ԵԱՀԽ-ի ու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ամբիոններն օգտագործեց՝ իր ցեղակցին սանձելու համար ձեռնարկված միջոցառումները դատապարտել տալու իբ-րեւ ագրեսիա: Նա իր բանակները քաշեց դեպի Հայաստանի Հանրապետության սահ-մանները. հոխորտաց, բռունցք թափ տվեց...Սակայն մեկ էլ ստիպված եղավ կուչ գալ, պոչն իրեն քաշել, որովհետեւ խոսեց նաեւ Ռուսաստանը, ասաց՝ այստեղ, Հայաստա-նի սահմանը դա նաեւ Ռուսաստանի սահմանն է, եւ Հայաստանի հետ խոսք բացողը պատասխան կտա Ռուսաստանին:

Ինքնուներքը (ի՞նչ խորհրդանշական տարի) հաղթական քայլերով նշանավորվեց ԼՂ Հանրապետության համար. ազատագրվեց նրա տարածքի մեծագույն մասը, հան-րապետությունը երեք կողմից անխոցելի դարձավ հակառակորդից նվաճված տարածքների բավական լայն շերտով:

Հակառակորդի կյանքում եւս եղան էական փոփոխություններ, որոնցից պարտու-թյունների տեւական շարքը չհաշված, ամենակարեւորը ղեկավարության փոփոխությունն էր. կարճատեւ իր պաշտոնավարությունն անփառունակ վախճանով պսակած

Էլչիբեյին փոխարինելու եկավ Հեյդար Ալիեւը՝ նախկին խորհրդային Միությունում ու նրա սահմաններից դուրս հայտնի կաշառակերության եւ խու գործարքների հանրահռչակ վարպետը։ Սա կարճ ժամանակում շուրջը հավաքեց իր նմաններին, միայն իրեն հայտնի եղանակներով Ադրբեջանի համար միջազգային հանրության մեջ հարմար մթնոլորտ ստեղծեց, ոտքի հանեց ունեցած-չունեցած ուժերը եւ թրքության ամենաառաջին, պարզապես կենաց ու մահվան խնդիրը դարձրեց ջարդել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ու նրա թիկունքում կանգնած հայության ողնաշարը...

93-ի աշնանը, բավական երկար հրադադար հաջողացնելով, Ալիեւը բազմակողմանիորեն նախապատրաստվեց նոր, իր կարծիքով, ամենավճռական մի գրոհի, որով հույս ուներ վերջնականապես լուծել ղարաբաղյան խնդիրը, ***«հայ գրոհայիններին»*** այնպես դուրս շպրտել Ադրբեջանի սահմաններից, որ նրանք չհամարձակվեն նույնիսկ դիրք պահել Հայաստանի արեւելյան ու հարավային սահմաններում, մանավանդ Զանգեզուրի կողմերում։ Այս ընթացքում նա իր հրապարակային խոսքերում չէր էլ մոռանում զգուշացնել, որ ղարաբաղյան բարդույթն իրենց անկախ ու ինքնիշխան հանրապետության ներքին հարցն է, այն իրե՛նք պետք է լուծեն, միայն իրե՛նք, ուրիշ ո՛չ ոք, եւ նույնիսկ միջազգային ամենահեղինակավոր մարմինները ոչ մի գործ չունեն նրա հետ, չպետք է զբաղվեն նրանով։

Այսքան կարեւոր միջոցառման բազմակողմանի եւ բուռն նախապատրաստության ժամանակ Ալիեւը, հավանաբար, այնքան էլ մեծ հույս չուներ իր սեփական բանակի վրա։ Նույնիսկ Ռուսաստանից եւ Ուկրաինայից, Հյուսիսային Կովկասից ու Միջին Ասիայի հանրապետություններից հավաքագրած վարձկանները բավական չհամարելով՝ օգնության էր կանչել աֆղան մոլեռանդ հավատակիցներին (մոջահեդներ)։ Եվ այս անգամ իրենց հաղթանակն այնպես իրական ու որոշակի տեսնում էր Ադրբեջանի նոր խալիֆը, որ երկու շաբաթ հետո այդ առթիվ գումարելիք հանդիսավոր նիստ նշանակեց, որը պիտի անցկացներ Ֆիզուլիում։ Պատերազմը բորբոքեց ռազմանակատի բոլոր հատվածներում՝ Քելբաջարի շրջանից մինչեւ Արաքսի ափերը, Մեղրիի արեւելյան եզրից մինչեւ Մուղանի դաշտը։

Առաջին օրերին ադրբեջանցիները նույնիսկ թեթեւակի հաջողություններ ունեցան Քելբաջարի կողմերում, ուր, Օմարի լեռնանցքը նեղքելով, արցախյան ինքնապաշտպաններին նեղեցին Թարթառի հովտում։ Հարավում ձեռք ձգեցին Հորադիզը, հարավ-արեւելքում կրակի տակ առան Մարտունու շրջանի ծայրամասերը։ Սակայն սա մի կարճ պահ էր միայն։ Հայ ինքնապաշտպանությունն սթափվեց, հավաքեց իր բոլոր ուժերը, վերանվաճեց Հորադիզը։ Հակառակորդի խառնամբոխը, ահռելի վնասներ կրելով եւ զենքի ու ռազմական տեխնիկայի հսկայական պաշարներ թողնելով, դուրս փախավ Քելբաջարի շրջանից։ Մարտունու շրջանի արեւելյան սահմաններում վերստին հաստատվեց անդորը։ Մարտակերտի շրջանից վերջնականապես դուրս քշվեցին բռնագրավիչները, եւ ազատագրվեցին Թալիշն ու Սեյսուլանը։ Թշնամին թողեց Գյուլիստանն ու Շահումյանի շրջանի մի շարք ուրիշ ռազմական կարեւոր կետեր։

Ալիեւը, խոստացած հանդիսավոր նիստը Ֆիզուլիում անցկացնելու փոխարեն, ստիպված եղավ տիեզերական նոր վայնասուն բարձրացնել, հայ բռնագրավիչներից

իր երկիրն ազատագրելու աղերսանքով դիմել միջազգային կազմակերպություններին, ԱՊՀ տերությունների ղեկավարներին։

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ու ԵԱՀԽ-ը նորից լծվեցին խաղաղարար իրենց գործին։ Ռուսաստանի արտաքին գործերի ու պաշտպանության նախարարությունները, միջազգային կազմակերպությունների անվճռական քայլերի կողքին, հրապարակ հանեցին այսրկովկասյան իրենց շահագրգռությունները եւ դարձան ոչ միայն կայուն, բավական երկար հրադադարի, այլեւ քառակողմ բանակցությունների կազմակերպիչն ու առաջ վարողը։ Քառակողմ՝ Ռուսաստան, Հայաստան, Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ, որ նշանակում է՝ Ադրբեջանն արդեն Լեռնային Ղարաբաղ-Արցախն ընդունում է իբրեւ հակամարտող-իրավասու կողմ, նրա հետ նստում է բանակցությունների՝ որոշելու անելիքը, հաստատելիք խաղաղության, իրավահավասար հարեւանների վիճակով հետագա կյանքն ապրելու եղանակը։

Ուրեմն, Ադրբեջանն ընդունում-ճանաչում է Լեռնային Ղարաբաղ-Արցախի ինքնուրույնությունը։ Քի՞չ բան է։ Բայց չէ՞ որ անցած ավելի քան վեց տարիների պայքարը, կրած զրկանքները, տված զոհերը, ձեռք բերած հաղթանակները հենց դրա՛ համար են եղել։ Եվ դրանո՛վ է, որ այս լեռնաստանում ստեղծված ու օրըստօրե աճող, զորացող ինքնիշխան հանրապետությունը ճանաչվելու է համայն աշխարհի կողմից, դառնալու է ազատ ու անկախ տերությունների համագործակցության հավասարազոր անդամը եւ սկսի ապրել իր երազած նոր կյանքը։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաղա, խան - 113:
Աբաս, կաթողիկոս Հայոց արեւելից կողմանց - 37, 38:
Աբաս, մելիք - 170:
Աբաս - Միրզա, Պարսից թագաժառանգ - 174, 177:
Աբասով Մ. - 281:
Աբդալլահ - 47,48:
Աբեղյան Մ. - 104:
Աբեղյան Հ. - 186:
Աբխազով, իշխան - 182:
Աբով, մելիք - 157, 166, 167, 170, 175:
Աբովյան Խաչ. - 177:
Աբրահամ Կրետացի - 148:
Աբրահամ Մամիկոնեից - 32:
Աբրահամյան Սարգիս - 258, 271:
Աբու - Սայիդ - 113:
Աբուլ - Ֆեթ, խան - 175:
Աբուքան - 118:
Ագաղ, աստվածաշնչյան հերոս - 45:
Ագաթանգեղոս - 24, 35, 52:
Ադամյան Պետրոս - 186:
Ադիգյոզալով - 183:
Ա-Դո - 198, 200:
Ադոնց Նիկ. - 51, 67:
Ազինի Կվադրատոս - 14:
Աթա, հովիվ - 130:
Աթաբակ, տե՛ս Իվանե-Աթաբակ:
Աթանաս, եպիսկոպոս - 104, 108:
Ալահվերդի, մելիք Խաչենի - 150, 170, 175:
Ալահ - ղուլի Սուլթան - 151, 154:
Ալի, բեկլարբեկ - 146:
Ալի, թուրք զորապետ - 143:
Ալիեւ Հեյդար - 267:
Ալիխանով - 263, 265:
Ալիյարով Ս. - 281:
Ալիշան - 64:
Ալ- Մութասիմ - 47:
Ալ - Մուքադդասի - 47, 92:
Ալ - Աֆշին - 47, 48:
Ալեքսեյ Միխայլովիչ, ցար - 135:
Ալփ - Արսլան - 63:
Ախունդով Վ. - 263:
Ահմեդ, խան - 162, 163:
Աղայան Ղազարոս - 35, 192, 193, 196:
Աղաջանյան Ռոլես - 310:
Աղբաստ, որդի Ջալալի - 119, 120:
Աղբուղա Ջաքարյան - 82:
Աղբուղա, որդի Հասան Բ - ի - 121:
Աճառյան Հր. - 19, 21, 193, 196:
Ամաղեկ, աստվածաշնչյան հերոս -45:
Ամրիկյան Մ. - 186:
Այվազյան Մարտիրոս - 205:
Անանիա Մոկացի - 59:
Անաստաս Ակոռացի - 39:
Անդրանիկ, զորավար - 206, 209, 215:
Աննա խաթուն - 151:
Անտոն, քահանա - 144:
Անրի դը Լյումլեյն - 17:
Աշոտ Բագրատունի - 48, 57, 59, 60:
Աշոտ Սեւադա - 61:
Աշուրբեկով - 197:
Աչիկգյոզյան Սիմոն - 319:
Ապուլի, որդի Համամի - 57:
Առան, Հայաղվանքի ավանդական նախնին - 16:
Առաքել Դավրիժեցի - 132:
Առաքելյան Համբարձում - 193:
Առստամյան - 211:
Առուշանյան Ա. - 317:
Ասադով - 275, 295, 310:
Ասլանիկ - 208:
Ասլանյան Սերգեյ - 261:
Աստվածապով, որդի Քամալ բեկի - 132:
Ասփա, դուստր Տարսայիճի - 91, 112, 120, 121:

Ավագ Ջաքարյան - 79, 80, 82, 84, 101:
Ավալիանի - 199:
Ավան, հարյուրապետ - 141:
Ավան, մելիք Դիզակի, տե՛ս Եգան:
Ավանեսյան Մաք. - 260:
Ավանեսյան Ջ. - 265:
Ավան Յուզբաշյան - 223:
Ավետիսյան Ա. - 216, 229:
Ավետիք - 138:
Ավո, տե՛ս Մելքոնյան Մոնթե:
Ատ - Տաբարի - 47:
Ատրներսեհ, որդի Սահլի - 40, 46, 56, 57:
Արամյան Միքայել - 195:
Արգիշտի Ա, Վանի թագավոր - 12:
Արզու խաթուն - 70, 72, 73 , 94, 109:
Արզումանյան Բաղդասար - 194:
Արզումանյան Երվանդ - 271:
Արզումանյան Միքայել (Միշա) - 215:
Արղության Հովսեփ - 156-159, 163-166, 169, 170, 215, 219:
Արղուն - 83-86, 90, 91, 96:
Արշակ Բ - 15:
Արտամոնով Մ. Ի. - 53:
Արտաշես Մեծ - 184:
Արուզ խաթուն - 91:

Բաբայան Ա. - 200:
Բաբայան Ս. - 299,313:
Բաբան, տե՛ս Բաբեկ:
Բաբեկ - 46-48, 56:
Բադալբոխյան Միքայել, տե՛ս Դալի Ղազար:
Բաթու խան-84, 85, 96:
Բալայան Ջորի -271, 273, 282, 311-313, 315, 316, 320:
Բալայան Վ. - 273:
Բակ, իշխան Արցախի - 16:
Բախտամ, մելիք - 165, 166:
Բակատին Վ. - 299:
Բաղդասար բեկ, որդի Մեհրաբ բեկի - 125:
Բաղդասար մետրոպոլիտ (Հասան-Ջալալյան) - 187-189, 195:
Բաղիրով Մ. Ջ. - 245, 246, 255, 257, 258:
Բաղիրով Ք. - 275, 278, 279, 281:
Բաղի, Վարանդայի մելիք - 130, 151:
Բաղիր, մելիք - 139:
Բաղրամյան Հովհաննես - 202:
Բայրամովա - 283:
Բաչու-Ղուրչի - 81, 82:
Բաչու նոյին - 100:
Բասով Ն. - 289:
Բարդուղիմեոս, առաքյալ - 23:
Բարխուդարյան Ս. - 56:
Բարխուտարյանց Մակար - 17, 117, 119, 122, 193:
Բեգլարյան Հր. - 271, 274:
Բեկզադյան Ալ. - 239:
Բլեյան Ա. - 345:
Բորա նոյին, որդի Զարմաղանի, ամուսին Ռուզուքանի - 81, 87, 91:
Բորովիկ Հեն. - 315:
Բուղա, զորավար - 43-45, 48, 207:
Բուղա, մոնղոլ հարկահան - 83, 84:
Բունիաթզադե - 25Շ
Բուշ - 322:
Բուռլացկի Ֆ. - 314, 322:
Բուրկովա Ինեսա - 321, 322:
Բուրնաշով, զորավար - 155, 166, 167:

Գաբրիելյան Գ. - 260, 262, 271, 274:
Գաբրիել, հոգեւորական - 158:
Գան Կ. - 50:
Գալստյան Ժաննա - 274:
Գալստյան Համբարձում - 200:
Գասպարյան Լ. - 260-262:
Գելման Ա. - 314:
Գեկազով Մկրտիչ - 157:
Գեորգի Լաշա - 78:
Գեորգիոս, սուրբ նահատակ - 43:

Գեորգ Բ Գառնեցի, կաթողիկոս Հայոց - 57:
Գեռաքարեցիք - 66:
Գեւորգ Սուրենյանց Ղարաբաղցի-Տփղիսեցի, կաթողիկոս (Գեւորգ Ե) - 192, 195:
Գերգ, որդի Հայրապետի - 118:
Գիտալով Ա. Վ. - 285:
Գիրենկո -305, 310:
«Գյավուր Աբրահամ», տե՛ս Աբրահամ զորապետ:
Գոլիցին -193, 194:
Գոլովին - 137:
Գոլովկին Գ. Ի. - 145:
Գոլուբեւ - 310:
Գողիաթ,աստվածաշնչյան հսկա - 45:
Գոնչարով Ա. - 314:
Գորբաչով Մ. Ս. -277, 282 - 286, 288, 289, 296 - 298, 303, 306, 307, 311- 16, 320, 322, 327, 332, 336, 339:
Գորոդեցկի Սերգեյ - 237:
Գրանին Դ. - 314:
Գրիգոր, եպիսկոպոս Դաղի վանքի - 108, 109:
Գրիգոր, եպիսկոպոս, որդի Դոփի - 74, 75:
Գրիգոր, իշխան Արցախի, թոռ Գրիգոր-Համամի - 59:
Գրիգոր, իշխան, որդի Դոփի -82, 94, 100-102, 120:
Գրիգոր Լուսավորիչ - 25, 26, 32, 48, 99, 135:
Գրիգոր Խլաթեցի - 121:
Գրիգոր-Համամ, որդի Ատրներսեհի, թոռ Սահլի - 56, 57, 59-61, 88, 108, 126:
Գրիգոր Հեջուբ Խաչենեցի - 80, 84:
Գրիգոր Մամիկոնյան, իշխան - 46:
Գրիգոր Մամիկոնյան, սպարապետ Հայոց - 39:
Գրիգոր, որդի Խաղբակի - 79:
Գրիգոր, որդի Հասան Բ-ի - 103, 104, 112,121:
Գրիգոր, որդի Հասանի, եղբայր Վախտանգի - 71, 72:
Գրիգոր, որդի Սակռի - 94:
Գրիգոր Պատմիչ (Ականացի) - 80, 82, 84, 85, 93, 105:
Գրիգոր, Սյունյաց իշխան, Քուրդկա որդի - 46:
Գրիգոր Տղա, կաթողիկոս - 110:
Գրիգոր Տղա, տե՛ս Գրիգոր Հեջուբ Խաչենեցի:
Գրիգոր Տուտեորդի - 110, 111:
Գրիգորիկ - 65:
Գրիգորիս, եպիսկոպոս, թոռ Գրիգոր Լուսավորչի - 25, 26, 31, 48:
Գրիգորիս, կաթողիկոս Գանձասարի, որդի Բաղդասարի - 125:
Գրիգորիս, կաթողիկոս Գանձասարի, որդի Մեհրաբ բեկի - 124:
Գրիգորիս, որդի Դոփի, եպիսկոպոս Հաղբատի - 100:
Գրիգորիս, որդի Հասանի, եղբայր Վաղթանգի -71, 72, 99:
Գրիգորյան Ավ. - 310:
Գրիգորյան Եղիշե - 258:
Գրիգորյան Մանուչար - 200:
Գրիգորյան Ս. - 260:
Գրիգորյան Վաչ. - 313:
Գրոմիկո Ա. - 285:
Գուդովիչ Իվան - 175:
Գուլիեւ Ջ. - 281:
Գույուկ - 83, 84:

Դադամյան Բ. Վ. - 298:
Դաղի կամ Դաղո, եպիսկոպոս - 27:
Դալի Ղազար - 227, 228:
Դաշդամիրով - 295:
Դավթակ Քերթող - 39, 40, 52, 54:
Դավիթ, Գանձասարի կաթողիկոս, որդի Բաղդասարի - 125:
Դավիթ, թագավոր Հրեից - 45:
Դավիթ Ծարեցի - 97-100:

Դավիթ Մագիստրոս - 59:
Դավիթ, որդի Վասակի - 95:
Դավիթ, Վրաց թագավոր - 86, 91:
Դավիթ Քոբայրեցի - 110:
Դավթյան Խաչատուր - 200:
Դավթյան Հոնան - 196:
Դեմիրճյան Կ.- 268, 275, 279, 280:
Դեմուրյան Ստեփան - 193:
Դեսում իշխան - 84:
Դեսումյանք - 66:
Դիլ Շառլ - 106:
Դիտրիխ - 186:
Դլենյանք - 66:
Դիոն Կասիոս - 14:
Դոլգորուկով Վ. Վ. - 145:
Դոփ - 70, 73-75, 91, 94, 100, 104, 109, 120:
Դրո (Դրաստամատ Կանայան) -197, 227, 228, 231, 233, 234:
Դուդին Մ. - 315:

Եգան, մելիք Դիզակի -133, 149-151, 154, 179:
Եգորյան Է. - 345:
Եզիդ, խալիֆ - 49:
Եզյան Կ. - 190:
Ելթինա խաթուն - 81, 82:
Ելցին Բորիս - 329, 331, 332:
Եկատերինա Բ - 156-159, 161, 163, 169:
Եղիշե, հայ պատմիչ - 15, 16, 28, 52, 190:
Եղիշե, Թադեոս Առաքյալի աշակերտ -23, 24, 48:
Եպիսկոպոսյան Հ. Լ. - 274:
Եսայան Մելիքսեթ - 205:
Եսայի Աբու-Մուսե - 43, 44, 46, 47, 58, 59, 207:
Եսայի Հասան-Ջալալյան -137, 139-145, 188:
Եսայի, մելիքԴիզակի - 151:
Եվստաթիոս - 14:
Երզնկյան Արամայիս - 232, 233:
Երիցյան Հ. - 230:
Երմոլով Ա., գեներալ - 177, 182:
Եփրեմ, կաթողիկոս Հայոց - 182:

Զազա, իշխան Խաչենի - 119:
Զախարով Մ. - 314:
Զարեմբա Ֆիլիցիան - 186:
Զաքարե Զաքարյան, ամիրսպասալար - 68, 70, 74, 79, 86:
Զաքարե, որդի Շահնշահի, Զաքարյան - 87:
Զաքարիա Սարկավագ Քանաքեռցի - 130, 131:
Զաքարյաններ - 137:
Զլոբին Ն. Ա. - 285:
Զոհրա խանում - 151:
Զուբարյով - 182, 183:
Զուբով Վալերիան - 168:
Զուրաբյան Լեւոն - 231:

Էլիկում Օրբելյան - 80:
Էլչիբեյ - 337, 344- 349:

Թադեոս, առաքյալ - 23:
Թաթլիեւ - 285, 287:
Թախտաջյան Արմեն - 193, 271:
Թախտաջյան Լեւոն - 193:
Թաղիադին, որդի Կյուրիկե Բագրատունու - 82, 102:
Թաղիադյան Մեսրոպ - 177, 187:
Թամար, թագուհի Վրաց - 79:
Թառումյանց Մարկոս - 184:
Թարխան, զորապետ, եղբայր Ավանի - 141:
Թարվերդյան, գնդապետ - 228:
Թեոդորոս Ռշտունի - 41, 42:
Թեւան - 229, 235, 236:
Թոմսոն, անգլ. գեներալ - 209-211, 213-216:
Թովմա Արծրունի - 45, 51:
Թովմասյան Վ. - 299:

Թորա աղա - 96:
Թորամանյան Թորոս - 106:
Թումանյան Հովհ. - 178, 217:
Թումյան Թուման - 196, 204:
Թումյան Հարություն -201, 204, 205, 209, 216, 219, 221, 227, 229:

Ժամհարյան Մարգար - 198:
Ժիգուլին Ա. - 314:

Իբրահիմ Խալիլ, Շուշիի խան - 153-155, 158, 159, 161-167, 171-174, 178, 187:
Իբրահիմով Միրզա - 272, 289:
Իբրահիմ փաշա - 146:
Իգնատենկո - 314:
Իլդրըմ - 250:
Իշխանյան Եղիշե - 205, 216:
Իոսիֆյան Անդրանիկ - 260, 270, 271:
Իսախանյան Նիկոլայ - 204:
Իսահակյան Ավետիք - 255:
Իսկենդերով - 263:
Իսրայել, հակաթոռ կաթողիկոս - 153:
Իսրայել երեց - 126:
Իսա իբն-Յուսուֆ իբն-Իստիֆանուս, տե՛ս Եսայի Աբու-Մուսե:
Իսրայել Օրի - 135, 137, 138:
Իվանե-Աթաբակ, որդի Հասան-Ջալալի - 76, 86, 87, 90, 103, 107, 117:
Իվանե Զաքարյան - 68, 70, 74, 76, 78-80, 84, 89:
Իվանե Բ, թոռ Իվանե Աթաբակի - 119:
Իվան Կարապետ - 145:

Լազարյան Հովհաննես - 156, 157, 163:
Լազարյան Մինաս-աղա - 175:
Լանկ-Թեմուր - 114, 115, 121, 123:
Լապտեւ - 315:
Լավլինսկի Լ. - 314:
Լեգրան Բորիս - 237, 240:
Լենին - 232, 240, 241, 277, 278:
Լեո - 20, 37, 52, 128, 130, 131, 133, 159, 160, 172, 173, 183, 191-193, 196, 197, 203, 205:
Լեւաշով, ռուս զորավար - 145:
Լեւոն Ա, թագավոր Կիլիկիայի - 109:
Լեւոն Զ, թագավոր Կիլիկիայի - 116:
Լիխանով Ալբերտ - 322:
Լիխաչով Դմ. - 322:
Լոռիս-Մելիքյաններ - 133:
Լուկաշին Սարգիս - 246:
Լուկյանով -304, 315, 323, 327:

Խադ, եպիսկոպոս - 27, 73:
Խալիլ փաշա - 208, 227:
Խաղբակ Խաչենեցի - 79:
Խաղբակյանք - 66, 136:
Խանդամիրյան Անդրեաս - 186, 189:
Խանդամիրյան Մարտիրոս - 189:
Խանջյան Աղասի - 256:
Խաչատուր Կեչառեցի - 103, 104:
Խատիսյան Ալեքսանդր - 203, 214:
Խոյդան, որդի Հասանի, եղբայր Վախտանգի - 71, 72:
Խոսրով Ա Անուշիրվան - 38:
Խոսրով Բ Փարվեզ - 39:
Խոսրով, թագավոր Հայոց - 27:
Խորեն Ստեփանե - 192:
Խորիշահ, դուստր Սարգիս Զաքարյանի, մայր Հասան-Ջալալի - 70, 75,109:
Խրիմյան Հայրիկ - 193:
Խրուշչով Ն. Ս. - 259:
Խուդաբանդա, շահ - 123:
Խուդադատ (Մելիք-Շահնազարյան) - 183:
Խութեցի Հովնան - 42:
Խութլուբեկ, որդի Խոյդանի - 117:
Խուիտուղտի - 64:

Ծատուրյան Ալեքսանդր (Ռուբենի) - 205:
Կամենսկի - 239:
Կասյան Ս. - 240:
Կապուտիկյան Ս. - 282:
Կարաեւ Ալիհեյդար - 242, 250:
Կարաեւ Ասադ - 240:
Կարախան Լեւոն - 232, 236:
Կարախանով Գաբրիել - 157, 165, 166:
Կարակազով Արմենակ - 247, 249, 250:
Կարա-Յուսուֆ - 115:
Կարապետյան Ար. - 273:
Կարաուլով - 337:
Կարյագին - 174:
Կարպով Անատոլի - 322:
Կասըմ, արաբ բռնավոր - 41:
Կեւորկով - 266-268, 272, 273, 275, 278, 279, 282:
Կիրակոս Գանձակեցի - 11, 64, 73, 77-80, 82-85, 87, 89, 90, 93, 96-101, 105, 108-111:
Կիրով Ս. Մ. -238, 243, 246:
Կյուրիկե Բագրատունի - 71:
Կոբիեւ Ի. Ի. - 204:
Կոնդրատեւ - 275:
Կոսոլապով - 310:
Կոստանդ, հոգեւորական - 118:
Կոստանդին Բարձրբերդցի - 95, 97, 109:
Կոստանդին Ծիրանաճին - 55:
Կովալյով Ս. - 315, 325:
Կորգանյան Միք. - 260:
Կորյուն - 52:
Կրյուչկով - 307, 322, 327:
Կուգուլտինով Դ. - 314:
Կուդրյավցեւ Վ. - 314:
Կուլիեւ - 246:
Կուպրեեւ Ս. - 299:

Հաթամ, մելիք - 154, 155, 157, 175:
Հախումյան Համբարձում աղա - 190:
Հախումյան Մարիամ - 190:
Հախումյան Սիմեոն - 192:
Հակոբ, Երուսաղեմի առաջին հայրապետ - 23:
Հակոբյան Վարդան - 271, 274:
Հակոբջան, մելիք Երեւանի - 148:
Հակոբ Ջուղայեցի, կաթողիկոս Հայոց - 135:
Համամ, տե՛ս Գրիգոր-Համամ:
Համազասպ, եպիսկոպոս Հաղբատի - 99:
Համազասպ Սրվանձտյան - 198:
Համբարձումյան Սաքո - 234:
Համբարձումյան Սերգեյ - 287:
Համբարձումյան Վիկ. Համ. - 313-315:
Համզաթով Ռասուլ - 289, 291:
Հայկ, Հայոց ավանդական նախահայրը - 16, 36:
Հայկազյան - 275:
Հայկունի Գուրգեն - 232:
Հայրյան Մանուշակ - 200:
Հասան Բ, թոռն Դոփի - 91, 102-104, 120, 121:
Հասան իբն-Ալի - 63:
Հասան, որդի Գրիգորիկի - 65:
Հասանով - 292:
Հասան, տեր Հաթերքի - 69, 71:
Հասան տեր Վերին Խաչենի, ամուսին Դոփի - 70, 73, 74, 100, 109:
Հասան-Ջալալ Դոլա - 69, 71, 75-77, 80-83, 85-92, 96, 97, 102, 103, 107-109, 116-118, 133:
Հասան-Ջալալյաններ - 134, 151:
Հարութինով Գրիգոր - 256, 257:
Հարությունյան Գարեգին, տե՛ս Նժդեհ:
Հարությունյան Լյուդմիլա - 320:
Հարությունյան Համո - 260:
Հարությունյան Ս. -292, 302, 303:
Հարությունով, գեներալ - 274:
Հեթում Ա - 61, 82, 83:
Հեսու, աստվածաշնչյան հերոս - 45:
Հերակլ, թագավոր Վրաց - 160-163, 166, 167:
Հովհան, կաթողիկոս Հայոց - 32:
Հովհաննես աբեղա, գրիչ - 124:

Հովհաննես Երզնկացի - 91, 109:
Հովհաննես, կաթողիկոս Գանձասարի - 119:
Հովհաննես Ա, եղբայր Հասանի՝ Ծարի տիրոջ - 73, 74, 100, 110-112:
Հովհաննես Բ, որդի Հասանի - 74, 75, 101, 102:
Հովհաննես Գ, որդի Գրիգորի - 102, 110:
Հովհաննես Դրասխանակերտցի - 51:
Հովհաննես կաթողիկոս Հասան-Ջալալյան - 155-157, 164-166, 187:
Հովհաննես կաթողիկոս, որդի Բաղդասարի - 125:
Հովհաննես Մկրտիչ - 135:
Հովհաննես, որդի Սահլի - 46, 55, 56:
Հովհաննես Սարկավագ - 62, 104, 105:
Հովհաննես Սենեքերիմ, թոռնթոռ Սահլի - 55, 59, 60:
Հովհաննես Վանական - 100:
Հովհաննիսիկ Ծարեցի - 123, 125:
Հովհաննիսյան Աշոտ - 196, 271:
Հովհաննիսյան Արսո - 205:
Հովհաննիսյան Դանիել - 165:
Հովհաննիսյան Լեւոն - 271:
Հովհաննիսյան Ռաֆֆի - 348:
Հովսեփ Արցախեցի - 187:
Հովսեփ Էմին - 155:
Հովսեփ, մելիք Գյուլիստանի - 151, 154, 155:
Հովսեփ, մելիք Վարանդայի - 151:
Հովսեփյան Արմեն - 305:
Հովսեփբեկ Մադաթյան - 183:
Հովսեփյան Գարեգին - 202:
Հովսեփյան Յա. - 317:
Հուլավու խան - 87, 90, 113:
Հուլիոս Սոլին - 14:
Հումմել Յա. - 18:
Հուսեյն, մելիք Վարանդայի - 151:
Հուսեյնով - 230, 239:
Հուրունց Լեոնիդ - 271:
Ղազարյան Գր. - 229:
Ղահրաման Մելիք-Ավանյան - 176:
Ղարաբեկյան Մ. - 242:
Ղարագյոզյան Գ. - 229:
Ղարիբյան Ար. - 19:
Ղաֆադարյան Կարո - 74, 111:
Ղեւոնդ, պատմիչ - 49:
Ղիյաթադին, տե՛ս Ղիյաս Էդդին քայ-Խոսրով:
Ղիյաս Էդդին քայ-Խոսրով - 82:
Ղուլիքեւխյան Գաբրիել - 192:
Ղուկաս, կաթողիկոս Հայոց - 164:
Ղուկաս Սեբաստացի - 139:
Ղուկաս, վարդապետ - 133:
Ղուկասյան Արկադի - 310:
Ղուկասյան Մարիամ - 195:
Ղուկասյաններ - 195:
Ղուռումչի - 114:

Մադաթով Պետրոս - 170:
Մադաթով Վալերիան (Ռոստոմ) - 177:
Մախարաձե - 243:
Մամա, Մամա խաթուն, Հաթերքի տիրուհի - 71:
Մամա խաթուն, դուստր Հասան Ջալալի - 91:
Մամեդով Ա. - 264, 265:
Մամեդով Խ. - 281:
Մամիկոնյան Վարդան - 288:
Մամիկոնյան Ֆելիքս - 320:
Մամքան, դուստր Տարսայիճ Օրբելյանի - 91, 103, 104:
Մամքան, կողակից Հասան-Ջալալի - 76, 86,91, 92, 107:
Մանանդյան Հակոբ - 78, 94:
Մանգու, մեծ խան - 86, 96:
Մանասյան Գրիգոր - 260:
Մանդինյան Սեդրակ - 186, 192, 193, 196:
Մանսուր - 163:
Մանուկյան Արամ - 196:
Մանուչարյան Արկ. - 260, 310:
Մասուդի - 57:

Մատթե, գիտնական - 32:
Մատթեոս, կաթողիկոս Հայոց - 196:
Մատթեոս Մոնոզոն - 119:
Մատթեոս Ջուղայեցի - 114:
Մարգարյանց Վլ. - 300:
Մարկոս, վարդապետ - 84, 85:
Մարչուկ Գ. Ի. - 313, 314:
Մաք Մոզըն - 209, 210, 212, 213,216, 218:
Մեժլում, մելիք - 166, 167:
Մելիք-Ալանով Սադըխբեկ - 199:
Մելիքբեկ, որդի Աստվածապովի -132:
Մելիքբեկ, որդի Միրզաջանի - 131:
Մելիք-Եգանյաններ - 166:
Մելիքիշվիլի Գ. Ա. - 13:
Մելիքշահ - 62, 63:
Մելիք-Շահնազարյան Կ. - 186, 192:
Մելիքջան Մելիք-Շահնազարյան -149:
Մելիքսեդեկ, արքեպիսկոպոս - 157:
Մելքոնյան Մոնթե (Ավո) - 327, 347:
Մելքումյան Գ. Ա. - 261, 266:
Մելքումյան Խ. - 229:
Մեհդի Ֆ. - 281:
Մեհթի խան - 178, 182:
Մեհթի-ղուլի, խան - 174, 188:
Մեհմանդարով - 225:
Մեհրաբբեկ, Հասան-Ջալալյան - 124, 125
Մենակ (Գեորգ Առստամյան) - 196:
Մեշչանինով Ի. Ի. - 18:
Մեսյան Ջ. - 229:
Մեսրոպ Մաշտոց - 31, 191:
Միզդրիկով - 236:
Միխայլով Ալ. - 314:
Միխայլով - 239, 274:
Միխայլով Վ. Ա. - 273:
Միկլուխո-Մակլայ Ն. Դ. - 88:
Միկոյան Ա. Ի. - 264:
Մինա խաթուն - 91:
Մինա, կին Աբուքանի - 118:
Մինաս եպիսկոպոս - 100:
Մինաս վարդապետ - 136:
Միշին Վ. - 299:
Միտերան - 322:
Միրզա Ադիգյոզալով - 182:
Միրզաբեկ, եղբայր Շահնազար Ա-ի - 132, 150, 151:
Միրզաբեկյան Մինաս - 183:
Միրզաջան, որդի Ջհանշահի - 126:
Միրզաջան, որդի Ուլուբեկի - 131:
Միրզոյան Լեւոն-244, 245, 248, 251:
Միրիմանյան - 233:
Միքայելյան Ա. - 229, 233:
Մխիթար Գոշ - 13, 49,63-66, 72, 105, 109, 110:
Մկտրչյան Արթուր - 273, 338, 339:
Մյասնիկյան Ալ. - 242, 244, 248:
Մովսես, աստվածաշնչյան հերոս -45:
Մովսես Դասխուրանցի, տե՛ս Մովսես Կաղանկատվացի:
Մովսես Խորենացի - 16, 35, 36, 52:
Մովսես Կաղանկատվացի - 24, 32, 38, 39, 43, 47, 50-53, 103:
Մովսես, որդի Եսայի Աբու-Մուսեի - 44, 58:
Մովսիսյան Բ. - 264:
Մովսիսյան Վլ. - 312:
Մռավյան Ասքանազ - 242:
Մութալիբով Այազ - 272, 310, 312, 325-327, 330, 331, 339, 341-343:
Մուշեղ Բագրատունի, Կարսի թագավոր - 60:
Մուսայելյան Հայրապետ - 204, 209:
Մուսլիմզադե - 283:
Մուստաֆա Լալա փաշա - 123:
Մուստաֆաեւ Իմամ - 272:
Մուստաֆա Քեմալ - 236:
Մուրադյան Բ. Հ. - 263:
Մուրադյան Իգոր - 273:
Մուրացան - 192, 196:
Մուքանյան Ա. - 260:

Յազով - 322, 327, 329, 336:
Յակոբսոն Ա. Լ. - 106:
Յանովսկի Ա. - 50:
Յաշին - 275, 279:
Յուդենիչ, գեներալ - 219:

Յուշկով Ս. Վ. - 7, 8, 50:
Յուսուֆ, արաբ զորավար - 42:

Նադր- կուլի, խան - 148:
Նադիր, շահ - 150, 154, 158:
Նազարբաեւ - 331, 332:
Նազարեթյան - 243:
նազարյան Ստեփանոս - 187:
Նազարյան Տ. - 186:
Նակաշիձե - 196-198:
Նապոլեոն - 176:
Նարիմանով Նարիման - 238-240, 242-245, 248, 251, 259:
Ներսեհ, իշխան Գարդմանքի - 46:
Ներսես Աշտարակեցի - 188:
Ներսես, առաջնորդ Գանձասարի-120:
Ներսես, կաթողիկոս Աղվանից - 77:
Ներսես Բ, կաթողիկոս Հայոց - 37:
Ներսես, եպիսկոպոս Ամարասի - 90:
Ներսես, հակաթոռ կաթողիկոս - 144:
Ներսիսյան Գրիգոր - 271:
Ներսիսյան Ներսես - 191, 196:
Նժդեհ - 229, 233-236, 241:
Նիկոլայ Ա, ցար - 180:
Նիկոլայ Բ, ցար - 193:
Նիկոլ Դուման - 196-198:
Նիշանով - 305, 310, 315:
Նորադին - 94:
Նուրի փաշա - 204, 207, 208:

Շադունց Սուրեն - 247-249:
Շահ Աբաս Ա - 123, 129-132, 150:
Շահ Աբաս Բ - 130:
Շահանդուխտ, դուստր Սահակ-Սեւադայի, թագուհի Սյունյաց - 61:
Շահին, թուրք զորապետ - 143:
Շահթախթինսկի - 240:
Շահինյան Մարիետա - 225, 226, 252, 271:
Շահխաթունյանց Հովհ. - 118:
Շահմազյան Արսեն - 215:
Շահնազար, մելիք Վարանդայի, հայր Բաղիի - 130, 151:
Շահնազար Ա-պայազատ Դոփյան տոհմի, մելիք Ծարի - 122, 126, 131, 132, 150:
Շահնազար Բ, տեր Սոդք-Ծարի -132:
Շահնազար Բ, մելիք Վարանդայի - 151-154, 165, 166:
Շահնազարյան - 211:
Շահնազարյան Ասլան - 229:
Շահնազարյան Նիկոլայ - 258, 259:
Շահումյան Ստեփան - 204, 207, 251:
Շանթ Լեւոն - 231, 232, 236:
Շարաֆուտդինով Սուրաթ - 313:
Շահնշահ Զաքարյան - 79, 80, 82, 86, 87:
Շահվերդի, խան - 155:
Շանշե-Շահնշե, որդի Հասան Բ-ի - 121, 131:
Շանշյան Պետրոս - 190, 191, 195:
Շատալին, գեներալ - 320:
Շատելվորտ - 214-216:
Շատրով Մ. - 314:
Շաքարյան Ս. - 260-262:
Շիրվան, որդի Հասան Բ Դոփյանի - 121:
Շկլյարեւսկի Ի. - 314:
Շոպեն Ի. - 50:
Շուքուրով Շարիֆ - 313:
Ոսկանյան Հ. - 285:
Զարմաղան - 80-82, 84, 87, 91:
Զեռնենկո - 288:
Զինգիզ խան - 78, 96:
Զիչերին - 231, 236, 240:
Զմշկյան Գ. - 186:
Զոլի - 64, 65:
Զուլով - 235:

Պանդալեոն, բժիշկ - 31:
Պապ թագավոր - 30:
Պապաջանյան Միք. - 203:
Պապաք Խաղբակյան - 79:
Պավել, ցար - 169, 170:

Պատկանով-Պատկանյան Ք. - 23:
Պատկանյան Սերովբե - 187:
Պետրոս Ա Մեծ, կայսր Ռուսաստանի - 136, 139, 140, 142-144, 148, 156:
Պետրոս, կաթողիկոս Գանձասարի - 135, 137:
Պետրոս Սյունեցի - 32:
Պետրոս վարդապետ Ղարաբաղցի - 187:
Պետրոսյան Լեոնարդ - 327, 330, 331, 337:
Պետրոսյան Ռազմիկ - 310:
Պետրոսյան Ռոբերտ - 310:
Պըլը-Պուղի - 153:
Պլիսով Վ. - 299:
Պլինիոս Ավագ - 14:
Պլուզյան Մաղաքիա - 191:
Պոլյանիչկո - 303, 304, 306, 310:
Պողոսյան Հենրիխ - 282, 285, 286, 290, 291, 295, 296, 298, 299:
Պոտյոմկին Գրիգորի - 156, 157, 158-164, 166, 168:
Պոտյոմկին Պավել - 156-158, 161, 162, 164-167:
Պոտտո Վ. - 177:
Պռոշ Խաղբակյան - 102:
Պռոշյան Պերճ - 190, 196:
Պտղոմեոս - 14:
Պրիմակով - 288:
Պուգո - 322, 329:

Ջաբրայիլ Շախսուվարով - 200:
Ջալալ, որդի Իվանե-Աթաբակի - 117, 118:
Ջալալ, Տարսայիճ Օրբելյանի որդին - 91:
Ջալալ Գ., թոռ Ջալալի, թոռնորդի Իվանե-Աթաբակի - 119, 126:
Ջալալէդդին - 70, 75:
Ջալալ իշխան, որդի Մեհրաբբեկի-125:
Ջահանշահ, Պարսից գահակալ - 129, 130:
Ջանյան Բ. - 260, 271:
Ջանշե-Ջահանշե, որդի Հասան Բ-ի-121:
Ջամիլ Ջահիդ բեյ - 206-208:
Ջաֆար-կուլի աղա - 183:
Ջաֆարով Վ. - 299:
Ջիվանշիր - 39, 40, 49, 52, 53:
Ջումշուդ, մելիք - 169-171, 175:

Ռադաեւ - 310:
Ռազումովսկի - 282:
Ռաիսա Մաքսիմովնա - 297:
Ռասպուտին Վ. - 314:
Ռեուտ, ռուս զորապետ - 177:
Ռիժկով Ն. - 297:
Ռյոսլեր Է., գերմանացի հնագետ -18:
Ռոստոմ, մելիք - 170:
Ռուզուդան, թագուհի Վրաց - 79:
Ռուզուքան, դուստր Հասան-Ջալալի - 81, 87, 91:
Ռուսա Ա, Վանի թագավոր, որդի Սարդուր Բ-ի - 13, 18:

Սալախյան Հակոբ - 260:
Սալահ - 143:
Սախարով Ա. Դ. - 294, 298:
Սակռ, որդի Հասանի - 94:
Սահակ Պարթեւ - 99, 100:
Սահակ-Սեւադա, որդի Գրիգոր-Համամի - 57, 61:
Սահլ Սմբատյան - 40, 43, 46, 47, 55, 56:
Սամուել Անեցի - 64, 65:
Սամուել, աստվածաշնչյան հերոս-45:
Սայտուն, որդի Աղբաստի - 119, 120:
Սայտուն, որդի Շահանշեի - 122, 131:
Սանեսան, թագավոր բուն Աղվանքի - 25-27:
Սարգիս Ջաքարյան, ամիրսպասալար - 67-70:
Սարգիս,որդի Հասան Բ-ի - 121:

Սարգիս Հասան-Ջալալյանց - 166, 187, 191, 192:
Սարգսյան Լեւոն - 193:
Սարգսյան Սոս - 313:
Սարդուր Բ, Վանի թագավոր - 12, 13:
Սարը - Մուստաֆա - 145:
Սարթախ - 84-86, 96:
Սարուխանյան Վաչե - 274:
Սաֆոնով, գեներալ - 304, 309, 310:
Սաֆրազյան ամուսիններ - 186:
Սեդրակյանց Արիստակես - 192:
Սեիդով - 265, 283:
Սեյրանյան Ա. - 260:
Սենեքերիմ, թագավոր Սյունյաց - 63, 65:
Սենեքերիմ, թոռ Գրիգոր-Համամի, տե՛ս Հովհաննես-Սենեքերիմ:
Սեւադա Խաչենեցի - 102:
Սիդորով Վլ. - 299, 301, 302:
Սիսակ, Սիսական աշխարհի ավանդական նախնին - 16, 36:
Սիրանույշ - 186:
Սմբատ, թագավոր Սյունյաց, ամուսին Շահանդուխտի - 61:
Սմբատ, որդի Գրիգոր-Համամի - 57, 59:
Սմբատ, որդի Հասանի, եղբայր Վախտանգի - 71, 72, 84:
Սմբատ, որդի Հեջուբի - 88:
Սմբատ Օրբելյան - 86:
Սոլոուխին Վլ. - 314:
Սողոմոն, աստվածաշնչյան հերոս - 135:
Սողոմոն, եպիսկոպոս - 56:
Սպրամ, Միհրանյան իշխանուհի -40:
Սվիրիդով - 250:
Ստալին - 241-244, 251, 256, 257, 259, 286:
Ստեփան Բյուզանդացի - 14:
Ստեփանյան Գրիգոր - 260-262:
Ստեփանյան Թեւան, տե՛ս Թեւան:
Ստեփանոս, ժամանակագիր - 90:
Ստեփանոս, կաթողիկոս - 103:
Ստեփանոս Միհրանյան - 40:
Ստեփանոս Շահումյան - 138:
Ստեփանոս Սյունեցի - 20:
Ստեփանոս, քահանա - 24:
Ստեփանոս Օրբելյան - 13, 33, 35, 61, 91:
Ստրաբոն - 14:
Սուլեյման փաշա - 167:
Սուլթանով Խոսրովբեկ - 210, 211, 214, 216-225, 229, 230, 264:
Սուլթանով Սելիմբեկ - 216, 220:
Սուլկեւիչ - 221, 222:
Սուսլով - 264:
Սուրեն, մարզպան - 38:

Վազգեն Ա, կաթողիկոս Ամենայն Հայոց - 316, 320:
Վախտանգ, թագավոր Վրաց - 140, 142, 145:
Վախտանգ, որդի Հասանի, տեր Հաթերքի - 71, 75:
Վախտանգ-Սակառ - 71:
Վախտանգ-Տանգիկ, հայր Հասան-Ջալալի - 69, 70, 75, 84:
Վախտանգ, Ումեկի որդի - 91:
Վահան, իշխան Սյունիքի - 38:
Վահրամ Ջաքարյան - 80, 82:
Վաղարշ, թագավոր Պարսից - 30:
Վաղարշյան Վաղարշ - 271:
Վահաբզադե Բ. - 281, 283:
Վանական Վարդապետ - 77, 80, 85, 99, 105, 108, 109:
Վանի իշխան - 196:
Վաչագան Բարեպաշտ, Առանշահիկ, առաջին թագավոր Արցախի - 29-36, 39, 48, 49, 52, 61, 87, 108:
Վաչե, Հայաղվանքի ավանդական թագավոր - 95:
Վաչե Մամիկոնյան, Մեծ Հայքի սպարապետ - 26, 27:
Վասակ Խաղբակյան - 69, 79:
Վասակ, որդի Գրիգոր-Համամի - 59:
Վասակ, որդի Հասանի, եղբայր Վախտանգի - 71, 72:

Վարանդյան Միքայել - 196- 199:
Վարդան, հայրապետ Գանձասարի - 99:
Վարդան Մամիկոնյան, Մեծ Հայքի սպարապետ - 15, 29:
Վարդան, Նոր Գետիկի վանահայր - 72:
Վարդան Վարդապետ Արեւելցի - 62, 73, 78, 80, 85, 87, 89, 95, 105, 109:
Վարդան (Սարգիս Մեհրաբյան) - 197:
Վեզիրով - 289, 292, 294, 295, 304, 306, 310:
Վեյսալ բեկ - 240:
Վելիջան, որդի Սայտունի - 119, 120, 124:
Վերդյան Ա. - 230:
Վիրո, կաթողիկոս Աղվանքի - 49, 52:
Վոլսկի Ա. Ի. - 291, 297, 298, 300, 302, 303:
Վոյցեխովսկի - 235:
Վորոնցով-Դաշկով - 194:
Վոսս Ա. - 293, 295:
Վրացյան Սիմոն - 217:

Տակայշվիլի - 198:
Տարսայիճ Օրբելյան - 91, 120:
Տեր-Աստվածատրյան Մարկոս - 205:
Տեր-Ավետիք, տե՛ս Ավետիք:
Տեր-Բարսեղյան - 183:
Տեր-Գրիգորյան, բժիշկ - 229:
Տեր-Գրիգորյան Վահան, եպիսկոպոս- 216:
Տերտերյան Համբարձում - 231, 236:
Տեր-Իսրայել - 108:
Տեր-Մովսիսյան Մեսրոպ - 193:
Տեր-Սարգսյան Միրզա - 201:
Տիգրան Բ (Մեծ), Մեծ Հայքի թագավոր - 15:
Տիգրանյան Սիրական - 210:
Տիրածայր - 88:
Տողուս խաթուն - 87, 91:
Տրդատ Գ - 25:

Ռաֆֆի - 133, 151:

Ցիցիանով (Ցիցիշվիլի) - 172-174:

Ուզի որդի Հասան - 102:
Ուլյանով Միխ. - 315:
Ուլուբաբյան Բ. - 260-262, 267:
Ուլուբեկ, որդի Սայտունի - 131:
Ուլուբեկ, տեր Վերին Խաչենի - 126:
Ումեկ, Հասան-Ջալալի փեսան, Մամա խաթունի ամուսինը - 91:

Փանահ, խան Շուշիի - 152, 154, 181:
Փավստոս Բուզանդ - 15, 25-27, 35, 52:
Փափազյան Վրթանես - 193:
Փեչեւի-Իբրահիմ - 125:
Փիլիպպե, թագավոր Փառիսոսի - 60:
Փիլիպպոս, իշխան Սյունյաց - 46:
Փիրումյան Դանիել-բեկ - 202:
Փիրումյան Պողոս-բեկ - 202:
Փիրումյան Սիմոնիկ - 232, 233:
Փրեյդուն, մելիք - 169, 171:

Քաթանյան Ռուբեն - 232:
Քամալբեկ, որդի Շահնազար Ա-ի - 132:
Քամալյան Արշավիր - 205, 220, 229:
Քաջազնունի Հովհաննես - 203:
Քյազիմ փաշա - 208, 228·
Քյոխվա Ջալաբի - 144:
Քոչարյան Ռոբերտ - 337:
Քոչարյան Սուրեն - 260:
Քոչինյան Ա. Ե. - 263, 264:
Քրիստոս - 23, 26, 49, 73, 98, 339:

Քուշնարյովա-Քուշնարյան Կ. - 18:
Քուրդ, ամիր - 111:
Քուրդ Արծրունի - 70:
Քուրդ Վաչուտյան - 102, 104:

Օհանջանյան Համո - 231:
Օհանջայան Մ. - 261:
Օշին, թագավոր Հայկական Կիլիկիա-յի - 61:
Օսիպով Վ. - 278:
Օսման Յուզդեմիր - 123:
Օվյան Վ. - 271:
Օվչյան Բենիկ - 274:
Օրախելաշվիլի - 243:
Օրի, տե՛ս Իսրայել Օրի.
Օրիբեկ, որդի Շահնազար Ա-ի - 132:
Օրջոնիկիձե Ս. - 231, 238-241, 243, 246, 248:
Օրուջեւ Թ. - 292, 295:

Ֆաթալի խան - 162, 163:
Ֆիգատներ - 243:
Ֆյոդորով Սվյատոսլավ - 322:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազ - 88:
Ագուլեցոց եկեղեցի Շուշիում - 184:
Ագուլիս - 184:
Ադախ - 65:
Ադրբեջան - 185, 204, 206, 208-216, 218, 220, 221, 223-227, 230-233, 235-249, 252, 254, 256, 260, 263, 266-268, 271, 272, 274-276, 278, 279, 281, 307, 309, 312, 316-318,320, 323, 324, 326- 331,333, 334, 336, 341, 343,346, 348, 350:
Ազատ, գյուղ հյուս. Արցախում - 228:
Ազոխի քարանձավ - 17:
Ալբանիա, տե՛ս բուն Աղվանք:
Ալիարակ լեռ շրջականներով, հյուս. Արցախում - 65, 235, 251:
Ախալցխա - 167:
Ականա, բերդավան - 89, 103, 120, 122:
Աղավնո գետ, տե՛ս Հագարի:
Աղդամ, քաղաք - 11, 153, 198, 202, 206, 207, 211, 223, 227, 228, 254, 255, 263, 265, 281, 293, 305, 336, 340, 343, 345, 347, 348,350:
Աղդամի շրջան - 57, 89:
Աղբուլաղ - 345, 347:
Աղթամարի վանք - 106, 130:
Աղկալա - 92, 253:
Աղվանք, բուն - 14, 25, 27, 28, 33, 36, 42, 50, 51, 53, 57, 100, 138:
Աղվանք հայկական - 7, 50, 56, 64, 77, 78, 89, 94:
Աղվանից մարզպանություն - 29:
Աղվեն, ամառանոց Առանշահիկների -33, 34, 71:
Ամարասի վանք - 10, 15, 25, 26, 31, 43, 48, 89, 90, 153, 188, 189:
Ամենափրկիչ, տաճար Սանահինում - 111:
Ամենափրկիչ, վանք Շուշիում - 269:
Ամիրանլար - 347:
ԱՄՆ - 297, 310, 315:
Այսրկովկաս - 23, 26, 42, 66, 70, 78, 79, 93, 96, 114, 137, 139, 140, 142, 148, 149, 157-159, 163-165, 168, 169, 171, 174, 176, 180, 184, 196, 203, 208, 210, 214, 217, 238, 323, 326:
Այտրն - 19:
Անգեղակոթ - 136:
Անի - 67, 104, 106:
Անգլիա - 17:
Աշմանա - 120:
Աշտիշատ - 33:
Ապարան - 88:
Աջեմ, տե՛ս Պարսկաստան:
Առան, հայկական Աղվանքը - 16, 65, 88:
Առաջաձոր - 348:
Առաքյուլ - 219:
Ասիա - 12:
Ասկերան, ավան - 273, 282, 341, 344, 345, 348:
Ասկերանի բերդ - 198, 211, 227:
Ասկերանի շրջան - 10, 18, 119, 341:
Ասկիփարա - 321:
Ասորիք - 102:
Աստվածածին եկեղեցի, Վերին Խաչենում - 103, 109, 112, 119:
Աստրախան - 85, 138, 142, 165, 169:
Ավարայր - 29, 36, 165:
Ավդալ - 199:
Ավդալլար - 207:
Ավետարանոց - 132, 133, 141, 151, 233:
Արաբիա - 41, 46, 70:
Արագածոտն գավառ - 102, 104:
Արանզամին - 347:
Արարատյան աշխարհ - 127, 128, 132, 148, 150, 169, 176:
Արարատյան դաշտ - 202, 237:

Արարատյան թագավորություն - 12, 13, 18, 128:
Արաքս - 9, 10, 14, 16, 36, 51, 92, 133, 169, 176, 178, 350:
Արեւելից կողմանք - 7, 23-25, 33, 39, 40, 49, 52, 61, 78, 91, 92, 97, 100, 107, 117:
Արեւելյան Հայաստան - 36, 94:
Արեւելք, տե՛ս Արեւելից կողմանք:
Արեւմտահայաստան - 202:
Արդաբիլ - 46:
Արդախ-Ադախ, ամառանոց - 58:
Արեշ - 228:
Արթիկ - 171:
Արծափ, բերդ - 41:
Արկուկ, երկիր - 13:
Արձախ, տե՛ս Արցախ:
Արմավիր - 228:
Ատրպատական - 25, 38, 49, 60, 65, 68, 78, 79, 142, 148:
Արմենիա, խալիֆայությանը ենթակա կուսակալություն - 42, 48:
Արտազ, գավառ - 23:
Արցախ - Համարյա բոլոր էջերում:
Արցախյան լեռնաշղթա - 9, 11, 60, 132:
Ափշերոն - 335:
Աֆղանստան - 303:

Բազել - 186:
Բաթում - 202, 214, 237:
Բալախանի, Բաքվի արվարձան -197:
Բալկաններ - 208:
Բալուջա, գետ - 252:
Բաղանիք արքունականք - 11:
Բաղասական, գավառ բուն Աղվանքում - 36:
Բաղաց կապան - 62, 65:
Բաղդադ - 43, 46, 102:
Բաղք, գավառ Սյունիքում - 46, 47, 63, 76:
Բայազետ - 146:
Բայաթ - 152:
Բայլական - 78, 89:
Բանաձոր, գյուղ Դիզակում - 183:
Բասարգեչար - 171:
Բարգուշատ - 35:
Բարդայի շրջան - 253, 281:
Բաքու, Բագու - 17, 19, 144, 174, 196, 197, 204, 207, 210, 214, 216, 220, 226, 230, 232, 233, 236, 238, 240, 242, 253, 255, 258, 260, 261, 265, 272, 283, 284, 286, 292, 294, 297, 299, 303, 304, 306-309, 311, 312, 327-329, 331,335, 349, 350:
Բելոռուսիա - 347:
Բեղամեջ - 78:
Բեռլին - 309:
Բերդակուր, ավան - 10:
Բերդաձոր, գավառ Արցախի - 10, 11, 88, 343:
Բերդաձոր, գյուղ - 250, 342, 344:
Բերդաշեն, գյուղ Մարտունու շրջանում - 270, 332:
Բերդաքար, տե՛ս Շոշի-Շուշի բերդ:
Բերդկունք - 92:
Բիաինական, տե՛ս Վանի (Վան-Բիաին):
Բինյաթլու - 219:
Բյուզանդիա, Բյուզանդական կայսրություն - 27, 28, 31, 47, 55, 62:
Բորչալու - 171:
Բռի եղցի - 108:
Բուզլուխ - 341:

Գագ, բերդ - 80:
Գայանյան դպրոց - 190:
Գանձակ - 60, 61, 63, 66, 72, 78, 79, 89, 133, 138, 142, 144, 147, 149, 150, 154, 155, 165-167, 171, 173, 176, 187, 197, 204,225, 228, 231, 251, 307, 308, 331, 335:
Գանձասարի վանք - 13, 48, 58, 59, 66, 76, 77, 87, 88, 90, 91, 99, 100, 106-109, 115, 117-120, 125, 126, 133-135, 138, 144, 145, 155-157,

164-166, 181, 187, 188, 269, 349:
Գանջա, տե՛ս Գանձակ:
Գարդման բերդ - 39:
Գարդմանք գավառ -46, 57, 60:
Գեղամա գավառ - 122, 131, 132:
Գեղամա լեռներ - 115:
Գեղարքունիք, գավառ - 47, 78, 98, 113, 144, 149:
Գեորգիեւսկ, բերդ - 157:
ԳԴՀ - 309:
Գետամեջ - 119:
Գետամիջի վանք - 122:
Գերանբոյի շրջան - 325:
Գերմանիա - 198:
Գետավան - 178:
Գետաշեն, ավան - 64, 251, 321, 322:
Գետաշենի ենթաշրջան, հին Մեծ կողմանքի հյուսիսային մասը -10, 205, 228, 235, 310, 312 316-321, 323:
Գիլան - 144:
Գիլափլու - 199:
Գիս, ավան - 23:
Գյուլաթաղ - 346:
«Գյավուր արխ» - 93:
Գյոյ գյոլ - 64:
Գյուլիստան, բերդ - 10, 141, 167, 170:
Գյուլիստան, գավառ - 11, 133, 145, 146, 151, 152, 154, 155, 157, 169, 170, 175, 176, 205, 227-230, 232, 235, 251, 344:
Գյուտական, ավան Մեծառանքում - 10, 31:
Գլխովանք - 10, 24:
Գյումրի - 18, 102:
Գորոզու բերդ, Գորոզ - 10, 44, 45, 55, 134, 141:
Գոշավանք - 84:
Գորիս, քաղաք - 206-210, 215, 216, 228, 229, 231, 244-247:
Գորիսի գավառ, շրջան - 199, 308, 320:
Գտիչ բերդ - 43-45, 134, 141, 208:
Գտիչ վանք, Գտչավանք - 10, 106, 108, 269:
Գուգարաց աշխարհ - 170:
ԳՖՀ - 17, 309:

Դադի վանք - 10, 27, 49, 65, 69, 71-73, 94, 99, 100, 103-105, 108, 109, 112, 122, 126, 188:
Դադոյի վանք, տե՛ս Դադի վանք:
Դաղստան - 139, 150, 167, 171:
Դահրավ - 207, 347:
Դաշբուլաղ, տե՛ս Քարաղբյուր:
Դաշտային Ղարաբաղ - 213, 251:
Դարպանտ, տե՛ս Դերբենդ:
Դաշքենդ, գյուղ Վերին Խաչենում - 103:
Դաշուշեն - 217:
Դարահոջ, գյուղ - 31:
Դեդ, բերդ Խաչենում - 83:
Դերբենդ - 23, 78, 142, 144, 158, 162, 176:
Դիզակ գավառ - 208, 210, 217, 219, 227, 228-230, 235, 250, 251:
Դիզակի մելիքություն - 133, 134, 141, 149, 151, 152, 154, 166, 170, 176, 179, 183:
Դիզափայտ, սար - 11, 31, 132:
Դիլիջան - 19:
Դոլանլար - 219:
Դվին - 37, 39, 41, 42, 92:
Դող, գյուղ Դիզակի գավառում - 43, 134, 141, 166:

ԵԱՀԽ - 350:
Ելիզավետպոլ - 177:
Եկատերինոգրադ - 170:
Եղիշ Առաքյալի վանք - 35, 48, 102, 269:
Եղվարդ - 150:
Եվլախ - 202, 209, 210, 228, 242, 246, 336:

Եվրոխորհրդարան - 322:
Եվրոպա - 12, 312:
Երասխ, տե՛ս Արաքս:
Երզնկա - 82, 150:
Երեւան - 19, 41, 125, 146, 148, 168, 177, 178, 194, 202, 217, 219, 228, 229, 242, 267, 272, 273, 279, 281, 282, 299, 306, 310, 313, 320, 331, 334, 345:
Երեւանի նահանգ - 176, 180:
Երիցմանկունք, վանք - 133:
«Երկրորդ Երուսաղեմ», վանք Սյունիքում - 35:
Երուսաղեմ - 23, 109:
Եփրատ, գետ - 25:

Զաբուղ - 210, 211, 222, 228, 344:
Զաբուղի ձոր - 227, 250:
Զաղալու, տե՛ս Ծովակ:
Զանգան, քաղաք Ատրպատականում - 65:
Զանգեզուր - 19, 128, 129, 155, 176, 203, 206, 210, 213-216, 221, 222, 226-228, 230, 232, 233, 235, 237, 239-241, 248- 250:
Զանգելան - 250, 349, 350:
Զարդախաչ - 346:
Զարդանաշեն, տե՛ս Վերին Թաղավարդ:
Զեգամ - 24:
Զելենոգրադ - 285:
Զերգունի դաշտ - 24:
Զմյուռնիա - 19:
Զոդ, տե՛ս Սոդք:

Էոտեմիշ, բնակավայր - 19:
Էջմիածին - 106, 130, 148-150, 157, 181, 185, 186, 188, 189, 191, 202, 316:
Էրզրում - 167, 202:
Էրքեջ - 341:

Թագավորանիստ, Հադրութի շրջանում - 58:
Թալիշ, գյուղ - 24, 187, 251, 341:
Թալիշի մելիքություն, տե՛ս Գյուլիստանի մելիքություն:
Թաղավարդ, գյուղ Վարանդայում -92, 229, 233:
Թավրիզ - 19, 86, 148, 178:
Թարթառ, ավան - 223, 235:
Թարթառ գետ - 10, 11, 18, 56, 66, 89, 92, 109, 118, 133, 141, 145, 252-255:
Թարթառի հովիտ - 24, 27, 55, 64, 89, 178, 188:
Թբիլիսի, տե՛ս Թիֆլիս:
Թեզխարաբ - 210:
Թել Ավիվ - 304:
Թեհրան - 178:
Թեմական դպրոց Շուշիի - 185, 191-194, 197, 204, 207, 211:
Թեյշեբա աստծո անունով քաղաք-13:
Թիֆլիս - 130, 160, 168, 177, 183, 186, 187, 190, 191, 202, 203, 214, 217-219, 224, 230, 232, 233, 242, 246:
Թրղի, Թարթառի վտակ - 10, 133:
Թուրքիա, տե՛ս Օսմանյան Թուրքիա:
Թուրքմենստան - 19:
Թուրքմենչայ - 178:

Ժդանովի շրջան - 263:
Ժելեզնովոդսկ - 331, 332:

Իբերիա (հին Վրաստան) - 14:
Իգակ, գետակ - 11, 252:
Իգիրմիդորդ, տե՛ս Գյուլիստան:
Իմերեթ-Քերավանդ - 293, 346:
Իմիշլի - 265:
Ինջա, գետակ - 11:
Իշխանագետ - 11, 252:
Իջեւան - 320, 345:
Իսթիսու, տե՛ս Ջերմուկ:

Իտալիա - 17:
Իրան - 40, 122, 305, 350:

Լազարյան ճեմարան Մոսկվայի -186:
Լաչին, ավան - 209, 338, 340, 343, 344, 346:
Լաչինի միջանցք - 348, 349:
Լաչինի շրջան - 199, 227, 250, 347, 348:
Լեհաստան - 233:
Լենինական - 296:
Լենքորան - 187:
Լեռնային Ղարաբաղ - 213, 239, 240, 244, 245, 248, 251, 254, 256- 263, 266, 268, 277-179, 282, 284, 286, 288, 290, 291, 294, 299, 302, 303, 306, 307, 310, 314-316, 323, 327, 331, 339:
Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն - 329, 330, 333, 334, 337, 338, 343, 345, 346, 348:
Լիլանա, թաղ Թավրիզում - 19:
Լիսագոր - 343, 344:
Լոռի - 129, 133, 171, 176, 177:
Լուլիդուզ - 348:
Լուսավորչի սար - 25:
Լփնաց աշխարհ, Լփնիք, գավառ բուն Աղվանքում - 36:

Խադավանք, տե՛ս Խաթրավանք:
Խաթրավանք - 10, 27, 74, 75, 100-102, 104, 105, 111, 122:
Խամսա - 132, 133, 138, 149, 151, 152, 154, 155, 156, 204:
Խանաբադ - 281:
Խանի բաղ - 174:
Խանքենդի - 185, 191, 211, 217, 221, 223, 251, 332:
Խանդամիրյանի թատրոն - 186:
Խանձաձոր - 210:
Խանլարի շրջան - 306, 317, 336:
Խաչեն գավառ - 7, 55, 56, 58-60, 63, 64-66, 70-77, 81, 85, 87-89, 91, 94, 97, 100, 107, 109, 111, 112, 114, 115, 117, 120, 121, 125, 134, 139, 151, 152, 170, 175, 222, 228-230, 235:
Խաչեն բերդ - 40, 71:
Խաչենագետ - 11, 18, 55, 133, 141, 252, 253:
Խաչենի մելիքություն - 133:
Խատրն - 321:
Խերմլու - 321:
Խերսոն - 157:
Խծաբերդ - 210, 233, 236:
Խնածախ - 207:
Խնձորաբակի այգի - 74:
Խնձորեսկ - 347:
Խոյ - 162:
Խոխանաբերդ, բերդ Խաչենում - 55, 66, 69, 80, 83, 87, 133:
Խոնաշեն, գետակ - 11:
Խորանաշատ, վանք - 99:
Խորհրդային Հայաստան - 240-242, 244, 247, 256-260, 279, 280:
Խորհրդային Միություն - 252, 254, 271, 272, 279, 287, 296, 300, 323, 326:
Խոջալու - 18, 292- 294, 341-343:
Խոջավանդ - 293:
Խորասան - 79:
Խրամ, Կուր-Քուռ գետի վտակ - 14:
Խրամ, ավան - 41:
Խրամորթ - 207, 228, 281, 341, 347:
Խութավանք, տե՛ս Դադի վանք:
Խունան, դաշտ - 78:

Ծավդ-Ծոդ-Զոդ ավան - 9, 16:
Ծավդեք, Ծավդեից աշխարհ - 7, 9, 25:
Ծար, գավառ - 59, 60, 66- 70, 74, 75, 87, 89, 91, 92, 94, 98, 102, 103, 110, 112, 114, 115, 118, 119, 121, 122, 126, 129, 131, 132:

Ծար, գյուղ, ավան - 120:
Ծիրանաքար - 83:
Ծմակահող - 77:
Ծովակ, գյուղ - 12:
Ծովատեղ, գյուղ Վարանդայում - 141:
Ծովատեղ, վայր Խաչենում - 103:
Ծովինար, գյուղ - 13:

Կաթողիկոսի քար - 64:
Կալա դարասի, տե՛ս Բերդաձոր:
Կալկաթա - 177:
Կաղանկատույք - 92:
Կաղարծի, գյուղ - 183:
Կամբեճան - 52, 56, 57:
Կայեն, գավառ Ուտիքում - 70:
Կայենո-Կայանո ձոր - 130:
Կանանց ժամ - 184:
Կաչաղակաբերդ, ամրոց Խաչենում - 55, 133, 141:
Կապան - 19, 144, 234, 320, 345:
Կապադովկիա - 101:
Կապույտ լիճ, տե՛ս Գյոյ-գյոլ:
Կասպիական մարզ - 180:
Կասպից ծով - 19, 128, 142, 143, 157, 159, 184:
Կարա-Կորում - 86, 90:
Կարմիր վանք - 94:
Կարկառ, բերդավան - 89, 92, 133, 305:
Կարկառ, գետ - 10, 11, 92, 154, 252-254:
Կարկառի ձոր - 228:
Կարին -19, 42, 81, 101, 102, 150:
Կարմիր եղցի, Հադրութի շրջանում - 58:
Կարապետանց քար - 64:
Կարյագինո - 208, 254:
Կենտրոն - 318, 320:
Կեչառիս - 77, 92, 100, 107:
Կեսարիա - 81, 82:
Կիլան, տե՛ս Գիլան:
Կիլիկիա - 61, 82, 100, 102, 115, 127:
Կիլիկյան Հայկական թագավորություն - 109:
Կիչան - 344, 345, 348:
Կիրովաբաղ - 19, 253, 283, 294:
Կիրովական - 296:
Կիրովոգրաղ - 285:
Կղարջք - 67:
Կոգովիտ, գավառ - 41:
Կոլխիդա - 14:
Կոշիկ անապատ - 108:
Կոռնիձոր - 250, 321, 347:
Կովկաս - 19, 39, 86, 95, 96, 136, 140, 159, 160, 165, 182, 194, 200, 202, 212, 218:
Կովկասյան լ-շղթա - 27, 38, 43, 148, 159, 163, 169:
Կ-Պոլիս - 142, 148:
Կրասնոյարսկ - 305:
Կրեմլ - 315:
Կրկժան - 217, 292, 293, 339:
Կուբաթլիի շրջան - 10, 349:
Կուսապատ - 346, 350:
Կուր-Քուռ, գետ - 13, 14, 16, 23, 27, 29, 36, 51, 56, 78, 128, 141, 152, 169, 173, 253, 254:
Կուրակ, գետակ հյուս. Արցախում-10, 11, 133, 173, 176:

Հաբանդ, գավառ Արցախում - 25, 89:
Հաբանդ, Սյունիքի գավառ - 10:
Հագարի գետ - 9, 51, 231:
Հադրութ, ավան - 185, 208,250, 273, 336, 341, 344:
Հադրութի շրջան - 10, 11, 17,18, 43, 58, 59, 106, 270, 332, 338, 349:
Հաթերք - 65, 66, 69, 71, 74, 75, 87, 92, 94, 106, 109, 117, 118, 122, 346:
Հակոբա վանք, Մեծառանք գավառում - 56, 84, 88, 108, 117-119, 136, 187:
Հակուդենա մատաղիս (մատաղ այգի) - 74:

Հաղարծինի վանք - 69:
Հաղբատ -62, 73, 74, 77, 100, 102, 104, 106, 110-112, 188:
Հայաստան - 14, 28, 29, 37-41, 43, 46-50, 53, 55, 57, 59, 61-63, 65-71, 75, 76, 81, 82, 85, 95-97, 100-103, 105, 106, 114, 117, 120, 128-130, 134, 137, 141, 143, 145, 147-149, 154, 163, 164, 168, 170, 171, 180-182, 184, 194, 216, 221, 227, 248, 249, 252, 255, 257, 258, 262-264, 266-273, 275, 278, 281, 282, 285, 288, 290-294, 296-298, 300-304, 306-308, 312, 316, 317, 320, 323-327, 330-331, 334, 335, 338, 345, 346, 350:
Հայաստանի Հանրապետություն-205, 210, 213, 215, 217, 219, 222, 227-234, 238, 239, 250, 317, 318, 325, 328, 340:
Հայի բազար - 348:
Հանդաբերդ, ամրոց Վերին Խաչենում - 56, 66, 71, 98, 103, 120, 122:
Հայկական բարձրավանդակ - 122, 127, 128:
Հայկական մարզ - 180:
Հայոց երկիր, տե՛ս Հայաստան:
Հայ-Պարիս - 317:
Հաջի-սամլու - 227:
Հավքախաղաց, բերդ Խաչենում - 55, 56, 71, 80, 141:
Հարավային Ադրբեջան - 305:
Հարավային Ամերիկա - 344:
Հարությունագոմեր - 348:
Հերհեր, գյուղ Վարանդայում - 141:
Հյուսիսային Կովկաս - 19, 26, 38, 93, 156, 164:
Հնարակերտ, ամրոց - 36, 51:
Հնդկաստան - 163:
Հոմենք, վայր - 24:
Հռիփսիմեի տաճար Էջմիածնում -106:
Հռոմկլա - 102:
Հունաստան - 27, 59:
Հուռեկա վանք, տե՛ս Ուռեկա վանք:

Ղազախ - 170, 171, 238:
Ղազախստան - 331, 347:
Ղազանչի, ավան Նուխի գավառում - 184:
Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցի - 184, 185,293:
Ղազվին - 87:
Ղայբալիշեն - 216, 217, 343:
Ղաջար - 348:
Ղարաբաղ - 7, 8, 140, 146, 152, 153, 156-160, 165-170, 172-174, 176, 178-182, 184, 187, 201, 203-207, 209-214, 216-219, 222, 224, 229-232, 234-237, 241-243, 246, 247, 252, 256, 264, 266, 267, 275, 283, 283, 286, 289, 292, 294-298, 300, 301, 304, 339, 341:
Ղարաբաղի դաշտ - 115:
Ղարաբաղյան լեռնաշղթա, տե՛ս Արցախյան լեռնաշղթա:
Ղարադաղ - 19:
Ղարադաղլու - 293, 337:
Ղարաղշլաղ - 210:
Ղարաջանլի - 348:
Ղարաքիլիսա Փոքրիկ - 176:
Ղափան, տե՛ս Կապան:
Ղզլար - 169:
Ղոզլու - 348:
Ղոչազ, գյուղ Լաչինի շրջանում -348:
Ղրիմ - 167:
Ղուշչի-Արմավիր - 318:
Ղուշչիլար - 337, 341:

Զորագետ - 57, 60:
Զորին ջաղաց, Ծարում - 103:

Ճալին հող, Ծարում - 103:
Ճաքի այգի - 94:
Ճարտար - 210, 270, 271, 346:

Մազանդարան - 142:

Մազումլու - 321:
Մազքթաց աշխարհ - 23, 25, 36:
Մալիբեկլի - 198, 293, 294, 341:
ՄԱԿ - 322:
Մակարավանք - 74:
Մահկանաբերդ - 70:
Մանաշեն - 228:
Մանասբեկ - 228:
Մաճկալաշեն - 210:
Մաշտոցյան մատենադարան - 74, 102, 121:
Մասիս - 178:
Մասիսի շրջան - 258:
Մարգուշեւան - 223:
Մարզիլլի - 348:
Մարոկկո - 17:
Մարտակերտ, ավանքաղաք - 185, 223, 252, 321, 345, 348:
Մարտակերտի դաշտ - 10, 263, 264:
Մարտակերտի շրջան - 10, 11, 24, 31, 35, 118, 230, 253, 254, 270, 332, 341, 346-349:
Մատաղիս - 74, 252, 253:
Մարաղա - 178:
Մարիամյան դպրոց Շու շիի - 191:
Մարտունի քաղաք - 337, 339, 341, 347-349:
Մարտունաշեն - 317-319, 321, 323:
Մարտունու շրջան - 18, 89, 270, 273, 332, 346, 349:
Մաքենյաց, Մաքենոցաց վանք - 47:
Մեծ Առանք-Մեծառանք - 10, 11, 37, 56, 84, 88, 117, 118, 136:
Մեծկողմանք - 10, 11, 24, 102:
Մեծկվենք, տե՛ս Մեծկողմանք:
Մեծ Հայք - 9, 14, 19, 25, 28, 52, 135, 136:
Մեծ Մազրա - 57, 126, 132:
Մեծ Սղնախ - 141:
Մեծ Քիրս, տե՛ս Քիրս:
Մեղրագետ, գետակ - 11, 18:
Մեղրի - 184:
Մեղրեցոց եկեղեցի - 184:
Մեհմանա, գյուղ, հին Պղնձահանք - 92, 346:
Մեհտիշեն - 342:
Մերձավոր Արեւելք - 83, 172, 208:
Միափոր, գյուղ - 130:
Մինգեչաուր - 253-255, 257:
Միջագետք - 102:
Միջերկրական, ծով - 143:
Միջին Ասիա - 128:
Միջնարցախ - 60, 70:
Մինքենդ - 199, 200:
Միր Բաշիր, ավան - 348:
Միր Բաշիրի շրջան - 253, 255, 345:
Մյուս Հաբանդ - 10, 11:
Մյուրիշեն - 199:
Մոժար - 170:
Մոխրաթաղ - 346:
Մոկաց աշխարհ - 43:
Մոնղոլիա - 86:
Մոսկվա - 13, 135, 138, 159, 186, 194, 231-233, 248, 260, 264, 266, 272- 275, 279, 292, 293, 296, 299, 300, 306, 313, 315, 316, 320, 322, 328, 329, 332, 341, 344, 346:
Մռավ սար - 11, 92:
Մսմնա - 208, 227:
Մուժումբար, գյուղ - 19:
Մուխանք գավառ եւ դաշտ - 9-12, 43, 51, 78, 79, 82, 89, 92, 93, 115, 132, 139, 148:
Մուղան, տե՛ս Մուխանք:
Մուղանլու - 347:
Մուֆարկին, տե՛ս Տիգրանակերտ:

Նաբիլար - 343:
Նալչիկ - 242:
Նախիջեւան - 41, 125, 151, 176, 178, 180, 221, 226, 227, 232, 236, 239-241, 258, 287, 294, 305, 350:
Նախիջեւանիկ, գյուղ Վարանդայում - 202, 207, 345, 347:
Նարեշտար - 345:
Ներսիսյան դպրոց Թիֆլիսի - 186, 194:

Ներսմիհրի վանք, տե՛ս Գլխովանք:
Ներքին Խաչեն, գավառ - 10, 60, 69, 71, 75, 84, 87, 90, 92, 106, 115-118, 120, 121:
Ներքին Ղարաբաղ - 250, 251:
Նոյեմբերյան - 320, 321:
Նորագյուղ - 341:
Նորատիս-Նորատիք - 74:
Նոր Գետիկ - 72:
Նորշեն - 228, 264:
Նուխի - 184, 187, 228, 254, 283, 294:

Շահապիվան - 33:
Շահբուլաղ, տե՛ս Տիգրանակերտ:
Շահումյան, ավան - 10, 321:
Շահումյանի շրջան - 10, 11, 306, 310, 312, 317, 318, 320, 323, 325, 329, 333, 341, 344, 345:
Շամախի - 19, 138, 180:
Շամշադին - 19, 171, 176:
Շամքոր, ավան - 78, 150, 177, 202, 228:
Շամքոր, գետակ - 10:
Շամքորի շրջան - 336:
Շաքի - 57, 146, 182, 184, 187, 254:
Շիկաքար, բերդ - 43:
Շիրակ - 150, 171, 176, 177, 296, 297:
Շիրվան - 139, 142, 182:
Շողգահ - 103, 120, 122:
Շողվագ, տե՛ս Շողգահ:
Շոշ գյուղ - 141, 217, 219, 223, 337, 349:
Շորագյալ - 176:
Շռլան - 337, 348:
Շվեդիա - 168:
Շվեյցարիա - 186:
Շոշի-Շուշի, բերդամրոց, քաղաք - 43, 134, 141, 145, 152-155, 158, 160-62, 165-170, 173, 174, 176-178, 181-185, 187-192, 194-197, 199-203, 205, 207-211,214-219, 223-225, 228-230, 232, 243, 249, 251, 257, 263-265, 270, 276, 281, 292, 294, 299, 335, 337-341, 343, 344:
Շուշիի-Շուշվա շրջան - 10, 261, 317:
Շուշիի խանություն - 153:

Ոսկեպար - 321:
Որոտնավանք, Սյունիքում - 61:

Չայլու, տե՛ս Գետավան:
Չանախչի, տե՛ս Ավետարանոց:
Չարաբերդ, տե՛ս Ջրաբերդ:
Չարեք - 89:
Չարեքտար - 94, 118:
Չափար, գյուղ - 10, 332, 346:
Չլդրան - 348:
Չկալովի փ. (Ստեփանակերտում) -341:
Չման-կատուկ - 82:
Չոլակ, գյուղ - 142:
Չող, հետագայի Դերբենդ - 23:
Չողա երկիր - 25:

Պարզկանք, գավառ Արցախի - 10, 11:
Պարսից երկիր, տե՛ս Պարսկաստան:
Պարսկաստան - 9, 11, 27, 29, 34-36, 39, 59, 64, 65, 79, 93, 100, 122, 125, 132, 133, 135, 137, 138, 140, 150, 152, 156, 158, 168-170, 174-176, 178, 179, 236:
Պարտավ - 39, 40, 43, 57, 78, 92:
Պաքու, տե՛ս Բաքու:
Պետերբուրգ - 157, 159, 169, 170, 175, 194, 198:
Պետրոգրադ, տե՛ս Պետերբուրգ:
Պիանք, գավառ Արցախի - 10, 11:
Պարսկանք-Պարսականք, տե՛ս Պարզկանք:
Պետրոսաշեն - 210:
Պողոսագոմեր - 348:
Պորտուր, բնակավայր - 19:

Ջաբրայիլ - 214, 227, 235, 254, 350:
Ջամիլլու - 217, 337:
Ջանհասան - 337, 343:
Ջանյաթաղ - 346:
Ջերմուկ, քաղաք - 10:
Ջերմուկք, Ջերմուկ (Թարթառի հովտում) - 11, 56:
Ջիվանշիր - 214:
Ջոլբեկանց, վայր Խաչենում - 103:
Ջրաբերդ - 10, 55, 89, 102, 139, 141, 145, 170, 222, 223, 228:
Ջրաբերդի գավառ, մելիքություն - 133, 151, 152, 154, 155, 157, 175, 178, 229, 230, 235, 251:
Ջրվշտիկ, տե՛ս Գլխովանք:
Ջուխտ Պառավաձառ - 59:

Ռեալական դպրոց Շուշիի - 185, 192, 193, 198, 207:
Ռուսաստան - 19, 135-138, 140, 142, 143, 145-148, 155, 156, 158, 163, 167-172, 175-182, 185, 194, 203, 217, 230-233, 238, 240, 286, 305, 315, 325, 328, 331, 337, 347, 350:
Ռուսիա-Ռուսաց երկիր, տե՛ս Ռուսաստան:

Սաբունչի, Բաքվի թաղամաս - 307:
Սանահին - 100, 102, 110-112:
Սասուն - 43, 44, 127:
Սարդարապատ - 192, 202, 206:
Սարիսու - 318:
Սարսանգ - 254, 346, 347:
Սեյտիշեն - 119:
Սեւան, Սեւանա լիճ - 11-13, 18, 19, 43, 47, 80, 92, 102, 202,350:
Սեւ ծով - 157, 167:
Սեւջուր, գետակ - 11:
Սիմբիրսկյան գունդ - 202:
Սիսական, նահանգ - 16, 92:
Սիսաջան, տե՛ս Սիսական:
Սիսիան - 136, 144:
Սղնախ, բերդավան - 141, 217:
Սյունիք-Մեծ Սյունիք, Սյունյաց երկիր - 9, 10, 19, 38, 35, 46, 61, 62, 65, 91, 112, 128, 138-140, 149, 250:
Սոդք, գավառ - 10, 92, 103, 120, 122, 131, 132, 149:
Սոս - 210, 260, 273:
Սորբոնի համալսարան - 106:
Սոֆուլու գյուղ - 57:
Սպահան - 135:
Սպեր - 67:
Սպիտակ - 296:
Ստեփանակերտ - 18, 58, 251, 253-255, 260, 265, 266, 269, 273, 276, 278, 279, 281, 291-295, 299, 305, 306, 310, 313, 321, 329, 331-341, 343-348:
Ստեփանավան - 296:
Սրխավենդ - 293, 345:
Սուլակ - 228:
Սուրբ խաչ տաճար, Դադի վանքում - 105, 109:
Սումգայիթ - 253, 283, 284-288, 289, 295, 297-298,308, 309, 341:

Վաճառ, ավան Ներքին Խաչենում-77, 92, 107:
Վաղարշապատ - 27, 65:
Վաղուհաս - 94, 108, 345, 348:
Վայկունիք - 10, 11, 89:
Վայոց ձոր - 46, 69, 137:
Վայունիք - 56:
Վան, քաղաք - 13, 202:
Վանա ձոր - 18:
Վանք, գյուղ Խաչենում - 187, 348:
Վարագա վանք - 95:
Վարազաբույն - 207, 227:
Վարանդա - 59, 130, 133, 139, 143, 149, 169, 170, 175, 195, 199, 202, 208, 210, 217, 228-230, 235, 251:
Վարարակն, գյուղ Ստեփանակերտի տեղում - 251:

Վարդանաթաղ - 118:
Վարդենիսի շրջան - 57, 258:
Վարդուտ, տե՛ս Գյուլիստան:
Վասպուրական, նահանգ - 23, 42, 43, 44, 127:
Վատնյա դաշտ - 26:
Վեդիի շրջան - 258:
Վենետիկ - 62, 138:
Վերին Թաղավարդ - 59, 183, 195:
Վերիշեն - 344:
Վերին Խաչեն - 59, 60, 69-71, 74, 75, 87, 91, 100, 105, 108, 110, 112, 114, 115, 118, 120, 122, 131:
Վիրք - 25, 28, 65, 67, 72, 76, 86, 91, 125, 126:
Վոլգա - 78:
Վրաստան - 42-44, 53, 68, 97, 139, 142, 145, 148, 154, 159-161, 163, 167, 169- 172, 203:
Վրացա-Իմերեթական մարզ - 180:

Տայք - 67:
Տանձիք - 65:
Տաջիկստան - 19, 313:
Տասվերստ - 209:
Տավուշ, գավառ - 9:
Տեղ, գյուղ Գորիսի շրջանում - 250, 347:
Տիգրանակերտ, քաղաք Արցախում - 11, 15, 152:
Տիզիկ - 348:
Տիվրիկ - 82:
Տող, Դիզակի մելիքանիստը - 154:
Տկռակերտ, տե՛ս Տիգրանակերտ:
Տրնավարզ - 219, 337:
Տրտու գետ, տե՛ս Թարթառ:
Տփղիս - 43, 44, 53, 70, 78:
Տումի - 43, 58, 134, 235:

Փահլուր - 217:
Փամբակ - 171, 176, 177:
Փայտակարան, նահանգ - 9, 19, 20:
Փանահաբադ - 153:
Փառիսոս, տե՛ս Փառնես:
Փառնես, գավառ Արցախի - 10, 57, 59- 62, 64, 104:
Փառուխ, գյուղ - 341:
Փատլանա - 94:
Փարիզ - 106, 209, 218, 220, 325:
Փիրջամալ - 345, 347:
Փոքր Սյունիք - 122:
Փոքր Ասիա - 19:
Փոքր Կովկասյան լեռնաստան - 250:

Ուզբեկստան - 19:
Ուկրաինա - 347:
Ուռեկան, ավան - 24:
Ուռեկավանք - 10, 48, 108, 133:
Ուտիք, նահանգ - 9-11, 14, 20, 23-25, 27, 28, 33, 36, 37, 39, 43, 51, 52, 57, 60, 61, 68, 79, 93, 109:

Քաղկեդոն - 37:
Քամու խաչ, եկեղեցի Շուշիում - 184:
Քաշունիք - 35:
Քարագլուխ - 227:
Քարագլուխ, տե՛ս Շոշի-Շուշի բերդ:
Քարաղբյուր - 18:
Քարաշեն (Դաշուշեն) - 337:
Քարավաճառ, տե՛ս Քելբաջար:
Քարինտակ - 185, 198, 217, 338, 339:
Քարհատի շրջան - 228:
Քելբաջար, ավան - 348:
Քելբաջարի շրջան - 10, 250, 332, 349, 350:
Քիրման - 148:
Քիրս, Քիրսա սար - 10, 132-134, 141, 234:
Քյաթուկ - 207:
Քյոսալար - 343:
Քյուրդամիր - 335:
Քոլանի - 144:
Քոլատակ - 119, 344:

Քոչիզ, բերդամրոց Վարանդայում - 141:
Քրդստան - 227, 250:
Քուրակ, գետակ, տե՛ս Կուրակ:

Օշական - 27:
Օրթաքիլիսա - 102:
Օրիորդաց ծխական դպրոց Շուշիի - 182, 207:
Օրխիստինա, տե՛ս Արցախ:

Օսմանյան Թուրքիա - 122, 129, 135, 142, 148, 150, 156, 162, 167, 168, 180, 196, 199, 202, 204, 208, 218, 226, 230, 232, 233, 236, 238, 240, 241, 264, 350:

Ֆիզուլի, քաղաք - 350:
Ֆիզուլիի շրջան - 332, 348:
Ֆրանսիա - 20:

Մեկենասի հասցեն.

Հայ մշակույթի տան վարչություն
Դեֆանսի փ. թիվ 45, 92130,
Իսի լե Մուլինո, Ֆրանսիա

Maison de la Culture Arméniénne, 45
Rue de la Défense
92130 ISSY - LES - MOULINEAUX
FRANCE

ԲԱԳՐԱՏ ԱՐՇԱԿԻ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Նկարիչ-ձեւավորող	-	Ռ. Գաբրիելյան
Սրբագրիչ	-	Օ. Միքայելյան
Էջադրող	-	Շ. Ավալյան
Հրատ. լուսանկարիչ	-	Հ. Ունուսյան
Քարտեզագիր	-	Գ. Ճանճապանյան

Ստորագրված է տպագրության 3.10.94 թ.
Չափսը՝ 60x84 1/16: Տպագրությունը՝ օֆսեթ:
Տպ. թուղթ No 1 գրքային:
Տպ. 24 մամուլ: Պատվեր՝ 370: Տպաքանակը՝ 5000 օրինակ:

«Մ.ՎԱՐԱՆԴԵԱՆ» հրատարակչական/տպագրական հայ-կանադական համատեղ ՍՊ ընկերություն

"M. VARANDIAN" armenian-canadian Printing House

ԱՐՑԱԽԸ ԸՍՏ „ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ"-Ի


Քարտեզի հեղինակ՝ Բ.Ա.ՌԻԼՈՒՐՔՅԱՆ
Քարտեզագիր՝ Գ.Մ.ՋԱՆՋԱՊԱՆՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԵԱՆՆԵՐ
Առանձնահատկ թագավորության սահմանը
Աղվանք մարզպանության սահմանը
Նահանգների արտաքին սահմանը
Քաղաքներ
Գյուղեր ու ավաններ
Վանքեր
Բերդեր
Գետեր
ՄՈՒՍԱ-ՔՈՒՍՏԱԿ
ՄՈՒՍԱ-ՔՈՒՍՏԱԿ
ՄՈՒՍԱ-ՔՈՒՍՏԱԿ
ՄՈՒՍԱ-ՔՈՒՍՏԱԿ
ՔՈՒՍՏԻ ՓՈՌՆԵՄ
ՄՈՒՍԱ-ՔՈՒՍՏԱԿ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հեղինակ՝ Ս. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Քարտեզագիր՝ Գ. ՀԱՆՃԱՊԱՆՅԱՆ

ԱՐՑԱԽԸ ԸՍՏ „ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ"-Ի


Քարտեզի հեղինակ՝ Բ.Ա. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ
Քարտեզագիր՝ Գ.Մ. ՀԱՆՀԱՊԱՆՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Առանցքային թագավորության սահմանը
Աղվանք մարզպանության սահմանը
Նահանգների արտաքին սահմանը
Քաղաքներ
Գյուղեր ու ավաններ
Վանքեր
Բերդեր
Գետեր
ՏՈՒՍ-ՔՈՒՍՏԱՆ
ԱՂՎԱՆՔ
ՍՅՈՒՆԻՔ
ՄԵՍԻՆԱՆՔ
ՓՈՔՐ ՍՅՈՒՆԻՔ
ՄՈՒՌԱՆՔ
ՌՈՏՄԱՐՈՅՑ ԳԱՎԱՌ
ՏՐԻ ԳԱՎԱՌ
ՄԱՐԱՆՔ
ՄԱՐԱՆՔ
ՄԱՐԱՆՔ